

3996

Ե. Ա. ԼԱԼԱՑԵԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱԻԱՌ

ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ

Գ. ՀԱՏՈՐ

ԱԳԱՐԱՆ.

Էջմիածնի տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.

891.99-34
Հ-14

ՊԵՏԳՀԱՄ է 1961 թ.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՄԱՐԳԱՐԻՏ ՏՆԻՐ

ՀԱՅ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՐ
ՎԱՂԱԹԱՌԱՄ
ՄԱՐԳԱՐԻՏԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ
Իւր մայրն՝
ՀԱՑԿԱՆՈՑՑ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
կողմէ

ԹԻՓԼԻՍ
Գ. ԳԻՐՔ
Էջմիածին

Ա III 2620
3996

ՀԱՐԱՔ ՈՒ ՄԱՐԱՔ

(Տամբլու, Հին-Բայազէտցիներ*).



Թամանակով մէկ թագաւորմ կար, էտ թագաւորին աւլատ թաւլատ չունէր։ Օրերից մէկ օր թագաւորն ասաց ուր կնկան. Ա՛յ կնիկ, էթանք ուխտադրութեն անենք, բալքի մեզի էրեխայ հըլնի։

—Դու գիտես, այ մարդ, կէթաս՝ գնա։ Հելաւ ուրան պատրաստութեն տեսաւ, որ էթէր։ Պատրաստութեն տեսաւ՝ էլաւ գնաց։ Գնաց, շատը քիչը Աստուած ա խաբար, գնաց մէկ ախբուրի վրայ կեր ու խում, ուրան լալի հետ։

Ասաց. Լալա, դու հաց պատրաստա, ես մէ ման գամ, գամ։ Լալէն սկսեց հաց պատրաստել, գինքը գնաց պըտըտելու։ Գնաց, տեսաւ որ մէ մարմառ հաւուզ շիքած է էտտեղ, ծաղկներ բոլոր։ Նստաւ էտտեղ, միտք արաւ, ասաց, քեաշքեա թէ գինք էտտեղ

---

*) Պատմեց 1912 թ. Օգոստոսի 13-ին Տամբլու գիւղում նոյն գիւղացի Սիմոն Աւետիսեան անգրագէտ, յիսունեւհինգամեայ ծերունին, որի պապը եկել է Բայազէտ քաղաքից։ Սա պարապում է անասնապահութեամբ եւ երկրագործութեամբ, իսկ երիտասարդ ժամանակ մշակութիւն է արել Թիֆլիսում եւ Երեւանում։ Այժմ ձմեռուայ գիշերները յօդաճերում հեքիաթներ է ասում։

հաց ուտինք։ Մտածեց, քունը քաշեց էտուեղ՝ քնաւ։ Երազին տեսաւ՝ մէկ հատ դաւրէժ էկաւ էտոր էրազ, ասաց. Թագաւոր, դո՞ր կեթաս։

Ասաց. կեթամ իմ ուխտադրուբեն անել։

Ասաց. Մի՛ գնա, ես քու մուրազը կը կատարեմ։

Ասաց. Ի՞նչպէս կը կատարես իմ մուրազը։

Ապա ասաց. Վեր կաց քնուցդ, էտ հաւուզի մէջ էրկու խնձոր կայ, տամ քեզի, տար մէկը տուր կնկանդ, մէկը ղսրըղդուդ։ Մէ ջուխտ տղա կնիկդ կը բերայ, մէ ջուխտ քուռակ էլ ղսրաղդ կը բերայ, համա տղէքդ որ հելան, մէկ տղէդ իմն ա, տուր ընձիկ։ Մէկ էլ առանց ընձի անուն չես դնէ։

Թագաւորը զարթնաւ, տեսաւ որ հաւուզի մէջ էրկու հատ խնձոր կայ, վերցուց էդ խնձորները, առաւ էկաւ մօտ ուր Լալէն, ասաց. Լալա, դէհ պրծի, ձիանք սարքենք, էթանք տուն։

Լալէն ճնաց շիվար, ասաց. Թագաւոր, ախր մենք ըխտադըրուբեն ունենք, պըտի գնանք ըխտադրուբեն չէ։

Ասաց. Ես իմ մուրազն առայ էտեղ, բաւական ա, պիտի դառնամ, էթամ տուն։

Ընտուց յետ հացը կերան, յելան խեծան ձիանքը, գնացին, գնացին խասան տուն։ Թագուհին ճնաց զարմացած, ասաց. Թագաւոր, դու գնացիր ըխտադրուբեն, ինչի՞ ետենց շուտ ետ դառար։

Ասաց. Թագուհի, ես իմ մուրազ առայ ընտեղ, էկայ։

Ասաց. Ի՞նչ մուրազ առար ընտեղ։

Հանեց ջիբից էրկու խնձոր, ասաց. Էս մինը դու կեր, մինն էլ տվեց, ձինը կերաւ։

Որ կերաւ կնիկը խնձորը, ճնաց էրեխով, ղսրախն էլ էնտեղ ճնաց քուռակով։

Ինչը ամիս, ինչը սահաթ, ինչը դախխա թըմըմաւ, կնիկը պառկաւ՝ էրկու տղայ բերեց։ Ղսրախն էլ ցըկնաւ՝ բերեց մէ ջուխտ քուռակ։ Շատ ճնացին, որ էտ դավըիշը գայ էտ էրեխէքին անուն դնայ։ Տեսան որ չէկաւ՝ անուն դնէր, թագաւորի կնիկը հերսոտաւ թագաւորի վրէն, ասաց. Էսքան ժամանակ է տղան մացեր ա առանցի անուն, բեր անուն դնենք։

Ասաց. Մինչի դաւրէշ չիգայ, անուն չեմ դնէ։

Ասաց. Ջահնըմին գայ դաւրէշ, թէ հայ ենք, տէրտէր բերենք, թէ թուրք ենք, մոլլա բերենք, կնքենք, վերջացնենք էրթայ։

Էտ խօսքի հետ ին, էտ խորհուրդի հետ ին, դաւրէշ դռնից մտաւ ասաց. Հա՜, թագաւոր, թագուհի, առանց ընձի անո՞ւն կը դնէք տղերքին։

Ասաց. Հըլը ի՞նչ անենք, ասիր կը գամ, ետացար՝ չեկար, հիմի որ էկար՝ անուն կը դնենք։

Դաւրէշն էկաւ նստաւ, մարդ ժողվեցին, էկան կոլոնվան, քերեց որ անուն դնէր տղերքին. դաւրէշը մէկի անունը դրեց Հարաք, մէկին՝ Մարաք։ Ետոյ դաւրէշն յեղաւ, թողեց գնաց, ապա էտեղ թագաւոր խոստաց թէ Հարաք տղէն կըտամ քեզիկ։ Դաւրէշն յօժարացաւ, յեղաւ գնաց։ Էտ տղերքը ջոջըցան, տվեց ուսումի։

Օրէրի մէկ օր՝ ուսումարանից որ դուս էկան, դաւրէշն էկաւ կայնաւ ուսումարանի դուռը. տեսաւ թագաւորի տղերքը յեղան դուս ուսումարանէն. ձեռը թալեց Հարաքի թևը ըռնեց, ասաց թէ դու իմն ես, պէտք ա գաս էթանք։

Ասաց. Ջանըմ, ես գուգամ, հըմը թագաւորի որդի եմ, չեմ կանայ ոտով գայ քեզի խետ, կացի էթամ իմ ձին խեծնեմ, գամ իրար խետ էթանք։

Ասաց. Կէթաս՝ չես իգայ։

Ասաց. Ձէ, կէթամ, անպատճառ կուգամ, օր կուգամ։

Գնաց, ձին քաշեց դուս, խեծաւ, յեղաւ էկաւ։ Յեղաւ էկաւ, յիրար հետ գնացին։ Դաւրէշն ընկաւ տղի յառէջ, տղէն ընկաւ քամակուց՝ գնացին։

Գնացին, շատը քիչը Աստուած ա խաբար։ Որ գնացին, էտ տղէն շատ սուվացաւ ճամփէն, ասաց. Դաւրէշ բարա, ես անօթի եմ, ինչ թաւուր գամ։

Ասաց. Ես ինչ անեմ. էս չոլի մէջ տեղ քեզ հաց տվող ոչն աւ։

Ասաց. Ձիլնի, ախր, ես մեղք եմ։

Ասաց. Էս չոլի մէջ ա, մեզի հաց տվող, ջուր տվող ոչն աւ։

Ասաց. Թող տուր ընձի, ես էթամ մէ կտոր խաց ճարեմ, գամ էթանք։

Ասաց. Լաւ, արի խօսք տու՝ որ մարդու խետ չխօսաս՝ գնաս։

Ասաց. Օրթում դնիմ քեզի խետ, որ ես սուս ու փուս էթամ, սուս ու փուս գամ, հէչ մարդու խետ չխօսամ։ Գամ խասնիմ քեզի, էթանք։

Հելաւ, իլին տվեց, գնաց էտ տղէն։ Գնաց տեսաւ որ մէկ սարի կողէն մէկ մուխ դուս կուգայ։ Տեսաւ մուխ դուս կուգայ, ասաց. Էնտեղ շելլիդ ա, էթամ հաց առնեմ, գամ ընձիկ։ Էտտեղ որ գնաց, տեսաւ մէկ դարդեահ (դուռ) կայ, էտ դարգեահը ծեծեց, մէկ ախչիկ դուս էկաւ։ Որ ախչիկը դուս էկաւ, տղէն ձեռով արաւ, թէ մէ կտոր հաց տու ընձի։

Ասաց, Ի՞նչ մարդ ես, ընչի՞ չես խօսայ։

Տղէն ձեռով արաւ, ասաց. Լեզու չունիմ ընձի։

Ասաց. Հա, ես գինամ, քեզի դավրէշն է օղօրկէ, դարվէշ քեզ կը տանայ։

Բերեց հացը տվեց, ասաց. Տղայ, կայնի, քեզի մէ բան ասեմ։

Ես գինամ, դավրէշ քեզ կը տանայ, մեղք ես, կեցի, քեզի մէ բան սովորցընեմ։ Ասաց. Որ կեթաս՝ մէկ առու կայ, էն առուն կընցընես. էն առուն որ ընցար, էնտեղ մէկ ծակ քար կայ, ձինդ կը կապէ էտ ծակ քարին։ Բեզի, ասաց, կառնի կերթայ մէկ զաղայ կայ, կիջնի էն զաղէն, որ կելնի էն զաղէն, դու մի՛ ընկնի յառէջ, որ կասի այ տղայ, արի ընկի յառէջ, ասա. Ես խամ տղայ եմ, չեմ կանայ յառէջ էթայ, դու գնա. էս խէտ որ էնի կընգնի յառէջ, նարդըվանները կիջնի, դու լանդով (քացի) զարկ, թո էթայ ընկնի, սատկի, ոատ ըլնի, էնի քեզի կտանայ որ քըցայ էն տեղ, խազնէն ժողովէ, առնէ էթայ, դու կեթաս էն խազնէն, դովլաթը կը վերցիս կուգաս։ Համա, որ էնտեղէն ետ դառար էկար՝ գաս ընձի էս տեղէն վերցիս, էթաս։

Տղէն հելաւ գնաց, հասաւ դարվիշին։ Գնաց հասաւ դաւրէշին, դավրէշն ասաց. Էկար։

Ասաց. Էկայ։

—Դէհ, ասաց, արի էթանք։

Առան յիրար խէտ գնացին։ Գնացին, շատ քիչ Աստուած ա խաբար, գնացին խասան մէկ հառուի, հառուն անցան էն կողմը, տեսան որ մէկ քար կայ էնտեղ, էտ ծակով քար ա, ասաց. Տղայ, ասաց, յիջի էտեղ։

Որ ձիուց յիջաւ, ասաց. Ձինը կապա ըստեղ։

Ձինը կապեց ըտեղ, ասաց. Դէ արի, էթանք։

Գնացին, հասան մէ զաղի դուռ, ասաց. Տղայ, դէ արի էս դուռը բաց, մտնենք ներս։

Տղէն որ դուռը բացեց, կանաւ ասաց, թէ դավրէշ, ես չեմ կանայ առէջ ընկնի, ես խամ տղայ եմ։

Դավրէշն ասաց. Լաւ, ես գըգնիմ յառէջ։

Ըտուց որ ընկաւ յառէջ, գնաց հասաւ փիլաքաններ, տղէն յետուց լանգով զարգեց, դավրէշն ընկաւ փիլաքաններից ցած։

Էնտեղ վըչացաւ, գնաց։ Որ վչացաւ, տղէն յիջաւ զաղէն, տեսաւ բաւականին մալ, դուլաթ կայ, ժողվեց դուս էկաւ։ Էկաւ ձին նստաւ, ասաց. Էն ախչիկ թո ճիա էնտեղ, ես էթամ էս քաղքընը պըտըտիմ դամ, ախչիկ վերուս էթամ։ Գնաց մէ յաղբրի ոատ էկաւ։ Ասաց, էս ինչ լաւ ախպուր ա, նստիմ էտեղ հացուտեմ, ջուր խմեմ, յելնիմ էթամ։ Նստաւ էտեղ, դինջացաւ, յելաւ ձեռները լվաց, տեսաւ ձեռները սիվտակաւ, ասաց. Ջանըմ, ինչի՞ էս իմ ձեռները սըվտակաւ, տեսաւ որ ձեռները սիվտակաւ՝ էլաւ արծաթ, զինքն էլ, գլոխ, ոտներ, շորեր լվաց՝ բիրատի էլաւ արծաթ։ Դարձաւ ձինն էլ բերէց կոխեց էդ ջրի մէջ, ձինն էլ յելաւ արծաթ։ Ցելաւ ըտուց հեծաւ ձին ու քշեց գնաց։ Գնաց

յելաւ քաղքի դէմ։ Գնաց էտ քաղքի մօտ, տեսաւ մէկ հորթարած կար, հորթեր կը պախէր։ Հորթարած ասաց. Խապար տանիմ թագաւորին, թէ փէսէտ էկաւ, ինձի մուշտուլուղ տայ։ Գնաց, ասաց. Թագաւոր, աչքդ լուս ըլնի, փէսէտ էկաւ։ Թագաւորը բերեց էտուր բոլ բաչխիշ տվեց։ Հորթարածն էկաւ իւր հորթեր։ Թագաւորն յելաւ ուր մարդով, ձիով, ձիաւորով գնաց ուր փէսի յառէջ։ Տղեն ճնաց զարմանելով։ Ջանըմ, ասաց, ես խամ տղայ, էս յերկիր չիմ էկէ, էս քաղաք չիմ տեսէ, ըստոնք իչի էկան իմ յառէջ։

Էկան բարևան էտ տղի հետ, վերցրին գացին։ Գացին թագաւորի ամարաթ, նստան խօսացին։ Մնացին չուր իրիկուն, թագաւորի կնիկն էկաւ, տղէն վերուց, առաւ գնաց ախչկայ մօտ։ Էտտեղ ճնաց մէկ երկու շաբաթ։ Օրերի մէկ օր տղէն կայնաւ ասաց, թէ ես պիտի էթամ աւղուշ։ Էտ ախջիկն էր, էկաւ թագաւորին ասաց, թէ փէսէտ կասայ, պըտի էթամ աւղուշ։

Թագաւորն ասաց. կեթայ թօ էթայ, մէ տաս ձիաւոր դրեց խետ՝ գընաց։ Համա թագաւորը թամպըխեց, ասաց. Ուր կուզէք գնացէք, մէկ սար կայ՝ անունը Ալադաղ, էնտեղ չէթաք։ Ըդոնք յելան գնացին, գնացին էտ սարեր, ձորեր, մէշէք պըտըտան, զատ չընկաւ ձեռները։

Ասաց. Ջանըմ, ասաց տղէն, իրիկուն էթամ թագաւորին ինչ ջուղապ տամ. ասաց, էլ ո՞ր սարն ա մացէ, մենք էթանք ման գալու։

Ասաց. Մացէ մէնակ էն Ալադաղ սարը, որ թագաւորը յոժար չէ մենք էթանք։

Ասաց. Ի՞նչ պըտի ըլնի, որ էթանք, յելէք էթանք։

Յելան, հեծան ձիանքը ու քշին գնացին էտ սարը։ Գնացին տեսան որ մէ ջէյրան կայ էտ սարը, կը պըտըտի։

Ասաց. Տղէք, ասաց, էնհնց փաթթէք էս ջէյրան, սաղ բըռնինք, տանինք թագաւորին։

Էկան փաթթեցին, ասաց. Տղէք, տեսէք, որիդ ձիու վրայէն ետ տակէն ընցաւ՝ էնոր գլուխ կը զարկեմ, էնպէս էրէք որ չփախցընէք, սաղ բռնինք տանինք թագաւորին։

Հելան ջէյրանը փաթթին, ջէյրանը միտք արաց. ասաց. Որի ձիան տակէն ընցնին, էնտուր գլուխը կը զարկայ, լաւ էն ա որ ուրան ձիան տըկով ընցնիմ։

Ջէյրանն էկաւ տղի ձիու տըկովը ընցաւ. էտ տղեն ճնաց չիվար։

—Տէ՛, ասաց տղէք. դուք զարձէք, ես պըտի ընկնեմ էս ջէյրանի յետև էթամ։ Ընկաւ ջէյրանի յետև, գնաց տղեն. գնաց, գնաց, շատ ու քիչը Աստուած ա խաբար, գնաց ջէյրանը մէ քարափից

իրան քցեց։ Տղէն ձին քշէց գնաց, քարափի գլուխը կայնաւ. կայնաւ շիվար ճնաց, չգիտցաւ թէ որդուց յիշներ էրթէր։ Տեսաւ որ մէկ պառաւ ձորի մէջ կայնած է. Պառաւ, իմ չէյրան խան թո՛ղայ։ Պառաւը ձէն տվեց ասաց. Արի՛, արի, էստեղ մէ դինջացի, քու չէյրան տամ քեզիկ։ Ասաց. Ճամփա չկայ, ո՛րտիան դամ։ Ասաց. Էտենց վերևով ճամփա կայ, ձին քաշի, արի։

Տղեն ձին քաշեց, գնաց վերացաւ, վերևով իջաւ, գնաց ձոր։ Գնաց խասաւ պառվին։

Պառաւը խաց պատրաստեց, դրեց, յառէջը՝ կերաւ։ Կերաւ, ասաց. Պառաւ, իմ չէյրան յո՛ւր ա, տուր ես տանիմ։

Ասաց. Ծացդ կի՛ր, քու չէյրան կըտամ քեզիկ, առ գնա։

Հաց կերաւ պրծաւ, տեսաւ հուրու փարու մէկը էկաւ նստաւ կշտի խետ. Ասաց. Տղայ, ասաց, արի՛ մէկ սաթրինչ խաղանք։

Նստան սաթրինչ խաղալու։ Աղչիկն ասաց. Թէ դու տարար, չէյրանը տամ քեզի. թէ ես տարայ, ձինը տուր ընձի՛կ։

Ասաց. Լաւ, խաղանք։

Խաղցան, էտ, էր տղէն պըտի ախչկան տանէր՝ ախչիկը թևը բացեց, տղի աչքը առաւ թևին, ախչիկը տարաւ։ Դարձաւ մէկ սիլլա տղի երեսի մէջ զանեց, ասաց. Շան որդի, էստեղ բոզ-խանայ է, էկեր ես բոզութիւն կանես, աչքդ քցիր ընձի՛։

Ջինը տարաւ։

Ասաց. Արի՛ մէկ էլ խաղանք. Բերին դրին մէկ էլ խաղցին։

Աղչիկն ասաց. Թէ դու տարար ընձի. չէյրանը տամ, թէ ես տարայ, վըրայիդ շորերը տաս։

Դրին խաղցան, էլի էկաւ որ տղէն ախչկան պըտի տանէր՝ ախչիկը դոշը բացեց։ Դոշը որ բացեց, տղի աչքն առաւ դոշին, տղի խելքը գնաց գլխից։ Ախչիկը տարաւ էլի տղին։ Ախչիկ տարաւ բերեց մէկ սիլլա զարկեց տղի յերեսի մէջ, ասաց. Շան որդի, էստեղ բոզ-խանո՛ց ա, էկերես բոզութեն կանես էստեղ։

Շորերն էլ վրայէն առաւ։

Ասաց. Ախչի, ասաց, արի մէկ էլ խաղանք։ Թէ տարար ընձի, ասաց, իմ գլուխը կըտամ քեզիկ, թէ չտարար՝ իմ չէյրան տուր, ես առնիմ, էթամ։ Էկան մին էլ խաղցան։ Ընդուց յեանա, որ էկաւ էնտեղը, որ տղէն պըտի տանէր՝ ախչիկը ոտը քշտեց, բացից։ Որ բացից, տղի ուշքն առաւ էտ ախչկայ ոտին, տղի խելքը էլի գլխից գնաց, ախչիկն էլի սանթրինչը օլըրեց, ասաց. Տարայ քեզի։ Մէկ սիլլա էլի տղի յերեսի մէջ զարկեց։ Ասաց. յելի, էս խետ գլուխտ պըտի զարկեմ։

Էլ չդմբշաւ որ գլուխը զարկէր, տարան թալին մէ քառասուն գաղական խոր։ Էտի թո՛ ճնայ խորի մէջ։

Խաբար վերդից տաՙնք։ Խաբար տանք տղի ախպօրից։

Ախպէր օրերի մէկ օր կայնաւ. Ա՛յ, Ջանըմ, ասաց, ախպէր գնաց, էսքան ժամանակ լՙինչ էլաւ չեկաւ։ Ասաց. իմ ձին ես պէտք ա քաշեմ, խեճնամ, էթամ իմ ախպօր հաւարին։

Հելաւ, ձինը քաշից դուս, խեճաւ, խեճաւ ընկաւ ճանապախ, շատ ու քիչը Աստուած ա խապար, քշից էկաւ էտ դուրանը կայնաւ, էտ դուրանը որ կայնաւ, միտք արաւ, ասաց. Դվՙոր էթամ, դվորը չէթամ, Աստուածՙ։ Տեսաւ որ մէկ սարի կողմից մէկ բարակ մուխմ դուս կուգայ. հելաւ ձինը քշեց գնաց էտ սարի կողը։ Գնաց էտ դուռը ծեծեց. էն առաջի ախչիկը դուս էկաւ. հիշկաց էտ տղեն, գիտցաւ թէ Մարաքն էր, ասաց. Ազատւաբ էկՙիր։ Տղէն հասկըցաւ որ իրեն ախպէրը էկէ ըստէ հանդիպեր աւ Տղէն միտք արաւ ասաց. Հալա իմ սրտի ժուրաղը չեմ կատարէ, էթամ կատարեմ, ետ դառնամ գամ։

Ասաց. Գա՛ս հա՛, գաս ընձի էստեղէն վերցուս տանես։

Ասաց. Շատ լաւ. խաց բերեց, կերաւ, դինջացաւ, ձինը քշեց գնաց.

Ասաց. Տղայ, որ քեզի թամբըխեցի էն առուն, էն քարը տեսաՙր։

Ասաց. Չէ, նոր պըտի էթամ տեսնամ։

Ասաց. Էն առվի ղրաղ մէկ ծակ քար կայ, ձինդ կը տանես կը կապես ընտեղ, կեթաս կը մտնես էն զաղէն, դարվէշը կը քցես յառէջդ. որ դարվէշը կասայ ընկի յառէջ, չընկնիս յառէջ, դավրէշին քից յառէջ, դու լանդով զարկ, թօ մեռնի, թէ չէ քեզի կը փչացընէ։ Էն զաղի մէջ շատ մալ ու դովլաթ կայ. կը վերցընես, կը դաս, ինձի կառնես, կեթանք։

Էտ տղէն էլ էտտից յելաւ էկաւ, տեսաւ առուն, ասաց. Էս ախչկայ ասած յառուն ա, ահա՛, ասաց, էս էլ էն քարն ա, ձինը կապեց էն քարից, յելաւ գնաց, տեսաւ զաղի դուռը բաց ա, մտաւ ներս։ Իջաւ տեսաւ որ ջանդըկնները էտտեղ փռված ա, ա՛յ վախ, ասաց, ախպերն էլ էս ջանդըկնների մէջ կըլնի։ Մանէկաւ չկարցաւ որ գտնէր. ընդուց դուս էկաւ, հուրան մալ, կարեանք (որին կարիք ունէր) վերցուց, յելաւ էկաւ։ Հելաւ ձին խեճաւ գնաց։ Քշեց գնաց, շատն ու քիչը Աստուած ա խապար, գնաց էն ախպըրին էլի ռաստ էկաւ։ Գնաց ասաց, էս ախպըրի վրէն մէ քիչ հանգստանամ, հաց ուտեմ, էթամ։ Հաց կերաւ, յելաւ ձեռները լվաց, տեսաւ որ ձեռները սիվորկաւ, էլաւ էլի արծաթ։ Տօ Ջանըմ, ասաց, էս ինչ լաւ էլաւ, իմ ձեռները յիլան արծաթ, արի իմ շորերն էլ անեմ արծաթ, բերեմ անեմ ձիս էլ արծաթ։

Բերեց ուր շորերն էլ արեց արծաթ, ուր ձին էլ արեց արծաթ։ Հելաւ հեծաւ ուր ձին, գնաց։

Ջրեց գնաց, տեսաւ որ էն փորթարածը էլի վըր ճամփին էր։ Փորթարածն ասաց. Թագաւորի փէսէն էս քանի ժամանակ է կորուսեր էր, հրէս էկաւ, էթամ խապար տանիմ Թագաւորին ինձի աչքիլուսանք տայ։

Գնաց խապար տարաւ, Թագաւորը փորթարածին բոլ փէշքաշ տվեց, յելաւ մարդով, էլըկով գնաց ուր փէսի յառէջ։ Առաւ էլի սազով, դամով, դազկահով տարաւ ուրան օթախներ։

Էտ տղէն մնաց միտք անելով, ասաց. իմ ախպէրը էս քաղաքն էլ է էկէ։

Նստան, խօսացին, կերան խման, գիշերը մէ ժամանակ Թագուհին էկաւ, առաւ էտոր տարաւ ախչկայ մօտ, գիտցաւ Թէ ուր փէսէն էր, էն էլ չյայտնեց Թէ ես ախպէրն եմ։ Մէրն յելաւ գնաց, տղէն նստաւ ախչկայ կուշտ, մէ քիչ խօսացին։ Տեղը շինեցին, յելան պառկան քնան։ Տղէն Թուրը քաշեց, դրեց օրթալախներ։

Ասաց. Նա, էնքան վախտ ինձի հաւանութեն տվիր, մկա բինչ էլաւ, որ Թուրը դրիր օրթալըղներս։

Ասաց. Թագաւորի ախչիկ, ինձի մէ մուրազ ունիմ, Թող էթամ իմ մուրազը կատարեմ, գամ, էլի դու իմս ես, ես քունն եմ։

Ասաց. Դու գինաս։

Մէ ժամանակ որ մնաց, ասաց. Թագաւորի աղջիկ, ես պըտի էթամ աւղուշ։

Ասաց. Լաւ կըլնի, լուսուն Թագաւորին կասեմ, Թօ քեզի օղորկայ աւղուշ։

Լուսը բացվաւ բարիլուսի խետ, լուսն ու բարին բացվի ձեր վրայ, ախչիկը յելաւ գնաց Թագաւորի կուշտ, ասաց. Թագաւոր, փէսէտ կասայ, էթամ աւղուշ։

Ասաց. Բան չկայ, կեթայ Թօ էթայ, մէ քսան ղուլ կը դնեմ խետը՝ Թօ գնա, համա կը Թամաշէխեմ Թօ Ալադաղ սարը չեթայ։

Տղէն էր, որ ձիաւորներ խեճան էկան կուշտն, ասաց. Հանըզ ես էն սարը պըտի էրթամ։ Ջիանք քշին, գացին դուզ էն սարը։ Գացին էն սարը. տեսան, որ էն ջէյրան էն սարը կը պըտըտի։

Ասաց. Տղէք, էնպէս փաթթէք, որ սաղ բռնեմ, առնեմ էթամ Թագաւորին, որիդ ձիան վրով ես ձիան տըկով անցեր ա, ընտուր գլուխը կը զարկեմ։

Փաթթէցին, բերին պըտի բռնին, ջէյրանը էկաւ տղի ձիան տակէն անցաւ։

Ասաց. Զելաւ, տղէք, դուք ետ դարձէք, ես էս Ջէյրանը կը բերեմ։

Տղէքը յետ դարձան, էտի ընկաւ Ջէյրանի քամակից։ Լաբեց տարաւ էլի էն քարափի քով, Ջէյրանը ուրան էն քարափից քցեց։ Տղէն գնաց մալուլ կայնաւ քարափի գլուխ։ Տեսաւ որ պառաւը մէկ ձորի մէջ կը պըտըտի, ասաց. Պառաւ, իմ Ջէյրան խան, թօ գայ։

Ասաց. Արի ներքև, դինջացի, մէկ կտոր խաց կէ, քու Ջէյրան տամ քե, առ գնա։

Էլի ճամփէն նշանց տվեց, էտ տղէն յիջաւ գնաց պառուս կուշտ։ Պառաւ բերեց ջուլ քցեց, նստաւ, հաց բերեց՝ կերաւ, դինջացաւ, ասաց. Իմ Ջէյրան տուր տանիմ։ Մէկ էլ էն հուրի փարին էկաւ կուշտը նստաւ, ասաց, Տղայ, արի սաթրինճ խաղանք։

Ասաց. Խաղանք։

Ասաց. Ինչո՞վ խաղանք։

Ասաց. Խաղանք, դու քո ձիուց, ես իմ Ջէյրանից։

Դրին խաղցան. էկաւ որ տղէն պըտի ախչկան տանէր, ախչիկ թևը բացեց. որ թևը բացեց, տղէն տարաւ բերեց մէկ սիլլա ախչկայ յերեսին մէջ, ասաց. Լիրը, բոզխանայ ես շինէ էստեղ, Չահել Չհուլի գլուխ զարկել կուտամ։ Քարը քցեց, ըսեց. Ես քե տարայ, գնա՛ իմ Ջէյրան բէ։

Ասաց. Արի մէկ էլ խաղանք, տամ Ջէյրանդ, գնա՛։

Ասաց. Ինչի՞ վրէն խաղանք։

Ասաց. Ես խաղամ իմ կեանքիս վրայ, դու խաղայ քու ձիու վրայ։

Խաղցան, էկաւ որ պըտի տղէն տանէր՝ ախչիկը դոշը բացեց։ Ախչիկը որ դոշը բացեց, տղէն տարաւ բերեց մէկ սիլլա ախչկայ յերեսի մէջ զարկեց, ասեց. Լիրը, էստեղ բոզ-խանայ ես շինէ, որ Չահել Չհուլի գլուխ կտրես։ Քարը քցեց, տարաւ, ասեց. Դէ, էլի իմ Ջէյրան բէ, ես եղնեմ էթամ։

Ասաց. Արի՛, մէկ էլ խաղանք։

—Խաղանք։ Ինչի՞ վրայ։

Ասաց. Էս խետ խաղանք դու քո գլխից ընցի, ես իմ մալից անցնիմ։

Ասաց. Չէ, ես էտենց չեմ խաղայ. ես կը խաղամ իմ գլխից, դու խաղցի էն տղի Չանդըկից, որ կորսըվեր է, իմ սուրբ Խաթին, իմ չէշիտի մէ տղայ։ Բերին դրին սաթրինչը։ Խաղցան, խաղցան, տղէն էլի ախչըկան տարաւ, տարաւ, ախչիկը ոտը բացեց, էլի տղէն տարաւ բերեց մէ սիլլա ախչըկայ յերեսի մէջ

զարկեց։ Ֆարը քցեց, ասաց. Տարվար, թէզ արա, ել, իմ Չէյրանն էլ տու, էն տղի Չանդակն էլ, թէ չէ կը բըդեմ քեզիկ։

Ասաց. Տղէն քցերիմ քառասուն գաղական խոր, արի էթանք տենանք սաղ է թէ մեռեր ա։

Գնացին խորի վրէն, բռռաց, ձէն տվեց, ասաց. Հարրաք։

Հարաք տկից ձէն տվեց ասաց. Ջան։ Մարաք, էկար հասար իմ հաւարիճն։

Շիրխաը կախեցին, Հարաքին հանին դուս։ Որ հանին դուս, Մարաք տեսաւ, որ ախպէրը էլել ա մեռլադունի։ Էրկու ախպէրը էտտեղ թրերը քաշին, պառվուն ու հուրուն բըրդեցին, դարձան Չէյրանին էլ բըրդեցին, ասին. Դուք որ էտտեղ կենդանի ծնաք, շատ չահիլ չուհուլի գլուխ պըտի զարկէք։

Հելան ձիան հեծան, էկան. Էկան գնացին էն քաղաքը, որ թագաւորը ախջիկը տուեր ա, տեսան էն փորթարածը էնտեղ ա, բերին մէկ ճանկ ոսկի տվին փորթարածին, թէ գնա թագաւորին մուժտա տուր, թէ աչքդ լուս, փեսէտ էկաւ։ Փորթարածն էր, առաւ ոսկին, լըցից փափախ, ուրախ վազաւ գնաց։ Փափխու որը ծակ էր, ոսկին թափաւ, չուր դառաւ էկաւ, հորթիկնելն էլ գելերը կերան։

Թագաւորն էր՝ ձիով, ձիաւորով, դամով, դպգահով, սազով սարքով էկաւ փեսի յառաչը, շիվարաւ կայնաւ. Ջանըմ, ասաց, իմ փեսէն մէկ է, էս էրկուսն էլ մէկ սուրիաթով, մէկ չեշիտ են, իմ փեսէն որ մէկն է, Աստուած։ Միտք անելով առաւ գնաց հուրան օթախները, ասաց. Հալբատ մէկը կասայ, թէ ես եմ։ Գնացին նստան, շատ խօսացին, մուրճն ընկաւ, Հարաքն ասաց թագաւորին. Թագաւոր, ինչ ես շատ մտքի յետև ընկէ։ Ասաց. Ջանըմ, ես շիվար եմ մացէ, դուք էրկուսդ էլ մէկ չեշիտ էք, չեմ գիտէ իմ փեսէն որն ա։ Հարաքը ասաց. Ես եմ, էսի իմ ախպէրն ա, նոր էտտեղ ուրախացաւ թագաւոր, առաւ տարաւ ուր ախչկայ կուշտ։

Մնացին մէ առ ժամանակ էտ թագաւորի կուշտ էրկու ախպըրով։ Պտի ախպէրը կայնաւ թէ բոլ ա ծնանք էստեղ, մեր հօր՝ աչքեր մեր յետև կլըրշկա, էթանք մեր երկիր։

Ասաց. էթանք, ախպէր Ջան։ Հելան գնացին թագաւորի մօտ, խնդրըվան, քի թագաւոր, մենք պիտի էթանք մեր քաղաքը, կը խնդրվենք մեզի ճանապարհ քցես։

Թագաւորն ասաց. Որ գուզէք էթալ, Աստուած ձեզի բարի ճամփայ տայ, գնացէք։

Էլան ձիով, ձիաւորով, էլլիկով, մարդով, բարով, բարխանով ճամփու դրեց, յելան գնացին։ Գնացին, շատն ու քիչ Աստուած ա

խաբար, գնացին խասան էն ախչկայ մօտ, օր պըտի տանին։

Ախչիկը տեսաւ էտոնց, շատ ուրախցաւ։ Էն էլ բերեցին տվեցին Մարաքին, ծանդը(ը) թափին, թեթև(ը) բարձին, ընկան ճամփա գնացին։ Գնացին՝ շատը քիչը Աստուած ա խաբար, գացին խասան ուրանց խօր քաղաքի տակը։ Խապարը գնաց խասաւ խօրը, թագաւոր, թագուհին ուրախ ուրախ յելան էկան ուրանց տղերքի յառէջ. առան տարան տուն։ Բերեց թագաւորը օխտը օր, օխտը քըշեր խարճնիս արաց, էրկու տղին էլ պսակեց։ Ինչոնք կերան խման, հասան ուրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։ Երկնքուց յիրեք խնձոր յիջաւ, մէկ նաղլին, մէկը աստղին, մէկն էլ լսողին։

ՕՁՆ ՈՒ ՁՈՒԿԸ

(Ղոյթուր-Բուլաղ, Դերջանցիներ*).



ուկն ու օձը ախպար դարձան։

Օձը ըսաւ. Ախպար, ինչ կըլլի, օր ինծի շալկես, տանես ծովին մէջը պըտըտցընես։

Ձուկն ըսաւ. Շատ լաւ կըլլի. էկէ շալակս, քեզի տանեմ ծովի մէջ պըտըտցընեմ. դու տես մեր ծովը ինչ կայ։

Օձը փաթըթվաւ, էղաւ ռաբաթա (հացառ), նստաւ ձկի կռնակը, ձուկն առաւ մտաւ ծովը։ Քիչ մը գնացին, օձը խածեց ձուկին կռնակը։

Ըսաւ. Ախպար, ինչի՞ կը խազնես իմ կռնակս։

Ըսաւ. Սխալվայ։

Քիչմ էլ գնացին, մէմ ալ խածեց։

Ըսաւ. Ախպար, ինչի՞ կը խազնես կռնակս։

Ըսաւ. Արևը գլոխս սխմեց։

Քիչ էլ գնացին, մէյմ էլ խածեց։

Ըսաւ. Ախպար, ինչո՞ւ կը խազնես։

Ըսաւ. Իմ սովորութիւնն է։

Ձուկն ըսաւ. Օր քու սովորութիւնդ է, ինձի էլ կայ սովորութիւն, ահա տես. ըսաւ ու մտաւ ծովի խորունկ տեղը, օձը խեղդվաւ, յելաւ ջրի երեսը.

Ըսաւ. Գնա, աս ալ իմ սովորութիւնը։

---

*) Պատմեց Ղոյթուր-Բուլախ գիւղում 1912 թ. Յուլիսի 11-ին Կարապետ Մարգարեան 80-ամեայ ծերունի անգրագետ գիւղացին, որ 10 տարեկան հասակում գաղթել է այստեղ Դերջանից։

A 2670
3996

ԻՆՉԻՒ ՀԱՑԻ ՄԵՌԵԼԸ ԷԺԱՆ Է

(Ղոթուր, Դերջանցիներ *).

Ղըզըլղոչի ու Շիշթափա գեղերը իրար մօտիկ են, Ղըզըլղոչ հայի գեղ է, Շիշթափան ալ փռանկ էն։ Մեռել բան ըլլելուս՝ կերթան իրարու սիրտ մխիթարելու։ Օրմը Ղըզըլղոչու տէրտէրը փռանկի տէրտէրին կըսէ. Ինչի՞ ձեր մեռելը էտ դդար թանգ է, մերը աժան է։

—Ինչու աժան է։

Կըսէ. Մերը էրկու մանաթ, իրեք մանաթ է, ձերը չիսուն մանաթ, հարուր մանաթ է։

Փռանկին տէրտէրը կըսէ.—Էտ դտար բանը չես հասկցէ դէօր հիմայ։

Թէ, չէ։

—Դուք քաւարան չունէք, էտոր համար է։ Դուք շիտակ արքայութեն կը տանէք մառելին. մենք կը ձկենք քաւարան, մառելին տէրը կուգայ մեզի կը խնդրվի, ու դէօր քառասուն, չիսուն մանաթ չը տայ, չենք հանէ քաւարանից։

*) Պատմեց Ղօրուր գիւղի բահանայ Մարտիրոս Տէր Յովհաննէսեանը, Դերջանի գաղթական։

ՍԵՒ ԵԶԱՆ ՀԵՔԻԱԹԸ

(Զամրոու, մեեցիներ*).

եղնի չեղնի, մէ թագաւոր մի կեղնի. թագաւորին աւլագ դաւլաթ չունէր, շատ նիաթով կը նստէր, ըսկի գործի չէր խառնըվէ։

Էն մէկ օր, վազիր, վաքիլ ըսեցին. Թագաւոր, ինչի՞ բանի չես խառնըվի, չես զրուցէ, չես ծիծղա։ Ինչի՞ էտմալ նիաթով ես։

Ըսեց. Բա ես իմ նիաթ չէնէմ, ո՞րն էնէ, ես ծերացել եմ, աւլագ չունեմ, օր ես վախճանայ՝ իմ յետև նստի իմ թախտ։

Վազիր վերցուց, ըսեց. Թագաւոր ապրած կենայ, նիաթ էնելով բան չը դառնայ, խէր ու խէրիաթ էրէ, ողորմութեն ցրվէ, օր Աստուած քզի տղէմ իտայ։

Թագաւոր լսեց վազիրին, բերեց քաղքի չորս բոլոր բադան տվեց քաշել, չորս տեղով դուռ թողեց, ամէկ դռան վրայ մէկ զարաուլ դրեց, ուրբաթ ուրբաթ օր, ամէկ զարաուլ ամէկ դռան վրայ քառասուն թուման փող կը ցրվէր ողորմութեն։

Բոլոր աշխարհ լսեցին թագաւորի ողորմութեն ցրվել։ Էղաւ օր՝ Աստված լսեց թագաւորի ձէն, թագաւորին տղէմի տվեց։ Տղէն տվեց յուսման, լաւ տղայ դուս էկաւ. ուսումն աւարտեց։

Օրերից մէկ օր, դաւրէշ մի լսեց թագաւորի ողորմութեն ցրվել, էկաւ օր հասնէր, ուրին ողորմութեն առնէր։ Չուրի դաւրէշ էկաւ հասաւ, ուրբաթ օր չորս զարաուլներ ցրվեցին, պրծան ողորմութենը՝ խըլըսաւ, դաւրէշի խամաթ չհասաւ։ Դաւրէշն էկաւ թագաւորի դիվան մտաւ։

—Հա, ինչ կայ, դաւրէշ, ինչ ես ուզելու։

---

*) Պատմեց 1912 թ. Յուլիսի 19-ին Զամրոու գիւղում Սարգիս Միրզայեանցը, 45 տարեկան անգրագէտ գիւղացին, որ սովորել է Մըշի Լեչ գիւղից գաղթած իւր հօրիցը։ Ձմեռնեերն այժմ էլ հեքիաթներ է ասում։

Ըսեց. Թագաւոր ապրած կենայ, ես քու օղորմութենի ձէն լսեցի, էկայ, քո չորս դուռն էլ գնացի, օղորմութիւն ինծի չհասաւ։

Թագաւորն ասաց. Հա, դաւրէշին մէ քսան թուման փող բերէք։

Քսան թուման փող բերեցին, տվեցին դաւրէշին, ըսեց. Դաւրէշին շոր լէ տվէք հագնի։ Շոր բերեցին տվեցին, դաւրէշ հագաւ։ Դաւրէշ ուղեց օր քելէր, շնորհակալ էլաւ թագաւորէց. Թագաւոր զարմացաւ ուր օղորմութեն տալու վրէն, ըսեց. Դաւրէշ, շուռ գալող մարդ ես, յըմէն տեղրանք դու շուռ կիգաս, իմ պէս օղորմութեն, վէրջի տվող թագաւոր տեսո՞ր ես։

Դավրէշ ծիծղաց։

Ըսեց. Դաւրէշ, ինչի՞ կը ծիծղաս։

Ըսեց. Թագաւոր, էտ խօսքն օր դու ըսեցիր, ես իմալ չը ծիծղամ։ Դու ինձի հալա քսան թուման փող ես տվէ, մէկ ձեռք լէ հին շոր ես տվէ, ըտոր համար զարմացար քու տվածի վրէն. հըպը իմալ ֆլան քաղաք աղչիկ մի կայ, ուրբաթ ուրբաթ երկու չվալ փող կը բառնայ մէ բոզ դէվի մի, կը հեծնայ կիգայ մէյդան. կը կայնի, ձեռք կը տանի չվալներու միջէն փողէ հանէ ու կը թալէ, ամէկ ուր զսմաթ կը վերցու։

Թագաւորն կը զարմանայ, կասի. Էտի սուտ կէղնի, դաւրէշ։

Դաւրէշ կասայ. Ես տեսեր եմ, գուզիս աւտըցի, գուզիս մ՚աւտընայ։

Դաւրէշ գելլէ կերթայ։ Դաւրէշն օր կերթայ, թագաւորի աղէն իրեն իրեն կը մտածէ, կըսէ. Ես օր էտ աղչիկ չերթամ առնեմ, իմ սաղ ճնալ զուր է։

Հելաւ, վերցուց բաւականի փարայ, լցեց ուր խուրջին, գնաց լաւ ձի մի քաշեց թագաւորի խաս թաւլից, բերեց թամքեց, գեամեց, բերեց խուրջին կապեց ձիու թամքին, հեծաւ ձին։ Էա հու եալլահ էրեց, ըսեց. Մացէք բարով, թագաւոր, ես օր կերթամ, էրթալը իմ ձեռ, գալը Աստծու ձեռ։

Գիշեր ցերեկ մէկ էրեց, քշեց ձին գնաց ու գնաց. օրերուց մէկ օր էտ քաղաք դուս էկաւ։ Գնաց խան մի յիջաւ ձիուց, ձին քաշեց խան, կապեց, հանեց ճանկ մի օսկի ջիբէն, ըսեց. Ծանճի, առ իտա ճանկ մի օսկի քըզի, իմ ձիուն լաւ մուղաթ կեցի, չուր ես իգամ։ Օրն էլ ուրբաթ օր էր, ուշիկ ուշիկ գնաց յելաւ մէյտան, տեսաւ օր քաղաք քաղքով թափած է ու կերթան։

Ըսեց. Դուք իտա հմլա դո՞ր կերթաք։

Ըսեցին. Տնաւէր, դու չես գի՞նայ։

Ըսեց. Չէ, ես չեմ գինայ։

Կերթանք, ըսեց, փարա ժողվինք, էս օր ուրբաթ օր է, թա-

գաւորի աղչիկ կիգայ փարայ ցրվէ, դու լէ արի էրթանք քըզի փարա ժողովէ։

Թագաւորի տղէն ըսեց. Ես զաթի էտ բան կը գալինք (կը-ըռնենք), հազը էկեր եմ, գտեր եմ, էրթամ տեսնամ էտ աղչկան ահվալ։

Թագաւորի տղէն ընկաւ էտ մախլուխի յետև ու գնաց։ Գնաց մէյտան կանաւ (կայնաւ), տեսաւ. օր ինչ տեսնի՝ աղչիկ մի հեծեր է բոզ դէվէն կիգայ։ Տեսաւ օր, աղչըկայ տուն չաւիրի, աղչիկ մի ըսէ, մէ չամչրաղ ըսէ, արևու պէս փարլամիշ կէղնի ու կիգայ։ Տղէն օր տեսաւ աղչկան՝ խելք գլխուց գնաց։

—Ա՜յ, հայ, ըսեց, իտա հմլա էլ ախչիկ կեղնի աշխարք։ Ես օր իտա ախչիկ չառնիմ, ըսեց, կը մեռնիմ, չարայ չկայ։ Տղէն իշկեց ու բայիլմիշ էղաւ, ախչիկ ուր ձեռով փարէն հանեց, ցըր-վեց։ Էտ հագին (ահագին) ժողովուրդ ուրանց փարա ժողվեցին ու քաշվան։ Տղէն իշկեց, իշկեց, տեսաւ օր փարէն էտէ պըտի խըլըսի, հասաւ ինքն էլ վերցուց, տեսաւ օր հարընոցմ է, էտ օրն յընցաւ գնաց, ճնաց չուրի մէկ էլ ուրբաթ օր, մէկ էլ ուր-բաթ օր տղէն էլի գիշերանց յելաւ, էկաւ կայնաւ մէյտան։ Գիտ-ցաւ օր ախչիկ էլման պըտի գայ՝ փարա բերէ ցրվէ. մէկ լէ տեսաւ օր ախչիկն էկաւ, տեսաւ չրաղի պէս կը վառի, դէվի վրէն փարլամիշ կէղնի, ու կիգայ։ Օր տեսաւ, վազաւ գնաց յառէջ, էլման ճնաց իշկելով։ Էտի փարան ցրվեց, տարող՝ տարաւ։

Տղէն տեսաւ օր էլման փարէն պըտի խըլըսի, ըսեց. Եաւաշ կըզեմ մէկ էլ ես վերում։ Տղան կզաւ, վերուց, օր էլման հարընոց է։ Հըմա ախչկայ աչք տղի վրէն էր, տեսաւ օր իտա էրկու ան-դամ հարընոց կը վերցու։

Ախչիկ փարէն խըլըսուց, թողեց գնաց։

Մնաց չուրի մէկ էլ ուրբաթ օր, էլման բերեց ցրվեց. էլման տղէն վերցուց, օր հարընոցմ է։ Ախչիկ տեսաւ օր, էլման տղի ձեռ հարընոց ընկաւ, ուրին ուրին ըսեց. Էտ ինչ բախտաւար տղայ է, էտ տղէն, իտա իրեք ուրբաթ օր ես կը բերեմ փարայ կը ցրվեմ, էտ տղէն հարընոց կը վերու։

Ախչիկն օր դարձաւ գնաց, տղէն տեսաւ օր բոզ բան է, ախ-չիկը էլման գնաց, ըսեց. Ջանըմ, իտա հըմլա չէղնի, ես էկեր իմ օր էտ ախչիկն առնեմ, իմ պապու փարէն քիչ չէ, ես փարայ ժողովելով տանիմ ինչ էնիմ։

Ախչիկն օր դարձուց դէվէն գնաց ուր օթախ, տղէն յընկաւ յետև, յուշիկ յուշիկ գնաց։

Ախչիկ տեսաւ օր իտա էն տղէն է, օր իրեք անգամ հա-րընոց վերցուց։

—Հա՛, տղայ, լսեց, ինչի՞ էկար։ Դու յըմիու բէարա փարա վերցուցիր, էլ յորի՞ իս էկի կիշկես։

—Է՛հ, լսեց, ախչիկ, ես փարի կարօտ չեմ, ամա, քըզի էղնի քու տված իրեք հարիր մանէթը, չըմ ուզի։

—Հապա, լսեց, տղայ, ինձնէ ինչ գուզես, յորի՞ ես էկե կայնե իմ դուռս։

Լսեց. Ախչի, ես եկեր եմ, օր քըզի առնեմ, մախսուս քըզի համար եմ էկե։ Անկարելի է, օր երկինք յելնիս, գետին իջնիս, ես քըզի պըտի առնիմ տանիմ։

Ախչիկ տեսաւ, օր տղէն լաւ տղայ էր, պակաս տղայ չէր, շատ հաւնաւ, լսեց. Տղայ, օր դու էտ մարքով էկեր ես, արի ներս, քըզի իրեք խօսք ունեմ ըսելու։

Տղէն գնաց ներս, լսեց. Ըսէ, տեսնամ ինչ պըտի ըսես, ախչի։

Լսեց. Տղայ, քեզի տեղ պըտի ճամփեմ, իրեք մարդու ահ-վան (խորհուրդ) կայ, օր գացիր յիմցար՝ էկար լսեցիր, կառնեմ քըզի, օր չիմցար ու դարձար էկար՝ գլոխտի կիտամ զարկել։

Տղէն լսեց. Շատ լաւ, ըսա, կերթամ։

Լսեց. Տղայ, կերթաս իտա ճամփով, մէ քաղաքմ ռաստ կի-գայ, օր հասար էն քաղաք, թագաւորին իտա բախչէ մի կայ, իտա բախչի մէջ մատամա հաւուզ մի կայ շիքուկ, մէկ մարդ մի նստուկ է էն հաւուզի մօտ, ջրի մէջ հա կիշկէ, հա կիշկէ, ընտոր սովորութեն էտմալ է, չուր իրիկուն կիշկէ ու կըսէ. Տեսածս մէկ լէ տեսնեմ։

Ընտոր ահվալ կիմնաս, կիգաս ընձի կըսես։ Ընտոր օր յիմ-յար, կերթաս ուրիշ քաղաք մի կայ՝ ընդոր էն դէն, էն քաղաք լէ մարդ մի կայ, ուրբաթ օրէ ուրբաթ օր ձիու ռախտ ու յը-ուրջմա (թամբի սարք) կը շիքէ, օսկուց ու արծթից, կը բերէ քաղքի մէջ կը պըտըտցու, կըսէ. Ձիու ռախտ ու ուրյըշմա կը ծախիմ, առնող լէ փոշման է, ծախող լէ, իրիկուն մէկ կիգայ ուր ուզած դին կիտայ, չիտայ, չագուճն ու գնդան գոտուց կը քաշէ, կը գնէ վրէն կը ջարդէ, կը լըլայ տոպրակն ու կերթայ։ Էտ լէ գիմնաս, տեսնանք յորի՞ կը շիքէ, յորի կը ջարդէ։

Էնդեխէն կընցնիս կերթաս ուրիշ քաղաք մի կայ, ընտոր էն դէն օր գացիր էն քաղաք, կը տեսնաս օր պըզտի քաղաք մի ջրի իտա դէնը, մեծ քաղաք մի ջրի էն դէնը, մէկ մարդ մի իտա պղտի քաղքէն կը հեծնի սև եղ մի սապահատան կը քշէ, կերթայ ջրի պռուկ կը կայնի, սիվտակ մուրուք մարդմ լէ էն ջոջ քաղ-քից կը հեծնի բոզ ձի մի, կիգայ ջրի էն դէհի պռուկ կը կայնի, էնի էն դէհէն գիլայ, իտա՝ իտա դէհէն գիլայ, չուրի իրիկուն,

օր էղաւ իրիկուն, իտա կը դնէ քար ուր դաստըմըլի (թաշկինակի) մէջ, կը թալէ կերթայ ընտոր, էնիկ կը վերցու կը սրբըվի, էնի լէ ուր դաստըմալ կը թալէ գիգայ իտոր, էնիկ լէ կը վերցու սրբըվի, էնիկ կը դառնայ կէրթայ ուր քաղաք, իտա լէ կը դառնայ կիգայ ուր քաղաք։ Ըտոնց ահվալ լէ գիմնաս, կիգաս ընձի կըսես, տեսանք յորի՛ չկն ընցընի էրթայ յիրարու մօտ։ Օր էս յիրեք ահվալ յիմցար, էկար ընձի ըսեցիր, նոր ես քեզի կառնեմ, թէ օր չիմացար ու էկար՝ գլոխդ ի կը զարկեմ։

Տղէն ըսեց. Շատ լաւ, կեցի բարով, ես կերթամ։

Էլաւ գնաց, խանեց ուր ձին, քաշեց, հեծաւ, եահու եալլահ էրեց, էտ ճամբաս տվեց յառէջն ու գնաց։ Գնաց գնաց, շատ ու քիչը Աստված գինայ, գնաց հասաւ էտ քաղաքն, օր ախչիկ սաւլըխեր էր, գնաց ձին քաշեց խան, կապեց ու յելաւ գնաց թագաւորի խաս բախչէն, գալեց (որոնեց) գալեց, գտաւ. Տեսաւ որ ախչկայ խօսքն օղորթ էր. հանդէ խաս բախչի մէջ հաւուզ մի կայ, մէկ մարդ մի նստեր է հաւուզի պռունկ ու կիշկէ ջրի մէջ, կըսէ. Տեսածս ի մէկ լէ տեսնիմ։ Ու տղէն կայնաւ թամաշա էրեց։ Զուր իրիկուն էտամալ ըսեց. Տեսածս ի մէկ լէ տեսնիմ, տեսածս ի մէկ լէ տեսնիմ։ Տեսաւ օր յիրիկուն էրկու նոքար էկան. բըռնեցին էտուր թևերուց, հանեցին, կանգըցուցին, ու առան գացին։ Տղէն ուր հետ բերէր էր ձեռք մի դաւրէշի շոր, հագաւ էտ դաւրէշի շորերն ու էղաւ դաւրէշ, ընկաւ էտոր յետև, յուշիկ յուշիկ գնաց էտոր յետև։ Տեսաւ օր գնաց մէկ լաւ ամարաթ մի, օր թագաւորի ամարաթի պէս է։ Հանեցին քառասուն ոտ նարդիվան վերի օթախներ։ Նոքարներ դարձան տեսան որ դավրէշ մի ընկեր է ուրանց յետև, կիգայ յելնի օթախներ։

Ըսեցին. Դաւրէշ, դու դո՞ր կիգաս. դաւրէշի տեղ խաներն է, քիւլհաններն է, իտա քու լայաղին տեղ չէ, դարձի։

Էտ մարդ դարձաւ տեսաւ, օր դաւրէշ մէ, նոքարներ դաւի կէնեն, չեն թորկի իգայ ներս։

—Հա, ըսեց. Դաւրէշից լաղա չունիք (գործ չունիք), ըսեց, դաւրէշին իրաւունք է, ինչ դեխ օր եահու էրեց, դոնեն մտաւ, էնտեղ պըտի մնայ։

Թողեցին դաւրէշն էկաւ ներս. էտ մարդն էկաւ նստաւ ուր ջերու վրէն, դաւրէշին լէ տեղ տվեց նշանց, դաւրէշ լէ նստաւ. բերեցին հաց կերան, չայ խմեցին, դաւրէշին լէ չայ տվեց, հաց տվեց, դաւրէշին լէ ջուլ տվեցին, նոքարներն օր յելան գացին քնելու, մացին դավրէշն ու էտ մարդ մենակ։ Էտ մարդն օր յելաւ քնաւ, հըմա դաւրէշի քուն չի գայ, գուզէ օր էտոր ահվալ յիմանա։ Դաւրէշ յելաւ քնուկ տեղ գաբաւ էտ մարդու վրէն։

—Եա՛, ըսեց, էն ո՞րն ի։

Ըսեց. Ես իմ։

—Դու ո՞րն իս։

Ըսեց. Ես դաւրէշն իմ։

Ըսեց. Դաւրէշ, էտ ի՞նչ է կէնիս։

Ըսեց. Պըտի քըզի ըսպանիմ։

Ըսեց. Դաւրէշ, յորի՛ ընձի կսպանիս. ընձնէ ի՞նչ վատութեն տեսար, անաւէր. ախր ես քըզի տեղ տվեցի, հաց տվեցի, էլ յորի՛ ընձի կըսպանիս, ծո։

Ըսեց. Անիլլաճ է, օր քու ահվալ ընձի խսա չենիս, կըսպանիմ, տեսնանք յորի՛ կերթաս կը նստիս հաւուզի վրէն չուր իրկուն, կըսես թէ, տեսածսի մէկէ լէ տեսնիմ։ Տեսնանք էտ ի՞նչ ահվալ է։ Կըսես՝ ըսէ, չես ըսի՝ կսպանիմ։

Ըսեց. Դաւրէշ, դու քո Աստուած, թող ես յելնիմ նստիմ, խսա էնեմ քեզի։ Իտա խըտըը վախտ իսան իմ ահվալ իմցի՛ր է, օր դու կըսպանիս՝ պըտի ըսեմ քեզի։

Օր յօրթուն կերաւ, դաւրէշ թողկէց, էտի յելաւ նստաւ. ըսեց. Դաւրէշ, դէհ անկաճ էրէ, ես խըսա էնեմ։

Ըսեց. Դաւրէշ, ես իդա քաղքի թագաւորի աղէն էմ. օրերուց մէկ օր ես յելայ սապախտան, օր էրթինք թագաւորի դիվան, էկայ տեսայ օր իտա մեր հաւուզի մէջ էն յըմալ մէկ նշխուն հաւքմ էր յիջէ, օր թամաշի բան էր, ըտոր մէկ թեղուր մէկ յըռանկ կը զարկէր, դաւրէշ, ըսեցի, էս իմալ խորոտ բան է, ինձի շատ դուր էկաւ, զարձայ, ըսեցի, իմ նետուանեղ բերեմ, իտա հաւք զարկեմ, տանեմ թագաւորի դիվան, օր թամաշա էնին։ Զարձայ գացի, իմ նետ ու անեղ բերեցի, ըսեցի. մօտենամ, օր կըռանամ զարկեմ։ Դաւրէշ, քանի ես մօտեցայ, էտ հաւքը էկաւ թըխ ընձի, տեսայ օր էտ հաւք չթռնի, ըսեցի, հաւաշ էտ հաւք սաղ բռնեմ, բանըմ օր ընձէն չթռնի։

Ես ձեռս ի թալեցի օր յօտներ բռնեցի, էլ խաբար չեմ էղէ, թէ իմալ է էղեր է, խելքս ի գացեր է. դաւրէշ, մէկ էլ էն վախտ յիմացայ, տեսայ օր մէկ հասարի մէջ բաղուբախչայ, մաումաւ հաւուզ կայ, ամարաթ մի շիքուկ է, ես լէ էտ հաւուզի վրէն ընկեր եմ։ Աչքերս ի բացեցի, բայիլմիշ էղայ, էսղէն էնղէն կիշկեմ, մէկ լէ տեսայ, էտ ամարաթից մէկ փարի մի յելաւ, տեսայ օր ճրագի պէս կը վառէր էտ փարին։

Ըսեց. Հողածին, ըտա տեղ ի՞նչ բան ունես։

Ըսեցի. Հաւք մի ընձի բերից։

Ըսեց. Հողածին, էն հաւք ես ինք, գինաս քըզի ընչի՛ եմ բերի, բերեր եմ օր ես քըզի առնիմ, դու լէ ընձի կը հաւնի՞ս առնիս։

—Դաւրէշ, օր տեսայ էտոր սիֆաթ, մայիլ էղայ, ըսեցի. փաթի, օր դու ընձի առնիս՝ ես լէ քըզի կառնիմ։

Ըսեց. Դէ արի էրթանք ներս, ես քու հետ պահման մի պըտի ընեմ։

Գացինք ներս, ըսեց. Տղայ, նատի իմ գլոխ գնեմ քու չոքի վրէն, իրեք սըհաթ քնեմ, իրեք սըհաթւայ մէջ դու ընձի պըտի ձեռք չիտաս, իմ յերես չպադնես, միամիտ մնաս։ Օր յիրեք սըհաթ թըմըմաս, դընիմ առնիմ քըզի։

Ըսեցի. Շատ լաւ։ Նատայ, էտի գլոխ դրեց իմ չոքին՝ քնաւ։ Սըհաթ մի օր թըմըմաս, մէկ լէ տեսայ ինա դէն դուռ մի բացվաւ, մէկ փարի մի յելաւ էկաւ, օր ընդընէ շատ խօրոտ էր. ըսեց. Հողածին, էտ ինչ է կէնիս։

Ըսեցի. Իտա փարին իրեք սըհաթ իմ չոքի վրէն պըտի քնի, օր յելնէ առնէ ընձի։

Ըսեց. Տնաւէր. յիրեք սըհաթ ճի պըտի թըմըմի, թող ես էրկու սըհաթ քնիմ, յելնիմ առնիմ քըզի։ Դաւրէշ, էլ չմտածեցի, օր սահաթ մի գացեր է, մացեր է էրկուս. ըսեցի. արի։ Էնօր գլուխ դրեցի գետին, էտի էկաւ գլոխ դրեց իմ չոքին՝ քնաւ։ Սըհաթիմ օր թըմըմաս, մէկ լէ տեսայ ուրիշ դուռ մը լէ բացվաւ, փարի մի էկաւ, օր էտ էրկըսից լէ շատ խօրոտ է, ըսեց. Հողածին, էտ յորի ես էտոր գլուխ դրիր քու չոքին։

Ըսեցի. Էտի էրկու սահաթ պըտի քնի, յելնի առնէ ընձի։

Ըսեց. Տնաւէր, էրկու սըհաթ ճի պըտի թըմըմի, ես ընտըրնէ խորոտ եմ, ես մէկ սըհաթ քնիմ յելնիմ, առնիմ քըզի։

Ըսեց. Դաւրէշ, էտոր լէ խաբվայ, ընտոր գլոխ դրեցի գետին, ընտոր գլոխ դրի չոքիս. սահաթը հալա չէր թըմըմէ՝ էտ յետի գալով յիմացաւ, յելաւ ու քելեց։

Ըսեցի. Դօր կերթաս։

Ըսեց. Հըա, տնաւէր, էտոնք օր յիմցան, ընձի փարալամիշ կէնին, ես գիշխնամ ըտոնց ահուն քըզի առնիմ։ Էտի օր գնաց, էն միջնէկ դուր յելաւ, քելեց։

Ըսեցի, Դօր կերթաս։

Ըսեց. Տնավէր, քըզի խաբեցի, իտա իմ մեծ քուրն ի, օր յիմացաւ՝ ընձի փարալամիշ կէնէ, ես կրնամ քըզի առնիմ։

Էտի օր գնաց, առջի փերու գլոխ վերցի դրի չոքիս վրէն, իրեք սահաթը թըմըմաւ, էտի յիմացաւ։

—Հա, ըսեց, հողածին, էտ ինչ էր էրեցիր։

Ըսեցի. Ի՞նչ եմ էրի։

Ըսեց. Ցորի խաբվար իմ քրվըտուց, ախր ես քու խետ պայմանն ինք էրի, յորի ըչբախտութեն էրեցիր, դու յիրեք սըհաթ

օր քու պայմանին չմնացիր, էլ քու բախտ ինչ պըտի էղնի։

Ըսեց. Դաւրէշ, տարաւ բերից, մէկ սիլլէ մի զարկեց իմ յերեսին, ես գիտցայ թէ իմ աչքեր թափաւ, ըսեց. որ դիհէն էկեր ես, քըզի էնտեղ տեսնամ։ Դաւրէշ, մէկ լէ տեսայ օր ես մեր հաուղի վրէն կայնուվ եմ, էն վախտնէ չուրի էտա վախտ, էդ է իմ փէշէն, սապահտան օր քնուց գելնիմ, կիգամ կը նստիմ էտ հաւուղի վրէն, կըսիմ. Տեսած լէ մէկ լէ տեսնիմ, բալքի էն հաւք մէկ լէ տեսնիմ, ու չեմ տեսնի։ Իմ ահվալ էտ ի։

Դաւրէշն ըսեց. Դէ, պրծար, յերի քնի։

Յելաւ քնաւ, սապահտան լուսուն օր բացվաւ, դաւրէշն յելաւ շնորհակալ էղաւ, ընկաւ ճամբան։

Գնաց էն քաղաքը դուրս յելաւ, օր ախչիկն ըսեր էր։ Ուրբաթ օր էր, գնաց մէյդան, տեսաւ օր մէկ մարդ մի, ձիու ոտխտ յըռըշմա ա շիքի, բերեր ա կը ծախի, կըսէ. Առնող լէ վոշման է, ծախող լէ։ Ձուրի իրիկուն պըտըտացուց, որն օր էղաւ մուշտարի, չծախեց. յերկուն չաքուճն ու գնդան քաշեց գոտուց, դրեց վրէն ջարդեց, ըսեց. Առնող լէ խէր տեսնի, ծախող լէ։ Դարձաւ գնաց ուր տուն։ Դաւրէշն ընկաւ յետև, գնաց ղօնաղ էղաւ, բերեցին հաց կերան, խմեն, պառկան քնան։ Օր քնան, դաւրէշն յելաւ գաբաւ էտ մարդու վրէն։

Ըսեց. Էն ո՞րն է։

Ըսեց. Ես իմ։

Ըսեց. Դու ո՞րն իս։

Ըսեց. Ես դաւրէշն իմ։

Ըսեց. Էտ ինչ է կէնիս։

Ըսեց. Կըսպանիմ քըզի։

Ըսեց. Դաւրէշ, ես խեղճ իմ, ափսոս իմ, ջըհել իմ, մուրազ ունիմ, ինչ իմ երէ օր ընձի կըսպանես։

Ըսեց. Զըմդինայ, քու ահվալ ընձի խսա կէնիս՝ էրէ, օր չըսէնի՝ կըսպանիմ։ Քու աւալ ինչ է, օր շաբաթ մի կաշխատես, ձիու ոտխտ ըռըշմա կը շիքես, ու կը բերես չըս ծախէ, դին կիտան չես իտայ, կը ջարդիս, մէկ լէ կը տանիս, կը շիքիս։

Ըսեց. Դաւրէշ, թող յելնիմ, խըսա էնիմ։

Յելաւ նստաւ, դաւրէշին խսա էրեց.

Ըսեց. Դաւրէշ, ես իտա քաղքի թագաւորի տղէն իմ, ես յըմէն անգամ աւուղուշ կէրթէնք, էն մէկ օր լէ գացի աւուղուշ, Ջէյրան մի յառջէւէս փախաւ, ձին քշեցի էտ Ջէյրանի յետևէն, յելաւ սարեր. գացի յետևէն, յելաւ քարուտ խըլխըլէ մի մտաւ, ձին թողեցի էտ տեղ, փիատայ յելայ Ջէյրանի յետև. էտ քարեբուց օր Ջէյրան իրան թալեց, գնաց գյած, ես լէ յետևանց թալեցի

ընձի. իմ թալեկն իմ յիմցէ, մէկ լէ տեսայ օր՝ յընկեր իմ մէկ տեղ մի, հագին (ահագին) հայաթ, բաղ ու բախչա, մառմառ հաւուզ մէջ, ամարաթ մի մէջ շիքուկ, մէկ լէ տեսայ, էտ ամարաթից փարի մէ յելաւ, էկաւ. փարու տուն աւերի, արևու պէս փարլամիշ կէղնի. ջուր խմելուս բոխախն կը շողայ, պըլընտրուկ (մատով բակին) զարկելուս, որ կը դողայ։

—Ա՛յ, հայ, ըսեցի, էտմալ լէ առեղմ՞ունք կէղնի աշխրքի մէջ։ կեղնի՞ օր իտա փարին առնէ ընձի։

Էկաւ ըսեց. Հողածին, էտ ի՞նչ է կենիս էտ տեղ, քեզի ո՞րն է բերէ էտտեղ։

Ըսեցի. Փարի, ընձի մէ ջէյրան մի բերէ թալէ իտա տեղ։

Ըսեց. Տղայ, էտ ջէյրան ես ինք, քըզի բերեցի, օր ես քըզի առնիմ, դու ընձի կը հաւնի՞ս առնես։

—Դաւրէշ, ըսեց, օր էտ խօսքը լսեցի փարուց, չոքերս ի դողաց. ըսեցի. Տնաւէր, օր դու ընձի առնիս, ես քըզի չեմ ծառնի։

Ըսեց. Օր էտմալ է, արի ես ու դու պայման մի էնինք, օր քու պայմանին տէր ծնաս, կառնիմ քըզի։

Ըսեցի. Լսա տեսնինք, ի՞նչ պայման ի։

Ըսեց. Հողածին, ինչ որ էնիմ, ըսկի չպիտի զրուցես իմ բըռնած բանի մէջ։

Ըսեցի. Շատ լաւ կէնի, չեմ զրուցէ։ Պայման էրեցինք, օր ես առայ էտ փարուն։ Ժամանակ մի օր մացինք, տղէ մի էղաւ մըզի, էտ տըղէն պահեցինք, էրկու տարեկան էղաւ, մեծըցաւ, փարու զաւակ, շատ խորոտ էղաւ, իմ սէր թալեցի տղու վրէն, գիշեր ցերեկ չինք թորկէ իմ մօտէն հեռենէր։ Սէրս ի թալեցի վրէն։ Էն մէկ օր նստեր ինք ես ու իմ կնիկ, կը զրուցինք.

Ըսեց. Թազաւորի տղայ, շա՞տ գուզես էտ տղէն։

Ըսեցի. Շատ գուզեմ, ջիգեար է, հըպը չեմ ո՞ւզի։

Ըսեց. Շա՛տ, շա՞տ գուզես։

Ըսեցի. Շա՛տ, շա՞տ գուզե՛մ։

Բոռաց. Ա՛ռջ։ Մէկ էլ մըռմըռթալէն արջ մի էկաւ։

Ըսեց. Առջ, իտա տղէն վերու տար քըզի։

Առջ վերցուց, թալեց թէզը ու մըռթմըռթալէն առաւ գնաց։

—Մ՛ըռմըռացի, դաւրէշ, շատ մ՛ըռմըռացի, հըմը պայման իմ էրի, էլ չեմ կրնայ զրուցէ։

Սահաթ մի ծնաց, տեսաւ օր շատ ղէմ գընկինք, էկաւ փաթթըվաւ վիզս, լաւեց (աղաչեց), դաւեց, պագեց, ըսեց. բան չեղնի, թագաւորի տղայ, օղլուշաղ ինք, կարճամիտ ինք, էղաւ օր էղաւ։ Բան չկայ, ջհել ինք, էլի տղայ կէղնի մըզի։

Մնաց մէկ ժամանակ մի, տղեմ լէ էղաւ, էլի սէր թալեցի

էտ տղի վրէն, պահեցի, էղաւ էրկու տարեկան էն. մէկ օր նստեր ինք ելման խսա կէնինք, ես ու իմ կնիկ. ըսեց. Թագաւորի տղայ, էտ տղէն լէ շատ գուզիս։

Ըսեցի. Բա չեմ ուզի, տնաւէր, էլ ինչ ունիմ աշխրքի մէջ, թագաւորութենից զրկվեր իմ, աշխրքից զրկվեր իմ, էկեր իմ, ընկեր իմ իսա տեղ, ըշտէ քու խետ սիրտս ի կը բացվի, ու իտա տղի։

Ըսեց. Թագաւորի տղայ, թը՛ն, խոզի (երանի) էն մէկ տղէն լէ չինք տվէ առջ տարեր էր. ինչ լաւ կէղնէր։

—Տէհ, ըսեցի, փարի, էղած օրհնած ի, էս լէ բոլ է։

Մէկ լէ տեսայ, բոռաց. Դէվ։

Դէվմ էկաւ, մէկ ահագին աժդհամ էր։

Ըսեց. Դէվ, իդա տղէն տար քըզի։

Ըսելու պաշտան, դէվ վերցուց տղէն ու քելեց։

Սիրտս ի մըռմըռաց, հըմը ձէն չհանեցի, պայման իմ էրի։

Սահաթ մի մացի հըմալ մըռմըռալով, մէկ լէ տեսայ, յիլաւ էկաւ, փաթթըվաւ վիզսի. լաւեց, աղաչեց, ըսեց՝ բան չկայ, թագաւորի տղայ, վրէս ի յընցաւ (սխալուեցի), ջըհել ինք, էլի տղայ Աստված կիտայ։

Մնաց մէկ ժամանակ, մոռացանք, իտա հախսի ախչիկ մի էղաւ։ Ախչիկ լէ շատ խօրոտ տղէքներու պէս, սէրս ի թալեցի ախչկայ վրէն, պախեցի, պահպանեցի, օր մը լէ նստեր ինք խսա կէնինք, ըսեց. Թագաւորի տղայ, էտ ախչիկ լէ շատ գուզիս։

Ըսեցի. Տնավէր, հըպը չեմ ուզէ, էլ ինչ ունիմ։

Ըսեց. Շատ-շատ գուզիս։

Ըսեցի. Շատ գուզիմ։

Ըսեց. Տղէքներու բարա գուզիս։

Ըսեցի. Գուզիմ։

Ըսեց. Բեաւթառ։

Տեսայ օր քեաւթառ մի դռնէն մտաւ։

Ըսեց. Բեաւթառ, վերու էսա ախչիկ տար քըզի։

Օր ըսեց, քեաւթառը վերուց ախչիկը թալեց շալակն ու գնաց։

Ըսեց. Դաւրէշ, ախչիկ լէ օր տարաւ քեաւթառ, էլ չդիմցայ, սիրտս ի շատ մըռմըռաց, կսկըծվորայ, տարայ բերեցի մի չափալէխ մի զարկեցի փարու քիթ ու բերան, ղինք ու զուր արուն խառնըվան իրար. գնաց ախալ թախալ ընկաւ ինա տեղ։

Ձէն չէրեց, ըսկի, դաւրէշ, յելաւ անձէն անձուն, գնաց լվացվաւ, թամուսցաւ, էկաւ նստաւ։

—Է՛, ըսեց, հողածին, էտ ինչ էր էրեցիր իմ գլոխ. չէ՞ ես ու դու պայման ինք էրի, օր ըսկի դու իմ բանի մէջ չզրուցիր, յորի զարկեցիր ընձի, ես ու իմ արուն խառնըվանք իրար։

Ըսեցի. Տնաւվեր, էտի օր էրեցիր իմ գլոխ, լաւ էր չսպանեցի քըզի։

Ըսեց. Հողածին, հըպը քու ջիգեար ջիգեար է, իմ ջիգեար ջիգեար չէ՞։

Բռռաց, ըսաց. Ա՛ռջ։ Մէկ լէ տեսայ առջ մըռմըռթալէն էկաւ կայնաւ։

Ըսեց. Առջ, գնա տղէն առ արի։ Մէկ լէ տեսայ առջ տղէն բերեց, տղէն էղեր է չորս հինգ տարեկան, մէկ նշխուն խնձոր մի դարձի։

Ըսեց. Իտա քու տղէն.

Ըսեց. Դէվ։

Դէվն էկաւ։

Ըսեց. Դէվ, գնա տղէն բեր։ Մէկ լէ տեսայ դէվ բերեց, բերեց օր էտի դահա լաւ ի պահէ, մէկ թամաշի բան է էղի։

Ըսեց. Իտա լէ քու մէկէլ տղէն։

Ըսեց. Քեաւթառ, ախչիկ դառցու բէ։ Քեաւթառ ախչիկ դարձուց բերեց։

Ըսեց. Իտա լէ քու ախչիկ։ Հըպը դու յորի՞ հըմլա զարկեցիր ընձի, ախր մենք փարի ինք, մեր մէջ սովորութիւն է, օր էրեխով կը ճանք, մեր ըրեխէք կիտանք մեր ազգականներ կը պահեն, դու ընչի՞ չհամբերեցիր, չէ՞ մենք պայման ունինք։

Ըսեցի. Ըշտը, փարի, սիրտս ի չդիմացաւ, ըսեցի, իմ էրեխէք տվեց ջանավարներուն. էլ համբերութիւն ի չտարաւ, զարկեցի։

Ըսեց. Չէ, հողածնին բախտ չէղնի, տարաւ բերեց սիլլէ մի զարկեց իմ յերսի մէջ, ըսեց. Որ տեղէն էկեր իս, էնտեղ տեսնաս քըզի։ Դաւրէշ, մէկ լէ տեսայ, օր քարկրու յառէջ, իմ ձիու մօտ կայնուկ իմ, փոռ ու փոշման հեծայ իմ ձին ու էկայ։ Էն վախտնէ չուրի էտա վախտ իմ էրէխէսներու շաքիլ ու իմ կնկան կը շիքիմ էտ ռախտ ըռաշմի վրէն, կը բերիմ կը պըտըտցում. սրտէս չհանէ օր ծախիմ, մարդ ուր էրէխէք, ուր կնիկ կը ծախէ։ Իմ ահվալ իտա է։

Ըսեց. Դէ, յելի քնի, դու պրծար։

Էլան քնան, սապահտան օր լուս բացվաւ, դաւրէշն էլաւ, շնորհակալ էղաւ, գնաց խանը, ուր ձին հեծաւ, խանչեց ուր Աստվածծ, գիշեր ցերեկ մէկ էրեց, ճամբան տվեց ուր առէջ ու գնաց։ Գնաց, շատ ու քիչ Աստվածծ գինայ, օրերուց մէկ օր գնաց հասաւ էտ պզտիկ քաղաք։ Գնաց ուր ձին տեղմ կապեց, սապահտան, լուսն օր բացվաւ, յելաւ գնաց ջրի մօտ, տեսաւ օր մէկ ջահել տղէմի հեծեր է սև եզ մի, քշեց էկաւ, ջրի պռունկ կայնաւ, յիջաւ եզան վերևէն էտտեխ, մէկ լէ տեսաւ օր մէկ սիվ-

տակ մուրուք ւարդ մի, հեծեր է բոզ ձի մի, էտ մեծ քաղքից էկաւ. էկաւ էն լէ ջրի էն դհէն կայնաւ. էտ սև եզան դիմացը, ջուր մնաց էրկըսի արանք, էնի էն դէհէն լաց չուր յիրկուն, իտա լէ իտա դըհէն լաց չուր իրիկուն, օր արև պատաւ, ջհել տղէն քար դրեց դաստըմալի մէջ, թալեց գնաց էն հալիվորուն, հալիվոր լէ ուր դաստըմալ թալեց էկաւ ջահիլ տղին. վերցուցին էրկուս լէ ուրանց աչքեր սըրբեցին, հալիվոր դարձաւ գնաց մեծ քաղաք, տղէն լէ դարձաւ էկաւ պղտի քաղաք: Դաւրէշ ընկաւ էտ ջահել տղու յետևից ու գնաց, գնաց տեսաւ օր ջահել տղէն ամարաթի մը առէջ իջաւ եզան վերևէն, նոքարներ էկան, բռնեցին թևերուց, հանեցին քառսուն ատ նարդիվան վերև, տարան ուր օթախներու մէջ նստեցուցին: Դաւրէշ լէ էտոնց յետև գնաց մտաւ օթախ, ըտոնց ղոնաղ էղաւ, կերան խմեցին, եղը քաշեցին, բերին օթախը կանգըցուցին:

Ըսեց. Վարոց (ճիպոտ) բերէք:

Բերեցին մէկ տատա վարոց: Դաւրէշի դուդումը կոտրաւ. ըսեց. Եարաբ, ընձի պիտի ծեծին իտա վարոցներով: Մէկ լէ տեսաւ, նոքարներ վարոցներն առան ու ընկան եզան ջանին, տուր թէ կտաս:

Օր ծեծեցին պրծան, բերեցին աւազն ու գարին խառնեցին յիրար, լըցեցին եզան յառէջ, հըմը դաւրէշ տեսաւ օր էտ պատուհանից ոքոց մի կիզայ: Յելան քնան: Օր քնան, դաւրէշը յելաւ ու գաբաւ էտ տղի վրէն.

Ըսեց. Ջու ահվալ ընձի խսա կէնիս, էրէ, չըս էնէ՝ քըզի կըսպանիմ:

Ըսեց. Դաւրէշ, դու քու Աստված, թող յէնիմ, խսա էնիմ:

Դաւրէշ թորկեց, էտի յելաւ նստաւ. ըսեց. Դաւրէշ, անկաջ էրա, խսա էնիմ:

Ըսեց. Էն ծեր մարդը տեսաք, օր բոզ ձիով էկաւ ջրու էն դիհու պռունկ կայնաւ:

Ըսեց. Տեսայ:

Ըսեց. Էնի էն մեծ քաղքի թագաւորն էր, ես լէ ընտոր տղէն ինք. ես վազիրի տղի հետ ողջում ախպէր ինք, մէկ սըհաթ օր յիրարու չտեսնինք, կը մեռնինք կսկըծու: Էղաւ օր, մէկ օր, ես ու վազիրի տղէն աւուղուշ գացինք, պըտըտեցինք, էկանք իտա իմ պղտիկ քաղքի տեղ, համայի (ամայի) էր, քաղաք չկէր էն վախտը, տեսանք օր իտա տեղ մէկ մենծ էլիաթ մի թափէր ի, չադրներ զարկած ին ու նստուկ ին: Տեսանք օր էտ մենծ չադրներու մէջ մէկ մենծ չադր մի կայ, օսկի խնձոր գլոխ զարկուկ է. մօտեցանք էտ չադըրին, տեսանք օր էտ չադըրի միջէն մէկ

ախչիկ մի գեղնի կը մանի, ախչկայ տուն աւիրի, ախչիկ մըսի, մէկ հրեղէն մի ըսէ, ճրագի պէս վարլամիշ կեղնի։ Օր աչքս ի առաւ իտա ախչիկ, խելքս ի գնաց ու պատայ գետին։

Վազիրի տղէն հասաւ, վերցուց ընձի, ըսեց. Թագաւորի տղայ, էտ ինչ էղաւ քըզի, դու սաղ էր, էտ ինչ պատահաւ։

Ըսեցի. Վազիրի տղայ, էտ ախչիկ օր ես տեսայ, իմ խելք տարաւ, էտոր օր չառնիմ, ես հաստատ կմեռնիմ։

Վազիրի տղէն ընձի վերցուց դրեց ձիու վրէն ու բերեց իմ օթախ թալեց, խապար տարաւ թագաւորին, թէ արի թագաւոր, տղէն կմեռնի։

Թագաւոր յելաւ, վերցուց վազիր, վաքիլ, էկաւ տեսաւ օր խելք չկայ տղի գլօխ. ըսեց. էտ ինչ է էղէ։

Ըսեցի. Թագաւոր, ախչիկ մի եմ տեսէ, օր ընդոր սէր ընձի տարաւ, օր էն ընձի չուզեց՝ ես կը մեռնիմ։

Ըսեց. էտ ձր տեղն է, ինչ ախչիկ է։

Վազիրի տղէն ըսեց. Իտա համայի տեղ, օր քու քաղքի կուշտն է. էտտեղ մէկ էլիաթ մի էկի թափէ, էտ էլբաշու ախչիկն է։

Թագաւորն օր յիմցաւ, յելաւ հեծաւ ձին, վազիրով, վաքիլով, էկաւ էտ ախչիկ տեսաւ։ Օր տեսաւ՝ թագաւորին լէ շատ դուր էկաւ էտ ախչիկ. խանչեց էլբաշուն հանեց չադրից դուրս, ըսեց. Իտա ախչիկ քու ախչիկն է։

Ըսեց. Իմ ախչիկն է։

Ըսեց. էտ ախչիկ պըտի տաս իմ տղին։

Ըսեց. Թագաւոր ապրած կենայ, բան չեմ ըսի, կիտամ, համա ես քու հետ պահման պըտի էնիմ, օր պայմանի տէր կենաս՝ կիտամ. օր պայմանի տէր չկենաս, հարիր քու պէս ընկնի իմ յետև, չի կարնայ իմ ախչիկ զօռով առնէ իմ ձեռնէն։

Թագաւորն ըսեց. Ըսա տեսնանք ինչ պայման գիւզիս ընձնէն։

Ըսեց. Ես իմ ախչիկ կիտամ քու տղին, նշան էլ կը դնիմ, սապախտան կը բառնամ իմ բեռնը, կերթամ, մէկ տարի էսօր կիգամ իտա տեղ, ակար իտա տեղ մեկ թեթև քաղաք մի շիքեր իս, մէկ ամարաթ մի շիքեր իս իմ ախչկայ ու իմ վեսի խամար, էն վախտ կիտամ իմ ախչիկ, կը պսակիս, կը դնիս էն ամարաթի մէջ, ու ես էն սապախտան էլի կը քոչեմ կերթամ։

Ասեց. Դաւրէշ, էտ պայման թագաւորի հետ էրեց իմ աներ, նշան դրեց, ու սապախտան յելանք, օր չկայ, գացեր ա։

Թագաւորը բերեց էտտեղ իտա պզտիկ քաղաք շիքեց, պատրաստեց, մնաց էն մէկէլ տարին, էն օր, մէկ լէ յելանք սապախտան, տեսանք օր էլիաթը էկեր է էլման էտտեղ նստեր է։ Գացինք տեսանք օր իմ նշանած բերեր է։ Թագաւոր բերեց մըզի

պսակից, դրեց իտա ամարաթի մէջ, ճնաց, սապախտան մէկ լէ յելանք, օր էլիաթ չկայ, քոչեր է, գացեր է։ Մենք իտա տեղ մացինք, վազիրի տղէն լէ էն տեղ մեծ քաղաք ուր տեղ ճնաց։ Մէկ ժամանակ լէ էտմալ ապրանք, էն մէկ օր խապարն էկաւ հասաւ ընձի, թէ ինչ կէնիս, թէ վազիրի տղէն շատ հիւանդ է, եա հասնիս յերեսին, եա չհասնիս։ Ես օր լսեցի, կրակն ընկաւ սիրտս ի վառաւ, ախպրութեն ընկաւ միտքս, լսեցի. շատ շուտով էրթամ հասնիմ, էտի իմ ախպէրն է, տեսնամ, կարօտով չճնամ։

Ես օր իմ ձին հեծայ պըտի էրթէի, իմ նշանածս լսեց. նա ինչ մարդ է, օր էտ ղըղար դու դէմ գընգնիս։

Լսեցի. էտ իմ ողջուն ախպէրն է, մէկ շապիկի մէջ ենք մեծցէ։

Իմ նշանածն լսեց. Օր ղըղըր կը սիրես քու ախպօր, օր հասար, հըլը չը մեռեր է՝ շուտով հասուս իմ մօտ, ես կը սաղցում, ես հեքիմութեն գինամ։

Ես գացի շուտով հասայ, օր չէր մեռեր է, վերցուցի, առայ էկայ. օր բերեցի իմ օթախ դրեցի, իմ նշանած էկաւ տեսաւ լսեց. Դու դուս յելի, ես կը սաղցում։ Ընձի դուս էրեց, դուռը փակեց, ես եկայ փանջըրի ծակէն իշկեցի, լսեցի. Տեսնամ էտ ինմալ կըսաղցուս։

Մէկ լէ տեսայ օր հաճըթներ հանեց ուր դութու մըջէն. բերեց, գլխու դափաղք վերցուց, տեսայ օր էտու մէ ժոնի (ուղեղ) վրէն մէկ պոլոճ մի կայ կպուկ, փանճէք թալեր ա, մէժոն քամեր ա։ Էտի բռնեց քալբատով օր բոլոճ պըրծուցեր, էլ իմ համբերութեն չտարաւ, բռռացի, լսեցի. Մողաթով պրծու, չվնասէ։ Ես օր բռռացի՝ իմ նշանած խրտաւ, ձեռը թախթըփեց, մէժոն պատռաւ, վազիրի տղէն մեռաւ։

Վազիրի տղէն օր մեռաւ, ախչիկն ասեց. Քու վիզը կոտրվի, էտ ինչ էր էրեցիր իմ գլոխ, էղանք արընքտէր, օր չը բռռէր՝ չէր մեռնի, արի վերցու, իմ հէր մկա խապար էղաւ, մկայ կիգայ ինչ տեղ օր էղաւ։ Էկայ վերցուցի, լսեց, դաւրէշ, տարանք թաղեցինք վազիրի տղէն, բերեց իմ նշանած վարոց մի տվեց իմ ձեռ, լսեց. Իտա տեղ կը կայնիս, իտա օթախ, մեր ազգ սէհրքազ ին, մկայ իմ հէր յիմցաւ, կիգայ. օր էկաւ մուղատ կացի, իտա վարոցով յառէջ դու զարկ իմ հօր, լսէ. Նէտ մեռել էղնիս, նէտ սաղ։ Օր դու չըզարկեցիր, էնի կը զարկէ ընձի, ես հըմալ կեղնիմ։

Լսեց. Դաւրէշ, էտ խսէն հըլը իմ նշանածի բերան էր, մէկ լէ տեսայ օր իմ աներ բռռաց ու քամու պէս մտաւ ներս։ Օր մտաւ ներս, ես շիշկըռայ, էլ չկրցայ զարկինք. ընցաւ իմ նշանածին զարկեց վարոց մի, լսեց. Ծող (բոզ), իտա ղըղար ժամանակ մեր ազգի ձեռնուվ չըր էղեր է, դու էտ ինչ յարունք էրեցիր, լսեց ու վարոց մի զարկեց իմ նշանածին, լսեց. Նէտ

մեռել էղնիս, նէտ սաղ։ Օր զարկեց ու դարձաւ՝ վարոց մը լէ ես զարկեցի իմ աներոջ, ըսեցի. Մէկ սև եզ մի էղնիս. էզաւ սև եզ մի, դաւրէշ, ըշաը, էն վախտնէ չուր իտա վախտ իմ ահվալ էտ է, իտա օր կը ագա իմ նշանածն է, իտա սև եզ լէ իմ աներն է։ Մկայ կարօտ մացեր ենք ես ու իմ հէր յիրարուց, էնիկ կը հեծնի բոզ ձին, կիգայ ջրի էն եան կը կայնի, ես լէ կը հեծնիմ սև եզ, կիգամ իտա դէն կը կայնիմ. ես գինամ օր էտի քիչ ջուր է, հըմա էտոնց սէհրի համար մըը աչից հագին ծով կերևայ, չընք իշնայ անցընի, էտ մալ մեր օր կանցընի կէրթայ։ Ըսեց. Դաւրէշ, իմ ահվալ լէ էտ է։

Ըսեց. Դու պրծար, դէ յելի քնի։

Յելան քնան, սապահտան օր լուսը բացվաւ, բացվի հագընեու վրէն, էտ դաւրէշն յելաւ, շնորհակալ էղաւ էտ մարդուց, էկաւ խանէն, ուր ձին քաշեց, ուր դաւրէշի շորեր հանեց թալեց մէկ դէն, հագաւ ուր թագաւորական շորեր, հեծաւ ուր ձին, խանչեց ուր Սասված, ճամբեն բռնեց, քշելով էկաւ։ Շատ ու քիչ Սասված գինայ, զարկեց էկաւ էն մէկ օր հասաւ ախչկայ քաղաք օր փող կը ցրվէր։ Էկաւ, ուրբաթ օր էր, գնաց մէյդան, տեսաւ օր էլի էնմալ. ախչիկ հեծեր է բոզ դէվէն, արևու պէս ծագեր է, օր յիսան չը կրնայ իշկէ սիֆաթի մէջ, էնքան օր փարլամիշ կէղնին, էրկու ջվալ փարայ բարցեր է դէվի վրէն, ու ցրվելով կուգայ։ Տղէն կայնաւ թամաշա էրեց, ու էտի ցրվեց, օր ցրվեց, խըլըսաւ փող, տղէն հասաւ, ըսեց. Մէկ լէ ես վերում։ Վերցուց տեսաւ, օր հարընոց է, հըմա ախչկայ աչք տղի վրէն էր։ Տեսաւ օր տղէն հարընոց վերուց, ըսեց, էտ ինչ բախտաւոր տղայ է, արժան է օր էտ տղէն ընձի առնէ։ Ախչիկն օր դառցուց դէվէն գնաց ուր օթախ, տղէն յետևանց գնաց։ Ախչիկը տեսաւ օր տղէն է էկաւ, ըսեց. Տղայ, արի ներս, տեսնանք իմ բաախծը կատարվիր ես, թէ չէ գլոխտ տամ կտրվի։

Ըսեց. Ասուս զօրութենով կատարեր իմ։

Ըսեց. Ըսէ, տեսնինք ինչ տեսակ տեսար էն յիրեք մարդուն։

Ըսեց. Յիմցայ, ու պաշլայեց խոսա էնել, իմալ օր ես ըսեցի, էնմալ պատմեց։

Օր պատմեց, պրծաւ, ախչիկն ըսեց. Է վալլահ, տղայ, օղորթ է, իմալ օր կըսիս, էտմալ է, էտ իրեք մարդ իմ ախպրտանք են, ես ըտոնց քուրն իմ, էտ բան օր ըտոնց պատահեր էր, սէհրը ընտոնց փակեր էր, ըսկի մէկ մարդու խոսա չին էնէ, օր ազատվին ուրանց ցաւից, եիտը դու յիմցար, ընտոնք հասան իրենց մուրազին, իրեք լէ, արի մենք լէ առնինք գիրար, հասնինք մեր մուրազին։

Էրկնուց իրեք խնճոր իջաւ, մէկը ըսողին, մէկը լսողին, մէկ լէ անկաճ անողին։

ԹՈՒՐԻՆՋԻ ԱՀՄԱՏ

(Զամրոտ, Մշեցիներ *)

Կնդնի, չնդնի, ժամանակով թագաւոր մի կնդնի. էտ թագաւորին իրեք տղայ կէղնի, մէկ աղջիկ, էն տեսակ մէկ ախչիկ, օր արևուն կըսէր. դու մի յէլնի, օր ես յէլնիմ։ Թագաւոր շատ զօռպա, հարուստ թագաւոր էր։ Էղաւ օր էտ քաղքի մէջ փայտա էղաւ եօթն ախպէր հարամի. էտ հարամիք եօթն ախպէր ին, մեծը Թուրինջի Ահմատն էր։ Էտ Թուրինջի Ահմատ ուր ախպերտանով ըսկի մէկ օր հանգիստ չէր ունէ. թալանութեն, գողութեն կէներ, օթախներ կը կարէր։ Մէկ ժամանակ մի էտմալ ապրաւ քաղքի մէջ, տեսաւ օր էտմալ քեասիբ գուսուր թալնելով բան յառէջ չի էրթայ, ասեց. Ախպրտանք, արէք, թագաւորի խազինից կտրենք տանենք, իտա քեասիբներով մենք չենք կրնայ գլոխ պահէ։ Ըսկսեցին եօի հախս ի թագաւորի խազնէն կտրեցին, ըմէն օր թագաւորի խազնէն հա կը կտրեն, հա կը կտրեն, էմալ էղաւ, օր թագաւորի իլլաճը կտրաւ, իրեք տղայ ունէր, օրէնը մէկը գնէր դարաւուլ կը քաշէր։ Իրեք տղէն էլ սրով յելան, օր խազնէն պահեն, որ մէկ տղէն օր յելաւ, Թուրունջի Ահմատն օր խազինի վրէն էկաւ՝ փախաւ։ Իրեքն էլ էտմալ տեսնելուն կը փախին. կը կտրէր կը տանէր։ Թագաւորին մէկ ախչիկ լէ կար։ Համ էտ ախչիկ շատ թասիպով ախչիկ էր, էն մէկ օր էկաւ, մտաւ թագաւորի դիվան, գլոխ յիջուց կայնաւ։

Թագաւորն ըսեց. Հա, որդի, ինչ կայ, ինչ ես խնդրելու։

Ըսեց. Թագաւոր ապրած կենայ, ես կը խնդրեմ, օր իտա մէկ դիշեր իրաւունք տաս ընձի, ես իմ գնէք վերում. յելնիմ դարաւուլ քաշեմ, տեսնանք էտ իմալ գող է, օր խազնէն կը կտրէ, կը տանի։

Թագաւոր ըսեց. Ախչի, էսօր իգին կը տամ քըզի։ Իգին տվեց ախչկան, ախչիկ վերցուց ուր գնէք, յելաւ խարաուլ։

---

*) Պատմեց 1912 թ. Յուլիսի 19-ին ցոյն Զամրոտ գիւղում ցոյն Սարգիս Միրզոյեանը։

Կէս գիշեր էղեր էր, չէր էղէր, մէկ լէ տեսաւ օր հօթ ձիաւոր տվեցին խազնի վրէն, էտ ախչիկն էր, վերցուց ուր նետ ու անեղ, ընկաւ ձիաւորտանու մէջ, զարկեց, զարկըվաւ, դէն լարեց, դէս լարեց, վեց ձիաւորին էծկեց (սպանեց), ճնաց մէկ ախպէր, Թուրնջի Ահմատ՝ փախաւ, պրծաւ. էնի օր փախաւ, պրծաւ, ախչիկն էկաւ ձիաւորտանու վրէն, տեսաւ օր վեց ջանդակ ընկեր է գետին, ջանդրկիները համրեց ու էկաւ խազնի դռները տեսաւ, օր սալամաթ էր, էտ դառձաւ գնաց տուն, քիչմ հանգստացաւ, լուս բացվաւ։ Լուսն օր բացվաւ, թէզմ գնաց թագաւորի դիվան. թագաւորը տեսաւ օր աղօթրան նոր է բացվէ, ախչիկը էկաւ, վախցաւ, ըսեց. Մէկ բանմ էղեր է։ Հը՛, ըսեց, Ախչի ինչ կայ։

Ըսեց. Քու սաղութեն, թագաւոր ապրած կենայ, համեցէք տեսէք, քանի ջանդակ եմ թափէ խազինի բոլորը։

Թագաւորը ալբէալին վերցուց սինօդ, գնաց տեսաւ օր ինչ տեսնի, վեց հատ հագին (ահագին) ջանդակներ թափուկ է խազնի դուռ։

—Է՜հ, ախչի, ըսեց, իտա ինչ է։

Ըսեց. Թագաւոր ապրած կենայ, էտի մեր դիւշիններն ին, օր հըմէն օր մեր խազինէն կը կտրին, կը տանին։

—Աֆարըմ, ախչի, ըսեց, աֆարմ, դու էն իրեք տղէն լէ աժեցիր։

Թագաւոր ջանդրկներ քաշել տվեց մէկ եան՝ կորցրեցին, արխային ճնաց թագաւոր, մէկ ժամանակ մի ապրաւ, հըմա մենք խապար տանք Թուրինջի Ահմատից։

Թուրինջի Ահմատի ախպրտանք օր ըսպանվան, ճնաց մեհնակ, էլաւ կրակ էտ բանը՝ ընկաւ Թուրինջի Ահմատի ջան, դիշէր ցերէկ կը վառէր, կերեցեր կըսկըծու։ Կըսէր. Ես Թուրինջի Ահմատն էղնիմ, իտա խրտըր ժամանակ յիսան իմ վրէն չիգայ, մէկ ախչիկ ընձի յաղթէ, իմ վեց ախպէր ըսպանէ ու պրծընի, էլ իմ սաղ ճնալ ինչի վրէն է։ Հէլաւ գնաց մէկ քանի հատ դաթըր առաւ՝ սուտ բազրկեան էղաւ, մէկ քանիմ հատ էլ նոքար բռնեց, փոխցընեռուց այինօյին ժողվեց, բեռներ կապեց, էլաւ սուտ բազրկան։ Համա Թուրինջի Ահմատ, շաքիլով շատ խորտիկ, ջահէլ մարդ էր, մէկ լաւ ձի էլ հնծաւ, տվեց ուր բազրկեան ուր նոքարներ ուր յառաջ, գնաց։ Գնաց, շատ ու քիչը Ասուած գիտայ, էն մէկ օր էտ ախչիկա քաղաքը յելաւ դուս, օր ուր ախպըրտանքը ըսպաներ էր։ Գնաց մէկ քանի դիւքեան քրեհեց, ուր բեռներ լըցեց, ղաթըրներ տեղաւորցուց, յելաւ թագաւորին մէկ լաւ փէշքըշի տեղան մի շիքեց, առաւ գնաց թագաւորին տեսու-

թեն։ Տարաւ թագաւորի դիվան, դրեց թագաւորի յառէջ, թագաւոր տեսաւ էտոր սեղան, շատ հաւնաւ, իշկեց տեսաւ, օր էտ մարդն էլ շատ խօրօտ մարդ է։

—Հա՛, ըսեց, ինչ մարդ ես։

Ըսեց. Թագաւոր ապրած կենայ, ես բազրկեան եմ. կը խնդրեմ օր իրաւունք տաս քու քաղքի մէջ, խրիտ էնեմ, մէկ մարդ ընձի դակմիշ չէղնի (չդիպչի)։

Թագաւորն ըսեց. Շատ լաւ, ունիս իրաւունք։

Էտ մարդը շնորհակալ եղաւ թագաւորից ու գնաց։ Գնաց. հըմը ինչ կէնիս, օր ատից էր, բազրկեան չէր, ապրանք չունէր. էս անգամ յօրէն մէկ հեղ կիգէր թագաւորի դիվան կը նստէր, կըսէր, կը զրուցէր թագաւորի հետ ու գէնէր կերթէր։ Հըմա թագաւորն էլ շատ կը սիրէր ըտոր, չէր ճանչնայ ինչ մարդ է. խորոտ, ջհել տղայ էր, կը սիրէր։ Էտմալ ժամանակ մի ապրաւ էտ քաղքի մէջ, էն մէկ օր միտք էրեց ուրին ուրին. ըսեց. Ջանըմ, իտա համա, հարի ճրը ես պտի ճնամ իտա քաղքի մէջ, մէ հնարք մի գտնեմ։

Յետաւ մէ էրկու մարդ գտաւ, ճամփեց յուզընկան թագաւորի ախչկան։

Գացին ըսեցին. Թագաւոր ապրած կէնայ, գինաս մենք յորի ինք էկէ։

Ըսեց. Յորի՞ էք էկէ։

Ըսեցին. Թուրինջի Ահմատն ա մեզի ճամփէ, գուզէ օր քու ախչիկն առնէ։ Էտոր ապով մենք էկիր ինք յուզընկան, կիտաս լէ դու գինաս, չըս իտա լէ՝ դու գինաս։

Թագաւորն ըսեց. Կանի ախչըկաս հարցուս, որ ախչիկը առնէ, ես կիտամ։

Ճամփեց ախչըկուց հարցուց, ըսեց. Ախչի, իտա բազրկեան օր էկեր է մեր քաղաք, օր յըմմէն օր կիգայ իմ դիվան կը նստի, կը զրուցէ, էտի գուզէ օր քըզի առնէ, կառնի՞ս, չըս ուռնի։

Ախչիկն ըսեց. Թագաւոր ապրած կէնայ, քու կամքն է, դու վիր տաս, ես ընտոր կառնեմ։

Ըսեց. Օր դու կառնես, ես լէ տվեցի։

Ախչիկն օր էտմալ ըսեց, բերեցին ուզկընները հետ աչքաչուս խմեցին, նշանադրութեն էրեցին։ Ետնա յելան գացին, Թուրինջի Ահմատին էլ աչքալուս տվեցին, ըսեցին, օր աչքդ լուս էղնի, թագաւոր տվեց ուր ախչիկ քըզի. ախչէկ լէ սրտով առաւ։

Մնաց մէկ քանիմ օր, Թուրինջի Ահմատն յելաւ էկաւ թագաւորի մօտ, գլոխ յինջուց թագաւորին, ըսեց. Թագաւոր ապրած կէնայ, կը խնդրեմ, եվի օր դու քու ախչիկ տվեր ես ընձի, ինձի

ճամփու դիր, առնեմ իմ նշանածն երթամ։ Ես լէ վաթանի տէր եմ, ես իտա տեղ մնալու հալ չունիմ։

Թագաւոր ըսեց. Շատ լաւ։

Թագաւորն յէլաւ ախչկայ որպէսութենն հոգաց, բաւականի փող բաշխեց, մէկ հատ լաւ, ձի տվեց ճամփու դրեց։

Թուրինջի Ահմատն առաւ ախչիկն ու ուր բազրկանութենի բեռները բառցաւ, նոքարներ վերցուց հետ, քաղքից յելաւ ղրաղ, մէկ երկու վերստ տեղ էկաւ, նոքարներուն ըսեց. Ամէկ ձեր բոլուկ դաթր օր կը բանցուկ, ձեզի ըլնի ուրանց բեռներով։ Նոքարներ լէ միամիտ ին, գինին բեռներու մէջ բան կայ, առան ամէկ ուրանց դաթրներն ու շնորհակալ էղան Թուրինջի Ահմատից, քշեցին գացին։ Մնաց Թուրինջի Ահմատ ու թագաւորի ախչիկ։

Ըսեց. Հը՛, թագաւորի ախչիկ, ընձի կը ճանչընաս։

Ըսեց. Հա, կը ճանչընամ, էնոր քըզի ճանչըցայ, օր թագաւորին փէշքէշ բերեցիր, թէ ես բազրկեան եմ։

Ըսեց. Դոր ես երթամ, իմ հետ կիգաս։

Ըսեց. Կիգամ, ես օր իմ գիտցայ երեր իմ, քշէ երթանք, իմ արուն քըզի հալալ է։

Գշեցին ձիանը, ախչիկն ու Թուրինջի Ահմատ գացին ընկան մէշէն, հազին մեծ մէշայ էր, բազրկընի ճամբաս կէրթէր մէշի միջով, հըմա Թուրինջի Ահմատ միտքն օր չարութենն էր՝ ճամփուց յելաւ, գնաց մէշի մէջ, մէկ վերստ տեղ հեռացաւ ճամփուց, ըսեց. Ախչի, ձիուց յիջի։

Հիջան ձիուց էրկուսն էլ, բերեց ձիան կապեց էրկուսն ծառէն, բերեց ախչիկ տվլորցուց, կապեց ծառներուց, ոտներն էլ, ձեռներն էլ կապեց ծառներուց, բերեց ժողվեց չըրիկ (չոր ցախ), քոմեց ախչկայ տակ, ուղեց օր վառէր ախչկան ցախով։ Աստված հմալ յաջողեց, օր .ձիանք կուլան, քաշեցին կտրեցին կապեր, փախան ընկան մէշի մէջ։ Թուրինջի Ահմատ էլ չկրցաւ ախչկան վառել, ընկաւ ձիանոնց յետև։

Ըսեց. Եաւաշ երթամ ձիանոնց բռնեմ, նոր իգամ վառեմ, ես կապեր եմ, արխային եմ, էլ դոր պըտի պրծընի էտ ախչիկ։ Թուրինջի Ահմատ օր գնաց ձիանոնց յետև, մինք խապար տանք մէկ ուրիշ բազրկեանից։

Մէկ ծանոր բազրկեան էկաւ էտ ճամփով պըտի ընցընէր, իշկեց տեսաւ օր մէշի մէջ մէ սիվտակ բան մի կերևայ, նոքարներուն ըսեց. էն ինչ սիվտակ բան կերևայ, գացէք բերէք տեսնանք։ Նոքարներ գացին տեսան՝ օր մէկ ախչիկ է, տվլոզցած է, կապած ծառներուց։ Արձըկեցին ախչիկը, առան էկան, բերեցին, բազրկեան տեսաւ, ըսեց. էտ ինչ ախչիկ է։

Ըսեցին. Իտա էր կապուկ ծառներուց, ցախն էլ իտոր տակ լցուկ էր, օր պտի վառին։ Բազրկեան խելօք մարդ էր, յիմցաւ օր էտոր դիւշման ունի, օր էտոր բերեր, կապեր է ծառերուց, բերեց մէ ղաթըրի փալան դարտկեց, ախչիկը կոխեց փալանի մէջ, դրեց ղաթըրի վրէն, էծկեց ղաթրներու յետև, մէկ թոփալ ղաթըր էր, յուշիկ յուշիկ կերթէր։ Մէկ լէ տեսաւ, օր ինչ տեսնի՝ Թուրինջի Ահմատ քամու պէս կիգայ յետևանց։

Բոռաց. Է՛, բազրկեան, դո՛ր կը տանիս գիմ դուշման։ Բոռալն ու հասնիլը մէկ էրաւ, էկաւ հասաւ բազրկեանի յառէջ առաւ, սկսեց ղաթրներու բեռներ լըլել, ու իշկելով էկաւ, ինչքան օր բեռ կար՝ իշկեց իրարդի։ Էկաւ թոփալ ղաթըրի փալան՝ էլ չիշկեց, տեսաւ օր չկայ ախչիկ, դարձաւ փոռ ու փոշման գնաց։ Էտի թըլիս էրթայ ուր ճամփու հետ. մենք դառնանք բազըրկընի վրէն։

Բազրկեան առաւ էտ ախչիկը հետ գնաց ուր քաղաք յելաւ դուրս. տարաւ ախչիկ ուր տուն. բերեց ախչկան ձեռք մի թագաւորական լայեղ շոր հագուց, հըմալ մէկ ախչիկ մի էլաւ, տեսնողի խելք գլխուց կէրթէր։ Որն որ տեսնէր ախչկայ շաքիլ, էնքան պըտի իշկէր, օր աչքեր մնէր օղոր (ծուռ)։ Հըմալ էղաւ, օր էտ ախչկայ ձէն ցրվաւ բոլոր աշխարք, թէ Փլան բազըրկընին իտա հըմլա ախչիկ մի կայ։ Հըմէն թագաւորներու տղէքներ էկան էտոր առնելու համար, մէկին էլ զամաթ չէղաւ։ Զինուամաչինայ թագաւորի տղէն լսեց էտոր ձէն, էկաւ էտ ախչկան տեսաւ, օր տեսաւ շատ հաւնաւ էտ ախչկան, ուզընկան ճամփեց բազրկընի մօտ։

Բազրկան ըսեց. Ախչիկ գինայ, ախչկան հարցում։

Ետանչեց բերեց ախչկան հարցուց, ըսեց. Ախչի, իտա Զինուամաչինայ թագաւորի տղէն է, էկեր է օր քըզի առնէ, դու կառնի՞ս էտոր։

Ըսեց. Բազրկան, վիր տաս քու կամքն է, ես կառնիմ, հըմա մէկ պայման պըտի էնիմ հետ, օր իմ պայմանին մնաց, կառնիմ։

Ետանչեց թագաւորի տղէն բերեց, ըսեց. Տղայ, դու էկեր ես ընձի առնելո՞ւ։

Ըսեց. Հա՛։

Ըսեց. Ես էլ քըզի կառնիմ, հըմա քու հետ պայման մի կէնիմ, քու պայմանին օր տեր մնաս՝ կառնիմ, օր չը մնաս չըմ առնի։

Ըսեց. Ըսէ։

Ըսեց. Մէկ՝ օր քու ամարաթդ քաղքից մէկ վերստ հեռու պիտի շինես, քառասուն ոտ նարդիվան պիտի շինես, նարդըվընի երկու կողմ լէ յօտաց մէկ չանգեալ պըտի կախիս պողպըտէ, առանց ընձի հարցուցելու մարդ չպըտի բերես տուն, ապրանք լէ

չպըտի առնես. իտա է իմ պահման, ձեռ կիտայ՝ կառնեմ, ձեռ չիտայ՝ չըմ առնէ։

Ըսեց. Շատ լաւ։ Առաւ էտ ախչիկ գնաց։ Գնաց շատ ուռ քիչ Աստված գինայ, գնաց ուր քաղաք յելաւ դուս։ Բերեց ուստէք, մէկ ամարաթ քաղքից դուրս շիքեց, բերեց ախչիկ դրեց մէջ, չանգալներ սարքեց էտ տեղ, մէկ ժամանակ ապրան։

Մենք խապար տանք Թուրինջի Ահմատից։

Թուրինջի Ահմատ սէհրբազ էր, յիմցաւ օր ախչիկ որ տեղն է գացէ, կարգըվել է։ Զարկեց գնաց յելաւ էն քաղաքը դուրս, օր ախչիկ կարգըվեր էր։ Թուրինջի Ահմատ իննչ հնարք էրեց. բերեց մէկ սէհրի ձի մի շիքեց, հըմալ ձի մի շիքեց, օր տեսնող մայիլ կէղնէր, բերեց բազար կանգըցուց. էն գին դրեց վրէն, օր թագաւորի տղից սաւայի մարդ չի կրնայ առնէ։ Թագաւորի տղէն էկաւ բազար, տեսաւ օր քաղաք քաղքով թափած է, էկած էտ ձիուն թամաշա կէնէին։

Ըսեց. Եարաբ էրթամ տեսնեմ էտ իննչ ա, էտքան մախլուխ լցվել է վրէն։ Էկաւ տեսաւ օր իննչ տեսնի, հըմալ ձի մէ բերած բազար կը ծախեն, օր էտմալ ձի ըսկի տեսած չունի ուր օրով։

Ըսեց. Ա՛յ, հայ, էտա ձին օր ես չառնեմ հեծնեմ, իմ ջհեզլութին սուտ է։ Էկաւ թամաշա էրեց ձիուն, կոլ, կուշտ, շատ հաւնաւ։

—Հա՛, ըսեց, ձիու գին իննչ է։

Ըսեց. Հարիր օսկի։

Ջեռ տարաւ ջէբն օր հանէր համբրէր՝ ախչկայ պայման ընկաւ միտը։

—Հէյ, ըսեց, ես պայման եմ էրի ախչկայ հետ, էրթամ հարցում, տեսնամ խայիլ կէղնի՞ օր առնեմ։

Էկաւ ըսեց. Ախչի, հըմալ ձիմ է էկէ բազար ծախ, օր իմ լայեղին է, ինձնէ սաւահի իսանի լահեղ չէ, էրթամ առնեմ։

Ըսեց. Ծախողն իմալ մարդ է։

Ըսեց. Հըմըս մարդմ է, ջանով, բոյով, խօրոտիկ մարդ մի է։

Ըսեց. Մ՛առնէ, վնաս կը քաշես։ Էլ չառաւ։

Մնաց մէկէլ օր, Թուրինջի Ահմատ թազի մի շիքեց բերեց, տղէն տեսաւ, էկաւ էման ախչկաց հարցուց, ըսեց. Էլի էն մարդ էսօր թազի մէ բերէ կը ծախէ։

Ըսեց. Մ՛առնի, կը վոշմընես։ Էլ չառաւ։

Մնաց էն լուսուն, իտա հախսի, ձեռաց բազէ մի շիքեց, բերեց. էլման տղէն գնաց տեսաւ, էկաւ ախչկան հարցուց, ըսեց. էն մարդ եաի հախս ի բազէ մէ բերէ կը ծախէ։

Ըսեց. Մ՛առնի։ Ախչիկն օր չթողեց էտ իրեք ապրանքը առ-

նէր, Թուրինջի Ահմատ չիմցաւ օր էտի ախչկայ շառն էր հասաւ ուրէն։ Իտա հախս ի. գնաց Թուրինջի Ահմատ չարչու խուրդավատ առաւ, մէկ հատ խուրձի առաւ, լցեց մէջն ու թալեց թէվ էղաւ չարչի, պըտըտեց։ Պըտըտեց էն վախտն էկաւ էտ ախչկայ ամարաթի տակովն ընցաւ, որ Թագաւորի տղէն գլոխը դրէր էր ախչկայ չոքին քներ էր։ Ախչկայ ջահռէն գեաղմէն քնուկ էր, տեսաւ օր չարչի կը պըտըտէ էտ տեխրան. ըսեց. Հը՛, ինչ մարդ ես։

Ըսեց. Չարչի եմ։

Ըսեց. Հայլի, մատնիք, թէլ ունիս։

Ըսեց. Ունեմ։

Ըսեց. Ըմալ է, ելի արի իտա տեղ, կառնենք։

Թուրինջի Ահմատ յէլաւ էտ քառսուն ոտ նարդըվընով. գնաց մտաւ ամարաթ, մտաւ ներս, տեսաւ օր Թագաւորի տղէն գլոխ դրեր է ախչկայ չոքին՝ քներ է։

Ախչիկ օր դարձաւ իշկեց՝ ալբէալին ճանչըցաւ, օր Թուրինջի Ահմատն է։

Թուրինջի Ահմատն ասեց. Հը՛, ախչի, իմաձ ես։

Ըսեց. Իմալ գինաս, իմալ եմ, հըմը կը խնդրիմ Թագաւորի տղին դակմիշ մի էղնի, ես յիջնեմ էրթանք քու հետ, ինչ կամենաս՝ էրէ։

Ախչիկ լէ ծանդռ ոտ էր, Թագաւորի տղի գլոխ դրեց գետին, յելաւ ընկաւ Թուրինջի Ահմատի յետև, ըսեց. Դէ քելէ էրթանք։ Օթախից օր յելան դուրս, ըսեց. Ախչի, արի ընկի յառէջ։

Ըսեց. Տնաշէն, ծանդռ ոտ եմ, չըմ կրնայ քելի, դու ընկի յառէջ, օր ես իմ ձեռներ դնեմ քու փիճի (ուս) վրէն ու յիջնեմ։

Թուրինջի Ահմէտ ընկաւ յառէջ. ախչիկն ընկաւ յետև, մէկ էրկու իլաւ նարդըվընից ցած, ըսեց. Եա սուրբ Սարգիս, դու ընձի իտա դուշմնի ձեռնէն պրծուս՝ իմ փորու էրէխէն տղայ էղնի, ախչիկ էղնի՝ քըզի մատաղ։ Ըսից ու լանգէ մի գարկից պառէկին (քամակ)։ Զարկելու պաշտան՝ զիթեկ միթեկ (գըլխավայը) գնաց ընկաւ չանգլներու վրէն, չանգալ չկաւ (խրվեց) բոզազ, բերնից էկաւ դուս։ Փառք տվեց ուր Աստծուն աղչիկն ու դուրբան էրեց հապրներուն ու դարձաւ, դարձաւ գնաց ներս, Թագաւորի տղի գլոխ վերցուց, դրեց չոքի վրէն ու նստաւ։ Մէկ սըհաթ մընաց, Թագաւորի տղէն չիմցաւ, տեսաւ օր ախչիկ շատ ռանգ թալեր է։

—Ա՛յ հայ, ըսեց, ախչի, էտ ինչի՞ քու ռանգ թալիր ես։

Ըսեց. Թագաւորի տղայ, յելի նարդըվանից իշկէ, ու արի խաս էնիմ։

Հելաւ Թագաւաւորի տղէն, տեսաւ օր ինչ տեսնի, մէկ հա-

գին ջանդակ մի նարդվընի չանգեալներուց կախվուկ է։

Թագաւորի տղէն օր տեսաւ՝ զարմացաւ, ըսեց. Ա՛յ հայ, էտ ինչ բան է։ Էկաւ ներս ըսեց։ Ախչի, էտ ինչ բան է, դու ինչի՞ ընձի խապար չերեցիր։

Ըսեց. Թագաւորի տղայ, իմ օր քու հետ կէնենք, ու քու բանի մէջ կը զրուցենք, էտոր համար էր, իմ դիւշման էտ էր, պրծայ ես, իտա հախս ի ինչ գործ կը բռնես բռնէ, ես զրուցող չեմ։ Նոր նստաւ, ուր գլխու անցածք խըսա էրեց Թագաւորի տղին։

Վախտ անցաւ, էտ ախչիկ պառկաւ, ախչիկ մի բերեց։ Ախչիկը պահեցին, ջոջըցաւ, էղաւ չորս հինգ տարեկան, իտա հախս ի, հըմէն խոմըրթի կէղնէր։ Մէկ օր մի, ախչիկ փառչն առաւ, գնաց աղբուր ջրի։ Գնաց տեսաւ օր ախպըրի վրէն սիվ-տակ մուրուկ հալիվոր մի նստուկ էր։

Հալիվորն ըսեց. Ախչի, դու վի՞ր ախչիկն էս։

Ըսեց. Թագաւորի տղի ախչիկն իմ։

Ըսեց. Ախչի, քու մամ ընձի բան է խոստացէ, փառչ տուր իմ մօտ, գնա քու մամուն ըսէ՝ ընձի բան է խոստացէ, յորի՞ չի տայ։

Ախչիկ փառչ թողեց հալիվորու մօտ ու գնաց։ Ըսեց. Նանէ, հալիվոր մի նստուկ է ախպրի կուշտ, իմ փառչ առաւ ձեռնէս ի, ըսեց. Աքչի, գնա քու մամուն ըսէ, ընձի բան է խոստըցէ, յորի՞ չի տայ։

Ընկաւ միտը մամուն, օր սուրբ Սարգըսին մատաղ է խոս-տացէ։

Ըսեց. Հա, ախչի, օղորդ է. գնա ըսէ. Պապէ, յելի էրթանք, դոր օր կերթաս. քըզի խոստացեր եմ պապէին։

Ախչիկ յելաւ էկաւ, ըսեց. Պապէ, յելի էրթանք, իմ մամ կըսէ քըզի իմ խոստացէ պապէին։

Ըսեց. Որդի, չիւնքի օր յըմալ է, քու մամ ուր խօսաց տէրն է, էլ չըմ տանի քըզի, կանի քըզի էրկու բէրան օրշնիմ, ու գնաս։ Բռնեց ախչկայ ձեռն ու ըսեց. Ախչի, Աստուած օրշնէ քըզի, ինչ վախտ օր դու ծիծդաս, քու ծիծդած տեղ վարդ ու ռէհան բուսի, ինչ վախտ օր դու լաս՝ բուք ու բորան էղնի, քու գլոխ ինչ գը-տըը լվաս՝ քու գլխի ջուր օսկի դառնայ, ծամերիդ կաթած կա-թիլներ՝ մարգրիտ դառնայ. ըսեց. Դէ գնա։

Ախչիկը պապէի ձեռք պաքեց, փառչն առաւ ու էկաւ։ Պա-պէն լէ անյայտ էղաւ։

Ախչիկն էկաւ, մնաց մէկ ժամանակ մի, մեծացաւ, լաւ հա-սակի էղաւ. էն տեսակ մէկ ախչիկ մի էղաւ. օր բոլոր աշխարհ ձէնձընվաւ՝ թէ դիւյնանըն գիւղալին է։ Էտ ախչկայ ձէնն օր ցըրվըվաւ աշխարք, արևելեան կողմի թագաւորի տղէն էկաւ էտ

ախչկան առնելու։ Էկաւ ախչկան առնելու, տեսաւ, շատ հաւնաւ, յիմցաւ բիրադի մարիֆաթներ, տեսաւ օր հաստատ է, ուղեց էտ ախչկան, նշան դրեց, ետնա թագաւորի տղից ժամանակ ուղեց թէ մէկ ամիս ժամանակ տուր ընձի, օր էթամ իմ որպիսութիւն հոգամ, գամ իմ նշանած տանիմ։

Հելաւ գնաց. գնաց ուր տեղ, մնաց մէկ ամիս ժամանակ, ուր որպիսութիւն հոգաց, յելաւ զօրք դրստեց, ճանփեց օր գան, ախչիկն առնին բերին, ինքը չգընաց։

Մենք մկա խապար տանք էտ ախչկայ պահող պառվուց։— Ախչկայ պահող պառաւ ինչ էրեց, տեսաւ օր ժամանակը հասեր է, թագաւորի հարսնածը պըտի գայ, օր հարս տանի, բերեց էրկու իրեք հատ շոռ կլոճ էրեց, օր պըտի տանէ հետ։ Մէկ գեշատես ախչիկմ ունի պառվին, օր պըտի տանի հետ, էնոր միտք չարութիւն է, գուզէ օր ուր ախչիկ դնէ էն ախչկայ տեղ։ Մէկ էլ տեսաւ օր թագաւորի տղի հարսնած էկաւ, հարսնածն օր էկաւ, թագաւորը ջուհապ ճամփեց պառվուն, թէ ախչկայ որպէսութիւն հոգայ, օր սապախտան դու էլ հետը էթաս, տանիս տեղ հասուս։

Սապախտան օր յելան ճամբախ ընկան, պառաւն ու թագաւոր մէկ ֆայտօն նստան, մէկ էլ հարսնածներ ուրանց ֆայտօններ նստան, խոշուն լէ յառէջ ընկաւ գացին։ Գացին, մէկ օր, էրկու օր, ճամփան օր անօթցան, ախչիկը հաց ուզեց, պառաւը բերեց էտ շոռ կլոճից տվեց։

Ըսեց. Նանէ, էս ինչ ղըտըը շո՞ռ իս էրէ իտա հաց։

Ըսեց. Իման է էկէ, ես ինչ էնեմ։ Բաւականին ճամբախ օր գացին, ծառվըցաւ ախչիկ, պառվուն ըսաց. Նանէ, ընձի փշուր մի ջուր տուր, ես ծառաւ մեռայ։ Պառաւ գնաց բերեց կէս ըստական ջուր տվեց, ըսկի ախչկայ բոկ չտգկաւ։ Մէկ օր գացին ճամփա, հասան մէշի մէջ, էտտեղ խոշուն թափեց, նստաւ։ Ախչկան ծառվութիւն շատ քմր էրեց, ըսեց. Նանէ, Աստծու սիրուն էղնի, ես վառայ, ընձի ջրի իլաճ էրէ։ Պառաւը գնաց ծառերու մէջ, էկաւ, ըսեց. Աչխի, ջուր կայ, աչքով կիտան։

Աւեց. Նանէ, ես օր կմեռնիմ ծառվութենէ, իմ մէկ աչք հան, տար տուր ջրի։ Պառաւ մէկ մատ կոխեց աչք, փըշտեկեց հանեց. բերեց ըստական մի ջուր տւեց։ Շոռ կլոճ ուտող աչխիկ վառէը ջիգեար, խմեց, ըսկի վրէն չերևաց, ըսեց. Նանէ. չկշտացայ, իլլաճ մի էրէ։

Ըսեց. Ի՞նչ իլլաճ էնիմ, էտ խարը տվեցին մէկ աչից։

Ըսեց. Իմ մէկէլ աչքս էլ հան, տար տուր, բեր կուշտ ջուր խմեմ, բանմ օր ես այիբլու էղիր իմ։ Պառաւը էն մէկէլ աչքը լէ հանեց, ու բերեց փառչը տվեց ձեռ, կուշտ խմեց։

Օր խմեց, պրծաւ, ըսեց. Նանէ, ես օր էս աւուր տիրացայ, էլ ընձի դիր կըտանիս թագաւորի տղի մօտ, ես արժանի չինք էն փառքին։ Իմ ձեռ բռնէ տար ճամփուց հան, մէջ տեղ մի թորկ ու գնա։ Մեչալըղ տեղ էր, պառաւ բռնեց ախչկայ ձեռ, տարաւ մէշի մէջ, ուր ախչըկայ հին շորերուց տարաւ հետ, ըտոր տկլոզ-ցուց, էտ հին շորեր հագուց, թալեց ծառերու տակ, վերցուց էտոր շորեր էկաւ։ Ուր ախչիկ դուքու մէջ դրուկ էր, հանեց դուքու միջէն ուր ախչիկ, թագաւորի ախչկայ շորեր հագուց, դրեց ֆայ-տոնի մէջ, ախչայ տեղը ա չքեր վռթթեց թղթի մէջ, դրեց ուր չէր։

Պառաւն օր պրծաւ, խօշում յեկաւ, ընկաւ ճամբախ, գացին հասան թագաւորի տղի քաղաք։ Ծապար գնաց թագաւորի տղին, թէ աչքդ ի լուս էղնի, քու նշանած բերեցին։

Թագաւորի տղէն յելաւ սազով, սանթուրով, դհոլով, զուռ-նով, թոփով, չաբախանով, վազիրով նազիրով, էկաւ յառէջ, առաւ գնաց։ Տարաւ ուր քօշկու սարէն, սապախտան յելան տարան պսակեցին, հօթն օր, հօթ գիշեր հարսնիք էրեցին, պրծան։

Օր պրծան՝ թագաւորի տղէն եկաւ ուր նշանածի կուշտ, հետ խօսաց, յերէկն օր տեսաւ՝ ըսեց. Հայ հան, էս ինչ այլակերպ բան է, ըսեց, պառաւ, իտա ինչ է։

Ըսեց. Մեռնիմ քըզի, էտի քու նշանած է, չըս ճանչընայ։

Ըսեց. Պառաւ, իմ նշանած արեգական պէս կը վառէր, իտա ինչ է։

Ըսեց. Ճամբախ է էկէ, մեռնիմ քըզի, թոզ է տեսի, թորփախ է տեսի, արև զարկեր է, սևցուցեր է։

Թագաւորի տղէն չհաւատըցաւ, թքուց յերեսն ու դարձաւ։

Իտա հախս ի թագաւորի տղին էղաւ դժողք էտ օրմախ, օր մէկ անգամ, էրկու օր մէկ անգամ կիգէր, դուռ կը բանէր, կը տեսնէր օր էլման էն գարշելին է, կը թքուցէր ու դառնէր։

Թագաւորի տղէն թըղ ման էտ կրակի մէջ վառելով, մենք խաբար տանք ախչըկաց, օր պառաւ աչքեր հանեց, թողեց մէշի մէջ։

Հըմը էտ քաղաք մէկ հալիվոր մի կայ, եօթը ախչիկ ունի, էլ բան չունի, քասիբ է։ Օրէն մէկ շալապ ցախ կը բերէ մէշից կը ծախէ, կառնէ հաց, կը տանէ ախչիկներու հետ կուտէ։ Էն մէկ օր հալիվորն էկաւ ցախ ժողվելու, տեսաւ օր ոքոց մը կի-գայ ծառներու միջէն, էկաւ, ըսեց, տեսնանք, ինչ ոքոց ի կիգայ։

Էկաւ տեսաւ օր մայիւ (կոյր) ախչիկ մի ծառներու մէջ ընկուկ է, ըսեց. Ի՞նչ միլլաթ իս։

Ըսեց. Հայու ախչիկ իմ, ինչ կէղնի ընձի տանիս թալիս շէլլիկ մի, իմ հոգին ազատիս։

Ըսեց. Որդի, ես խեղճ հալիվոր մի եմ, եօթը ախչիկ ունիմ,

օրէն մէկ շալակ ցախ կը տանիմ կը ծախեմ, իմ հաց կառնիմ կը տանիմ, իմ ախչիկներու հետ կուտիմ, ես քըզի ինմալ տանիմ պահիմ։ Էթամ իմ ախչըկներուց հարցում, օր խայիլ էղան, կիգամ կը տանիմ։ Հալիվորը ժողվեց շալակ մի ցախ ու գնաց, տարաւ ծախեց, առաւ հաց, տարաւ ախչիկներուն հետ կերաւ. ըսեց. Ախչիկներ, էս օր մէշէն մէ քօռ անտէր ախչիկ մի եմ տեսէ, շատ աղաչեց, թէ պապէ, ընձի տանես պահես, իմ լուս հոգին աղատես Ջանաւարներէն։

Ես ըսեցի. Էրթամ իմ ախչիկներուս հարցում։ Մկայ դու յօժար եք, օրթամ բերեմ։

Պզտիկ ախչիկ լէ ըսեց. Պապէ, օրէն կտոր մի հայ ընձի կիտաս, կէս էս կուտիմ, կէս լէ կիտամ ընտոր, թաքիլան գնա բեր, մեղք է, ախչիկ է։

Պապէն դարձաւ գնաց, շալակ մի ցախ լէ ժողվեց, ախչիկ լէ հետը առաւ էկաւ ուր տուն։

Մէկ քանիմ օր պահեցին ախչկան, էն մէկ օր շատ աղաչեց ախչիկներուն ըսեց. Փշուր մի չուր տաքցուք, իմ գլուխ լվաք։

Աղջիկները չուր տաքցուցին, տարան էտոր գլուխ լվացին տաշտի մէջ, բերեցին տուն։

Ըսեց. Իմ գլխու չուր մը թափէք սահաթ մի։ Սահաթ մի մնաց, գացին գլխու չուր թափելու, տեսան օր դառցեր է օսկի յըմէն։ Վերցուցին բերեցին տուն, ուրախացան։ Ըսեցին. Իտա հմլա լէ Աստուծու կամենալ կէղնի, մէկ լէ տեսան պապէն մէշէց էկաւ, ըսեցին. Պապէ, արի տես, Աստուած մըզի կամեցեր է, էլ դու ցախ մի բերէ։ Պապէն էկաւ տեսաւ օր տաշտ մի լիքը օսկի է դրած։ Իտա հախս ի սարքեցին ախչկայ գլուխ օրը էրկու հախ լվացին։ Բաւականի օսկի քոմեց պապէն. էն մէկ օր ախչիկ ծիծղաց նաղաստան (յանկարծ), յունվար ամիսն էր, մէկ էլ տեսան վարդ ու ըռեհան բուսան պատիր ու յատիք։

—Եա, ըսեցին, էտ յորի յըմլա էղաւ։

Ախչիկն ըսեց. Բան չկայ, Պապէին ըսէք գայ, Պապէն էկաւ. ըսեց. Պապէ, իտա վարդ ու ռեհան քաղէ, դիր սինու մէջ, տար ծախէ, ըսէ. Աչքով կիտամ։

Պապէն քաղեց, լցեց սինու մէջն ու տարաւ դիւզ թագաւորի տղի քոշկ ու սարահի բոլոր։ Էն վախտ գնաց օր պառաւ տուն չէր, պառվու ախչիկ մենակ գազմէն (պատշգամբ) կայնուկ էր։

Ըսեց. Պապէ, էտ ինչ վարդ ու ըռեհան է։

Ըսեց. Կըծախեմ։

Ըսեց. Ինչով կիտաս։

Ըսեց. Աչքով կիտամ։

Ըսեց. Պապէ, կայնի տեսնանք, մըր տուն պըտի էրկու հատ աչք էղնի։ Մտաւ ներս տեսաւ օր պառաւ դրեր էր թղթով փանճարեն. վերցուց բերեց, տվեց Պապէին, ըսեց. Առ, Պապէ, էրկու աչք, քանի դաստա կիտաս՝ տուր։

Պապէն ըսեց. Յըմմէն լէ Թըղ քըղի էղնի։ Տվեց յըմմէն պառվու ախչկան ու դառձաւ, բերեց էտ աչքեր տվեց ախչկան։

Ախչիկն առաւ, ըսեց. Ջուր տաքցուցէք, իմ գլոխ լվացէք։ Ջուր տաքցուցին, ախչկայ գլոխ լվացին, բերեցին տուն, պառկեցուցին տեղի մէջ. վերուց աչքեր դրեց ուր տեղ, ուր վարդերու ջրից քամեց վրէն, ու քնաւ։ Աստու հրամանքով օր քնեց, յիմցաւ էղաւ ավալքվայ ախչիկը։ Էտի Թըղ Ծնայ հալիվորի տուն, մենք դառնանք պառվուց խաբար տանք։

Պառաւ էկաւ տուն, տեսաւ օր պատ ու յառիք վարդ ու ռեհան է շարէ ախչիկ։

—Հա, ըսեց. ախչի, էտ ինչ վարդ ու ռէհան է։

Ըսեց. Նանէ, առևր եմ։

Ըսեց. Ինչով։

Ըսեց. Աչքով։

Ըսեց. Ինչ կըսէ, սև կապուկ, աչք յոուսա էր։

Ըսեց. Էն աչքեր օր դու դրեր էր մեր աչկունք (պահարան)։

Ըսեց. Սև կապես դու, ախչկայ աչքերն են. գնաց հասաւ ուրէն, մկայ գլոխդ կիտայ ղարկել։ Մէկ լէ տեսան, Թագաւորի տղէն դռնէն մտաւ։

Պառաւ գնաց յառէջ, Թագաւորի տղայ, ըսեց, քու գլխուն, յարևուն մեռնիմ, օր ես կըսինք քու նշանած է, նեղեցեր է, Թուռմեր է, տես օր յէսօր քէֆն էկաւ ծիծղած, իմալ վարդ ու ռէհան է բուսի։

Թագաւորի տղէն աւտըցաւ. էկաւ իշկեց յերսի մէջ, տեսաւ օր էլման էն գարշելին էր, Թքուց յերեան ու դարձաւ։

Պառաւ յիմցաւ օր ախչիկ սախցեր էր, պըտի ուրենց գլոխ զարկեր տէր, ըսեց. Թագաւորի տղայ, քու գլխուն, արևուն մեռնիմ, նոր իմ խաբար էղի օր քու նշանածին ինչ փորձանք է ձեռք տվի։

Ըսեց։ Ի՞նչ փորձանք է ձեռք տվի։

Ըսեց. Ախչիկ նազար է առէ։ Նազարի ուլինք կայ, տեղ կըսիմ քեզի, գնա բեր կախէ քու նշանածի վրէն, էլման կէղնի աւալքվայ ախչիկ, իմալ օր սըվտա տեսեր իս։

Ըսեց. Ի՞նչ տեղն է։

Ըսեց. Իտա սև սար յելի, Ծաշխա ասլան կայ, էն Ծաշխա ասլանի գլոխ մէկ խուրթի կայ, էն խուրթու մէջ մէկ ուլինկ մի կայ,

էն ուլինքն օր հաննես, բերես կախես քու նշանածի վզէն, էլման կէղնի աւալքվայ ախչիկն օր դու տեսար։

Պառաւ սէհրբազ էր, գինէր յամէն բան, էտոր համար ճամփից, օր էն ուլինք բերէր, էն թագաւորի ախչիկ մեռնէր ալբէալը։

Խեղճ տղէն աւտըցաւ պառվուն, վերցուց ուր նետ ու անեղն ու գնաց։ Պառվու սալըխելու գեօրա գնաց յելաւ էտ սար, տեսաւ օր օղորթ էր պառվու խօսք, Խաշխայ ասլան մի կայ էտտեղ։ Տղէն օր տեսաւ Խաշխայ ասլան էկաւ ջուր պտի խմէ, տապաւ քարի տակ, ասլան օր ջուր խմեց, դարձաւ՝ դառնալու պաշտան՝ տղէն նետ ու անեղը զարկեց, զարկելու պաշտան ասլանը ընկաւ. գլոխ տապկեց խանչըլով, տեսաւ օր ուլինք գլխու մէջն էր, վերցուց, առաւ էկաւ։ Բերեց կախեց պառվու ախչկայ վզէն, էլման տեսաւ օր պառվու ախչիկ էլման էն ախչիկն է, չխօրօտկընայ։

Ըսի ըտեղ թըղ ինայ՝ մենք խաբար տանք էն ախչըկուց, օր հալիվորի տուն է։

Տղէն օր էն ուլինք հաննեց բերեց, ախչիկ բէուշ էղաւ հալիվորի տուն։

Ըսեց. Պապէ, իմ բան բուշ էղաւ, մէկ բան քըզի յօսեաթ կէնիմ. Թագաւորի տղէն որ ճամփով օր աւուղուշ կերթայ ամէն օր, էն ճամփու վրէն պզտիկ օղէ մի կը շիքիս, ընձի կը տանիս իմ եօրղան դոշկով կը դնիս մէջ։

Հալիվորը գնաց օթախ մի տվեց շիքել, էկաւ ախչկան վերցուց, ուր եօրղան դոշկով տարաւ դրեց մէջ, թողեց էկաւ։ Էն մէկէլ օր Թագաւորի տղէն յելաւ գնաց աւ ու դուշ, տեսաւ օր պզտի օթախ մի շիքուկ ճամփու վրէն, ըսեց. Ջանմ, իտա իմ ճամփէն է, յըմէն օր ես կերթամ, կիգամ, օթախ չկէր, իտա ո՞րն ա շիքէ։ Կանի մէ մանիմ տեսնամ ինչ կայ մէջ։ Թագաւորի տղէն ձիուց իջաւ, գնաց մտաւ մէջ, տեսաւ օր ախչիկ մի է պառկուկ եօրղան դոշկի մէջ, բացեց տեսաւ օր ինք տեսեր էր սըվաւ։

—Ա՛յ հայ, ըսեց, իտա իմ կորցուցածն է, օր ես կը գաշիմ, էտ ի՞նչ բան էր, էտ ինչ ահվալ է օր էտոր ձեռ է տվի։

Անկաճ էրեց օր մեռուկ չէ, կենդանի է, ու չկռնայ խլվըլայ։ Սորվաւ տղէն օրէն մէկ անգամ, էրկու անգամ կէրթէր մօտն ու կընցնէր կերթէր աւուղուշ։ Էղաւ օր էտ ախչիկ ինաց էտ տղից էրկու հոգով։ Տղէն յիմցաւ օր էտ ախչիկ յուրնէ է ինացէ էրկու հոգով, իտա հախի տղէն մուղաթ կեցաւ էտոր։

Իննը ամիս, իննը սըհաթն օր թըմըմաւ, էտ ախչիկը ազատվաւ, բերեց տղէ մի։ Էտի հախս ի Թագաւորի տղէն էտ էրէխէն փաթթեց շորի մէջ, օրէն էրկու անգամ կը տանէր կը թալէր մամու (մօտ) ծծեր, կը ծըցուցեր ու կը բերէր կիտէր պառվուն

ու ուր ախչըկան պահել։ Էտմալ ժամանակ մի պահեց. տղէն թուխոշցաւ, իտա հախսի ձեռ բանալու բան տեսնալուն՝ ձեռ կը թալէը կը բռնէը, հետ կը խաղէը։ Էն մէկ օր պառվու ախչիկ էր, կը խաղցուցեր, էտ ուլինք տեսաւ տղէն պառվու ախչըկայ վիզ, ձեռ թալեց, բռնեց ուլինք. պառվու ախչիկ ուզեց ձեռնէն հանել, էտ տղէն իլաց, չթողեց։ Տղէն օր իլաց, թագաւորի տղէն դռնէն մտաւ. Հա, ըսից, տղէն ինչի՞ կը լացուք։

Պառաւն ըսեց. Որու գլխուն արևուն մեռնիմ, թագաւորի տղայ, քու նշանածի վզի ուլինք է բռնէ, չթողէ։

Ըսեց. Արձրկէ վզիցդ ի, թըղ մնայ ձեռ։

Արձրկեցին մնաց տղի ձեռ, ու թագաւորի տղէն առաւ տաբաւ օր մամու մօտ ծիծ տայ։

Տարաւ դրեց մամու դաշի վրէն, ծիծն օր առաւ բերան, էրեխէ ձեռք բացվաւ, ուլին պրծաւ, ընկաւ մամու բերան, մանն ալբէալին կենդանացաւ, յելաւ նստաւ։ Տեսաւ օր թագաւորի տղէն ուր կուշտ նստուկ է։

—Ա՛յ հայ, ըսեց, թագաւորի տղայ, էտ ինչ բան էր իմ գլոխ էկաւ։

Ըսեց. Դու գինաս, ես բանէ խաբար չունիմ, պատմէ տեսնինք։

Ըսեց. Թագաւորի տղայ, էտ բան իմ պահող պառվուց ձեռք տվեց ընձի, ուր գլխու գալած անցանքներ խաս էրաւ թագաւորի տղին։

Թագաւորի տղէն յելաւ էտ տեղէն վերցուց ուր նշանած, ուր տղէն, հեծաւ ձին, գնաց ուր ամարաթ։

Գնաց մէյդան, տեսաւ օր էրկու խատ խամ դաթր բերած ա կը ծախեն, օր ըսկի չբառձած է, առաւ բերեց, մտաւ ներս, պառվուն ու ախչկան ծամերից քաշեց հանեց դուս, պառվու ծամերուց մէկ դաթրի պօչից կապեց, դայիմ, ախչկայ ծամերուց լէ բերեց մէկ դաթրի պօչից կապեց. ամէկու սաղրուն (յետոյքին) մէկ վարոց զարկեց, ու թողեց չոլ, քաշէ քաշ առան ու յընկան չոլ։ Նոր տղէն էկաւ թագաւոան պսակվաւ, ուր նշանածի հետ, եօթն օր, եօթ գիշեր հարսնիք էրեց, ընտոնք հասան ուրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։

ԾՈՒՌ–ՏՂԱՆ

(Զամրու, Մշեցիներ*)։

Կեղնի չեղնի մէ թագաւոր կեղնի, թագաւորին մէկ տղայ կեղնի։ Թագաւորի տղի փէշէն աւուղուշ էնելն էր, մշտական վաղիրի տղի հետ կեթէր կիգեր. էն մէկ օր աւուղուշի տեղէն էկան ծովու ղրաղներ, թագաւորի տղէն տեսաւ, օր յերէս մենծ բան մի կիգայ, իսկի տեսած չէր գեամին ինչ է, ծովը ինչ է։ Ջիու դիւզգին քաշեց կայնաւ։ Վաղիրի տղէն ըսեց. Թագաւորի տղայ, քու գլխուդ, արեւուդ մեռնիմ, էտ գեամի է, ուրիշ երկրներուց կիգայ։

Ըսեց. Գեամին ինչ է։

Ըսեց. Թագաւորի տղայ, էտի մարդ կը բերէ, մարդ կը տանէ, հագին շէնվիք է, շինուքեն է։

Ըսեց. Վաղիրի տղայ, կայնի թամաշա էնանք, տեսնանք ինչ կայ էտոր մէջ։

Թագաւորի տղէն ու վաղիրի տղէն ձիանու գլոխ քաշեցին կայնան ծովու պռունկ, թամաշա էրեցին օր գեամին էկաւ. էկաւ ուր մանզիլի գլոխ կանաւ։ Որ կանաւ՝ նոր թագաւորի տղէն շիտակ թամաշա էրեց. տեսաւ օր էտ գեամու փանջարից մէկ լեանգառի կախեցին, թամաշա էրեց, տեսար օր լեանգեառի էր։

Ըսեց. Վաղիրի տղայ, էն ինչ է։

Ըսեց. Լեանգեառի է։

Փաշեցին նեբս, ետոյ մէկ հատ մատնիք կախեցին։ Մատնիք լէ տեսաւ, ըսեց. Վաղիրի տղայ, էն ինչ է։

Ըսեց. Էնի լէ մատնիք է։

Էն քցեցին էկաւ տղին. ընտրնէ ետ, մէկ հատ թըզպէխ, մէկ հատ լէ սանտր կախեցին։

Ըսեց. Վաղիրի տղայ, էտա ինչ էր։

Ըսեց. Տնաշէն, էտի լէ թըզպէխ ու սանտր է, չըս գիտնայ։ Էտ լէ քաշեցին նեբս։ Փշուրմ լէ թամաշա էրեցին, մէկ լէ տե-

---

*) Պատմեց 1912 թ. Յուլիսի 19-ին, ծոյն Զամրու գիւղում Սարգիս Միրզոյեանը։

ատն մէկ ախչիկ մի գլոխ հանեց փանջարից դուրս, ըտոնց իշկեց. Թագաւորի տղին Թամաշա էրեց, Թագաւորի տղէն լէ ախչկան Թամաշա էրեց։ Թագաւորի տղէն օր էտոր խօրօտկութեն տեսաւ, խելք գնաց, ձիու վերևէն գլորաւ ընկաւ, վազիրի տղէն հասաւ բռնեց, պըտի ընկեր ծուլ։

Ըսեց. Ի՞նչ էղաւ քըզի, Թագաւորի տղայ, էտ յորի՞ էտ-մալ էղար։

Ըսեց. Վազիրի տղայ, էտ ախչիկն օր ես տեսայ, իմ խելք տարաւ, իմն օր կայ էտ ախչիկն է, իմն օր չկայ էտ ախչիկն է։ Ես օր էտ ախչիկ չառնիմ, սաղ չեմ մնայ աշխարքի մէջ, կը մեռնիմ, իլլաճ չունիմ։ Ախչիկ գլոխ քաշեց ներս, վազիրի տղէն Թագաւորի տղէն դրեց ձիու վրէն ու բռնեց ձեռով, յուշիկ առաւ էկաւ քաղաք։

Օր բերեց հասուց քաղաք, տարաւ Թագաւորի ամարաթ պահկըցուց։ Ապար գնաց Թագաւորին, Թէ շուտով դոխտուր հասու, օր քու տղէն կը մեռնի, չընք գինայ ի՞նչ է պատահի։

Թագաւորն օր լսեց էտ խօսք, չօքերու դուտում կօտրաւ, առաւ դոխտուր էկաւ։ Ֆաղաքն օր տեսաւ Թագաւոր դոխտուր բերեց ուր տղի վերէն, յիրար եղաւ, Թափան էկան, ըսեցին, Թէ էտ ի՞նչ է էղէ Թագաւորի տղին։

Պահվըներ էկան, մէկն ըսեց. Յընկնաւոր է, մէկն ըսեց, կատղուկ է, փրփուր է տվէ բերնի վրէն, մէկն ըսեց, աչից նազար է վերցուցէ։ Համա ինչ կէնիս օր մէկ ծուռ տղէմի կայ, էտոր սովորութեն ի՞նչ է, հօլ կը խաղայ Թագաւորի ամարաթի յառաջ, մէկ յերկէն կոպալ մի առեր է ձեռք, հոլ մը լէ չարխաքաշ Թալեր է մէյդան, կէս փութ կէղնի. մէյդընի էտա գլխուց կը զարնէ, կերթայ գէլնի էն գլոխ. կը վազնի կերթայ էն գլխուց կը զարնէ, կիգայ իտա գլոխ։

Կըսէ. Հոլն իմն է, կոպալն իմն է, իմ յառէջ գալողն ո՞րն է։ Զուրի իրկուն էտոր վէշակ էտ է, կըսէ ու կըզարկէ։ Մէկ լէ ծուռ գլոխ բարձրցուց հոլի վերևէն, տեսաւ օր քաղաք էլ մարդ չմնաց, յըմէն կիգան ու կը լցվին Թագաւորի ամարաթ։

Ըսեց. Եարաբ Աստված, էտ ի՞նչ է էղէ, օր էտոնք էկան լցվան իտա տեղ. եաւաշ ես լէ մտնիմ, տեսնամ։ Ծուռ տղէն կոպալ դրեց Թևի վրէն ու մտաւ ներս։ Էտ մախլուխն օր տեսաւ ծուռ տղէն էկաւ կոպալը Թևին, բիրադի փախան, ճամբաս տվեցին, ընցաւ գնաց ներս։

Գնաց տեսաւ, օր ինչ տեսնի, Թագաւորի տղէն սիրով է ընկէ, ալբէալը ճանչըցաւ ծուռ տղէն, քրտինք տվեր է վրէն, պահվըներ Թափած ա վրէն, քիչ է մացէ, օր Թագաւորի տղէն

ԾՈՒՌ–ՏՂԱՆ

(Զամրու, Մշեցիներ*)։

Կեղնի չեղնի մէ թագաւոր կեղնի, թագաւորին մէկ տղայ կեղնի։ Թագաւորի տղի փէշէն աւուղուշ էնելն էր, մշտական վաղիրի տղի հետ կեթէր կիգեր. էն մէկ օր աւուղուշի տեղէն էկան ծովու ղրաղներ, թագաւորի տղէն տեսաւ, օր յերէս մենծ բան մի կիգայ, իսկի տեսած չէր գեամին ինչ է, ծովը ինչ է։ Ձիու դիւզգին քաշեց կայնաւ։ Վաղիրի տղէն ըսեց. Թագաւորի տղայ, քու գլխուդ, արեւուդ մեռնիմ, էտ գեամի է, ուրիշ երկրներուց կիգայ։

Ըսեց. Գեամին ինչ է։

Ըսեց. Թագաւորի տղայ, էտի մարդ կը բերէ, մարդ կը տանէ, հագին շէնլիք է, շինութեն է։

Ըսեց. Վաղիրի տղայ, կայնի թամաշա էնանք, տեսնանք ինչ կայ էտոր մէջ։

Թագաւորի տղէն ու վաղիրի տղէն ձիանու գլոխ քաշեցին կայնան ծովու պռունկ, թամաշա էրեցին օր գեամին էկաւ. էկաւ ուր մանզիլի գլոխ կանաւ։ Որ կանաւ՝ նոր թագաւորի տղէն շիտակ թամաշա էրեց. տեսաւ օր էտ գեամու փանջարից մէկ լեանգաուի կախեցին, թամաշա էրեց, տեսար օր լեանգեաուի էր։

Ըսեց. Վաղիրի տղայ, էն ինչ է։

Ըսեց. Լեանգեաուի է։

Փաշեցին նեբս, ետոյ մէկ հատ մատնիք կախեցին։ Մատնիք լէ տեսաւ, ըսեց. Վաղիրի տղայ, էն ինչ է։

Ըսեց. Էնի լէ մատնիք է։

Էն քցեցին էկաւ տղին. ընտրնէ ետ, մէկ հատ թըզպէխ, մէկ հատ լէ սանտր կախեցին։

Ըսեց. Վաղիրի տղայ, էտա ինչ էր։

Ըսեց. Տնաշէն, էտի լէ թըզպէխ ու սանտր է, չըս գինայ։ Էտ լէ քաշեցին նեբս։ Փշուրմ լէ թամաշա էրեցին, մէկ լէ տե-

---

*) Պատմեց 1912 թ. Յուլիսի 19-ին, նոյն Զամրոյ գիւղում Սարգիս Միրզոյեանը։

էրկու ձեռք շոր բեր, էրկուս լէ մէկ տեսակ էղնի։—Գնաց բերեց։

Ըսեց. Գնա էրկու ձի բէ, էրկուս լէ մէկ յառնկ էղի։—Գնաց բերեց։

Ըսեց. Գնա խուրջին մի լիք փարա վերցու խազինից։—Գնաց լցեց բերեց, յըմէն պատրաստուԹեն օր տեսաւ, հագան ուրանց շորեր, ձիան հեծան, ուրանց սիլահ ասպապ վերցուցին, օսկին կապեցին Թարքերուն, դանչեցին ուրանց Աստված, հահ ու հալլահ էրեցին ու ընկան ճամփա։

Գիշեր ցերեկ մէկ էրեցին, քշեցին էկան Լանգեաուի քաղաք յելան դուրս։ Գացին մէկ պառվու մի տուն, իջան դոնախ։

Ծուռ տղէն ըսեց. Նանէ, առ իտա ճանկ օսկին քըզի, ձիանեերուն տեղ էրէ։

Պառաւն օր օսկին տեսաւ, Թումբան քաշելով, պուտուվներ քաշեց դուրս, ալբէալի տեղը իսարկեց, ձիանք քաշեց ներս։ Ձիանն օր քաշեցին ներս, պրծան, ծուռ տղէն յելաւ գնաց բազար, գնաց բազար էն տեսակ խոնչէ մի առաւ պատրաստեց օր, բազրկեանի պէս, դրեց մէ համալի գլխուն, առաւ գնաց Թագաւորին վէշքէշ։

Գնաց Թագաւորի դիվան, գլուխ յիջուց Թագաւորին, խոնչէն դրեց Թագաւորի յառէջ, ձեռ կապեց կայնաւ։ Թագաւորը տեղ տվեց նշանց, ծուռ տղէն նստաւ։

Թագաւորն ըսեց. Հը՛, ինչ մարդ ես դու։

Ըսեց. Թագաւորն ապրած կէնայ, մենք բազրկան ենք, ըսէց ֆիլան քաղքէն էնք, էրկու ախպէր ինք, բաւականի Թանգագին ապրանք ունենք, էտմալ էղաւ, օր էկանք քու քաղաքը պատահանք, ինդրեմ օր մըզի իրաւունք տաս խրիտ էնինք, իսան մըզի դակմիշ չէղի։

Թագաւոր շատ ընդունեց ծուռ տղի խօսք, տվեց մէ գիր մի, Թէ իրաւունք ունիք իմ քաղքի մէջ խրիտ էնիք։ Ծուռ տղէն առաւ էտ ԹուղԹ, դրեց ուր ծոց, շնորհակալ էղաւ Թագաւորից ու գնաց։

Գնաց պառվու տուն, ասեց. Նանէ, գինաճս ինչ կայ։

Ըսեց. Ի՞նչ կայ։

Ըսեց. Մենք էկեր ենք զարգըրի ախչըկայ համար։

Ըսեց. Թաո՛ւ, զարգըրի ախչիկ վազիրն ուզեր է ուր տղին, էնտուր հօրեղբօր տղէն ծռուկ է վրէն, գուզէ առնէ, ըսեց, ախչիկ չի առնէ։

Ըսեց. Բա ախչիկ վի՞ր կառնէ։

Ըսեց. Ուր հօրեղբօր տղէն ծռուկ է վրէն, ախչիկ չի առնէ, ընդոր հէր լէ զօռով տվեր է վազիրի տղին՝ նշան դրուկ է, մկա չի պսակվի ախչիկ։

Ըսեց. Բա ախչըկայ միտք վիրն է։

Ըսեց. Զը գինայ, Երուսաղէմայ օր էկեր է, ճամփէն մէ տղի խօսք ա տվէ. էնտոր ճամփէն կը պահէ։

Ըսեց. Նանէ, իմ ախպէրն է էն տղէն. նշանաքանը իմ ախպօրն է տվէ, իտա մատնիքն է, առ գնա տուր նշանց, տես ինչ կըսէ։ Օր կը հարցու կըսէ՝ էտ մատնըքի տէր դիր է, ըսէ. իմ տան է։

Պառաւն առաւ մատնիքն ու գնաց։ Գնաց տեսաւ օր ախչկներ քոմած է զարգրի ախչկայ վրէն, կը խրատեն օր ճամփու բերեն, էրթայ վազիրի տղի հետ պսակ։

Ախչիկն օր տեսաւ պառվու մատին ուր մատնիք, ճանչըցաւ ալբէալ։

Ըսեց. Զարգէք պառվուն չուր ի գղի (ընկուզի) ծառի տակ։ Էրկու իրեք գամրոց զարկին, պառաւ փախաւ, պրծաւ էկաւ տուն։

Ծուռ Տղէն ըսեց. Նանէ, լիմալ էղաւ։

Ըսեց. Ոչ դուք էղնիք, ոչ ձեր հարս, ընձի ըսպանեցին զարկելով։

Ըսեց. Նանէ, մատնիք տեսաւ։

Ըսեց. Տեսաւ, աչքն օր առաւ մատնիքն՝ ըսեց. Զարկէք պառուն չուրի գղի ծառի տակ։ Ջառէք զարկեցին, ես պրծայ փախայ։

Ըսեց. Բան չէղնի, նանէ, առ իտա ճանկ օսկին, ջանդ ի կը խմբի։

Մուրն օր տվեց, ծուռ տղէն յելաւ, թագաւորի տղէն վերցուց, տարաւ խաս բախչէն, գղի ծառի տակ դրեց։

Ըսեց. Թագաւորի տղայ, չքնես. զարգըրի ախչիկ կիգայ չուր ինչ վախտ էղնի։

Ծուռ տղէն օր հեռեցաւ, թագաւորի տղէն քնաւ, զարգըրի ախչիկ էկաւ, տեսաւ օր թագաւորի տղէն քնուկ է, ջուխտ մի ճան, էրկու գուզ (ընկոյզ) քցեց ջէրն ու գնաց։ Լուսն օր բացվաւ, ծուռ տղէն յելաւ վազաւ պախչէն, տեսաւ օր թագաւորի տղէն նստեր է, կուշտ ու բոլոր կիշկէ։

Ըսեց. Հա, թագաւորի տղայ, ախչիկն էկաւ։

Ըսեց. Չէ։

Ըսեց. Հըլա բէ քու ջէրը իշկիմ։ Ջէրը իշկեց, տեսաւ օր էրկու ճան, էրկու հատ էլ գուզ թալեր էր ջէր։

Ըսեց. Բա էտի ինչ է, օր չէ էկեր է։

Տղէն վերցուց առաւ գնաց։

Ըսեց. Նանէ, էսօր լէ գնաւ։ Նանէն յելաւ գնաց։

Ախչիկն օր տեսաւ Նանէին, ըսեց. Հայ, գիղի պառվուն զարկէք չուր տանձի ծառի տակ։

Երկու դամբոց զարկեցին, պառաւ պրծաւ փախաւ։
Էկաւ տուն, ծուռ տղէն ըսեց. Հը՛, Նանէ, էսօր ի՞մալ էղաւ։
Ըսեց. Էս օր քիչ զարկեցին, շուտ փախայ պրծայ։
Ըսեց. Հըպը ի՞նչ ըսեց ախչիկ։
Ըսեց զարկէք չուբի տանձի ծառի տակ։
Ըսեց. Լաւ, Նանէ, ջնաս չունի։ Հանեց քանի մի օսկի տվեց պառվուն, պառվու ջան դինջացաւ։ Իրկուն օր էղաւ, էլման յէլաւ ծուռ տղէն, առաւ Թագաւորի տղէն ու գնաց, տարաւ տանձի ծառի տակ դրեց, թամբի էրեց, ըսեց. Էս օր չքնես, կըսպանիմ քըզի. զարգըրի ախչիկը կիգայ էսօր։

Ծուռ տղէն օր դարձաւ էկաւ, ախչիկն օր հօրն ու մօր քնցուց, յելաւ էկաւ տանձի ծառի տակ տղին գտաւ, փաթթըվան յիրար ու պառկան հօրղան դէօշկի մէջ, հըմա ինչ կանխա, օր ախչկայ հօրեխբոր տղէն օր ծուռկ էր ախչկայ վրէն, գիշեր ցերեկ ախչըկայ յետև կը պըտըտէր, օր մեղք գտնէր վրէն։ Էտի ալբէալ յիմցաւ օր ախչիկը գացեր էր խաս պախչէն, տղայ էր գտի, էկաւ գալից խաս պախչէն, տանձի ծառի տակ, ախչիկ ու տղէն քնուկ տեղ գտաւ։ Ինչ էրեց էտ տղէն, բերեց էրկուն հօրղան դօշկով շրտեց, ու շալկեց բերեց, Թագաւորին բռնատուն կար, ընտոնց կանոնին կար, գողութենով օր բան բռնեն, կը բերեն էտտեղ կիտեն պահել, չուբ ի լուսնէր, օր տանին Թագաւորի դիվան։ Շլկեց բերեց, տվեց բռնատուն զարաուլին պահել։ Օր տվեց պահել, ընկաւ քուչէք, բոռալով պտուտեց, ըսեց. Ո՞րն է տեսի բիլբուլն ու խառխար (ագռաւ) մէկ դաֆտսի մէջ։ Ծուռ տղէն յելաւ դուս գիշեր, լսեց էտոր ձէն, ալբէալ յիմցաւ, ըսեց. Տղէն բռնած է, դարձաւ գնաց նեբս, ըսեց. Նանէ, թնդիր վառէ, տղէն բռնած է։ Մէկ պղտի բրոլ մի (կաթսայ) դրեց թոնդրայ վրէն, հալվայ էրեց, հմալ բրոլով վերուց հալվէն ու վազաւ բըռնատան դուռ՝ զարաուլի մօտ։

Ղարաուլն ըսեց. Հա՛, ի՞նչ մարդ ես։

Ըսեց. Ֆու գլխուն մհռնիմ, զարաուլ, ես բազրկեան եմ, խրիտ էնելուց պրծեր եմ, խէր եմ էրի ցրվի, իտա փշուր յիվել-ցեր ի, տար իտա քու ճժերուն, զարտըկայ իմ բրոլ շուտ բեր, ես առնիմ էթամ։

Ըսեց. Սա թվանք, էտա տեղ կայնի, մուղաթ կէցի, չուբ ես իգամ։ Ղարաուլն օր առաւ բրոլ գնաց, էտի շուտ թվանքը դրեց դուռն ու մտաւ նեբս, տեսաւ օր ախչիկն ու տղան շիրտով փաթթուկ, էտտեղ դրուկ են, քանդեց շիրիտ, ախչիկ միջէն հանեց, ինք մտաւ Թագաւորի տղի հետ, ջլերու մէջ, ըսեց.

Սխչի, շրտէ։

Ախչիկ շրտես, դայիմ կապես ու փախաւ գնաց ուրանց տունն։ Ղարաուլն էկաւ, տեսաւ օր բազրկան թողեր ա թվանքն ու գացեր է։

—Հէյ վախ, հէյ, ես օր անգան էկայ, խեղճ բազրկան թողեր է ուր բրոլ ընձի ու գացեր է։

Լուսն օր բացվաւ, զարկըրի հօրօղբօր տղէն էկաւ թագաւորի դիւանն։—Էա՝ թագաւորն ապրած կէնայ, ասեց, էտ իմալ դիվան է քու դիվան. զարգըրի ախչիկ վազիրի տղի հետ նշանելու էղնի, ու էրթայ զարիբ տղի ծոց պառկի։

Ըսեց. Ի՞մալ։

Ըսեց. Հըպա, ես եմ գիշեր գացէ քու խաս պախչէն, տանձի ծառի տակ քնուկ տեղ բռներ եմ զարիբ տղի մը հետ։

Ըսեց. Մըկա դո՞ր է։

Ըսեց. Հանդէ, բռնատուն պահել եմ տվէ, էրկուս լէ յիրար հետ շիրտուկ։

—Հայդէ, ըսեց, գնա բեր։

Տղէն գնաց, շալկեց, ծանտր ծանտր առաւ էկաւ, դրեց թագաւորի դիվան։

Ըսեց. Շէրիտ քանդէ։

Շէրիտն օր քանդեցին, ջուխտ տղէն լէ թըռան, յելան նստան։

Ծուռ տղէն յելաւ կայնաւ։ Հայ, թագաւոր ապրած կէնայ, էտ իմալ թագաւորութեն է, ձեռ տարաւ ծոց, թագաւորի տված թուղթ հանեց տվեց թագաւորի ձեռ, ըսեց.

Թագաւոր ապրած կէնայ, դու ինձ իրաւունք տվիր ես, օր ես բազրկեան իմ, քու քաղքի մէջ արխային շուռ գամ, մէկ մարդ ինձի դակմիշ չէղնի, էտ իմալ դիվան է, օր ես տա տղէն էկաւ մեղի թալնեց, մեր էրկու ախպէր իրիկվօրէ փաթթեր է, բերեր է բռնատուն դրեր է։

Ըսեց. Տղայ, դու կըսես զարկըրի ախչիկն եմ բռնի, մկայ իտա բազրկաններն իս թալնի։

Ըսեց. Թագաւոր ապրած կէնայ, ես ախչիկն էմ բռնէ, գուզես բեր երդում տուր։

—Լաւ, ըսեց թագաւորը, դուք գացէք ձեր գործին, ես ձեր դիվան կը կտրեմ։

Ծուռ տղան առաւ թագաւորի տղէն գնաց պառվու տուն, ըսեց. Թագաւորի տղայ, գինաս ինչ կայ։

Ըսեց. Ի՞նչ կայ։

Ըսեց. Մկայ կը բերեն յերթուա կիտան ախչըկան, օր մենք բան մի չէնինք, ախչիկ մեղաւոր է, յերթուա կը հանէ։

—Է՛ ինչ էնինք։

Բերեց թագաւորի տղին տկլոզցուց, բերեց մուր քսեց ջան ածուց, մէկ պալտօն առաւ վրէն, փափախ լէ դրեց գլօխ, ըսեց. Գնա թագաւորի դիվան հաշտ կայնի, ախչիկն օր կը բերեն, պալտօնդ ի ծալ հաշտ, փափախ լէ դիր վրէն, ու շուտ մտի դիվան, թուի էն դէն, էն դէն, ախչկայ յերես պագէ, փախի, ել պալտօնդ առ ու փախի դուս։

Թագաւորի տղէն գնաց էտմալ էրեց. ախչըկան օր բերիցին օր երթում պըտի տէն, թագաւորի տղէն հաշտից մտաւ ներս, թռաւ էն դէն, էն դէն, ձեռ թալեց ախչկայ յերես պագեց, ու պալտօն վերուց փախաւ դուրս։

Մացին շիւար, յիրար յերես իշկելով։

—Ախչի, ըսեց թագաւորը, էտ ինչ բան ես բռնէ դու էս գիշեր։ Վազիր լէ անկաճ կէնէ։

Ըսեց. Թագաւոր ապրած կէնայ, իմալ բան եմ բռնէ։

Ըսեց. Ծաս բախչան, տանձի ծառի տակ, քու հօղբօր տղէն էկեր է քըզի մէկ խարիբ տղիմ հետ բռներ է։

Ըսեց. Թագաւոր ապրած կէնայ, մամոց օր էղեր էմ չուրի մկայ իտա օյին օր իմ յերես պագեց ու փախաւ կորաւ, դու տեսաք, ինչ միլլաթ էր։

Թագաւորն ըսեց. Մենք ամենևին չգիտցանք թէ ինչ միլլաթ էր։

—Ընտրէ սավայի, ակար ուրիշ մարդ մի ընձի ձեռք տվեր է, ես իմ յերես պագեր է, փորձանաց ջուր ընձի թըղ հանէ։ Ըսեց ու ձեռ զարկեց ջրի մէջ, հանեց, սալամաթ պրծաւ։

Օր պրծաւ՝ վազիր վերցուց ուր հարս ու տարաւ պսակեց ուր տղի հետ։—Մենք խապար տանք ծուռ տղից։

Ծուռ տղէն գնաց ձեռք մի թազա հարսի շոր առաւ, բերեց հագուց թագաւորի տղին, էրեց խորոտ հարս մի ու բռնեց ձեռն ու ասաւ. Գնա վազիրի տուն։ Տարաւ վազիրի դուռ կայնաւ՝ խանչեց վազիրին հանեց դուս, ըսեց. Վազիր, վերև Աստված ներքև դու, իտա իմ հարսն է, իմ ախպէր պսակեր իմ, իտա իրեք տարի թողեր է իմ հարս ուր էրէսի վրայ ու փախեր է կորեր է, մկա խաբար առեր իմ, օր իտա քու քաղքի մէջն է, էն ապով առեր եմ իմ հարս էկեր իմ, օր իմ ախպէր տեսնի, իմ հարսի սիրուն ի գայ էրթանք. Աստծու ամանաթ, տար պահէ իմ հարս, քու աչըդի պէս, սապահտան կիգամ առնեմ էրթամ, օր իմ ախպէր գտայ։

Ըսեց. Շատ լաւ, թող իմ տուն ու գնաւ իմ տղէն էսօր եմ պսակէ. տանիմ իմ հարսի կուշտ քնի, սապահտան արի տար։

Տվեց վազիրին ու դարձաւ էկաւ պառվոս տուն։

Վազիրը բռնեց հարսի ձեռքէն, տարաւ ուր հարսի մօտ, ըսեց. Որդի, իտա ղարիբ օղլուշաղ է, թըղ մնայ գիշեր քու մօտ։

Գնաց ուր տղին լէ թամպէհ էրեց, ըսեց. Էս օր խարիբ օղլուշախ կայ հարսի մօտ. դու ջոկ տեղ քնի, էնա էրկու հարս Թըղ իրարու մօտ քնին։

Ըսեց. Շատ լաւ կէղնի։

Վազիրի տղէն էկաւ ջոկ քնաւ, էն էրկու հարս իրարու մօտ քնան։ Ծով լէ էտոնց շինութիւնի յառէջն է, գիշերն օր քնաւ վազիրի տղէն, էրկու հարս յէլան վերցուցին վազիրի տղէն ու թալեցին ծով։ Թագաւորի տղէն թորկեց էտ հարսի մօտէն ու յելաւ գնաց պառվու տունն։

Լուսն օր բացվաւ, վազիրն յելաւ գնաց, տեսաւ օր ուր հարս մէնակ օթախի մէջ կայներ է. ոչ խարիբ հարս կայ, ոչ ուր տղէն կայ։

Ըսեց. Հարս, էն ղարիբ օղլուշախ դիր է։

Զեռով, ոտով հասկըցուց, թէ գիշերը քու տղէն առաւ էն օղլուշաղն ու փախաւ։

—Էյ, վաւլեր, ըսեց վազիրը. էտ յիմալ ամօթանք էր բերեց իմ յերես, մկայ էն օղլուշաղի տէր իգայ ուղէ, ես ինչ ջուղաբ տամ էն մարդուն։

Մէկ լէ տեսաւ օր ծուռ տղան առաւ թագաւորի տղէն ու էկաւ, ըսեց. Բարի լուս, վազիր։

Ըսեց. Աստծու բարին։

Ըսեց. Վազիր, իմ ախբէրն օր կորեր կր, իտա է, գտա բերես, խնդրեմ իմ հարս բերես, առնեմ էրթամ։

Ըսեց. Որդի, ինչ ըսեմ ես։

Ըսեց. Ինչ է էղի, վազիր։

Ըսեց. Ոչ ու փուչ էղնի ըմալ տղէն բալքի։

Ըսեց. Ընչի, վազիր։

Ըսեց. Աշխրքի աչք զարկըրի ախչկան էր, ուզեցի իմ տղին, մկա թողեր է զարգըրի ախչիկ, գիշերը առեր ա քու հարս ու փախեր ա։

Ըսեց. Է՛յ վաւլեր, էտ իմալ զուլում էղաւ իմ գլոխը։ Ես քըզի հոգեվախ յիմցայ իտա քաղքի մէջ, դու էտ ինչ օյին էր հանեցիր իմ գլօխ։ Հըլա ես իմալ էնիմ, վազիր։

Ըսեց. Օղուլ, էլ իլլաճ չկայ, կը խընդրեմ ըսկի յիսան չի՛ ծնայ իտա ահվալ. իմ հարս կիտամ, առ գնա քու հարսի տեղ։

Ըսեց. Վազիր, էտմալ բան կէղնի, դու էղնիա կէնիա էտմալ քանն։

Ըսեց. Կը խնդրեմ օր էղնի, էլ իլլաճ չկայ։

Ըսեց. Վազիր, օր էղեր է, էղեր է, վազիր, կը տեսնամ օր դու լէ խեղճ մարդ ես, բեր տանիմ։

Վազիր բռնեց հարսի ձեռ, բերեց տվեց ծուռ տղին։

Ծուռ տղէն շնորհակալ էղաւ վազիրէն, առաւ ուր հարսն ու թագաւորի տղէն, էկաւ պառվու տուն, գնաց բազարէց մէկ հատ լէ ձի առաւ, էղաւ յիրեք ձի, ամէկ մէկ հեծան, պառվուց շնորհակալ էղան, ու քշեցին ձիան, գիշեր ցերեկ մէկ էրեցին, էկան ուրանց փող յելան դուս։

Ետբար գնաց թագաւորին, թէ աչքդ լուս էղնի, քու տղէն առաւ ուր նշանածն ու էկաւ։ Թագաւորն ղոշունով էկաւ յառէջ, առաւ գնաց, պսակեց, եօթն օր եօթ գիշեր հարսանիք էրեց, ուր ապրիքեան ղրեց թագաւոր տղին, ծուռ տղէն լէ էրեց վազիր, ընտոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձեր մուրազին։

ՃՈՒԿՕ

(Զամրու-Մշեցիներ)

Մէկ մարդ կար մէկ տղայ ունէր, տղի անունն էր Ճուկօ։ Էդ ձկօին ունէր մէկ ճիտ (աքաղաղ), մէկ եզ։ Եզան անունն էլ կլօ էր, ճիտու անունն լէ՝ կլօ էր։ Եզաւ օր ըդրա հէր ֆահլա տարաւ արտը։ Տղին ըսեց, թէ գնա պզտի կլօն, մօրթէ բէ՝ ֆահլէք ուտին։ Տղէն էկաւ թողեց պզտի կլօն, մօրթեց ջոջ կլօն եզը իրան համար մէկ շիշ խորոված էրեց, միւսն էլ դաշնով էփեց, որ տանի ֆահլին։ Ցետացաւ, հէրը էկաւ օր տեսնի ինչ իկաւ տղին։ Տեսաւ օր տղէն եզը մօրթեր է ու խորոված կենէ։ Տղէն օր տեսաւ հէրն էկաւ՝ շիշն առաւ ձեռն ու փախաւ։ Զարկեց գնաց ֆահլքոց մօտ, ըսեց. Իմ հօր բարկութիւն բռնէր է, հիմի կի գայ ձեզ կսպանէ։ Հարցրին, թէ ինչի է հերսօտի, ըսեց. Ես մեծ կլօն մօրթիր իմ, թէզ էրէք, բարտէր կպուցէք ու փախէք։ Ֆահլաները բարդեր կպուցին ու փախան։ Ինքն էլ փախաւ, գնաց մէկ գեղ, ռաստ էկաւ մէկ մարդի մի ըսեց. Ի՞նչ տղայ ես։

Ըսեց. Ֆեասիք տղայ եմ։

Ըսեց. Հոտաղ կեղնի՞ս։

Ըսեց. Կեղնիմ։

Ըսեց. Ինչ տամ ամիսը քզիկ։

Ըսեց. Էրկու մանէթ։

Ըսեց. Կուտամ էրկու մանէթ, հըմը լաւ ծառայիս։

Գնաց էտ մարթու տուն, էդ մարթուն հոտաղութիւն ըրեց։ Մնաց առաւօտ, էտ մարդ պիտի էրթէր աշնցան էնէր։ Տղին ըսեց թէ պատրաստութիւն տես, խօփ, ժնճիլ, լուծ հազիրէ, էրթանք ցանք էնինք։ Տղէն էլ գողցաւ խոփ, դրեց շէմքի տակ, լծեց եզներ, մնացող սարվսալ (գործիք) առաւ գնաց արտ։ Աղէն գնաց հասաւ, տեսաւ օր խոփ հրորի վրէն չէր, տղայ ըսեց, խոփն ո՞ւր է։ Ըսեց. Մոռցայ տուն։ Դէհ վազի, ըսեց խոփն առ արի։ Տղէն վազաւ գնաց խոփը վերցած էկաւ։ Գեղէն օր դուրս յէլաւ՝ տեսաւ հինգ վեց էրեխա նստած են, իրանց համար էքէ դուքէ, (հատիկ հատիկ) կը խաղին, ըսեց. Էտենց չէ էքէ դուքէն։

Պատմեց 1912 թ. յուլիսի 20-ին Զամրու գիւղի Թադէոս Գեորգեանցը։

Տղերքներ ըսեցին. Բա ինմալ է. արի մեզի սորվեցուր։

—Դէ, ըսեց, ձեր ձեռները դրէք քարի վրայ։

Բերեցին վեց տղէն էլ ձեռները դրեցին քարի վրայ, էդի խոփին առաւ ձեռ՝ ըսեց. էքէ դուքէ դըմըլա, զարկեց մինի ձեռքի վրայ, էնի քաշեց ձեռը դրեց ծոց. մախտէ կոճակ, տուր պլօճակ, ճան ճուկ, ու զարկեց միւսներու ձեռները վրէն ու թողեց փախաւ։ Փախաւ էտ տղէն էկաւ ուր աղայի մօտ. հաւար ընկաւ գեղ, ֆլանքասը տղօց ձեռները ջարդեց։ Հաւարն ընկաւ յետևւ Ինք փախաւ էկաւ աղայի մօտ։ Աղէն ըսեց էտ ինչ հաւար ի։

Ըսեց թէ թագաւորն ջառը (մունետիկ) քցեր է քաղաք, բանջարներ գուզէ, օր տանի տըփէ։

Ըսեց. Տղա, ես ուր փախնիմ, ուր կորիմ, օր ընձի չտանին տփին։

Ասեց. Արի մտի սերմի ջվալ։

Աղէն էկաւ մտաւ սերմի ջվալ. բերեց բերան դայիմ կապեց, առաւ մէկ հատ դագանակմ ու հայ էրաւ յոջև դրբի եաման աղա սերմի ջվալ, էն լէ ջվլի միջին լաւա կընկներ թէ ինչի՞ ինձի կը տփես։ Տեսաւ օր մարդու մէկը էն դէմէն էկաւ, թողեց փախաւ, փախաւ, գնաց չօլի մէջ տեղ, հասաւ մէ եափուճու (ձիաւորի)։ Եափուճին տեսաւ օր էտ մարդը էկաւ՝ ասեց. Արի իտա բեռ բառնանք։ Տղէն էկաւ թայը վերուց, էն մարդ լէ շրտըներ յարձկեց, էդի թողից, էրկու տիկ էլ պատաւ գետին, պատռաւ, գինի արաղը թափաւ։ Ճլօն էտ գեղէն թողեց փախաւ։ Դու մի՛ ասի էտ եափուճին հարսանիքի գինի արաղ է կը տանէ։ Ճլօն էտ տեղէն փախաւ, էկաւ էտ հարսանիքի տուն, էդաւ ղօնախ, գնաց ղաղնի կշտի հետ նստաւ. բերեցին քասէ մի միս, մէկ հայ տվին էտ մարդը ուտէ, քիչ բանմ օր կերաւ՝ չարխըներու սրմներ կապեց խարճկոտից (խաչերկաթից). մէկէլ տեսաւ եափուճին դունէն մտաւ, եափուչին օր դունէն մտաւ, աչն առաւ էտ տղին, ըսեց. Իտա էն տղէն է, օր իմ գինի, արաղ թափեց։ Ճուկօն յէլաւ ու փախաւ էտ տեղէն, օր փախաւ՝ չարօխի սրէմը քաշեց խարճկաթը, ղազանները թափան թոնդիր։ Ճուկօն փախաւ յելաւ սրախ, պատաւ հորու մէջ։ Մնաց գիշերվայ մէկ վախտ, էտ թազա հարս գնաց օր էտ հորի մէջ ջուր թափէր, Ճուկօն հորի միջից ձէն տվեց, էնի վախեցաւ ու գըրըմբ՝ հորը, էս հետ, հարս ըսեց, ես որ քըզի հանիմ դուրս, դու ընձի չըս կը՞րնայ հանէ։

—Հըպա դու կըզի, ես հելնիմ քո փիճերան, յելնիմ դուս, քըզի քաշիմ հանիմ։ Հարս կըզաւ, տղէն յելաւ փիճերու վրէն, յելաւ դուս, փախաւ։ Փախաւ էկաւ մի պառուու տուն, էդաւ ղօնախ։ Էտ գեղի տատմէր էտ պառաւն էր։ Գիշեր մէկ օղլուշաղ մի մնաց յօտաց վրայ, յելան էրկու օղլուշախ գացին պառուու յետևւ Պառաւն

ըսեց թէ ես աչքերուց վատացեր եմ, չըմ կրնայ գայ։

—Հըպը իմալ կըլնի, նանէ։

—Մէ գոէք՝ ինձի շալկէ տանի։

Էտ կնկտիք ըսին. Էտ ինչ մարդ է, թող քզի յեղնի շալկէ տանէ մեր տուն, մօտիկ է, ըտրան փող կիտանք։

Ճուկօն լէ ըսեց. Ես կը շալկիմ։

Ճուկօն զպառաւ շալկեց, գիշեր լէ մութն էր, անձրև էկէր էր, ջուր լըցվեր էր հօր մի, փրփրացեր էր, փրփուր դիզվեր էր, տղէն գիտցաւ թէ քար էր, նանէ ջան, ըսեց յիջի իտա քարի վրէն փշուր մի դինջանամ։ Նանէն օր դրեց փրփուրի վրէն, բղբղկաց ու գնաց տակ. ինք էտ տէղէն փախաւ։ Փախաւ յեղաւ չօլ՝ լուա բացվաւ։ Գնաց տեսաւ օր մէկ չօպան ուր օչխար կարծայ, ասեց. Չօպան, լաւ չոպան էս, լաւ օչխար կը պահիս, ափսոս քու մէկ բան պակաս է։

Ըսեց. Ի՞նչն է պակաս։

Ըսեց. Դու չեչօտ էս։

Ըսեց. Ասլածծ էրէր է՝ օր ես չեչօտ իմ։

—Չէ, ըսեց, ըտրան դեղ կայ։

Ըսեց. Ինչ է դեղ։

Ըսեց. Ես կըրնամ օր դեղ ընեմ։

Ըսեց. Օր կրնաս դեղ ընիս, իմ օչխարի կէսը կտամ քըղիկ։

Ըսեց. Արի իտա տեղ գեղին փորէ։

Չոպան էկաւ, խանչալ քաշեց, ուր բօյի (հասակի) բարա փորեց։ Դար, ըսեց, մտի մէջ. օր էկաւ մտաւ մէջ՝ էտ Ճուկօն վերցուց ինչ կըտըր օր քար ու հող կար լըցեց բոլոր ու կոխըր-ճեց ըսեց. Չօպան, դուրս յելի։

Չոպան ճկրտաւ, չկրցաւ դուրս յելլէր. գնաց արխային աստըղ փուշ քաղեց, ու էկաւ ընկաւ չօպնի քիթ ու բերնի վրէն, էնտար զարկեց՝ օր էլաւ յարուն լվայ, ըսեց. Մացի էտտեղ չարի քու քիթ ու բերան կըսաղնայ։ Չոպան մնաց էտտեղ, ինք վեր-ցուց չօպնի կուլապ (թաղիքը) թալեց թև, քաշեց ?օչխարն ու ճանփու հետ էկաւ։ Էկաւ տեսաւ օր ռընչպարի մէկը վար կէներ, ըսեց. Ռընճպար, հլը վար կէնէս. հալը ինչ էնէմ, հըլը կէսօր չէ էղէր է օր թողիմ։ Ըսեց թաքաւորից թուղթ է էկի, ինչ ղըտար ռընճպար կայ՝ քոմին տանին թաքաւորի մօտ։

—Հըպը, ըսեց իմալ էնիմ իտա եղներ։

—Եղներ, ըսեց, բէ տու ինձի, դու լէ փախի մէշէն տաւի, իրիկուն արի եղներ առ գնա։ Ռընչպար օր փախաւ մտաւ մէշտն, էտի առաւ եղներն ու զարկեց էկաւ մէկ գեղ, էկաւ էտ գեղ, ուր մալ, օչխար էրեց կալ մի, ինքը շատ անօթացաւ, ըսեց. Էր-

թամ տուն մի, ընձի հաց առնիմ ուտիմ. գնաց տեսաւ օր պառ-
վու մէկ նստեր է լվացք կէնէ, բարի յաջողում, ըսեց, խնամի։

Պառաւն ըսեց. Բարով էկար, խնամի։

Տեսաւ օր էշըմ էնտեղ կայնուկ էր, ըսեց. Խնամի, իկեր էմ
իտա էշ տաս տանիմ իմ իշու հարսնիք։

Ըսեց. Բան չեմ ըսի կիտամ, հըսկը իտա տան մեծ տուն չէ։

Տնաշէն, ըսեց մէկ իշու համար քու խօսք չի՞ ընցնի իտա
տան մէջ։

Պառվու իլլաճ կտրաւ, հարսներուն ըսեց. Ձեր զուքս ու
զինաթ, օսկի, արծաթ բերէք կապինք իշու վրէն, էրթայ հարսնիք։

Բերին օսկի, արծաթ կապին իշու վրէն, էտ մարդ շնորհա-
կալ էղաւ, էշ տվեց յառէջ ու քշէց. բերէց խառնեց հետ ուր ոչ-
խարին ու քշեց, էտ տան մեծ գութնից էկաւ թէ էշն ձուր է, հաց
տանիմ գութնին։

Պառաւն ըսեց, թէ խնամին էկաւ տարաւ իշու հարսանիք։
Քաշեց փետը պառվին տըփեց, թէ էշ լէ կիտաճն իշու հարսանիք
տանին։ Ետնայ հեծաւ ձին, ընկաւ յետև։ Ճուկօն տեսաւ օր ձիա-
ւորըմ էկաւ յետևից, բերեց օչխար, եղներ ու էտ էշ տարաւ էրէց
գուբ մի, ու էկաւ ճամփու վրայ կայնաւ. էտ ձիաւոր էկաւ հասաւ,
բարև տվեց, առաւ, ըսեց. Ախպէր ջան, մէկ իշւոր դիտա չընցաւ։

Ըսեց. Ընցաւ։

Ըսեց. Կը հասնի՞մ։

Ըսեց. Չէ, ձիով էս, չէս հասնի։

Ըսեց. Հպա ի՞մալ էնէմ։

Ըսեց. Յիչի, յիչաւ։ Ըսեց. Ձին կէնէ մէկ, էրկու, իրեք, չորս.
քու էրկու ոտք է, կէնիս մէկ, էրկու, կը հասնիս։

Էտ մարդու խելք կտրեց, ըսեց. Դէհ իմ ձին բռնէ, օր չը
փախնի, ես էրթամ հասնիմ ու դառնամ գամ։

Էն մարդն օր գնաց, էտի բերեց ձին պահեց օչխարի մէջ.
պօչը կտրեց առաւ ձեռ, բերեց ճանփան մէ պատրօնի (ճղուած
տեղ) մէջ դրեց ու քարը դրեց վրէն, կախաւ ձիու պօչից ու
բոռաց, թէ արի, քո ձին գնաց գետնի մէջ։ Ձիու տէր դարձաւ
տեսաւ օր ձին գացեր է գետին, մացեր է պօչ դուս, վազեց էկաւ,
օր քաշէ հանէր, չուրի վազաւ էկաւ, տղէն քաշեց, պօչ կտրաւ,
ծնաց ձեռ, ըսեց. Աստված լէ քու տունը աւիրէ, քո ձին գնաց
իտա ճղօնից (ճղուած տեղից)։ Մարդը քոռ ու փոշման թողեց
գնաց ուր տուն. էտ օր գնաց, ճկօն տվեց յառէջ ուր ոչխարներ,
եղներ, էշն ու ձին ու էկաւ տուն։ Մանն ու պապ յելան տեսան
օր ամենայն ապրանք լէ բերեր է, նոր թաղատան գնացին մէկ
ախչիկ ուղեցին, տղին կարգեցին։

ԴԻՒՐԳԵՍԱՐ ՍՂԼԻ.

(Ղազնաճար)—Մանազկերտցիներ*)



ամանակով մէ թագաւոր կըլնի, էտ թագաւորին մէ տղայ կունենայ, անունը Մանզաւէր կըլնի։ Թագաւորին կունենայ մէ սիւրու ոչխար, պառաւի մէկին էլ կունենայ մէ էծ։ Պառաւը ուր էծը կը խառնայ թագաւորի սիւրուին, մէ օր կը տեսնայ ուր էծը կթած ա։ Մէկ օր, էրկու օր կը համբերէ, կը համբերէ, կը տեսնայ օր յըմմէն օր էծը կթած կգայ։

Կերթայ թագաւորին կը գանգըտի, թէ չոպան իմ էծը կը կթայ։ Թագաւորն էլ կը կանչայ չոպանին կասայ, թէ պառաւի էծը ինչի՞ կը կթիս, էն ահագին սիւրուիս մէջ, պառաւի էծն ես մէնակ տեսէ։

Չոպան կասէ. ես պառավի էծ չեմ կթեր։

—Դէ, ասում ա, պառաւի իծուն մուղաթ կաց, տեսնանք էս ինչպէս ա, օր պառաւը գանգատվում ա, թէ կը կթայ. դուն էլ կասես չէ, ես չեմ կթի։

Գնաց չոպանը պահպահեց պառավի իծի վրայ, կէս օրին օչխըի գալու վախտը, էծը չոկվաւ գնաց մէշի մէջ, չոպանն ընկաւ յետևէն գնաց։ Տեսաւ օր մէկ վարկի տեղ (օբի տեղ) մէ հատ էլեխայ դրված էր, էծը կայնաւ վրէն ծըծցուց։ Չոպանը էրէխէն վերցուց, էծը քշեց հասուց սիւրուին։ Օչխարն օր բերեց հասուց տեղը, պառաւը տեսաւ օր էծը կթած էր, էլ ետ վազելով գնաց թագաւորին գանգատ էրեց։ Ես վոր կասեմ, թագաւոր, իմ էծը կթած ա, դու չես հաւատայ, հիմի ցամաք կթած ա էլի։ Թագաւորը չոպանին դանչեց։

---

*) Պատմեց *1912* թ. Յուլիսի *15*-ին Ղազնաճար գիւղում, Նիկողայոս Պետրոսեան յիսունամեայ անգրագէտ ծերունին, որի պապերը եկել են Մագկերտի Հասան—փաշա գիւղից։ Սա ամառը պարապում է երկրագործութեամբ, աշունը զբաղում է երեւան մսագործութեան, իսկ ձմեռները շատ անգամ յօդացաւերով հեծեծալ է անում։

Ըսեց. Էս պառաւի էծ ինչի՞ ես կթի։

Վերցուց էրեխէն տվեց թագաւորին, թէ պառաւի էծ կթողը էս էրէխան ա, ես չեմ։ Թէ, էտ ո՞ր տեղն էր էտ երեխէն։ Թէ, մէշի՛ մէջ, մէկ վարկատեղ էտ էրեխէն դրած էր։

Թագաւորն ասաց. Ինչ տամ օր էտ էրէխէն ինձի տաս, պաաւաւ, քու էծն ա պահէ էտ էրէխէն։

Ըսեց. Իսանի գինն ինչ ա, էն գինը տուր։

Թագաւորն ասեց. Իրա կշռով մէկ վոսկի կիտամ։

Էրէխէն դրեցին մէկ թայ, վոսկին էլ լցեց մէկէլ թայ, քաշեց, տվեց պառավին։

Էրէխէն առաւ, անունը դրեց Դիւրգեար Օղլի։ Թագաւորին էլ մէկ տղայ ունէր, էրեց էրկու տղայ, տվեց պահել իրար հետ։ Մենձացան տղէքներ մինչև եղան քսան տարեկան։

Թագաւորի տղայ Մանղաւէրը, քանի գնաց, ետ գնաց։ Դիւրգեար օղլին էկաւ թագաւորին գանգըտաւ, թէ իմ ախպէր քանի կուտայ, կը խմայ ետ կերթայ, յառաջ չի էրթայ։

Թագաւորն ասեց. Թէ, որդի, Ջահիլն օր Ջահիլի սըրը չիմանայ, ես ինչ պիտի իմանամ, դու աշխատի որ իմանաս։

Դիւրգեար օղլին գնաց պատրաստեց մէ քսան հոգու համար կերակուր, ժողվեց մէ քսան հոգի աղապներ, բերեց, նստան կերան ու խմեցին։

Բէֆ օր հասաւ, Դիւրգեար Օղլին թաս առաւ ձեռը ըսեց. Ես կը խըմեմ Ֆիլան վազիրի աղջկայ կենացը։ Ըսեց. Իմ գլոխ սիրողը, թող իրա սիրածի կենացը խմա։ Յըմմէն տղէքներ վերցուցին, ուրանց սիրականներու անուններ տվին, խմեցին. Մանղաւէրը չխմեց։

Ըսեց. Ախպէր, դո՛ւ ինչի՞ չես խմի, դու էլ քու սիրականի անուն տուր, խմա։

Մանղաւէր ասեց. Իմ սիրելականին անուն տալու չէ, չեմ կրնայ անունը տայ։

Ըսեց. Ըսա՛, մի՛ վախենայ, ես պէտք ա գլուխս էրթայ, ես քու մուրազդ պէտք ա կատարեմ։ Մանղաւէրը ըսեց. Ես կը խմեմ եօթ դէվի քուր Շահ-Սանամի կենացը։

Ուտել-խմելուց պրծան, յըմմէն էլան ցըվըրվան գացին։

Դիւրգեար Օղլին գնաց թագաւորի մօտ ասեց.

Իմ ախպէրը խմեց եօթ դէվի քուր Շահ-Սանամի կենացը, պիտի էրթամ բերեմ։

Թագաւորն ըսեց. Որդի, ըսեց, շատ դժուար մասլահաթ ա էնի։ Ըսեց. Եօթ դէվը էնքան թագաւորութիւններ վերջացուցին, էնքան ձեզի պէս Ջահիլներ փչացուցին. Ինչի՞, չկա՞յ թագաւորնե-

քու աղչիկներ, չկայ վազիրներու աղչիկներ, օր մէկն ուզինք։

—Չէ, ըսեց, թագաւոր, անկարելի գործ ա, ես պիտի գլոխս էրթայ, ես պիտի ախպօրս մուրազը կատարիմ։

Թագաւորը շատ ըսեց, Դիւրգեար օղլին քիչ լսեց։

Թագաւորն ըսեց. Որդի, օր ինծի չէք լսե, դու գինաք։

Դիւրգեար օղլին յելաւ գնաց, մտաւ ձիանոցը, մէկ մէկ լաւ ձի պատրաստեց ուրանց համար, մէկ մէկ էլ խուրջին օսկի լցեցին ուրանց համար, վերցուցին ուրանց զէնք, յելան շնորհակալու-թիւն առան, ու գնացին։

Մէկ օր, թէ տասն օր գնացին էտ մալդիկը, գնացին մէկ հալիվորու պատահան, բարև տվեցին։ Բարևն առաւ հալիվորը ասեց.

Դուք հազար բարի էք էկի, թագաւորի որդիք։

Թագաւորու տղէքներուն մէ գիշեր ղոնաղ էրեց հալիվորը, հարցուց, թէ ղըռ պըտի էրթաք, թագաւորու տղէքներ։

Ըսեց. Կերթանք, ես թէվի քուր կուզիմ իմ ախպօր։

—Է՛, ասեց, որդիք, էկէք մ՛էրթէք, էնքան ձեզի պէս ջահիլ-ներ գնացած ին ու չեկած։

Ըսեց. Անկարելի ա, գլոխը էկի, ոտ բերեր ա, ես պէտք ա գլուխս էրթայ, ես պէտք ա խօսքս կատարիմ։

—Օր չես լսի, դու գինաս, որդի։

Սապահտան օր յելաւ, ձեան հեծան ու գնացին։ Գնացին հասան դէվերու հողի մէջ, ձիանուց իջան, ձիան թողին արածա-լու։ Ախպօրն ըսեց.

Դու մացի ձիանու մօտ, ես կերթամ, դու զգուշ մացի իմ համար։

Դիւրգեար Օղլին գնաց հասաւ դէվերի շինութիւնը, դուռ բացեց, նես մտաւ, տեսաւ օր Շահ-Սանամ նստած էր քեարկեա-հի վրայ, քեարկեահ կէնէր. Շահ-Սանամին էնպէս մէ պատկեր ունէր, օր արեգական պէս էր։

—Չը, ըսեց, հողածին, հաւքն ուր թևով, օձն ուր պորտով էստեղ չէկի, դու ինչպէս էկար, դու ես թէվի անուն չիր լսե։

Ըսեց. Քու սէրդ բերից ընձի։ Ես թէվից վախեցողը ըստեղ ոտք չկոխայ, ղոնաղ իմ էկէ, հաց բէ ուտիմ, նոր էտ խօսքը ընձի ասա։

Հաց բերեց՝ կերաւ, ըսեց. Էկեր եմ քեզի կուզիմ իմ ախպօր։

Ըսեց Դէվերուն մառջով ա, թէ կատարվի, ընձի կը տան քու ախպօր։

Ըսեց. Ի՞նչ ա ընդունց մառջ։

Ըսեց. Մէկ հատ ես թէվ կանթըրնէն ղազան ունին, միս ու ջուր լիք կըլնան, ուրինք ես թէվ ախպէրով անճախ կը վերուն գնին կրա-

կի վրայ, մէկն էն ա։ Մէկ էլ, ըսեց, մէկ հատ քեչա ունին, եօթ ծալ կը ծալին, քու թուր թալելուն, պէտք է կտրէ, էնէ էրկու կտոր, ընդուր, ըսեց, թլիսմ ունի, իմ գլխու մազ ընդուր թլիսմն ա, ուր գլխուց էրկու հատ մազ պրծուց, տվեց տղի մօտ, ըսեց. էն վախտն օր ընդունք կըծալին, դու ասա չեղաւ, եաւաշէք ես ծալիմ։ Էն գլխու մազ մատներուդ մէջ առ, դիր քեչի մէջ, էն վախտ թէ դվաթ ունիս, թուր կը կտրէ էն քեչէն։

Էտ ասելուց օր պրծան, տեսան դէվերը էկան, բարև տվեցին էտ մարդուն, բարևն առաւ, ըսեցին. Դու ինչ մարդ ես։

Ըսեց. Ես էկեր իմ, պէտք է ձեզի հետ բարեկամութին էնիմ, ձեր քուրը ուզիմ իմ ախպօր։

Ըսեցին. Մեր օր կայ, մառջով ա, կատարեցիր մեր մառջ, մեր քուր կիտանք քու ախպօր, չը կատարեցիր, քու գլուխն էլ կը զարկինք, քու ախպօրն էլ։

Ըսեց։ Ձեզէք, տեսնինք ինչ է ձեր մառջ։

Ըսեցին. Մէկն էս ղազանն ա, պէտք ա լիքը լըլնանք, միս ու ջուր, իրեք անգամ վերցուս դնիս կրակի վրէն, դնես գետին։ Մէկ էլ էս քեչէն ա, եօթ ծալ կը ծալինք, մէկ անգամ քու թուր քցելուն կտրա, մեր քուր կիտանք քու ախպօրը։

Բերեցին ղազան լիքը լըցեցին միս ու ջուր։

Ծանչեց. Հացն ու գինին, Տէր կենդանին. ձեռ թալէց ղազնի կանթըներ, վերցուց երեք հախ դրեց կրակի վրէն, դրեց գետին։ Դառձան էկան՝ քեչէն եօթ ծալ ծալեցին, ըսեց.

Էտ չեղաւ, թողէք ես ծալիմ եօթը ծալ։

Ըսեցին. Ծալա, բան չկայ, եօթ ծալ ծալա, դու ծալա։

Ծալելու վախտ մազերը դրեց քեչի մէջ, քաշեց ուր թուրը, խանչեց. Հանցն ու գինին, Տէր կենդանին, ու թալեց, մէկ կազ էլ գետին կտրեց քեչի հետ։ Դէվեր եօթն էլ էկան աչքալուս տվեցին, թէ մեր քուր ուզեցիր քու ախպօրը, նըստան կեր ու խում էրեցին, չուր ի լուսցաւ։ Ըսեցին, թէ գնա քու ախպէր բի, տեսնենք իմալ մարդ ա։

Ձելաւ գնաց, էն ղդար բուաց, ախպէր քնուկ էր չիմցաւ, գնաց տեսաւ ախպէր քներ ա, բերան մացեր ա բաց, թիզ մի ճանճեր թափած բերնի վրա։ Ախպօր լանգով (կրունկով) զարկեց։ Ըսեց. Քու տունն աւիրի, իրիկվորէ Շահ-Սանամ ուզեր իմ քեզի, ես էկայ մէռայ գոռալով, դու քնուկ տեղէ չիմցար։ Ըսեց. Ձելի էրթանք։

Ձելան հէծան ձեան, յիրարու հետ էկան։ Ըսեց. Ձեղնի վախենաս, քու նշանածն ա. տղամարդու պէս գնա, ասա, խօսա։

Էկան հասան դէվէրու ամարաթը, դէվերը վազան էկան ձիան

բռնեցին։ Ջիանուց օր իջան գնացին, էկան փեսին աչքալուս տվեցին. էտ օր հար իրիկուն կերան, խմին, քէֆ էրեցին։ Յետեան էն լուսուն ըսեցին. Փեսէն ու մեր քուր թող մնան տուն, մենք էրթանք աւ էնինք։

Գացին աւ էրեցին։ Եօթը դէվը, եօթը աւ էրեցին, էտիկ մեննակ եօթ աւ էրեց։

Ըսեցին. Էտ ինչքան դվաթով, դոչախ մարդ ա, մենք եօթն ախպըրով եօթը աւ էրինք, էտի մէնակ եօթ աւ էրեց։ Իրիկուն օր էկան, բերեցին, քառասուն օթախ ունին, ըտոր բալնըքներ տվեցին քուրոջն ու փեսին, ըսին. Գացէք դուք ձեզի համար պըտրտվէք, թամաշա էրէք, տեսէք մեր խազնէք, մեր օթախներ։

Լուսուն յետեան, եօթը դէվ ու Դիւրգեար օղլին գացին աւ ընելու։ Մանդավէրն ու Շահ-Սանամը բացին, թամաշա էրեցին էտ դէվերու խազնէք։ Շատ օր զրվըռնեցին, նեղացան, գացին հաւուզի վրէն նստան, ըսեց Շահ-Սանամ, քու չոք դի, ես գլոխ դնիմ քու չոքին, քիչ մի քնիմ։ Էն օր քնաւ, յետաւ, իտա հախսի Մանդավէր չոք դրեց, Շահ-Սանամ գլոխ դրեց քնաւ։ Իշկեց տեսաւ օր հաւուզի վերև մէկ պզտիկ դուռ կար, յետաւ էտ քառասուն բալնիք էլ փորձեց, չբացեց, էկաւ Շահ-Սանամի մազերու հետ խաղցաւ։ Տեսաւ օր մէկ պզտիկ բալնիք կար մազերու մէջ կապուկ, էտ պզտիկ բալնիք յարձրկեց, յետաւ էտ պզտիկ դուռ բացեց։ Բացեց, տեսաւ օր մէկ մարդ. ինք մէկ թիզ էր, մուրուք եօթ թիզ էր, էրկըթէ սընէն, պողպըտէ ժընճիլներով կապուկ էր։ Դուռն օր բացեց Մանդավէրն ասեց. Ինչ անաստված մարդ են իմ աներտիք։

Ըսեց. Քու գլխուն, արևուն մեռնիմ, տեսնիս ինչ օյին ա հանած իմ գլոխը, մեռայ, թաս մի էտ ջրից տուր ես խմեմ։

Քացախ լցուկ էր դաղնով, դրուկ էր էնտեղ, թասն էլ կշտի հետ. լըցեց մէկ թաս քացախից, տվեց խմեց։ Ինչ դդըր օր խմեց, սըրսըփաց, դընջիլ կտրաւ, մէկ օղ քիսաւ (ընկաւ) տղի ճակատին, տղէն ընկաւ. Ջանփուլատ յարձրկվաւ, բերեց մէկ մենծ քար դրեց տղի փորուն, Շահ-Սանամի թևից բըռնեց, շալկեց ու գնաց։

Իրկուն դէվերն էկան, տեսան օր ուրենց քուր չկէր, դէս ու դէն վազելով գացին Ջանփոլատի տեղ, տեսան օր փէսէն ընկուկ էր, քուր չկէր, հասան օր գլոխ կտրին։

—Համ, ըսեցին մեր դիւշման թողեց, համ էլ մեր քուր տվեց դիւշմի ձեռ. առաւ գնաց, մենք եօթը տարի կուվանք, ահագին աերութեններ մեր յօտաց տակը փչացաւ, անջախ Ջանփոլատին բռնեցինք։

Պզտիկ դէվն էկաւ, չը թողեց, ըսեց.

Ի՞նչ կէնիք, կը տեսնիք Դիւրգեար Օղլու ղոչաղութիւն, եօթ դէվ չէ, տասնըեօթ դէվ ընտոր դրգին չէք դիմանար։ Կանէք (կայ-նէք) չուր ինքը իգայ։ Մէկ էլ տեսան Դիւրգեար-օղլին էկաւ, էն էլ տեսաւ հարսն ու ախպէր չկէն։ Դէս ու դէն վազնելով՝ էկաւ ախպէրը գտաւ, տեսաւ օր ջոջ քար մի դրուկ ա ախպօր փորուն, հասաւ քար վերուց, թալեց դէն, ախպօր պորտն օլըրեց, խելքն էկաւ գլոխը, ըսեց.

Էտ ինչ էղաւ քըզի։

Ըսեց. Մէկ հալիվոր տեսայ, ինք մէկ թիղ էր, մուրուքը եօթ թիղ, էտտեղ կապուկ էր, ընձնէ ջուր ուզեց, ջուր տալ տեսայ, էլ չը գիտցայ ինչ էղաւ, ինչ չեղաւ։

Դէվեր կայնան ըսեցին. Ջանփուլատ մեր դիւշման էր. համ մեր դիւշման թողեց, համ մեր քուրը տվեց ձեռ տարաւ։

Դիւրգեար-Օղլին ասեց. Ձեր տունն աւէրի, ձեզի ինչ է էղի, իմ նամուսն ա տարէ, իսօ ձեզի մէ բան չէղի։ Գառաւն օր իմ ախպէր կը թողում ձեր մօտ ամանաթ, վայ էկէ, էտ գառաւն աւուր մօտ դուք իմ ախպօր մէկ բան ըսիք։ Բերեցի ձեր քուր, գաթի բերեցի, թէ չը բերի, իմ ախպօր արուն՝ ձեզի հալալ էղնի։ Յետաւ ձին հեծաւ, ու քշեց գնաց ինքը։ Ինք օր գնաց, վեց դէվ քօման, ախպօր գլխուն կայնան, ասեցին.

Բերէք էտոր գլուխ կտրինք, էտոր արուն խըմինք, մեր սիրտ յըռահթնա։ Պզտիկ դէվն էկաւ չը թողեց, ըսեց. Գառաւն օր էն մարդը ժամանակ ա կտրէ։

Վեց դէվն ասին. Մենք եօթն տարի կռվանք, անճախ Ջանփուլատին յաղթեցինք, էնի գառաւն օրվայ մէջ յոթստ ի պիտի գանայ բերայ։

—Չէ, ըսեց պզտիկ դէվը, էտոր պըտի գառաւն օր պահիմ։

Դէվեր բերեցին, թագաւորի տղի շալակ կողով տվին, ուրանց ձիանու փայէն տվին կրել. էն ղըղըր կրեց, օր մէջքէ լոխկաւ, բերին մէջքը դաղին։

Դիւրգեար-Օղլին գնաց տեսաւ մէկ նախրչի, երկու հատ քուղայ գոմէշ կը կռվեն, ամէկ (ամէն մէկը) զարկեր էր մէկ ունթ, գոմըշտանք կը կըռվին ընթներու մէջ, ինք նախիր կը ժողվէր։

—Հայ, հայ, ըսեց, էտ իմալ ղվաթ ա, քու տուն աւիրի քու մարդութենին։

Ըսեց. Էտ ինչ ղվաթ ա, ղաթ Դուրգեարօղլու ղաթն էր, օր էկաւ եօթ դէվին ախթեց, քուր ուզեց ուր ախպօր։

Ըսեց. Դիւրգար-Օղլին ես եմ, օր Ջանփուլատ իմ հարսը տարէ, ընկեր իմ յետևից։

Ըսեց. Քու հախն ինչ ա։

Ըսեց. Օր մէկ փոր հաց։

Ըսեց. Քու տունն աւիրի, արի քըզի ձի տամ, ասպասլ տամ, փող տամ, մարդ շինիմ։

Ըսեց. Բա նախիրն իմալ էնիմ։

Ըսեց. Թող, դըվորվի կերթան, թըղ էրթան։

Թողեց նախիր ընկաւ յետևէն։

Գնաց տեսաւ մէշի մէջ. մէկ մարդ, էտ մարդ կիշկայ, կը տեսնի ինչ ծառ օր չորցեր ա, ձեռք կը թալայ. քոքահան կանայ, կը վերու լորտայ դէն։

—Հայ հայ, ասեց, էտ իմալ դվաթ ա, էտ մարդու դվաթ։

Ըսեց. Իմ դվաթ ինչ դվաթ ա, դվաթ Դիւրգեար-Օղլու դվաթն էր, օր եօթ դէվին յաղթեց, քուրն ուզեց ուր ախպօր։

Ըսեց. Քու հախն ինչ ա։

Ըսեց թէ օրական մէկ փոր հաց։

—Քու տունն աւիրի, ըսեց, էտ դվաթի տէր մարդ, արի քըզի ձի տամ, ասպասլ տամ, փող տամ, մարդ շինիմ։

Ըսեց. Բա մէշէն ինչպէս էնեմ։

—Թող, ըսեց, մէշէն, արի։

Թողեց ընկաւ յետևէն։

Գնաց տեսաւ գետի վերև մէկ մարդ մէկ սար շալկէ կայներ ա։

—Հայ հայ, ասեց, էտ իմալ դվաթ ա։

Ըսեց. Իմ դվաթ ինչ դվաթ ա, դվաթ Դիւրգեար-Օղլու դվաթն ա, օր եօթը դէվին յաղթեց, քուրն ուզեց ախպօր։

Ըսեց. Դիւրգեար-Օղլին ես եմ, օր Ջանփուլատ իմ հարս տարէ, ընկեր եմ յետևէն։

Ըսեց. Քու հախն ինչ ա։

Ըսեց. Մէկ փոր հաց։

Ըսեց. Արի քըզի ձի տամ, փող տամ, մարդ շինեմ։

Ըսեց. Բա սարն ինչ էնիմ։

Ըսեց. Թող, դոր կէրթայ, թըղ էրթայ։

Սար թողեց ընկաւ էտոր յետևէն։

Գացին մէկ դուրան տեղ, չադիր զարկեցին, նստան. յելան լուսուն, ըսեց, Նախրչի, էս օր քու նորատն ի, մեզի հաց, կերա-կուլ էրա, մենք կերթանք աւ էնելու։

Նախրչին յելաւ վազեց մէշէն, շալկեց մէկ շալակ ցախ, առաւ էկաւ, էկաւ խմոր շաղղեց, օջախը վառեց, փըլաւ էփեց, հաց թխեց, պրծաւ, ձեռները լըվաց օր հաց ուտէր, մէկ էլ տեսաւ օր մէկ մարդ չադըրի դուռը կտրեց, ինք մէկ թիզ էր, մուրքը եօթ թիզ։ Էտոր օր տեսաւ՝ լեզուն բռվաւ։

—Էր՛, ըսեց, նախրչի, ինձ էլ բաժին կիտա՞ս թէ հըմալ չո-

մախ մի կը զարկիմ, եօթ տապախա գետնի տակ կերթաս։

Ձեռով էրեց, թէ հան ա, վերու տար։

Ժողվեց, հացեր, փլաւ լեցուց ուր տոպրակ, առաւ գնաց։

Ըսեց. Հէյվախ, Դիւրգեար-Օղլին էտոր կը զբվբռնայ, ըսիմ Զանփուլատ էկաւ տարաւ, իրիկուն իմ գլոխ կը կուլայ. ինձի ինչ իլլաճ էնիմ, օր պրծընիմ։

Բերեց ուր ոտ ճղեց, իրիկուն օր էղաւ, գնալու վախտ, պառկաւ.—Եաման, հա եաման։

Էկան տեսան որ ոչ կրակ կար, ոչ ճրագ։

Ըսեց. Էտ ինչ է էղի։

Ըսեց. Գացի մէշէն ղալամէն կտրած (արմատները) քիսաւ ոտսի ճղեց, նէտ կըցայ ցախ բերի, նէտ հաց ու կերակուր էրի։

Բերեց էտոր ոտ կապեց։ Լուսուն յելան, ըսեց. Ծառ քանդող, էս օր քու նորաթին ա. վերցուց էն էրկըսին հետ գնաց։

Ծառ քանդող յելաւ վազեց մէշէն, ըսեց. Էն էլ գինա նախըշի ու քոռէ քոռ գայ պագի ղալամէքներու վրէն։ Գնաց քանդեց մէկ չորս հինգ չորուկ ծառ, առաւ էկաւ, բերեց խմորն էրեց, փլաւն էրեց, հաց թխեց, պրծաւ, դարձաւ լըվացվաւ, օր հաց ուտէր, տեսաւ մէկ մարդ չադըրի դուռը կտրեց. ինք թիզմ էր, մուրուքը եօթ թիզ էր։

—Հա, ըսեց, ծառ քանդող, ինձի լէ բաժին կիտաս, էմալ չոմախ մի կը զարկիմ, եօթ դապախայ գետնի տակ էրթաս։

Լեզուն բռնաւ, ձեռով էրեց, թէ—Հան ա, վերու տար։

Ժողվեց հաց ու փլաւ, լցեց ուր տոպրակ, առաւ գնաց։

Էն օր գնաց, Ծառ քանդող ըսեց. Հէյ վախ, նախըրչուն ի՞նչ էր պատահէ, օր ուր ոտ ճղեց, պրծաւ, բա ես ինչ էնիմ։ Բերեց էտ էլ ուր աչքի կողը ճըղեց, ու ընկաւ քիթ ու բերնին, եաման իմ աչք, եաման իմ աչք բոռբռաց։

Իրիկուն էկան տեսան նէտ կրակ կայ, նէտ ճրագ։

Ըսեց. Էտ ինչ է էղի քըղի։

Ըսեց. Գացի մէշէն, ճուղն ընկաւ աչքս ի ճըղեց, նէտ ցախ բերի, նէտ հաց, նէտ ջուր։

Ըսեց. Վնաս չունի, էսօր էլ եօլա կերթանք։

Լուսուն յելան, ըսեց. Սար շալկող, էսօր էլ քու նորաթին ա, վերցուց էն էրկըսին ինքը գնաց։

Սար շալկողը յելաւ վազաւ մէշէն, քանդեց շալակ մի ցախ, առաւ էկաւ, բերեց խմոր էրեց, փլաւ էփեց, հաց թխեց պրծաւ. լըվացվաւ օր հաց պըտի ուտէր, մէկ էլ տեսաւ մէկ մարդ չադրի դուռը կտրեց, օր ինք թիզմ էր, մուրուքը եօթը թիզ էր։

—Հա, ըսեց, Սար շալակող, ինձի էլ բաժին կիտաս, թէ չէ

չոմախ մի կը զարկեմ, եօթ տապախա գետնի տակ կիջնեխ։

Էտոր որ տեսաւ, լեզուն բռվաւ, ձեռով էրեց, թէ հան ա, վերու տար։

Ժողվեց բիրադի, լըցեց ուր տոպրակ, առաւ գնաց։

Ըսեց. Վախ լըմէն, նախրչուն ու ծառ քանդողին ըմ էր պատահէ, որ մէկ ոտք ճղեց, մէկ էլ աչք պրծաւ, բա ես ինչ էնիմ։ Էտ էլ բերեց ուր փոր ճղեց, ու ընկաւ փորի վրէն.—Եամանն իմ փոր, եամանն իմ փոր, բոռբըռաց չուր իրիկուն։

Իրիկուն էկան տեսան օր նէտ կրակ կայ, նէտ ճրագ կայ, նէտ մէկ բան։

Ըսեց. Ինչ է էղի։

Ըսեց. Գացի մէշէն, ճուղն ընկաւ փորս ի ճաչ, նէտ կըցայ ցախ բերի, նէտ հաց ու ջուր էրեցի։

Յետեան լուսուն, ըսեց. Դուք յիրեքով գացէք, ես կը մնամ։

Յիւաւ գնայ մէշէն, ինք ցախ բերեց, էկաւ խմոր էրեց, փլաւն էփեց, պրծաւ, բերեց մէ յերկթէ չոմախ դրեց կրակը, նըստաւ լըվացվաւ, տեսաւ օր Ջանփուլատ դուռը կտրեց։

—Հա, ըսեց, Դիւրգեար-օղլի, ինձի էլ բաժին կիտաս, թէ չէ յէմալ չոմախ մի կը զանեմ, եօթ դապախա գետնի տակ կերթաս։

Դիւրգեար-օղլին ըսկի չիշկեց. մէկ էլ ասեց, էլման չիշկեց. մէկ էլ որ ըսեց, ձեռ դրեց ուր անկըճին, թէ անկաճա չը լսայ, աբի յանկըճէս ասաւ։

Ինչ ղդար օր էկաւ կզաւ անկըճի վրէն, վերցուց յերկթէ չոմախ զարկեց գլխուն։ Ինչ գլխուց առաւ, քաշեց թուր, թուր-թունի պէս բրդեց. հանեց կտորներ, լցեց չադըրի յետև, տեսաւ օր կտորներ թռնելով, թռնելով գացին մէկ ծակից ընկան։

Ասեց. Գտայ էտոր տեղն օր էտի կը մնայ։

Տեսաւ իրիկուն ուր ընկերտանք էկան, տեսան օր ղազան լիք փըլաւ, հացեր թխուկ, ճրագ վառուկ, յիրարու ըսեցին. Կեղնի օր Ջանփուլաթ էտոր չը պատահեր ա։

Ասեց. Էկեր ա, յելէք չադըրի յետև տեսէք։

Յետեան չադըրի յետև տեսան, օր Ջանփուլաթին բրդեր էր, էկան նստան, մրթնիր ուրանց ճղան, ըսին. Ա՛յ քու տունն աւերի քու ղվաթին, էտ իմալ ղուվաթ էր էտոր ղուվաթ։ Էլ երկիւղից ընկերտանք հաց չը կերան։

Ըսեց. Կերէք, մը՛վախենաք, ըսեց։

Յետեան, լուսուն վերցուց ընկերտանք գնաց ծակի վրէն, բերեց սըվթա նախրչուն կախեց, թէ իմ հարս էտ ծակի մէջն ա, գնա առ աբի։

Նախրչին բոռաց. Եաման, ես էրեցայ, եաման ես մըռողայ, ինձ քաշեցէք։

Նախրչուն քաշեցին, հանեցին, բերեց ծառ քանդողին կախեց. էն էլ էնտոր պէս բոռըբռաց. Եաման ես էրեցայ, եաման ես մռողայ, ինձի հանէք։

Ընդոր էլ քաշեցին, հանին, բերեց սար շալկողին կախեց, էն էլ ընդոնց պէս բոռըբռաց, թէ էրեցայ, մըռողայ, քաշէք։ Քաշեց հանեց։

Թուր կապեց վրէն ու ինքը մտաւ՝ ասեց. Քանի կասեմ էրեցայ, մըռողայ, ընծի կախէք։

Իջաւ ծակի տակ, շիրիմը յարձըկեց ու ինքը գնաց։

Գնաց տեսաւ օր Շահ-Սանամ նստուկ էր։ Օր տեսաւ Դիւրդեար-օղլուն, լացեց ու ընկաւ յոտաց վրէն, ասեց. Դու ինչի՞ էկար, էտ անտաւած եարալու ա, յելաւ քեզի կսպանայ։

—Տօ, ասաց, յերէկ ես էտոր թուխթունի պէս եմ բրդէ, էտի մկայ սաղցի՞ր ա, ու եարալու ա։

Ասեց. Ես գնենեմ կերթամ, դու հարցու, յիմցի, թէ էտոր հոգու տեղ յո՞ւր ա, ինչով կսպանվի։

Դուրդեար-օղլին օր գնաց, Շահ-Սանամ ինատ էրեց ու իլաց։

Ջանփուլատն ասեց. Ինչի՞ դիլաս։

Շահ-Սանամ ըսեց. Ես չիլամ, որ լայ, ըսեց. ինձի բերեր ես կոխէ էս ծակի մէջ, բալի մէկ օր քեզ հեռուն տեղ ըսպանեցին, ես իմալ պըտի ապրիմ, օր չլամ։

Ասեց. մի վախենա, ինձի որ աշխըրքի ճոթն ըսպանին, իմ կտորներ կիգայ ըստեղ կը սաղանայ։

Ասեց. Դու քու հոգու տեղ ինձի չես ասի, օր ես ուրախանամ հետ, հարի դու գաս։

Ըսեց. Քու տունն աւիրի, իմ հոգին իմ ջանի մէջն ա։

—Չէ, ասեց, որ չասես, ես ընձի կըսպանեմ, քու հոգին օր քու ջանի մէջն էր, քեզի թուխթունի պէս բրդած ին, իմալ էկար սաղցար։

Դիվորվի խաբեց, չը կրցաւ օր Շահ-Սանամի ձեռնէն պրծընէր. ըսեց. Էտքան օր կը հարցուս, էն ինա օթախի մէջ, կպրէ կարասի մէջ սիվտակ բուռ թուր զարկուկ ա, էնի օր քաշին, ընտրով օր իմ գլոխ կտրին, աշխըրքից կը վերջանամ։ Օր ընտրով չեղնի, գուզայ օրը ուղի հեղ ընձի ըսպանենն, ես կը սաղնամ։

Շահ-Սանամ վառեց մոմերը, եայլուխն առաւ ձեռ, գնաց խաղալով էն թրի գլոխ պագեց. բերեց թրին լաւ զարդըրեց, մոմեր վառեց կարսի վրէն, Ջանփուլատ ծիծղաց վրէն. թէ կնիկ աղգ ա, կարճամիտ ա, տես ինչ ուրախութեն կէնայ վրէն։ Էնի

ֆմալ ուրախնալով Թըղ մնայ, լուսուն էլի Դիւրգեար-օղլին էկաւ, մտաւ ծակից, էկաւ Շահ-Սանամի մօտ։

Ըսեց. Ձիմցմր էտոր մահն ինչով ա։

Ըսեց գոեր իմ, սիվտակ բուռ Թուր, կպրէ կարսի մէջ զարկուկ ա։

Դիւրգեար-օղլին գնաց, խանչեց. Հացն ու գինին, Տէր կենդանին, ձեռ թալեց Թրին, քաշեց իմալ օր պանրի միջէն քաշայ, հանայ։

Ջանփուլատ տեղէն գլխանց բոռաց, ասեց. Իմ հոգին տեղէն յիրար տվին։ Դիւրգեար-օղլին Թուր քաշեց էկաւ, Ջանփուլատի գլոխ կտրեց։

Ասեց. Քու գլխուն մեռնիմ իգիթ, մէկ էլ զարկ, շիտակ գինջանամ։

—Չէ, ասեց, ես մօրից մէկ էմ էղի, մէկ կը զարկիմ։

Ջանփուլատին ըսպանեց, վերցուց հարս, էկաւ ծակի մօտ, կանաւ բոռաց, ասեց. Շիրիտ կախէք յեղնեմ։ Շիրիտ կախին, հարսին ըսեց. Արի յառէջ դու յելէ։

Ասեց. Ո՞րն ա քու հետ, իմ ախպըտանռւց կայ քու հետ, Թէ չէ քու ախպէրն ա քու հետ։

Ասեց. Չէ, ուրիշ լաւ հաւատարիմ ընկերներ ունիմ հետ։

Ասեց. Ինձի տեսնող քեզի չի հանայ, արի դու յելի։

—Չէ, ըսաց, դու յելի։

Ասեց. Դու որ կաս, գլոխ ես, ես որ կամ՝ ոտ եմ, ես չըմ կարնայ քու խօսքիդ վրայ խօսք բերեմ, ես օր յելայ, ես գինամ քեզի չը հանին, էտ դուռը կը տեսնես, էտտեղ մէկ շուշաբանտ ձի կայ կապուկ, կերթաս, էնքան եաւաշ կը թռնես հեծնիս, օր նոր յիմանայ օր հեծար, էնի կը սըրսըփայ. քեզի կը թալայ հանայ լուս աշխարհք. Թէ չէ՝ չմբռտալով գացիր քիսար (քսվար) ձիու կողեր, քեզի կը զարկայ, յիշու մուէթ աշխարհք։

Չէն տվեց, ըսեց. Շիրիտ կախէք։

Շրիտ կախեցին, հարսին կապեց, քաշեցին, Շահ-Սանամին օր հանեցին, տեսան, խելքը գլխներուց գնաց։ Չէն տվեց, Թէ շըրիտ կախէք, ես էլ յեղնիմ։ Կախեցին, կապեց ուր մէջք, քաշեցին, հանեցին հորի կէս, Թուր Թալեցին, շըրիտ կտրեցին, ընկաւ հորու մէջ, իրեքով կախվան Շահ-Սանամից, էնի քաշեց՝ ընձի, էն էլ քաշեց, Թէ ընձի, յիրար զարկելով, կռվելով, առան գացին։

Դիւրգեար-օղլին տեսաւ օր ուրին չը հանեցին, գնաց էն օթախի դուռ բացեց, ուսուլով խանչեց. Հացն ու գինին, Տէր կենդանին, ուրին Թալեց ձիու վրէն. ձին սըրսըփաց, Թալեց, հանեց լուս աշխարհք։ Տեսաւ, ահագին տեղ առած են հարս,

կռվելով գացած են, բռաց, թէ կանէք (կայնէք), բոլ ա հարսին չարչըրէք, թուր քաշեց ու դնաց. ըսեց. Իրեքդ մէկ սրով կանէք, ըսեց, ձեզ պէս մարդըկոց համար ափսոս ա իմ թևն, օր մէկ մէկ թուր թալիմ։ Մէկ զարկելով իրեքի գլոխն էլ կտրեց, վերցուց հարսին ու էկաւ։ Էկաւ հասաւ չաղըրի մէջ, ձին պատրաստեց, հեծաւ, հարսին քաշեց թարք, թող էտ ուր գալուն էղնի, ես խապար տամ դէվերուց։

Էկաւ երեսունըրուրթ օր թըմըմաւ։ Ծողվան դէվեր տղի գլխուն, թէ էտոր գլոխ կտրենք, յարուն խմենք, մեր սիրտ դինջանայ։ Պտիկ դէվն էկաւ, չթողեց, ըսեց. էն մարդու վախտ երկու օր էլ կայ. երկու օր էլ կանէք, քառասուն օրն օր թըմըմի, դուք գինաք։

Էկաւ քառասուն աւուր վրէն կէսաւուր էլի քոման դէվերն էկան, օր տղին պտի գլոխ կտրեն, արուն խմեն։ Պտիկ դէվ շատ ըսեց, ընդոնք քիչ լսեցին, թէ անկարելի ա, պըտի ըսպանենք։

Ըսեց. Դուք ու ձեր Աստված, կանէք (կայնէք) յելլիմ քոչք ու սարի տանէք, դիւրապով իշկեմ, թէ չեկաւ՝ ըսպանէք։

Հէլաւ իշկեց, տեսաւ օր թող ու դուման յելեր ա յոտկային (երկնքում), մէկ կիդայ, հասաւ հաւար էրեց դէվերուն, թէ ինչ իլլաճ ունիք տեսէք, օր էկաւ, Բնդեցին խուշտակի (բըմբըլէ) ետղան դոշակը թալեցին, բարձեր դրին, էտոր պառկեցուցին, քիրաղ չիպուղ վառեցին, տվեցին ձեռ քաշեց. յոտներ մաժեցին, վախեցուցին ըսին. Օր դու ըսես թէ դէվեր ընձի նեղութեն են տված, ետ ընձի փայէն են տված կրել, ետ իմ մէջք դաղած ա, քեզի էլ կըսպանինք, քու ախպօրն էլ։ Կասես, դու գնացեր ես չուրի մկայ, ինձի համա կը պահեն, ինձի դուլլուղ կէնին։

Ըտոնք էտ խօսալու վրէն էն, մէկ լէ տեսան էկաւ, հասաւ։ Հասնելու պաշտան, հարսը ձիու վրէն թողեց, թռաւ էկաւ ախպօր հաւարին, դէվերն էլ վազան ուրենց քրօջ հաւարին։

Ասեց. Ախպէր, լիմալ ես, լաւ ապրի՞ր ես։

Ասեց. Դու որ գացեր ես չուրի մկայ, ինձի յըմլա դուլլուղ կէնին, ես դինջ ապրեր եմ, կէրեր եմ, խմեր եմ, պառկեր եմ։

Լուսուն յելան, ըսեց. Ախպէր, էս օր քառասուն օր ես քըրտներ եմ, կեղտոտեր եմ, էրթանք ծով իրար հետ լողկընանք։

Գացին ծովու պռունկ, Դիւրգեար-օղլին ուր շորեր հանեց, մտաւ ջրի մէջ, Մանդաւէր շորեր հանեց, շապիկ մնաց վրէն։

Ըսեց. Ախպէր, շորերդ հանա, արի լողկընանք, ինչի՞ կանար մնացիր։ Քանի զօռեց շապիկ չհանեց, ձեռ թալեց, շապիկ քաշեց, մէջքի կաշին խոռոտից (նստատեղու վերև) պրծաւ չուրի վիզ։

Ըսեց. Էտ ի՞նչ ա։

Ըսեց. Ախպէր, քեզնէ պահեմ, Աստըծուց ինչ պահեմ, դու օր գացիր, էն վեց ախպէր քօման էկան օր ընծի ըսպանեն, պզտիկ դէվ չը թողեց. բերեցին իմ շալակ փայէն դրեցին, տվին կրել, էն ղըղըր կրի, օր իմ մէջք լողկաւ, բերեցին իմ մէջք դաղեցին. եասուն ութ օրն օր Թըմըմաւ՝ էլի էկան օր ինծի ըսպաննեն էն վեց դէվ, պզտի դէվ չը թողեց, էկաւ քառասուն աւուր վրէն, էլի կուզին ընծի ըսպանին. պզտիկ դէվ էլի չթողեց, ինծի երկիւղ տվեցին, ասին. Ախպօրդ չասես, քեզի էլ կըսպանենք, քու ախպօրն էլ։

Ասեց. Շորերդ հաքի, էլ հարամ էլաւ լողկընալը։ Շորերը հագան, էկան, մտաւ ուր ձին պատրաստեց, վերցուց ուր թուրն ու գիւրզ, ուր քեամանը, ասեց. Դէվեր, ձեր վախտին հազըր մացէք, պզտիկ դէվ, դուն հեռուն մացի, իմ ախպօր ազատող դու ես։ Ասեց. Ես թագաւորի տղէն ձեզի փայէն կրող ինք բերէ, օր դուք տվեցիք փայէն կրել։

Սկսեցին կռվել, Դիւրգեար-օղլին զարկեց վեց դէվին էլ ըսպանեց, յըմէն կարողութեն յանձնեց պզտիկ դէվին։ Պզտիկ դէվն էլ ահագին կարողութենով վերցուց քրոջը ճամփու դրեց։ Շնորհակալութիւն առան յիրարուց, էկան մէկ օր պապէի մօտ ղոնախ էղան, պապէին էլ մէկ բուռ օսկի տվին, յելան ընկան ճանբախ։ Օր կիգին, չադըր կը զարկին. Դիւրգեար-Օղլին կէթէր չադըրից հեռուն կը զըվըռնէր, օր հարսն ու ախպէր ուրնէ ամօթանք չէնին, էն մէկ օր գնաց ծառներու տակ քնաւ, իրէք հատ եղունակ էկան յիջան ծառներու վրէն, մէկ մէրն էր, էրկուաը ախճկներն ին։ Մէկ ախճիկ ասեց. Մկավայ ժամանակ, հում կաթ ուտողին ըխտիբար չկայ, Դիւրգեար-Օղլին օր էտքան չարչըրվաւ, հարս գնաց բերեց, դէվստուն քանդէց, Ջանփուլատին ըսպանեց, զօրքն օր կիգայ ուրանց յառէջ, զօրք բիրադի ընցին, էն կարմունջ չը բըլի, հարսն ու ախպէր օր ընցընին, կարմունջ կը բըլի, ընտոնք կը խեղդին, ուր ամակ կերթայ, կը կորի։

Մէկէլ ախճիկն էլ ասեց, ընտոնք օր հարսնիքից կը պըրծնին, գիշերը կերթան ուրանց դոշակը քնելու, Շահմար օձ գելլայ էրկըսին էլ կը դեղայ, կըսպանայ։ Դիւրգեար-Օղլին թէ գնաց օձուն ըսպանեց, ընտոնց կազատայ, թէ չգնաց, օձը կըսպանայ ընտոնց, ուր ամակ կը կորի։

Դիւրգեար-օղլին օր շիտկաւ, մէրն էլ ասեց. Վերջը քար կը դառնայ, ասեց, ու ուրանք թռան։

Հելան էտոնք գնացին, մէկ օր կամ հինգ օր, խապար գնաց թագաւորին, թէ թագաւոր աչքդ լուս էղնի, տղէքներդ էկան, Շահ-Սանամին էլ բերեցին։ Թագաւորը յելաւ ահագին զօրքով

գնաց յառէջները։ Հըմմէն զօրքը էկաւ Թագաւորի տղէքներուն գլոխ տվեցին ու աչքալուս տվեցին. էկան կարմունջը ընցան, զօրք բերադի ընցան. Դիւրգեար-օղլին էկաւ ախպօր ձիու յառէջն ու հարսին առաւ, շիտկեց ջրի միջով։

Ախպէրն ասեց. Քու հէրն անիծվի, դու գուզիս ես խեղդվիմ, իմ կնիկ դո՛ւ առնես։ Դիւրգեար-օղլին անկաճ չէրեց, քշեցին էկան հասան քաղաք, պատրաստութեն տեսան, հարսնիք բըռնեցին, հարսնիքն օր էղաւ պըծաւ, ուրցը կըտրեցին, էն գիշեր գացին ուրենց դօշակ օր քնին։

Դիւրգեար-օղլին ըսեց. Թէ չերթամ, օձ իմ ախպէրն ու հարս կըսպանայ, իմ ամակ կերթայ, կը կորի, թէ էրթամ, գիմնան լաւութեն չունի։ Ասեց. Ինչ էրի, Աստուածն էրի, քաշեց թուրն ու գնաց։ Գնաց կանաւ գլխու վերևը, տեսաւ օր Շահմար օձ յելաւ, քաշեց թուր, բրդեց, լցեց բոթնոց, դրեց թարէք, թուր սրբեց, օր պըտի էրթէր, ախպէր յիմցաւ։

—Հայ, ասեց, քու հէրն անիծվի, դու իմ հետ մուխաննաթ ես, ես էն օր քու մուխաննաթութեն յիմցայ, օր իմ ձին շիտկիր ջրի միջով, օր ես խեղդվինք, մկայ էլ էկեր ես ինձի կըսպանես, օր իմ կնիկ դո՛ւ առնես։

Դիւրգեար-օղլին ձէն չերեց, թողեց գնաց։ Մանդաւէր յեւլաւ լուսուն Թագաւորին գանգատ էրեց, ըսեց. Իմ ախպէր իմ հետ մուխաննաթ է, գուզայ ինձի ըսպանայ, իմ կնիկ ինքը առնի։

Թագաւորը մարդ ճամփեց, Դիւրգեար-օղլուն խանչեց։ Դիւրգեար-օղլին յելաւ գնաց։ Գնաց Թագաւորին գլոխ տվեց, կանաւ։

—Հայ, ըսեց դու ինչի՞ քու ախպօր հետ մուխաննաթ ես, գուզես քու ախպօրը ըսպանիս։

Ասեց. Թագաւոր, խնդրեմ ընձի խօսալ չիտաս, ես օր խօսամ, քար կը դառնամ։

—Ինչպէս օր ըսեցի էկանք, փլան օր, փլան ծառներու տակ, գնացի քնայ, իրեք հատ եղունիկ էկան. մէկ մէրն էր, էրկուսը ախչիկներն ին։

Մէկ ախչիկն ըսեց. Թէ կարմնջուն օր ընցընեն, կարմունջը կը բլի, էնտունք կը խեղդվեն, Դիւրգեար-օղլին պէտք ա էրթայ ընդունց ձիեր շիտկայ ջրի միջով, օր պըրծընեն, չը խեղդըվին։

Զուրի չոքեր դարձաւ քար։

Ըսեց. Թագաւոր, բոլ ա ընձի խօսալ տաս։

Թագաւորն ասաց. Էս սահաթ էլ օր քար կորիս, պէտք ա խօսաս։

Ասեց. Մէկէլ աղջիկն էլ ասեց՝ Թէ էն գիշեր օր կերթան ուրանց դեօշակը կը քնին, Շահմար օձ գելնի, էրկսին էլ կը դեղայ,

Դիւրգեար-օղլու ամակ կերթայ, կը կորի, թէ էն գիշեր գնաց, մուղաթ կեցաւ, Շահմար ըսպանեց, ուր հարան ու ախպէր կազատայ, թէ մուղաթ չը կեցաւ, ուր ամակ կերթայ կը կորի։ Ասեց. թէ չէք հաւատայ, թագաւոր, Շահմար ըսպաներ եմ, լըցեր եմ բոթնոց, դրեր եմ թարևք։ Ասելու բաշտան քար էղաւ ու ինքը ընկաւ։

Նոր թագաւորն ու ախպէր ուրանց գլխուն զարկելով, լացին։ Ախպէր վերցուց քար, տարաւ դրեց ուր օթախի մէջ։ Իտա հաղ (անգամ) Մանղաւէր յըմմէն օր կէրթէր ծառներու տակ կը պառկէր, կասէր, բալի էն էղունէկներ իդան, իմ ախպօր մէկ դեղ ըսին։

էն մէկ օր պառկուկ էր ծառի տակ, իրեք հատ էղունակ էկան, ելան ծառի վրէն։ Ախչիկն ըսեց. Մէրայ, ես չասի՞ հում կաթ ուտողին իհտիբար չկայ, տեսար Դիւրգեար-օղլին ինչքան չարչարանքներ քաշեց, վերջն էլ ինքը քար դարձաւ։

Մէկէլ ախչիկ ասեց. Մանղաւէր թէ քնուկ ա, էրազ էղնի, թէ արթուն ա, էնա կը խօսամ ուր հետ, ուրին մէկ տղայ կեղնի, մենք օր կը թռնինք, յիրեք հատ թեպուր կընկնի, մեր թեպուրներ վերցու, վոր վախտն օր կը լսայ օր ուր տղէն կեղնի, տանայ տղէն էն քարի վրէն մատղայ, մեր թեպուրներով էն առուն քսայ, ուր ախպէր կը սաղնայ։ Թէ օր ուր տղից չընցընի, էնա ախպէրը չը սաղնայ ու չսաղնայ։

Մանղաւէրը շիակաւ, եղունիկներ թռան, իրեք հատ թեպուր ընկաւ. վերցուց թեպուրներ, առաւ էկաւ, պահեց։ Վախտն անցաւ, էն մէկ օր խապարն էկաւ, թէ քեղի մէկ տղայ է էղի։ Վաղելով գնաց, վերցուց տղէն, տարաւ դրեց ախպօր քարի վրէն, մատղեց, էտ թեպուրներով արուն քսեց ախպօր քարին։ Աստուածօւթեն կենդանացուց ախպօրը։

Աչքալուս գնաց թագաւորին, թէ աչդ լուս էղնի, օր Դիւրգեար-օղլին կենդանացաւ։ Բերեցին մէկ վաղիրի աղչիկ ուզեցին Դիւրգեար-օղլուն, ըսկսեցին հարսնիք բռնել, եօթ օր, եօթ գիշեր հարսնիք էրին, էն հասաւ ուր մուրաղին, դու էլ հասնիս քու մուրաղին։

Երկնքուց յիրեք խնձոր յիջաւ, մէկ ըսողին, մէկ խօսողին, մէկ էլ լըսողին։

ՅՈՎՍԱ ԹՈՒՄԱՍ.

(Ղազնաճար, Մանազկերտցիներ*)

Ժամանակով մէկ մարդ գըլնի, անունը Յովսա Թումաս։ Իրեք հոգի գող յիրար բռնին, կերթան ընտոր վրէն, կը մտնին մէկ ձորու մէջ. Յովսա Թումասի չոպան կը տեսնի էտ իրեք գողին, իրկուն օր օչխար կը բերայ, ուր աղին կասայ, թէ ֆիլան ձորու մէջ յիրեք գող տեսայ։ Զոպան կը քնի, Յովսա Թումաս թվանք կառնի ուր ձեռ, ուր օչխըրին մուղաթ կը կենայ։ Գիշեր չուր ի լուս գողեր կիգան, չի կարնան օչխար տանին, կը ծնայ, գողեր իրար հետ կը զըրուցին. կասեն. էսի մէկ մարդ, մենք յիրեք մարդ, մենկ յիրեք մարդ, յորի գողութենով էրթանք թալնինք, էրթանք գօռով առնինք։ Յեկան էկան նստան Յովսա Թումասի չադըրի մէջ։

Յովսա Թումաս էկաւ ասեց. Դու ինչ մարդ էք։

Ասեցին. Մենք գող ենք։

Ասեց. Մարդու 10 օչխար կիտամ, տարէք ձեր ճժեր պահէք, գողութեն մ'էնէք։

Յիրարու յերես իշկեցին, ասեցին. Մէկ խօսք ասինք գողենք, մարդուս տաս օչխար տվեց, հազը ուրին կսպանինք, օչխար բիրադի կը տանինք։

—Չէ, ասեցին, մենք պիտի յելնենք քու օչխար բիրադի տանինք։

—Տէ, ասեց, նստէք, ես ձեզի մէկ բան ասիմ։ Աստված մեզք ձեղնէ ուզայ։ Յառաջ մենք յիրեք հոգով հազար գլոխ օչխար ժողվեցինք, օր էրթէնք ուրիշ տերութեններ ծախինք, յընկանք ճամբան գացինք, Մասեաց սարի պէս մէկ սարի պատահանք, մուխ տվեց վրէն, ոչ գեղ տեսանք, ոչ չոպան, ոչ մէկ մարդ, անվերի սար էր։ Մէկ էլ տեսանք սարի գլխու սուրուից մէկ մեծ սուրու յիչաւ, էկաւ։ էկաւ, էկաւ, մենք էլ գացինք մօտեցանք, էկաւ օր մէկ հատ թափագեօղ, ոչխար քշեց բերեց խառնեց յիրար, ասեց.

Պատմեց *1912* թ. Յուլիսի *16*-ին, Ղազնաճար գիւղում ճոյն Նիկողայոս Պետրոսեանը

Դու բարով ես էկի, Հոջա Թումաս, քշեց էտ երկու հազար օչխարը, տարաւ լցեց գաղի մէջը, բերեց մէծ քար գարկեց գաղի դուռը, ահագին ցախ բերեր էր էնտեղ դարսեր էր, բերեց կրակ վառեց, կրակ օր շատ ղմփիշ էղաւ, շիշ գարկեց իմ մէկ ընկերոջ սրտի մէջ, վերցուց դրեց կրակին, էնի էփեց կերաւ, չկշտացաւ, մէկ էլ ընկերոջս էլ գարկեց դրեց։

Օր կուշտ կերաւ, ընձի ասեց. Հոջա Թումաս, դու էլ մացի սապահատան։ Իմ իլլաճ կարվաւ, տեսայ օր իմ երկու ընկեր էփեց կերաւ, ընձի էլ պըտի ուտէր։ Էն օր կուշտ կերաւ, ընկաւ մէջքի վրէն քնաւ։ Ես բերեցի շիշ դրեցի կրակ, շիշն օր կարմրաւ, վերցուցի մէկ աչք ունէր ճակտի մէջ, տարայ բերեցի, աչքի մէջ տեղ գարկեցի։ Բոռաց, շիշ քաշեց թալեց, ու յելաւ ընկաւ իմ յետևը։ Երկու հազար օչխար էր, էն գդար լարեց գաղի վերև ու ներքև, ընձի չկրցաւ բռնէր։

Էկաւ նստաւ ուր տեղ ասեց. Զանգուլկած նէրի, (երկու տաբեկան այծ)։

Ասեց. Համմէ աղա։

Ասեց. Լուսուն օչխար կը տանիս կը պահես, ես գաղի մէջ գործ ունիմ, կատարիմ գամ։

Ասեց. Շատ լաւ, իմ աչքի վրէն։ Ես տեսայ օր նէրին էլ խօսաւ էտ մարդու հետ, իմ իլլաճ ջիլիզ կարվաւ։ Նէրին քշեցի տարա գաղի վերև, նէրին մորթեցի, տիկ հանեցի։ Լուսն օր բացվաւ, նէրու փոստը հագայ, էկայ կայնայ դռան յետևը։ Զանգուլկները օր զընկըրցուցի, Թափագեօզն յիմցաւ, ասեց. Զանգուլկած նէրի, լուս ա։

Ասեցի. Լուս ա, աղա։

Եկաւ քար քաշեց, թալեց դէն, նէրու ոտ ու փոր իշկեց, օր ես հետ չփաթթըվինք յելլինք դուս։ Նէրուն թողեց դուս, երկու հազար օչխար մէկ մէկ իշկեց, ու դուս էրեց։

Օր ընձի չգտաւ, ասեց. Հոջա Թումաս, յիրիկուն կը փախնէր օչխրի մէջ, մկայ դռր պըտի պըրծընիս։

Ասեցի. Քու զանգուլկած նէրին մորթեր իմ, փոստ հագիր իմ, յելիր իմ։

Թափագեօզն յելաւ ընկաւ իմ յետև, լարեց, դորվի փախայ, չպրծայ ձեռնէն։ Գացի մէկ բանձր քարափի գլխով փախայ, ընցայ, Թափագեօզն էկաւ, քարափից ընկաւ, էղաւ հազար կտոր։ Օչխարը էլ չտարայ ծախելու, իմն էլ Թափագեօզինն էլ դարձուցի բերի, էս սիւրուն էն ոչխարներն են, օր դարձուցի բերի. Թէ ընձի չըք աւտընայ, հովիւներուց հարցուցէք։

Ասեց. Արէք, գողուԹիւնը Թարկ արէք, մարդուդ տաս օչ-

խար էլ կիտամ, էղնի մարդուդ քսան օչխար, տարէք ձեր ճժեր պահէք։

Յիրարու յերես իշկացին, ասեցին. Մեղնէ կը վախենայ, առակ ասելով մէկ խօսքին տաս տաս օչխար գեվելցու։

Ըսեցին. Չէ, մինք գողութենի թարկ չինք իտայ, քըզի կսպանինք, օչխար բիրադի կը տանինք։

Ըսեց. Աստված մեզք ձեղնէ ուզայ, նստէք մէկ առարկայ էլ ասիմ։

Ըսեց. Մենք ձեզի պէս իրեք հոգով յելանք գացինք գողութեն էնելու. գացինք ընկանք Բառէստանայ (Տաճկաստանումն է) չոլը, մէկ էլ տեսանք մէկ ձիաւոր էնտից էկաւ։ Գալուց պաշտան ձիուց իջաւ, զարկեց մեր յիրեքին էլ յաղթեց, մեր յիրեքին էլ կապեց, թաղին հետն էր, թաղուն ըսեց ղումլըղ էր, թաղին գետին քանդեց, բերեց մեր յիրեքին էլ գօտէկպից (մէջքից) հորեց, հող տվեց կշաըներ, ու ղէնք թողեց էն տեղ, թաղին թողեց ղարաուլ, ինք գնաց։ Թաղին օր շոք տվեց, քանդեց մտաւ հողի տակ, քանդելով, քանդելով էկաւ իմ մէկ ընկերոջ փոր ծակեց, սիրտ ու թոք կերաւ, իմ ընկեր մեռաւ, յելաւ մէկէլ ընկերոջն էլ փոր ծակեց, սիրտ ու թոք հանեց կերաւ, էն էլ մեռաւ։ Ես միտք էրեցի թէ կըշտացաւ, կայնաւ ղրաղ, մէկ սըհաթից անօթացաւ իմ՝ փորն էլ պըտի ծակայ, իմ սիրտն ու թոք ուտայ, ես մեռնիմ։ Ջանիս օր քար էղաւ, չարչըրվելով, էտ հող քանդեցի, ես յելայ, յակոէկներով իմ ձեռ ու ոտ յարձըկեցի, խանչալ քաշեցի, թաղուն ըսպանեցի, մէկ էլ տեսա էն ձիաւորը ընտից էկաւ. դոր իշկեցի, նէտ քար կար, նէտ ձոր կար, օր փախնինք, ազատինք։ Ես փախայ, մէկ տեղ ծառ կար, փախայ յելայ ծառի գլոխ, էկաւ ձիուց յիչաւ, սափոքներ (կօշիկ) յօտներ, թուր քաշեց առաւ բերան, բռնեց ծառն ու յելաւ։ Ես տեսայ օր ընձի պտի ըսպանէր, էլ իլլաճ չկար. գայիմ փաթթըվայ ծառին ու ծառը ժխղեցի։ Էտոր սապոկներ պրծաւ ու էտի էկաւ ուր քեալի վրէն ընկաւ մեռաւ։ Յիջայ էնտոր շորեր հագայ, ասպապ կապեցի, հեծայ ձին, օր քշինք էրթինք ուրիշ էրկիր։ Ջիուն չյաղթեցի, ձին քաշեց տարաւ ուր գեղի մէջ։ Տեսայ օր իլլաճ չեղնի, ձիուն ես չեմ յաղթի՝ փափախ քաշեցի յիջուցի իմ աչքերը. ձիու գլոխ թողեցի, գնաց կանաւ ուր տիրու դուռ. էտոր մշկներ յելան ձին բռնեցին, ես ձիուց յիջայ, գացի տուն, ձեռով էրեցի թէ տեղ թալէք։ Տեղ թալեցին, ես պառկայ ու եօրղան քաշեցի իմ գլխուն։ Էտ գեղի ամենագլխաւորն էլ էտ մարդն էր, հաւար ընկաւ գեղի մէջ, թէ մեր գեղի գլխաւորին ինչ էղեր ա, օր լեզուն բռնըվեր ա, չզրուցայ։

Ինչ ղըչը օր էտ գեղը իշխաններ կէն, էկան, չթողի ինձի

մօտ գին. նէայ թողի իմ յերես բանին։ Հարի կէս գիշեր յըմմէն յելան գացին։ Ըսեց. Մարդ, քըզի ինչ է եղէ, օր դու չը գրուցիս։

Ըսեցի. Ես քու մարդ չեմ, ես քու մարդու ըսպանող եմ։

Ըսեց. Դու իմալ իմ մարդ չես, իմ մարդու ըսպանողն ես։

Ըսեցի. Քու մարդ մեր իրեքին կապեց, գետնի մէջ հորեց։ Թազին իմ ընկերտանուն ըսպանեց, ես էլ թազուն ըսպանեցի. քու մարդ ինձի լարեց, հանեց ծառի գլոխ, ընձի պըտի ըսպաներ, իմ իլլաճ կորվաւ, փաթթըվայ ծառի գլոխ ժըժխեցի, քու մարդու սապոկներ պրծաւ, ծառէն ընկաւ գլխու վրէն մեռաւ։ Ես շորեր հագայ, ասպապ կապի, ձին հեծայ օր փախցուցինք, տանինք ուրիշ երկրներ. ձին գլոխ խլեց, չյաղթեցի, քաշեց բերեց։ Մկայ կսպանիս՝ դու գինաս, կազատիս՝ դու գինաս։

Կնիկն ըսեց. Յելի ձին պատրաստայ, յիրար հետ էրթանք, օր ըսկի մարդ չիմնայ, թէ դու իմ մարդ չես, իմ մարդու ըսպանողն ես։

Յելայ ձին հեծայ, կնիկն էլ առայ թարքս, փախայ էկայ, թէ չէք աւարնայ, ըսեց, էն չադըրի միջին մէկ էն կնիկն ա, գացէք հարցուցէք։

Գացին հարցուցին. Ասեց. Օղորթ ա։

Ըսեց. էն մարդը ընձնէն ինչ խէր տարաւ, օր դուք ինչ տանիք։ Ասեց. էկէք գողուրթենի թարկ տվէք, մարդուդ տասը օչխար էլ կիտամ, մարդուդ էղնի եռսուն օչխար, տարէք ձեր ճժերը պախէք։

Իրարու յերես իշկեցին, ըսեցին. Մեղնէ կը վախենայ, երկուղ տալով մենք ըտրընից ձեռք չինք քաշէ։

—Ջէ, ըսին՝ պըտի քըզի ըսպանինք, օչխարը յըմէն տանինք։

—Տէհ, կըսէ, օր չէք լսէ, Ա՛ստված մեղք ձեղնէ ուզայ։ Ըսեց. Նատէք, մէկ բան էլ կայ՝ ասիմ։ Մենք յիրեք մարդով յելանք սկսեցինք բաղրկեանուրթեն էնել։ Շատ ապրանք առանք, գացինք լըցեցինք գեամու մէջ, ու ընկանք ծովու յերեսը, թէ մէկ օր, թէ չորս օր, գացինք ծովու յերեսը, գեամին քիսաւ գայլին (ժայռ) տեղուց տեղ ցխաւ, աբրանքն էլ մարդիկն էլ բիրադի գացին ծովի մէջ, բաթմիշ էղան, ես ընկայ մէ կտոր տախտըկի վրայ, ու մացի ծովու յերեսը։ Իրեք օր, չորս օր էտ տախտակը ընձի պըվըռցուց ծովու յերեսը, մուրթ գիշէրին տախտակը գնաց քիսաւ մէկ բանի, ձեռ տվեցի օր մէկ ծառ էր, բռնեցի էտ ծառն ու մացի տախտակի վրէն չուրի լուսցաւ, լուսն օր բացվաւ, տեսայ օր ինձի բերեր էր, հաներ էր ծովու ղրաղը։ Տախտըկի վրայէն յիջայ, գացի մէշի մէջ, մէկ չորս հինգ օր էլ կանաչ ուտելով, քոլ ու քոս ուտելով մէշի մէջ գացի, գացի մէ յըռընջպըրի ռաստ

էկայ. հաց ուզեցի, ընձի հաց չտվեց. ըսեց. Եոտի Ղռալի (եօթ թագաւորի) տուն հարցու գնա. մեր հաց ճլան տեղն ա, դրուկ, մեր եղ, մեր ձուն, թաւա, ամենայն բան ըտեղ դրուկ ա գնա, քու ձեռով էրա կեր, չուր իրիկում ես գամ։ Գացի հարցուցի Եոտի Ղռալի տուն գտայ, տեսայ մէկ մարդ չոքեր կտրուկ էր, մէկ տաշտ հաց յառէջ դրուկ էր, մէկ օղլուշաղի սրտից, մէկ իսանի քեալլա հախուկ էր. հաւերու մէկ մէկ ոտք կտրուկ էր, ամբըրի մէջ թալուկ էր, էլ էտոր հաց չկերայ չուրի իրիկուն ինք էկաւ. ուր եղներ կապեց, էկաւ ըսեց. Ղոնախ, հաց կէրիը ես։

Ըսեցի. Քու հաց կուտվի, օր ես ուտիմ։

Ըսեց. Եաւաշ ասեմ, տես, թէ կուտվի իմ հաց՝ կէր, թէ չի ուտվի, մի ուտի։ Ասեց. Ես Եոտի Ղռալն եմ, արի էրթանք իմ ամբրները տես։ Գացինք տեսանք, որ շատ ամբրներ ունէր, եօթ թագաւորութեն կարողութեն ունէր։

Ըսեց. Էտ մարդը որ չոքերը կտրեր եմ, իմ հէրն ա, ինք լոթի մարդ էր, իրան ամպրները թողած, կէրթէր խլղից հաց գուղէր կուտէր, յօտներ կտրեր եմ, տաշտն էլ հաց լըցեր եմ, իմ յառէջ, քանի սաղ ա թըղ ուտա։ Էտ օղլուշաղն էլ իմ կնիկն ա, տեսնի՞ս ես իմալ տղամարդ եմ, ինձի թողեր էր, մէկ անպէտք, քաչալ տղի վրայ սիրվեր էր, գլոխ կտրեր եմ, կախեր եմ ընտոր սրտէն, թըղ էրթայ փափաղն առնի։ Հաւերն էլ իմ հաւերն են, կերթէն խլղին վըտաս կիտեն, ինձի կը քրվեն, յօտներ կտրեր եմ, թալէր եմ ամպըրի մէջ, թըղ ուտին, ու հաւկիթ ածին։ Իմ հաց չուտվի, թէ կուտվի։

Ըսեցի. Կուտվի։

Ըսեց. Դու ինչ մարդ ես։

Ըսի. Ես, անտէր, բուդալա մարդ իմ։

Ըսեց. Կը տեսնի՞ս իմ կարողութեն. գաս էղնիս ինձի ախպէր։

Ըսեցի. Կէղնիմ քեզի ախպէր։ Ես էղայ պղտիկ ախպէր, էն էղաւ մէնծ ախպէր։ Բերեց ընձի կարգեց. ես կերթէնք ուընչպըրութեն կէնինք, էն կը մնէր տուն, էրկու տարի մացի, էղաւ օր իմ կնիկ հիւընդցաւ, մէկ չորս հինգ օր հիւանդ մնաց։ Էն մէկ օր իմ ախպէր ինձի հաց չը բերուց, յետըցուց, մէկ էլ տեսայ իրիկվան էկաւ։

Ըսեց. Ախպէր, քու կնիկ մեռեր ա, քելէ էրթանք։ Գացինք տեսանք օր մեռեր էր։

—Գինաս ինչ կայ, ըսեց, մեր ադաթ, մարդ մեռնի կնիկը հետը կը հորինք, կնիկը մեռնի՝ մարդ հետը կը հորինք։ Մկայ քու կնիկ մեռեր ա, քեզի պըտի հետը հորինք։

Լաւա ընկայ (խնդրեցի), ջանըմ, գեօզմ, ես սաղ մարդ, ընձի ընչի՞ պըտի տանիք հորէք։

Ըսին. Չէ, անկարելի ա, մեր աղաթ էմալ ա, քեզ պըտի հորինք։ Բերեցին էրկու թապուտ շինեցին, մէկ ընձի դրին մէջ, մէկ իմ կնիկ, ու շալակեցին մեր թապուտներ, տարին թալեցին մէկ հորու մէջ։ Ետոյ ես յելայ տեսայ, օր էտ հորի մէջ ուրիշ մեռլի թապուտ չկէր. Ինաց իրկվան, տեսայ էրկու թապուտ էլ բերին, թալին, յելայ ընտոնց թապուտները բացի, տեսայ օր ընդոլն էլ մարդը մեռեր էր, կնիկն են հետ բերած թաղած։ Տեսայ գիշերվայ կիսին, իմ կնկայ թապուտ չանավար քաշեց տարաւ, յելանք լուսուն, էն կնկան ըսեցի. Մուղաթ կեցի, էն չանավար կիգայ, քու մարդու չանդաք էլ կը տանայ, օր էկաւ տանելու, ես կը կախվիմ ընդրնէ, դու էլ կախվի ընձընէ, հալբաթ էտիկ կը քաշայ, կը տանայ մէկ տեղ դուս կը հանայ։ Գիշեր մէկ վախտ տեսայ օր լխռտոց ընկաւ թապուտ, ես կախվայ էտ թապուտից, կնիկն էլ կախվաւ ընձենէ, քաշեց տարաւ մէկ ձորու բերան հանեց դուս։ Մենք օր յելանք, չանավար փախաւ, վերցուցի էտ կնիկ, առայ էկայ։ Մկայ էտ չադըրի մէջ մէկն էլ էտ կնիկն ա, գացէք, հարցուցէք, թէ սուտ ա, թէ օղորթ։

Գացին հարցուցին. Ըսեց, Օղորթ ա։ Դարձան էկան։

Ըսեց. Արէք, մարդուդ տաս օչխար էլ կիտամ, էղնի ամէնուդ քառսուն օչխար, գողութէն մէնէք, տարէք ձեր ճժեր պահէք։

Իրարու երես իշկեցին, ասեցին. Մեզնէ կը վախենայ, մէկ առակ ասելուն՝ տաս օչխար կը յեվկլցու։

—Չէ, ըսեցին, մենք պըտի քեզի ըսպանինք, քու օչխար քիրադի պիտի տանինք։

Էտ մարդիկն օր ես ըսեցի, ընտունք ընձենէ ինչ խէր տարան, օր դուք ինչ խէր տանիք։ Ըսեց. Կուիւ կէնիք, յելէք կուիւ էնինք։

Յելան, Ոօջա Թումաս հեծաւ ուր ձին, վերցուց ուր ասպասլ, էն իրեք մարդ կանան (կայնան) մէկ դհէն, էտիկ կանաւ մէկ դհէն։ Սկսեցին կռվել, շատ ու քիչ կռվան, Աստված խապար էղնի, Ոօջա Թումաս իրեքի գլօխն էլ կտրեց. էնի հասաւ ուրին մուրազին, դու էլ հասնիս քու մուրազին։



ՀԱԲՐԱՆԻ ՀՆՔԵԱԹԸ

(Ղազնաճար, Մանազկերտցիներ*)

Ժամանակով մէկ մարդ, մէկ կնիկ կ'ելնի, էտ մարդ կ'երթայ վողոցից (աղբանոց) մէկ հաւկիթ կը գտնի, կը բերայ կը դնայ պատուհան. թունդիրն օր կը վառի՝ կնկան կասի. Մէկ հաւկիթ եմ գտի, դրի պատուհան, գնը՛ էրկու հատ էլ դու բիր, էրա ձուաձեղ, ուտինք: Կնիկ կ'երթայ պատուհան կը տեսնայ մէ ահագին, մեծ օձ, վըժժալով կը գառնայ, կը փախնի:

Ըսեց. Ի՞նչ էղաւ, կնիկ:

—Ձու տունն աւիրի, կըսէր հաւկիթ կայ, մէկ ահագին օձ ա:

Մարդն յեղաւ գնաց, օձը էղաւ մէկ ջահէլ տղայ՝ էկաւ: Ուրախացան տղի վրէն, ըսին թէ, մըզի տղայ չունինք, էտի էղաւ մըզի տղայ:

Տասն օրից ետ, տղէն հօրը ըսեց. Գնա թագաւորի աղջիկը ուզա ընձի:

—Որթի, ըսեց, մինք քեասիբ մարդ, թագաւորը մեզի ինչի պըտի աղչիկ տայ:

Բանի ըսեց, տղի հետ իլլաճ չեղաւ, յեղաւ գնաց նստաւ խնամաթոռի վրէն: Ծապար տարան թագաւորին, թէ Փիլան քեասիբը էկէ նստէ խնամաթոռի վրէն:

Ըսեց. Գացէք տեսէք պարտքի տէր ա, անօթի ա, տկլոզ ա, ինչ գուզէ, տվէք: Էկան ասին. Թագաւոր կասի ինչ կուզէ՝ տանք:

Ասեց. Ես էկեր եմ թագաւորի աղչիկ գուզիմ, մէկ բանի կարօտ չիմ:

Գացին թագաւորին ասին, թէ կասայ էկեր իմ աղջիկ գուզիմ, ես մէկ բանի կարօտ չեմ:

Գացին թագաւորին ասին, թէ կասայ էկեր իմ աղջիկ գուզիմ, ես մէկ բանի կարօտ չեմ:

Ասեց. Գացէք ըսէք գայ:

Էկան խանջեցին տարան:

---

*) Պատմեց 1912 թ. Յուլիսի 16-ին, Ղազնաճար գիւղում Յոյն Նիկողայոս Պետոսեանը:

Գնաց թագաւորին գլուխ իջուց, կանաւ։

—Հա՛, ըսեց, դո՛ւ ես էկէ իմ ախչիկ կուզիս։

Ասեց. Ես եմ էկէ քու ախչիկ կուզիմ։

Ասեց. Դու դինա՛ օր ես թագաւոր եմ, իմ ախչիկ ղօլայի (աղքատի) տուն չի էրթայ, իմ տան պէս պըտի տուն էղնի։ Լուսուն յէլնիմ, տէսնիմ քու տուն, քու կարողութեն իմ տան պէս էղաւ, իմ ախչիկ կուտամ քու տղին, չեղաւ՝ քու գլուխն էլ կը զարկիմ, քու տղին էլ։ Թողեց էկաւ։

Տղէն ասեց. Ի՞նչ ասեց։

Ասեց. Կասայ լուսուն յէլնիմ, տեսնիմ քու տուն, քու կարողութեն իմի պէս էղաւ, իմ ախչիկ կիտամ քու տղին, չեղաւ, քու գլոխն էլ կը զանեմ, քու տղին էլ։

Ասեց. Էն տեղէն օր էն հաւկիթ վերցուցիր, գնա կայնի՛ ասա. Հաբրման կասայ՝ լուսուն յէլնիմ տեսնիմ իմ տուն, իմ կարողութուն էրկուս էղնի՝ նոր թագաւորին մէկ էղնի, օր թագաւոր ուր ախչիկ տայ ընձի։

Լուսուն թագաւորը յելաւ, լվացվելու վախտ տեսաւ օր քաղքի մէջ մէկ տներ ա շինուկ, օր ուր տներից էրկուս ու մէկ լաւ։

Հօրն ըսեց տղէն. Դէհ յելի գնայ, թագաւորի ախչիկը ուզա ընձի։

Հէրը գնաց նստաւ խնամաթոռի վրէն, խապար տարան թագաւորին, թէ էրէկվայ մարդ էկի նստէ խնամաթոռի վրէն։

Ասեց. Ասէք գայ։

Էկան ասեցին, թագաւոր քեզի կըսէ թըղ իգայ։ Յելաւ գնաց թագաւորին գլուխ տվեց կանաւ։

Թագաւոր ըսեց. Մէկ ուզեցի կատարեր, մէկ էլ կուզիմ, թէ կատարեցիր, իմ ախչիկ կուտամ քու տղին, թէ չկատարեցիր, քու գլոխն էլ կը զարկիմ, քու տղինն էլ։

Ասեց. Ասա՛ տեսնիմ, ի՞նչ գուզիս։

—Լուսուն յէլնիմ, տէսնիմ, ին քաղքի կուշտ մէկ սար էղնի, մէկ կուշտ աշուն էղնի, մէկ ձմեռ էղնի, մէկ ամառ էղնի, մէկ էլ գարուն էղնի, էրթամ թամաշա էնիմ, իմ ախչիկ տամ քու տղին։

Էտ մարդը յելաւ էկաւ։

Տղէն ասեց. Ի՞նչ ասեց։

Ասեց. Քաղքի կշտի հետ մէկ սար գուզայ, մէկ կուշտ աշուն էղնի, մէկ ձմեռ էղնի, մէկ ամառ էղնի, մէկն էլ գարուն էղնի, օր իմ ախչիկ տամ քու տղին։

Ասեց. Էն հաւկիթն օր վերցուցեր ես, գնա կանի էնտեղ, ասա. Հաբրման կասա, լուսուն թագաւոր էղնի տէսնի քաղքի

կուշտ մէկ սար էղնի, մէկ կուշտ աշուն էղնի, մէկ կուշտ ձմեռ էղնի, մէկ ամառ էղնի, մէկն էլ գարուն էղնի, օր Թագաւոր էթա Թամաշա էնայ, ուր ախչիկ տայ ընձի։

Լուսուն Թագաւոր յելաւ տեսաւ, քաղքի կշտի հետ մէ սար կայ, տեսաւ օր մէկ կուշտ ձմեռ էր, ձուն կիգէր, մէկ կուշտ ամառ էր, կալ կհնին, մէկ կուշտ էլ գարուն էր, յըմէն մարդ յելեր կաշխատիր։

Թագաւորն ըսեց. Տարաւ ախչիկ։

Տղէն հօրն ասեց. Յելի գնա Թագաւորի աղչիկ ուզա ընձի։

Ցելաւ գնաց, նստաւ Թագաւորի խնամաթոռի վրէն։

Ծապար տարան Թագաւորին, Թէ էն մարդը էլի էկեր ա։

Ասեց. Գացէք, խանչէք գայ։

Էկան խանչեցին, գնաց։ Գնաց գլոխ տվեց Թագաւորին ու կանաւ։

Թագաւորն ըսեց. Էրկուս ուզեր եմ կատարիր ես, մէկն էլ գուզեմ, կատարիր կատարիր, չ'կատարիր՝ քու գլոխն էլ կը զարկիմ, քու տղինն էլ։

Ըսեց. Ուզէ, տեսնիմ ինչ գուզիս։

Ասեց. Դու գինաս օր ես Թագաւոր եմ, դու քեսպէր մարդմ ես, ախր իմ աղչիկ բըռնայ քու ձեռ պսակ էրթայ, շատ պակասութէն ա ընձի։ Ճամբու էրկու կողմը հըմալ բարդի ծառ գուզիմ, օր Թանձրութենից էն դիհ մարդ էն դեհու մարդուն չը տեսնի։ Մէջն էլ խալի խալիչէն փուռւկ էղնի, իմ դռնէն հարի ժամի դուռ, ժամի դռնէն էլ քու դուռը, օր իմ ախչիկ բռնայ քու տղի ձեռը, օր մէկ մարդ չկրնայ Թամաշայ էնայ։

—Լուսուն յելնիմ, տեսնիմ, կատարիր՝ կատարիր, չկատարիր՝ քու գլուխն էլ կը զարկիմ, քու տղին էլ։

Էկաւ տուն։ Տղէն ասեց. Ինչ ուզեց։

—Ըսեց իմ դռնէն հարի ժամի դուռ, ժամի դռնէն էլ հարի քու դուռը ճամփու էրկու կուշտն էլ, ըմալ բարդի գարկուկ էղնի, օր Թանձրութենէն էս դհի մարդ, էն դհի մարդուն չտեսնի։ Օր իմ ախչիկն ու քու տղէն յիրար ձեռք բռնին, էրթան պսակ, մարդ չտեսնի։

Ըսեց. էն տեղէն օր հաւկիթ վերցուցեր ես, գնա կանի էն տեղ, ասա. Հաբրման կասայ, Թագաւորի դռնէն հարի ժամի դուռ, ժամի դռնէն հարի իմ դուռ ճամփու էրկու կուշտ հըմալ Թանձր բարդի էղնի, օր էն դէհի մարդ, էն դէհի մարդուն չտեսնի. մէջ խալի խալիչէն փուռւկ էղնի, օր ես ու Թագաւորի աղչիկ էրթանք պսակ։

Հէրը գնաց ըսեց, դարձաւ էկաւ ուր տուն։

Լուսուն թագաւոր յելաւ, օր իմալ օր ինքը ուզեր էր՝ կատարեր էր։ Պատրաստութեն տեսան թագաւորի աղչկան բերելու։ Թագաւորին էրկու փեսայ էլ ուներ, թագաւորի իրեք փէսէն իրէք օր պըտի ջրինդ խաղին։

Հապրմանը ուր նշանածին ըսեց. Իրեք օր օր կը խաղանք, քու քուրեր ընձի հըմար կասին, իմ նշանած ա, չեղնի դու ասիս իմ նշանածն ա։ Սկսեցին ջիրինթ խաղալ էրկու օր ու կէս. օր մի, էն ասեց իմ նշանած է, էն ասեց իմ նշանածն է, էրկու քուր կռվան վրէն։ Էրկու ու կէս աւուր վրէն պզտիկ քուր ասեց. Էտի իմ նշանածն ա, քոռնա ձեր աչքեր, դուք ինչի՞ կը կռվիք։

Հաբրման ձին քաշեց, կանաւ, ըսեց. Հը քոռնան ընդոնց աչքեր, քոռնայ քու աչքեր, ես կերթամ, օր շատ դէմ գընկնիս ընձի, պղնձէ քաղաք կընցընիս, Արծըթէ քաղաքն էլ կընցընիս, Օսկէ քաղաք կուգաս ընձի կը գտնիս. էրկըթէ սօլ կը հագնիս, պողպըտէ գաւազան կառնիս. եւ օր սօլերդ ծակաւ, գաւազանդ մաշաւ՝ ինձի կը գտնիս։ Ասեց ու գնաց։

Խապարը գնաց թագաւորին, թէ քու փեսէն գնաց։ Թագաւոր դրեց աղչկայ վրէն, թէ իմ փեսէն քեզնէ գուզիմ, դու ինչ ասեցիր, օր իմ փեսէն գնայ։

Աղչիկ տղամարդու շոր հագաւ, էրկըթէ սօլ հագաւ, պողպըտէ գաւազան առաւ ու ընկաւ աշխարք շուռ գալու։ Մէկ օր, եա մէկ շաբաթ, եա մէկ ամիս, եա մէկ տարի, շատ գըվռնեց, քիչ գըվըռնեց, Աստված խապար էղնի, մէկ ախպըր վրայ գնաց նըստաւ։ Տեսաւ օր սօլերը ծակեր էր։ Տեսաւ օր պղնձէ գիւգիւմներ ձեռ ուրանց էկան ջուր կը տանին, հարցուց, թէ էտ ինչ քաղաք ա։

Ասին. Պղնձէ քաղաքն ա։

Ըսեց. Էտոր էն դեհէն ինչ քաղաք կայ։

Ըսին. Լուսուն հարի իրիկուն էրթաս, կը հասնիս Արծըթէ քաղաքը։

—Ընդորէն դէնը ինչ քաղաք կայ։

Ասին. Օսկէ քաղաքն ա. մէկ օր էլ հար իրիկուն էրթաս՝ կը հասնիս Օսկէ քաղաքը։

Փառք տվեց Աստծուն, թէ սալըխն առայ. յելաւ էն լուսուն հար իրիկուն գնաց Արծըթէ քաղաք. էն մէկ էլ օրն էլ գնաց յիրիկվան հասաւ Օսկէ քաղաք։ Գնաց նստաւ աղպրի վրէն։ Տեսաւ օր քառսուն ախչիկ, օսկէ գիւգիւմներ ձեռ ուրանց ջուր կը լըլան ու կը տանին։ Շատ լավայ ընկաւ ջուր չտվին խմէր, էն մէկին օր շատ լաւա ընկաւ՝ տվեց։

Ըսեց. Ինչի՞ էտմալ ջուր կը կրէք։

Ասեց. Մեր թագաւորի, տղէն գացեր ա հողածինի երկիր, հո-

ղածնի թագաւորի աղջիկն առեր ա, մկա, էկեր ա, ընտոր սիրուն գիշեր ցերեկ կը վառի, մկա մենք քառասուն աղջըկով ջուր կը կրինք գըլնանք վրէն, չի հովի։

Աղէիկ տղի մատնիկ հանեց թալեց գիւղումի ջրի մէջ, աղջիկ վռազ վռազ տարաւ ջուր լցեց տղի վրէն։ Մատնիքը ընկաւ յառէջը։ Ըսեց. Ո՞ր լցեց էտ ջուր, ես հովայ, բոլ ա լըլնաք։

Ախչիկներ յիրար վրայ թալելով ըսին. Իտա ախչիկ լցեց։

Ասեց. Ախչի, ձր (ով) կար աղբըրի մօտ, օր դու էտ ջուր լցիր։

Ասեց. Մէկ տղայ էր։

—Գնա բի տեսնինք էն տղին։

Էկաւ տարաւ, Հաբըրման տեսաւ, օր ուր նշանածն էր, տարաւ մէկ քանի օր գօղտուկ պահեց, Հաբըրմանի հէր յիմցաւ աղջկայ գալ, ըսեց. Ախչի, իմ հէր յիմցեր ա քու գալ, լուսուն քեզի կը խանչի կը տանայ. օր կը տանայ, կասայ իմ յօտներ մաժա։ Զեղնի չոքդ ի դնիս ընդոր ոտների տակ, էնի կը զարկայ քըզի, կերթաս օխտը դասլախա գետնի տակ կը մաշիս. էն տեղ կոճ կայ դրուկ, կը վերցուս կը դնես յոտներու տակը. բարձ կը դնիս վրէն, ոտ կը դնիս բարձի վրէն, հճուռն կը կայնիս, էն ղդար օր քու ձեռը հասնի, յօտներ կը մաժիս, էնի կը միամցու (միամտացնել) քըզի, ոտ կը վերու, օր կը վերու կը զարկայ, կոճ գոռալով կերթայ գետնի տակ։ Կասայ. Դու իմ տղի հոգին առար, գնա իմ տղէն քեզնէ ազատվի։ Դու կը թողիս, դառնաս գաս։

Մնաց լուսուն թագաւորը խանչեց ախչկան, թէ արի տեսնիմ իմալ աղէիկ ես, օր իմ տղէն էտ ղըղըր քու համր կը վառեր։

Աղջիկը յելաւ գնաց։ Գնաց գլոխ տվեց, հեռուն կանաւ։

Ասեց. Իմ յօտներ դի քու չոքի վրէն, մաժա։

Բերեց ծածուկ կոճ դրեց ոտներու տակ, բարձը դրեց վրէն, ոտ դրեց վրէն մաժեց։ Միամտըցուց, ոտ վերցուց զարկեց, կոճ գոռալով գնաց գետնի տակ։

Ասեց. Գնա, թըղ իմ տղի հոգին քեզնէ ազատի, բոլ է իմ տղի հոգին առար։ Աղջիկ թողեց էկաւ տղի մօտ։

Երկու օրից յետ՝ տղի մէրն յիմացաւ։

Տղէն ասեց. Աղէի, իմ մէրն յիմցեր ա, քեզի կը խանչայ կը տանայ. օր տարաւ, ինք թախտի վրէն պարկուկ ա, մեր հացթուխ յօտով թունդիր կը փրթայ, ծծերով թունդիր կը փարտայ, ձեռներով հաց կը թխայ։ Տախտակը կը բերես, կը դնես, հաց կը գնդես, գրտընակը կախած ա, կը բերես, փէտը էնտեղ դրուկ ա, թունդիրը էնտրով կը փրտես, շորը կախուկ ա, կը բերես թունդիրը կը փարտես, առաջատէն կը բերես, կը նստիս, մէկ էրկու հաց կը թխես, ու գելնիս կանես (կանգնես)։ Հացթուխն օր կը

նստի հաց թխելու, դու կը թողիս, կը քելիս, իմ մէր ձէն կիտայ, թէ հացթուխ, բռնա էտուր կոխա թոնիր թըղ վառի, իմ տղի հոգին ազատի։

Հացթուխ կասայ. Թըղ էրթա, Աստված էտոր բան յաջողայ, քառսուն տարի իմ ոտ ու ձեռ էրեցիր էր, յօտներով թուընդիր կը փրտինք, ծծերով թուընդիր կը փարտինք, ձեռներով հաց կը թխինք, էտի յըմէն բան սովըրցուց, թըղ էրթայ, Աստված էտոր բան աչողայ։

Էրկու օրից յետև մեր խանչեց աղջկան, թէ գայ տեսնիմ էտ իմալ աղջիկա, օր իմ տղէն էտուր սիրուն կը վառի։ Ախչիկ գնաց, գլոխ տվեց մօր, կանաւ։ Տեսաւ օր հաց թխելու վախտն էկաւ, բերեց տախտակ գրեց, խմոր գնդեց, գրտնակը բերեց, առաֆատը բերեց, փէտը բերեց թուընդիր փրտեց, շորը առաւ թուընդիր փարտեց, նստաւ մէ էրկու հաց բացեց՝ թխեց՝ յելաւ կանաւ։ Հացթուխը նստաւ հաց թխելու, աղջիկը թողեց քելեց։

Մէրն ըսեց. Հացթուխ, էլ բռնա բէ, կախայ թուընդիր, թըղ վառի, իմ տղի հոգին ըտորնէ ազատի։

Ասեց. Թըղ էրթայ, Աստուած էտոր բան յաջողայ։ Իտա քառսուն տարին իմ ոտ ու ձեռ էրէցիր էր, յօտներով թուընդիր կը փրտինք, ծծերով թուընդիր կը փարտինք, ձեռներով հաց կը թխինք, էտի յըմէն բան սովըրցուց։ Թըղ էրթայ, Աստուած ուր բան յաջողայ։ Աղչիկ պրծաւ էկաւ տղի մօտ։

Ըսեց. Ախչի, պրծար էկաւր։

Էսեց. Էկայ։

Տղէն յելաւ վերցուց ախչիկն ու գնաց։ Ծաբարը գնաց տղի հօրը, թէ էն հողածինը օր էկեր էր, առաւ քու տղէն գնաց։ Հէրն յելաւ ընկաւ յետևէն։

Տղէն ըսեց. Աղչի, մկայ իմ հէր կիդայ, քըզի ըմալ էնիմ, օր պրծում։ Մէկ էլ տեսաւ յետևանց օր էկաւ։ Աղչիկն էրեց էրկու հատ աղբուր, մէկը տաք, մէկը պաղ, ինքը էղաւ մէկ հալիվոր ջուր ծախող։

Թագաւորն էկաւ հարցուց, ըսեց. Հալիւոր, մէկ աղչիկ, մէկ տղայ չտեսաւր։

Ըսեց. Ջուր կը ծախեմ։

Ըսեց. Մէկ աղչիկ, մէկ տղայ չտեսաւր, թաքըրտեց։

Ըսեց. Էս տաք աղպրի թաս մէկ կապէկ ա, պաղ աղբրի թաս էրկու կապէկ ա, որից կը խմիս, խմա։

Ըսեց. Կըսիմ մէկ աղչիկ, մէկ տղայ չտեսաւր։

Ըսեց. Օր փող չունիս, ամփող խմա, գնա։

Թողեց, դարձաւ, ըսեց. Էս կողմերը չէ էկած, չտեսեր աւ

Էն օր գնաց, տղէն աղբուրն էրեց աղջիկ, ինք էղաւ տղայ, ընկան ճամբան գնացին։

Թագաւորն օր դարձաւ էկաւ, խապարը գնաց մօրը, հօղածինն օր էկեր էր, առաւ քու տղէն գնաց, դարձաւ էկաւ թագաւորին ըսեց. Ի՞նչ տեսար ճամբան։

Ըսեց. Էրկու հատ հաղբուր տեսայ, մէկ հալիւոր նստեր էր ջուր կը ծախէր։

—Բա ի՞նչ ասեցիր դու։

—Հարցուցի թէ մէկ աղջիկ, մէկ տղայ չտեսար։

Էնի ընձի ասեց. Ջուր կը ծախեմ։

Ըսի. Մէկ աղչիկ, մէկ տղայ չտեսայ։

Ըսեց. Մէկ աղբուր տաք ա, մէկ պաղ ա։

Մէկ էլ ըսի. Մէկ աղչիկ, մէկ տղայ չտեսայ։

Ըսեց. Տաքի թասը մէկ կապէկ ա, պաղինը՝ էրկու։

Էլի ըսի. Մէկ աղչիկ, մէկ տղայ չտեսայ։

Ըսեց. Փող չունիս, անփող խմի, գնա։

—Ծու տունն աւերի, ասեց, էն աղբուրն օր կէր՝ աղչիկն էր, էն հալիւոր՝ տղէն էր, մէկ թաս ջուր դու խմէր, աղչիկ կը մեռնէր, մեր տղէն կազատէր կը բերէր։

Ըսեց. Դարձի, գնա, ինչ կը տեսնիս՝ բռնայ առ արի։

Ըսեց. Անօթի եմ, կտոր մի հաց տու ուտեմ, էրթամ։

Ըսեց. Ջըմ իտայ, չուրի տղէն չբերես՝ չըմ իտայ։ Դարձաւ մէկ էլ ընկաւ տղի յետևէն։

Ըսեց. Աղչի, իմ մէր դարձուց իմ հօր, մկա իմ հէր կիւգայ, ի՞նչ էնիմ օր քեզի պըծում։ Աղչիկն էրեց մէկ վանք, ինք էղաւ մէկ հատ տիրացու ու կարդաց։

Թագաւորն էկաւ, հարցուց, թէ տիրացու, մէկ աղչիկ, մէկ տղայ չտեսաւ։

Ըսեց. Նոր իմ էկի կը կարդամ։

Մէկ էլ հարցուց. Մէկ աղչիկ մէկ տղայ չըտեսաւ։

Ըսեց. Միալար իմ փէշէն էտ ա, էտ վանքի մէջ կը ծառայիմ։

Ըսեց. Մէկ տղայ, մէկ աղչիկ չտեսաւ։

Ըսեց. Ինչ գիրք էղնի, էն կը կարդամ։

Թագաւորը ըսեց. Ջը տեսեր ա, էլի թողեց դարձաւ։ Տիրացուն էլի էղաւ տղայ, վանքն էլ էրեց աղչիկ գնացին։

Թագաւորը դարձաւ, գնաց ուր տուն։

Մէրն ասեց. Բերի՞ր տղէն։

Ըսեց. Չէ։

Ըսեց. Ի՞նչ տեսար։

Ըսեց. Մէկ վանք, մէկ տիրացու։

Ասեց. Քու տունն աւիրի, էն վանք աղչիկն էր, էն տիրացուն մեր տղէն, չը կարցաւ էն վանքից մէկ քար, մէկ բուռ հող քերէր, աղջիկ կը մեռնէր՝ մեր տղէն կազատէր։

Ասեց. Դարձի գնա, ինչ օր կը տեսնես՝ կտրա առ արի։

Ասեց. Անօթի եմ, մէկ կտոր հաց տուր ուտիմ, էրթամ։

Ասեց. Զուրի տղէն չբերես՝ քեզի հաց չըմ իտայ։

Էլի դարձաւ անօթի ընկաւ յետևէն։

Տղէն ըսեց. Ախչի, իմ մէր իմ հօր մէկ էլ դարձուց մեր յետևը, էս անգամը օր իգայ, իլլաճ չկայ, քեզի կը կտրայ, ինձի կը տանայ։ Ըսեց. Ի՞նչ էնիմ, օր ազատեմ էտոր ձեռնէն։ Աղջկան էրեց խնձորի մէկ թազա շիւ, ինքը էղաւ մէկ յերկէն, բարակ օձ, քօքից փաթթըվաւ, հար յէլաւ գլոխը, ըսկի տեղ բաց չթողեց։

Թագաւորը էկաւ կանաւ, ասեց. Ինչ էնեմ, Հաբրման, քոքին զարկեմ իմն ա, ծէրին զարկեմ իմն ա, դու էղնիս քու Աստված. ես գինամ դու կերթաս հողածընի էրկիր, քու լեզուն հան, ես պաքիմ, փափագ առնիմ ու գնամ։

Ինչ ղդար օր բերան բացեց թագաւոր, Հաբրման ուր աղուն թափեց թագաւորի բերնի մէջ, թագաւոր չորցաւ։ Շիւն էրեց ախչիկ, ինքն էղաւ տղայ, ընկան ճամբաս ու էկան, թէ մէկ օր, թէ տաս օր, շատ ու քիչ Աստված յիմնար, էկան հասան թագաւորի քաղաք։ Աչքալուս գնաց թագաւորին, թէ աչքդ լուս էղնի, աղչիկդ ու փէսէդ էկան։ Թագաւորը պատրաստեց հարսնքի պատրաստութեն, եօթն օր, եօթն գիշեր հարսնիք էրեցին, էն հասաւ ուր մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։ Երկնքուց յիրեք խնձոր ընկաւ, մէկը լսողին, մէկը ասողին, մէկն էլ ականջ անողին։



ԻՆՁՔԸ ՇԱՏ

(Ղազնաճար, Մանազկերտցիներ*)

Յառաջ ժամանակով մէկ տղայ կըլլնի, ուրա սովորութենը ինչ ա, գընկներ քաղքի մէջ, ձէն տալով կը գըվըռնէր. Ինձքա շատ ա, մալ չունիմ: Գնաց մէկ օր մէկ բազրկեանի պատահաւ, ըսոր դիւքնի յըռէջով ձէն տվեց, թէ խելքս շատ ա, մալ չունիմ, անցաւ: Էտ բազրկեան մտածեց, թէ էտ ինչ բան էր, օր էտ տղէն ձէն տվեց, խելք շատ ունիմ՝ մալ չունեմ, խանչեց բերեց ուր մօտ.

Ըսեց. Դու էտ ինչ էր ձէն տվիր:

—Թէ ասեց, աղա, իմ սովորութեն էտմալ ա:

Ասեց. Արի քեզի մէ հարիր մանէթ փարա կիտամ, քեզի մէկ դիւքեան կիտամ, տարին օր թըմբմաւ, գուգամ քու խելքի շատն ու քիչ դիմամ: Բերեց հարիր մանէթ փող տվեց, մէկ թեթև դուքան տվեց: Էտ մարդն ուրին մանրեղէն առաւ, ծախեց, բերեց մէկ չաքմաճա շինեց, աշխատանքը թալեց էն չաքմաճի մէջ, էն հարիր մանէթին միշտ ապրանք պահեց ուր դուքան, յեվելի աշխատանքը թալեց չաքմաճէն: Տարին օր թըմբմաւ, բազրկեանը էկաւ, էկաւ նստաւ ասեց. Խելքից շատ, ասեց, բէ տեսնիմ ինչ ա քու աշխատանք:

Ըսեց. Ես չեմ գինայ, չաքմաճէն գինայ: Չաքմաճէն քաշեց, բերեց դրեց բազրկեանի յառէջ, հաշվեց, հարիր մանէթին, էրկու հարիր մանէթ աշխատանք էր բերէ մէկ տարվա մէջ:

Բազրկեան ասեց. Իմ ջան դուս գայ, քեզի պէս տղէն իտա կեղտոտ դիւքանի մէջ թողիմ նստի, վերցուց տարաւ դրեց ուր թուխածախս դիւքընի յառէջ: Իմալ բախտոտ էր էտ Խելքից շատը, օր բիրատի քաղաքի առուծախսը դարձաւ ուրան վրէն: Բազրկեանը շատ սիրեց Խելքից շատին: Բազրկեանին մէկ հատ աղջիկ ունէր, լսի կտոր էր, վաղիրի տղէն էլ մարդ կը ճամբէր առնելու, վաքիլի տղէն էլ մարդ կը ճամբէր, բիրատի էտ քաղաքի

---

*) Պատմեց 1912 թ. Յուլիսի 15-ին Ղազնաճար գիւղացի նոյն. Նիկողայոս Պետրոսեանը:

մեծամեծներու տղէքներ գուզին էտ ախչիկը առնելու։ Մէկ օր բաղրկեան էկաւ Խելքից շատին ըսեց. Դու էլ մէկ մարդ քըզի համար յուզընկան ճամփա, ես իմ աղչիկ քըզի կիտամ։

Ասեց. Աղա, կեղնի օր ես համարձակվիմ, էտ բանին տէր էղնեմ։

Ասեց. Ախչիկն իմն ա, ես քեզի կըսեմ օր մարդ ճամփա։

Ըսեց. Օր դու կըսիս, ես էլ կը ճամփեմ։

Յելաւ ուր հաւատարիմ ախպէր տղէքներուց մէկը ճամփեց։ Գնաց տեսաւ օր վազիրի մարդն էկեր էր, վաքիլի մարդն էլ էկեր էր, նստեր էր, մենծ մենծ բաղրկեաններու տղէքներ էկած են, նստած են։ Էտ մարդն էլ գնաց նստաւ։

Հարցուցին, թէ դո՞ւ վիր համար ես էկի։

Ըսեց. Ես էլ էտ բաղրկեանի պրիկաշչիկ Խելքից շատի համար իմ էկի։ Ծիծղացին ու ծափ զարկեցին։

Բաղրկեանն ասեց. Ես չըմ կարնայ ըսէ ես ընդոր տղին կիտամ, ես ընդոր, բիրադի էլ ինծի համար մէկ էք։ Իրիկուն ամէն մարդ ուր նշան բերայ, աղջիկ որի նշան որ վերցուց, ընտրան կիտամ. դուք յիրար հետ ուտել. խմել, քէֆ ուրախութեն էրէք։ Էտ մարդեր յելան գնացին, անմէկ մարդ ուրան դէօրա նշան պատրաստեց։

Բաղրկեան Խելքից շատին ասեց. Զելնի թէ ծախսի տակ ընկնես, մէկ մատանիք, մէկ հատ շալ կը դնիս բոթնոցի մէջ, կը ճամփես։ Իրկուն անմէկ մարդ առաւ ուր նշան էկաւ։ Բերեցին բիրադի ջեռկով դրեցին։ Բացեցին օր նազիրի տղէն միլեօնաչափ նշան ա ճամփէ, նազիրի տղէն էլ ընտոր պէս, բիրատի էտ հարուստներ մէկ մէկից յեվել նշան ա պատրաստած բերած։ Խելքից շատի նշան բացեցին, տեսան օր մէկ թեթև մատանի կայ, մէկ մանէթ կիսու էլ շալ ա։ Էլի տնազ առան ու ծիծղացին թէ տեսէք մէկ մատանիով ու մէկ շալով էկեր ա մեր հետ նշան կը դնայ։

Խանչեցին ախչկան բերեցին։

Ըսին. Էսի ֆիլանի, էսի ֆատանի նշանն ա, որ մէկ կը վերցուս՝ վերու։ Ախչիկը էկաւ Խելքից շատի մատանիքը վերցուց, պաքեց, էցկեց մատը, շալն թալեց գլխուն, թողեց գնաց։ Էտոնք բիրադի ըսըկան, (խոռվան), թէ դու տես օր, իտա ղղար մարդու նշան չվերցուց, գնաց մէկ պրիկաշիկի կեղտոտ մատնիք վերուց։

Բաղրկեանն ըսեց. Նստէք, կեր ու խում էնինք, քէֆ էնինք։ Էտոնք ըսին թէ մինք քու հացը չենք ուտի։

Ըսեց. Շատ հարկաւորս չէ, թողէք գացէք։

Թողին գացին։

Մէ տասն օրից հետ, բազրկեաններ քօմսան էկան էտ բազրկեանի մօտ, քառասուն բազրկեանի գլխաւորը էտ էր։

Ասեցին. Բազրկեան, մենք օր չերթանք քաղքըներ խրիտ էնելու, մեր էրէխաներ չենք կրնայ պահէ, ժամանակը էկեր է, օր պըտի էրթանք։

Բազրկեանն ըսեց. Դուք գինաք օր ես ձեզի հէրուքեն եմ էրի, դուք բիրադի խամ տղայ էք էղի, ես եմ սովըրցուցէ բիրադի, ես մկայ ծերացեր եմ, մուննաթ կէնիմ օր իմ տղէն դուս պիտի տանէք, պարզ երես տանէք, պարզ երես բերէք։

Բազրկեաններ ըսեցին. Մեր հէր դուս ես. դուս օր մուննաթ կենիս, պիտի տանենք ու բերենք։

—Դէ, ըսեց, գացէք, յամէկ մարդ ուր կարողութենի դէօրա պատրաստուքէն տեսնի, ֆլան ամսու ֆլան օր դուս գայ։

Բազրկեան քառասուն բեռ ապրանք բռնեց, հնծաւ ուր ձին, ընկաւ բեռներու յառէջ, բերեց քաղքից դուս հանեց։ Էկան քառասուն բազրկեան գումարացան մէկ տեղ, եռեսուն ինոը բազրկեանից մուննաթ էրեց, ըսեց. Իմ տղէն ձեզի ամանաթ կիտամ, իմալ օր ես ձեզի կը տանինք, կը բերինք, դուս էլ իմ տղէն տարէք, բերէք։

Ըսեցին. Մեր աչքի վրայ, քու լաւութէն մեր վրայ շատ ա, էտ քու տված հացն ա որ մենք կուտինք։

Բարի ճնայ եղան իրարուց, բազրկեան դարձաւ քաղաք, ընտոնք ընկան ճամբաս գացին։ Գացին հասան ուրանց իւրտատեղն, օր պըտի դիշեր մընեն, ջոկ ջոկ ուրենց բեռներ թափեցին, եռեսուն ինոը բազրկեան իրարու հետ մասլահաթ էրեցին, թէ բերէք ամէն գըշեր մէկ բեռ գողնանք, քառասուն օր ճամբաս կերթանք, քառասուն բեռ ապրանք ունի, չուրի հասնինք տեղ օրը մէկ բեռ գողանալով ապրանքը կը վերջացունք, հըմալ էնինք, օր էտի մէկէլ ոտք քաղաք չէթալայ, բազըրկեանի յերես չելնի։ Ճամփեցին մէկ բեռ ապրանք գողցան։ Ցելան բիրադի բեռներ բառացան, էտ էլ ուր ծառաներուն ըսեց. Բառցէք։ Երեսունը ինոը բեռ բարձան, էն մէկ դաթիր բերեցին, բեռ չկար։

Էկան ասին, թէ աղա, դաթիր կայ, բեռ չկայ։

—Որ յըմալ է. իմ բեռներ թափէք, Բեռները թափեց։

Բազրկեաններն ըսին. Բարձի, ինչի թափեցիր։

Ասեց. Գացէք, Աստուած ձեր հետ էղնի։ Ընտոնք որ հեռացան, բեռներ տվեց բառնալ, շիտկեց ղըռով գնաց։ Ասեց. Ես էնոնց էրթած ճամփով չըմ էրթայ։

Հինգ օր, կամ տասն օր գնաց, գնաց հասաւ մէկ յերկիր, տեսաւ ըմալ սով էր ընկէ օր անօթութենէ ծովու ձկներն էլ կը

լկլկին։ Գնաց մէկ քաղաք, հարցուց թէ ձեր քաղաք ամբարդար կայ։

Ասեցին թէ կայ։

Գնաց ամբարդարի հետ խօսաց, թէ ինչ ղըղըր ցորեն ունիս։

Ըսեց. Ինչ ղըղըր ուզիս՝ ունիմ։ Օրը հինգ խալվար առաւ, տվեց փռեր թխել, չորս խալվար ցրվեց քաղաքացուն, մէկ խալվարն էլ բըղեց, թափեց ծով։ Քառասուն օր պահեց, ծովու ձկներն էլ, քաղաքացին էլ։ Քառասուն օրից ետ էտոր կարողութեն պրծաւ. իմալ էղաւ օր նոքարները հաց կուզին, հաց ձեռ չէր ընկնի։

Ձկներ գացին ուրենց թագաւորին ըսեցին, թէ մէկ բարեկի հողածին է էկէ, քառասուն օր քու յըռեաթը պահեց, էն մարդն օր չեղնէր, քու յըռեաթ բիրադի կը ջարդըվէր։

Թագաւոր մէկ քօղ տվեց, ասեց. Գացէք էն հողածին բերէք իմ մօտ։

Իրեք ձուկ էկան, ասեցին. Աղա, մեր թագաւոր քեզի կը խանչայ։

Ըսեց. Ախր դու ձուկ իք ծովի մէջ, ես իսան իմ, կը խեղդվիմ։

Էն քօղը տվեցին, ըսեցին. Առ էտի էծկա գլոխդ, էլ չը խեղդըվիս. մենք քեզի կը տանինք։

Բողն էծկեց գլօխ. յելաւ նստաւ ձկներու մէջքին, տարան։ Ճամբա ըսեցին, թէ աղա, դու էտ լաւութենն էրիր ես, մենք թագաւորին ըսիր ինք, թագաւոր քեզի բախշիշ կիտայ, իրեք անգամ օր իլղար կառնիս թագաւորի բերնէն, մէկ սուփրա ունի, էնի գուզիս։ Էնի թագաւոր ա, ուր խօսքից ետ չի դառնայ, կիտայ։

Առան գացին թագաւորի մօտ։ Էտ մարդը գնաց թագաւորին գլօխ տվէց։ Թագաւորը տեղ տըվեց նստաւ, ասեց. Հողածին, էտ լաւութենը օր դու ես էրի, ասեց, ուզա տամ։

Ասեց. Քու սաղութեն գուզեմ։ Մէկ էլ ասաց. Ուզա տամ։ Իրեք անգամ իլղար առաւ թագաւորի բերնէն։ Ասեց. Մէկ սուփրա ունիս, էն սուփրէն տուր։

Ասեց. Քու սովորցընողի վիզը կոտրի։

Ասեց. Ծօսքս գացեր ա, բերէք տվէք։ Բերին տվին։ Շնորհակալութեն արաւ թագաւորից, էտ ձկներ բերեցին, էլի դուս հանին։

Ձկներն օր դարձան մասլահաթ էրին, թէ թագաւորը էն մարդու հաց չէր կերի, էտ ղտար բաշխիշ տվեց, հըպա մենք ինչ պըտի էնինք, օր քառասուն օր մեզի պահեց, պահպանեց։ Ձկներուն ըսեցին, ընկան ծովու մէջ, ինչքան անգին քարեր կար ծովի մէջ ժողվեցին, բերին ծովու ղրաղ գոմեցին (կիտեցին)։ Լուսան օր բացվաւ, Խելքից շատը յելաւ տեսաւ, ասեց ուր ծառաներուն ձիու փէյիններըը շաղեցին, ամէկու մէջ վեց հատ, կամ ութը հատ

դրեց, ու քեարփինչ թափեց։ Եռեսուն ուղթ բեռը ըսբընէ բռնեց, մէկ բեռն էլ խամ աթար բռնեց։ Բեռներն օր բռնեց, պրծաւ, էկաւ երկու քաղաքացոց շնորհակալութիւն առաւ, քաղաքացիկ էլ էն մարդից շնորհակալութիւն առան, ու էկան ճամբախ։ Էկաւ յունվար ամսում մէկ օրը բեռները թափեց էն տեղը, օր բեռը կորեր էր։ Ինչ ճնաց, տեսաւ մէկ բազրկեան էլ էկաւ, չուրի մուրճն առաւ, քառասուն բազրկեանն էլ էկան ժողովվան մէկ տեղ։

Յունվարի ժամանակն էր, ձմեռ տվեց վրէնները, սաստիկ բուքն ու ցուրտը, ուր ծառաներին ասեց. Ձեամ աթարներից մէկ բեռ բերէք վառէք, տաքցէք։ Որ վառեցին, կրակը բանցրցաւ, տեսան մէկէլ բազրկեաննները, ուրանց ծառաներուց երկուս ճամփեցին, թէ դնացէք տեսէք, էտ ինչ վառելիք ունին, օր էտպէս դիւռ կը վառին։

Էկան հարցուցին։ Ասին թէ մեր բեռներ բիրադի աթար ա։ Զը հաւատացին։

Ասեցին. Էկէք տեսէք։ Էկան տեսան օր բիրադի աթար էր։ Գացին ուրենց բազրկեաններին ասին, թէ ըտոր քառասուն բեռն էլ աթարա։

Ասեցին. Գացէք մէկ բեռ բերէք վառենք, երթանք քաղակ երկու բեռ տանք։ Էկան ըսին. Մեր բազրկեաններ կասեն, մէկ բեռ թող տայ վառինք, երթանք քաղաք երկու բեռ տանք։

Էն էլ ասեց. Գացէք ձեր բազրկեաններուն ասէք, երկու բեռ չենք ուզէ, ինչ աթար տամ, էն աթարից տան, միայն գացէք, պայմանը գրէք բերէք։ Հաստատ պայմանը գրեցին. փեչատները զարկեցին։ Ձեռքից շատը ուր ծառաներաց ասեց. Մի բառնէք, թող ընտոնք յառէջ երթան. ընտոնք օր բարձան, գացին առէջ, նոր Ձեռքից շատը ուր բեռներ բառնալ տվեց։ Ընտոնք օր գացին, բազրկեան բաշին հեծաւ ձին, էկաւ յառէջներ, տեսաւ օր եռեսուն լինը բազրկեան կէն, ուր տղէն չկէր։

Հարցուց ասեց. Ո՞ւր ա, մեր տղէն չկայ։

Ասեց. Ընդուր անունն էլ դու կիտաս հըլա։

—Թէ ընչի։

Ասեցին. Քառասուն բեռ աթար ա բերի։

Ասեց. Էտմալ բան կեղնի՞, աթար ինչի՞ պիտի բերայ։

Ասեց. Մէկ բեռն էլ մենք առեր ենք, վառեր ենք. օր երկու բեռ պիտի տանք։

Բազրկեան բաշին ետ դարձաւ ուր տուն, մէկ նամակ գրեց, տվեց ծառայի ձեռ, ասեց. Էնտոր բերած ապրանք ինձի հարկաւոր չէ, օր քաղաք մտեր ա, գլոխ կիտամ գարկել։ Ծառան նամակը բերեց տվեց Ձեռքից շատին։

Նամակն օր առաւ կարդաց, ասեց. Գնա բազրկեան բաշուն ասա, մէկ տեղ տայ գիշերս սըթըրվիմ, լուսուն գելնիմ, քանի որ ընտոր անուն կայ, կերթամ, չեմ մնայ քաղաք։

Ծառան էկաւ ասեց։ Ասեց. Թող էրթա ֆիլան դաղանոց սը-թըրվի։ Ծառէն գնաց, ասեց, թէ թող էրթայ ֆիլան դաղանոց սը-թըրվի։ Բաշեց ուր բեռները բերեց լըցից դաղանոցի մէկ կողմը, դաթըրները կապեց, ժողվան ուր ծառաներով, սուփրէն բացեց, կերան, խմեցին ու քէֆ էրեցին ուրենց համար։ Բազրկան բաշու աղչիկ շատ դէմ ընկաւ, մօրն ըսեց. Մէ էրկու հաց տուր տանիմ տամ Խելքից շատին, ճամփուց է էկէ, անօթի կեղնի, մէկ էլ յերեսը տեսնիմ, ես գիտամ բազրկեան բաշին էլ չը թողու օր քաղաք տենի, յիրարու յերես տեսնենք։ Մէրը բերեց էրկու հաց տվեց աղչկան, աղչիկը չարսաբը քաշեց գլխուն, գնաց, գնաց հասաւ դաղանոցի մօտը, տեսաւ օր շատ զարմանելի լուս կերևէր դաղա-նոցից։ Գնաց փանջարից իշկեց, տեսաւ Խելքից շատ մէկ սուֆ-րա ա փռէ, օր մէկ ըստաքանի աժողուրթեն աժենայ ուր հոր կարողուրթեն, բիրադի անգին քարից, չամ չրաղից, ակուն-քներուց։

Աղչիկ դարձաւ էկաւ ուր հօր տուն, մօրն ըսեց. Ես գինամ օր իմ Խելքից շատ էն տղէքներուց չէ, մէկ սուփրա է փռէ, օր մէկ ստաքան, մէկ չայի տակ աժի իմ հօր կարողուրթեն։

Մէրն էլ գնաց բազրկեան բաշուն ասեց, թէ Խելքից շատ մէ էնպէս սուֆրա ա բերէ։ Բազրկեան բաշին էլաւ գնաց, գնաց փանջարից իշկեց, օր աղչկայ խօսքը օղորթ ա։ Ձէն տվեց, թէ էկէք դուռը բացէք։ Յելան դուռը բացեցին, բազրկեան բաշին ներս էկաւ, Խելքից շատը յելաւ տեղից կայնաւ, քաշեց տեղը նստեցուց։ Բազրկեան բաշին օր տեսաւ էտ սուֆրի կարողուրթեն, խելքը գլխուց գնաց։

Ըսեց. Ձէ, թէ օր կը թողուս էն մեծ օթախի մէջ գնիմ, կի-գամ, թէ չըմ իգայ։

Ըսեց. Լաւ, յելի գիշեր բարձի էրթանք, մարդ չը տեսնի մեզի։

—Ձէ, ըսեց, արևը պըտի էրկու բոյ յելնի, նոր բառնամ գամ։ Բազրկեան բաշին յելաւ, առաւ սուֆրէն, գնաց։ Լուսն օր բացվաւ, արևն առաւ, մեր Խելքից շատ բարձաւ բեռներն ու գնաց։ Բազրկեաննները յըմմէն տեղ ասացին, թէ աթար ա բերի։ Սաղ քաղաքացիք ժողվան էկան, հա էրեցին, հուռա էրեցին, ծիծղացին։ Ջրեց բեռները բերեց բազրկեան բաշու դուռը թաւիեց։

Բազրկեանն ըսեց. Որդի, թող ծառաները տեղաւորին, դու քրտնած ես, ներս արի։

—Ձէ, ասեց, չեղած բան ա, քանի օր իմ մէկ բեռը դուս ա, ես նես պիտի չիգամ։ Ջրեց բիրադի բեռները, էն լաւ օթախի

մէջ, նոր էկաւ բազրկեանպաշու մօտ նստաւ։

Երկու օրից յետ, բազրկեան բաշին Խելքից շատին ասեց. Բազրկեանները էսօր կերթան թագաւորին տեսութեն, ես էլ կերթամ, կերթամ, դու էլ կերթաս դիւքանից լաւ ճոթեր կըդնես բողնոցի մէջ, ծածկոց կը քաշես վրէն, կը բերես։

Բազրկեան բաշին օր գնաց, Խելքից շատն յետաւ չորս հատ աթար դրեց բոթնոցի մէջը, խաս ծածկոց քաշեց վրէն, բերեց տեսաւ օր եռեսուն ինը բազրկանի ընծէն էլ էկեր էր, բերեց բիրադնից վերև դրեց։ Թագաւորը իրաւունք տվեց բանալու, բացեցին, էտոր ընծէն օր աթար էր դրած մէջը՝ թագաւորը հերոսոտաւ։

Ըսեց. Ինձի ինչ համարեցիր, օր էտ աթարը բերեցիր, թէ հայվան կը համարէր, խօտ դարման բերէր։

Խելքից շատ խնդրվաւ, ըսեց. Իրաւունք տուր, ջարդեմ էտ աթարներ։ Իրաւունք տվեց թագաւորը, ջարդեց աթարները, ամէկու մէջէն չորս հատ անդին քար հանեց, սրբեց, դրեց վար։ Թագաւորի գլոխը ուռաւ, փափախը գլխուց ընկաւ, թէ ես թագաւոր իմ, էտ մէկ քարի կարողութեն չունեմ, էտմալ էլ հարստութեն կէղնի, օր էտ ղղար ընծայ բերից ընձի։ Բազրկեաններն օր էտ քարերը տեսան, մոթնները ճղաւ, արուն թափաւ։ Խելքից շատը հանեց պահման տվեց թագաւորին, թագաւորը կարդաց, օր եռեսուն ինը բազրկեան պահման են գրէ, ինչ աթար առնինք, էն աթարից տանք, մէկ բեռ էտ աթարից տվեր եմ, տարած վառածէն։

Թագաւորն ըսեց բազրկեաններուն, ինչ կասիք։ Ինչ պիտի տաք էտոր աթարներուն դէմ։ Բազրկեաններուն լեզուն բռնվաւ, ըսեցին. Թագաւոր, խիղճ մացեր ա ուրին, մեր կնիկ, երեխեք էլ տանք, չինք ազատվի էտոր ձեռնիցը։

Աբի տես օր, բազրկեան բաշին քիչ ա մացե օր խելքը թռու, կայներ ա կատայ, անպատճառ պիտի առնիմ, ու առնիմ։

Խելքից շատը տեսաւ օր բազրկեան բաշին շատ բանից էլաւ, խանչեց դուս հանեց, ասեց. Բազրկեան բաշի, մի շատ բարկանայ, էտ աթարից չեմ տվէ, խամ աթար եմ տվէ։

Բազրկեան-բաշին ըսեց. Բա ինչ էնինք։

Ըսեց. Օր շատ ոտքդ, ձեռքդ գըլխին, բախշա, խամ աթար իմ տվէ։

Թագաւոր, վազիր-նազիրով մէջ ընկան, բարիշութեն էգկեցին մէջները, շատ որ ոտ ընկան, բազրկեան բաշին բաշխեց։ Պայմանը տվեցին, ճղեցին։ Թագաւորից շնորհակալութեն առան ու բիրադի յետեան գնացին։

Բազրկեան բաշին էկաւ ու հարսանըքի թատարուք էրեց,

հարսանիք բռնեցին. ևօթն օր ևօթ գիշեր հարսնիք էրեցին, էն հասաւ ուր մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։

Աստըծուց յիրեք խնձոր իջաւ, մէկը ըսողին, մէկ լսողին, մէկ անկաճ անողին։

ՀԻՒԴԱԹԻ ՋԱԼԸՄ ԹԱԳԱՒՈՐԸ

(Ղազնաճար, Մանազկերտցիներ *)

Ժամանակով մէկ թագաւոր կեղնի, անուն Հիւդաթի Ջալըմ։ Մէկ օր բարկութեն կը բռնայ, ուր տղի գլոխ կը զարկայ։ Վազիրի վրէն կը գնայ, կասայ. Վազիր, ինձի մէկ օղորթից հեքեաթ ասող կը բերիս, օր ինձ հեքեաթ ասա, էս գիշեր անցընի, օղորթից ըլնի, օր սաից էղաւ՝ քու գլոխդ էլ կը զարկեմ։ Վազիրը յէլաւ ընկաւ քաղքի մէջ, դըվորվի զըվըռնեց, ասող չեղաւ, դարձաւ շիվար էկաւ ուր տուն։

Ախչիկն ըսեց վազիրին. Վազիր, ինչի յըմալ շիվար ես։

Ըսեց. Շիվար չեղնիմ ինչ էնիմ, թագաւոր օղորթից հեքեաթ ասող կուզայ, ասող չկայ, իմ գլոխ կը զարկայ։

Ըսեց. Քու տունը շինվի, գնա Բալալի Սելիմ տաբ, ուր գլխու դալած ասա՝ բոլ ա չուրի լուս։

Վազիրը յէլաւ գնաց Սելիմին դանչեց։

Ասեց. Սելիմ, թագաւորը օղորթից հեքեաթ ասող կուզէ, գաս էսօր ասես։

Ասեց. Կիգամ։

Առաւ Սելիմին գնաց։

Թագաւոր ասեց. Բերիր, վազիր։

Ասեց. Բերի, Սելիմն եմ բերի։

Ասեց. Սելիմ, օղորթից կասես թէ սաից։ Սուտ էղնի՝ գլոխդ կը զարկեմ։

---

*) Պատմեց 1912 թ. Յուլիսի 15-ին Ղազնաճար գիւղում Գոյն Նիկողայոս Պետրոսեանը։

Ասեց. Թագաւոր, օղորթից, բիրադի տեղեն, տեղեն, իսպաթով ասիմ։

—Տէ, ասեց, ասա։

Ասեց. Թագաւոր, ես աչք քցեցի իմ հօրեղբօր աղչկան, իրեք տարի զօռով անճախ իմ հօրեղբօր աղչիկը առայ. բերեցին, պատրաստութեն տեսան, իմ հարսանիքը էրեցին։ Հասնիքն օր պրծան, էն գիշերն օր մենք պէտք է էրթենք, մեր դռշակ քնենք, բիրդան մէկ ցաւ պատահաւ ընձի. չորս ամիս գիշեր ցերեկ ես տեղիս միջից չելայ կանայ (կայնայ)։

Մէկ օր էրածս տեսայ, օր Պապիկ իմ գլխու վերև կայնուկ էր, ըսեց. Սելիմ, էտ ինչ օր էս ընկէ։

Ասի. Պապէ, կը տեսնիս ինչ օր էմ ընկէ։

Պապէն ձեռք քեսեց իմ քամակի վրէն, սաղցաւ։

Ըսեց. Սելիմ, պըտի սաղնաս, հըմը պըտի Մըսըը էրթաս, քու ձևռնէն էլ մէ մենծ խաթայ գիգայ։

Ըսեց. Թագաւոր, յիմցայ իմալ եմ սաղցէ, ինչ օր մօրից էղնինք։

Ջէն տվեցի, ասի Հօրեղբօր աղչիկ։

Ասեց. Ջան, Սելիմ, քու ձէն զվարթ էկաւ։

Ըսի. Սաղցիր եմ, շորերը բի, ես հագնիմ։

Շորերը բերեց հագայ, գնացի քաղքի մէջ։ Գացի զրվըռնեցի, մէկ քարվան պատահաւ։

Ասի. Էտ ինչ քարվան ա։

Ասեցին. Էտ Մսըրայ քարվան ա, Մըսըը կերթայ։ Ընկայ էտ քարվանի յետեն ու գացի Մըսըը։ Թէ մէկ օր, թէ հինգ օր, գացինք հասանք Մըսըը։ Էն վախտ հասանք Մսըը, օր Մսըրայ թագաւորի վրէն կռիւ են էկած։ Մըսըրայ թագաւոր յաղթվեր էր։ Ինչ ղզըը օր զարկը, ճամփորդ մարդիկ կայլին, կը տանէր, կռիւ կիտեր անել։ Էկան մեզի ժողվեցին, տարան կռիւ։ Մենք որ գացինք, յաղթվանք, մեզի բռնին տարան յեսիր։ Յեսիրի տեղից մենք փախանք, ընկանք սարեր, մէշէք, կանանչ ուտելով ապրանք։ Մէկ օր գացինք մէկ տեղ, մարդիկ էկան մեզի բռնեցին տարան։ Տարան դրեցին զաֆասի մէջ, մեր յառէջ չամիչ ու խուրմա լըցեցին, կերցուցին։ Մէկ օր էրածին տեսայ, Պապէն իմ գլխու վերև կայնուկ էր։

—Հը, ըսեց, Սելիմ, ինչ օրի ես ընկէ, Պապէն մտեհաճն ես էրի։

—Վայ, ասեցի, Պապի, տեսնիս իմ նեղութեն։

Ասեց. Սելիմ, ձեռքս կը քսեմ քու ձեռքիդ վրէն, քեզի ուժ կեղնի, կը քաշես, էն ճիւղը կը կոտրի, էտ տեղից դուրս կիգաս,

կացինը կը վերուս, կը զարկես քու ընկերոջ ոտքատ ճուղն էլ կը կոտրես, կը փախնիք, էտոնք մարդակեր են, ձեզ կըպահին խլաւնաք, օր քառսուն օրից, ետ ձեզի մորթին ուտեն։ Կը փախնիք, ձեր յետևէն գընկնին, օր հասաք ջուր ընցաք, էլ չեն իզայ։ Համա, Սէլիմ, ըսեց քու ձեռնէն մէկ մեծ խաթայ դուս կիգայ։

Ուրտայ (զարթեցի), յիմցայ օր էրած էր, Պապէն չկէր։ Ձեռս թալեցի, քաշեցի, ոտքատ դուռ կոտրաւ։ Ձօռով գլոխս ի հանեցի, էտ ոտքատից դուս յելայ, կացին վերցուցի, զարկեցի, իմ ընկերոջ ոտքատ ճուղն էլ կոտրեցի, էն էլ հանեցի։

Ասեց. Թագաւոր, չՙես հաւատայ, էն ոտքատի ճուղը իմ կուշտ ձգեր ա, արի տես, օր հաւատաս։ Թագաւոր իշկեց, տեսաւ օր ճղեր էր։

Էտեղից յելանք ես ու իմ ընկեր փախանք։ Մարդակերքեր ընկան մեր յետևէն։ Փախանք գնացինք ջուրն ընցանք։ ընտոնք էկան ժողովան ջրի ափն ու ետ դարձան։ Մենք գացինք մէշէքներով մէկ ծովու ոտաստ էկանք, էտ ծով շատ ձուկ կար, բերեցինք սըլա գործեցինք, կը տանենք, կը զարկինք ծովու ջրի մէջ, ձկներ գընկնեն սըլի մէջ, կը բռնինք, կը բերենք, կուտինք։ Էն մէկ տեղ, ծովու ափ քար կար, գացի պառկայ քարի վրէն, սըլէն, զարկեցի ջրի մէջ, ինչքան օր քարից կախ ընկայ, սըլէն խորուընկ զարկի ջրի մէջ, բիրդան ես քարից պրծայ ընկայ սըլի մէջ, ընկայ ծովու յերես։ Թէ մէկ օր, թէ հինգ օր, առաւ էտ սըլէն ու ինձի էտ ծովի յերես պըտըտցուց։ Մէկ օր տարաւ գիշերվայ մէջ տեղը մի կղզի հանեց. սըլէն գնաց դիպաւ մէկ ծառի, մուխ գիշեր էր, թագաւոր, ըսեց, ծառը բռնեցի ու մացի, չուրի լուսցաւ, տեսա օր յելեր էր ղրաղ, նոր սըլից յիչայ, գացի էտ ծովու աղէն։ Շատ զարմանալի պտուղներ կէր, էտ պտուղներուց կերայ, ապրայ մէկ իրեք օր, չորս օր։ Մէկ էլ տեսայ, մէկ գիշեր, մէկ Ջանավար, դուս էկաւ ծովուց, մէ անգին քար կար բերանը, բերեց դրեց մէկ ծառի տակ, ինք ընկաւ էտ ծովու աղէն (կղզին) պտուղներ ուտելու, քարը լուս կիտեր, իմալ օր ցերեկ, էն էլ պտուղներ կը ժողվէր, կուտէր։

Ասեց. Թագաւոր, գնացի էտ քարը վերցուցի, դրեցի ջէբս, լուս տվեց, դրեցի բերանս՝ էլ ետ լուս տվեց, որտեղ դրեցի լուս տվեց, իլլաճս կտրվաւ, թագաւոր, թութակս (ազդր) ճղեցի, ճխտեցի։ Լուսն օր կըտրվաւ, էտ Ջանավար գոռաց, ու էկաւ մէկ քեալա զարկեց էտ ծառին ու սատկաւ տեղոց տեղ։ Ընդրնէ իրեք օրից, չորս օրից ետ մէկ էլ տեսայ իրեք հատ հաւքեղէն կերպի էկան, յիչան, ուրանց հաւքեղէն շապկներ հանեցին, դրեցին էտ ծառի տակ, ես էն մէկի շապիկ գողացայ։ Յելան էրկուսը ուրանց

շապկընեը հագան, էն մէկին չեղաւ, շատ զըվըռնեցին, չգտան, ասեցին. կայ ու չկայ Սելիմն է գողցէ։ Թագաւոր միալար կասէը. Գիւնալիբանին պիտի տամ Սելիմին։ Սելիմ, թէ դու ես վերուցէ, արի։

Ասեց. Թագաւոր, ծառից յիջայ, գացի, տարա շապիկ տվեցի, հագաւ, յիրեքով մէկ էղան, ընձի առան ուրենց թևերու վրէն ու տարան։ Տարան ուրենց թագաւորի մօտ, ըսեցին. Սելիմ բերեր ենք։ Թագաւոր բերից պղտի աղչիկ Գիւնալիբանին տվեց ընձի։

Բերեցին թագաւորութեն տվեցին ինձի, ասեցին. Սելիմ հոզածին ա, շուտ կը հալխվորնայ։ Զորս տարի թագաւորութեն էրեցի, ըսեց. Չես հաւատայ, էս էլ իմ թագաւորութենի բազբինդն ա։ Թագաւոր իշկեց, ասեց. Սելիմ, թագաւոր էլ էղեր ես։

Թագաւորը իրեն մտքին մէջ ասեց. Ես թագաւոր եմ, անդին քար, բաղբանդ չունեմ, Սելիմին ունի, գլոխը կըզարնեմ, ձեռից կառնեմ։

Ըսեց. Թագաւոր, մէ օր յանկարծ իմ հօրեղբօր աղչիկ իմ միտքը ընկաւ։ Ես Գիւնալիբանին ասեցի, թէ ես պէտք ա էրթամ իմ հօր երկիր։

Գիւնալիբանին ուր հօր ըսեց, թէ Սելիմ կուզէ էրթայ ուր հօր երկիր։ Թագաւորը իրաւունք տվեց էրթըլու։ Թագաւոր, իրեք աղչիկ, իրեք տղէն, ամէն մէկ մէկ քար փէշքէշ տվեցին ու ինձի ճամփու դրեցին՝ էկայ։ Էկայ էն ժամանակը հասայ, որ մուրճն առեր էր գետին, էկայ գնացի իմ տունը, տեսայ նէա կրակ կար, նէա ճրագ, ձէն տվեցի, թէ հօրեղբօր աղչիկ։

Ըսեց. Ջան, Սելիմ, քու ձէնն էկաւ։

Ասեցի. Ճրագ էրայ։

Ասեց. Ընձի ոըտեն ա ճրագ ու կրակ, որ ես ճըրագ էնիմ։

Ասեցի, թէ էս մօտիկ տեղրանք ձէթ կայ ծախու։

Ասաց. Թագաւորի ձիթխած կը ծախեն։

Ըսեց. Թագաւոր, քու ժամանակ չէր, քու հօր ժամանակն էր։

Գնացի. Մէկ նուկի ինձի ձէթ տվէք։ Ուստէն գնաց կարասի մօտ չափելու, ինչքան օր ուզեցաւ չափել, կարասը շրջաւ, ձէթ բիրաղի թափաւ, ընձի ծեծեցին, տարան բռնեցին։ Քու հէրն օր մեռաւ, դու թագաւոր նստար, մանեփըստ էրեցիր, ընձի բանդից հանեցիր։

Թագաւոր մտածեց, թէ ես ինչ էնեմ, օր էտոր գլոխը կտրեմ, էտ անդին քարերը ձեռնից առնեմ։

Ասեց. Եաւաշ ես ըսեմ էտոր. Ես զուլումքիր թագաւոր եմ, թէ աստալէթ (խաղարար) թագաւոր եմ։ Թէ ասեց զուլումքեար ես, կասեմ. Բա քըզի բանտից ինչի հանեցի, թէ օր ըսեց աստալէթ

թագաւոր իս, կասեմ. Բա իմ տղի գլուխ ընչի՞ զարկեցի։

Ասեց. Սելիմ, ես աստալաթ թագաւոր իմ, թէ զուլումքար թագաւոր իմ։

Ասեց. Թագաւոր, արի դու նստի իմ տեղ, ես նստիմ քու տեղ, էտ պատասխան տամ։

Թագաւորի տեղ բանցր էր, Սելիմի տեղ ցածր էր։ Սելիմն էլ մտածեց, թէ ըսիմ զուլումքար թագաւոր իս, պըտի ըսէ, քեզի բանտից ընչի՞ հանեցի, թէ ըսիմ աստալաթ իս, պտի ըսէ. Բա իմ տղի գլուխ ընչի՞ զարկեցի։

Ասեց. Դէհ, ասա տեսնինք։

Թագաւորի գլխու վերև մէ չուգունից թուփուզ կախուկ էր։

Ասեց. Դէհ ասա։

Ասեց. Եաւաշ էս էրկու մարդ ընցնի, նոր ասեմ։

Թագաւոր ասեց. Իմ պալատի մէջ ինչ էրկու մարդ պըտի էղնի, աչք պրծաւ ընտռնց, թուփուզ իջուց զարկեց թագաւորին ըսպանեց։ Ուզեցան օր յելլին Սելիմին բռնին ըսպանին, յելլողին զարկեց թուփուզով, էցկեց (վայր ձգեց), տեսան օր իլլաճ չէր էղնէ, բերեցին մինըրի հիմերը քանդեցին, բերեցին բարութ լըցեցին, օր բարութով թալին, Սելիմի աչքը պրծաւ աներոջ տան իմտաատին։ Մէկ էլ տեսաւ, թագաւորի իրեք տղէն հաւքեղէն կերպով էկան։

—Հա, ըսեցին, Սելիմ, էտ ինչ օր ես ընկէ։

Ասեց. Կըտեսնիք օր բարութ լըցեցին, ֆիթիլ դրեցին, օր պըտի ընձի ըսպանին։

Սելիմի հետ սկսեցին եարանութեն էնել, չուրի ֆիթիլներ դրեցին մընեըէն, թալեցին, թագաւորի տղէքներ մինըրի գլխուց վերցուցին տարան։

Տարան քաղքի ղրաղ դրեցին, ըսին. Սելիմ, ինչ կասես։

Ասեց. Գացէք իմ հօրեղբօր աղչիկ բերէք, էսքան ժամանակ ես կարօտով եմ։

Էկան հօրեղբօր աղչիկ վերցուցին տարան ուրենց էրկիր։ Բերեցին Սելիմին էլմանց դրին թագաւոր, ասին. Սելիմ հողածին ա, շուտ կը հալիվորնայ. Թող մէ ժամանակ թագաւորութէն էնա։ Էն հասաւ ուր մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։

ԽՈՃԱ ԱՀԻ

(Ղազնաճար, Մանազկերտցիներ*)

Ժամանակով մէկ բաղրկեան կեղի, անունը Խոջա-Ալի։ Էտի կերթայ խրիտ էնելու, խրիտից օր կը դառնայ կիգայ, ճամփու մէջ տեղ ձէն կիտան, թէ Խոջա, եռեսուն ինոը մարդ ըսպաններ եմ, քեզ էլ կըսպանեմ, կեղնի քառասուն։ Մէկ էլ ձէն կուտայ, եռսուն ինոը մարդ ըսպանիր եմ, քեզի էլ կսպանեմ, կեղնի քառասուն, մէկ էլ ձէն կուտայ, եռսուն ինոը մարդ ըսպաներ եմ, քեզի էլ կըսպանիմ, կէղնի քառասուն։ Կը դառնան շուռ կիգան էտերանք, գաղի մէջ իսանի մէկ չոր քեալա կը գտնեն։

Նոքարին կասայ. Էտի սըխկայ, լից շուշէն։ Ու գիգան ուրանց տուն կը հասնին։ Ինչքան (երբ) օր բեռներ կը թափեն, աղչիկ կիգայ էտ շուշէն կը վերցու, քիչ կառնի կուտայ ուր լեզուն, ու շուշէն կը տանայ ուր տեղ կը դնայ։ Զորս կամ հինգ ամիս գընցընի, էն մէկ օր Խոջէն ջուր գուզէ, ախչիկ ջուր կը տանայ լվացվելու։ Խոջէն կը տեսնի օր ախչիկ էրեխով ա, թուր կը քաշայ կուգայ, աղչկան կասայ. Գլուխդ կը կըտրեմ, քու հանգամանքդ դուզ ասա, էտ ում հետ ես նստէ, կայնէ։

Աղչիկ կասա. Խոջա, ըսկի մէկ մարդու հետ ես չեմ նստէ կայնէ, էն օր, օր դու էկար, շուշի մէջ մէկ սիվատակ դեղ կար, լեզուս տվեցի, էնդերընէ է էղէ։ Խոջէն թուր կը զարնէ տեղ՝ կը դառնայ, գիմնայ օր էն քեալլից է էղէ։ Կը մնայ ինոը ամիսն օր կը թըմբմի, աղջիկ կը պառկի, կը բերայ մէկ տղայ. էղնելու պաշտան, ձէն կիտայ թէ ես տկլոզ մեռայ, ինծի շոր բերէք։ Շոր օր կը բերին կը հագուն, ձէն կուտայ. Ես անօթի մեռայ, ինծի հաց տվէք։

Կը մնայ իրկուն Խոջէն դիւքնից կիգայ։

Կասայ. Պապէ, ինծի ինչի՞ չես տանէ դիւքեան։ Մէկ օր կամ տասն օր կասայ, պապէն յանկաճ չի էնաւ։ Իլլաճ կը կրտվի,

---

Պատմեց *1912* թ. Յուլիսի *16*-ին Ղազնաճար գիւղում նոյն Նիկողայոս Պետոսեանը։

էն մէկ օր հետը կը տանայ։ Հետը օր կը տանայ, թագաւորի տղէն ու վազիրին ջրինթ կը խաղան, կասայ. Պապէ, յելի էրթանք թամաշա էնինք։

Կասա. Թափտըղ (գտնված), ձիան ձեղի կը տըրտրեն, դու չը կարնաս իգաս։

Կըսէ. Քու տունը շինվի, գելնիմ մէկ բանձր բադանի վրէն կը կայնիմ։ Գելնեն կերթան, ինքն ու պապէն կը կայնեն մէկ բանցր բադանի վրայ։ Վազիրի տղէն ջրինթ կը զարկայ, թագաւորի տղի ձիու փորին կը քեսնի։

Թափտըղ կասայ. Պապէ, տեսար վազիրի տղէն զարկեց թագաւորի տղի ձիու քուռկու աչք փորի մէջ քոռցուց։

Թագաւորի տղէն լսեց. էկաւ ասեց. Ոջա, դու ինչ գինաս թէ իմ ձիու քուռկի աչք քոռցուց։

Ասեց. Ես չեմ ասի, իտա Թափտըղ կասայ։

Թափտըղն ասեց. Ես կասեմ, աչ յաչք քոռցուց, ճակատ չալ ա քուռկու, յետի ձախ ոտ չալ ա, տասն օրից ետ էլ կը ծնի, ասեց։

Թագաւորի տղէն գնաց թագաւորին վազիրի տղի վրայ գանգատ էրից, թէ վազիրի տղէն զարկեց իմ ձիու քուռկու աչք քոռցուց։

Ասեց. Որդի, դու ինչ գինաս փորու մէջ քուռցուցեր ա։

Ասեց. Ոջա-Ալին ասեց։

Ճամբեց Ոջա-Ալուն խանչեց բերեց։ Ասեց Թափտըղ էտ ինչ օյին էր հանիր իմ գըլոխը։

Ասեց. Պապէ, մի վախենայ, էլի կասեմ, ու ես էլ կիդամ։

Առաւ Թափտըղին հետ գնաց։

Գնաց թագաւորի դիվան, թագաւորին գլոխ տվեց։

Ըսեց. Ոջա, դու էտ ինչ էս ասէ, թէ ձիու քուռկու աչք քոռցեր ա։

Ասեց. Էտ ես չեմ ասէ, էտ Թափտըղ կասէ։

Ասեց. Թափտըղ, դու ինչ գիտցար, օր ձիու քուռկու աչք քոռցաւ։

Ասեց. Ես գինամ աչ աչք քոռցեր ա, ճակատ չալ ա, ձախ ոտ չալ ա, քուռակն էլ որձ ա։ Տասն օրից ետ էլ ղսրախ կը ծնի։

Ըսեց. Ոջա, Թափտըղ էլ չեմ իտա քեզի։ Կը պահեմ, թէ օղորդ էղաւ՝ պրծաւ, թէ օղորդ չեղաւ՝ գլոխը կը զարկեմ։

Պահեց, տասն օրից էտ ղսրախ ծնաւ, ծնաւ օր Թափտըղի ասած բիրադի օղորթ էր։ Թափտըղին էլ չավեց Ոջին, պահեց ուր յառէջ։

Թագաւորի աղչիկ լսեց, օր Թափտըղ էտ քուռկու վրայով խօսեր էր, օղորթ էր գուս էկէ։ Ուր շորեր ճըղըրտելով գիր գրեր

էր թագաւորին, թէ էտ Թափտըղ պահեր ես ինձի համար, ես էտոր չեմ առնէ, աստվոր չեմ մոխ։ Տեսնիս օր ես կուս եմ, որ՛ մարդու մորթած միսն էլ չեմ ուտէ։

Ասեց. Անիծված, էտ իմ Թափտըղ ա, պահեր եմ ինձի համար խոսքեր յիմնալու, խո ես քու համար չեմ պահեր ի։

Մէկ օր թագաւորն ու Թափտըղ յելան գացին Ծաս-բախչէն։ Ախչիկն օր յիմցաւ, շատ եաման ուր շորեր ճղրտեց, թէ դու պահեր ես ինձի համար։

Ասեց. Թագաւոր, քեվա, յանկանճ մի էնէ։ Գացին Ծաս-բախչան զըվըռնեցին, էկան հաւուզի վրէն, էրկու ձուկ փաթթըվան յիրար, ծափ տվեցին, թռան բանձրացան, ու ընկան ջրի մէջ։

Թագաւորն ասեց. Թափտըղ, ինչ ասին էտ ձկներ։

Ասեց. Թագաւոր, ձուկ ին, ես ինչ գինամ ինչ ասին։

Ըսեց. Դու ինչ գիտցար ձիու փորու մէջ քուռկու աչք քոռցաւ, էտի չը գինաս։

Ըսեց. Նստի ասեմ, կը փոշմընիս։

Ըսեց. Ասա։

Ըսեց. Ժամանակով քու պէս մէկ թագաւոր կար, էն թագաւոր ուր համար մէկ շահմար օձ կը պահէր, գիշեր ցերեկ ուր մօտն էր, էղաւ օր թագաւորը ծերացաւ, ինքը թախտից յիջաւ, տղէն դրեց թագաւոր։ Ըսեց. Որդի, իմ շահմարը միշտ քու հետ կըպահես, քեզի լաւ կը պահա։ Տղէն բիւրադի վազիրներ փոխեց, մէկ օր էտ թագա վազիրներ յելան գացին սէյր էնելու թագաւորի հետ։ Վազիրի մէկը ըսեց, թէ թագաւոր, էտ մունտաւ ջանաւարը ինչ է առեր ես քու հետ ման կածես։

Ասեց. Ախր իմ հէրն ա թամպահ էրէ։

Ասեց. Ընտոնք անխելք մարդ են, էտ ջանաւարը պըտի թագաւորութեն հաստատ պահայ։

Ասեց. Բա ինչ էնիմ էտոր։

Ըսեց. Թուր թալ կտրա, թալ դէն։

Գաշեց թագաւոր թուր թալեց, էրից էրկու կտոր, թալեց դէն։

Շահմարն էլ դարձաւ թագաւորի սրտից զարկեց, մէջքից տվեց դուս, թագաւոր մեռաւ։ Հաւար տարան մեծ թագաւորին, թէ արի, քու տղէն շահմարին ըսպանեց, էն էլ քու տղին։

Թագաւորը յելաւ էկաւ, տեսաւ օր շահմարը մտեր էր քարի տակ, ըսեց. Շահմար, յելի արի, էրթանք, ես ու դու առաջվայ պէս կառավարվենք։

Ըսեց. Չէ, նէյա դու քու տղի գերեզման կը մոռնաս, նէյա ես իմ պոչ կը մոռնամ։

Ըսեց. Թագաւոր, էն թագաւորը փոշմընաւ, թէ չը փոշմընաւ

ուր տղի թագաւոր դնելը։ Ըսեց. Դու էլ կը փոշմընիս, յետի երթանք։

Էլան թագաւորն ու Թափտըղ էկան պալատ։ Մէ քանի օրից յետ էլի գնացին խաս պախչէն, էլման թագաւորի աղչիկ ուր շորեր ճըղըրտեց, ըսեց. Դու Աստված չունիս, ես կուս եմ, դու էտ Թափտըղ պահեր ես ընձի համար։

Ըսեց. Էտի իմ Թափտըղն ա, քեզի համար չեմ պահէ։

Ընցան գնացին խաս պախչէն, էկան ղըվըռնեցին, հաւուղի վրէն նստան, տեսան էրկու ձուկ փաթթվան յիրար, ծայի տվին, թռան ընկան հաւուղի մէջ։

Թագաւորն ըսեց. Էտ ինչ ըսին, Թափտըղ։

Ըսեց. Ես ինչ գինամ ինչ ըսին։

Ըսեց. Դու ինչ գիտցար քուռկու աչք ուր մօր փորու մէջ քոռցաւ, էտի չես գինա։

Ըսեց. Թագաւոր, նստէ էտոր առարկէն ըսիմ, կը փոշմընիս։

Ըսեց. Ժամանակով մէ անբախտ դերձակ կար, էնքան անբախտ էր, օր ըսկի մուշտարի չունէր. փողոցներուց ճօթի կտորտանք կը ժողվէր, կը բերէր կը կարէր, ուրիշներու էն խաս կտորից թանգ կը ծախվէր։ Մէկ օր յետաւ տեսաւ օր մէկ արծիւ յիջեր էր Բատանի պատին (պարսպի պատին)։ Տեսաւ օր էրկու գազ ղնավուղ փաթթուկ էր ոտ, ըսեց. Էրթամ էտի ղնավուղ պըծուս բերիմ, կարիմ, ծախիմ, ինձի աշխատանք կէղնի։ Գնաց ինչ ղըղըր օր բռնեց, առծիւ թռաւ, անբախտ դերձըկին տարաւ մէկ անվերի մէշի մէջ թալեց, ուրենք գնաց։ Դարզին դէս դէն իշկեց, տեսաւ օր մէկ դեխից ծուխ գելնէր, գնաց տեսաւ օր շինուրթեն էր, մտաւ մէջ, տեսաւ կերակուր, հաց, յըմէն մէկ բան հազըր էր, ու մարդ չկէր։ Հաց կերաւ ու գնաց մէկ տախտի տակ տապաւ։ Տեսաւ յիրկուն յիրեք հատ հուրի էկան։ Մեծ քուր պզտի քրոջ ըսեց. Վայ աղչի, անբախտ դերձիկ բերեր են, թողեր իմ մեջի մէջ, գնա բի, բախտաւորցունք։ Գնաց էն ղըղըր ղըվըռնեց՝ չը գըտաւ։ Դարձաւ էկաւ, ըսեց. Չկայ։ Մէկէլ քրոջն էլ ճամբեց, էն էլ ղըվըռնեց, էկաւ ըսաց. Չկայ։ Յետաւ օր յինքը պըտի էրթէր, անբախտ դերձիկը նոր տախտի տակից դուս էկաւ, ըսեց. Խանըմ, էկիր եմ։

Ըսեց. Էն լաւ օր էկիր ես։ Նստան կերան, խմին, քէֆ էրեցին։ Քնելու վախտ պզտիկ քրոջ ասեց. Քու տեղդ տար թալ, անբախտ դերձիկին բախտաւորցու։ Տարաւ թալեց, ինչ իլլաճ էրեց, դերձիկ չգնաց ընտոր մօտ։

Աղչիկ էկաւ ըսեց. Չէկաւ իմ մօտ։

Միջնէկ քրոջ ըսեց. Դու տար բախտաւորցու։ Ընտոր մօտն էլ չգնաց։

Ըսեց. Իմ մօտն էլ չեկաւ։

Մեծ քուրն ասեց. Իմ մօտ կը քնէ։

Ասեց. Հա։

Մեծ քուր ուր տեղ թալեց՝ ըսեց. Նէտ իմ մէջքի դէն կիդաս, նէտ իմ յառջի դէն կիդաս, նէտ իմ գլխու դէն կիդաս, պիտի իմ եօրղան բարձրցուս՝ իմ յոտներու դէն իդաս։ Ինչ ղըըր օր եօրղան բանձրցուց, լանգով (քացի) զարկեց դերձըկի գլխուն, դերձիկ տեսաւ ուր դիւքնի դուռ կայնուկ էր։

—Թագաւոր, ասեց, էն դերձիկ ուր ընդոնց մօտ չքնել փոշմընաւ, թէ չփոշմընաւ։ Ընդոր պէս դու էլ կը փոշմընիս, ըսեց. Յելի էրթանք։

Յելան էկան թագաւորի պալատ։

Մէկ քանի օրից յէտ, էլի յելան գացին խասպախչէն։ Թագաւորի աղչիկ մէկ զալմաղալ դրեց, օր դու էտ պահեր ես ընձի համար, ես կուս եմ։

Ասեց. Անիծած, էտ իմ Թապաըղն ա, էտի ինձի համար եմ պահէ, քեզի համար չէ։

Թափտըղն ասեց. Քելա, թագաւոր, յանկաճ մ'էնի։ Էկան խաս պախչէն զվռնան, էկան հաւուղի վրէն նատան։ Ձկներ փաթթըվան յիրար, ծափ տվին, թռան, ընկան ջրի մէջ։

Թագաւորն ասեց. Էտ ինչ ըսին, Թափտըղ։

Ըսեց. Ես ինչ գինամ ինչ ըսին, թագաւոր, ձուկ ին, թռան, ընկան։

Ըսեց. Դու ինչի գիտցար քըռկու աչք մօր փորու մէջ քոռցաւ, էտ ինչի չես գինայ։

Ասեց. Թագաւոր, կասեմ, համա կը փոշմընիս։

Ասեց. Աստ։

Ասեց. Թագաւոր, ժամանակով քու պէս մէկ թագաւոր կար, ըսեց. Էտ թագաւորին մէկ տուտի ղուշ ունէր, օրերից մէկ օր, էրկու ղուշ էկան յիջան թագաւորի փանջարէն, ղշերը իրար հետ խօսացին, ըսեց. Ինչ կասեն, տուտի, էտոնք։

Ըսեց. Էտոնք իմ հօր քրոջ տղէքներն են, հարսնիք կայ, էկերին ինձի կը խանչեն։

Ըսեց. Տուտի, թողեմ էրթաս չիգաս։

Ըսեց. Գիգամ, թագաւոր։

—Դէհ, ըսեց, օր գիգաս, ձեր երկրիցը ինձի համար մէկ ընծայ բեր։ Շնորհակալութեն առաւ թագաւորից, ու թռաւ գընաց։ Գնաց տասն օր, եա տասնըհինգ օր ծնաց. էն մէկ օր թագաւորը տեսաւ օր տուտին էկաւ. բերեց մէկ խնձորի կուտ, դրեց թագաւորի չոքին։ Թագաւորը խանչեց բաղմանչուն, ասեց, Տար

մէկ տեղ տնկէ։ Տարաւ տնկեց, չորս տարի, եա հինգ տարի ճնաց, տեսաւ օր խնձորը բար տվեց, բախպանչուն մէկ շատ անպէտք կնիկ ուներ, մէկ օր թագաւորը տեսեր էր, խնձորն օր հասաւ, բաղբանչին քաղեց, չորս հատ դրեց բոքնոցի մէջ, էկաւ հաւուզի մօտ, դրեց լվացվաւ, օձն յելաւ խընձորները դեղեց. բաղբանչին խաբար չեղաւ, բերից դրեց թագաւորի առէջ, ըսեց. Քու ղղու բերած մատանն ա (երախայրիք)։

Թագաւորն ասեց. Տարէք տվէք իմ հէր ծէր ա, թըղ իմ հէր յառէջ ուտա։ Ինչ ղդար օր տարան տվին՝ կերաւ, տեղեց տեղ չաթլամիշ էղաւ։ Հաւար բերին թագաւորին թէ քու հէր օր խընձորը կերաւ՝ չաթլամիշ էղաւ։ Թագաւոր հերսոտաւ, ղղու վիզ քաշեց։ Բաղպանչին ուր կնկան շատ դառ ծեծեց, չանին օր հասաւ, ըսեց. Էրթամ էն խնձորից օր թագաւորի հէրը կերաւ մեռաւ, ես էլ ուտեմ, մեռնիմ։ Էկաւ քանի կերաւ՝ չմեռաւ, ըսեց. Էրթամ ջուր խմեմ, բալի նոր մեռնիմ։ Լըվացվաւ, ջուր խմեց, ուր ոուրիաթ ջրի մէջ տեսաւ, օր շատ խորոտցեր էր։ Նստաւ հաւուզի մօտ. բախպանչին էկաւ տեսաւ օր մէկ խանըմ նստուկ էր հաւուզի մօտ, զըվըռնեց էկաւ, բան չասեց. մէկ էլ զըվըռնեց էկաւ, տեսաւ նստուկ էր՝ բան չասեց, մէկ էլ զըվըռնեց էկաւ, ըսեց. Ծանըմ, յելի, մուրճն ա, բաղի դուռը փակեմ։

Ըսեց. Ես խանում չեմ, ընձի չը ճանչընաս։

Ըսեց. Օր դու չես խանըմ, բա որ կայ քեզնէ լաւ խանըմ։

Ըսեց. Ես քու կնիկն եմ։

Էսեց. Վայ, Աստված չտայ դու կնկայ պէս էղնիս, իմ կնկայ անուն մի տայ, իմ սիրտ խարնեց։

Դրուստ, ըսեց, ես քու կնիկն եմ, ֆիլան տեղ դու ինձի ծեծեցիր։

Հապա իմաձ էղաւ օր դու խօրօտկըցար։

Ասեց. Էկայ էն թագաւորի հօր կերած խնձորից կերայ, ջուր խմեցի, խօրօտկըցայ։

Բաղպանչին յելաւ մէկ օր գնաց թագաւորի պալատը, տեսաւ օր թագաւորն ու վազիրն ու նազիրը կնկայ բաս կէնեն, էն կասէր իմ կնիկն ա խորոտ, էն կասէր իմ։

Բախպանչին ասեց. Իմ կնիկ ձեր յըմենու կնկոց մօտէն խօրօտ ա։

Թագաւորն ասեց. Էտ ինչ բան էր օր դու ասեցիր, ես մէկ օր տեսայ իմ սիրտ խառնեց, հաց չկարցայ ուտէ։ Քու կնկայ բան օր էրեցիր, էլի իմ սիրտ խառնեց։

Բախպանչին ըսեց. Իմ կնիկ օր քու կնկաց խօրօտ չեղաւ՝ իմ գլոխ զարկ։

Բերեցին տեսան օր բախպանչու կնիկ Թագաւորի կնկանց խօրօտ էր։

Ասեց. Բախպանչի, ես մէկ օր տեսայ քու կնիկ շատ գէշ էր, էտ ինձալ խօրօտկըցաւ։

Ըսեց. Էն խնձորներն օր քու հէր կերաւ՝ օձ դեղեր էր, իմ կնիկ էն խնձորից կերի՝ խօրօտկըցեր ա։

Ասեց. Թագաւոր, էն Թագաւոր ուր տուտու վիզ քաշել փոշմընաւ, թէ չփոշմընաւ։

Ասեց. Ի՞մալ չը փոշմընաւ, օր համ հէր գնաց, համ տուտին գնաց։

Ասեց. Եօթը զատ էն Թագաւորից շատ փոշմընիս, յելի էրթանք։

Յելան էկան։ Էկան ախչկայ ամարաթներու դէն, աղչիկը էլի հրէլէն (աղմուկ) դրեց, թէ դու էտ տղին պահեր ես ընձի համար։

Թափօրդ մէկ ձմերուկ առաւ, ու գնաց աղչկայ ամարաթը, ինքը ու Թագաւորը։ Գացին նստան, Թագաւորից դանակ ուզեց, օր կիսէր էր, Թագաւոր հանեց ու Թանգագին ակունքներով դանակ տվեց։ Թափօրդ էծկեց Թագաւորի զրուցելուն հետ՝ դանակ պահեց։ Մէկ էլ Թագաւորից դանակ ուզեց։

Թագաւոր ըսեց. Տվեցի ախըր։

Թափօրդն ըսեց. Չտվիր։ Դանակը կորաւ, որից հարցուցին, մէկ չասեց թէ իմ մօտն ա։

Թագաւորն ասեց։ Դուներ շինա, տկլոզնանք, տեսնանք դանակ վրիր մօտն ա։ Յառէջ Թափօրդ տկլոզցուն, չգտան, Թագաւորին էլ տկլոզցուց։ Թագաւորի աղչիկ ուր բրդէք (ծամեր) փիտից, թէ դու էտ ինչ բան էր էրեցիք, հըլը ես քու որդին եմ, էտոնք բիրադէ խըլդի ախչիկներ են, ամօթ ա։

Թափօրդն ըսեց. Անկարելի ա, պըտի տկլոզնան։ Եռսունըքիննը չառին էլ տկլոզցուց, բիրադի քսան տարեկան տղայ ին։ Ըսեց. Թագաւոր, ձկներու առաջկէն կը հարցուցեր ընձնէ, փոշմընաը, թէ չը փոշմընար։

Թագաւորը բերեց եռեսունըքիննը չառիոցը գլոխ զարկեց, ախչկան էլ։ Նոր Թափօրդ վերուց գնաց ուր ամարաթ։ Էն հասաւ ուր մուրազին, դու էլ հասնիս քու մուրազին։

ՍԵՆԵՔԵՐԻՄ ԹԱԳԱՒՈՐ

(Բազարճուղ, Ալաշկերտցիներ*)

Ժամանակով մէ թագաւոր կէր. կուռք կը պաշտեր, էնու անունը Սենեքերիմ էր, կը ծիէր Բաղդադ։ Սենեքերիմ թագաւորին ունէր էրկու տղայ, մէկի անուն Սանասար, մէկի՝ Բաղդասար։ Էտի թաքուն զոշուն ժողվեց, գնաց Երուսաղէմայ քաղաքի բոլոր փաթթեց. էտի փաթթեց, նատաւ, քաղաքի մալ, տաւար ճնաց իրա քաղքի մէջ, ճնացին առանց վար ու ցանք, սերմ էլ գետին չը թալին։ Էղաւ որ օրբևերի կնիկ, մէկ տղայ կար, էտոնց ուտելանք շատ էր, ուրանց հարեվան կար՝ շատվոր են, գնաց վախեցաւ, ընտոնց խետ մէկ տեղվաւ։ Էրկու տարի ըսկի քաղաքից դուս չելան, էրկու տարին օր թըմաւ, ունեցած տաւար, ոչխար, յըմէն կերան, խըլյան, մացին անօթի.էլան բռնին էտ հարուստ անէն մէկ աղլիկ, կերան։ Էքսի օր յելան, ըսին. Պառաւ, յէսօր ևա պըտի քեզի մորթենք, ևա քու տղէն։ Էտ պառաւ էլաւ գնաց թագաւորի մօտ, վեկալեց, թէ թագաւոր, քու ըռիաթ անօթուլթենից յիրար կերան։ Վերուց ասաց թէ պառաւ, էտ քաղքի մէջ մէ մարդ չկաը որ գար՝ դու էկար։

Ասեց. Մենք էրկու նաֆար ինք, ևա ընձի պիտի մորթեն, ևա իմ տղին, էն համար ևս վաղայ էկայ։

Թագաւորն էլաւ, մարդ ճամփեց քաղքի մէջ, մենծ մենծ մարդիկ ժողվեց, առաւ էկաւ, հարցուց, թէ ինչի շուտ չեկաք ինձի խաբար բերէք։ Էնոնք ըսեցին, թէ—մենք գինենք թէ դու

Պատմեց *1912* թ. Յուլիսի *12-13*-ին Բազարճուղում, տեղացի Բարսեղ Սահակեան, յիսնամեայ անգրագէտ ծերուկին, որի ծնողները գաղթել են Ալաշկերտի Համսկանայ գիւղից։ Այս հեքեաթը նա սովորել էր իւր հօրից, որ՝ իւր հերթին, սովորել էր Ագիւնա գիւղացի Զուռակցի Դրիգորից, որ գաղթական է եղել Ալաշկերտի Խազու գիւղից։ Այժմ Բարսեղը երկրագործութեամբ է պարապում, եւ ձմեռները յաճախ հեքեաթներ է ասում, թէ այս եւ թէ ուրիշներ։

մեղնէ լաւ գինէր։ Նոր ըտաեղ թագաւորը ալուր բոլ տվեց, տաբան կերան։ Ջահել տղէներ թոմարի ժողվեց բերեց զօրք ուր համար, էլաւ պատարագ տվեց էնել, լուսն օր բացվաւ, ուր զօրք ժողվեց մէկտեղ, ուր զօրքն օր ժողվեց մէկտեղ, ընդոնց սորվըցուց թէ ես չուրի իրաւունք չտամ, չկրակէք։ Մէկ անգամ ձէն տվեց, թէ թվընքնէք կրակէք, էտոնք օր կրակեցին, ես դառցան կայնան. էն կռապաշտ թագաւորի զօշունը առջին դարձաւ յեհոնի վրայ, էտի որ դարձաւ հըմալ ջարդեց, օր արուն էլաւ գնաց։

Կռապաշտ թագաւոր տեսաւ յեհովանց, տեսաւ ուր զօշուն իրար կը ջարդէր, առաւ զօշուն ետ փախաւ, էկաւ խաստաւ ուր տուն. խանչեց ուր մարդիկ բերեց, թէ արէք մեր տղէքներուն անկըճներ տրուֆենք (նշան անենք), մեր կռքերու համար, օր մատաղ անենք։

Էտոր կնիկ կռապաշտ էր, հըմը գիտէր օր Աստված կար երկնուց, խանչեց ուր տղէքներ առաւ էկաւ, ասաց։

Ամնասար, որդի, ըսեց, դու որ չառնիս քու ախպէր փախնես, ընդոր որ մատղեց, քըզի էլ կը մատղայ։

Ախպէր ընդունակեց, բերեց մէը մէ խուրջին օսկի տվեց, մէ հատ թուր, էրկու ախպէր գիշեր յէլան փախան, գնացին հասան մէ գեղ։ Հարցուցին թէ ո՞ր տեղէն էք։ Էն պզտիկ ախպէր վերցուց, թէ հարաւայէն կողմից ենք։ Իմացան օր կռապաշտ են, տուն չառան, գնացին քնան ամպըրուց։ Շատ մրսան։ Մենծ ախպէր պուճուրի հետ կռվաւ, թէ էտ քամպըխի անուն մի տա։

Պզտիկ ախպէր ըսեց։ Էլ ես չեմ խօսայ։

Ընդոր համար գացին ուրիշ գեղ. հարցուցին, թէ ո՞ր կողմից էք։

Մենծ տղէն ասեց. Արևելից կողմից ենք։

Ըսեցին. Բրխատոնայ ին, տարան լաւ պատվին։ Եօրղան դէօշակ լաւ թալեցին, քնցուցին։

Մենծ ախպէր գիշեր յիմցաւ, ըսեց. Իտա է լաւ, թէ էն ամբոցի միջի։

—Հալպատ, ըսեց, էտի լաւ էր։ Լուս բացվաւ էլան ընկան ճամփախ գացին։ Գացին մենծ ջրի ռատտ էկան, մէկ թեթի ջուր կը կտրէր ըտրան, կընցըներ էնդէն, կը դառնէր ետ, խառնըվէր հետ, կէրթէր։

Ամնասար ըսեց. Էթանք էն պզտի ջուր խմենք, զօռպա կեղնենք։

Էտ ջոջ ջուր ընցան գացին։ Խէյլի պանցրցան, տեսան օր մէ պզտիկ ախպըրի ջուր ղամուշլըղէն կիգայ, էտ ջրին կը կտրայ, կընցընի էն դրհէն։ Էլի կը խառնըվի հետ, կերթայ։ Գացին էտ

ախպերի ակ գոան, էտի օր գոան, մենծ ախպէր ըսեց պզտիկ ախպօր. Գնա մէկ նէճիր զարկ, բեր, էփինք ուտինք։ Ես լէ քա֊բեր կըզնիմ իրար վրայ, նշանգեահ շինեմ, օր գեղ շինենք։ Օխտն օր իրար վրայ Բաղտասար նէճեր բերեց. Սանտասար նշանգեահ շինեց։ Օր պրծան՝ մենծ ախպէր ինատ էրեց՝ պառկաւ, օր տեսայ ուր ախպէր ինչ կըսայ։ Պզտիկ ախպէր իրիկուն առաւ նէճեր է֊կաւ, օր էկաւ, թալեց գետին, ինատ էրաւ ինքն լէ դէն պառկաւ։ Նոր էտտեղ մենծ ախպէր էլաւ նստաւ. օր յէլաւ, էտի ըսաց.

Մէկ մէկ խիճ կը վերուս դնես իրար վրայ, դուն էլ գինատ բան կէնես, ես օխտը սար, օխտը ձոր եմ թռէ՝ անճախ իմ նէ֊ճիր զարկէ։

Ըսեց. Վնաս չունի, բեր էփենք ուտենք, առաւօտը մէ թա֊գաւոր կայ, անունը Թէվադորոս, էրթանք ընդոր մօտ, մարդ ուզենք, բերունք գեղ շինինք։

Էլան նէճիրը էփին կերան, պառկան քնան։ Առաւօտուն յե֊լան գացին Վան, գացին թագաւորի մօտ, ըսին։ Թագաւոր դիր ա։

Ըսին թէ, մէկ չայ խմեց, գացեր Արզըրում։

Էտ տղէք յընկան ճամփախ, գնացին Արզըրում. հարցրին, թէ թագաւոր էկաւ էտտեղ իմալ էլաւ։

Թէ—մէկ չայ խմեց, գնաց Մանըզկերտ։

Էտ տղէք գնացին Թըղ Մանըզկերտ։ Հասան Մանըզկերտ ըսին. Թագաւոր էկաւ էտտեղ, իմալ էղաւ. Ըսին. Մէկ չայ խմեց, գնաց Վան։ Տղէքն ընկան ճամփախ պըտի էրթան Վան։ Վանայ մարդիկ թագաւորին ըսին, թէ—լուսուն էրկու զօռպայ տղայ էկան քո համար։

Ըսեց. Զը կրցաք պահէք, հըրէ ես գեհինք։ Էտունք իրենց խօսքի հետն ին, տղէքն էկան։ Եօթն անգամ գլոխ իջուցին, ութ֊նի վրայ ձեռը կապին, կայնան։

Թագաւորն ասեց, թէ արէք նստէք։ Տղէքն էկան նստան։ Թագաւոր վերցուց, թէ ընչի հըմար էք էկէ, տղէքներ։

Ըսեց. Փու ձէն լսեր ենք, էկեր ենք, օր մըզի պահես։ Էրկու ամիս տղէքներ պահեց թագաւորը։ Թագաւորի իլխեն գողեր տա֊րան, էլաւ մէ եռեսուն ձիաւոր տղէքներու հետ բերեց, օր էր֊թէին գողերի յետևը։

Սանտասարն ասեց. Թագաւոր, եռեսուն ձիաւոր մենք չենք ուզի, էրկու լաւ ձի ու ասպաս տուր, մենք մենակ կերթանք։ Թագաւորը էրկու լաւ ձի, ասպաս տվեց, հեծան գացին։

Գացին հասան գողերուն, ջարդեցին, թափին գետին, գողեր խառնեցին նախրի հետ, դարցուցին բերին, տվին թագաւորին։ Թագաւոր բռնեց, գողերին կապեց. իտա հախ տղէքներուն լաւ

պահեց։ Մենծ քաղաք էր, հարսանիկ էրին, էլան ջհհելներ գացին ձի խաղցուցին։

Թագաւոր ըսաց. Բաղդասար, յելէք դուք էլ գնացէք, ուրախութեն էրէք։ Էտոնք օր գնացին, էն ձիաւորներ կայնան, էտ էրկուս կայնան, էտ էրկուս կայնան մէ կողմը, էն ձիաւորներ կայնան մէ կողմը։ Էկան իրարուց կրակ տարան, էն վախտն օր մենծ ախպէրը կերթէր յըտև՛, ջրինդ կը թալէր՝ ջնաս չէր տէ, էն վախտն օր պզտիկ ախպէր կերթէր՝ կը զարկէր, կող կը ջարդեր։ Մենծ ախպօր դուր չհկաւ, էրկու իրեք տղի ջնաս տվեց, յէլան էկան տուն, մէկ սինի մէյվա վերցուց մենծ ախպէրը, դրեց պզտիկ ախպօր գլխու վրայ, տարաւ Թագաւորի դիվանը։ Էն տղէքներու տիրվանքը էկած են գանգատ կիտեն։

Կըսին. Թագաւոր, էտ տղերանց ճամփու տու, թէ չէ քեզի կէ ջնասին, զօռպա են։ Սանասարն օր մէյվէն տարաւ Թագաւորի դիվանը, տղէյներու տիրվանք տղէյներուն մօտցան, էկան լցվան մէյվի վրայ կերան։ Ետու մեծ ախպէր միտք էրեց, թէ իմ ախպէր ջնաս կիտայ, էլաւ մէկ սինի էլ մէյվա բերեց Թագաւորի դիվանը, Թագաւոր ծիծաղայ, թէ էն անգամ բերեցիր՝ խալխին իր ջնաս տվէ, էս անգամ ինչի՞ հըմար բերիր։

Թէ Թագաւոր, բերեցի, օր իմ ախպէր ծուռ ա, խալխին ջնաս չը տայ, մէկ քանի տուն տաս, էրթամ իմ գեղ շինեմ, մէ գեղ կայ ընծի, նշանգեահ ենք դրէ։

Ըսեց. Որդի, իրեք հարիր գեղ կայ իմ ձեռ, ամէն գեղէն մէ համբա տուն քեզի։

Սանասար կառնէ 300 տուն, կուգայ էտ նշանգեահ տեղ։ Կըսկսին էրկու ախպէրով բերդ շինելը։ Էնդոնք Թող ուրենց համար տուն շինեն, ցանք ընին, ապրին. էտ էրկու ախպէր օրական մէկի տան պըտի հաց ուտին։ Էտոնց ուտվացք մէկ հայվան, մէկ ոչխար ի, իրեք լիտր հաց, իրեք լիտր գինի, իրեք լիտր բրինձ, իրեք չարեք եղ. մէկ դամվայ ուտվացք։ Օխտը տարի էտոնք բերդ շինին. օխտը տարի օր թամամաւ, բերդը պրծան։ Բերդն օր պրծան, Սանասար ախպօրը ճամփեց Թէոդորոս Թագաւորի մօտը, ասեց.

Իմ ախպէր քու աչ կը համբուրայ, քու ձեռ կը պաքայ, Թող գա բերդի անուն դնայ, համ էլ մէկ հացթուխ կուգայ։

Թագաւորն ըսեց. Դուք զարիր էք, ձեզի ուրիշ մարդ աղչիկ չիտայ, ես իմ ախչիկս կիտամ, քեռի Թօրոս պէտք ա գայ հետ՝ պահպանայ։

Վեկալեցին էկան նշանգեահ. բաւականին մալ բերից հետը, Թագաւորը հարուստ էր, ախչկայ հետ բաժինք դրեց։

Սանասար բերդը շանց տվեց Թէոդորոս Թագաւորին, ասաց. Անուն դիր։

Թագաւորն ասաց. Անունը դու ես դրէ, սուն վըր սան. Սասուն։

Թագաւորը հարանիկ էրեց, ուր ախչիկը պսակեց Սանասարի վրայ, պսակեց, օծեց, դրեց Թագաւոր, մէկ քանի գեղ տվեց, օր պէտք ա խարճ առնին։

Բաղդասար նեաթը կախեր էր։

Սանասար ըսեց. Ինչի՞ համար ես կախէ, քանի կը բանենք, ուրախ էր, հիմի նեաթդ կախեր ես։

Ըսեց. Դու խապար չես, ես գիշեր չեմ քնի. երկու էծ կը տրոճկեն գիշերը հար լուս վըր ինծի, չեն թողէ քնիմ։

Ասեց. Ինծի չի պատկանի օր էթամ Բաղդադ, դու ընձնէ ղվաթով ես, դու գնա մեր հէր զոր ըսպանա, կռքատուն վառա, չխուլ մարդիկ թալ կրակի մէջ։

Ախպէրն էլաւ գնաց։ Գնաց էտ հաշիւին Բաղդադ։ Հէր տեսաւ, ուրախացաւ, ասաց. Մեր կուռք զօրաւոր էր, ուր մատաղ քաշեց բերեց։

Վերցուց ուր մարդկանց ասեց. Դուք ընծի յերես կիտենք, տեսէք քաշեր ուր մատաղ բերեր ի, մեր կուռք զօրաւոր ի, պէտք է ֆիլան կիրակին մատաղենք։

Տղէն ասեց հօրը. Էթանք կռքատուն, օր մատաղը ընդունակ էղի։

Գացին կռքատուն, հէրը երկրպագութուն տվեց, յետ դարձան էկան տուն։ Լուսուն տղէն մէկ կացին առաւ, կռքոց գլուխ զարկեց՝ թռուց, ետ դարձաւ գնաց տուն։ Հօր հետ ետ դարձաւ էկաւ կռքատունը, կռքերը իրարու հետ խօսացին, թէ Բաղդասար կացին բերեց, մեծ կռքուց գլուխ թռուց։

Հէր լսեց, շատ բարկացաւ տղի վրէն, դարձաւ ըսեց. Վնաս չկայ, մէկ լէ կը շինենք։ Տղի սիրտն յելաւ հօր վրայ, հէրն օր երկրպագութուն տվեց, տղի ասարը բռնեց, թուրը քաշեց, հօրն սպանեց. հէրն օր գլուխը դրեց գետին, զարկեց ըսպանեց։ Էլաւ ամէն հախուն քսան խուրձ բերեց լցեց կռքատունը, լիքը լցեց, նաւթեց, կրակ թալեց, չխուլ մարդիկ էկան, բռնեց թալեց կրակի մէջ, տեսաւ օր յըմէն կըսպանէր, մէկ չէր թողէ, վախեցան, յըմմէն դարձան թէ դու ինչ Աստուած կը հաւատաս, մենք էլ էն Աստուած կը հաւատանք։

Էտոնք օր խօսքի էկան, Բաղդասարը մէ տարի ճնաց ըտրանց մօտ. Բաղդըդու մէջ, էլաւ ջուհար ճամփեց, ախպօրը կանչեց։ Սանասարը էկաւ հասաւ։ Լաւ ախչիկ մի ջոկեց, ախպէր

պսակեց· օծեց, դրեց թագաւոր, եւ դարձաւ ինք գնաց: Զուրի հասաւ տուն, ուրին մէկ տղայ էղաւ, կնքեցին, անունը դրին Մհեր:

Էտ տղէն լաւ պահեցին, մենծացաւ; էղաւ հօթը տարեկան, առաւ ուր ձիու նետ ու աննեզ, գնաց նէֆիր ջարդելու: Գնաց ջարդեց, տեսաւ օր չէր կարէ բռնէ, կը փախէր, սկսեց պատ շարիլ, հըմալ շարեց, օր երկու կողմ թողեց դարպեախ, անունը դրեց Ծովասար:

Աշունը, նէֆիր ջարդեց, ամէն տան հօթ նէֆիր հասաւ, հըմէն արին զաւրմա, Մհերին օրհնեցին: Մհեր էլաւ գնաց սարը էլի մէջ, մի անգամ մէկ թայ օսկի առաւ խառալ, կապեց մէկ բիռը, բերեց ուր տունը. էտ տեղի անուն դրեց Ճապաղ Ջուր:

Յընկաւ երկիր փահլըվանթենի, զօռպա էր, ամէն կողմ խարջ առաւ: Գնաց Մըսըր տեսաւ օր մէ օրըւերի կնիկ, իրան ուրիշ տեղ զոնախ չեն առնէ, էտի առաւ: Տարաւ մէ լաւ պատվեց, խազան մի ջուր դրեց տաքցուց, Մըհերին լողկըցուց, տեղ թալեց, ինքն էլ պատկաւ քնաւ ծոց: Մհերն էլաւ էտոր սիրեկան, ամէն անգամ հա կերթէր, հա կիզէր: Մէկ տարի ճնաց, մէ տղայ էղաւ իտոր, անունը դրին Մսրամէլիք: Զուհար տարան Սանասարին, թէ քու տղէն էկաւ տուն, հէր բռնեց տղէն կարգեց: Տղէն օր կարգեց, մէկ տարի ճնաց, երկու, տղին մէկ տղայ էղաւ, անունը դրին Ցոան Վէպվէ:

Մհերը էլաւ քեռի Թորոսին էլ կարգեց, տարին անցաւ, վախճանաւ: Մհեր նստաւ թագաւոր:

Մհերին մէկ տղայ էղաւ, անունը դրին Ջէնով Յովան, ճնաց մէ տարի քեռուն լէ մէ տղայ էղաւ, անունը դրին Խոր-Մանուկ: Մէ տարի ճնաց, Մհերին լէ մէ տղա էղաւ, անունը դրին Ճնճղըայ-Փոքրիկ: Էտի ճնաց մէկ երկու տարի յետըցաւ, էրկու կնիկ լէ ճնացին էրկու հոգով, մէկ Մսրայ կնիկն էր, մէկ լէ Սասունայ: Մսրայ կնիկ աղչիկ բերեց, Սասունայ կնիկ տղայ բերեց, անունը դրին Դաւիթ: Էտ տղի ձեռնները խփուկ էր. ինչ ղղար էրին, չը կըցան բացին, հէրն էկաւ բացեց, տեսաւ մատների մէջ լերդ լերդարուն էր:

Ըսեց. Դու շատ զօռպա պըտի ըլնես: Մսրամէլիք մենծըցաւ, տասնըհինգ տարեկան դարցաւ, ընկաւ երկիր փահլըվընութիւն էրէց, ամէնին յաղթեց, յըմենից խարջ առաւ, ուր հօր չէ՝ ուրիշ թագաւորներուց: Ետո-եղաւ օր՝ կէս տարին Դաւիթին թըմըմաւ, Դաւթի մէր ընկաւ մեռաւ:

Հէրն ասեց. Իմ զոչախ տղէն էտ ա, վիր տամ, օր ծիծ տայ, պահայ: Ասեց. Պէտք ա տանիմ իմ մէկէլ կնկան տամ պահէ: Զորս տղին վերցուց բերեց Մըսըր, Մսրամէլիքն ու մէրն էկան յառէջ, առան գնացին տուն:

Կնիկն հարցուց, թէ մարդ, դու ամէն օր կիգաս էրթաս, տղէքը ինչի՞ ես բերէ։

Ասեց. Տղէն էղեր ա ծծմեռ, մէր մեռեր ի, բերեր իմ օր ծիծ տաս։

Ըսեց. Է՛հ, իրեք տղէն ինչի՞ հըմար ես բերէ։

Ըսեց. Բերեր իմ, օր Մսրամէլիք պահայ։

Մսրամէլիք կայնուկ էր սրախ, էկաւ յառէջ, ըսեց. Քու տղէք մէկ մէկ գոմէշ կուտին, ես չեմ կանայ պահի։

Ասեց. Մուֆթա չեմ տայ պահել, Ծովասար, ճապախջուր կիտամ քըզի։

Ըսեց. Կը պահիմ։

Իրեք օր մնայ տղէքներու մօտ, էլաւ գնաց. էլաւ գնաց ուր տունը, մէ տարի մնաց, հիւանդ ընկաւ. Մներ մեռաւ։

Սուդ կապեց քեռի Թօրոս եօթը տարի։ Սուդ կապեց, օրէն մէկ պատարագ կէնիր, հարիր ջան կիգեր մէկ պատարագ կէնէր։ Եօթը տարին թըմըմաւ, ախքատացաւ քեռի Թորոս, հալիվորացան Սասունի տղէքն ու աղչիկներ։ Էկան քեռի Թորոսի սուդ հանեցին. ամէնք թըզ ուրանց հարսանիք էնին։ Քեռի Թորոս մէկ ծառ դրեց ուր թևի վրայ, գնաց Մըսըր։ Մսրամէլիքն ու ուր մէր էկան յառէջ, տարան տուն։ Էրկու օր պահեցին, հարս ըսեց. Ինչի՞ համար ես էկէ։

Քեռի Թօրոս ըսեց. Էկեր եմ տղէքներ տանիմ։

Մսրայ մէլիք ասեց. Պէտք ա իմ թրի տակով ընցնին էրթան։

Քեռի Թօրոս ըսեց. Դու մենծ ես, ընտոնք պզտիք, ինչ պիտի էնին քեզի, թող թրի տակով ընցնեն, վնաս չկայ։

Լաւ կերակուր էփեց, կերան պրծան, էլան օր էրթան, Մըսրամէլիք թուր բռնեց, բռնեց, որ տակով ընցընին։ Ծռան Վէգէվ, Ջէնով Ցովան, Ճնճղայ—Փոքրիկ, իրեքն էլ անցկացան թրի տակով, Դաւիթը չը գնաց, կայնաւ, շատ յետացաւ, Քեռին աճղեց, մէկ գոմբ զարկեց, փախաւ, ոտն առաւ քարը, կրակ ցխաց ոտի մօտէն, Մսրամէլիք կրակը տեսաւ, վախեցաւ, թուրը ցածրցաւ, Դաւիթ թռաւ վերևով ընցաւ։

Քեռի Թօրոսը առաւ տղէքը գնաց։ Գնաց հասաւ Սասուն, Ծռան Վէգէվ պսակեց դրեց թագաւոր, հօր խարջ ու խարաջ առաւ։ Ծռան Վէգէվ փարդայ էր կապէ դիվան կէնէր, մարդու յէրես չէր իրիշկէ։ Ջէնով Ցովան էրեց հովիւ, Ճնճղայ-Փոքրիկ էրեց գառնարած։ Ճամփեց Դաւիթ, նորընծայ տէրտէր կար, սանահէր էր, ընրա կուշտ ուսում առնելու։ Ցերեկը կէթէր հորթէը, յիրիկուն ուսում կառնէր։ Շատ չար տղայ էր, հորթերուն ջնաս կիտէր։ Քեռին իրան կը քրթէր, թէ հալդի հօրթերուն ջնաս մի տայ,

չէր անկաճ էնէ։ Օրերից մէկ օր, Դաւիթ գնաց մէ ղարիբ մարդու ռաստ էկաւ, հօրթաւրած էր, էն էլ հորթ կը պահէր։ Էն մարդ վախեցաւ Դաւիթից, երկու վէտ տնկեց, հով շինեց, ըսաց.

Դաւիթ, աբի դու պառկի, ես հորթեր կպահեմ։ Մէ շաբաթ, էրկու պահեց, մէկ օր մէկ աղվէս Դաւիթի հորթերի միջից փախաւ. Դաւիթ լարեց տարաւ Սասուն, տարաւ մտաւ մէ ոէսի մարագ, գնացին քեռուն ըսեցին, թէ. Քեռի, մէ աղվէս ա լարէ բերէ Դաւիթ։

Քեռին էկաւ հետ կուվաւ, թէ քեռի դու, խապար չես, ոէսի բալակ հորթիկն էր, ուր տիրու մարագ գինէր, էկաւ մտաւ մարագ։ Բանալիք բերին, մարդի դուռ բացին, թռչել էր աղվէս, յելեր էր յառիք. Դաւիթ կոպալ բերեց, զարկեց, բերեց ցածր։

Քեռին ըսեց. Լաւ էղաւ, էտու փոստ կը ծախեմ, կէնիմ քեզի արխալուղ. դու գնա հասի հորթերուն։

Գնաց հասաւ հորթերուն, մէ ամիս ճնաց, մէկ օր գնաց տեսաւ ընկեր չէր էկեր էր, սիրտ պատրուաւ, ըսաց.

Զըլի ընկեր չըգայ, ճնամ մէնակ։ Տեսաւ օր ընկեր հեռու տեղից հորթեր քշեց էկաւ։ Վազաւ գնաց յառէջ, գնաց յառէջ ըսեց. Ընչի՞ հըմար դու յետացար։

Ըսեց. Սասմայ ժամ էր էղէ, հարիսա տանին, ուտեն. պէտք ա մէկ աման ուտինք, մէկ էլ բերեք քըզի հըմար, ուշացաւ, թողի էկայ։

Ըսեց. Դու հորթեր տար, ես կերթամ, կը բերեմ։

Բէտ կարաս մի հարիսա դլուխ էր գերեզմըներ, եղն էլ կշտի հետն էր, չը ֆայմաւ թէ եղ վերցնէր հետ, շերեփ դրեց հարիսի մէջ, կոպալ եցկեց կանթ, էրեց օր թալէր շալակ, օղլուշաղ կախվաւ մօտից, մի տղամարդ էկաւ ըսեց. Սասունայ ծուռն ա, թող տառնայ, կը զարնայ կսպանայ։ Ըսեց, էտի ամենուց խէր ա, թըղ տանայ ինքն ուտայ։

Վերուց էտ հարիսէն գնաց, քիչ ամպ էր ըլէ, անձրև թալեց, էկաւ ընկերոջ մօտ, տեսաւ ընկերը կիլէր։

Բղեկ դրեց կողքի հետ ըսաց. Ինչի՞ գիւլաս, աբի հարիսա ուտինք։

Ըսեց. Քառասուն հարամի էկան, քառասուն հորթիկ տարան, գեղըցիկ իմ հախ կը կորին, ինձ լէ նեղութիւն կիտան։

Ըսեց. Դու աղին ու եղին հըմաթ կիլաս, աբի ուտենք, իրիկուն գնա աղն ու եղը կէ վրէն։

Կերաւ, պրծաւ, մէ շերեփ թողեց ընկերոջ համար։ Կըշտացաւ, ըսաց. Էն ինչ հարամի էր, օր ըսեցիր հորթեր տարան։

Ըսեց Բա քառասուն հարամի. էկած, քառասուն հորթիկ տարած ա։

Ըսեց. Արի էս հարխալէն կէ՝ ես կերթամ հորթերը կը բերեմ։

Գնաց տեսաւ օր քառասուն հօրթիկ լէ քերթած ևն, լցած են հօթ կանթընէ ղազան. քառասուն դէվ լէ պառկուկ են, յէլան օր կուխ էնեն։ Քաշեց քառասուն կոպալ զարկեց, քառասուն դէվ լէ ըսպանեց, մըսեր թաւլեց, քառասուն կաշին լցեց ղազանը. կոպալը ցկեց կանթ, շըլակեց, առաւ գնաց մէկ էրի դուռ, տեսաւ օր մէ մենծ քար ուած էր էտ էրի դուռ, քար թալեց դէն, դուռ բացեց, տեսաւ, կօխմ քանի բազրկան են թալանած. բերած էտ տեղ։ Գնաց, տեսաւ մէկ լաւ քուռակ, առանձին, մէնակ։

Ըսեց. Քեռի, մալ դովլաթ յըմէն քեզի, քուռակն ընծի։ Իրեք անգամ խրար (մարճ) կտրեց, թէ մալ քըզի, քուռակն ընձի, նոր յէլաւ յէրի դուռ ծածկեց, առաւ էն զազան գնաց։ Տարաւ էնտեղն օր պատարագ կէնեն, խազանը դարտըկեց. ասեց. Էկէք ձեր հօրթերու կաշիք ջոկէք, հարամիք տարած են, մորթած են, գացեր եմ կաշիք բերած իմ, տեսէք թամամ ի։

Ըսեց. Իտա ղազան կը վերձուք մսի տեղ։

Ըսին. Դաւիթ, շնորհակալ ինք, կը վերունք։—Թէ իմ ընկերոջ հախ չէք կտրի։

—Չէ, ըսին, մէկ մէկ կոտ լէ յաւելի կիտանք։

Շնորհակալ էղաւ էտու վրէն, եա դարձաւ։

Գնաց տեսաւ ընկերը նստեր էր, դիլէր։

Ըսեց. Ինչի՞ դիլաս. ղազան տվեր իմ մսերու տեղ, քառասուն կոտ գարի յաւել եմ առել։

Ըսեց. Ել իմ հորթեր ջոկայ, ես էրթամ։

Ըսեց. Դաւիթ, չէ՞ օր կէս օր ի, վախտ չի։

Ըսեց. Կուզես մէ կոպալ էլ քըզի՞ զարկիմ։

Տղէն յէլաւ հորթեր ջոկեց, քանի որ հետ կերթէր ձէն չէրեց, եոի օր ընկէր դարձաւ, մէկ մէկ զարկեց հորթեր ըսպանեց։

Ջուհաբ գնաց քեռուն, թէ քեռի, յելի, օր Դաւիթի հասարը բռներ ի, չուրի հասնիս, մէկ հորթ սաղ չի թողայ։

Քեռին վազման էկաւ.—Շան օրթի, պըլեճկերի տղայ, ըսեց, խալխին ինչի՞ ջնաս կիտաս։

Ըսեց. Քեռի, մալ դովլաթը յըմէն քըզի, ջանավարն (քուռակը) ընծի։

Քեռին իմացաւ օր մալ, ապրանք էր գտէ տղէն, տարաւ գեղ, ըսաց։

Բռնինք թէ մէկ մէկ հորթիկ սատկեր իր, թազա հորթաբած բռնէք ձեզի։

Յիրիկուն Յուան Վէգէվ, Բեռի Թօրոս, Զէնով Յովան, Ճընճաղայ Փոքրիկ, Սուր-Մանուկ, Դաւիթ, բիրադի իրար հետ գացին։

Գացին ձորու բերան, լուսնակ էր. ցերեկ արև զարկեր էր՝ գևեր ուռած քին, Յուան Վէգէվ տեսաւ, վախեցաւ. ըսաւ. Բեռի, շան օրդի պլիճկերի տղի վոր ծուռ աղիք կայ, մըզայ կիտայ ջարդել։

Դաւիթն էկաւ յառէջ ըսեց. Ես էնոնց կենդընից չեմ վախեցէ, դու սատկուկից ինչի՞ կը վախենաս։

Իլաւ գնաց էն ջանդկներ գլորեց, գացին ընկան ձորը։ Գացին իջան հէրի դուռ, դուռ բացին գնացին ներս, որ դովլաթ Թէոդորոս թագաւորի դովլէթէն շատ էր։

—Բեռի, ըսաց Դաւիթ, էս մալ դովլաթ քըզի, էս ջանավար ընծի։

—Որդի, ըսեց, ինաս չկայ, թող քու խօսք էղնի։

Դաւիթ գնաց էրկու իրիք բեռ օսկի լցեց ուր ջեպ, ըսեց. Սըլիկ պըլիկ ա, տանիմ խաղամ։ Գնաց քուռկու նոխտէն բռնեց, քաշեց դուս։

Բեռի Թօրոս, Յուան Վէգէվ, Զենով Յովան, Սուր-Մանուկ (Կիսատ Մանուկ) բեռներ բարձան, բերին լցին տուն։

Առաւօտուն Դաւիթ ձին հեծաւ գնաց, շուռ գալու, մէկ մէկ լոր կը զարկէր, կը բերէր կուտէր։ Մէկ քեասիր մարդ, եօթը կորի կորեկ էր ցանէ, ջրեր էր, յելէր էր ջուր կորէր։ Դաւիթն առաւ ձին մտաւ մէջ, չորս կորին աւերեց։ Տէրն էկաւ, ասեց. Շան որդի, պլիճկերի տղայ, բեռ մի դէք քու վոր չի կշտացու, թէ Մսրամէլիք քու հէրն ու մեր անիծեր ի, զօռ ունիս գնա ընդոնք ջարդա, քու հօր ապրանք կէ, ինչի՞ ես էկե եթիմներու հաց կըտրեր ես։

Ըսեց. Գնա Ծովասար, ջարդա նէճիր, որ դու ուտիս, գեղ լէ հետ։

Ըսեց. Բեռի, ինձ մանիծի, աբի քեզի սըլիկ պըլիկ կիտամ։

Մարդը կը վախէնէր, էկաւ մօտեցաւ, մէ ճանկ օսկի տվեց։ Ընրա ճանկ կիդէր մէ լիտրը. ըսեց. Գնա Ծովասար, դռներ վակայ, ես մտնիմ մէջ ջարդիմ, ես չեմ գինա։

Մտաւ մէջ ջարդեց, գեղեվի գնացին բերին, ամեն տան եօթ նէճիր հասաւ։ Յըմմէն էրեցին խաւուրմա, Դաւթին շատ օրհնեցին։

Էս օխտը աղչկայ տէր քասիբ մարդ, տարաւ կուշտ կերաւ, էկաւ ըսեց.

Աբի էթանք ձապախջուր խարջն առնենք, քանի Մսրամէլիք չէ էկեր ա։ Դաւիթ ըսեց.—էթանք։

Ըսեց. Օր էրթանք, կըսին Դաւիթ քեասիբցեր ի, երեխայ

ողայ ի, մէկ քանի տիկ ժաժիկ, մէկ քանի կոլիկ (թոփալ) օչ-խար տանք, թօ էթայ, չառնես. օխտը տարվայ խարաջ ուզա, օխտը բեռ օսկի։

Յելան գացին։ Էլան գացին, Դաւիթ էրկու ոտ դրեց մէկ սոլ. օխտ բեռ օսկի մէ անգամ ուզեց։ Բերին մէ քանի տիկ ժաժիկ, մէ քանի կոլըկ օչխար տվին, ըսին։

Շատ է շատ համարէ, քիչ ա, քիչ համարէ, քու հօր վախտ հարուստ ինք, հիմի քեասըբցեր ինք. Մսրամէլիք մըղի աւիրեր ա։

Դաւիթ ըսեց. Մսրամէլիքի հէրն անիծուի, ինչ դարդ ունիմ, ես իմ եօթը տարվայ խարաճ կուզեմ։ Զարկեց մէ քանի մարդ ըսպանեց, բռնեց եօթ բեռ օսկի առաւ։ Էլը (ժողովուրդ) իրա տեղից վախաւ գնաց։

Ձէն գնաց Մսրամէլիքին, թէ Դաւիթ ճապախջուր, Ծովա-սար աւիրեր ա։

Ասեց. Ինծի չի պատկանայ ես էրթամ կռիւ, ես մենծ եմ, էնի էրեխայ ա. ասէք Պերհաճ էրթայ էնդոր գլոխ բերայ, իմ քուր կիտամ ընդուր։

Պերհաճ քսան ձիաւորով յելաւ գնաց, գնաց տէրտէրի դուռ բռնեց, օր Դաւիթ կերթէր ուսում կառնէր, գիտէր օր էնտեղ քնած էր, կէթէր օր քնած տեղը ըսպանէր։

Գնացին տէրտէրին բռնին, մէ աղչիկ կար, վազաւ Դաւթին ձէն տվեց, թէ Դաւիթ յելի, տէրտէրոջ ըսպանեցին։

Ըսեց. Աղչի, դու դարգեահ զարկ, ես կոպալ յառքէն իջուամ։ Աղչիկ դարգեահ զարկեց, Դաւիթ կոպալն առաւ, յելաւ դուս, քսան ջանին, քսան կոպալ զարկեց։ Բռնեց Պերհաճին դրեց գե-տին, եռեսուն էրկու յառկէն քաշեց, զարկեց ճակատ, քիթ ու մռութ կտրեց, դրեց ճամփու ըսեց.

Գնա, ըսաւ, էտի քիչ ա, թող շատ գան։

Պերհաճ մենակ գնակ Մսրամէլիքի մօտը։ Վախեցաւ Մսրա-մէլիք։ Խուզբադին կար, աչք ունէր Մսրամէլիքի քրոջ վրայ, էկաւ ասաց.

Քուրդ տուր ընձի, ես էրթամ բերեմ։

Առաւ քառասուն ձիաւոր, գնաց։ Սաննեցի մէկ աղչիկ բերած ին Մըսըր. էտի մէ քանի օղլուշաղ առաւ գնաց ջրի վրայ բուրդ վանալու։ Տեսաւ Խուզբատուն, ըսեց. Խոզբադի, դմր կերթաս։

Ըսեց. Կերթամ լաւ լաւ կովեր բերեմ կթան.

Լաւ եզներ կը բերեմ լըծան.

Մանդր կընկտիկ կը բերեմ էրկանք աղան.

Բէտ կնկտիք կը բերեմ, ուղտեր բառնան։

Ըսեց. Գնա, թէ ետ դարձար, քու պատասխանդ կիտամ։

Իմալ օր Պերճաճու գլոխ օյին հանին, էնթաւուր էլ Ոզբադուն հանին։ Բառաստուն Ջանը ըսպանեց, իրիկուն էրկու աւամբ քաշեց, զարկեց ճակատը, ասեց. Գնա, Թող շատ գան, էտ ինչ աս։

Սասունցի կնիկ առաւ ուր ընկերտանք, գնաց ճամփու վրայ, Ոզբադին էն կողմից էկաւ։

Ըսեց. Ոզբադին, էն օրը գայիր, քընց գել գաղան.
Դարձար էկար քընձ շուն վազան.
Փըչլիկտ կը թափի գարնան թան։
Ոզբադին ըսեց էտ կնկան.
Գացի Սասունա բան։
Ձեմ գինայ թէ մարդ էր էլէ դեվանական։
Գարնան ելման գետերը օր յելան,
Ընդոնց պլորներ քեզի կուգայ արմաղան.

(Ս.յ-ինքն գարնանը, երբ հեղեղներն սկսին, սպանուած 40 մարդու պլորները կգան քեզ, կնոջդ, համար աղանդեր)։

Ասաք գնաց Մսրամէլիքին. Մսրամէլիք թուղթ ճամփեց Աստղ Երղնկացուն՝ արևելոց թագաւորն էր, իրա ղօշունով էկաւ. մէկ թուղթ լէ ճամփեց հարաւային կողմը, Դաւիթի հօրօղբօր տղէցներուն, Բաղդասարի թոռներուն, իրանց ղօշունով էկան. մէկ թուղթ լէ ճամփեց արևմուտք, Հալպու Խալիֆին, էն լէ առաւ իրա ղօշուն էկաւ։

Մսրամէլիք յըմմէն ղօշուն առաւ էկաւ օր, աստղերին հետաք կար, չատրներին հետաք չկար։

Գնաց հարսներուն հարցուց թէ էտ ինչ բան աս։

Հարսներ ըսեցին, թէ Դաւիթ շատ ջնաս ա տվէ, քեռի Մըսրամէլիքն է էկէ կռիւ։

Ըսեց. Ես շան որդին էրեխայ ի, ինչպէս ճամփենք էրթայ կռիւ էնա։

Ճամփեց, դանչեց Դաւիթին բերեց տէրտէրանց տնից, ըսեց. Էտ ինչ օյին ես հանէ։

Ըսեց. Քեռի, էտոր հէրն անիծուի, ես իմ հօր մալի դավին կէնիմ, էտի վիր դավին կէնայ։

Ըսէց. Գնա քու հօր քուրձն ու քիւլլէն բէր։

Գնաց. Ճռան վէգէվ խետ կռվաւ, ըսաց. Դու ինչ ես օր էրթաս կռիւ էնես։

Քեռին էկաւ Ճռան վէգէվի օթախ, դեվանի մէջ, վէգէվ էրթիկներ հողեր էր, դռներ փակեր էր վախից, Քեռին օր էկաւ Ճռան վէգէվ յելաւ կայնաւ։

Ըսեց. Շան որդի, դու կը վախենաս, դուռ յերթիկ փակեր ես. էնի առանց կռվի ետ չի դառնայ. Թող Դաւիթ էրթայ ըսպանվի, պրծընենք։

Գնաց Դաւիթ չը կարացաւ գուրզը կպրէ կարաւի միջէն հանէր։ Վէղէլն էկաւ մէ ճկուռթ թալից հանեց։

Քեհին ասեց. Տղան էրեխայ ի, վախենամ ըսպանվի, քերեց մէկ հնար բանցուց, օր մէկ ժամ շարիլ տէր, մէկ օր պրծընէր, պատարագ էնէր, օր Դաւիթ էնուր ըսպանէր։

Բերեցին հիմի էրեցին էտ ժամու, մէկ կարմիր պուտուկ մէջէն յելաւ, մէկ հատ սըբ Նիշան կար մէջ, տղան առաջ օր հօր շորերը հագաւ, ինչ որ մատղած էրեխէն մենծ մարդու շոր հագնի։ Էն վախտն օր սըբ Նիշան համբուրեց, դրեց ծոց, էն քան լցվաւ, օխտը մատաղ էրեց քեհին. տղին ճամփեց կռիւ։

Դաւիթ ըսեց. Քեհի, մի մարդ ճամփայ, ձին բռնայ։

Ասեց. Սըբ Նիշան հետդ ա, բոլ ա քըղի։

Գնաց հարցուց թէ տղի չադըր ո՞ր մէկն ա։

Տվեցին նշանց, գնաց տղի չադր գտաւ։ Տեսաւ օր Մսրամէլիք, ուր մէր, ուր քուր քնած են. օր կը շնչին, չադր կը բարձրաներ, էն վախտ օր շունչ կը քաշին, կըգեր խփեր վրէնէր։

Տեսաւ ընդունք քնուկ ին, իրեն համար էլ չադր զարկեց, պառկաւ քնաւ։

Էտի օր քնաւ, Մսրամէլիք յըմցաւ, տեսաւ օր մէ թազա չադր եկեր ի, էտա տեղ զարկեր ի, էն վախտն օր կը շնչար, չադըրը վրայից կը բարձրանար, շունչն օր կը քաշայ՝ չադըր կիպտ, կըխփվի վրէն։

Ճամբեց ուր քրոջ, թէ գնա ոտները դի գոդդ մաժայ, թող քնի, օր յիմցաւ (զարթնեց), խանչալ գայ խաց ուտինք յիրար հետ։ Բուր գնաց Դաւթի ոտներ դրեց գոդ մաժից, Դաւիթ յիմցաւ, քուր ըսեց.

Ախպէր կը խանչայ։

Իրիք օր էկաւ նստաւ, խետ կերաւ խմից, լուսուն օր լուս բացվաւ, չադր պըլոլից, դրեց քարի տակ, տեսաւ օր ուր քուր էկաւ, օր ջուր տանէր ախպէր լվացվէր։ Սըբ Նիշան ուր ոտնդ լէ, ձիուն լէ փոխեր էր, առաջ կարմիր էր, հըմի դարձած էր սև։

Մէկ սաթիլ կաը, ուզեց մօտէն, թէ տու ջուր խմիմ, առաւ, դրեց ձեռաց մէջ, մկկէլ ձեռով զարկեց, շինեց քըղի սաճ, ավեց քրոջ ըսեց.

Տար քու ախպէր հաց թխա վրէն ուտա, չուր իմ աղէն գայ քու ախպօր կռիւ։

Բուրը վախեցաւ, չը գնաց ախպօր քով, մէրն էլաւ դուս, առաւ էտ սաճ, գնաց տղի մօտը, թէ քու քուր կասայ.

Էտի իրիկվայ մարդն էր, էն չէր, սաթիլ զարկիր ի, էրէ սաճ, ղրկէ քեղի, թէ հաց թխա կէ, չուր իմ աղէն գայ քու վրայ կռիւ։

Մարամէլիք մէ թուղթ ճամփեց Աստղ Երզընկանցին, մէկ թուղթ էլ ճամփեց Դաւիթի հօրօղբօր տղեներուն, մէկ լէ Հալբու Խալիֆին։ Բիրապի էկան ուր մօտ, օր էկան մօտ՝ ասեց. Զեզանից մարդ էկո՞ր ի էս իրիք օր ինձ հետ խաց ա կերէ։

Ասացին. Թագաւոր, օր դու չը կանչես ով կիգայ. մարդ չէ էկէ։

Դաւիթ ձին լցեց, էն կողմից էկաւ, էկաւ, ձէն տվեց, թէ Մարամէլիք, քու թագդիր էրա (պատրաստուիր), իմ աղէն էկաւ քու վրայ կռիւ։ Թէ դու քու աղի ի՞նչն ես։

Թէ ես իմ աղի դայֆաջին եմ։

Մէկէլ գնաց, պըտըտաւ էկաւ. էլի ուանդ սըր Նշան փոխեր էր, ըսեց.

Մարամէլիք, քու թագդիր էրա, իմ աղէն էկաւ քու վրայ կռիւ։

Ասեց. Դու քու աղի ի՞նչն ես։

Ըսեց. Ես իմ աղի չըլըխչին եմ։

Մէկ էլ գնաց պըտըտաւ էկաւ, սըր Նիշան փոխեց յառաջի օրինակին, ձին լէ, ինքն լէ, օր Մարամէլիքի հետ կերեր է, խմէ։

Ձէն տվեց.—Թէ Մարամէլիք քու թագդիր էրա, օր իմ աղէն էկաւ քու վրայ կռիւ, ըսաց ու ձիուց թռաւ։

Ըսաց. Դու քու աղի ի՞նչն ես։

Ըսաց. Կամք իմ Աստուն, աղէն ես եմ ու կամ։

Ըսեց. Էսքան մարդ որ էկիր ի, յըմէնո՞վ կռիւ կէնիք։

Ըսին. Ձէ, մենք էկեր՝ ինք թամաշա էնենք, դուք պըտի կռվիք։ Նոր էտոնդ Մարամէլիք յէլաւ կանաւ, ըսեց.

Ի՞նչպէս պէտք ա կռվինք։

Ըսեց. Դու մենծ ախպէրն ես, ես պզտիկ, ես կը չոքիմ, դու արի իրիք գուրզ զարկ, թէ մեռայ, կը մեռնիմ, թէ ապրայ՝ դու չոքի, ես կը զանիմ։

Դաւիթ սըր Նիշան համբուրեց, դրեց թագի տակ։ Մարամէլիք եօթը շէմք չափեց, էկաւ մէկ գուրզ զարկեց։

Դաւիթ ըսեց. Մէկ չիր ընկաւ գլխուս, կա եօթ շէնք լէ չափա, արի։

Մարամէլիք գնաց էկաւ մի գուրզ էլ զարկեց։

Դաւիթ ըսեց. Գնա եօթն էլ չափա արի, մէկ խնձոր ընկաւ գլխուս։

Մարամէլիք գնաց էկաւ՝ մէկ լէ զարկեց, էղաւ իրիք, Դաւիթ թռաւ կայնաւ։ Մարամէլիք տեղից տեղ չոքաւ։

Դաւիթն ըսեց էտ թագաւորներուն. Էսքան միլլաթ օր էկեր էք, ես գուրզ կը բաշխեմ Աստուն, ասեց, ես գուրզ լէ կը բաշ-

խեմ էսքան դողունին, իմ մօր կաթին. ասեց. էս մէկ գուրդ ճնաց զարկեմ։

Ըսին. Զարկ։

Զարկեց. Մսրամէլիք էդաւ էրկու կտոր, մէրն ու քուրը վրէն լացին, ինքը ձին հեծաւ, քշեց Աստղ Երզնկացու վրայ։

Ըսեց. Արի կռիւ էնինք։

Ըսեց. Դու զօռպա ես, ես ֆանդով եմ, արի էղնինք ախպէր։

Նոր էտտեղից ձին քշեց գնաց Հալբու Ալիֆի վրէն, ասեց. Արի կռվինք։

Ասեց. Իմ բերնին չէ, օր ես քեզի հետ կռիւ էնեմ։ Ասեց. Վերև Աստված, ներքև քու տէրի ձին, ինձի աղջիկ էղնի, քեզի տղայ, էղնինք խնամի։ Էտոր լէ իդին տվեց գնաց։

Ձին քշեց հօրօղբօր տղէյներու վրայ։

Ըսեց. Արէք կռիւ էնինք։ Ինքը չէր ճանչընի։

Ըսեց. Մենք քու հօրեղբօր տղեքներն ենք, դու Սանասարի թոռն ես, մենք Բաղդասարինն ենք, մենք էկեր ինք, քեզի իմաստ պէտք ա ըլնինք։

Ասեց. Էկէք էրթանք ձեզի պատիւ տանք։

Ասին.-Թէ իդին տուր, մենք ետ դառնանք։

Ետ դառաւ էկաւ տեսաւ օր մէրն ու քուր լաց կեղնին ախպօր վրայ։ Վերցուց չանդակ տարեց Մըսըր։ Տարաւ թաղեց, էնտեղ պատարագ էրեց։

Էտ կռվուն մէկ աշըղ թամաշա էր էրէ, գնացեր էր կապուտ կող, Ծանդուդ խանըմի քով գովացեր էր։

Ասեր էր. Ծանըմ, քու կերպարանքին տղամարդ մէկ Սասուն կայ։

Ծանդուդ խանըմ բաւականին բաշխիշ տվեր էր աշըղին, թէ իմ շքիլ տար տուր Դաւթին, թէ տղամարդ ա՝ կիգայ։

Աշուղը առաւ՝ գնաց Սասուն, գնաց Ցռան Վէգէվի դիվան։ Վէգէվ տեսաւ օր աշըղ էր էկէ, բերեց թէ սաղ էրա։ Աշըղ տեսաւ օր Վէգէվի գլուխ թրըքի մի կողով էր, ամէն մէկ յաղից գուբ կառնէր մէկ կոտ գարի, քիթ կար մենծ եմիշի ղդար, օր կուգայ էրկու լիտր։

Տվեցին աշըղին սաղ էնիլ։ Աշըղ սաղ էրեց, Ծանդուդ խանըմին գովաց, էտտեղ Ցռան Վէգէվ իմացաւ օր էկէր էր Դաւիթին պիտի տանէր, սովրցուց աշըղի սաղ ջարդեցին, լաւ ծեծեցին, էրեսին դուս, գիշեր, գինաւ։

Գնաց մէկ փոսի մէջ տափաւ, օր լուսուն յէլնի վախնի, էրէխէք առավօտը գայլն ցախ ժողվելու, աշըղի քուն տարեր էր, քներ էր, տղէ մէկը գնաց վրեխց ցախ ժողվելու, աշըղը զարդաւ,

ըսեց. Տնաշէն, Թագաւորի դիւան տեղ չըկ՚ըր, օր էրթէր քնէր, էկեր էս լատեղ մրսեր ես։

Ըսեց. Ձեր Թագաւորին կըսին Դաւիթ,

Գլոխը ՚ե մէ Թրքի կողով,

Ցաչից գուբ կառնի կոտ մի կորեկ,

Բիթ կայ էրկու լիտր համիշ։

Էրէխէն վերցուրց ասեց, Թէ էտի վէգէվը ա, Դաւիթի ախպէրը, Դաւիթ Մըսրը ա։

Աշըղ մէկ օսկի տվեց էրեխին, Թէ Մըսրայ ճամփեն նշանց տուր։

Տարաւ տվեց նշանց, չուրի գնաց Կապուտ կող, սազ սարքեց։ Լատեղ նոր Դաւիթին որ տեսաւ, Ծանդուդ խանըմի շքիլ տարաւ տվեց Դաւիթին։

Դաւիթ աշըղին ըսեց. Սազ էրա։

Սազ էրեց, Ծանդուդ խանումին գովեց։ Դաւիթ հանեց մէ բուռ օսկի տվեց։

Ասեց. Դու առաջ գնայ, ես ետնուց կիգամ, գնա Ծանդուդ խանըմից մուշտուլուղ առ։

Աշըղ գնաց։ Դաւիթ մէ օր մնաց, յետևանց ձին հնծաւ գնաց։

Գնաց իրիկվան Ալաթայ Թուշ էլաւ, Ալաթ Թուրքի քաղաք էր։ Մէկ օջախ չառաւ. Ալաթայ քհէն սատկեր էր, կնիկն օր Դաւիթին խելքը գնաց. Դաւիթին տարաւ էրան գոնաղ. Դաւիթ լէ ջահել տղայ էր. Թուրքն ու հայը չէր ճանաչէ։

Բէհի կնիկ ջուր գրեց, Դաւիթին լողկըցուց, լաւ պատվեց, կերցուց, խմցուց, տեղ քցեց, պառկաւ ծոցը քնաւ։

Դաւիթ տվեց հետը առաւ, սըբ նշանի մէկ չերէս սատցաւ, խոռվաւ, լուն չելաւ ձին հնծաւ, քշեց գնաց, կէս օրին տեսաւ մէ գոմէշ կվիր ա, աչ հաչ, ասեց, էս կովի տեր ինձի կախատայ։

Բշեց գնաց տեհաւ օր մէ գուբնի բուղայ գոմէշ ջրի մէջն էր, նեռաւանով բռնեց օր գարկեր, հօտաղն ըսեց, Թէ Սասունայ ծուռ, էտի գուբնի գոմէշ ա։

Ասեց. Ցելի արի էրթանք գուբնին մօտ, տենանք ինչ բան ա։ Հօտաղ գոմէշը քշեց տարաւ գուբնի մօտը. մանճակալ ճանաչեց օր Դաւիթն էր, գուբան կայնեցուց, բարևն առաւ։ Տեսաւ օր բեզարած են գոմշըներ, կը հըլըկին։

Ըսեց. Ուստայ, էս ջանավար կուրախանայ, ընդունք գիլան, հարցըկա Թող ջրի մէջ, տեսնանք կուրախնանն։ Մանճըկալ կը վախէնէր, հարճըկից, էրեց գետի մէջ. գոմէշներ գինջացան, ուրախացան։ Էտ գետաւազ հօտաղ վերցուց, Թէ — Սասունայ ծուռ, էսօր մանճըկալի օրն էր, Թէ մի քանի փատ չելիլ վարինք, դու չարճըկել տվիր, էղաւ խափան։

Դաւիթն ըսեց. Էտ փէտեր ժողվայ տու ընծի, փէտեր գուբ-նի լծերուն ըսեց, կը հասկընամ։ Դաւիթ ձիով քաշեց եօթ պատ էս կողմ, եօթ պատ էն կողմը վարեց։

Հօտապն ասեց. Սատունա ծուռ, էտի քու հունար չէ, քու ձիուն ա։

Ասեց. Աբի ձին բռնա։

Հօտապն էկաւ ձին բռնեց, լծներ յըմմէն հընդեց, (դաւ-թուղի տակ դրեց), եօթ փատ լէ Դաւիթ վարեց, առաւ էկաւ, արտ պրծաւ։

Ըսեց. Զըզի օր դուվաթ չկայ, էս էրկաթներ, էս լուծեր յիմալ կը շալակիք կը տանէք տուն։

Ասեց. Կը չինենք՝ էրկու տավար կը լծինք, կը տանինք։

Հօտապը բռնեց, լծկըներ յըմմէն բնատով փաթթեց, պըտի տաներ տուն, Դաւիթ թուր թալեց, հըմը բիրադի կտրեց, նոր էտտեղ մանճըկալը վերուց ըսեց. Վայ իմ տունը աւիրեցիր։

Ըսեց. Ուստա, օղուրի վրայ եմ, ինձի մի անիծէ, մէ բուռ օգկի տվեց մանճըկալին, գուբեան տաւարով կառնէր։

—Դաւիթ, ջան, հացն էկաւ, կեցի հացն ուտենք, նոր գնա։

Ասեց. Ուստա, ես հաց ուտեմ, հօտապներ կը մնան անօթի։

Էտ գեաւազա հօտապն ասեց. Աշխարհ գուբենի մօտ կը լիա-նայ, դու կեր, մենք թող մնանք անօթի։

Դաւիթ նստաւ, քամակ տվեց սէլի ականը, մենծ մի զազան մի փլաւ լին բերած, բերին դրին Դաւիթի յառէջ. էրկու հաց կէնէր մի թիքայ, հինգ լոխմա զարկեց, փլաւի տակ հանեց։

Մէկ բղող թան լէ բերած լին, մանճըկալն ըսեց. Դաւիթ, առ խմա, սիրտդ ի հով ըլնի, ճամփայ կերթաս, չը ծառվընաս։

Ինչքան օր հաց կար, ժողվեց դրեց բերան, ու էտ բղող թան խմեց վրեն։ Խտեղից ձին հեծաւ, քշեց կապուտկող։ Մէկ պղտիկ մարդ կար, անուն Գորգեզ էր, Խանդուդ խանըմ ըսեց էտ պղտի մարդուն, թէ մուդաղ կեցի, Դաւիթ կիզայ։ Դաւիթ օր գնաց կապուտկող, Գորգեզ գնաց յառէջ ըսեց.

Դուն Խանդուդ խանըմի մարդն ես։

Ըսեց. Հա.

Ըսեց. Խանդուդ խանըմի ու իմ բանը օր դղաւ, քեզի կէնիմ քաւոր։ Առաւ գնաց, եօթ փահլըվան կար, էտ փահլըվաններէն քովէ։

Գնաց, առանց բարև տալու իրեքի վերև նստաւ. փահլըվան-ներ յիմացած են թէ էտ զօռպա մարդ ի, էրկու տղայ ճամփած, եօթը տարվայ գինի բերած լին, օր հարբըցընեն, ըսպանին։ Բե-ըին գինին դրին իրենց յառաջ, տաշտի մէջ, մենծ ջրխմիչ թա-սով լցին, տվին իրենց մարդուն։

Շնողք էղաւ (շնորհակալ եղաւ) տվեց Դաւիթին, մէկ լէ տվին էն ներքևի մարդուն, էն լէ առաւ, շնորք էղաւ, տվեց Դաւիթին։ Տվեցին էն մէկէլ կողմի մարդուն, էն լէ շնողք էղաւ, տվեց Դաւթին։ Դաւթի աճըղ բռնեց, տիկ յըմմէն լցեց տաշտի մէջ, վերցուց դրեց բերնին, յըմէն խմեց։ Գինին Դաւիթին տաբաւ, բեզարուկ մարդ էր, հօթն էլ թրեր քաշին, ուզեցին օր ըսպանին։ Բաւոր Գօրգին կայնուկ էր էտտեղ, ըսեց թէ էրթամ ջուհաբ տանիմ Յանդուդ խանըմին, վայ թէ ըսպանեն, տեղ հեռուն էր, ձէն տվեց Դաւիթին, թէ սանահէր Դաւիթ, պատրաստ մացի, ըսեց, էսի քնած տուն չէ, վխտս տուն է։

Ասաց. Բաւոր Գորգի, հասիր դարկախ զարկ։

Էտ փահլըվներ թռան դուս, Դաւիթ յելաւ յեռներըը, բռնեց մէկի ոտը լորգից, չանդակ գնաց, ճիւը ծռաց ձեռ։ Հօթն էլ ըսպանեց էտենց, դարձաւ էկաւ նեքսև, տեսաւ օր Բաւոր Գորգու վիզն յէլեր էր գնացեր էր յետևանց։

Ասեց. Բաւոր Գորգի, էտի ինչ է էտենց էղէ։

Ասեց. Փահլըվընի թևին ա առէ, վիզը տեղից յելեր ա։

Էտենց մէկ մատով զարկեց վզին, գնաց ընկաւ տեղ։

Ասեց Արի էթանք դինջ պառկինք քնինք, մացինք մենակ։

Բաւոր Գորգեզ հացի պատրաստուէթուն տեսաւ, Դաւիթ հաց կերաւ, չայ խմեց, ըսեց։

Բաւոր Գորգի, իմաձ տեսնանք Յանդուդ խանըմին։

— Թէ առաւօտ շաբաթ օր ա, ուր տեղէն դուս չըպըտի եղնի, քառասուն չաղեա Յանդուդ խանըմին տանին խաս-պախչան մանգալու. արի, քեզի տանիմ խաս-պախչան, դարդըճի յետևը պահ մարի, նի որ անցնին, կը տեսնաս։

Յելան գնացին խաս-բախչան, Դաւիթ մէ օսկի տվեց դարդըվանչուն, մտաւ դարդըճի յետև։ Արև օր առաւ՝ դոլի ձէննն էկաւ. մէ Թօփալ Չաուխա (աղչիկ) ընկել էր յառաջ, պեօվընդ կը քաշէր, քսան չան օր էկան ընցան, Յանդուդ խանումը էկաւ, Դաւիթ ձեռ թալեց Յանդուդ խանըմի վլով բռնեց։ Յանդուդ խանըմ լէ ձեռ թալեց Դաւթի փողպատ բռնեց. Դաւիթ մի պագ առեց, ձէն չերեց, մէկ էլ առեց, ձէն չերեց, օր իրեք անգամ պագեց, Յանդուդ խանըմ Դաւիթին քաշեց յետևանց, զարկեց պատին, քիթ ու բերան արնըլաւ։ Դաւիթ մէտք էրեց օր, պէտք ա կապուտակով յըմմէն չարդա, յելաւ էկաւ քաւոր Գորգու մօտ էտենց արնոտ, էն ախչըկներ օր Յանդուդ խանըմի մօտ ին, դացին Թօփալ Չաուին ըսեցին, թէ-Դաւիթ երեք պագ առաւ, զարկեց քիթ ու բերան արուն ըլաւ։ Թօփալ Չաուին Յանդուդ խանըմին ըսեց.

Սաչի պուչուղ, գերիդա բողուխ, (Մազերը կարճ, յետևը բաց), հիմի քաղաքը կաւերայ, գացէք մէ սինի մէյվա քաղէք, էլ ուրախութենի ժամանակ չէ։ Քաղեցին, բերին դրին մի ջառիի գլխի վրայ, թօփալ Ջառիէն ընկաւ յառաջ, Յանդուղ խանըմը ընկաւ յետևը, էկաւ Դաւիթի մօտ։

Ըսեց. Դաւիթ, ըսեց, դու քու հօր փահլըվանն ես. Յանդուղ խանումն էլ ուր հօր փահլըվանն է, ըսեց, մէ բան կայ ըտեղ օր քեզի զարկէ. քիթ բերան արներ ա։

Յանդուղ խանում յետվանց Դաւթի թևեր բռնեց, Դաւիթի սիրտը հանդարտաւ. Թօփալ Ջառին, ու էն մէկէլ Ջառին, մէյվէն դրին գետին, փախան գնացին։ Նոր էնտեղ Յանդուղ խանըմը Ջուր բերեց Դաւիթը լըվացաւ, մէկտեղ նստան, էտ մէյվան կերան, հետու Դաւիթ ձեռ թալեց Յանդուղ խանըմի վըզովը, պաղեց, ինչ էրեց, ձէն չէրեց։

Ըսեց. Ինչի՞ էն վախտը խփեցիր, հիմի ձէն չես հանում։

Ասաց. Մէկ պագեցիր՝ ձէն չէրի, քու ճամփուդ բաշխեցի, մէկ էլ պագիր՝ քու զարիբութեան խաթր էրի, մէկ էլ աւելի պագիր՝ էլ չըհամբերեցի։

Դաւիթ ըսեց. Հիմի դու ինձի պտի առնես։

Յանդուղ խանըմ ըսեց. Լօռուայ, Համզի Շապի Յօրտանցի գլուխ բերեցիր, ես քեզի կնիկ, դու ինձի մարդ։

Դաւիթ ըսաց. Լաւ, լուսուն կերթամ։

Յանդուղ խանըմ կերակուր պատրաստեց, հաց ֆխեց, դրեց հետը օր վառա կը կտրեմ, օր չհկայ, արի Ջանդակների մէջ իշկայ, իմ Ջանդըկի վրայ խաչ կայ, իմ Ջանդակ գտի՝ թաղա, մի թողա արևի երես։

Դաւիթ հեծաւ ձին գնաց։ Մեռնիմ ուրին սուր Սարգիս, էկաւ կէս օրին Դաւիթին դէմ առաւ։

Ըսեց. Դաւիթ, կերթաս էն շներու հետ կռիւ անես, ասեց. Էս ա մէկ ամիս ես էտոնց հետ կռիւ կէնինք, չը կարացայ յաղթէ. աղա դանդիլ, ղարա դանդիլ գետմին խառ ա էղէ, ինձի կը կանչեն, ես կերթամ կը հաանիմ էնոնց, եփօր դու նեղ ընկար, կը դառնամ կը հաանիմ քըզի։ Դաւիթ ընցաւ, գընաց։

Գնաց, գնաց մէ սարի քամակ, տեսաւ օր Քեռի Թօրոս ծառ դրէ վըր թևին էկաւ, ասեց.

Քեռի, խէր էղնի, ինչի՞ համար էկար։

Ասեց. Աշխըրքի մէջ էտոնցէն զօռպա մարդ չկայ, էկայ օր քեզի հըմար Աստված կանչեմ, օգնեմ։

Քեռի Թօրոսն ու Դաւիթը իրար հետ գնացին Լօռի։ Քեռին յետաւ մէ բարձր սարի գլուխ, Դաւիթ գնաց էտ մարդըկոց մօտ։

Ընատնք ըսին, թէ ինչի՞ հըմար ես էկէ։

Թէ էկեր եմ Յանդուդ խանըմի հըմար նշանաբան տանիմ։

Երեք օր նստաւ էտոնց հետ կերաւ, խմեց, յետոյ թէ նշանաբան ալէք տանիմ։ Հանեց ճկոի մատնիք ալեց, էգկեց թև, գնաց արմունկ կայնաւ, հեծաւ ձին օր պէտք ա նշանաբան տանա, գնաց մէ քիչ, յետ գարձաւ։

Ըսեց. Միթէ էկեր իմ նշանաբա՞ն տանիմ, էկեր իմ ձեր գլուխ տանիմ։

Շարի Խորասանցին ըսեց. Ծուռ Սրգօի փոկերից (ապդից) ա, ել գլուխը կարէ։ Դաւիթը չորս կողմից խաչ հանեց իրա յերես, ու առան իրար գիւլաշ, Լօռուայ Համզէն ու Դաւիթ. երկու սըհաթ գուլաշ կըպան, Դաւիթ վերուց, ալեց գետնով, գլուխ կարեց։

Մէկ էլ ախպեր յետաւ, հըմա Դաւիթ չորս կողմից յերես խաչ հանեց, առան յիրար գիւլաշ, երկու սըհաթ գիւլաշ կըպան, էտոր էլ ալեց գետնով, գլուխ կարեց։

Ջին հեծաւ, էն վախտը օր կէրթէր էն կողմ, հարիր ջան կապանէր, կընցնէր, կընցնէր մէկել կողմը՝ երկու հարիր ջան կըսպանէր, էնպէս ջարդեց, օր յետաւ արիւն՝ ջանդակ քշեց։ Մէկ բոլուկ ձիաւոր յետաւ օր Բեռի Թօրոսին ըսպանէր, մէկ ձիուն զարկեց աճիպանկու, յետաւ քեռու մօտ, ըսեց. Ջիաւոլներ գեօղ գնացին։

Բեռի Թօրոս ըսեց. Ծաւ թալի, գնացին լցվան ձորը։

Ասեց. Որդի, էս երկրի յաղթող էլ չկայ, յըմմենէն զոչաղներին ըսպանեցիր։

Դաւիթ երկու գլուխ կապեց բոչամներով, յետաւ ձին հեծաւ, քշեցին գնացին, էկան հասան էն ճամփան, օր քեռի Թօրոսը պըտի ջոկվեր երթէր, Բեռին ջոկուաւ գնաց Սասուն, ըսեց.

Դու էլ գնա Յանդուդ խանում վերու արի։

Դաւիթ ճամփու հետ քշեց գնաց. տեսաւ որ երկու լաւ ձիաւոր էն կողմից էկան։ Ջիու վերևէն իջաւ, գլխները թալեց գետին, ձիու ղոլնները պնդեց, յետաւ օր ձին հեծնէր, էն ղըմից էն մէկ ձիաւոր ձին լցեց էկաւ։ Էկաւ էնպէս զարկեց Դաւիթին, օր քիթ ու բերան բըլաւ. Դաւիթ գըդղ վերուց օր զարկեր՝ ձեռք թալեց կոտկըներ բըդեց, տեսաւ որ Յանդուդ խանումեր էս զարկող, ըսեց.

Քու առնը աւիրի, մէկ պուտ արնի համար, մէկ կոտ արուն ինձնէ թափեցիր։ Յանդուդ խանըմի հետինը իրա աղբէր պարոն Վարդ էր, առան գացին կապուտկող, գացին հարսանիք բռնեցին, օխտ օր, օխտ գիշեր հարսնիք էրին, Դաւիթ ու Յանդուդ խանըմ պատկեցին։ Պատկեցին, պրծան, Պարոն Վարդ կերթէր՝ նէֆիր կը բերէր, իրար հետ կուտին։ Էտեղ Դաւիթ մէ տարիմ մնաց։

Ամանուէթ խաթուն մնաց էրկու հոգով։ Պառկաւ բերեց մէ տղայ, կնքեցին, անունը դրին պզտի Մհեր։ Դաւիթ հօթը տարի մնաց էտեղ, ամէն օր Պարոն Վարդ կերթէր նէֆիր բերելու, մեր սովըրցուցեր էր, Մհեր կերթէր յառէջ, նէֆիր կառնէր կը բերեր, մեր կէփէր, իրիքով կուտին, քեռուն չէին տայ։ Քեռին էն մէկ օր դնաց սարը, շատ բեզարաւ, նէֆիր բերեց, իրա քվոր տղին ըսեց. Մէ շիշ խորոված ինձի հըմար ճամփա։ Մհեր խռովաւ, վերուց նէֆիր զարկեց քեռու գլխու վրայ, էկաւ տուն, դուրզ վերուց, կուզէր զարկեր հօրն ու մօր ըսպանէր, թէ էրթանք Սասուն, քանի օր մէկ շիշ խորոված ուզեց, լաց կըլնէր թէ դուք կերթաք, իմ դիւշմէներ կիգան իմ քաղաք կաւիրին։

Մհեր ըսեց. Դուք յելէք գնացէք, ես քեռու հետ կը մնամ, դիւշմնին կը յաղթենք։

Դաւիթ ու ուր կնիկ յելան իրար հետ Ալաթով գնացին, Ալաթցիք էկան յառէջ կտրեցին, թէ քեզի դիւշման կայ, պըտի գայ քու հետ կռիւ անայ։

Ըսեց. Իմ կնիկ իմ հետն է, չիմ կարող կռիւ էնէ, յերթում կերաւ, թէ էս սըբ Նըշան վկայ էղնի, օր կնիկ տանիմ տուն՝ ետ դառնամ գամ։ Սըբ Նշան մէկ օր օր թուրքի կնկան հետ տվեց առաւ, մէկ օր էլ էսօր խռովաւ, էրկու էրեսն է սևացաւ։ Դաւիթ տարաւ հասուց տուն կնկան, ետ դարձաւ էկաւ, էկաւ Ալաթ, քաղքով յելան օր հետ կռիւ էնենն։ Փախաւ օր քաղքէն յելնէր դուս, դառնէր կռիւ էնէր, մի ջրած արտի մէջ ընկաւ, շորեր դառաւ ցեխ, գնաց աղբրի վրէն օր շորերն ու ձին լվանայ, շորեր լվաց, յիստակեց, էրեց օր ուր շապիկ հագնէր, սըբ Նշան գետին էր, էն կհակէն (աղջիկը) որ ծներ էր Դաւթից ու Ալաթի քէհու կնկայ մօտէն, նետ ու անեղով զարկեց, Դաւիթին ըսպանենց։

Դաւիթ բոռաց, ձէն գնաց Սասուն, համ էլ Պարոն Վարդ լսեց Դաւթի ձէն կապուտ կող։ Պարոն Վարդ հօթ տապաղա գետին քանդեց, օր Մհերին պահէր՝ չը գէն տանեն։

Քեռի Թօրոսը յելաւ վերցուց Ծռան Վէգէվ, Ջենով Յովանը, Ճնճղա-Փոքրիկ, Խոռ-Մանուկ, էկաւ Դաւթի հաւարն։ Էկան հասան Դաւթի մօտ, Դաւիթի ձին չէր թողէ մարդ իզէր Դաւթի մօտ, կը զարնէր, կըսպանէր։

Քեռի Թօրոսն ու Դաւիթի աղպրտանքն էկան հասան, տեսան օր Դաւիթ հըլա սաղ էր։ Էտեղ վերցուց ըսեց, թէ քեռի, իմ ցեց իմ անձից ա։

Ըսաց. Թէ տղայ էղնի, թէ աղչիկ, հըմի մեռեր ա իմ ձէնից էտ ղամշի մէջ։ Գնացին տեսան օր՝ ղորդ, մեռեր էր, քաշեցին բերեցին Դաւիթի մօտը։ Դաւիթ մատ կոխեց էտ աղչկայ ջիկեաը,

արուն հանեց, տվեց լեզվին, մեռաւ։ Դաւիթ մեռաւ, բարձան դա-
վի վրայ. վեդէվ հնծաւ Դաւիթի ձին, յառաջ քշեց, գնաց։ Յան-
դուդ խանըմ յելաւ բալկոնը, դիւրբին դրեց յաչից, տեսաւ օր մէկ
ձիաւոր կուգայ, ձին Դաւիթի ձին է, հըմը վրինը Դաւիթ չէ, էկաւ
հասաւ։ Յանդութ խանըմը բալկոնէն հարցուց թէ քու ախպօրէն
ինչ խաբար։

Ըսեց. Յանդուդ խանըմ, դու խօշ, մէ խօշ, (դու լաւ, ես
լաւ). սէր է գրեսա բաճկի առաւշ (քու գլխու շորեր լաւ է), Դա-
ւիթ մըրկա սէրէ մը խօշ (Դաւիթ մեռաւ, իմ գլուխս ողջ լինի)։
Յետաւ փիլաքանով, որ Յանդուդ խանումին բռնէր, Յանդուդ խա-
նում ձեռ թալեց ճաղեր ջարդեց, քառասուն ոտ նարդըվընի գըլ-
խից իրեն քցեց, մեռաւ. Քեռի Թօրոսն էկաւ տեսաւ օր մէկ
դարդն էղեր է էրկու դարդ, բերեց էրկուսին էլ լվանալ տվեց,
պատրնքեց, Յանդուդ խանըմի ծըծերուց կաթ էր գայէ, էկան
քեռի Թօրոսին ըսին, թէ կաթ էր գայէ ծծերուց, մէկ օղլուշաղ
ճամփից օր փորն իրիշկեր, տենէր թէ էրկու հոգով էր։

Գնացին տեսան օր էրկու հոգով չէր, էրեխայ էր բերէ՝ ճա-
յեր էր կապուտկող։ Յետն էրկուսն էլ թաղեցին, պատարագ
էրին։ Օր պրծան, էլան յըմմէն գնացին կապուտկող Մհերի հա-
ւարին, օր Մհերին բերեն։

Էկան, հօթ գռնով անդունդի մէջ Մհերին պահած ին, իրա
մամկայ գիրկն էր։ Դաւուլ, զուռնայ կը զանին, օր բոռան չը
լսայ։

Քեռի Թօրոս Պարոն Վարդին ասեց՝ թէ Դաւթին տղայ է
էղէ, մացէ էտտեղ, տվէք տանինք։

Կըսէ. Տղայ չէ էղէ։ Շատ կը զօռին. կասէ. Մէ աղչիկ էր
էղէ՝ մեռեր է։

—Էթանք գերեզմեր, ըսեց, գերեզման տեսնանք, իմ աղգի
մէկ տարեկանինը մէկ շէնք ա, էրկու տարեկանինը՝ էրկու շէնք ա։

Գացին գերեզմանատուն, քեռի Թօրոս մէկ շէնք չափեց,
հօթ գերեզման ընցաւ էնդէն։

Ըսեց. Իմ աղգից էտտեղ թաղուկ չկայ։

Քեռի Թօրոս ըսեց. Ջէնով Յովան, արի էտտեղ բոռա, Մհեր
խանչայ։ Բերին հօթը գոմշու կաշի փաթթին Ջէնով Յովանին.
որ չը ճըղվէր բոռալիս. բամբակ ճըխտեց պնչերն ու յանկճները,
բոռաց։

Ասաց. Մհե՛ր։ Մհեր յանդունդը լսեց. էրկու էրեխայ ոտնե-
րու մէջը ըսպանեց, խափեցին, դարձուցին յետ։

Քեռի Թօրոս ըսեց. Ղայիմ բոռայ, էտի չեղաւ։ Ջէնով Յո-
վան էնենց բոռաց, օր Մհեր մէկ լանգայ (քացի) զարկեց, հօթ

դուռ կոտրաւ, յելաւ դուս։ Յելաւ գնաց Ցռան Վէղէվին գլուխ իջուց, թէ իմ հօր մօտէն ինչ խէր հարցունք։

—Բու հէր մեռաւ, ըսեց։ Ես քեզի անուշ։ Խելք գնաց, հօրն օր մնաց։ Բեռի Թորոս Խոռ-Մանուկ Թողեց Մհերի մօտ, ինքը աւաւ Ցռան Վէգօին, Զէնով Յովանին, Ճընճղաւ-Փոքրին, ետ դարձաւ։ Մհեր հօրն օր մնաց ընկուզ, ետու յելաւ տեսաւ հօր շորեր քերած են, հազաւ, ինչպէս մենծ մարդի շոր հագնի մէ երեխայ։ Սըր Նիշան առաւ ձեռն համբուրեց, էնենց լցեց, օր շորերը կը ճղէր։ Էոտեղից յելաւ, ըսեց։

Բեռու տղայ, իմ հեր որտեղ ըսպանած ի, էն ճամփով տար։

Ըսեց լաւ։

Ըսեց. Արի սըր Նիշանով վրայ էրթում կեր, օր էն ճամփով տանիս։

Ըսեց, կը տանիմ էն ճամփով, հըմը երդում չեմ ուտէ, մէղք ա։ Աւաւ գնաց ճամփու հետ. էրկու աւուր ճամբան գնաց, հասաւ Ալաթ։

Ասեց. Բեռու տղայ, մէ ջաղաց գտի, տափենք, հաւար քցինք, քաղաք յելնի դուս, ջարդինք։ Գնացին մէ ջաղաց գտան, Մհեր մէ բուռ օսկի տվեց ջաղացպանին, թէ գնա հաւար տար, թէ Դաւթի տղէն էկեր ի, պզտիկ է, յելէք ըսպանէք, քանի չէ մեծացէ։

Յելան ինչքան մարդ կար, ընկան Մհերի յետև գնացին, Խոռ Մանուկ ալուրը զարկեր էր յերես. կայներ էր ջախչի դուռ, կասէր.

Բափուր օղլին էս ձորով ա գացէ։ Պառաւներ թունդրա անդրոց (թոնրի երկար ձող) դրած թևին կերթեն կըսին։

Խոռ Մանուկ ըսեց Մհերին, յըմմէն թուփ էկան, ել ընկնենք ջարթենք։ Էլան ընկան յետևից ջարդին, ոաթ էրեցին, ըսկի մէկ հատ էլ սաղ չը թողին, ձեռն էլ ոադ էրեցին, ետ դարձան էկան քաղքի վրայ։

Մհեր ըսեց Խոռ Մանուկին, թէ արի ձեռ զարկ սըրը Նիշանին երդում կէ, օր մէ կաւոու, մէկ շուն լէ սաղ չը թողուս իմ հօր դիւշմընի քաղքի մէջ։

Ըսեց. Ձեմ երդուի, հըմը յըմմէն կըսպանեմ։ Մէ կողմից Մհերը ջարդեց, մէ կողմից Խոռ-Մանուկ, ոատ էրեցին. Մհեր կաւուն կը լարէր կը հանէր մէչիդի գլուխ, կը գարկեր կը բերէր ցածը։

Եաև Մհեր ասաց. Արի երդում կէ սըր Նիշանի վրայ, թէ մէկ կաւու, մէկ շուն սաղ չես թողէ։

Խոռ-Մանուկ ասեց. Ձեմ երդուի, համա դիւզ կասեմ, ասեց. Աստղ Երզնկացու մէկ նշանլու աղչիկ կայ, օր Աստղ Երզնկացունե

պիտի առնէ, էն աղչիկն ու ուր ջառիէն սաղ էն։

—Ասեց. Բեռու տղայ, քու աչքդ ընկեր-ա էնոր, էնոնց համար չես ըսպաներ, ըսեց, պէտք ա պահիմ վրէդի։ Մհեր իրեք չորս գեղ բերեց լցեց էտ քաղքի մէջ, Խոռ-Մանուկ ուր քրոջ պէս պահեց էտ ախչկան, չունքի կը վախենար Ասող Երզնկացուց։ Մհերը գնաց Սասուն, ձին առաւ ընդոր տարաւ Սանահէր տէր-տէրի տունը. Ցռան Վէգէվի կնիկ էկաւ իրա մարդու մօտը ըսեց.

Էկեր ա մեր տղէն մեր ազքատ տէրտէրի տունը։

Ասեց. Ձին ա տարէ, ինք չէ ճանաչէ, սինիմ մէյվա առ, գնա առ արի։

Էտ կնիկ յեղաւ յաչքեր դեղեց, գլոխ կապեց, գնաց։ Էտ տղէն յեղաւ օր, բալքի հօրեղբօր կնիկն էր, ձեռքը պագէր, չճօղեց կնիկ օր ձեռքը պագէր։

—Արի, ըսեց, դու ինծի հետ գլուխ մէկ արա, քու հօրեղբօր դեղեմ, սպանեմ։

Մհեր գլոխ չտվեց, ինչ իլլաճ էրեց, ձեռնէն չըպրծաւ, հօրեղբօր կնկան հոլընդեց, գնաց պատաւ դետին։ Յեղաւ շորեր ձղեց, քիթ ու բերան յարընեց, գնաց իրան մարդու մօտ, ըսեց.

Ո՛չ դու էղնիս, ոչ քու ախպօր տղէն, ըսեց, էտ օյին իմ գլոխ հաներ ա, իմ շորեր պատռեր ա, քիթ բերան արներ ա, թէ արի քո գլոխ իմ հետ մէկ արա։

Ցռան Վէգէն ըսեց. Գացէք ըսէք էտ պլէճկերի տղին թող էլնի կորի, թէ չէ կելնեմ կսպանեմ։

Գացին ըսեցին, Մհեր հեծաւ ձին, էտ դարձաւ։ Ձին օլըրաւ թըղ Հալապ։ Ասող Երզընկացին էկեր ա, ղոշուն դրեր ա Խլաթ, օր Խոռ-Մանուկին ըսպանայ, ուր նշանլուն տանայ։ Ձին պէտք ա էրթար Հալապ, տեսաւ օր իրեք ձիաւոր ընկած են մէկ Չէյրանի յետև. էտ Չէյրան պրծաւ, մօտենուց փախաւ, էլ չեն կարող բռնէ. Մհերին. ըսին. Մենք մեր ձիանը սպանեցինք, դու մեր Չէյրանը մեր ձեռնից առար։

Ըսեց. Չէյրան առէք ձեզի փեշքէշ։ Տղէքներ վերցրին, թէ դու մեզի ղոնախ։

Էտ իրեք տղէքներ լէ Հալպու Խալիֆի տղէքներն են։ Հալպու խալիֆի մէկ ազչիկ հասեր էր, խալիֆէն կայներ էր թէ չեմ կարդի, Դաւիթի հետ խրար եմ կարէ, պէտք ա աղչիկս տամ ընդոր տղին։

Տանուտէր, տէրտէր ու ինոր վոխ խալիֆի հետ նստուկ ին ժամի դուռ, տեսան օր իրեք տղէք էկան. մէկ ձիաւոր լէ հետոնէն է։

Խալիֆէն ըսեց. Ես ձիաւոր Դաւիթ չէ, համա Դաւիթի տղան ա, առաւ գնաց ուր տունը, մէկ մէկ ձեռ շոր հագուց, հարսանիք բռնեց, աղջիկ պսակեց էտ տղի վրայ։ Բերեցին, մէկ օթախի մէջ, ուղց կտրեցին, օր մէկտեղին, Մհեր քաշեց թուր դրեց մէջ տեղ։

Աղչիկ ըսեց. Ինձի չՓս հաւնի։

Տղէն ըսեց. Օր չը հաւանինք, չինք պսակվի, ըսեց. ուխտ ունիմ, երթամ կատարեմ, իդամ։

Լուսուն, լուս բացվաւ, տղէն յելաւ աղչկայ մօտից, շնորհակալ էղաւ, ձին հեծաւ. թագաւորի տված շորեր լէ քցեց շարիտի վրէն, գնաց դըբա Խլաթ, Խոռ-Մանուկի հաւարը։

Տեսաւ օր Աստղ Երզնկացին էկեր ա Խլաթ. գնաց Խոռ-Մանուկի մօտ, Խոռ-Մանուկ վախլուԹինէ դռները փակեր ա, յերդիկներ հողեր ա։

Ըսեց. Խոռ-Մանուկ, յելի գնա կռիւ արա։

Ըսեց. Մհեր, դու երեխայ ես, չըս գինայ, Աստղ Երզնկացին շատ զօռպա մարդ ա. ֆանդով ա, թող ընծի, քեզի լէ կսպանայ։

Մհեր ելաւ գնաց Աստղ Երզնկացու մօտ։

Աստղ Երզնկացին ըսեց. Մհեր, դու իմ ախպօր տղէն ես, ես քեզի հետ կռիւ չեմ էնի. Խոռ-Մանուկ իմ դիւշման ա, թող գայ կռվենք։

Ըսեց. Խոռ-Մանուկ չի կռվի։

Ըսեց. Իմ նշանլուն սալամաթ ա, տուր տանեմ։

Ըսեց. Փու կնիկ իմ հօր դիւշման ա, չըմ իտայ տանես, պէտք ա կռվենք։

Էտեղ Աստղ Երզնկացին ու Մհերը յելան օր կռվին։ Առաւօտվօրէ ինչուր կէս օր կռվան, մէկ գէրըզ Աստղ Երզընկացուն չի քիսաւ (դիպաւ), Մհեր օր կը զանէր՝ կը ցոլէր թևի տակով կընցընէր, չէր քանէ, համա Աստղ Երզնկանցին էնքան զարկեց, օր Մհեր հիւանդացաւ։

Աստղ Երզնկացու նշանլուն յելաւ բալկոնը, աչքեր դեղեց, գլոխ կասեց, ծծեր թալեց դուս։

Ըսեց. Աստըղ Երզնկացի, քու ախպօր տղէն էրէխայ ա, խնայա, քեզի էս ծծերի մէջ կը պահեմ։

Աստղ Երզնկացու աչքը ընկաւ իրա նշանլուին, Մհեր գուրզ մի զարկեց Աստղ Երզնկանցին էղաւ տասը կտոր։ Մհեր ձին հեծաւ, Աստղ Երզնկացու ղոշուն բիրադի ջարդեց. ձիուն լէ ջարդեց։ Մեր գեղէն մի մարդ էտեղ տեսեր ա, հինգ խալվարի տեղ գերեզմներ ին, ամէն գերեզմնի մէջ հինգ զանդուկ քցած ա։

Դառնանք Մհերի վրէն. Մհեր էկաւ Խոռ-Մանուկի մօտ, թէ էտեղ մնացի, պէտք ա էրթամ Հալապ։ Գնաց Հալապ հիրա կընն-

կայ մօտ, դիշեր պառկաւ ուր կնկայ մօտ, կնիկ բերից թուր դրեց օրթալըդ, թէ Բուբսայու քաղաք իմ հօր մօտէն խարճ կառնեն, ըսեց, էն խարջն օր կտրեցիր, ես քեզի կնիկ՝ դու ինձի մարդ, պառկան քնան: Լուս բացվաւ յէլան, Մհեր հեծաւ ձին գնաց Բուբսայի: Տեսաւ օր ճամփի վրայ արճիճ ա հալած լցած, ձին կայնաւ, արճիճի վրայ չելաւ, Մհեր իջաւ ձիու վրայէն, քառսուն փահլըվան կայնած էր մէկ կողմը, քամանճեն (քամանդ քցողը) էլ կայներ էր մօտ, քամանդ քցեց, ընկաւ Մհերի քամակը, Մհերը մէկ կողմ քաշեց, ընդոնք մէկ կողմ քառսընով, Մհերը օր իրար տվեց, փահլըվներու թևեր տեղիցը դուս էկաւ. էտ քաղքի տէր էկաւ, էտ քամանդճու երես մէկ սիլլա զարկեց, ասեց.

Լաւ քամանդ թալ, օր թևերու գլոխ բռնայ: Թալեց քեամանդ թևերու գլոխ բռնեց:

Բաղաք կայնան մէկ դեհէն քաշին, Մհեր մէկ դեհեն, Մհերին տարան թալին քառսուն կազական հօրը: Գնացին արճիճը հալին, օր բերին լցնին վրէն: Մի պառաւ կար եօթը աղչիկ ունէր, կը ճամփէր հաց ժողվին, բերին հորու մէջ տին Մհերին, ուտեն: Էտ պառաւին մէկ հօր կար, քառսուն կազ ընդրա չափն էր: Պառաւն ըսեց.

Մհեր, մէկ բախ, մէ գլունկ տամ, կանաս ծակես մտնես իմ հօրը:

Մհեր ըսեց. Տուր: Տվեց. Մհեր ծակեց մտաւ էտ հօր, ըսաց.

Պառաւ, կռնաս մէ քանի չլի կտոր բերես, օր զարկեմ հորու ծակի դէմը, արճիճն օր լըլին, չի գայ էրեցայ: Պառաւը տվեց, Մհերն էլ ծակը կալնեց:

Էկան,—Բեաֆիր օղլի, քուգուդ անիծվի,—ըսին, ու արճիճը լցեցին հորը: Մհերը փախեր, մտեր էր պառվի հորը, ջուրն լէ զարկեր ի ծակի դէմը, օր չըգայ էրեցայ իրեն:

Մհեր ըսեց պառվուն: Կանաս մէ երկար շըրիտ բերես, քանի ղուվաթս չի կտրուէ յելլիմ հորից: Պառաւ բերեց շերիա, վերև կապեց, ծէրը թալեց հորը: Աղչիկներն ու պառաւ կախվան մէկ կողմից, Մհեր լէ փաթթըվաւ շերիա՝ յելաւ: Յելաւ ընկաւ քաղքի մէջ շուռ էկաւ, մարդ չի ճանանչէ, Մէկ դարիբ ջուլիակ (ջուլհակ) յելեր էր մէկ բուշ կող կտաւ կը հինէր, Մհեր գնաց ընրա մօտ կայնաւ, թամաշա էրեց: Թել կտրաւ, Մհեր կապեց. էտ ջուլհակը դարիբ մարդ էր, խաղ կըսէր դիշէր:

Մհեր հարցուց, թէ տենանք ինչ դարդ ունես քեզի:

Ըսեց. Ինչի հըմար իմ դարդ կը հարցուս:

Էտ ջուլիակ ըսեց. Ես Հալպու քաղքից եմ, ըսեց, Բեափուր օղլի Մհերը երեխայ տղայ էր, խաբին բերին քցեցին հորը, ըսեց.

Մէկ դէէն սար ա, մէկ դէէն ծով ա, մէկ ճամբախ ա, Մհերի ձին էտ ճամբախ կորեր ա, անցնող դարձողին կը դարկայ, կըսպա-նայ։ Ըսեց. Քեասիբ մարդ եմ. եօթ աղջիկ կայ ընծի, բանըմ աշ-խատեր եմ, ճամբախ չկայ օր տանեմ պախեմ իմ աղջիկները։

Մհերն ըսեց. Մէկ խոստովանանք կայ, կը պահե՞ս։

Ըսեց. Ինչի՞ չեմ պահէ։

Ըսեց. Էն Մհեր ես եմ, փող խարջա, ինծի պահա մէկ քանէ օր, քաղաք կաւիրեմ, քեզի փող շատ կիտամ։ Էտ Ջուլեակի փա-րէն Մհերի համար երեք օր հերիք էրաւ։ Ջուլեակ գնաց մէկ դա-րիր բազրկանի յայտնեց, էնի բոլ եմակ առաւ Մհերը կերաւ։

Մհերն օր տեղ առաւ, գիշեր ձին հեծաւ էկաւ իրա կնկայ մօտ։ Կնիկը նստած էր գիլէր, գիլէր, ըսեց։

Ա՛յ տղայ, ո՞րտեղից ես.

Ըսեց. Բուբսայու քաղքից եմ։

Ըսեց. Էն քեաֆուր օղլի Մհերը ի՞մալ էղաւ։

Ըսեց. Թալեցին հոր, արճիճ հալեցին, լըցեցին վըրէն, ըլը-նապարի խաղցայ վրէն, էկայ։

Կնկայ խելք գնաց, ընկաւ։ Տղէն Թագաւորի տված շորեր հագաւ, տեսաւ օր տեղն առեր էր, հանեց, Թալեց շիրտի վրայ, ձին հեծաւ գնաց։

Գնաց մէկ էրկու շաբաթ լէ կերաւ խմեց բազրկեանի մօտը, էլի հեծաւ ձին, էկաւ Հալաբ։ Էկաւ Հալաբ ուր կնկայ մօտ, կնի-կը նստեր էր գուլար. ըսեց.

Տղայ, յո՞ւստ ես։

Ըսեց. Բուբսայու քաղքէն եմ։

Ըսեց. Քեաֆիր օղլին ի՞մալ էղաւ։

Ըսեց. Թալած են հոր, արճիճ հալած են, լցած վրէն, ըլը-նապարի խաղցայ վրէն՝ էկայ։

Աղէիկ հանաքովի գլոխ թեք քցեց, Մհերն օր յելաւ շորերը հագներ, աղէիկը յելաւ բռնեց։

Ըսեց. Ինչի՞ ինծի կը խափես, դու Մհե՞ր ես։

Ըսեց. Դրուստ ա, քո Մհերն եմ, լուսուն Բուբսային կաւի-րեմ կիգամ։ Հեծաւ գնաց, ձին թողեց ու տեղ, ինքը գնաց Բուբ-սայի։ Բազրկեանին ըսեց, թէ զարիբներ եկնեն դուս, միւսներ պիտի ջարդեմ։ Ինչպէս օր Ա՛լաթ ջարդեց, էն Թաւուր էլ Բուբ-սայի ջարդեց, մարդիկ, կնանիք, երեխայ յըմմէն ջարդեց։ Ինչ որ ապրանք կար, տվեց պառավին, Ջուլեակին ու բազրկեանին, ինքը հեծաւ ձին էկաւ Հալաբ, Թուր քաշեց դրեց օրթալաղ, առաւօտ յելաւ շնորհակալ եղաւ աներօջ մօտէն, վերցուց ուր կնիկ պըտի էրթէր Սասուն։ Ձին հեծաւ, կնիկ քցեց թարք, քըշեց գնաց։ Քե-

ոի Թօրոս, Ցուան Վէգէվ, Ճնճղա Փոքրիկ, Զէնով Յովան յեան էկան յառաջ. էկան հասան Մհերին, առան Մհեր ու յետ դարձան ճամփուց։ Գացին մէկ Չէյրան ռաստ էկաւ, Մհեր կնիկ թարքէն յիջուց, ընկաւ Չէյրանի յետև։ Կնիկն առան գնացին Սասուն։ Մհեր քշեց Չէյրանի յետևից, գնաց մէ մէծ քար բացվաւ, Չէյրանը մտաւ նես, Մհերն էլ քշեց ձիով մտաւ քարի մէջ. քարը վրայ էկաւ, էտոնց ծածկեց։

Զուր հիմայ ինքը, Չէյրանն ու ձին քարի մէջ կայնուկ են։ Մհերն օր քարից դուս գայ, աշխարհք պիտի աւերայ։

ԱՐՄԷՆ ԻՇԽԱՆԻ ՀՆՔԱԹԸ

(Բազարճուղ, Ալաշկերտցիներ)*)

Թագաւոր մի կէր, տասնըմէկ նազիր ունէր. մէկը պակաս էր, մէկել մէջերը լաւ գործակատար մարդ չկէր։ Ցելան ընկան մէ մարդ գտան, անունը Արմէն իշխան էր։ Արմէն իշխանին ունէր յիրեք աղջիկ, մէկի անունը Զանազան, մէկին Զարմանազան, մէկինը Հերիքնազան։ Կանչեցին Արմէն իշխանին բերին պրին նազիր։ Արմէն իշխանը համ իրա գործը կը կատարէր, համ թագաւորի գործ կը կատարէր։ Տասվերկու տարի նազիրութէն էրեց, տասվերկու տարին օր թըմբմաւ, ասեց թագաւորին. Թագաւոր ապրած կենայ, հրաման տու էթամ իմ տուն, իրեք աղջիկ ունիմ, տեսնամ անհէր, անմէր իմալ են էղած, թէ ջոջըցած են՝ կարգեմ, ետ դառնամ գամ։

Թագաւոր հրաման տվեց, Արմէն իշխանը յելաւ գնաց տուն։ Գնաց տուն, տեսաւ իրեք աղջիկն էլ հասած են. վերուց, թէ,— Զանազան, կարաս էթա մէ աւի միս բերես ուտեմ. տուն կտակ էնեմ քու գլխի վրայ, մէկէլ էրկու աղջիկ կարգեմ։

Զանազանը մէ թվանք վերուց, գնաց սար օր աւ էնայ, բերայ հօր համար։ Հէրը արաբի լղաբ հագաւ, թուր վերուց ձեռ, յետուց գնաց, մէչի մէջ աղջկայ յառէջ կտրեց։

Ըսեց. Շան որդի աւազակ, էս սարի ապուռ տարեր ես, էս տեղ թալանութիւն կէնիս։

Աղջիկն ասեց. Թէ ես մէ ծերունի հէր ունիմ, էկեր եմ աւի միս տանեմ։

Հէրը թրի կալնով զարկեց աղջկայ վզին, աղջկայ խելք գնաց, ընկաւ գետին. հէրը ետ դարձաւ էկաւ տուն։ Աղջիկը ուշքի էկաւ, տեսաւ օր կէս օր անցեր էր, ետ դառձաւ էկաւ տուն։

Հէր հարցուց ըսեց. Աղջի, յաւի միսը դոր ա։

---

*) Պատմեց 1912 թ. Յունիսի 12-ին Բազարճուղ գիւղում, ցոյն Բարսեղ Սահակեանը, որ շատ տարիներ Երեւանում, եւ Ախտարակում մօտակութիւն է արել։

Ասեց. Սիւօ, գնացի սարը, սանճու էղայ, չը կըցայ օր աւի միս բերինք քըզի։

Ասեց. Զարմանազան, դու գնա բէ, տունը կըտակ էնեմ քու գլխու վրայ։

Զարմանազանն ըսեց. Սիւօ, կերթամ։

Լուսուն յելաւ, թվանքն առաւ, գնաց։

Հէրը արարի լղաք հագաւ, թուրը վերուց գնաց։ Գնաց սարի մէջ տեղը աղջկայ յառէջ կտրեց, ըսեց.

Շան որդի, դու էս սարի գնացող գալացող թալաներ ես։

Աղջիկն ասեց. Չէ, ես էկեր եմ, որ իմ հօր համար աւի միս տանեմ։

Հէրը քաշեց թրի կալնով զարկեց վզին, աղջիկ խելք գնաց ընկաւ։

Հէրը ետ դարձաւ էկաւ։ Աղջիկ շատ ետի խելքն էկաւ գըլուխ, ետ դարձաւ, էկաւ տուն, էլ չկարացաւ օր աւի միս բերէր։

Թէ՝ որդի քու աւի միս դոր ա։

Ըսեց. Գացի սար, քրդեր կախ ին քցաց, մարդ ըսպանին, չկարացայ, ետ դարձայ եկայ։

Ասեց. Հերիքնազան, դու կարմս էթաս, տունը կտակ էնեմ քու գլխի վրայ։

Ըսեց. Սպօ, էս սըհաթ դու կտակ էրա իմ գլխի վրայ, ես էթամ։

Հէրը կտակ էրաւ։ Մնաց լուս բացվաւ, աղջիկը վերուց թըվանքը գնաց։

Հէրը արարի լղաք հաքաւ, յետևաց գնաց. մէշի մէջ աղջկայ յառաջ կտրեց, ասեց.

— Շան որդի, գող-աւազակ, ես լսեր եմ դու բաղրկեան կը թալնես։

Ասեց. Ա՛յ ծերունի մարդ, ինձ լէ քու պէս ծերունի հէր կայ, դու իմ թայ չես, քու ճանփէն գնա։ Հէրը մէ թրի կալնով ուզեց զարկել աղջկան, աղջիկ թվինքի ղուդախ քցեց դէմ, էրկու անգամ զարկեց, աղջիկը հա դէմն առաւ, ձեռը չը վերուց, թէ մենծ մարդ ա։ Մէկէլ որ հէրը ուզեց օր զարկէ, թվենքի ղոնդախով էնպէս զարկեց հօր վզին, օր ուշաթափ էղաւ, ընկաւ։

Նստաւ հօրը վրէն լաց, լայ թէ ինձի էլ էնպէս ծերունի հէր կայ, մէկ լէ պըտի զարկայ իմ հօր խելքը տանայ։

Հէր մնաց պառկած, աղջիկ գնաց աւ զարկելու։ Հէր ուշ էկաւ գլուխ, յելաւ գնաց տուն։ Աղջիկը գնաց, աւի միս զարկեց, քցեց թև, բերեց տուն։ Օր էկաւ տուն, էրկու իրեք շիշ խորոված էրեց, բերեց տվեց հօրը։

Ըսեց. Աղջի, գացիր սար, քեզի բան դէմ չառաւ։

Ըսեց. Ասիօ, քեզի պէս ծերուհի մարդ ոաստ էկաւ ընձի։

—Ապա ինչ արեց։

—Թէ իրեք չորս հեղ զարկեց, ես ձեռք չը վերցի. թվանքի ղոնդաղով մէկ զարկեցի՝ մեռաւ։ Ներստա վրէն, ըսաւ, շատ լացի։

Հէրն ըսեց. Ձը կարողացար մէկ երկու անգամ աւելի զարկէիր թվանքի ղոնդաղով։

Ըսեց. Ինեզի պէս ծերուհի մարդ էր, սիրտսի մոմոաց, ըսի, մէկ լէ քեզի կը զարկայ։

Ըսեց. Հերիքնազան, կարաս էրթիս թագաւորի քով նազիր էղնիս, գործ կատարես։

Ըսեց. Կերթամ։

Աղջիկը հագաւ ջահել տղի շոր. գնաց թագաւորի դիվան, եօթն անգամ գլուխ իջուց, ուրնի վրայ ձեռ կապեց, կայնաւ։

Թագաւորն ասեց. Այ տղայ, տու վիր տղէն ես։

Ասեց. Արմէն իշխանի տղէն եմ։

Ասեց. Արմէն իշխանին իրենք աղջիկ կէր, տղայ չըկէր։

Ասեց. Էրկու աղջիկ են, ես տղայ եմ։

Ասեց. Ինչի համար ես էկէ։

—Էկեր եմ, ըսեց, իմ հօր գործ կատարելու։

Ասեց. Կարաս, քու հօր գործ կատարես։

Ասեց. Թագաւոր, հօր տղէն էմ, օր հօր գործ կատարեմ։

Ճանփեց ուր հօր տեղ նստաւ, դիվան կատարայ։ Էն թաւուր դիվան կտրեց, օր ուր հօրից յաւ։

Էղաւ օր մէ ամիս էրկու մնաց, մէկ օր թագաւորի աղջիկ էկաւ դիվան, թագաւորի աղջկայ աչքն առաւ Հերիքնազանին, մօր ըսեց.

Ես կը մեռնիմ, պէտք է առնեմ Հերիքնազանին։

—Ա՛յ աղջիկ, ըսեց, մենք չենք կրնայ ըսէ, թէ մեր աղջիկը տանք ընդուր, ինքը պըտի ուզէ։ Թագաւորի կնիկը դրեց ինքը իրեն սուտ հիւանդ։

Ըսեցին. Որ՞ը պէտք ա դեղ բերայ։

Կանչեցին մէկ թուղթ իշկող մարդու, թագաւորի կնիկ սովրեցուց, օր ըսէ, թէ Արմէնի որդի Հերիքնազանը պիտի եօթը կաթ անմահական ջուր բերայ, թագաւորի կնիկ խմայ, սազանայ։

Թագաւորը կանչեց Հերիքնազին ասեց, թէ թագուհին հիւանդ է, պիտի էրթաս եօթը կաթ անմահական ջուր բերես։ Բերիր, բերիր, չը բերիր, գլուխդ կը կտրեմ։

Տղէն ըսեց. Թագաւոր ապրած մնայ, օր կըսիս, կերթամ։

Մէ հատ թվանք վերցուց հետն ու ձին հեծաւ։ Գնաց մէկ

քաղաք, տեսաւ օր էտ քաղաք խանդարվեր էր, ոչխար բերած են բէր, կնքաիք նստած են օր կթեն, աղչկներ օչխարի գլուխ բռնած են, հովիւ լէ օչխար քշեր է, բերեր կիտեր է, յըմմէն դարձած են քար: Ետու գնաց քաղքի բազարը, տեսաւ ճոթ կը չափին, մի մարդ լէ փողի քիսիկ հանիր, փարէն կուզէր տէր, յըմմէն դարձած են քար:

Հեծաւ ձին, խանչեց ուր Աստված, քշեց գնաց: Գնաց մէկ մէշի մէջ, լաւ լաւ հաւուզներ տեսաւ, լաւ պաղ աղբրներ, ըսեց.

Եաւաշ, նստեմ էստեղ դինջանամ, ջուր խմեմ, յելնեմ էրթամ: Ջուրը խմեց, յելաւ ձին կապեց մէ փոսի մէջ, ինք լէ նըստաւ կուշտ հաց կուտէր: Տեսաւ օր իրեք դուշ էկաւ նստան էտ աղբրի գլխուն: Լղար ուրանց հանին, էղան իրեք աղջիկ, մտան հաւուզ լողկըցան: Հերիքնազան յելաւ պզտի ղշու լղար գողացաւ: Լողացան յելան, շորերը պէտք ա հագնին, էղնին դուշ. երկուս հագան, էն մէկ մնաց: Ինքան շուռ էկաւ, չկարցաւ լղար գտնէր: Իմաստուն էր, ըսեց.

Արմէն իշխանի որդի Հերիքնազան, իմ լղարս բէ, տուր, էն քաղաքը օր խանդարվէր ա՝ պէտք ա քեզնով լուսաւորվի:

Հերիքնազան վերցուց, թէ քեզնէ կուզեմ մէ բուդիլկա անմահական ջուր:

Փարին վերցուց, թէ Հերիքնազան, Աստծուց խնդիր կէնեմ, թէ տղայ ես դառնաս աղջիկ, աղջիկ ես՝ դառնաս տղայ: Հերիքնազանը էտ տեղ դարձաւ տղայ:

Փարին գնաց մէ բուդիլկա անմահական ջուր բերեց, տվեց Հերիքնազանին: Հերիքնազան Լտուր շապիկ տվեց, էտ անմահական ջուր վերցուց, հեծաւ ձին, առաւ էկաւ էն խանդարուկ քաղաքը, Թագաւորի դիվանի դռնով գնաց, պէտք ա անցընէր, Թագաւոր կիսէն հետ քար էր, կիսէն հետ սաղ էր:

Ասեց. Հերիքնազան, գլխիդ, արևիդ մեռնիմ, ո՞րտեղից կիգաս:

Ըսեց. Գացիր ենք Թագաւորի կնկայ համար անմահական ջուր կը բերինք:

Ասեց. Կարելի՞ է էտ անմահական ջրից մէ քիչ լըլաս իմ բերանս, սաղնամ:

Մէկ ստաքան անմահական ջուր Հերիքնազը լցեց Թագաւորի բերանը: Թագաւորը լուսաւորաւ, յելաւ Հերիքնազի Թարք, ըսաց.

Ինձ լէ տար քու հետը:

Էկան կիսաճամփայ: Անդամ հրեշտակ էկաւ, օր էտ Թագաւորին զարկէր վերևանց: Հերիքնազան ձիուց իջաւ, չոքաւ օր Անդամ հրեշտակին զարկէ Թվանքով:

Հրեշտակը ասեց. Արմէն Թագաւորի որդի Հերիքնազան, մի

զարկ ընձի, էտ քաղաքը օր խանգարէր եմ, կը լուսաւորցում։

Հերիքնազ քաշեց իրեն Թվանքը. հրեշտակը ասեց. Երկնային լուս Աստուած, իմալ օր էտ քաղաքը խանգարվել ա, պէտք ա լուսաւորվի։

Աստծու հրամանքով քաղաքը լուսաւորվաւ, օչխրի բրբոտը յելաւ, Թագաւորը յետ դարձուց Հերիքնազանին, էկաւ ուր քաղաք, տեսաւ օր, իրա նազիրներ ջալլաթ բերած ա, աշպազի գլուխ կը զարկին։

Թագաւոր ձէն տվեց, Թէ ինչի հըմար աշպազի գլուխ կը զարկէք։

Ասին. կերակրներ դեղած ա, կանանչեր ա։ Աշպազները կուզին մեզի դեղին, էն ապով ջալլաթ բերեր ինք. գլուխները պիտի զարնինք։

Թագաւորն ըսեց. Դուք էղեր էք քար, ես, ըսեց, կիսով չափ քար ի, կիսով չափ սաղ ի, ես գինամ, էտի հին կերակուլ ա։ Էլ վնաս չտվին աշպազներուն։

Նոր կիրակրներ պատրաստեցին, բերին, Թագաւորն ու Հերիքնազը ու վազիրներ կերան։

Թագաւորը յելաւ, էրկու բեռ օսկի բաշխեց Հերիքնազանին։ Հերիքնազ վերուց էկաւ ուր Թագաւորի քաղաք։ Բերեցին եօթը կաթ անմահական ջուր, լցին Թագուհու բերանը, Թագուհին սաղացաւ, յելաւ նստաւ։ Թագաւոր լէ խմեց, ջահելցաւ։ Գացին Արմէն իշխան աղջիկներ կարգէր էր, վերուցին, բերին էտ տեղ։

Թագուհին վերցուց՝ Թէ ինչ տանք Հերիքնազանին, օր մեզի էտենց լաւութէն արեց. համ Թագաւորին ջահլցուց, համ լէ ինձ սաղցուց։

Ասին. Աղջիկ տանք Հերիքնազանին։

Բերին եօթը օր, եօթը գիշեր հարսանիք արին, պսակեցին։ Էնոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձեր մուրազին։

ԹՈՒՐ ՈՒ ԹԱՓԱՔ ԹԱԴԱՒՈՐ

(Իլանչալան, Վանեցիներ)

Ժամանակով մէ հատ թագաւոր կըլլի, էտ թագաւորին որդի չի ունենայ. ամեն օր աղօթք էր էնում, որ մի ժառանգ ունենայ, որ իրա մահից յետոյ իրա տունը պահայ, իրան փողն ուտայ։

Օրերից մէ օր մէ դաւրէշ պատահաւ թագաւորին։

Ասաց. Ը՞նչի ըտար միտք կանես։

—Թէ ես միտք կանեմ, որ մէ տղայ չունիմ, որ իմ մեռնելուց յետ, իմ փողն ուտայ, իմ տունն պահայ։

Դաւրէշն ասաց. Ես մէ հատ խնձոր կըտամ քեզի, տար կէս դու կէ, կէսն տու քու կնկան, քեզի մէ հատ տղայ կէղի, թուրն իրա կողքից կախուկ։

Խնձորը բերեց թագաւորը, կիսեց, կէսը ինքը կերաւ, կէսն էլ տուեց իրա կնկանը, ինն ամիս, ինն օր, իննը սրհաթ, ինը դախխայ թըմըմաւ, թագաւորին մէ հատ տղայ էլաւ, թուրը մօտից կախ էր։ Բերեցին տղին կնքեցին, անունը դրին Թուրը Թամք թագաւոր։ Էտի պահեցին, ընչանք եղաւ քսան հինգ տարեկան։

Թագաւորն ասեց. Արի քեզի պսակեմ, ուրախութիւնդ տեսնեմ։

Տղէն ասաց. Մէ տարի ընձի ժամանակ տուր, էրթամ աշխարհ ման գամ, ես ընձի կնիկ գտիմ, գամ քեզ ասիմ, պսակա։

Թագաւորը մէ տարի ժամանակ տվեց. տղէն էլ յէլաւ գնաց։

Գնաց ճամփէն մէ ծառի տակ նստաւ, ուզեց օր հաց ուտէր, տեսաւ որ մէ մարդ էլ էն հանից գուգայ։ Էլ հացն չկերաւ.

Ասաց. Թօ էս էլ գայ՝ տենանք ինչ մարդ ա, նստենք իրար խետ խացն ուտինք։ Էն մարդն էկաւ, բարև տվեց՝ բարևն առաւ.

Պատմեց 1912 թ. յուլիսի 10-ին Իլանչալան գիւղում, նոյն գիւղացի Մահտ Սուրիասեան Խառասնամեայ նովիւը, որի նախնիքը գաղթական են Վանից, սակայն ինքը ծնուած լինելով Իլանչալանում, խօսում է Երեւանեան բարբառով, տեղ տեղ խառնելով Վանի բարբառը։

Ասաց. Դու ինչ մարդ ես։ Էն էլ ասաց, թէ ես թագաւորի տղայ եմ, կերթամ որ ընձի կնիկ գթիմ. ասաց քայ ղուռ։

Ասաց. Ես էլ եմ թագաւորի տղայ, ես էլ եմ իմ հօրից ժամանակ առէ, օր էթամ կնիկ գթիմ։

Ասաց. Մէկ չեղինք, էրկուս եղինք, հաց ուտինք, իրար հետ էթանք։

Նստան օր հաց ուտեն, տեսան օր յետևից մէ մարդ էլ կուգայ։

Ասաց. Կայնի, էսա մարդն էլ գայ, նոր հաց ուտենք, կէզի օր հաց չունենայ։ Էտա մարդն էլ էկաւ, բարև տվեց, բարևն առան, ետոյ հարցրին թէ ինչ մարդ ես։

Էն էլ ասաց, թէ ես թագաւորի տղայ եմ, հօրիցս ժամանակ եմ առէ, որ էթամ ինձի կնիկ գթիմ։

Թուրուխամք թագաւոր ասաց. Էրկուս չէղինք, իրեք էղինք։ Նստան հաց կերան, յելան մատները կտրեցին, արունները խառնեցին յիրար, եղան ախպէր։ Ետոյ Թուրուխամք թագաւորը խարցուց, ամէն մէկդ ինչ հունարի տէր էք։

Էն մէկն ասաց. Ես ռամ քցող էմ, ինչդար որ հին կորցրած բան էղի, ես կը գըթիմ։

Էն մէկն էլ ասաց. Ես լողվոր եմ, ինդար որ խոր ծովի մէջ բան ցկեն՝ ես կը մտնեմ կը հանեմ։

Թուրուխամք թագաւորն էլ ասաց. Ես որ իմ թուր քաշեմ, ամբողջ աշխարհ իմ վրայ չի կանայ գայ։ Օր թուրս ընձնից առան, հո ես ու հո մի մեռել։

Ետնա իրեքով էլ մատնիքները փոխեցին, ու խօսք տվեցին օր իրարու օգնութան հասնին։

Էլան իրեքով ճամփայ ընկան գնացին. շատ գնացին, թէ քիչ՝ Աստված գինայ, գնացին հասան մէ ամարաթիմ։ Թուրուխամք թագաւորը ձինը տվեց ախպրտոց, ինքը մտաւ ամարաթը, տեսաւ օր մէ ախչիկ նստէ քեարկեահ կենայ։ Բարև տվեց ախչկան. բարևն առաւ ախչիկն.

Ասաց. Ա՛յ տղայ, ինչ որ ուզելու ես՝ ասա տամ, քանի որ սիպտակ դեվը չէկէ, որ էկաւ քու՝ ջոչ կտորն քու անկաչ կըթողայ։

Թուրուխամք թագաւոր ասաց. Ինձի ըտմալ շատ կը վախցուս. մէ հաց բէ ուտենք, ետոյ երկող տուր։

Հաց բերեց, կերան, էլաւ հարցուց, թէ դեվը ո՞ր ճամփով կուգայ, որ էն ճափով չերթանք։

Ախչիկն ասաց. Էտ սարի ճամփովը կուգայ։

Թուրուխամք թագաւորը ասաց. Ախպրտիք, էստեղ նստէք, հնչար ես գամ։

Ինքն դէվի ճամփէն բռնեց ու գնաց։ Գնաց սարին մօտեցաւ, տեսաւ օր սիվտակ դէվը ջան ու ջանավար ժողվըրտեր ա, կը բերա։

Թուրուբամք թագաւորին օր տեսաւ, դէվն ասաց։ Օխայ, քանի ժամանակ է իսանի միս չեմ կէրէ, իմ բերած աէն թող էսօր ազատ էղնի, էս իսանի միսը ինձի բոլ ա։

Թուրուբամք թագաւոր ասաց. կեր, նոր պարծեցի։

Դէվն ասաց. Հողածին, դիւլաշ կպիրնք, թէ թրով կռվինք։

Թուրուբամք թագաւորը ասաց, թէ թրով կռվինք։

Մէկ էրկու սըհաթ կռվան, Թուրուբամք թագաւորը խփեց դէվին սրպանեց. անկաճներ կտրեց, լըցրեց խուրջինը, առաւ էկաւ, բերեց տվեց ախչկանը.

Ասաց. Էսի քու դէվի անկաճները։

Ախչիկն ասաց. Օր դու ինձի ազատեցիր դէվի ճանկերից, ես քուկդ, դու իմ։

—Չէ, ասաց Թուրուբամք թագաւորը, դու իմ մեծ ախպօր կը հասնիս։ Տվեցին ոամ քցողին էտի։ Գիշերը էտի քնան, առաւօտը Թուրուբամք թագաւորը ասաց ոամ ցկողին. Դու կնիկդ առ, մացի էստեղ, մենք կերթանք։

Ոամ ցկողը մնաց, էն էրկուսը էլան գնացին։

Գնացին, գնացին, շատն ու քիչը Աստուած գինայ, հասան մէ ամարաթի։ Թուրուբամք թագաւորը ձինը տվեց ախպօրը բռնելու, ինքը մտաւ ամարաթը։ Տեսաւ որ մէկ ախչիկ նստեր քարկեահ կանայ։ Բարև տվեց։ Ախչիկը բարևն առաւ, ասաց. Ինչ որ կուզես՝ ասա տամ, քանի որ դէվը չէ էկէ, թէ չէ ոլ էկաւ՝ մեծ կատրգ անկաճդ կը մնայ։

—Ախչիկ, ասաց, բեր մէ հաց ուտեմ, ետնա վախցու։

Ախչիկը բերեց հաց դրեց, Թուրուբամք թագաւորը կերաւ կշտացաւ, յեղաւ.

Ասաց. Ախչի, դէվը որ ճամփով կուգա, ինձի ասայ, որ էն ճամփով չէթամ։

Ախչիկն ասաց. Էս սարի ճամփովն կուգայ։

Թուրուբամք թագաւորը ձինը հեծաւ ու բռնեց դէվի գալած ճամպէն։ Գնաց թուշ էլաւ սև դէվին։

Դէվը ասաց. Օխայ, քանի վախտ ա հողածինի միս չեմ կէրէ, էլ էսօրվայ աւերը ինչ կէնիմ։

Աւերը թողեց, ասաց. Հողածին, ինչով կըռվինք, գուռզով կռվինք, թէ չէ թրով։

Թուրուբամք թագաւորը ասաց. Դու գիտես, կուզես թրով կռվինք։ Թրերը հանեցին, առան իրար, Թուրուբամք թագաւորը

պարկից դեվի գլուխը թռցրեց, ականջները լցրեց խուրջինը, տարաւ լցրեց ախչկայ առաջը.

Ասաց. Էս քու դեվի անկաճները։

Ախչիկն ասաց. Եվ որ դու ինձի ազատեցիր էտ դեվից, ես քեզի, դու ընձի։

Թուրուխամբ թագաւորը ասաց. Չէ, դու իմ միջնակ ախպօրս կը հասնիս։

—Լաւ, ասաց, դու գիտես։

Նստան, կերան խմեցին, գիշերը քնան, առաւօտը Թուրուխամբ թագաւորը ասաց լողվորին. Դու կնիկդ առ՝ տնացի էստեղ, ես էրթամ իմ բախտի յետև։

Էլաւ ձին հեծաւ ու գնաց. գնաց, գնաց, շատն ու քիչը Աստուած գինայ, գնաց հասաւ մէ աւերակ քաղաք։ Տեսաւ որ ըսկի մարդ չկայ, մէ պզտի շուն մանգուգէր. էտ շան քամակից գնաց, մէ ամարաթի ակուշկից ներս մտաւ, տեսաւ օր մէ լսի կտոր աղջիկ նստեր, քեարկեահ կէնէր։

Ախչիկն ասաց. Ա՜յ տղայ, օձն իր պորտով, դուշն իրա թեւով, ըստե չէր կանէ գէ, բա դու ի՞մալ էկար։

Տղէն ասաց. Ֆու սէրն ա բերէ։

Ախչիկն ասաց. Դէ ինչ որ կուզես, աստա տամ, գնա, քանի կարմիր դեվը չէ էկէ, թէ չէ մեծ կտորդ անկաճդ կը թողայ։

Տղէն ասաց. Մէ հաց բէ ուտեմ,ետոյ վախեցու։

Հաց բերեց կէրաւ, յետաւ ասաց.

Աղչի, դեվը ո՞ր ճամփով կուգայ, ինձի ասա, որ էն ճամփով չերթամ։

Ախչիկն ասեց. Էս սարի ճամփովը գուգայ։

Էլաւ դուզ գնաց դէվի գալած ճամփով, տեսաւ դեվը մէ մեծ ծառմ դրէ թևին, ջան ու ջանավար կախէ վրից՝ կուգայ։

Դեվը օր տղին տեսաւ, ասաց. Սխա՜յ, հողածնի միս շուտուց չի կէրէ. ծառը տփեց գետին, էկաւ տղի յառէջ։

Ասաց. Տղայ, թրո՞վ կուվենք, թէ գիւլաշ կպինք։

Տղէն ասաց. Դու գիտես, թրով կուվենք։

Հանին թրեր, առան յիրար։ Թուրուխամբ թագաւորը դեվին ըսպանեց, անկճները կտրեց, լցեց խուրջին, տարաւ ախչկան նշանց տվեց.

Ասաց. Առ քու դեվի անկճներ։

Ախչիկն ասաց. Դու օր ինձ ազատեցիր էտ կարմիր դեվից, ես քուկդ եմ, քուկդ։

—Լաւ, ասեց տղէն, որ դու ընձի կառնիս, ես քեզի կառնեմ։ Էտոնք եղան մարդ ու կնիկ, նստան էտեղ ապրան։

Թուրութամբ Թագաւորը ամեն օր կէրթէր աւ էնելու, կնիկը կը մնար տունը, իրիկունը—մարդը աւը կը բերեր, կեփէին կուտէին։

Օրից մի օր աղջիկը ասաց մարդուն. Արի էսօր աւ էնելու մի գնա, էրթանք ծովը լողկընանք, շորերս լըվանանք։

—Լաւ, ասեց մարդը։ Աւի չը գնաց, էլան գնացին ծովը, լողկցան, էլան օր շորերը հագնին, աղչիկն ասաց. Բալանիքն առ, գնա մէ դութու դուռը բաց, մէ շապիկն բէր, խաքիմ։ Մարդն գնաց տուն, դութին բացեց, շապիկը խանեց, բերեց դուռը, դրեց մահաճարի (պատշգամբի վայտեր) վրէն, օր դուռն փակայ, քամին շապիկը տարաւ։ Ինքը փոռ ու փոշման գնաց ասեց կընկանը, թէ քամին շապիկը տարաւ։

Կնիկը ասաց. Վաչ, վայ, էտ շապիկը մեր գլոխը շատ օյին կը խանայ։

Քամին շապիկը տարաւ քըցեց մէ հանտի մէջ։ Մէ նախըչի էկաւ գտաւ, իշկեց, իշկեց, ասեց. Էս ինչ լաւ շապիկ ա, տանեմ իմ կնիկ խաղնի։ Իրիկուն տարաւ տուն, կնիկ ասեց. Էս ինծի ինչ լայխաղ ա, դիր բոթնոցի մէջ, տար Թագաւորին, մեզի բաւակնին վոզ կըտայ, կապրինք։

Զոպանը շապիկը դրեց պոդնոցի մէջ, տարաւ տվեց Թագաւորին, Թագաւոր շատ խաւնաւ, կախեց պատից, գալող էրթողին նշանց կուտէր։

Օրից մէկ օր, մէկ ջադուքեար պառաւ էկաւ Թագաւորի մօտ, տեսաւ օր էտ շապիկ ըտեղ կախուկ ա. ասաց. Թագաւոր, էս ինչ ա։

Թագաւորն ասեց՝ շապիկա։

Պառաւն ասեց. Որ շապիկն էտ դտար կը հաւնես, որ դրա հագնողը տենաս, իմաձ կեղնիս։

Թագաւորն ասաց. Պառաւ, եթէ էտ շապկի հագնողն բերես ընծի, քու քաշով իրեք օսկի կուտամ։

Պառաւ ասաց. Իմ վրէն միս չկայ, արուն չկայ, դարտակ օսկոռս է մացէ, ինչ պըտի քաշէ, օր իրեք քաշովս վօսկի տաս, վեց իմ քաշով բէ, օր բերեմ քեզի։

Թագաւորն ասաց. Լաւ, գնա բե, տվի։

Պառաւն ասեց. Իրեք քաշ մկա տուր, իրեք էլ թօղ մնայ բերելուս։

Թագաւորը իրեք քաշ վօսկի տվեց պառաւին, էլաւ գնաց։ Գնաց ձըձումը հեծաւ, օձը առաւ ձեռը, ասաց. Ձըձում, ինծի կը տանիս Աւերակ քաղաքի ղըրաղը կը դնես։

Ձըձումը թռաւ, գնաց Աւերակ քաղաքի մօտը իջաւ։ Պա-

ռաւը ձրձումը պահեց, օձն էլ թաղեց, ինքը էկաւ Թուրուբամք թագաւորի ճամփէն ընկաւ ցեխի մէջ։

Իրիկվան Թուրուբամք թագաւորի գալուն, պառաւը ձէնը թալեց, լաց էղաւ. թագաւորը ձին կայնեցուց, ասաց. Ի՞նչ մարդ ես, ինչի՞ կուլաս։

Պառաւն ասեց. Կեթինք Երուսաղէմ, ընկերներս իմ վող առան, ինծի քցին ըստեղ։

Թուրուբամք թագաւորն ասեց. Սրի, քեզի տանեմ մեր տուն, քեզի պահեմ։

Պառաւն ասեց, Որ էտպէս մէ խէր անես, հոգիդ դրախտը կերթայ։

Թուրուբամք թագաւորը պառաւին վերցց, վերցց, բերեց տուն։

Կնիկ ասեց. Էս ինչի՞ բերիր, ըտուց մեզի ջնաս կուգայ։

Մարդն ասեց. Էս ի՞նչ է, որ ըտուց մեզ ջնաս գայ, ամբողջ աշխարհ իմ վրայ չըն կանայ, էսի ի՞նչ պըտի էնայ։

Կնիկն ասեց. Կնիկ օր մարդու դէմն իրեք անգամ խօսի, լիրը կըլի, դու գիտես, քու մեղք քու վիզ։

Թուրուբամք թագաւորը պառաւի շորերը փոխեց, մէ ձեռք լաւ շոր խագուց, դառաւ թագաւորի կնիկ։

Պառաւը մէ ամիս ըտոնց լաւ մուղաթ մնաց, ինչ տեսակ մէր ու որդի։

Օրից մէ օր, պառաւը հարցուց Ոսկէծամին, թէ քու մարդուն հարցը՞ր ես, դրա ուժը ընչով ա, որ էտքան դէվեր ըսպանեց։

Ըլի, էտպէս ա, Թուրուբամք թագաւորը քեզի սրտով չէ առէ, որ իր ուժն քե չէ ասէ։

Ոսկէծամն ասեց. Ես իրիկուն կը հարցնեմ։

Իրիկուն Թուրուբամք գալու վախտը պառաւն ասեց. Ես սանճու եմ էղէ, սկսեց բոռբռալ։

Թուրուբամք թագաւորն ասեց. Էտ ընչի՞ զալմաղալ կէնիս։

Պառաւն ասեց. Սանճու եմ եղէ, որդի, դու քնէք, ես կէթամ պտըտվելու, բեալքի սանճուս թողայ։

Պառաւը յելաւ դռան քամակն ու նստաւ, անկճները սրեց, անկաջ էրաւ։

Ոսկէծամը խարցուց մարդին, ասաց. Քու զվաթդ ի՞նչ ա, որ սպանեցիր էտ զըզար դէվերի։

Թուրուբամք թագաւորն ասեց. Ես իմ թուրն օր քաշեմ, ինչ զդար աշխարքը որ մարդ գայ իմ վրին, չի կանայ. համա օր թուր վրիցս վերցուն՝ հօ ես, հօ մէ մեռել։

Քիչմ անցաւ, պառաւն էկաւ ներս, ասաց. Սանճուս թողեց։ պառկան քնան։

Առաւօտը պառաւն ասեց. Թուրուբամք թագաւոր, էս օր մի՛ գնա աւ, ձեղի տանեմ լողկցում, որ ձեր էրած լաւութինի տակից դուս գամ։

Թուրուբամք թագաւորն ասեց Շատ լաւ։

Պառաւը Ոսկեծամին առաւ տարաւ ծովի ղրաղը, ասաց. Վայ, մոռացայ սապոն վերցնիմ, դու կաց, էթամ սապոնը բերեմ։

Էկաւ օր Թուրուբամք թագաւորը քներ ա, Թուրը վրայից քաշեց, բերեց ձգեց ծովը։ Ոսկեծամի մազերից բռնեց, կոխեց ձըձուռմի մէջ, օձը առաւ ձեռը, գնաց իջաւ իրանց քաղաքի ղրաղը։ Ձըձուռմից հանեց, տարաւ տվեց Թագաւորին։—Ոսկէծամը Թող մնայ էտտեղ, մենք տենանք Թուրուբամք Թագաւորը իմալ կեղնի։

Թուրուբամք Թագաւորը ուշքը գնաց, ընկած էր վար։ Ռամ քցող ընկերը ռամ քցեց, տեսաւ օր ախպէրը նեղութեան մէջ ա։

Ասաց. Կնիկ, յելի ձին սարքա, որ իմ ախպէր նեղութեան մէջն ա, էթամ հասնիմ։ Էկաւ լողվոր ընկերոջ մօտ.

Ասեց. Ես ռամ քցի, տեսայ մեր ընկեր նեղութեան մէջ ա, ել էթանք օգնութեան։ Էրկըսով էլան ճամփայ էկան։ Էկան տեսան, օր Թուրուբամք Թագաւորը ուշաթափ ընկուկ ա. Ման էկան որ Թուրը չկայ։ Ռահմ քցողն ռամ քցեց, իմացաւ որ ծովու մէջն ա, լողվորը մտաւ, Թուրը խանեց, բերին զարկին տեղը, Թուրուբամք Թագաւորը ուշաղացաւ, տեսաւ որ ընկերները էկեր են, ասաց. Ոսկեծամ, յելի կերակուր, հաց պատրաստա, ընկերները էկեր են։

Ընկերներն ասին. Ոսկեծամ ո՞ւր ա, տարեր են, դու ուշաթափ վեր իր ընկէ։

—Դէ, ասաց, որ ըտէնց է, դուք գնացէք ձեր բանին, ես էլ կեթամ Ոսկէծամի քամակից։

Ընկերտիքն էլան գնացին, ինքն էլ ձին քաշեց, հիծաւ ընկաւ ճամփայ։

Գնաց, գնաց, շատն ու քիչը Աստուած գիտէ, հասաւ մէ քաղաք, տեսաւ մէ պառաւ կայնուկ էր։

Ասաց. Էս գիշեր ինծի ղոնախ կանե՞ս։

Պառաւն ասեց. Տեղ չունիմ։

Թուրուբամք Թագաւորը հանեց մէ ճանկ ոսկի տվեց պառվուն, պառաւն ուրախացաւ, գաւը զարկեց կժի վրէն, կուժը փարչի վրէն, փարչը տաշտի վրէն, տաշտը պուտկի վրէն, յըմմէն ջարդեց, թափեց դուս, Թուրուբամք Թագաւորին տեղ էրեց։ Իրիկուն հաց կերան, դհոլի ձէն էկաւ։ Թուրուբամք Թագաւորը պառաւին հարցրեց. Էս ի՞նչ դըհոլի ձէն ա։

Ասեց. Մէ ջադու դառի պառաւ կար, գնացեր ա, Աւերակ

քաղքի թագաւորի ախչիկ բերեր ա մեր թագաւորին կնիկ, էն էլ չէ առնի, էս քառասուն օր ա ղրհօլ կը զարնին, մկա էտ տեսակ ճնացեր ա։

Թուրուբամք թագաւոր ըտաեղ ախ քաշեց։ Պառաւն հարցուց, թէ ընչի՞ հըմար ախ քաշեցիր։

Թուրուբամք թագաւորն խարցուց, թէ դու հոգի գտնող պառաւ ես, թէ հոգի կորցնող։

Պառաւն ասեց. Հոգի գտնող պառաւ եմ։

Թուրուբամք թագաւորն ասեց. Ջէ՞ որ էտի իմ կնիկն ա։

Պառաւն ասեց. Ի՞նչ նշանաբան ունիս։

Թուրուբամք թագաւորն ասեց. Նրա մատնիքն իմ կուշտն ա։

—Տէ, տուր տանեմ տամ Ոսկեծամին, որ էս գիշեր իրան չըսպանայ։

Մատնիքն առաւ պառաւն ու գնաց։

Տարաւ մատնիքը տվեց Ոսկեծամին։

Ոսկեծամ ասեց. Պառաւ, ես քու արևիդ մեռնիմ, էս մատնիք ո՞րն ա բերէ։

Պառաւն ասեց, թէ մատնիքի տէրը մեր տանն ա։

Ոսկեծամն ասեց. Գնա, թագաւորին ասա, որ կամքի եմ բերէ, թող առաւօտ հարսնիք էնա։

Պառաւը գնաց թագաւորին ասեց. Թագաւոր, աչքդ լուս, Ոսկեծամին կամքի եմ բերէ, կասայ, առաւօտ հարսնիք էնա, էթանք ժամ, պսակվինք։

Թագաւորն ուրախացաւ, ասաց. Շատ լաւ։ Մէ բոլամա օսկի տվեց պառաւին։

Պառաւն էկաւ տուն, Թուրուբամք թագաւորին պատմեց, որ մատնիքը տվեցի Ոսկեծամին, շատ ուրախացաւ, ասեց. Գնա, ասա թագաւորին, որ առաւօտ հարսնիք անի, գնանք ժամ պսակվինք։

Թուրուբամք թագաւորը հասկացաւ, որ Ոսկեծամը կուզէ որ իրեն փախցնէ, ասաց. Նանի, խարսնըքի տունը դո՞ր ա, էթամ թամաշա անեմ։

Պառաւը տարաւ դրան խարսընքատուն, գնաց ամէնքից առաջ կայնաւ, պապիրոսը հանեց, քաշեց։ Էդ պառաւը մէ տղայ ունէր, անունը Ջամուշեան, ուամ որ սիլլով զարկէր, գլուխը կը թռէր, էտի էտտեղ ազապպաշի էր. էտի տեսաւ որ էտ մարդը կովընդի դէմը կայնիր ա, ուզեց որ զարնէր, տեսաւ զարիպ ա՝ չը զարկեց. եաայ մէկ էլ էկաւ ասեց. Նստի,- չը նստաւ. մէկ էլ էկաւ մէ սիլլա զարկեց, տեսաւ պապիրոսի կրակն էլ յիրար չէկաւ ըսկի, մէկ էլ զարկեց, էլի նմանապէս. վերջը իրեք սիլլա զարկեց, ըսկի յիրար չէկաւ։

Հերսոտաւ, իրեք չորս բէյթուն (հասարակ) գլուխ թուց ու գնաց տուն, հերսոտելով մօրն ասաց, թէ էս տեսակ մէ ջանավար մարդ կայ հարսընքատուն, իրեք սիլլա զարկի, իսկի յիրար չէկաւ։

Մէրն ասաց. Վայ քու ձեռը կոտրի, լիմալ դու զարկիը ընդրան, չէ՞ էնի քո մեծ ախպէրն ա, թանգուբեան տարին առ ու վախ էր, մինք որ վախանք, էնի կորցվաւ մեզնից, մկայ էկել ա։

Ջամուշեան ասաց. Գինամ որ էնի մեր ազգից էր, որ էն տեսակ դուվաթ ունէր։

Ընդուց զարձաւ էկաւ հարսընքատուն, ախպօր երեսներ պաքից, ասեց. Ես չը գինի դու իմ ախպէրն էր, ախպէր բռնեց կովանդը, ինքն էլ ընկաւ յառէջն ու խաղցան։

Իրիկուան գնացին տուն, մերը ասեց, թէ էտ թագաւորի կնիկն օր բերեր են, էտ քո ախպօր կնիկն ա։

Ջամուշեան ասեց. Շատ լաւ, յեկուց որ գնացին ժամ, ժամի դուռը ես կը բռնեմ, քամակիցը դու Ջարդելով արի, աղջիկն առնենք, բերենք։ Առաւօտուն գնացին ժամի դուռ, հարսը բերին, Ջամուշեան ձէն տվեց. Ախպէր, էտ ետնից դու Ջարդա, էս ետնից էլ ես, Ջարդելով էկան հասան իրար, Ջադու պառավին ու թագաւորին բռնին։

Ջամուշեան ասաց. Թագաւորին դու սպանա, պառաւ տուր ընծի։ Թուրուխամբ թագաւոր կտոր կտոր էրաւ թագաւորին, Ջամուշեանն էլ պառաւին հաւու դայդա ճըղճըղատեց։

Հարսը վերցրին, բերին պառաւի տուն։ Լուսն օր բացուաւ, Թուրուխամբ թագաւորն բերեց Ջամուշեանին դրեց էտ թագաւորի տեղ։

Ասեց. Ինչ էլ պառկեմ, նոր ես էթամ։ Հրամայեց, որ էտ քաղաք ինչ ղդար աղջիկ կան, գան խաս-պախչէն, որ Ջամուշեան որին հաւնի, ընդրան առնի։

Ոսկէծամն էլ գնաց խաս-պախչէն, խառնըվաւ ախչըկներուն, պար բռնեց, խաղցաւ։ Ջամուշեան էկաւ աղլուխ ցկեց Ոսկէծամի թևին։ Ախչիկներ սաղ գնացին իրանց բանին, Ոսկէծամն էկաւ պառվու տուն, ասաց. Ջամուշեան աղլուխ քցեց իմ թևին։

—Դէ, ասաց, որ ըտմալ ա, գնա Ջամուշեանի կուշտը, ես քեղի չեմ առնի։ Ոսկէծամը լաց եղաւ, համա չարէն կտրած գնաց Ջամուշեանի կուշտ։ Ջամուշեան ասեց. Ինչի՞ էկար։

Ոսկեծամն ասեց. Ջէ՞ որ դու ընդար աղջիկների մէջն ինծի հաւնար։

Ջամուշեան զարկեց ուր աչքը թափեց, ասաց. Ինղադար անգայմ էղայ, որ էկայ աղլուխ քցի քու թևին, դու իմ հարսն ես, դէ գնա իմ ախպօր կուշտ։

Ոսկէծաոն էկաւ Թուրուբամք թագաւորի կուշտն, ասեց. Ջամուշեան զարկեց ուր աչքը հանեց, թէ էնքան անգայմ էղէ, որ աղուխ գցեր իմ քո թևին։

Նոր էլան վազիրի աղջիկը ուղեցին Ջամուշեանին, հարսանիք արին, ընդրանք հասան իրանց մուրազին, մենք էլ հասնինք մեր մուրազին։

Երկնքից իրեք խնձոր յիջաւ, մէկը ասողին, մէկ անկաճ էնողին, մէկն էլ լսողին։



ԱՂՋԻԿ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԵՔԵԱԹԸ

(Իլանճալաւն Վաւեցիներ*)

Ժամանակով մէ աղջիք թագաւոր կըլնի, կը կանչէ իրա վազիրին, թէ ասի, վազիր, քեզի մէկ բան կասեմ։ Վազիրը կը դայ, կասայ. Ի՞նչ ա։

Կասայ. Կերթաս, Ադամ թագաւորին կը բերես իմ մօտ, ինծի մէ խրատ տայ, էն խրատով ես իմ թախտը կառավարեմ։ Վազիրը գլոխ կը տայ, կերթայ. կերթայ թագաւորի կուշտը։

Կասայ. Մէր թագաւորը քեզի կուզէ, որ գաս մէ խրատ տաս, էտ խրատով իրան թախտը կառավարէ։

Ադամ թագաւորը կասա. Շատ լաւ, գամ։ Կը վերցնէ Ադամ թագաւորը կըգայ։ Կը բերայ Ախչիկ թագաւորի կուշտն։

Ախչիկ թագաւորն կասայ. Ադամ թագաւոր, գիտե՞ս քեզի ինչի՞ հըմար եմ բերէ։

—Թէ ինչի՞ հըմար էս բերէ։ Թէ՝ բերեր եմ, որ իրեք բան կայ, էթաս իմանաս, գաս։ Կերթաս, Ադէզ քաղաքի մէջ մէ դերձակ կայ, շորը կը ձևայ, կը շուլուլայ, էնենց կը թողայ, կէլնի մինըրի գլոխն, ընչանք իրիկուն խաղ կասայ. իրիկուն կուգայ, շուլալը կը քաշայ, կէթայ տուն։

Մէկն էտ ի. մէկէլ կերթաս Ստամբոլա քաղաքի մէջն, մէ հատ ջաղացպան կայ, ընչանք իրիկուն ոսկի, արծաթ, անգին քարեր կաղայ, իրիկուան կուտայ քամուն, կերթայ տուն։ Դրա գլխու անցանքն էլ գիմնաս, կուգաս ընծի կասես։

Մէկ էլ կերթաս Մըսըր քաղաքն, մէկ հատ քաւ կայ նատուկ կարմնջի կուշտ, ինչուր իրիկուն ընտար որ փող կը տան, կառնի, կը քցայ ջուրն։ Ընդրա գլխու անցանքն էլ կիմնաս, կուգաս։—Դէհ գնա, էտ իրեքն ա, որ խապար չը բերես՝ գլոխդ կը կտրեմ։

Ադամ թագաւորը ղլըղը փոխեց, էղաւ մէ դաւրէշ, ընկաւ

Պատմեց 1912 թ. Յուլիսի 10-ին Իլանճալան գիւղում նոյն Սարգիս Սուրեասեանը։

ճամփէն գնայ։ Գնաց, գնաց, շատն ու քիչը Աստուած գիտէ, հասաւ Ադէս քաղաքը։ Ման էկաւ էտ դերձիկը գտաւ, տեսաւ որ էտ դերձիկը մի արխալուղ ձևեր ա՝ պիտի կարայ։

Բարև տվեց դերձիկին, նստաւ կուշտը, տեսաւ դերձիկը շուլալեց արխալուղը. թողեց էտտեղ, յելաւ մինըրի գլոխը, սկսեց խաղ ասել։ Ասեց, ասեց, իրիկվան իջաւ, շուլալը քաշեց, ու պըտի էրթէր տուն, տեսաւ էտ դարվէշը ըտեղ նստուկ էր։

Ասաց. Դաւրէշ, ես թամաշա կէնիմ, առաւօտվանից դու իմ կուշտը նստեր ես, անօթի, ծառաւ, դու էս երկրի մարդ չես, էսօր դու ղոնաղ էս, սրի էրթանք տուն։

Դաւրէշն առաւ գնաց տուն, ասաց. Կնիկ, հաց բէ ուտենք։ Կնիկը հաց բերեց դրեց։

Ասաց. Դաւրէշ, արի, հաց ուտենք։

Դաւրէշն ասաց. Քու հացը չեմ ուտի։

Ասաց. Ինչո՞ւ հըմար չես ուտի իմ հացն։

—Ընրա համար, որ, ասաց, առաւօտ դու արխալուղն ձևեցիր, եթէ կարիր 15 մանէթ փող կառներ, ինչի հըմար էլար մըտնըրի գլուխը, ինչանք իրիկուն հաղ ասիր։ Էտ ինծի պատմես, քու հացդ կուտեմ, չը պատմես, չեմ ուտէ։ Ես դաւրէշ մարդ եմ, ամէն դուռ ինծի հըմար բաց է, ուրտեղ ուզենամ՝ կուտեմ։

—Դէհ որ էտպէս է, կնիկ, ասեց, արի հացը վերցրու, ես իմ գլխի անցանքը ասեմ դարուէշին։

Կնիկը հացը վերցուց, էտ մարդը ըսկսեց պատմել։

—Դաւրէշ, ասեց, ես կամ քառասնըհինգ տարեկան, իմ ձէն ինդար քաղցր ա էս րոպէին։

Դաւրէշն ասաց. Շատ քաղցր ա քու ձէն։

—Բա տասնըհինգ տարեկան ընդար քաղցր ձէն ունի։ Ես նստեր մեր բախչէն ծառի տակն կար կէնի, մէ ևանից էլ հաղ կասի. մէկ էլ տեսայ մէկ դուշ էկաւ էս ծառի վրայ իջաւ։ Ես որ հաղ շատ ասեցի, դուշն էկաւ ստոլի վրէն իջաւ, ձեռս քցի, ըսի բըռնեմ, ինծի վերցուց ու տարաւ։ Տարաւ մէկ շինուէթան մէջ դրեց ընծի, ինքը գնաց. մէկ էլ տեսայ մէ լսի կատր ախչիկ նես մտաւ դռնից.

Ասաց. Այ տղայ, ինծի կառնե՞ս։

Ես երեսը նայեցի, խելքս գնաց։

Ասի. Դու որ կառնես, ես կառնիմ ու կառնեմ։

Էտտեղ էղանք մարդ ու կնիկ։ Էղաւ որ մեզնից մէ տղայ ու մէ աղչիկ էղաւ։ Օրերից մէ օր, էտ ախչիկը դուս էթալու վախտը, ինծի ասաց, թէ մէ դուշ կըգայ, էրէխան կըտանայ, կը ճըղճըղայ, չեղնի լաս։

Ասի. Շատ լաւ։

Ախչիկը գնաց, մէկէլ տեսայ, մէ գարշելի ղուշ էկաւ, վանջարան ջարդեց, նես մաաւ, աղչկան վերցուց ու ճըղճըղեց։ Ըտեղ չլացի, վազեցի տղէն գրկեցի, օր ընբան չը տանայ։ Էկաւ իմ գրկի միջից էնոր էլ քաշեց տարաւ, աչքիս առաջ ճըղճըղեց, սիրտս լցուաւ, մոմոաց, չկրցայ համբերէ՝ լացի։ Մէկ էլ տեսայ մէր ծառի տակ նստուկ, իմ դաղգահը դէմս՝ կար կէնի։ Մկա հիմի դրա համար եմ ելնում մընըրի գլուխն հաղ կանչում, որ էն ղուշը գայ լինձի տանայ։ Էտ է իմ գլխու անցածը, դաւրէշ բարաւ։ Դէհ, կնիկ, հացը բեր, ուտենք։ Կնիկը հացը բերեց, կերան, էլան քնան։ Առաւօտուն դաւրէշն էլաւ էտուց գնաց։ Գնաց, գնաց հասաւ Ստամբոլ։ Գնաց, տեսաւ որ մէկ Չաղացպան ոսկի, արծաթ, անդին քար բերէր ա կաղայ։

Բարև տվեց էտուր ու նստաւ ըտեղ։ Մինչև իրիկուն քամին էկաւ, սաղ տվեցին քամուն, ու էլան օր էրթան տուն։

Տեսան որ էտ Դաւրէշը էլի ըտեղ նստուկ է։

Ասին. Դաւրէշ, արի էթան էսօր մեզի օգնախ ըլի։ Դաւրէշը էլաւ գնաց։ Բերին հաց դրին։

Ասեցին. Հաց կէր, Դաւրէշ։

Դաւրէշն ասաց. Բու հացը չեմ ուտէ, ընչար քու գլխուդ ընցանքն չասես։

—Դէհ, ասաց, կնիկ, արի հացը վերցու, ես ասեմ։ Կնիկը էկաւ հացը վերցուց, էտ մարդը ասաց։

Ասաց. Դաւրէշ, ես մէ հէր ունի, մէկ էլ մէրս էր, մէկ ես ի. մեր իրեքին մէ հատ շապիք կար. էն վախտն օր շապիքը հէրս կը հագնէր, կերթար ժողովք անելու, ես ու մէրս կը մաննանք թոնդիր. ինչ ես կը հագնի կէթի ժողովք, հէրս ու մէրս կը մաննեն թոնդիր։ Էղաւ օր մէ օր, շապկի սրէն էկաւ ընծի, հագայ գնացի ման գալու քաղաքի մէջն, տեսայ որ մէ ջհուդ քառասուն ոսկի դրեր ա մէ սինու մէջ, դրեր ա գլխուն, ման գուգայ, ձէն կուտայ, թէ ինչ մարդ որ ընծի քառասուն օր ղուլլուղ էնա՝ քառասուն օսկի կը տամ։

Ես գնացի ասի, թէ ես քեզի ղուլլուղ կէնիմ, տու ընծի, էտ քառասուն ոսկին ջհուդից առայ, բերի տվի հօրս.

Ասի. Դուք էս կերէք, ես էղեր իմ ջհուդին նօքար. քառասուն օրից յետև, Աստվաց ողորմած ա։ Ես գնացի ջհուդի տունը, երեսուն լինը օր էտեղ կերանք, խմինք, քէֆ էրինք։

Էրեսուն լինը օրը օր դզաւ, ջհուտն լինձ ասաց.

—Վեր կաց, մեզի քառասուն հատ էշ կայ, բարձի, մէկ հատ ալինձ վերցա, հաց վերցա, մէկ հատ էլ էրինջ, էթանք։

Ցելայ բիրատի սարքեցի, ու ընկանք ճամբէն գնացինք։ Գնացինք մէ մեծ սարի տակ, բեռները թափեցինք։

—Տէ, ասեց, էրինջը մորթա։ Էրինջը մորթեցի, էփինք կերանք։ Բերեց ինծի դրեց կաշու մէջն ու լաւ օղերով փաթաթեց։

Ասաց. Մէկ հատ գուշ կուգայ, քեզի կը վերցընէ, էս սարի գլոխն կը հանայ, դու դուս կուգաս, էտ սարի գլուխն որ քարն օր լուս կուտայ արեգական նման, կը գլորես գայ։ Ինքը գնաց տափաւ, գուշն էկաւ, ինծի վերցուց, հանեց սարի գլուխը։ Ետոյ ես կաշու միջից դուս էլայ, գուշը թռաւ, տեսնեմ ինչ, էտ սարը կպեր ա, արևու դէմդա կը վառի, որ քար որ լաւ լուս կը տէր, վերցուցի էտ սարի գլխուց թալեցի։ Ինքան թալի օր՝ քառասուն իշու բեռն էլ դժվաւ։

Ասի. Ես դրվծրը իմնեմ։

Ասաց. Ջանըմի քնջոճը աբի, տեղ հռւստ ա։

Ման էկայ, տեսայ որ տաս-քսան ջանդակ ըտեղ թափուկ ա։ Գնացի էտ ջանդըկներու մէկի կուշտն պառկայ. մութը տվեց, տեսայ մէ աղվէս ոտիցս բռնէ կը քաշայ։

Ասեցի. Իմ դարտը ինծի բոլ չէ, էս ա գիտայ՝ մեռած եմ, կը քաշայ, կը տանայ։

Ընտար քաշեց օր՝ լուսը բայվաւ, մէկ էլ տեսայ օր իմներ եմ դուբան գէտին։ Ըտեղից էլայ, էկայ մեր տուն, հէբա շատ ուրախացաւ։

Ասեց. Էկաւ որդի։

Ասի. Էկայ, վաղէս թմմաւ, էկայ։

Առաւօտ տեսայ, որ էլի էտ ջհուդը օսկին դրեր է գլխուն կը բռռայ, վով որ ընծի 40 օր ղուլլուղ էնէ, քառասուն օսկի կը տամ։

Ասեցի. Ես կը գամ ղուլլուղ կէնեմ, հըմը քու բանը դժար է ութանասուն օսկի տու։

Ջհուդն ասաց. Լաւ, կըտամ։ Ութանասուն օսկին առայ, բերի տվի հօրս, էլի գնացի ընըրա մօտ։ Երեսուն ինը օր կերանք, խմինք, քէֆ արինք։ Երեսուն ինը օրը օր ըզդաւ, յելայ քառասուն էշն էլ բարձայ, պղինձ վեցրի, հաց վերցրի, էրինջը էրեցի աղաքներս, ու ընկանք ճամփա գնացինք։

Գնացի, էլի էտ սարի տակը, բեռները թափեցի, էրինջը դրի գետին մորթեցի, միան էփինք, կերանք։

Էտ ջհուտը զարմանք էր մնացէ, թէ էս աղէն իմաստուն ա, էս ինչ ա, որ առանց ասելու, ամէն բան կատարեց։

Ասեց. Ա՛յ աղայ, դու իմաստուն ես, առանց ասելու ամէն բան էրիր։

Ասի. Ախր մէկ էլ իմ մահ էտ կաշու մէջ, միաքս չէ, քառասուն օր առաջ։

—Բա ինչպէս իջար էկար։

Ասի. Թէ էն հանից ճամփա են շինած, էտ քարերից սելով, դաւէքներով կը տանին։

Ջհուան ասաց. Որ էտպէս ա, արի ընծի դի էտ կաշու մէջ, ես դուս գամ սարի գլոխն, լաւ քարերուց կը ջոկամ, կը թափեմ։

Ես չհրդին դրի կաշու մէջ, փաթաթեցի, ու գնացի տափայ։ Դուշն էլաւ էտ Ջհուտին վերցուց, հանեց սարի գլոխն։ Ջհուան ինքը իմաստուն մարդ, ամէն քար կը ճանչընար, ընդար լաւ քարեղէն թափեց օր՝ ես ասի բոլ ա, էլ տեղ չկայ. Ջհուդն ասեց. Ես դհօրվէ ինչնեմ։

Ասեցի. Ջահնըմի քնջոճը արի, որ տեղով որ ես եմ էկէ, դուն էլ դէնն արի։ Ջհուտը մնաց սարի գլոխը, ես էտ քարերը սաղ բերեցի մեր տուն, գնացի Ջհուտի տան էղած չեղածն էլ կրեցի մեր տուն, կնկանն էլ բերի էրի ընծի կնիկ։ Հիմի իմ խաղնէս էնքան շատ ա, որ ուտելով չի խըլըսի, ես կը բերեմ կաղամ, կուտամ քամուն։ Էս ա իմ գլխու անցանքն։ Տէ, կնիկ, հաց բէ, ուտենք։ Կնիկը հաց բերեց, կերան, պառկան քնան։

Առաւօտը դարվէշը էլաւ, էնտեղից դուզ գնաց Մըսըր. գնաց էն կարմնջի գլխուն նստաւ, տեսաւ մէ քոռմ ըտեղ նստէ, ուզվռըտըթեն կէնայ, ինչ որ կը տան՝ կը թալայ ջուր։ Մինչև իրիկուն նստաւ ընդրա մօտ, իրիկուն էտ քոռն յէլաւ էթալու, դավրէշին ասաց. Դաւրէշ, էսօր բլթուն դու իմ կողք նստուկ իր, արի էրթանք ինծի ղօնաղ։ Էլան գնացին։ Գնացին, քոռն ասաց. Կընիկ, հաց բէ՝ ուտենք։ Կնիկ հաց բերեց։

Դաւրէշն ասաց. Ես ձեր հաց չեմ կտրէ, ընչար քու գլխու անցանքն ինծի չասես։

Քոռն առաց. Կնիկ, արի հաց վերցու, չարէս ինչ, պիտի պատմեմ։ Կնիկն էկաւ հացը վերցուց, քոռը պաշլամիշ էրաւ.

—Ես, ասաց, տասնը հինգ հատ էշ ունի, մէ օր մնացեր ի պարապ, ընչուր կէս օրին, կէս օրին մէ մարդ պատահաւ ինծի։

Ասաց. Ի՞նչ տամ, իշվանքդ բերես, տասնըհինգ վերստի վրէն բեռ ունիմ, բառնաս բերես։

Ասի. Տասնըհինգ մանէթ տուր։

Ասաց. Լաւ։ Շատ ուրախացայ, օր բազար չերաւ, քշեցի էկայ։ Մէ երկու վերստ էկայ, միաքս փոխվաւ, ասի էթամ բեռների առէջ կտրեմ, բալքի իմ հախն յաւելցու, գնացի յառէջն կտրեցի.

Ասի. Էլ չեմ տանի քու բեռները, աղա։

էտ մարդն ասաց. Ինչի՞ չես տանի, քու հախը քիչ ա, թէ քիչ ա, ասա յաւելցում։

Ասի. Ա՛ա, պակաս ա։

Ասաց. Էշն էղի տասնըհինգ մանէթ։

Շատ ուրախացայ, քշեցի առէջ։ Մէ քիչ տեղ էկա, էլի սիրտս փոխվեց։

Ասի յառէջն օր կտրեմ, էլ գնեւելցու։

Գնացի յառէջն կտրեցի, ասի. Աղա, չեմ տանի քեռնելը, ծանդր է։

—Թէ ինչի՞ չես տանի, թէ հախը քիչ ա, ասա՝ յեվելցում։

Ասի. Ա՛ա, քիչ ա։

—Բա էշը թող էղնի հարիր մանէթ։

Շատ ուրախացայ, ասի. Էս ի՞նչ տեսակ մարդ ա, քշեցի յառաջ։ Մէ երկու վերստ էկայ, էլի սիրտս փոխվաւ։

Ասի. Էթամ յառէջը կտրեմ, թօ էլի յեվելցու։ Գնացի, յառէջը կտրեցի, ասի. Չեմ տանի, ծանդր ա քեռդ։

Ասեց. Ինչի՞ չես տանի, թէ հախդ քիչ ա, ասա յեվելցում։

Ասի. Ա՛ա։

Ասաց. Տասը քեռը քեզի, հինգն ինձի, դէհ քշի էրթանք։ Շատ ուրախացայ, քշեցի առաջ։ Էկանք քաղաքի մօտ, միտքս էլի փոխվաւ, էլի գնացի յաղաքը կտրի։

Էկաւ ասաց. Թէ հախդ քիչ ա, տասնըչորս քեռն քեզ, մէկը ընծի։ Ըտեղ շատ ուրախացայ. համայ մի քիչ էլ օր գնացինք, էլի միտքս փոխվաւ։ Ասի. Չէ, չեմ տանի։

Ասաց. Արի քեզի մէ պարգև տամ։

Գնացի կուշտ, փչեց, իմ ջան սկսեց ոսկու արծաթի պայդա փայլ տալ։ Էտեղն էլ շատ ուրախցայ, մի քիչ էլ յառէջ գնացի՝ յառէջ կտրեցի։

Ասի. Թօ էս խետ էլ ուրիշ պարգև տայ։ Էս խետ փչեց, էրկու աչքս էլ քոռցաւ։

Ասաց. Դէհ, գնա՛, էտոնք էլ քեզի բիրադի։ Առեր եմ էկէ տուն, տեսէ սաղ ոսկի էր։ Ինչ էնեմ որ իմ թամահից աչքերս քոռցան, վայելել չեմ կանայ։ Հիմի կը նստեմ ըստեղն, էթող—գալողից կը մուրամ, կը քցեմ ջուրն, որ բալքի էն մարդը պատահի, ասի էս մարդը էլ փողի թամահ չունի, խղճա, փչէ աչքերուս, լաւանայ։ Էս էր իմ գլխու անցանքն։ Դէհ, հաց բէ ուտենք, կնիկ։ Կնիկ հաց կը բերայ, կուտին, պառկին կը քնին։ Առաւօտուն դաւրէշը գնին, գըյնի ճամփա դուզ կուգայ Աղչիկ Թագաւորի մօտ։

Կասի. Հալ—հէքեաթ, էսպէս բան։

Աղչիկ թագաւոր կասի. Էտ բոլոր էնողն էլ ես եմ, մկա դու ինձի կառնիս։

Կասի. Դու որ առնես, ես էլ կառնեմ։

Էտոնք իրար կառնեն, վախտմ կանցնի, մէ տղայ, մէ աղչիկ կըլնի։ Օրերից մէ օր սև ղուշմ կուգայ էրեխէքը կը տանայ, կը ճըղճըղայ։ Ախամ թագաւորը կիշկայ, համա չի լայ, էն սըհաթը դրա թալըսմը բաթալ կըլնի, էն ղուշը կը դառնայ լուսի նման մէ աղչիկ, նոր էնտեղ կառնին իրար, կը պսակվեն։

Էնոնք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։



ԱՂՎԸՍՈՒ ՄԱՍԱԼԸ

(Իլանչալան, Վանեցիներ*)

Սուրբ Սարգսի բըքին կըլնի, աղվէսը կէթայ ման գալու, բուքը ըղրան շատ կը զօռա։

Իլլաճը կը կտրի. կասա. Բքի վախտը հայերը Սուրբ Սարգսին կը կանչեն, ընդոնց կազատայ, արի ես էլ կանչեմ։ Կասայ. Սուրբ Սարգիս, քեզի մեռնիմ, ինծի ազատայ էս բքից, մէ չարէք ձէթ կը բերեմ, քու դուռդ կը վառեմ։ Բուքը կը հանդարտի, աղվէսը կը գայ իրա տուն, գլոխը կը տանայ, կը բերայ, կասայ. Էս ինչ բան ա, հայերի Սուրբ Սարգսին խաբեցի, բուքն հանդարտաւ, էկայ իմ տուն, ես ձէթ հնւսա գնեմ, որ տանեմ ընրա դուռ վառեմ։ Վորն օր ինձ տենայ, փոստս կը հանայ կը ծախայ. ես որդուց կանամ ձէթ տանեմ ընրա դուռը վառեմ. խափի էկայ իմ տուն։

Մնաց մէկել օրն, աղվէս գնաց ման գալու, բուքն էլի զօռեց։ Էլի ճարահատեալ կանչեց.—Մեռնիմ քեզի, Սուրբ Սարգիս, ազատա, էս խետ կը բերեմ։ Սուրբ Սարգիս էլի ազատեց։

Մնաց, առաւօտը էտ աղվէսը միտք էրեց, ասաց. Որ չը տանեմ ընրա ձէթ, ինծի անպատճառ կը խեղդայ. Էլաւ էկաւ ճամփու վրայ՝ տեսաւ օր էրկու Ղարալեցի ձէթ բարձէր ին ձիանքին, կը տանին։ Էկաւ ընդրանց ճամփու վրէն զատուռ խատնել դրեց իրեն, ընկաւ վար։ Ղարալեցիք տեսան, որ ճամփէն մէ աղվէս ա խատէ, վերցին դրին բեռի մէջ ու առան էկան։ Աղվէսը ըտեղ սկսեց տկի պուճախան (ոտը) ծամել, ընչար կտրեց, ձէթն որ սկսեց թալել, ինքն ձիուց իրան թալեց ցածր, ասաց.

—Քեզի մեռնեմ, Սուրբ Սարգիս, չոլի մէջ ա, կըճոք չկայ, քար չկայ, ընդար որ քեզի հարկաւոր ա՝ վերցու, մնացողը ինչ կէղի թող էղի։

---

*) Պատմեց *1912* թ Յուլիսի *10*-ին Իլանչալան գիւղում ծոյն Սարգիս Սուխիասեանը։

ՔՈՉԱՐ

(Բաշ-Ապարան, Ապաղացիներ *)

Եամանակով կըլնի չիլնի՝ մէկ թագաւոր կըլնի. աւուր մէկ օրը էտ թագաւորը իրա վազիրին կասի, թէ գնա ինձի համար մէկ լաւ մարդ գտի բեր, որ ինձի խետ խօսայ, դուրական մարդ ըլնի, ինձի դուր գայ ընդոր խօսքերը։ Իրեք օր քեզի ժամանակ կըտամ, բերիր բերիր՝ չբերիր՝ գլոխտ կը զարկեմ։

Վազիրը ընկաւ գեղերը ման էկաւ, չկրցաւ գտներ էտ թագաւորի ուզած մարդը։ Ետ դարձաւ իրենց քաղաք. մէ օր էր մնացէ, օր թագաւորը գլոխը զարկէր. էկաւ քաղաքի մէջ տեղը, տեսաւ մէկ չալաղ մարդ մէկ կտոր հաց զարկեր էր ղոլթուղի տակը, կէթէր դիրա իրա տուն։

Վազիրն ասաց. Ջանըմ, կանչեմ էս մարդին էլ խօսալ տամ, էս էլ մէկ մարդ է։

Կանչեց, ասաց. Ա՛յ մարդ, ի՞նչ մարդ ես դու։

Մարդն ասաց, թէ աղքատ մարդ եմ, ի՞նչ մարդ եմ։

—Ի՞նչ ունես քեզիկ։

Թէ ոչինչ բան չունիմ, մէկ կնիկ ունիմ ընձիկ։

Շատ յերկէն խօսալ տվեց էտ մարդին, տեսաւ որ աղքատ մարդ ա՝ համա լաւ կը խօսայ՝ վազիրը միտք արեց, թէ էս մարդը տանեմ թագաւորի յէրես։ Վերցրեց էտ չալաղ մարդը տարաւ իրա տուն, մէկ ձեռք շոր հագցրուց, առաւ ուր խետ, տարաւ թագաւորի դիվան։

Թագաւորն ասաց. Վազիր, հո՞ւր ա իմ ուզած մարդը։

Ասաց. Թագաւոր, էսա բերեր եմ։

Մարդը գնաց կայնաւ թագաւորի առաջ սկսեց թագաւորի հետ խօսալ։

Պատմեց *1912* թ. Օգոստոսի 5-ին Բաշ Ապարան գիւղում նոյն գիւղացի Նիոլմ Յովհաննիսեան անգրագէտ մերուսին, յիսուն տարեկան, որ սովորել էր իւր հօրից՝ Ապաղայի Թափառես գիւղից եկած։

Թագաւորը հարցրուց. Անունդ ինչ ա։
Պատասխանեց՝ Թէ անունս Քոչո ա։
Ասաց. Հէչ ինչ ունես։
Պատասխանեց. Մէ կնիկ ունիմ, զատ չկայ։
Էտ մարդը որ խօսաց, Թագաւորին շատ դուր էկաւ։
Ասաց. Քոչո ախպէր, ըստով դէն ինձի խետ պըտի ախպերանաս։ Միասին նստենք Թախտի վրայ չուր՝ քնելու ժամանակ տիվանից պըծնենք՝ օրական օխտը ոսկի քու դոնդուխ, կերթաս քու տուն։

Էտ մարդը էտպէս սովորաւ, ամէն ժամանակ կերթէր Թագաւորի դիվան։ Կուտին, կըխմին, չուր քնելու ժամանակ, կառնէր իրա օխտը ոսկին, կերթէր ուր տուն։

Էտ մարդը բաւականի կարօղութեն ժողվեց իրա խամար, օրերաց մէ օր կնիկն ասաց, Թէ այ մարդ, ամէն ժամանակ դուռ Թագաւորի հացը կուտես, մէ օր բալքի Թագաւորն ասաց. Էթանք քու տուն ղոնաղ. էս մեր տները լաւ տուն չի, բեր մեզի խամար լաւ տներ շինենք. Թագաւոր գալուն ժամանակին մեզի ամօթանք չըլնի։

—Ա՛յ կնիկ, ասաց, քու բանն ա։ Ահա փողը, ահան դուռ, ուստա բռնի՝ տուր շինել։

Կնիկը սկսեց տուն շինել, լաւ տուն շինեց։ Օրերաց մէկ օր Քոչոն ուր քնած տեղը մէկ ծերունի հալիվոր էրածի մէջը էկաւ էտ մարդուն ասաց, Թէ Քոչո, ասաց, առաւօտ գընես ծովու ղրաղի հետ, քառասուն շէնք կը չափես, եվեր կերթաս, ծովը կը բացվի, քեզի ճամփա կըտայ, կերթաս մէ պզտի կղզի կայ, մէկ խնձորի ծառ կայ էնտեղ, մէկ սիվտակ խնձոր վրէն ա, կը բերես կուտաս քու օղլուշաղը կուտի, աստվածուքեն քեզի մէկ տղայ կուտայ. համա Քոչոն իրա կնիկ ամէն ուքանասուն տարեկան են։

Մնաց, առաւօտ լուսը բացվաւ, Քոչոն յելաւ ծովու ղրաղի խետ քառասուն շէնք չափեց, գնաց, Աստծու հրամանով ծովը բացվաւ, էտ մարդը գնաց ծովու կղզին, տեսաւ մէկ խնձորի ծառ, մէկ սիվտակ խնձոր վրէն, պրծուց խնձորը, բերեց, տվեց իրա կնկան, ասաց. կեր էս խնձորը։ Կնիկը խնձորը կերաւ։ Աստծու հրամանով կնիկը մնաց էրեխով. մնաց էկաւ կընկայ ժամանակ որ պէտք է ազատվէր, մեծամեծ մարդիկի կնանիքը թուփ էլան դլխու վրէն, օխտը օր, գիշեր ու ցերեկ էտ կնիկը չարչարվաւ, չազատվաւ։ Քոչոն վերցրեց, Թէ այ քուրեր, ասաց, բոլ ա չարչարվեք իմ կնկայ խետ, շնորհակալ եմ, ամէն մարդ ձեր տունը գնացէք։

Կնանիքը ցրվըրվան, ամէն մէկը գնաց իրա տունը։ Մնա-

ցին Քօչօն իրա կնիկ իրենց տան մէջ։ Մնաց որ աստուածութեն ազատութեն ուզեց էտ կնկան. Կնիկն ասաց, Ա՛յ մարդ, ես ազատվայ։

Մարդն էկաւ տեսաւ, որ էրեխայ չկայ։ Ճրագը բերից իրիշկաց, տեսաւ, որ մէկ օձ կտոտվեր ա (վաթթըվել) թունդրա շուրթ։

Ասաց. Ա՛յ կնիկ, էս էրեխայ չի՝ օձ ա։ Նաճախը տուր ես ըստուր գլոխը ջարդեմ։

Գնաց նաճախը բերեց, որ պըտի օձի գլոխը ջարդէր, Աստու հրամանքով օձը լեզու յելաւ, թէ Ախո, կըսայ, քաֆր ժամանակով ըսկի ծնողը որդուն ըսպանած կա՞յ որ դու ընձի կսպանես։

Մարդը մեզայ տվեց Աստուն, նաճախը ձեռնից թալեց։ Վերցաւ օձը, տան մէջ մէկ պատուխան կաբ, քցեց էն պատուխան։ Էլ ետ կէթէր թագաւորի դիվանը կիդեր օրական։ Օրերի մէ օրը, իրիկուն էկաւ տունը, օձը պատուխանից ձեն տվեց, Ախո, բարև որ կայ Աստուն ա, ինչի՞ մէկ բարև չես տայ իրիկնենց։

Մարդը ճնաց շիվար, թէ ջանըմ, օձը խօսա՞։

Էս անգամին իրիկնենց որ կիդեր՝ բարև կիտէր։ Մէրն էգկեյին վըր օձուն, իրիկուն որ կիդեն կը նստեն, օձը կիդեր կը նստեր մօր գիրկը, քաղցր բառով կը խօսեր հետեր։ Օրերաց մէ օրը, խէրն յելաւ թագաւորի դիվանը էթալու, օձը ասաց. Ախո, էսօր կէթաս, դիվան չես էթայ, կեթաս կը նստես խնամաթոռի վրէն, թագաւորի ախչիկը կուզես ինձի խամար։

Խէրն ասաց. Ջանըմ, թագաւորի ախչիկը ինչպէս ուզեմ քեզի համար։ Ախը դու օձ ես, վախենամ, բերեմ ախչիկը՝ ճնաս, թագաւորը ինձի տանի, ջանլաթի տայ։

Թէ՝ Թու գնա ուզի, քու բանը չի։

Խէրն յելաւ գնաց թագաւորի դիվան, նստաւ խնամաթոռի վրէն։ Դաւաղնները տեսան, գնացին թագաւորին ասին, թէ Քօչոն էկէ նստէ խնամաթոռի վրէն։

Ասաց. Ձէն տվէք, թո նելս գայ։

Դանչեցին, Քօչոն նելս գնաց։

Թագաւորն ասաց. Քօչօ. ընչի՞ ես նստէ խնամաթոռի վրէն։

Ասաց. Թագաւոր, քեզնից բարեկամութեն կը խնդրվեմ, որ դու քու ախչիկը տաս իմ տղին։

Ասաց. Իմ ախչկայ ղալանը շատ ա, կարմա տայ։

Քօչօն ասաց. Ուզի, ինչ ուզես՝ կըտամ։

Թագաւորն ասաց. Կուզեմ քեզնից օխտը ղաթար փաւա, բիրատի մէկ ռանգի, բեռներն ապրեշում, թէ որ դաւանների ռանգը մէկը մէկուց չոկ էլաւ՝ գլուխդ կը զարկեմ։

Քօչօն ետ դարձաւ իրա տուն։ Գնաց տղին բարև չտվեց։ Տղէն ասաց. Ախո, ինչի՞ բարև չտվեցիր։

—Ա՛յ տղայ, ասաց, թագաւորը բարկացեր ա, գլոխս կը գարկէ։

Տղէն՝ թէ ինչո՞ւ համար։

—Էնպէս բան գալան կուզի, որ չեմ կանայ տայ։

Տղան ասաց. Ի՞նչ ա ուզէ։

—Կուզի եօթը գաթար *) գաւա մէկ ռանկի, մէկ մէկուց ռանգները ջոկ ըլնի՝ գլոխս կը գարկի, բեռները ապրեշում։ Էտի ես ոըդուց բերեմ։

Տղէն ասաց. Պառկի քնի, Աստված ողորմած ա։

Փոչօն պառկաւ, քնաւ։

Առաւօտը լուսը բացվաւ, բարին վըր ձեղիկ, տղէն ձէն տվեց, թէ Ափօ, վեր յելի, գաւէքը տար։

Փոչօն օր քնիցը զարթնաւ՝ յելաւ գաւէքը տեսաւ՝ զարմացաւ։ Առաջի գաւէն չոքնցըրեց, յելաւ խեծաւ գաւէն, քաշեց գնաց, թագաւորի դուռը կայնաւ։ Ասաց. Ձէն տվէք թագաւորին թող գեայ, որ գալանը բերեր եմ։

Թագաւորն յելաւ տեսաւ՝ զարմացաւ։

Ասաց. Բեռները վեր առէք, գաւէքը տարէք խառնէք գաւէքին։

Փոչօն ասաց. Իմ հարսը տուր տանեմ։

Ասաց. Փոչօ, դու գիտես, որ իմ ախչիկը շուշաբանդ օթախի մէջն է ապրէ, արևը վրէն չէ դիպչ, կերթաս քու դռնից չուր իմ դուռը ծառ կը տնկես, ճամփի էս կուշտը, էն կուշտը, մէջտեղը խալիչէք կը պարզես, որ խով ըլնի, իմ ախչիկ էրթայ քու տուն։

Փոչօն տարակուսուած ետ դարձաւ։ Գնաց տունը, բարև չտվեց տղին։

Տղէն ասաց. Ափօ, գալան տվեցիր, էլ ինչի՞ տխուր ես, բարև չես խոայ։

Ասաց. Որդի, էս տանուն մէ զարմանալի բան է ուզէ թագաւորը։

Ասաց. Ի՞նչ ա ուզէ, ափօ, ասա տեսնամ։

—Կասայ, որդի, իմ դռնէն չուր քու դուռ ծառ տնկի, խալիչա պարզի, որ խով էլնի, իմ ախչիկը գայ քու տուն։

Ասաց. Ափօ, պառկի, քնի, Աստուած ողորմած ա։

Փոչօն պառկաւ, քնաւ։ Մինչի լուսը բացվաւ, բարին վըր ձեղիկ, տղէն ձէն տվեց թէ ափօ, յելի, գնա հարսդ բեր։

Փոչօն քնուց զարթնաւ, յելաւ ծառերը տեսաւ՝ զարմացաւ։

---

*) Ղարար եօթ ուղտի բարձ։

ուրախ ուրախ վազաւ Թագաւորի դիվան, ահա Թագաւոր, քու ուզածդ կատարեցի՝ իմ հարսս տուր։

Թագաւորը վերցուց, թէ Քօչօ Ջան, հարսիդ շոր պըտի բերես։

Քօչօն պատասխանեց, թէ ինչ կըտոր որ կուզես՝ ասա բերեմ։

Թագաւորն ասաց, թէ ես էն կտորներից չեմ ուզէ, էնպէս շոր կը բերես, որ ոչ Թարղին կտրած ըլնի, ոչ ասղի կարած ըլնի։

Քօչօն շատ նեաթը կախեց, էս Թագաւորը մհանի յետև ա ընկէ, որ իմ գլոխը զարկի։

Գլոխը կախ արած, միտք անելով դըբա իրա տունը գնաց։ Ներս մտաւ՝ բարև չըտվեց տղին։

Տղէն ասաց. Ախօ, ինչի՞ բարև չես տայ, ինչ է պատահէ։

Թէ, որդի, էս անգամին էնպէս շոր գուզի, որ Թարղին կըտրած չըլնի, ասեղը կարած չըլնի։

—Ախօ, ասաց, պառկի, քնի, Աստուած օղորմած ա։

Քօչօն պառկաւ՝ քնաւ։

Լուսը բացուաւ՝ բարին վըր ձեղիկ, տղէն ձէն տվեց՝ թէ ախօ, յելի հարսիդ շորերը տար։

Քօչօն յելաւ շորերը տեսաւ՝ զարմացաւ։ Վերցուց շորերը՝ ուրախ ուրախ գնաց Թագաւորի դիվան։

Թագաւորը շորերը տեսաւ՝ զարմացաւ, թէ էս ինչ տեսակ բան ա։ Շորերը հագցրին ախչկան, դրին ֆույտոնի մէջ, բերեցին դըբա Քօչօյի տուն։

Քօչօն սկսեց հարսանիք անել։ Հարսանիքը արաց, աւարտվաւ, օձուն վերցուց տարաւ դրեց մէկ օթախի մէջ՝ պատուխան։

Իրիգուն Թագաւորի ախչիկը գնաց էն օթախը որ պըտի պառկէր, իշկաց ըստեղ ընտեղ՝ տեսաւ որ տղայ չկայ։

Օձը պատուխանից ձէն տվեց. Թէ Թագաւորի ախչիկ, ես ըստեղ եմ, երկուղ չանես։

Թագաւորի ախչիկը ձէնը լսաւ՝ շատ զարմանալի վախեցաւ։ Պատուխանից օձը դուս էկաւ, ուր շապիկը Թողեց պատուխանը, գինքն էլաւ մէկ հրիտասարդ տղայ, էկաւ կայնաւ Թագաւորի ախչկայ կուշտ։ Թագաւորի ախչիկ շատ ուրախացաւ, թէ էս տեսակ տղայ կըլնի աշխըրքի մէջ։ Տեղաշորը բացին, մտան իրանց տեղի մէջ՝ պառկան։

Մէկ տաս օր ընցաւ, Թագաւորի կնիկ պատրաստութիւն տեսաւ, որ գայ փեսէն տէնայ. ըտուր մէկ ջառիա կայ՝ փէլդար (կախարդ) ա, գիտի որ Թագաւորի փէսէն օձ ա։

Ասաց. Թագուհի, ես էլ կուգամ քեզ խետ։

Վերցուց իրա ջառգէն, էկաւ դըբա Քօչօյի տուն։

Տղէն ասաց. Ախչի, էս օր քու մէր կուգայ մեղի տեսութեն, ես ցերեկը կը մտնեմ պատուխան, գիշերը կուգամ կը մտնեմ քու ծոց, քու մօրդ չասես, որ կը հարցնի, թէ փէսէն դո՞ր ա, կասես, թէ ձին խեծաւ, գնաց ուրիշ քաղաք, գործ ունի։ Թէ քի պըտի գայ, թէ ես ինչ գիտեմ եվ պիտի գայ, մէկ ամիս, երկու ամիս, մինչև վեց ամիս էլ կը քաշի։

Տղէն մտաւ պատուխան, թագաւորի կնիկը էկաւ։ Նստան հարց ու բարև, կեր ու խում, քէֆ ու ուրախութիւն արին։

Թագաւորի կնիկ հարցուց թէ աղչի, փէսէն, դո՞ր ա, չէ էրևայ։

Ասաց. Ատէ, էսօր հեծաւ ձին, գնաց ուրիշ քաղաքները։

—Է, քի պըտի գայ։

—Քաշէ մէկ ամիս, երկու ամիս, իրեք ամիս, վեց ամիս էլ կը քաշէ, ես ինչ գիտեմ։

Մնաց մինչև քնելու ժամանակ. թագաւորի կնիկ, իրա ջահրիէն գնացին ուրիշ օթախ պառկան։ Տղէն իջաւ, մտաւ ախչկայ ծոցը։

Թագաւորի կնիկն ասաց. Էկանք, փեսէն էլ չտեսանք։

Ջահրիէն ասաց. Փէսէդ քու աղչկայ ծոցը պառկեր ա։

Ասաց. Ըմ հաւատայ։

—Ձես հաւատայ, գնա՛ տես, թէ որ սուտ ա, արի իմ ծամերը կտրի։

Թագաւորի կնիկ յելաւ գնաց, դուռը բացեց, նեռս մտաւ, տեսաւ որ մէկ տղայ պառկեր ա ախչկայ ծոց, որ արևի պէս փայլ կուտայ, ետ դարձաւ էկաւ։

Ջահրիէն ասաց. Ի՞նչպէս ա, թագուհի։

Ասաց. Դրուստն ա, քու խօսքն ա։

Ասաց. Ախչի, չուր մկայ տղէն ո՞րտեղն էր, չէր էրևայ։

Ասաց. Էնի սէհրի ա, օձու շապիկ ունի, ցերեկը կը մտնի շապկի մէջ, գիշերը կը մտնի ախչկաղ ծոցը։

Ասաց. Ես պտի էրթամ ընտոր շապիքը վառեմ։

Գնաց շապիկը գողցաւ, բերեց, քցեց թոնիր։ Շապիկը վառաւ, ֆոտն ընկաւ օթախի վրէն, տղէն զարթնաւ՝ տեսաւ որ իրա շապիկը տարած, ձէն տվեց թագաւորի ախչկան, թէ թագաւորի ախչիկ, քու մէր իմ շապիկը վառեց, ահա ես գո կեթամ, եւի որ քառասուն թագաւորի գլխաւոր թագաւորը տեսար, ընձի կը գտնես։

Էտպէս ասաց ու էլաւ մէկ եղունէկ՝ թռաւ։ Ախչիկը ճնաց մղկըտալով, լալով, էլաւ, մէկ փէտ առաւ, գնաց քնած տեղ մօր տվեց տուրի դէմ, լաւմ տփեց՝ դուրս խրկեց։ Մնաց առաւօտ, ֆօչօն իմացաւ որ տղէն գացեր ա։ Թագաւորի ախչիկ գնաց, քի ափօ, ինձի իրաւունք տուր՝ մէ խէյրաթ խանա չինեմ։

Քի որդի, իմ ունեցած, չունեցած քեզի, ինչ կուզես արա։

Ախչիկը խէյրատ—խանան չինեց, բազում ախքատներ թոփ էլան ընդուր խէյրատխանէն, օրական ախչիկը կէթէր խէյրատ—խանէն մարդիկի մէջ, նաղըլ կուտէր ասել, գլխէ գացած դաս կուտէր անել, ետ կը դառնէր իրա տուն։

Մենք խապար տանք Ստամբօլու։

Մէկ Ղասըմ անումով աչի կար. մէկ քոռ խէր ունէր. քաւասուն աւուր խաց կը պնէր կշտի խետ, ջուր կը պնէր կըշտի խետ, դուռը կը փակէր՝ կէթէր աչուքեն։ Մնաց որ խէյրաթ—խանի ձէնը գնաց ընկաւ էտ քոռի անկաճը. դանչեց իրա տղին, քի այ տղայ, ֆիլան քաղաքը խէյրատ—խանայ կայ, ինձի տար քցի էնտեղ, ես էնտեղ կապրիմ, դու քեզի համար աչուքեն արա։

Տղէն հօր ձեռքը բռնեց, դիրա էտ քաղաքը գնաց։ Ճամբէն խէր սաստիկ ծառըցաւ, թէ Ղասըմ, ծարաւ եմ, ինձի խամար մէ փշուր ջուր բեր։

Ասաց. Դու էս քոլերի մէջ նստի, չուր ես քեզի ջուր բերիմ։

Ինքը նստաւ քոլերի մէջ, տղէն ելվեր ձորի խետ յելաւ, յելաւ չուր գտնէը, յելաւ տեսաւ որ մէ ահագին գնար (քարաժայռ) քար ա, էտ տեղը մէկ ախպուր կայ. նստաւ էտ ախպուրի վրէն. տղէն աման չկէր, որ ջուր տանէր, իրա բարուքի ամանը դարդըկից, մէկ էլ տեսաւ՝ քարավը բացվաւ, մէկ դարգեահից (դռնից) մէկ մարդ դուս էկաւ՝ կուժը ձեռը, էկաւ ախպրի վրա. բարև տվից էտ մարդին, ասաց. Անունդ ինչ ա։

Ասաց. Ղասըմ։ Քու անունդ ինչ ա։

Էն էլ ասաց. Դաւիթ։

Դաւիթն ասաց. Ղասըմ, էսօր իմ դոնախն էս։

Ղասըմն ասաց. Ըտեղ ինչ կանես։

Դաւիթն ասաց. Ես թագաւորնէրին դուլլուղ կանեմ, վերցրից Ղասըմին՝ գնացին ներս։ Դարգեահը դարկըվաւ։ Էտ մարդը տեսաւ որ քառասուն թագաւոր, քսանը էն տեղն ա նստէ, քսանը էնտեղ, մէկ թագաւոր էլ ամէնից վէրև նստած ա։ Դաւիթ ջուր լցեց, բոլորին ջուր խմացըրեց, վերցուց Ղասըմին էկաւ իրա օթախ, սկսեցին կեր ու խում։ Ետ ուտելուց պրծան, Ղասըմն ասաց. Ախպէր, ընձի իրաւունք տուր՝ ես էթամ։

Ասաց. Մինչի օխտն օր պըտի մնաս ընձի դոնախ, դուռը չի բացվի։

Ասաց. Մէկ քոռ խէր ունիմ, մնաց էնտեղ ծարաւ, ես ինչ անեմ։

Ասաց. Թող շուտով ասեր, ինչի էկար։

Մնաց օխտն օրը թըմըմաւ, դուռը բացվաւ՝ դուս յելան։

Գնաց ջուրը լցեց, տարաւ դըրա ուր խէր։ Տեսաւ որ խէրը կենդանի ա, չի մեռէ, համա կը տըրփայ անճախ։ Ջուրը տըվեց, խմաւ, կենդանացաւ, ձեռնից բռնեց, դիրա էտ քաղաքը էկաւ։ Էկաւ հասաւ խէյրաթ—խանէն։

Աղչիկն իմացաւ, որ Թագա մարդ էկէ խէյրաթ—խանէն, յելաւ էկաւ, տեսաւ որ մէկ քոռ խալիվոր, մէկ ջահիլ տղայ։ Տղին բան չհարցուց, հօրը ասաց, Թէ ախո, մենծ մարդ ես, հաշ ես արէ, բաշընա գեալա (գլխուդ էկած) ես հիքեաթ գիտես, ասա, անկաճ անեմ։

Պատասխանեց քոռ խալիվոր. Քի որդի, ես բան չեմ գիտէ՝ էս օր իմ տղէն դասյ էրաւ, Թէ գնացի՝ քարափը բացվաւ, ներս մտայ, քառասուն Թագաւոր նստած են, մէկ Թագաւոր էլ ամենից գլոխ էր նստէ։

Աղչիկն իմացաւ, որ էն վերի նստողը իրա նշանածն էր։ Ղանչեց Ղասըմին, ասաց. Իմ ախպէրն ես, արի ինձի տար, էն Թագաւորներ ես էլ տենամ։

Ղասըմն ասաց. Շատ լաւ կըլնի, իմ գլխու վրայ կը տանիմ քեզիկ։

Մնաց՝ առաւօտ լուսը բացվաւ, բարին վըր ձեզիկ, վերցուց աղչիկը գնաց։ Էն վախտը խասաւ ախպըրի վրէն, որ դուռը բացվաւ՝ Դաւիթը դուս էկաւ, ախպօրը տեսաւ, ուրախացաւ, խարց ու բարև էլան իրար խետ, ասաց. Էտ ինչ օղլուշաղ ա։

Ասաց. Իմ քուրն ա, բերեր եմ էն Թագաւորներ տենայ։

Ընդունեց Դաւիթը, վերցուց իրա քուր, ախպէրը, գնացին ներս. Դաւիթը տարաւ էլի ջուր լցեց, Թագաւորներին ջուր տվեց։ Աղչիկը գնաց իրիշկաց, որ վերի նստողը իրա նշանածն ա, ուրախացաւ։ Թագաւորը տեսաւ որ իրա նշանածը էկէ՝ իրա Թախտիցը իջաւ, էն Թագաւորներուց մէկը վերցուց դրեց իրա տեղը, դէհ, ասաց, դու վայելէք մինչև յաւիտեան, իմ նշանածն էկէ՝ ես կերթամ։ Վերցուց իրա նշանածն, Ղասումը, դարձաւ դէպի հօր քաղաք։ Աչքալուսանք գնաց Քօչօին, Թէ աչքդ լուս ըլնի, հարսդ գնաց, տղէդ բերեց։

Քօչօն յելաւ ուրախ ուրախ գնաց տղի առաջ, տղէն տարաւ տուն։ Թագաւորը իմացաւ, էկաւ աչքալուսանք։ Թագաւորը տղին տեսաւ՝ զարմացաւ, Թէ ինչ ազնիւ տղայ է, արժանի է Թագաւորութեան։

Ասաց. Թագաւորութեն արժանի է քեզիկ, տղին դրեց Թագաւոր։ Կերան, խմեն, ձեր չանին դուվա արեցին (կեանք խընդրեցին). ընտունք խասան իրանց մուրազին, դու էլ խասնէք ձեր մուրազին։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՎԱՃԱՌԱԿԱՆ

(Բաճ-Ասպարաց, Ասպաղացիներ *)

Կըլի չիլի մէկ Համբարձում վաճառական կըլի, ըտուր մէ թաք տղայ կըլի, տղէն կըբերի կը պսակի։ Մէկ տարի կը ճնայ, տղի կնիկը կը մեռնի. խէր կը կանչի, թէ այ որդի, արի քեզի կ յուրիշ կնիկ բերիմ, պսակիմ։ Տղէն չի յօժարի. խէրը շատ կը զօռի, թէ մի թաք տղայ ես, ես քեզ պիտի պսակիմ, չի կարելի։ Էտ տղէն կասի. Օր էտպէս է, ինձի իրաւունք տուր, ես էթամ գեղ, քաղաք ման գամ, իմ սրտի ուզածը գտնեմ, բերեմ՝ պսակի։

Խէր կասի. Որդի, քեզի իրաւունք ա, գընա։

Տղէն իրեն համար ճամփու ծախս կը վերցնի, դըյնի ճամփայ, կերթայ։ Շատ գեղեր ման գուգայ, իրա սրտի ուզածը չի կարայ գտնի. կուգայ ծովու բերան, կը տեսնայ գեամին էկէ կաներ ա իսկալեն (նաւահանգիստ), կասի. Պըտի նստեմ էս գեամին, էթամ յուրիշ երկրներ պըտըտեմ։

Տղէն նստուց գեամին գնաց, գնաց Շահմարի քաղքից դուս էկաւ, խամ տղայ, էտ քաղաքի էութենը չի գիտէ, թէ էտոնք շահմար են։ Ամենևին էտ քաղաքի մէջ խողածին սկի չկայ, էրկու աղբօրից սաւայի (բացի), մէկ որ դանթարչի (կշիռ անող) ա, մինը որ դասաբ (մսավաճառ) ա։ Գնաց էտ դասաբ մարդու մօտը, բարև տվեց, էտ մարդը բարևն առաւ։ Ծարցուց դասաբը՝ թէ ի՞նչ մարդ ես։

Ասաց, թէ մարդ եմ, ուրիշ քաղքից էկեր եմ էստեղ, կը պըտըտեմ ընձի համար։

Ղասաբն ասաց. Խողածին ես։

Ասաց. Բա ի՞նչ եմ, խողածին եմ, բա դու խողածին չե՞ս։

Ասաց. Ես էլ խողածին եմ. էլ ուրիշ բան չխօսաց, իրեն իրեն մտածեց, թէ էսի խամ տղայ է, չգիտէ, թէ էս քաղքի թագաւորը օձ ա, ղինքն էլ ախչիկ, քառասուն օրը մէկ անգամ մէկ հողածին կը տանի իրեն թագաւոր կը շինի, քա-

---

* Պատմեց 1912 թ. Օգոստոսի 7-ին Բաճ-Ասպարացում ցոյց ենողէ Յովհաննիսեանը։

ռասուն օրն որ կը թմրմի, աղուլամիշ կանի, կը քցի ծով։ Կը մտածէ՝ թէ էս տղէն լաւ տղայ է, որ օձ տեսաւ կը տանի, կը փըչացնի, օղորկեմ էրթայ իմ ղանթարճի ախպօր մօտը՝ պահէ չուր իրիկուն. մուրթը տայ, ճամբի դնենք, թօ էրթայ պրծնի։

Նոր վերցուց, թէ այ տղայ, գնա էս ղանթարճու մօտը, իմ ախպէրն ա, չուր իրիկուն կաց, իրիկուն կուգաս իմ կուշտը։

Տղէն գնաց ղանթարճու կուշտ։

Բարև տուեց, ղանթարճին բարևն առաւ, խարցրուց ղանթարճին՝ թէ ինչ տղայ ես։

—Է՛, ղարիբ, նաւալաղ (անծանօթ) տղայ եմ, ընկեր եմ աշխարհք կը պըտըտեմ։

Ասաց. Քեզի ո՞րն օղորկեց ըստեղ.

Թէ էտ դասաբն օղորկեց, թէ իմ ախպէրն ա, գնա ընդուր կուշտ հանգստացի։

Ղանթարճին ասաց. Դէհ էլի, բուդկի մէջ նստի քեզ համար։

Տղէն էտտեղ նստաւ։

Թագաւորն յէլէ քաղաքի մէջ կը պտըտի, դէմ արաց դըբաա ղանթարը էկաւ։ Ղանթարճին ասաց. Ծանեմ էս տղէն էս տեղէն, էրթայ ուրիշ տեղ, թագաւորը չտեսնայ, որ տեսնայ՝ կը տանի։ Տղին ասաց. Ձելի էստեղէն գնա դասաբի կուշտ։

Տղէն ըտուց դուս էկաւ՝ ախչկան տեսաւ, խելքը գլխից գնաց, ասաց. Էս տեսակ էլ սիրուն ախչիկ կըլնի աշխարքի մէջ, կայնաւ մինչև թագաւորն էկաւ մօտեցաւ։ Թագաւորի աչքն առաւ տղին, իմացաւ որ հողածին ա, էկաւ ասաց. Ղանթարճի, էս տղէն ո՞րդուց աւ։

Ասաց. Ղարիբ տղայ ա, թագաւոր։

—Դէ, ասաց, ես ետ կը դառնամ, էրկու լիտրը բրինձ կը քաշես, կը բերի։

Քաշեց էրկու լիտր բրինձ, լցեց մէկ ամանի մէջ, տվեց տղին՝ տարաւ։ Գնաց խասաւ թագաւորի հայեաթը, էլ չուզեցաւ ներս մտնել, կայնաւ հայաթի մէջ։ Թագաւորը գնաց նստաւ ուրա թախտի վրէն, ջահռին ասաց, թէ էն տղին ասա թօ ներս գայ։ Ջահռէն կանչեց, տարաւ ներս։ Գնաց մոտաւ թագաւորի օթախ, թագաւոր տեղից յելաւ կայնաւ, փաթթըվաւ տղին, ասաց. Բարով էկար, իմ թագաւոր։ Տարաւ նստեցուց թախտի վրայ։ Նստաւ կշտի խետ, ձեռ քցեց վիզ։

Մէկ քանի օր անցաւ, ասաց. Այ տղայ, իմ սինոդը մնացեր ա անտէր, ահա իմ թագաւորական նշանը էս աղլուխն ա, քցեմ քու թևի վրէն, իմ ջառիէն թող քեզի շանց տայ՝ գնա սինօթաբան, համա մէկ սահաթից աւել չմնաս, որ աւել մնաս՝ իմ սիրտը կը պատռվի։

Զաւիէն ընկաւ յաւէջ, տարաւ սինոդը նշանց տվից, տղէն գնաց մտաւ սինօդը, տեսան որ սինօդի մարդիկը թագաւորն էկաւ, եայլուղ վըր թևին էր, յելան կայնան, աթոռը դրին, նըստաւ։ Մէկ սահթն ընցաւ էրկու րոպէ, թագաւորն յելաւ էթալու, գնաց մօտեցաւ օթախներին, տեսաւ որ թագուհին ընկէ չոքերի վրէն կուգայ։

—Ա՛յ տղայ, ըսաց, սիրաս պատռվաւ, ինչ էլաւ քեզի, ես քեզի մէկ սըհաթ իրաւունք տվեցի։ Փաթթըվաւ տղին, առաւ, գնաց իրա օթախը։

Ժամանակը ընցաւ մէկ տասնըհինգ օր, Ըստամբոլու մէկ բազրկեան ամէն ժամանակ զառբաթ կը բերի, խրիտ կանի էտոնց մէջ։ Թագաւորը իրա սինօդի մէջ նստած էր, բազրկեան առաւ մէկ քանի թուփ զառբաթ, էկաւ սինոդը։ Մէկ թուփ էլ թագաւորը վերցըրուց, քի բազրկեան, չի՞ կարելի էս թուփը տանիմ մեր ընտանիքը տենայ։

Ասաց. Թագաւոր ջան, կարելի ա, համա զալօգ (դրաւական) դիր, տար։

Թագաւորն ըսեց. Ի՞նչ դնեմ զալոգ։

—Մէկ խուրջին ոսկի դիր՝ տար։

Մէկ խուրջին ոսկի զալօգ դրեց, զաբբաթը տարաւ։ Տարաւ տվեց թագուհուն, ըսեց. Էս կտորը լաւ կտոր ա, մեզի հարկաւոր չի՞, առնենք։

Թագուհին ասաց. Էտ կտորը փըթած ա։

Ասաց. Էս կտորը լաւ կտոր ա, ո՛ր տեղն ա փըթած։

Ասաց. Թագաւոր, կայնի ես քեզի շանց տամ։ Բերեց մէկ թել օրթալղից քաշեց դուս, թափ տվեց, օխտը տեղով կըտրաւ, տեսաւ ըսաց, փըթած ա, դէ տար տուր տիրոջը։

Տարաւ տվեց թագաւորը բազրկեանին, ասաց. Ինձի հարկաւոր չի, փըթած ա։

Բազրկեան մտածեց, թէ ջանմ, էսի ինչ մարդ ա, որ յաւէջ չիմացաւ թէ փըթած ա, յետի իմացաւ։

Ասաց. Թագաւոր, դու ինչ մարդ ես։

Ասաց. Մարդ եմ, ինչ մարդ եմ, խողածին եմ։

—Թագաւոր, ասաց, քու կնիկ օձ ա։

Ասաց. Ա՛յ մարդ, էտ ինչ ա կը խօսաս։

Ասաց. Ես քեզ մէկ բան ասեմ՝ գնա փորձա, արի նոր քեզի կասեմ։ Ասաց. Էս քաղաքը որձի միս չեն ուտէ, թագաւոր ես, կերթաս կը գնես էն դասաբի վրէն մէկ հատ որձ կուտաս բերել, կըտանես կերակուր կըտաս շինել, էնիկ էնտուն հոտը որ առաւ՝ էնի մօտիկ չի գայ, համայ սէրդ վրէն տաք ա հըլա, զոռէ, կու-

գայ մէ թիքա կուտի վայնաչարուց, դիշերն էլ քու օթախիդ մէջ ջուր չես թողէ, սուտ քուն կը դնես վրէդ, կըտեննաս օձ է, թէ օձ չի, նոր կուգաս ինձի կասես։

Թագաւորը դարձաւ գնաց պասարի կուշտ, ասաց. կեթաս ընձի համար մէկ որձ կըբերես։

Ղասաբը թագաւորի խօսք չկարցաւ մերժէ, գնաց մէկ հատ գառ բերեց, մորթեց, թագաւորը էկաւ մէ լիտր տարաւ։ Ղանչեց իրա Ջառիեն, ասաց. Լաւ քիւիթա կը ծեծես, աղ շատ կը թալես։

Ջառիէն տարաւ ըտուր ասածը արաց, կերակուրը պատրաստեց, տարաւ թագաւորի յառաջը դրեց։ Հոտը զարկեց թագուհու քիթ՝ թռաւ տեղիցը կայնաւ, հերսոտաւ ուրա Ջառիքի վրէն, թէ դանջղ, էս ինչ կերակուլ ա բերիր։

Ջառիէն ասեց. Ես ինչ անեմ, թագաւորը բերեց, ես էլ էփեր եմ։

Էլ թագուհին ձէն չհանեց, նըստաւ կշտի խետ։ Թագաւորը ասաց. Դէհ, արի, հաց ուտինք։

Ասաց. Թագաւոր, դու կէ, ես իշտահ չունիմ։

Թագաւորը շատ զօռեց, գնաց մէ թիքա կերաւ։

Ասաց. Ա՛րի հաց վերցու, որ էտի չի ուտէ, ես էլ չեմ ուտէ։

Մնաց իրիկվան քնելու ժամանակ։ Թագաւորը Ջառիին թամպահ արաց, թէ մեր օթախի մէջը ջուր չես թողնէ։ Ջառիէն մէկ կաթիլ ջուր չթողեց։ Մնաց, պառկան, քնան։ Տղէն սուտ քուն դրեց. թագուհին տեսաւ որ տղէն քնաւ, հավաշիկ ծոցից դուս էկաւ, խանեց իրա մարգարտէշար շապիքը թողեց բարձի վրայ, տոլաբը բացեց, շահմարեղէն շապիքը, հագաւ, տղէն տեսաւ որ զարմանալի բան, էղաւ մէկ առագին վիշապ. քաշվաւ, յելաւ փանճարէն կայնաւ, կայնաւ պնչի վրէն, իրեն քցեց ծովի մէջ։ Տղէն յելաւ, փորը տվեց փանճարին՝ կայնաւ թամաշա արաց։ Տեսաւ, որ էնպէս կը պըտրտի ծովու մէջ, ինչպէս թէ մէ գոմէշ թաղես մէ գետու մէջ։ Էնքան պըտրտաւ՝ չուր ջանը խռվցաւ, քաշվաւ, պատի կողէն յելաւ վեր, տղէն փախաւ մտաւ ուր տեղի մէջ, սուտ քուն դրեց վրէն։ Էկաւ գնաց տոլապ, շապիքը թողեց տոլաբ, իրա շապիքը խապաւ՝ դարձաւ ախչիկ, մտաւ տեղի մէջ։

Լուսը բացվաւ, բարին վըր քեզիկ, տղէն յելաւ գնաց Թըղ բազրկեան։

Բազրկեան ասեց. Ի՞նչպէս ա, թագաւոր, իմ խօսքն ա, թէ իմ խօսքը չի։

Ասաց. Իսէրն Քրիստոսի, ահչ թէ օձ, վիշապ էր, ինձ ազատ արաւ։

Ասաց. Ես քանի՞ ժամանակ ա դու ըստուր կուշտն ես։

Ասաց. Երեսուն, երեսուն հինգ օր կըլի։

Ասաց. Բեզի ինացեր ա հինգ օր ժամանակ, որ քառասուն օր թըմըմաւ, քեզի աղուլամիշ կանի, կը թալի ծով։

Ասաց. Ընձի կանաս պըծըցընէ ըստուրից։

Ասաց. Ի՞նչ կուտաս. արի ախտի շարթ (խոստումն) արա, որ ինչ ասեմ՝ կատարես՝ ես քեզի ազատեմ։

Ասաց. Ինչ որ կուզես՝ կանեմ, միայն ընձի ազատես։

Ասաց. Կերթաս հացատան թունիրը կը տաս վառել, ծիրանի քիւթուկ ու վալուտի կը լցես, ուրիշ բան չես վառէ, ջառիին կուտաս խմոր անել, էնի կրակի չի մօտենայ, խաբես, կը տանես թէ քու նազուկ ձեռներով մէ խաց թխէ, ես ուտեմ։ Սէրդ հըլա վրէն տաք ա, քու խաթրից դուրս չիլնի, էն վախտը որ կը կղի, խաց զարնի թունրակողը, դու յետևից լանգով (քացի) կը զանես, էթայ ընկնի թոնիր։ Թոնրա բերանը կը ծածկես, դարգխները կը զարնես։ Էնի կըճչայ, ամբողջ քաղաք շահմարեղէն կը հագնին, կը գան պալատի բոլորը կը բռնեն, էն վախտն օր դալմադալը կտրվի, ընտոք կը թողին կը քաշվեն, թէ հողածնի վրայ հերսոտեր ա, որ յիմացաւ մեզի կտոր կտոր կանի։

Ինչպէս որ բազրկեան խրատ տվեց, էնպէստ էլ արաց թագաւորը։ Գնաց Ջառիյին ասաց, թէ թոնիրը վառէ, հաց թխէ։ Ջառիէն ասաց. Ես գիտեմ քու միտքը, դու գուզես թագուհուն վերջացնես, դու արի ախտ ու շարթ արա որ ընձի առնես, ես էլ քեզի խետ օգտեմ։ Ես էլ պակաս մարդու ախչիկ չեմ, ես էլ քեզ պէս խոզածին եմ, Ըսպահանու թագաւորի ախչիկն եմ։

Տղան ըստեղ իրար տվեց, թէ ես քեզնից պըտի լաւը առնեմ։ Նոր գնացին հաց թխելու։ Էն ժամանակն որ թագուհին կըզվաւ հաց թխելու, յետևանց լանգով զարկեց, գնաց թոնիր, թոնդրի բերանը ծածկեցին, դարգխները զարկեցին, էտի ճչաց, ամբողջ շահմարեղէն հագան, էկան պալատի բոլորը բռնին։ Տեսան որ ձէնը կտրվաւ, ասին. ժամանակն ա, հողածնի վրէն հերսոտեր ա, թողեցին քաշվան։ Թագաւորն ու Ջառիէն գնացին օթախը։

Ջառիէն ասաց. Թագաւորական թագն ու վակասը, թագուհու շորերը դրուկ է էս տեղ, յառաջ ես կը խագնեմ, եթէ չվնասվայ, դու էլ թագ ու վագաս կը դնես գլոխդ՝ իրար հետ կերթանք քաղաք ման կուգանք, տեսնացողը կուգայ երկրպագութեն կուտայ, կըլնեն մեզի հըպատակ։ Թէ որ ջնասվայ, առ քու գլոխդ գնա քու երկիրդ։

Ջառիէն թագուհու շորերը հագաւ, անջնաս էլաւ, թագա-

ւորն էլ թագ ու վակաս դրեց գլուխ, թագուհին իրեք անգամ գլուխ իջուց, թէ վայելես քու թագաւորութեն, անվնաս ազատվանք։ Էլան գնացին, քաղաքը ման էկան, տեսնացողներ բոլորը էկան խոնարվան, գլուխ իջուցին, տեսան որ իրանց թագաւորն է։ Էկան տուն, գնացին, Թունդրի բերանը բացին, որ տեսնան թէ թագուհին ինչ ա դարձէ։ Տեսան մէ գունտ ոսկի։

Տղէն ասաց. Էսի տանեմ տամ բազրկեանին, չունքի որ խօսք եմ տվէ։

Ջառիէն ասաց. Չի կարելի որ էսի տանք բազրկեանին, էսի օձու ոսկի ա, մսխալը մէ թագաւորութեն կաժի։ Թունդրի մէջ մանդր մունդր կտորներ կայ, ման արի, գտի, տար տուր, էն էլ էնոր շատ է։

Տղէն ման էկաւ, քանիմ կտոր մանրունք գտաւ, տարաւ տրվեց բազրկեանին։

Բազրկեան ասաց. Ինչի՞ քու խոստացած չբերիր։

Ասաց. Էս էլ քեզի հերիք ա, ամէն ժամանակ կուգաս էստեղ, քեզի համար համարձակ խրիտ կանես։

Բազրկեան շնորհակալ էղաւ մօտից, յելաւ գնաց։

Թագաւորը օղորկեց ուր հէրն ու մէրը բերեց, օղորկեց կընկայ հէրն էլ բերեց, օխտը օր, օխտը գիշեր խարանիս արաց, էնտոնք հասան իրենց մուրազին, դու էլ հասնէք ձեր մուրազին։ Երկնքուց յիրեք խնճոր ընկաւ, մէկը ասողին, մէկը լսողին, մէկ էլ գրողին։



ԱՐՇԱԿԻ ՀՆՔՆԱԹԸ

(Բաւ-Ապարան *)

Մէկ որբևեր մարդմ կար՝ անուանը Աբրահամ, ունէր մէկ աղչիկ՝ ուրթը տարեկան, ունէր մէկ տղայ՝ տասներկու տարեկան։ Էտ մարդը գնաց մէկ հանակին առաւ, էտ կնիկը էտ աղչկան հետ մտաւ զարտղ (ինատ), վերջը էկաւ էնտեղ կայնաւ, որ մարդուն ասաց, թէ եա էտ աղչկան կը կորցընես, եա ես քեզի կընկնուրթեն չեմ անէ։ Օրական մարդու եախէն կը բռնէը, հոգին կը հանէր։ Մարդու իլլաճը կարաւ վրէն, կանչեց իրա տղին, Արշակին, թէ ա՛յ տղայ, հեծի ձիմդ, էտ ախչըկան տար մէ հանի, (կողմ) կորցրու արի, մինք էտ լիրը կնկայ դարդը չենք կարայ քաշէ։

Արշակը ձիմը դուս քաշեց, հեծաւ, աղչիկ խափեցին թէ գնա, ախպէրդ Թող քեզի ուխտ տանի, դրեցին ախպօր Թարքը, ախպէր կանչեց Աստված, քշեց ձին։ Գնաց մէ օր, էրկու օր, Աստված դիտէ շատ ու քիչ, հասաւ մէկ մէշի մէջ, վեր էկաւ ձիուց։

Բուրն ասաց. Արշակ, մեր ըխտատեղը ինչքան զատն ա, որ չենք հասնի։

Ախպէրն ասաց. Թէ մէ օր էլ էթանք՝ կը հասնենք։

Աղչիկը՝ Թէ Ախպէր, քունս կը տանի։

Ասաց. Քնի, քիչմ դինջացի, գելնենք կէթանք։

Աղչիկը պառկաւ քնաւ, տղէն ուզեց որ քուրը Թողի քնած պինքը էրթայ, վերջը սիրտը մոմռաց, չուզեց որ իրա էրեխայ քուրը Թողնէը մէշի մէջ էրթէը։ Ասեց. Ես որ աչուրթեն գիտեմ, կէթամ իմ քուրը մէկ տեղ կապրեցընեմ, մինչև տենանք մեր ախբրը որտեղ կը կայնի։

Աղչիկը քնեց, զարթաւ, քաշեց Թարքը, գնաց։ Գնաց, մէկ սարի մէջ մէկ զաղա գտաւ, էտ զաղի մէջ մտաւ բնակվաւ։ Ինքը

---

* Պատմեց *1912* թ. Օգոստոսի 7-ին Բաւ-Ապարանում նոյն ենովք Յովհաննիսեանը։

կերթար աւ. կէներ, քուրը կը ճնար տունը՝ կերակուր կէփեր։ Մի ասա էտ զաղէն մէ թոփալ դեվի բնակարան ա, էտ տղէն որ էկէ էտ զաղէն բնակվէ, տղի սարսափը տվեր ա դեվի վրէն, զաղից ցածր մէկ հոր կայ՝ քառասուն գազից, դեվը երկուղից գնացէ մակ էտ հորը։ Մնացին մէկ միջոց էտ տեղ, օրերաց մէկ օր, տղէն դնաց աւղուշ անելու, դեվը հորից դուս էկաւ, ախչիկը որ դեվին տեսաւ, վժժաց, փախաւ ներս։

Դէվն ասաց. Մի երկուղ անա, ես էլ քեզի պես իսան (մարդ) եմ։

Գնաց խասաւ ախչկան, ըսկըսեց համոզել, թէ աշխարհքի մէջ մարդ ու կնիկ կան, էտի քու ախպէրդ ա, մարդը կնկան կը հարկաւորվի, կնիկը մարդին, արի ես դու մարդ ու կնիկ դառնանք։

Աղչիկն ու դեվը ուցմիշան (յարմարվեցան) յիրար հետ։ Տղէն որ կուգէր՝ դեվը կը փախնէր հորի մէջ կը մանէր, որ աւղուշ անելու կէթէր՝ դեվը կուգէր աղչկայ կուշտ։ Մէկ ժամանակ ճնաց։

Դեվը վերուց ասաց. Ախչի, էսպէս չիլլի, մէկ օր քու ախպէրդ մեզի կը տեննայ, կը զարկի կը փըչացնի։

Ասաց. Բա ինչ անենք։

Ասաց. Քեզի դիր սուտ հիւանդութին, էս մօտիկ մէկ քաղաք կայ, էն ճամփու վրէն մէկ ասլանմ է փայտա էղէ, օղարկի թո էթայ քեզի համար տանձ ու խնձոր բերի, որ գնաց՝ էն ասլան էնոր փարալամիշ կէնի, մենք կըճնանք էրկըսով մենակ։

Աղչիկն իրեն դրեց սուտ հիւանդութին, ոչ օճախ վառեց, ոչ տախտը սրբեց, պառկաւ իրա տեղի մէջը, ծանդր տքաց։ Մնաց իրիկվան ալապէրն էկաւ։ Ախպէրն էկաւ՝ տեսաւ քուրը պառկած է։

—Ախչի, ասաց, ընչի՞ ես պառկէ։

Ասաց. Արշակ ջան, ճար չունեմ, հիւանդ եմ։

Ասաց. Հըպը ինչ սիրտդ կուզի։

Ի՞մ մէքիչ ընձի համար տանձ ու խնձոր բերի՛ս։

Ասաց. Էս քաղաք մօտիկ ա, առաւօտ կերթամ, քեզի համար տանձ ու խնձոր կը բերեմ։

Տղէն հաց կերաւ, քնաւ։ Առաւօտը լուս բացվաւ, բացվի բարին վըր ձեզ, տղէն խեճաւ ուր էրն, կանչեց Աստված, գնաց դիրա էտ քաղաք, խասաւ էտ ճամփի վրէն, տեսաւ որ մեծ, թագաւորական ճամփա էր, շատ շուտով արդելվեր ա, չորս բոլոր խոան յելեր փակեր ա։ Տղէն քեխաբար էր, թէ էտ ճամփէն արդելեր էր ասլանը։ Ընկաւ ճամփի հետ, իրա ձինը քշեց։ Նատաֆիլ (յանկարծ) ասլանը տեսաւ տղին, պոչը կանթեց, անկճներ

տնկից, քշից էկաւ տղի վրէն։ Տղէն չէր գինէ թէ էտ ինչ ջանավար էր։ Էկաւ մօտկըցաւ, հասաւ տղին, ուզեցաւ որ տղին ձիուց վար բերէր, տղէն ձեռ քցեց ասլանի անկաճը բռնից, ճխտեց իրա զանգուի մէջ, ոտը սխմեց վրեն, ասլանը ընկաւ կախ ձիուց, մէկ մանղիլ տարաւ, ասլանը իմացաւ որ իրան պըտի փըչացնի էտ մարդը, գոռգըռաց, աղաչեց իրա լեզուվ։ Տղէն խղճահարվաւ, բաց թողեց։ Էլ չզատըցաւ տղից, շան պէս ընկաւ յետևը՝ գնաց։ Տղէն գնաց հասաւ էտ քաղաքը, ասլանը նստեց քաղքի ղրաղը, տղէն գնաց տանձ ու խնձոր առաւ, ետ դարձաւ ղըրա հէրը (այր), ասլանը ընկաւ քամակից գնաց։ Էն վախտն որ տղէն էր գնացէ, դէվը գնացեր էր քվոր կուշտ, արխէին նստած ին հէրի մէջ՝ թէ ասլան ընտոր կ'սպանի, էլ չի գայ։

Տղէն որ մօտեցաւ հէրին, դողն առաւ դէվուն։

Ասաց. Ախչի, ախպէրդ էկաւ, իմ ջան դողաց։

Աղչիկն ասաց. Ինչ վախլուկ դէվ ես, ինչ դու սալըղ կըտաս, ասլան մկայ իմ ախպօր ճրղճղեր աւ։

Տղէն էկաւ մէ քիչ էլ մօտեցաւ հէրին, դէվը չկարողացաւ կայնել, թողեց փախաւ, գնաց մտաւ հորը։ Աղչիկը տեսաւ, որ դրուսդ ախպէրը էկաւ, պառկաւ իրա տեղի մէջը. ըսկսեց ծանդը տքալ։ Ախպէրն էկաւ ձիուց իջաւ, տանձ ու խնձոր տարաւ տվեց քվոր, ասաց. Ախչի, ինչպէս ես։

—Ձար չունիմ, ասաց, տեղ սաղ չունիմ։

Ասաց. Վէր, յելի, տանձ ու խնձոր եմ բերէ. տանձ ու խընձոր կէր։

Ախչիկն յէլաւ նստաւ։ Բերած տանձ ու խնձորը կերաւ, ասաց. Քիչ ջանս դնջացաւ, գլխուս ցաւը կտրաւ։

Ախպէրն ասաց. Աստված օղորմած ա, կը լաւնաս, բան չկայ։ Պառկան, քնան։

Մնաց առաւօտ. լուս բացվաւ, տղէն խեծաւ իրա ձին, ասլանն էլ ընկաւ քամակից, գնաց իրան աւղուշի։ Դէվը խորից յեղաւ, էկաւ ախչկայ կուշտ։

Ասաց. Ախչի, էսպէս չիլլի, չուրի մկայ գինք մընակ էր, մկա ասլանն էլ բերեր ա, էլած են էրկու։ Սարսափը ինձի կոխեր աւ։ Քու ախպօրտ մէկ հարցու տենանք ինչով բանդ կըլնի։ (կը զապուի)։

Ախչիկն ասաց. Շատ լաւ կըլնի, իրիկուն թող գայ, կը հարցնեմ, կիմանամ։

Գնաց իրիկվայ պահին, տղի գալու ժամանակին, դողը տվեց դէվի վրէն, փախաւ, գնաց մտաւ հորի մէջ։

Տղէն էկաւ, աւղուշ բերեց, կիրակուր պատրաստեցին, հացը

կերան, քուրը խարցուց. Քի ախպէր, դու էտքան ուժի տէր ես, ինչո՞վ բէանդ կըլնիս։

Ասաց. Ինձի մէկ բնադա (երկաթէ շղթայ) ըլնի, ինձի կապէն էս քարէ սան, ես կը յաղթըվեմ։

Ասաց. Ո՞ւր ա, բընադա չկայ։

Ասաց. Էս քաղաքը մօտիկ ա, կէթամ մէկ բընադա կը բերեմ։

Ծեծաւ իրա ձինը, գնաց մէկ բընադա բերեց։ Կայնաւ տղէն քարէ սան հետ, ախչիկը ոտներից բնատէն փաթաթեց չուր վիզը։

Ասաց. Ախպէր, հըլա մի ժաժ արի, տեսնեմ։

Ասաց։ Քու տուէնն աւիրի, ոտներիցս մինչև վիզս փաթթեր ես, էլ ո՞րտեղ ժաժ գամ։

Ախչիկը տեսաւ որ ախպէրը էլ չի կարայ ժաժ գայ, դանչեց. Դէվ, արի, կապեր եմ։

Որ տղէն լսաւ դէվուն կանչեց՝ թափ տվեց, զնճըլի օղերը ամէն մէկը մէկ չոլ գնաց։

—Է՛, ըսաց, անբախտ ախպէր ես, դու ինձի խափեցիր թէ բընաւոով բանդ կըլնիմ, ինչի՞ բանդ չելար։

Ասաց. Ախչի, էն ի՞նչ դէվ էր՝ կը կանչիր։

Քուրն ասաց. Ես քեզի փորձեցի, դէվը ո՞րտեղն ա։

Ասաց. Հապա դու ինչո՞վ բանդ կըլնես, որ էտ բնատէն քեզի քէար չէրաւ։

Ասաց. Ախչի, իմ էրկու մատը իրար հետ կապես, ընտրով բանդ կըլնեմ։

Ախչիկն էլաւ ձիու պոչից մազ բերեց, թուչեց, ախպօր էրկու մատը դրեց յիրար վըրայ՝ պինդ կապեց, դէհ, ասաց, քաշէ տեսնանք, կը բացվի։

Ասաց. Չի կարելի, չեմ կանայ, բանդ էլէր պրծեր եմ։

Տեսաւ որ ախպէրը բանդ ա էլէ, ձէն տվեց, ասաց. Դէվ, արի, էս անգամին բանդ արեր եմ։

Դէվը նորից էկաւ։ Ախպէրը տեսաւ, թափ տվեց, միսը կտրեց, իջաւ օսկոռը կանաւ։

Ախչիկը գնաց ախպօր թուրը բերեց, ասաց. Դէվ, էսա իմ ախպօր գլոխ, էսա թուրը՝ զարկ։

Դէվը խղճահարվաւ, ասաց. Քառասուն քեզի պէս կնիկ էլնի, ես էտ կտրիճի գլոխը չեմ զարկէ։

Ասաց. Դու վախլուկ դէվ ես, թուրը տու ընձի, ես կը զարկեմ։

—Չիլնի, չի, ասաց, ես էտ տղին չեմ ղմըշի ըսպանել, տանենք թալենք էտ հորի մէջ, թող էթայ իրան իրան փչանայ։

Տղին տվին յառաջ, տարան դըբա հորը, էն ինչ դէվն էր՝ բան չէր ասէ, ինչ քուրն էր՝ յետևանց իւրմուդով զարկելով տա-ըաւ։ Տարան քցին խորի մէջ։ Արխային նստան հէրի մէջ դէմը իրան կնիկ։ Սկսեցին իրանց համար քէֆ անել։ Ծաց կուտին, օսկոններ քցին ասլանի առաջ. ասլան չէր ուտէ, կը վերցընէր, կը տանէր կը քցէր խորի մէջ, ուր տիրոջ խամար։ Միքանի օր ընցաւ, ասլան մոռածեց էտ հայվան անասունը, իրա տէրը պըտի էտ խորի մէջ չորունմիշ ընի։ Ետ դարձաւ ասլանը գնաց էն ճամփի վրէն։ Ասլանը որ վերջացեր էր, ճամփան բացվեր էր, բազրկեանը կէթէր կուգէր։ Ասլանը տեսաւ որ մէ ծանդր բազրկեան էկաւ, էլաւ գնաց բազրկեանի առաջ, բազրկեանի նոքարները տեսան ասլանի գալը, ըսկսեցին փախնել, ասլանը գոռաց, դուզա տվեց, բազրկեան բաշին մէկ խելքով մարդ էր, իմացաւ որ էտ անասունին մէկ ահվալմ կայ, ձէն տվեց ուր նոքարներին, թէ մի փախէք։ Նոքարները կայնան։ Ասլանը գնաց հասաւ բազրկեանին, փաթթըվաւ բազրկեանի ոտները, ոտները լկստեց, ձեռ թալեց փէշը քաշեց։ Բազրկեան ասաց իրան նոքարներին, թէ երկու տղայ էկէք ինձի հետ, էթանք տենանք էսի մէղի դոր կը տանի։

Ընկան քամակից, գնացին։

Տարաւ ասլան կայնեցուց հորի վրէն։ Բազրկեան ասաց. Ջէն տվէք, էս հորի մէջ բան կայ։

Ջէն տվեցին թէ ինչ մարդ ես, ինս ես, ջինս ես, ձէն տու տենանք ինչ մարդ ես։

Տակնուն ց տղէն ձէն տվեց, թէ մարդ եմ։

Բազրկեանը շըրխա կախեց, տղին խորից դուս խանեց։ Տեսաւ որ չուտես, չխմես, թամաշա անես։ Համա ինչ անես, որ մեղապունը թափեր ա վրէն։ Տէսաւ որ էրկու մասը կտրուած, եարալու, դանակ ջիբից հանեց, մատների մաղը կտրեց, այ տղայ, ասաց, ինչ ունիս։

Ասաց. Ոչինչ բան չունիմ, թաք տղայ եմ, ընկեր եմ աշխըրքի մէջը կը պտըտնմ։

—Է՛հ, որդի, ինձ էլ զաւակ չըկայ, քեզի կը տանեմ ինձի հոգեորդի կը շինեմ։

Բազրկան տղին տարաւ։ Տարաւ ձեռքերին դարման արեց, տղի ձեռքերը սազացաւ, գնաց խոստաւ իրա քաղաքին։ Մէկ ժամանակ մնաց էտտեղ բազրկեանի կուշտ, խընդրվաւ բազրկեանից, քի ափօ, ինձի իրաւունք տուր, մէ ըխտադրութեն ունեմ, էթամ իմ ուխտը կատարեմ, ետ դառնամ գամ։

—Գնա, ասաց, որդի ջան, ահագին կարողութեն ունիմ, բոլորն էլ քունն ա։

Տղէն ձինը քաշեց դուս, ուր թուրը կապեց վրէն, գնաց դիրա հէրը։ Մի ասա, քուրը պառկեր էր, մէկ ախչիկ էր բերէ։ Տղէն հէրին ժօտացաւ, դող տվեց դէվի վրէն։

Ասաց. Ախչի, քու ախպէրը հորից դուս ա յկէլ, սարսափին ընկաւ իմ ջանը։

Աղչիկն ասաց. Ա՛յ քու տունը աւերի, ինչ վախլուկ դէվ ես, իմ ախպէրը մկայ հորի մէջը փթթեր ա։

Էտ խօսքի հետևին, ախպէրն յկալաւ հէրի դուռը, ասլանն էլ հետ։ Դէվը փախաւ մտաւ հէրի մէջ, սկսեց դողալ։ Տղէն ձիուց իջաւ, ախչի, ասաց, եթէ որ մարդ կուզիր, ինչի՞ էս օյինը բերիր իմ գլուխ։ Գեղութիւն էի արե քեզիկ, որ իմ հէրը տվեց, ասաց, տար չոլի մէջ տեղը թող, ես չղըմըշայ։

Ըսկի պատասխան չտվաւ։

Ասաց. Դէվ, դու ըսկի երկուղ մի արա, դու ինձի չը ղըմը-շար, ես էլ քեզի բան չեմ ասէ։ Ասլանին հայ տվեց քվոր վրայ։ Ասլանը հասաւ բըռնեց մէ ոտից, թաթն էլ քցեց մէ ոտից, քա-շեց ճղեց, արաւ էրկու կտոր։ Ետնա տեսաւ, մէկ էրեխայ էլ հէ-րի վերև ձէն գուգայ, տղէն գնաց բռնեց ոտնից, գարկեց պատ։ Խեծաւ իրա ձին, ետ դարձաւ։ Գնաց հասաւ իրան բազրկեան հօր։ Յիմացաւ որ իրա խորդ մէրը մեռեր ա, հերը մնացեր ա նեղ դրութեան մէջ, լաւ ախչիկ գտաւ, ուզեց, բերեց տղի համար։ Սկսեց եօթն օր, եօթ գիշեր հարսանիք անել։ Կերան խմեն, ձեր բարին յէշացին։ Ընդոնք հասան իրենց մուրազին, դուք էլ հաս-նիք ձեր մուրազին։



ՋՈՒԼՓԱԿԻ ԿՆԻԿԸ

(Բաւ-Ապարաճ — Ապաղացիներ*)

Կըլնի չըլնի, մի թագաւոր կըլնի Բաղդատու քաղաքը։ Օրէ-
ըից մէկ օր էտ թագաւոր ուր վազիրին կասայ.

Արի՛ թամփէհ անենք, տենանք էս քաղաքը իմ թամփէհը
կը պահէ՞ն։

Վազիր կասայ. Արա՛, քու բանն ա։

Թալալ կուտան կանչել քաղաքի մէջ, թէ թագաւորի թամ-
պէհն ա օր մէկ մարդ ճրագ չվառի իրա տան, թէ որ վառէ,
թագաւոր կը տանի դարաղաճ կը խանի (ցցի խփել)։

Մնաց իրիկվան, քնելու ժամանակ իրա դաւաղներ քցեց քա-
ղաքի մէջը մանգալու, թէ տենան վի՞ր տուն ճրագ կը վառի։

Տեսաւ օր ամբողջ քաղաքի մէկ տեղն էլ ճրագ չկայ, գնա-
ցին ներքև, տեսան օր մէկ տեղ ճրագ կը վառվի, իրիշկացին տե-
սան, օր մէկ Ջուլֆակ ու իր կին նստած են, Ջիւլֆակ գործ կա-
նի, կին ճախրակ կը մանի։

Կին վերցուց մարդուն քի, Ա՛յ մարդ՝ քունս կը տանի։

Մուրադն էլ ասեց. Արի գլոխդ դի չոքիս վրա՝ քնի։

Կնիկը գնաց գլոխը դրեց մարդի չոքի վրէն քնաւ։ Կնիկը
իրա քունն առաւ, Ջուլֆակի քունն էկաւ։

Ասաց. Ա՛յ կնիկ, քունս կը գեայ, ելի դու նստի քու ճախ-
րակի վրէն, ես քնեմ էս խետ։

Կնիկն էլաւ նստաւ իրա ճախրակի վրէն, մարդ գլոխ դրեց
կնկայ չոքին՝ քնաւ։

Ղաւաղներ ետ դարձան գնացին Թագաւորի կուշտ. Թէ Թա-
գաւոր, ամբողջ քաղաք ճրագ չէ վառվէ՝ մէ Ջուլֆակի տուն ճրագ
կը վառվի։

Պատմեց *1912* թ. Օգոստոսի 6-ին Բաւ-Ապարաճ գիւղում Եսոֆ Յովհաննիսեան անգրագէտ գիւղացին, որի ծնողները գաղթել են այստեղ Ապաղայի Թափառէս գիւղից։ Նա պարապում է երկ-
րագործութեամբ եւ ձմեռները գոմերում հէքեաթ է ասում։

—Դէ, ասեց, գնացէք, էտ Ջուլֆակը դանչէք, բերէք։

Գնացին Ջուլֆակին դանչէին, առան էկան Թագաւորի դիվան։

Թագաւորն ասաց. Ա՛յ մարդ, դու ի՞նչ մարդ ես, օր իմ հրաման չէս կատարէ, ես Թամպահ եմ արէ, օր ճրագ չպըտի վառվի, դու ինչի՞ ես վառէ։

Պատասխանեց Ջուլֆակը, քի Թագաւոր, ես աղքատ մարդ եմ, ի՞նչ անեմ, մէկ ապրուստ չունիմ, ես Ջուլֆակ եմ, գիշեր ցերեկ իմ արհեստս պըտի բանեցնեմ, օր հաց առնեմ, ուտենք։

—Ա՛յ մարդ, ասաց, դու լաւ մարդ կերևաս, մինչև ե՞րբ Ջուլֆակութեն պիտի էնես։ Գնա՛ քու կնիկդ սըպանի, արի քեզի կը շինեմ ինձի վազիր, կեր, խմէ, մինչի քու մահվան օր։

Ջուլֆակը պատասխանեց. Քի Թագաւոր, եթէ Ջուլֆակութեն էլ չելնի, ես մուրացկանութեն կանեմ, իմ օղլուշաղ չեմ ջնասէ։

—Դէ, ասեց, գնա, գլոխդ քարը։

Ջուլֆակը գնաց, Թագաւորը օղորկեց, կնիկը բերեց։

Կնիկն էկաւ Թագաւորի դիվանը կայնաւ, ասաց. Թագաւոր, ինձի ինչի՞ ես կանչէ։

Ասաց. Լաւ կնիկ ես դու, մինչև ե՞րբ պըտի ճախրակ մանես, Ջուլֆակին կնիկութեն անես։

Ասաց. Ի՞նչ անեմ, Թագաւոր, հըպա։

—Գնա, ասաց, մարդուտ սըպանի, արի ես քեզի Թագուհի շինեմ, կեր, խմէ, վայելչութեն էրա, ափսոս կնիկ ես։

Ասաց. Հաւատամ, Թագաւոր։

Ասաց. Թագաւորի խօսքը սուտ չիլնի, հաւատա։

Կնիկը յետ դարձաւ գնաց իրա տունն։

Թագաւորն իրա ասածին փոշմընաւ, ըսաց. Էտ կնիկը գնաց, իրա մարդը պիտի ըսպանի, մենք դատապարտ ըլնենք։ Կանչեց իրա ղարաուլներաց, թէ գնացէք էն մարդուն մուղաթ կացէք, օր էն կնիկ իրա մարդուն չսպանի։

Կնիկ գնաց դանակը սրեց, դրեց ուր ջէպ, նստաւ ուր ճախրակի վրէն։

Մարդի քունն էկաւ. ասաց. Ա՛յ կնիկ, քունս կըգեայ։

Ասաց. Արի, գլուխդ դի չոքիս՝ քնի։

Մարդն էլ էլաւ, գլոխը դրեց կնկայ չոքին, պառկաւ, քնաւ։

Մարդի քունը տարաւ, կնիկը գլոխը վերցուց դրեց մէկ կոճի վրայ, դանակը ջիպից խանեց, մարդու գլոխը կտրեց, յիւլաւ ճրագը անցուց։

Ղարաուլները տեսան օր Ջուլֆակի ճրագն ընցաւ։

Թագաւորն ասաց. Է՛յ վախ, անմեղ մարդու արնի տակ մտայ, էն կնիկը ուր մարդուն ըսպանեց։

Կնիկն յէլաւ չարսաֆը քաշեց ուր գլխուն, գնաց դիբա թագաւորի պալատ։ Դարգխները փակ էր, մնաց չուբի լուս։ Ղարաուլները լուսուն տեսան օր մէկ օղլուշաղ բաոնի տակ կայներ ա, ձէն տվեցին, թէ ինչ օղլուշաղ ես, էտի քի թագաւորի կուշտ գանգատ ունիմ, պիտի երթամ թագաւորի կուշտ։ Ճամփա տվեցին, գնաց թագաւորի դիվան։

Թագաւոր խարցուց քի ինչ օղլուշաղ ես։

Ասաց. Թագաւոր, ես յիրիկվայ Ջուլֆակի կնիկն եմ։

Ասաց. Ի՞նչ գանգատ ունես։

Ասաց. Դու ասեցիր, թէ գնա քու մարդ ըսպանի, արի ես քեզի թագուհի կը շինեմ, ես էլ գնացի իմ մարդն ըսպանեցի, հիմի էկեր եմ։

Թագաւորի բարկութինը բռնեց, զանչեց Ջանլաթին, կնկայ գլոխը տվեց զարկել, էտնա իրա վազիրին ասաց. Ես կերթամ աւղուշ, կը վերցնես չորս մարդ քեզի խետ, յառաջ կը մտնես իմ տուն, ինչքան էգեղէն կայ՝ կը կտրես, ենա կերթաս կը մտնես քու տուն, ինչքան էգեղէն կայ՝ կը կտրես, կելնես գըյնես քաղաքի մէջ, երկու տարեկանը կը կտրես, ետ դարձեր եմ, էկերեմ, մէկ օղլուշաղի գլոխ տեսեր եմ՝ գլոխտ կը զարնեմ։

Թագաւորը ձին հեծաւ գնաց։

Վազիրը մնաց տարակուսված։ Ձեռքերը դրեց ծոց, արտասունք թափելով գնաց ուր տուն։ Մէկ ըխտիար հէր ունէր վազիրին, տեսաւ օր տղէն գուլայ, Հա, ըսաց, որդի, էսօր քեզի ինչ ա պատահէ՝ օր գուլաս։

Ասաց. Ախօ, ասաց, թագաւորը բարկացեր է իմ վրէն էսօր։

Ասաց. Ինչի խամար, որդի։

Ասաց. Մէկ Ջուլֆակի անգգամ կնիկ իրա մարդուն ըսպանէ, թագաւոր բարկացեր ա, հիմի դրեր ա իմ վրէն, թէ յառաջ կը մտնես իմ տուն, իմ տան էգեղէնը կը կտրես, կերթաս կը մտնես քու տուն, քու տան էգեղէնն էլ կը կտրես, եղոյ կըմտնես քաղաքի մէջ, մէկ հատ էգեղէն չես թողէ, եթէ թողես՝ գլոխդ կը զարկեմ։

—Է, որդի, ասաց, դու պըտի վերջ առաջ մեռնես, էտքան մարդու մեղքի տակ ընկնես՝ մեռնես լաւ ա, թէ չէ առանց մեղքի մեռնես։ Սպասիր, իրիկուն թագաւոր գալու ժամանակ ինձի տար էնտեղ, ես մէկ չորս խօսք կը խօսամ, կարողացայ քեզի կազատեմ, չկարողացայ՝ թող գլոխդ զարկէ։

Մնաց մինչի իրիկվայ թագաւորի գալու ժամանակ։ Վազիրը տեսաւ օր թագաւորը էկաւ։

Էկաւ թէ, ախօ, թագաւորն էկաւ։

—Դէհ, ասաց, ձեռնիցս բռնի, ինձի տար թագաւորի դուռ։ Յօր ձեռնից բռնեց, չունքի կուրացեր էր, տարաւ թագաւորի դուռ, մինակդաշի (քարէ աթոռ) վրէն նստեցուց։

Թագաւորն էկաւ քաղաքին մօտցաւ, տեսաւ օր քուչաներ հարս ու ախչիկ, կնանիք լիքն էն, բարկացաւ վազիրի վրայ, թէ ես հրաման անեմ էնտոր, էն իմ հրամանը չկատարի։ Ջինը քշեց, էկաւ դուռը, ձիուց վէր էկաւ, տեսաւ օր իրա խօր հին վազիրը էտտեղ նստած էր։ Վազիրը յէլաւ կայնաւ, թագաւորը ձեռը ճխտեց վըր թևին, թէ մեղք է, դու իմ հօր հին վազիրն ես, մէնի, կայնի, մեղք ա։

Ասաց. Թագաւոր, խնդիրքունիմ. իրաւունք տաս չորս խօսք ունիմ՝ խօսամ։

Ասաց. Իրաւունք ա քեզի, բարա վազիր, խօսա։

Աթոռք բերեցին, թագաւորը նստաւ, վազիրն ըսկսեց խօսալ։

Ասաց. Թագաւոր, հարամի ի, քառասուն հարամու գլխաւոր, քու խէր չկրցաւ ինձ մէ բան անէր, ուր երկուղից բերեց վազիր արեց։ Հարամի եղած ժամանակին, աւուր մէկ օր, խեծայ իմ ձին, դիշեր էր, քշի էկայ ճամփի վրէն կայնայ։ Մէկ էլ տեսայ՝ մէկ ձիաւոր էկաւ. մէկ ջահել, տասնըհինգ տարեկան թոյսըզ (անմազ) տղայ ձեռքին սազ, մէկ եանից սազ կը զարկի, մէկ եանից խաղ կը կանչի, մէկ եանից կուլայ։ Ջինս քշեցի վրէն, այ տղայ, ձիդ, շորերդ տուր, ջանիդ յըռա ա, թող, գնա, ազատ ես։

Էտ տղէն հէչ բանի տեղ չըդրեց ընձիկ։

Ջին քշեցի քամակից, քանի թեւիս ուժ կէր՝ մէկ գուրզ բառան զարկի, էլ ետ բանի տեղ չդրեց. իրեք անգամ գիւրզ քցի, ետ դարձաւ վրէս, ըսեց, մինչև ես դու ընձի չարչըրես, ձեռ քցեց բըռչամս, ինձի ձիուց վէր բերեց. բռչամս, դրեց պանդուն, ուտ դրեց վրէն, ձին քշեց, ես ընկայ ձիուց կախ, վերջ տեսայ օր էս մարդ ինձի պըտի սըպանի, աղաչի. Երիտասարդ, քու Աստծու սիրուն՝ ինձի ազատ արա, քանի սաղ եմ, քեզի նոքարութեն անեմ։ Նոր ընձի. Ինչդ էկաւ գլոխդ, յէլի նստի ձիդ։

Յելա նստայ ձին, միասին գնացինք։ Գնացինք չոլի մէջ տեղ մէկ մեծ ամարաթի ռաստ էկանք։ Ջին քշեց, ամարաթի տակն իջանք։ Մէկ տոպրակ ձիու դաշուց վէր բերեց, խանեց քառասուն խատ էն խաստ մխերից, ասաց. Ա՛յ տղայ, ես էս մխերը կը շարեմ էս բատանը՝ գելնեմ գլոխը, մէկ սրհաթ կսպասես, էկայ՝ էկայ, չէկա՝ իմ ձին քեզիկ խալալ ըլնի, տար քեզիկ։ Մխերը շարեց, յելաւ բատանի գըլոխ. մէկ սրհաթէն ետ տեսայ օր մէկ գլոխ կտրէ՝ արնաթաթախ առաւ յիջաւ։ Ցիջաւ տակ, դրեց տոպրըկի մէջ, կախեց ուր ձիու դաշից, դէհ, ասաց, խեծի, էթանք։

Ուճանք ձիանք, քշեցինք։ Էկանք մէ քաղաքի ղրաղ. քշեց մէկ գերեզմանատունն, իջանք։ Մէկ պստի մատուռ կար ըտտեղ, դուռը բացեց, մտաւ նես, ես լուսամտից Թամաշ արեցի։ Տեսայ. էն գլոխը խանեց տոպրակի միջից, էտտեղ մէկ Թազա գերեզման կար, գլոխը զարկեց էտ գերեզմընի քարին, ըսեց. Ահա, հանգստացիր, ես քու դուշմընի հայիֆը առայ։ Էտ խօսքն ասաց, քաշեց խանչալն ու իրան քցեց խանչըլի վրայ, Թիկնքից չորս մատ դուրս ավեց։

Ես օր էտ տեսայ, դուռը բացի՝ ներս մտայ։ Էտիկ աղաչեց, Թէ ա՛յ, տղայ, դու ըլնես, քու Աստուածդ, էս գերեզմանը իմ մարդու գերեզմանն է, ես օղլուշաղ եմ, էս գլխու տէրը իմ մարդուն ըսպաներ էր, ես գնացի, իմ մարդու ըսպանողին ըսպանեցի, իմ սիրտս դինջացաւ։ Իմ խանչալը կը քաշես, իմ մարդու գերեզմանը կը քանաս, ինձի կը դնես իմ մարդու կշտի խետ, էս մեր դիւշմի գլոխը կը դնես մեր ոտներէ տակ, կը ծածկես. իմ ձին էլ քեզ հալալ ըլնի, էն մարդին օր ըսպանեցի, էտոր կառողուԹենն էլ քեզի հալալ էլնի, կերԹաս կը տանես։

—Թագաւոր, ասաց, խանչալը քաշեցի՝ հոգին աւանդեց, տեսայ օր դրուստ օղլուշաղ էր, գերեզմանը բացի, դրեցի մարդի կողքի հետ, գլոխը դրի ընդոց ոտներէ տակ, գերեզմանը ծածկեցի, խեծայ իմ ձին, էն ձին էլ եղակ քաշեցի, էկայ էն ամարաԹի տակ, մտայ էն ամարաԹ, ահագին կարողուԹենն կար, Թօփ արի, բերեցի իմ տուն։ Ահա, Թագաւոր, ես էկայ նստայ քու հօր վազիր։ Էն էլ կնիկ էր, էտ ջուլֆակի կնիկն էլ կնիկ էր, կնիկ կայ, կնիկ էլ կայ, մարդ կայ, մարդ էլ կայ։ Հիմի մէկ կնկայ համար ամբողջ մէկ քաղաք կը կործնն։ Ահա էս քաղաքը կործեցիր, միւս քաղքընները, միւս գեղերը, որը պըտի կործես։

Նոր Թագաւորը վերցուց, Թէ բաբա վազիր, տղիդ գլոխը բաշխեցի քեզիկ։ Էնոնք հասան ուրանց մուրազին, դուն էլ հասնէք ձեր մուրազին։

ԱԼԷՔՍԱՆԻ ՀՆՔՆԱԹԸ

(Բաճ-Ապարաճ, Ապաղացիներ *)

Ըստամբօլու մէջ մէկ մենծ բազրկեան կելնի. կունենայ էոտոր եօթը չրաղ։ Կըմնայ էտ մարդու մահվան ժամանակ կըգայ՝ կը մեռնի։ Մէկ տղայ կըլնի էտոր տասներկու տարեկան, մէկ աղջիկ՝ տաս տարեկան։ Էտ մարդը կը տանեն կը թաղեն, տղան, աղչիկը կը մնան. մէկ տարի, երկու տարի միջոց կը քաշի՝ էտ բազրկեանի չրաղները միտ կանեն, թէ էտ մարդը մեզի չրաղ արեց, մենք էլ երթանք էտուր տղէն տանենք երկրներ պատցունք, սավորցընենք բազրկանութեն։ Եօթն էլ իրար խետ էկան Ալէքսանի տուն։ Ալէքսան տեղ տվեց, էտ մարդիկը նստան։ Հարցուց թէ խէր ըլնի ձեր գալը։

Բազրկեաններ պատասխանին՝ թէ մենք քու հօր չրաղներն ենք, հիմի ինչպէս քու հէր մեզի տարեր երկրներ ման տվէ, մեզի չրաղ ա արէ, մենք էր էկեր ենք, որ քեզի տանենք, երկիր ման տանք, օր բազրկեանութեն սովրցնենք։

Տղէն պատասխանեց թէ, երթամ իմ քվորը հարցընեմ, տեսնամ իմ քուր ինչ կասի, գամ ձեզի ասեմ։

Ասին. Ցելի գնա, հարցրու։

Տղէն գնաց քվոր կուշտ ասաց. Քուրիկ, իմ հօր չրաղներ էկած են, կասեն արի բազրկանութեն էթանք, ինչ կասես, էթամ։

Քուրն ասեց. Ախպէր ջան, որ աշխըրքի մալն էլ մերն ըլնի, ուտելով կը խըլըսի, պիտի դուն էլ գնաս աշխատես բերես՝ որ յաւելցընես։

Ցելաւ գնաց Ալէքսան էտ բազրկեաններու կուշտ, ասաց. Իմ քուրը խօսք տվեց, ինչ վախտ որ կերթաք, ինձ իմաց տվէք, էթանք։

Ասին. Էսօր երկուշաբթի է, պատրաստվի, շաբաթ օր ճամփայ ըլնենք։

Պատմեց *1912* թ. Օգոստոսի 6-ին Բաճ-Ապարաճ գիւղում միեւնոյն Եճովի Յովհաննիսեան անգրագէտ գիւղացին, որ սովորել էր իւր հօրից։

Տղէն պատրաստեց իրա ամէն մէկ բան, գնաց քվոր կուշտ, ասաց. Մէ բոպէ որ քեզի չտենամ, խելքս կը թալեմ, ինչդ պիտի ըլնի։

Ասեց. Ես իմ շաքիլ քաչել տամ, տամ քեզի, եվ որ կարօտնաս՝ հանէ, թամաշա էրա, դիր ծոցդ։

Տղէն չուր բեռները ճամփու քցեց, քուրը շաքիլը քաշեց, բերեց տվեց ախպօրը, ասաց. Ջուր քու գալդ՝ շողը յերթըսից տեղնամ, ջուրը կժիս։

Դրեց ծոց, կանչեց Աստուած, ընկաւ ճամբա։ Գնացին Փարիժու քաղաք դախլ էլան (իջևանեցին)։ Բեռները թափեցին, պատրաստութեն տեսան թագաւորին տեսութեան էթալու, գնացին թագաւորի դիվան, թագաւորին գլոխ վեր բերեցին, հատիան դրին դէմը։ Թագաւորը որ տեսաւ, Հա, ըսաւ, ինչ մարդիկ էք։

Ասեցին. Թագաւոր, Ըստամբօլու ենք, խնդրենք իրաւունք տաս՝ քու քաղաքիդ մէջ խրիտ անենք։

Ասաց. Էս չահիլ տղէն ձեր ինչն ա։

Ասեցին. Թագաւոր, էտի մեր դվխաւորն ա, մեզ չրաղ անող բաղրկեանի տղէն ա։

Թագաւոր շատ ուրախացաւ, ասաց. Քանի որ էստեղ էք, էս տղէն պըտի ճնայ իմ կուշտը, դուք գնացէք, ձեր խրիտը արէք։

Ալէքսանը թողեցին թագաւորի կուշտ, էտ մարդիկը գնացին ուրենց խրիտը անելու։

Թագաւորին մէկ տղայ կար, էկաւ էլաւ ախպէր խետ Ալէքսանին։

Էտոր մէկ վազիր կար՝ անունը Լոնդ, վորն ուռաւ, քի ես էս տաս տարի վազիրութեն կէնեմ, ինձի աչքէ քցէր ա, էս տղին կընդունի։

Թագաւորի տղէն ու Ալէքսան քաղքի մէջ կուտեն, կը խմեն, կը պատին ուրենց համար։ Մէկ օր քվոր պատկերքն ընկաւ Ալէքսանի միտք, դուքանից դուս էլաւ, որ պատկերը հանի՝ թամաշա անի։ Թագաւորի տղէն էլ յելաւ դուքանից, գնաց։ Գնաց տեսաւ որ մէկ պատկեր բռներ ա ձեռք, հա կը պագնի, հա կը դնի վըր գլխուն։

Ասաց. Ալէքսան, էտ ինչ ա։

Ասաց. Բան չկայ, իմ քվոր պատկերն ա։

Ասաց. Տուր ընձի, ես էլ թամաշայ անեմ։

Տվեց, թագաւորի տղէն առաւ տեսաւ, շատ հաւանեց, ասաց. Էտ քուրդ բաշխէ ընձիկ։

Ասաց. Մէկ ախչիկ ա, քեզի դուրբան էղնի։

Յելան գնացին թագաւորի դիվան։ Թագաւորի տղէն պատմեց

թագաւորին, քի թագաւոր, Ալէքսան իրա քուրը բախշեց ընձիկ։

Թագաւոր շատ ուրախացաւ, ըսկսեցին էտոեղ աչքալուսանք, կեր ու խում, ուրախութիւն անել։

Լոնդ վազիրի փոր ջիլիզ ուռաւ։ Թէ ես թագաւորի վազիրն եմ, իմ ախչիկս չառաւ՝ էտի էրէկվայ գեաղէն ա, էկաւ ուր քուրը տվեց թագաւորի տղին։ Էտոեղ վազիրը կայնաւ թագաւորին, քի դուն էլ ախչիկ ուզեցիր, Ըստամբօլայ քաղքի ամենագլխաւոր լիրըը էտ ա, ես առաջի անգամ որ Ըստամբոլ գնացի, իրեք գիշեր էտ ախչկայ մօտ եմ պառկէ։

Թագաւոր կայնաւ շիվարաւ. Ալէքսան, ասաց, որդի, որ քու քուրը լիրը էր, ինչի՞ տվեցիր իմ տղին։

Ասաց. Թագաւոր, ես էտ թաւուր բան չեմ տեսէ իմ քվորից։

Վազիրն ասաց. Արի՛ թագաւորի յառաջը կապակցութիւն անենք, եթէ գնացի քու քվոր նշաններըը իմացայ. բերի՝ քու գլուխ թագաւորին փէշքաշ, թէ չբերի՝ իմ գլուխ։

Էտոեղ կապակցութիւն արեցին թագաւորի առաջ։

Վազիրը տասն օր ժամանակ առաւ, յեղաւ գնաց Ստամբօլ։ Յիրեք օր շուռ էկաւ, չկրցաւ մէկ բան էնէր։ Յիրեք աւուր ետ տեսաւ մէկ պառաւ էն տեղից էկաւ։

Ասեց. Էթամ էտ պառավին մէկ բան խոստընամ, բալքի մէկ հնարմ գտնի։

Գնաց, ասաց. Պառաւ, էսպէս մէկ բանի համար եմ էկէ, չեմ կանայ գտնէ։

Պառաւն ասաց. Ի՞նչ կուտաս, ես քեզի տանեմ նշանց տամ։

Ասաց. Քեզի կու տամ հինգ հազար մանէթ։

—Դէհ, ասաց, դու գնա բոյովդ մէկ դութի տուր շինել, մէկ երեսը շուշա արա։

Գնաց, տուեց շինել մէկ դութի, առաւ էկաւ պառավու տուն։

Պառաւն առաց. Մտի մէջ դութուն, ես քեզի կը տանեմ էտ ախչկայ տուն։

Վազիրը մտաւ դութու մէջ, դափաղը փակեց։ Պառաւը դանչեց մէկ համալի, տվեց համալի քամակ, տարաւ Ալէքսանի դուռը դրեց։ Նոքարներն էկան թէ ինչ մարդ ես, ինչ կուզես։

Թէ ես Ալէքսանի հօրքուրն եմ, գնացէք աղչկան ասէք գայ, քու հօրքուր կը գանչի։

Գնացին աղչկան կանչեցին։

Աղչիկն ասաց. Կանչէք գայ նես, ես դուրս չեմ ըլնի։

Էկան պառաւին տարան ներս։

Ասաց. Ես քու հօրքուրն եմ, էրուսաղէմ կերթամ, էս իմ ապրանքը կուտամ քեզի ամանաթ պահի, չուր ես գառնամ գամ։

—Դէհ, ասաց, դիր էտաէղ մնա։

—Չէ, ասաց, իմ ղուԹին քու քնած տեղ պըտի դնես։

Շատ եալվար ընկաւ, տարաւ դրեց իրա քնած տեղ. պառաւը Թողից գնաց։ Մնաց գիշերվայ ախչկայ քնելու ժամանակին, ախչիկը տկլոզցաւ, որ մտնէր իրա տեղի մէջ, վազիրը ամէն մէկ նշաններըը ղուԹու միջից սէյր էրաւ՝ դրեց։

Առաւօտ լուս բացվաւ, պառաւն էկաւ, քի իմ ղուԹին կը տանիմ, ընկերներս գնացած են, չկարցայ խաոնի։ Վերցուց իրա ղուԹին, առաւ գնաց։ Վազիր ղուԹուց դուս էկաւ, հանէց պառվու փողերը տվեց, նստաւ ֆայտոն, գնաց դիրա Փարիզու քաղաք։ Ֆայտոնից յիջաւ՝ գնաց Թագաւորի դիվան։

Ասաց. Թագաւոր, կանչի բեր Ալէքսանին։

Թագաւորը կանչեց Ալէքսանին։

Վազիրը խանեց դիր՝ քու քվոր, ասաց, ծամեր շէկ ա, աչքեր կապուտ ա, դոշի վրէն խալ կայ։

Տղէն տեսաւ որ ամէն բան դրուստ խօսաց վազիր, էլ չկարցաւ պատասխան տար Թագաւորին, ասաց. Թագաւոր, կը խընդրեմ՝ հինդ օր ինձի ժամանակ տուր, դառնամ գամ՝ իմ գլոխը զարկ, իմ բազրկեաններ, իմ ապրանք Թող մնա զալօգ, չուր գամ։

Յելաւ նստաւ ֆայտոն, գնաց Ստամբոլ։ Գնաց խասաւ իրա տուն, նորքարները տեսան որ աղէն էկաւ, աչքալուսանք տարան քվորը, ասին. Աչդ լուս ըլնի, աղբէրդ՝ Ալէքսանը էկաւ։

Քուրը ուրախ ուրախ յելաւ էկաւ ախպօր դէմը. ասաց. Ալէքսան ջան, յիջի ֆայտոնից, ինչի՞ ես նստէ։

Ախպէրը բան չպատասխանեց՝ ֆայտոնից յիջաւ, յիրեք անգամ Թքեց քվոր երեսը՝ ետ դարձաւ։ Քուրը շիվարաց կայնաւ, Թէ էս ինչ բան էր, որ իմ ախպէրը Թքեց իմ երեսը՝ յետ դարձաւ։ Կայ, չկայ՝ էն պառաւու ղուԹուց մէկ զաւալմ (վնաս) դիպաւ իմ ախպօր։

Ախչիկը բերեց մէկ հինդ հազար մանէթ խարճեց, մէկ Թաք ԹաԹան (ձեռնոց) շինել տվեց, նստաւ ֆայտոն, ախպօր քամակից դիրա Փարիզու քաղաք։ Ախպէրը խասաւ՝ իջաւ դիրա Թագաւորի դիվան, ախչիկն էլ քամակից գնաց։

Ախչիկը էն վախտը հասաւ՝ որ Թագաւոր ջանլաԹ է բերէ, Ալէքսանի գլոխը պըտի զարնէ։

Ախչիկը քշեց առաջ։ Թագաւոր տեսաւ որ մէկ օղլուշաղ կայներ ա, ասաց. Ի՞նչ օղլուշաղ ես։

Ասաց. Ալէքսանի քուրն եմ։

—Էհ, ասաց, պարզերես ըլնես, ախպօրդ արեան էկեր ես Թամաշա կանես։

—Է՛, ասաց, Թագաւոր, ինչ անենք, լրբեր անմեն տեղ կան,

ես իմ ջան ի տվէ էն մարդուն, իմ ապրանք էլ խօ չեմ տվէ, ինչի էկաւ իմ ապրանք գողացաւ պիրեց։

Ասաց. Ի՞նչղ ապրանք է։

Յանեց թաթպան, ասաց. Էկէ էսոր մէկ թաք գողցաւ բերեց։

Թագաւորն առաւ իրիշկաց որ զարմանալի բան է, դրեց վազիրի վրէն, ըսեց. Ես ըստուր ապրանք կը բերես, ես գլուխդ կը զարկեմ։

Վազիրը ճնաց շիվար, ասաց. Թագաւոր, ես էտ ապրանքից խապար չեմ։

Ասաց. Շան որդի, ինչպէս խապար չես, որ գիշերը մօտն ես քնէ, ապրանքն էլ դու ես գողցէ։

Վազիրն ասաց. Թագաւոր, ես էտոր մօտը չեմ քնէ, հինգ հազար մանէթ տվեր եմ մէ պառաւի, ինձի դրեր է մէկ դուքծու մէջ, տարէ դրէ ախչկայ օթախը՝ ամէն մէկ բան էն դուքծու շուշու միջից տեսեր եմ, գըրեր եմ։

Թագաւոր օղորկեց Ըստամբոլու էն պառաւը բերեց, ասաց. Պառաւ, արի, դրուստն ասա՝ տենանք ինչղ ես էս մարդ տարէ Ալէքսանի քվոր կուշտ։

Պառաւն ասաց. Թագաւոր, հինգ հազար մանէթ փող եմ առէ, էտ մարդուն դրեր եմ դուքծին, տարեր եմ դրեր եմ էտ ախչկայ օթախ։

—Է՛ ասաց, վազիր, էս ջահիլ տղէն ինչ էր արէ քեզիկ, որ շատ արիր՝ ըստուր գլուխը պըտի զարկի։

Էտ վազիր լուաւ, էլ պատասխան էլ չտվեց։

Թագաւոր հրամայեց Ջալլատին, վազիրի գլուխ զարկին։

Դարձաւ դիբա պառաւ. Պառաւ, ասաց, դու քու փոզին ինչչի ծախեցիր փողի։ Դու որ սաղ ճնաս՝ շատ բաներ կանես։

Պառաւին էլ արեց կտոր կտոր, քցեց շներաց։

Թագաւորը յելաւ կայնաւ՝ Ալէքսանի քվոր ճակատը պաքեց, ասաց. Իմ հարս ուր ոտով էկեր ա իմ տուն։ Բերեց տղի հարսանիքը բռնեց, օղորկեց Ալէքսանի էլած կարողութենը բերեց, Ալէքսանին էլ դրեց ուրեն վազիր։ Էնոնք հասան ուրենց մուրազին, դուք էլ խասնիք ձեր մուրազին։

ՔԱՋԱՆՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԵՔԵԱԹԸ

(Թաֆարլու, Տիադինցիներ *)

Ժամանակով կըլնի մէ թագաւոր, կը վերցայ ուր վազիր, կերթայ ման գալու։ Կը տեսնայ օր կրակ ընկեր մէշէն կը վառի։ Մէկ օձ կայներ մէկ տեղ, լեզուն հանէր, հալվարմիշ կէնէր, թէ ինձի ազատէք։

Թագաւոր կասէ. Վազիր, արի էս անասուն ազատենք։

Ասաց. Ինչպէս ազատենք, թագաւոր, չէ ծր մենք էլ կեըիցենք։

Ասաց. Ին մէ քար դնենք տոպըրկի մէջ, մէկ շերիտ կապենք ղրպիցց, քցենք էրթայ ընկնի օձի կուշտ։ Թէ մտաւ մէջ՝ կազատենք, թէ չը մտաւ՝ ինչ էնենք։

Քար ղրին տոպըրկի մէջ, շերիտ կապին, քցին, քաշին, կրակից հանին դուս։

Օձն յիլաւ լիզու, ասաց. Թագաւոր, ինձի օր ազատիր, յուղա՝ տամ։

Ասաց. Օձ, ես քեզնից ինչ պիտի ուզեմ, չէ՞ օր ես թագաւոր եմ։

Ասաց. Դու յիսանի թագաւոր ես, ես Քաջանց թագաւորն եմ, ուզա՝ տամ։ Ասաց. Ունե՞ս քեզի տղայ։

Թագաւորն ասաց. Ունեմ յիրեք տղայ։

Ասաց. Իմ ախչիկ տվեցի քու տղէներուն, որի սրտէն որ կընցընի։ Ծօսք տվին, էղան խնամի։

Ասաց. Իմ տուն Մասիսի կողմն ա, գնա տղէդ ճամփայ գայ, աղչիկս տամ տանի։

Քաջանց թագաւորը դըբա Մասիս գնաց, իսանանց թագաւորը դըբա քաղաք գնաց։

Թագաւորին իրեք տղայ ունէր, յառաջի տղի մերը մեռած էր, յեսին կնկայ տղէներ կային։ Ղանչեց բերեց էն էրկու տղին,

---

Պատմեց *1912* թ. Յուլիսի *17*-ին Թաֆարլու գիւղում նոյն Բարսեղ Յարութիւնեանը։

ասեց. Որդիք, Քաջանց թագաւոր ուր աղջիկ ավէր ձեզի, որիդ սրտէն որ կընայի, գնացէք էն աղջիկ առէք բերէք։

Ասին. Չէ, թագաւոր, մենք չենք էթայ։

Ասաց. Չէ, մենք թագաւոր ենք, փրղար ենք (խօսք) ավէ, մեր խօսքը գետին չպիտի ընկնի, գացէք բերէք։

Ասաց. Օր կուզես օր քու խօսք գետին չընկնի, մեր մենծ ախալօրը ճամփայ, էրթայ բերի։

Թագաւոր դանչեց մէծ աղին բերեց, ասաց. Որդի ջան, գինաս ինչի համար եմ կանչէ։

Ասաց. Ինչի՞։

Ասաց. Պէտք ա էթաս Քաջանց թագաւորի աղչիկը առնես բերես։

Ասաց. Եփօր դու կը կամենաս, ես էլ կէթամ։

Բերին հեծցուցին ձին, բաւականին փող տվեցին խարչլըխի համար ու ճամփու դրին։

Գնաց դըբա Մասիսի կողմ, գնաց տեսաւ օր էրկու քաչք ճամփու վրէն կայնուկ։

Ասին. Թագաւորի տղայ, էսօր օխտ օր քու ճամփէն կը պահենք, ինչի՞ յետացար։

Ասաց. Քաջքեր, թագաւորութեն էր, անճախ իրաւունք յեղաւ, անճախ էլ էկայ։

Ընկան յառէջ քաջքեր, տարան Մասիսի կողմը, շուշաբանդ օթախի մէջ իջուցին։ Տղէն գնաց Քաջանց թագաւորի յառէջ գլոխ տուեց՝ կայնաւ։

Ասաց. Թագաւորի տղէն դու ես։

Ասաց. Հրամերես, ես իմ։

Ասաց. Իմ աղչիկ ավեցի քեզի, առ գնա։

Տղէն գնաց աղչկայ կուշտ, տեսաւ գարնան ծաղիկի պէս մի լուս աղչիկ։

—Ախչի՛, ըսաց, ես պըտի էթամ. դու պըտի գաս խըտ ընձի, թէ չէ։

Ասաց. Ի՞նչպէս չէ, եթէ էթալու ես, գնա հօրս մօտէն իրաւունք առ, արի էթանք։ Հէրս կը կամենայ քեզի մէ փէշքէս տայ, ըսա, թագաւոր, քու քալլէն սաղ ըլնի, ես փէշքաշը ինչ կանեմ։

Կասէ. Չէ, որդի, անկարելի ա, պիտի փէշքաշմ տանիս։ Ասաս. Թագաւոր, օր գուզես փէշքաշ տաս ընձի, քու Ղամր թայ տուր ընձի փէշքաշ։

Կասայ. Որդի, չէ՞որ իմ թագաւորութեն էն Ղամար թայի վրայ է, ինչպէս տամ։

Դու ասա. Թագաւոր, կը տաս էլ սաղ ըլիս. չես տայ էլ սաղ ըլիս։

Էն սըհաթին Ղամար թայի ջլովից կը բռնայ կը տայ քեզիկ-կառնիս ու կը դաս, կեթանք։

Օսահաթ տղէն գնաց թագաւորի կուշտ. ասաց. Թագաւոր, իրաւունք տու՝ ես էթամ։

Ասաց. Որդի, մէ խալաթ ուզա՝ տամ ու գնա։

Ասաց. Թագաւոր, քու ողջութեն կուզեմ, խալաթ չեմ ուզէ։

Ասաց. Անկարելի ա, պէտք ա ինձնից մէկ խալաթ տանիս։

Ասաց. Օր կուզես անպատճառ տաս՝ Ղամար թայդ տուր ընձիկ։

Ասաց. Իմ թագաւորութեն Ղամար թայի վրայ է, ինչպէս տամ։

Ասաց. Տաս էլ սաղ ըլիս, չը տաս էլ սաղ ըլիս։

Էն սըհաթին թագաւորը հրամայեց Ղամար թայը բերին, ջլովից բռնեց, տվեց տղին։

Տղէն առաւ էկաւ աղչկայ կուշտը, ասաց. Աղչի, դէ վեր էթանք։

Ասաց. Հալա կայնի, էթամ մէրս տեսնեմ, հալալամիշ էղնեմ, գամ էթանք։

Գնաց ախչիկը մօրը ըսաց. Նանի, քու փեսէն կերթայ, ինձի իրաւունք տու ես էթամ։

Ասաց. Ջունքի կերթայ, քեզի մէկ խալաթ ուզայ՝ տամ, գնա։

Ասաց. Ջունքի ինձի դուզես խալաթ տաս՝ էս պղինձ տուր ընձիկ։

Մէր վերուց պղինձը տվեց աղչկան։ Աղչիկն էկաւ թագաւորի տղի կուշտ, էն որ թագաւորի տղէն էր խեծաւ՝ Ղամար թայ, էն որ աղչիկն էր, խեծաւ թագաւորի տղի բերած ձին, քշեցին, գացին դըբա քաղաք։

Ալքալուս գացին թագաւորին, թէ թագաւոր, տղէտ էկաւ։

Թագաւորը էլաւ վերցրեց բազում ղօշուն, վազիրներու խետ, տղէներու խետ, գնաց յառէջ։ Հէնց որ տեսան, թագաւորի էրկու տղէն զարկին ձիաներու բերան՝ դարձան, ըսկի մէկ ուրախութեն ցոյց չտվին։ Էկան յիջան, թագաւորի մենծ տղէն, թագաւորի աղջիկ գացին տղի օթախի մէջ հանգստացան։ Էն էրկու տղէն էկան կայնան, թագաւորին գանգատ էրեցին, թէ թագաւոր, էտ տղի գլոխ կը կորցընես, էտ աղչիկ մեր էրկըսէն մէկին կը տաս, կըլնինք քեզի տղայ, թէ չես տայ, ահա մենք էրկուսս էլ կը գանենք կեթանք օտարութեն, էն տղէն թո մնայ, քեզի էղնի տղայ։

Ասաց. Ա՛յ որդիք, չէ՞ որ առաջ ձեզի ասացի, ինչի՞ չգացիք։ Ես ինքս չեմ կանայ էտպէս էնէ, կը յանձնեմ սինօդին։

Սինօդ մտածաւ, ասաց. Թագաւոր, մէկ տղայ ա, ճամփա մէ հանի վրայ թըզ գլուխ կորուսի, աղչիկ տու էրկուսից մէկին։

Մտածաւ թագաւորը, ասաց. Ես ուր ճամփեմ էտ տղին, օր էրթայ՝ ետ չգայ։ Կանչեց տղին, առան էկան, ասաց. Որդի, գիտե՞ս ինչ կայ, էն վախտ օր քու մէր մեռաւ, իմ խաղինէն պահեր ա, ես տեղ չեմ գինայ, գնա՛ քու մօր մօտէն, էն հանդէն, խաղնի տեղ հարցու՝ արի ինձի ասա՛։

Տղէն շիվարաւ, գնաց Քաջանց աղչկայ կուշտ։

Ասաց. Ի՞նչ կը մտածես։

Ասաց. Ի՞նչ անեմ, կասայ՝ գնա էն հանդէն, քո մօր մօտէն իմ խաղնի տեղ հարցու, արի ինձի ասա։

Ասաց. Մի վախեցի, քաշի դուս. Ղամար Թայ, հեծի։

Քաշեց դուս, հեծաւ, իրեք օր քշեց՝ հասաւ Սիպտակ ծովի ղրաղ։

Ձին ասաց. Ընձի կը քցեմ ծով, քեղի պինտ պահա։

Ասաց Քցա։

Ու քցեց ծով ձին ուրան, գնաց ծովի մէջ տեղէն մէ կանանչ բախչա կար, դուս յելաւ։ Ըսաց. Հէ՛նա, քու մէր ծառի տակ նստուկ ա, գնա խաղնէն հարցու, դարձ, արի։

Տղէն գնաց։ Մէրն ըսաց. Տղայ, դու էս տեղրանք։

Ասեց. Նանէ, իմ խօր խաղնի տեղ կասես, օր էրթամ ասիմ։

Ասաց. Քօ հօր աչք քոռնայ, մինթէ ես խաղնի տեղ գինամ, քու հէր չի գինայ։

Ասաց. Գնա ասա, թէ մեր վերին Բալախանէն մէկ մառմառ սուն կայ, էն մառմառ սան տակ մէ մառմառ քար կայ, էն մառմառ քարի տակ մեր խաղնէն ա։

Էն սրհաթին տղէն խեծաւ Ղամար Թայ, դարձաւ։ Էկաւ, գնաց ուրա օթախը յիջաւ, գնաց Թագաւորի յառէջը կայնաւ։

Ըսաց. Թագաւոր, գնացի էկայ։

Ասաց. Մէրդ ինչ ասաց, օր գացիը էկար։

Ասաց. Մեր վերին Բալախանէն մի մարմար սուն կայ, էն մարմար սան տակ մէ մարմար քար կայ, էն մարմար քարի տակ մեր խաղինէն ա։

—Գնա, ասաց, որդի, գնա՛, իրաւ որ գնացիր, էկար։

Էն էրկու տղէն էկան ասին Թագաւորին, թէ էտ չեղաւ, էնպէս տեղ ճամփա, օր էրթայ, չգայ։

Թագաւորը մտածաւ, ասաց տղին թէ կասին աշխարքի մէջ անմահական խնձոր կա, գնա՛ էն խնձորից բէ ընձի։

Գնաց Ղամար Թայը նստաւ, ու քշեց տղէն։ Մէ իրեք օր օր գնաց ճամփախի խետ, տեսաւ օր մէ հալիվոր մարդ կայնուկ է էտտեղ։

Ասեց. Բարև ըխտիար։

Ասեց. Աստու բարին։

Տեսաւ օր ըտուց իրեք ճամբաէ կը բաժնվի. ասաց. Էս ինչ ճամբա է կը բաժնըվի։

Ասաց. Որդի, էս ճամբաէ էթացող կըգայ, էս ճամփէն էրթըցող ետ գայ՝ ետ չը գայ, էս ճամբաէ էրթըցող անա իրեք հարիր տարիս թըմըմիը ա, հալա էս ճամբաէ էրթըցողը ետ չէ էկէ։

Էտ ճամբէսով տղէն քշեց գնաց։ Մէ պողպըտէ բաղանի ռաստ էկաւ։ Ձին յելաւ լեզու, ասաց. Ինձի թող ըստեղ, գնա արևելաց դեխէն մէ ջուր կերթայ էտ բաղանի մէջ, քեզի քըցէ էն ջուր, ջուր կը տանի քեզ բաղանի մէջ։

Ու գնաց տղէն ուրին քցեց ջրի մէջ, գնաց էտ բաղանի մէջ, տեսաւ դրախտական բաղ էր, չոլից, չոփից ժողվեց վրին, տալ կեցաւ, տեսաւ օր իրեք հատ հուրի էկան, յիջան բախչէն, շորեր ուրանց խանեցին, մտան հաւուզ լողկըցան, յելան, հաքնելու վախտ, էրկուս հագան, մէկ ինաց տկլոզ։

Ասաց. Խողածին, դուս արի, մեր քրոջ շապիկ տուր, քու մաուլի (սրտի) մուրազը կատարենք։

Էն սըհաթին տղէն յելաւ, կայնաւ յառաջները, ասաց. Էրկու հատ անմահական խնձոր բերէք, ձեր քրոջ շապիկ տամ, թէ չէ իրեք հարիր տարի ինաք, չեմ իտայ։

Էրկու հուրին ծափ տվին՝ Թռան։ Հըլը սըհաթ չէր Թըմըմէ, առան էրկու հատ անմահական խնձոր, էկան։

—Ա՛ռ քու խնձորներ. ասին, մեր քրոջ շապիկ տուր։

Խնձորներ առաւ, քցեց ջէր, քրոջ թևից բըռնեց ու քաշեց։

Ասին. Խողածին, ռուր կը տանիս մեր քուրը, տուր յէ։

Ասաց. Զըմ դինա, աշխարք չէք տեսէ, էս Թաւուր սիրուն, գանակլու աղչիկ էլ ձեռքից բաց կը Թողուն։ Քաշեց ջրի ծակից հանեց դուս։

Աղչիկ ասաց քուրվըտաց. Զունքի էս տղէն ինձի կը տանի, էտ պղինձ տվէք ինձի։

Պղինձը տվին։ Տղէն աղչկայ ձեռքից բռնեց, տարաւ Ղամար Թայի կուշտ, խեծաւ, աղչիկը քաշեց Թարկ, ու քշեց գնաց։ Էկաւ հասաւ հալիվորին։

Ասաց. Բարև, հալիվոր։

Ասաց. Աստու բարի, դու էկաիր։

Ասաց. Էկա։

Ասաց. Հալիվոր, դու ինչ բան ունիս ըստեղ կայնուկ։

Ասաց. Ես ըստեղ կայնուկ եմ, որ քեզի պէս ղոչաղ տղայ էթայ, մէկ անմահական խնձոր բերա, տայ՝ ես ուտեմ ջահելնամ։

Տղէն ձեռ կոխեց ջեպ, հանեց մէ անմահական խնձոր, տվեց հալիվորին։ Հալիվոր կերաւ, եղաւ տասնըհինգ տարեկան, գնաց։

Տղէն ձին քշեց, էկաւ ուրա քաղաքն իջաւ։ Տարաւ խնձոր տվեց թագաւորին, թագաւորը կերաւ, էղաւ տանըհինգ տարեկան ջահիլ։ Տղէն դարձաւ գնաց ուրան օթախ, հուրուն դրեց Քաջանց աղջկայ քով։ Քաջանց աղչիկ մէ լիտր ալուր ուզեց, հուրին մէ լիտր բրինձ ուզեց, էն որ ալուրն էր՝ շաղեցին Քաջանց թագաւորի աղչկայ բերած տաշտի մէջ, էն որ բրինձն էր՝ քցեցին հուրու բերած դազանի մէջ, ասին. Գնա քու հօր դիվանխանէն, ինչքան մախլուխ կայ, համեցէք էրա, բէ դոնախ։

Գնաց համեցէք էրաց, առաւ ու էկաւ։ Գալողը նստաւ, ջերկալամիշ էղաւ, գնաց չուր Զազի դուզ (Երևանի մօտ), բայց որ էն թագաւոր, վազիրներ, եղբայրներ ին, նստան տաշտի կուշտ։

Ըսկսեցին խաց քցել, ինչքան օր քըցին՝ տաշտ չպակսաւ, ինչքան օր կերակուր լըցին, պղինձ չպակսաւ։ Բոլոր ըռեաթ խաց կու տայ, թագաւորն ու վազիր, ուրա էրկու տղէն սէհր կենին։ Հուրին հասաւ ծովի ղրաղ, ծամերը թաթխեց ջուր, քառասուն քալ էկան։

Ասաց. Քուր, ինչ նեղուբեան մէջ ես։

Ասաց. Մէկ մէկ ջաւահիր, անգին քար բերէք, էսա ծովի մէջ տեղ ինձի մէկ քոշկ սարահ շինէք անգին քարից։ Էն սրհաթին բերին ու շինին։ Հուրին դարձաւ դըբա բազմութեին, ասաց. Թագաւոր, ինչի հաց չէք ուտեր, ինչ սէհր ա կէնէք։

Ասաց. Սէհրի բան ա, օր սէհր էնինք։ Մէ լիտր հաց ահագին բազմութեին կուտայ, հալա տաշտ լիքն ա, մէ պղինձ կերակուր էսա էսքան մարդ կուտին, հըլա լիքն ա։

Ասեց. Խնդրեմ, յելէք Սիպտակ ծովի վրէն։ Վազիրներ, թագաւոր, իրեն էրկու տղէն յէլան գնացին. միւսներ մնացին հաց ուտելու։

Հուրին ծամեր թաթխեց ծով, թագաւոր, վազիրներ, տղէք մտան խոշք սարի մէջ, քառասուն քուր էկան. ասին. Քուր, ինչ մտքի էս։

Ասեց. Անմէնքդ ձեր բերած քար վերցէք։ Որ վերցեցին, բոլորը յիջան մէջ ջրին. խեղդան։ Դարձաւ թագաւորի տղէն դրա ժողովուրդ, բերեցին օխտը օր հարսանիք էրեցին, դոհլով, գուռնով, թօփով, չապախանով տարան պսակեցին Քաջանց թագաւորի աղչկայ վրայ, հուրին էլ մնաց ընտոց քով։ Բերին թագաւորի թագ դրին գլոխ, շինեցին թագաւոր։ Ուրանք հասան ուրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։

Երկնուց իրեք խնձոր իջաւ, մէկ ըսողին, էրկուսը լսողին։

ՄԻՍԱՔ.

(Թաֆարյու, Տիադինցիներ*)

Մէ թագաւորի տղայ կէղնի, անունը Միսաք, շատ ուժընդեղ տղայ կըլնի։ Օթախի մէջ կը պահպանեն, օրը մէ ձեռք հաւլաւ կը հագցնեն, ուրա ուժից կը պատըռվի։ Միտք էրիցին թագաւոր, ուրա վազիրու խետ, թէ տղէն խանենք էթա պտըռվելու, բալքի քիչմ հանդարտվի։ Խանեցին դուս տղին, տարան բազմութեան մէջ, որ գուզէին յեղնին թագաւորի տղի յառէջ կայնին, ձեռք կը դնէր թևերուն թէ,—նստէք, մի կայնէք, ձեռաց տակ օսկոններ կը ջարդեր։ Մտածին թէ էտպէս չէլաւ, խանինք մէ առ ժամանակ էթա պըտըռվելու, բալքի քիչմ հանդարտի։

Թագաւոր ասաց տղին,—թէ պըտի էթաս մէ ժամանակ պըտըռես, հանդարտես։

Ասաց. Թագաւոր, չունքի ընձի կը ճամփես, ինձի մէ գիւղ տուր՝ քառասուն փութ պողպըտից։ Էն սըհաթին թագաւորը շինեց ու տուեց։ Ձին խէծաւ, գիւղ դրեց թևին, ու գնաց։ Գնաց տեսաւ օր մէ փահլըվան մարդ, գիւղ վըր թևին, վըռաղ գուգէր։

Ասեց. Բարով քըզի, փահլըվան։

Ասաց. Աստու բարին։

Ասաց. Յուր կէթաս։

Ասաց. կէթամ էս քաղաք, էս թագաւորին մէ Միսաք տղայ ա դուս էկէ, փորձվիմ, տեսնամ ինչ ղվաթի տէր է։

Ասաց. Չունքի օր էկէր ես, էկէ էստեղ քիչմը դինջընանք, հաց ուտենք, յելի գնա։

Միսաք ասաց. Բռնէ յիմ գիւղ, ես էլ յիջնեմ։

Գուրզ օր պարզեց, գուրզից բռնեց, գուրզ գնաց դիպաւ էտու տոներ, ոտի մատ կոտրեց։

—Վայ, ասեց, քու տունը աւիրի, ոտիս մատը կոտրաւ։

Ասաց. Ես իմ գիւղ տվի քեզի, չը կրցար բըռնիր, որ մատ կոտրվաւ, ես էն Միսաք տղէն իմ, հըպը որ ես եռսի հետ զարկի, ինչպէս տէր դայախ տէր։

---

*Պատմեց 1912 թ. Յուլիսի 17-ին Թաֆարյու գիւղում նոյն Բարսեղ Յարութիւնեանը։

Ասաց. Մեղայ Աստու, դու իմ ջոչ ախպէր, ես քու պզտի ախպէր, դոր էրթաս՝ քու խետ կիգամ ես։

Յելան խեծան, էղան էրկու ախպէր գացին։ Գացին տեսան ճամփի կիսուն մէ փահլըվան էկաւ։

Ասաց. Դհոր կէրթաս։

Ասաց. Ըստեղ մէ Միսաք անունով տղայ է դուս էկէ թագաւորին, կէթամ փորձըվելու։

Ասաց. Յիջնենք, հանգստանանք, նոր գնա։

Ասաց. Ա՛ռ իմ գիւրզ, իջնեմ ձիուց։

Գուդզ օր բռնեց, չը կրցաւ յաղթել. ընկաւ ոտի մատի վրայ, մատը կոտրեց։

Ըսաց. Ես էն Միսաք տղէն էմ, օր իմ գուդզ չը կրցար բռնիր, հապա որ թափով գանի՝ իմաձլ պըտի տայախ տէր։

Ասաց. Ես մեղայ Աստու, դու իմ ջոչ ախպէր, ես քու պզտիկ ախպէր, դոր էրթաս՝ ընկերդ իմ։

Յելան հեծան ձիերը, քշեցին։ Գացին մէ կուվու ռաստ էկան։ Տեսան օր էրկու ախպէր մէ հան ա կայնուկ, եքա մէ բազմութիւն էլ մէ հան ա կայնուկ։

Ասաց. Տղէք, մենք կուվի ռաստ էկանք, էն շատի հան ընցնինք, թէ քիչ հան։

Ասին. Շատ հան էթանք։

Ասեց. Չելաւ, էթանք էն քիչ հան։

Քշեցին գացին էն էրկու մարդու կուշտ կայնան։

Ասաց. Բարև ձեզ, տղերք։

Ասաց. Աստու բարին էկար։

Ասաց. Ի՞նչ կուիւ ա կէնէք։

Ասաց. Մեզի մէ քուր ունենք, ըստոնք կուզին օր զօռով մեր քուր տանին, չենք իտայ, կայներ ենք խետները կուիւ կէնինք։

Միսաք տղէն ասաց. Դուք կայնէք ղրաղ, մէ սըհաթ կուիւ տվէք ընձի։

Քառասուն փութ պողպատի գիւրզ բռնեց ձեռ, յընկաւ մէջը ջըվներ, յէմալ չարդեց, որ ճղտոց հանեց, մէկ խաբըրբեր չը պըրծաւ։ Դարձաւ էկաւ իրա տեղը իջաւ։

Ասաց. Ախպէր, ասաց, որ դու էտ զոչախ տղէն իր, էտ զօչաղութեն օր արիր, մեր քուր տվեցինք քեզի։

Ասաց. Տվի՛ք.

Ասացին. Տվեցինք, յիրեք անգամ հալալ ու խոշ ընինք քեզի։

Ասաց. Օր դու տվիք ընձի, ես էլ տվի էս ախպօրս։

Յելան հեծան, գացին էտ ախչկայ քօշկ սարէն, յիջան։ Ախ-

չիկ բերից տվեց ախպօր. էնպէս մի ախչիկ էր, օր արեգական կասէր, դու դուս մի եկնի, ես կելնիմ: Ճրագի պէս լուս կիտէր. որ ջուր կը խմէր՝ գունդ գունդ բողազից կերևէր:

Պատկից ախպօր վրայ, կէս գիշեր որ էլաւ թէ չէ, ըսաց. Ախպէր, մեր ձիանք քաշէ, մենք էթանք:

Էն որ պատկվողն էր՝ ճնաց ըսի, էն էրկուս դուս էլան էթալու խամար:

Ասաց. Ախպէր, ճնաս բարին, մենք գացինք: Թէ գուզես մեր ահվալաթ (խորհուրդ) իմանաս, էս աստղ կը տեսնէս, քանի որ էս աստղը պայծառ ա, մենք ուրախ ուրախ կը պըտըտինք, եվ օր էս աստղը խաւրաւ՝ մենք նեղութեան մէջ ենք, գուզես արի մեր հավարին, գուզես մի գայ մեր հավարին:

Զարկին ու գացին էս մարդիկը: Գացին տեսան օր մէ պատերազմունք էլ կար: Էրկու մարդ մէ կողմ, հարիր մարդ մէ կողմ կայնած կը կռվէին:

Միսաք ասեց. Ո՞ր կողմն անցնինք:

Ասեց. Ընցինք քչի կողմը: Բշեցին գացին էն էրկու մարդի կուշտ ըսին. Բարև ձեզ, տղերք:

Ասաց. Աստու բարին էկար:

Ասաց. Ի՞նչ կռիւ ա:

Ասաց. Մեզ մի քուր ունինք, էս մարդիկը կուզին զօռագին տանին, կայներ ենք յատէչ, չենք թողէ:

Ասաց. Մէ սահաթմ կռիւը տաք ընձի:

Ըսին. Բեզի:

Հեծաւ ձին, գիւրզ բռնեց ձեռ, յընկաւ միջևները, սկսեց ջարդել, ըսկի խապրբեր չը պրծաւ մօտվըներուց:

Ասաց. Ախպէր, չունքի դու էտ զոչաղ տղան իր, մեր քուր տվեցինք քեզիկ:

Ասաց. Տվի՞ք.

Ասաց. Տվինք: Իրեք անգամ իրդար առաւ:

Ասաց. Օր տվիք ընձի, ես էլ տվի էս ախպօրս:

Նեձան, միասին քշեցին, ախչկայ քօշկ սարի դուռը չիջան: Տեսան էնպէս մէ ախչիկ ա, օր չուտես չը խմես, էտուր մահճամալին թամաշա էնես:

Բերեցին պատկեցին. գնաց յելաւ կէս գիշեր, ըսաց. Ախպէր, իմ ձին քաշա դուս՝ ես էթամ:

Ձին քաշեցին դուս:

Ասաց. Ախպէր, ճնաս բարի, ես կօ գնացի: Կուզես որ իմ լաւութիւն յիմանաս՝ քանի որ էս աստղ կերևայ, դինջ, խախանդ կը պըտըտիմ, եվ օր էս աստղ խաւրաւ, իմաց կաց, օր նեղու-

թեան մէջ իմ։ Գուգաս իմ հաւարին՝ դու քու բախտ, չես գայ իմ հաւարին՝ դու քու բախտ։

Զարկեց գնաց։ Գնաց որ մէ անծանօթ քաղաք, տեսաւ որ էս քաղաք շէն ա, մարդ, մալաթ չկայ մէջին։ Որ քուչէն որ գնաց, դիւքաններ լիք, ամէն բան բոլ, արի որ իսան չկայ մէջը։ Տեսաւ օր քաղքի վերին գլոխ մէկ պողպըտէ բաղան կար, որ էտ պողպըտէ բաղանի միջէն մէ ծուխ դուս կիգէր։ Զին խաղցուց, եւսոտաւ, գնաց, էկաւ, մէ դիւրդ զարկեց էտ պողպըտէ բաղանին, որ բլաւ, մտաւ մէջ, տեսաւ որ մէ հուրի կայ մէջ, հուրի տունը քանդըվի, ինչպէս մէ հուրի էր, արեգական կըսէր, դուս մ'ելնի, ես կելնեմ. ճրագի պէս փայլ կուտէր, կը նմանէր մէկ աւուր ձուն (ձիւն), որ Ալագազայ գլոխ մառմառ քարերու վրայ կը թափի։ Նա թոզ ա տեսայ, նա Թորփաղ (հող)։ Դու մի ասէ թէ էտ հուրին կարմիր դէվի կնիկն ա, որ էս քաղաքի աւիրածն կարմիր դէվն ա։

Հաւրին ասաց. Է՛յ, հողածին, դուշն ուր թևով, օձն ուր պորտով. էսի կարմիր դէվի օթեվան ա, չէր էկէ, դու ինչպէս էկար։

Ասաց. Բեղնից վախեցող, կարմիր դէվի մօտից վախեցող էատերանք չէր իգէ, ես որ էկայ, հալբատ ես էլ մէ մարդ եմ։

Հըլը դեռ կը խօսին, տեսաւ օր կարմիր դէվն էկաւ, բաղանը մէ հան բլած էր, մտաւ նէրս, տեսաւ որ մէ խողածին կայնած։

Ասաց. Կնիկ, էսօր մեր շէնլըկի միջէն յիսանի հոտ կուգայ։

Տեսաւ օր հա տղէն կշտին կայնած։

Սկսեցին դէվն ու տղէն կռիւ էնել, էնքան կռվեցին, օր դէվին կտոր կտոր էրաւ։ Բերեցին քըցին աբըշումէ եօղան դէօշակ, Ծորասանայ քէչէք, կուշտուկի բարձեր, դրկըվան իրարու, պառկան մէջ։ Ա՛ռ շաւթալի, վեր շաւթալի, չիգիտըն դիւշմանն գեօղընա դաքսըն. (Ա՛ռ դեղձ, տուր դեղձ, կուտը թշնամու աչքին դիպչի)։

Մէկ թագաւորիմ լաւ, օր մէ ղօչախ տղէմ էկէ դէվին ըսպաներ ա, կնիկը զաւթէ, նստեր ա։ Բերեց մէ սէհրբազ պառաւ գտաւ՝ ասաց. Պառաւ, թէ որ սէհրով կըլնի, թէ որ դաք ու դողապով կըլնի՝ կարմիր դէվի կնիկ բերես խասուս ընձի, դիւնեաչի մալ դովլաթ օր ուզես, կը տամ։

Պառաւն առաւ մէ ձըձում, գնաց ծովի ղրաղ, խեծաւ ձըձում, լողաց ընցաւ էն դէհի ղրաղ։

Ձըձում պահեց աւազի մէջ ու գնաց կարմիր դէվի կնկայ կուշտ։

Ասաց. Որ ընձի պահես, ես քեզի ծառայութեն կենիմ, չուր մանս։ Օխտը օր պախեց, օրէն մէ սէհր զարկեց, ըսկի կապէկիմ պէտք չէկաւ։

Ասաց կարմիր դեվի կնկան. Էս քու մարդը ինչով կը յաղթվի, ինչի՞ քեզի չի սիրէ, մէ հարցու իմացի։—Հարցուց մօտէն։

Ասաց. Ինձի մսէ թուր կա, քանի որ իմ թուր տեղէն դուս չէ էկէ, ես կենդանի եմ, չեմ յաղթըվի, եիօր տեղէն դուս էկաւ, կը մեռնիմ։

Սէհրբաղ պառաւը լսեց. գիշերվայ մէ վախտ յելաւ գնաց թուրը քաշեց տեղէն, տարաւ քցեց ծով։ Միսաք, յէսօր ես մեռէ, թէ տաս տարի յառաջ։

Լուս բացուելուն պէտտ, որ քնոց յելան, տեսաւ Միսաք տղէն քնուց չելնի։

Պառաւն ասաց. Գնա մարդիտ հան՝ գայ։ Գնաց տեսաւ լինչ, մարդ մեռած։ Սէհրբրբաղն էկաւ, ձեռք թալէց, կարմիր դեվու կնկան մազերէն բռնեց, քաշեց տարաւ դըբա ծով։ Տարաւ կոխեց ձըձմի մէջ, խեծաւ ձըձուս, քցեց ծովի յերես, դուս էլաւ էն դեհէն։

Ասաց. Աչքալուսենք տարէք թագաւորին, թէ պառաւ բերեց կարմիր դեվու կնիկ։

Ծովուց խանեցին դուս, տեսան էս կարմիր դեվու կնիկ էնպէս մէ ծուռ ա, որ դու պրծար։ Խստեղ մտածին թէ ծովու վրէն էկեր է, չարքեր զարկած ծռեր է։ Տանենք դնենք մէ օթախի մէջ, մէկ թուղթ էնող գանենք, մէ թուղթ էնինք, խելօքնայ, տանք թագաւորին։ Դրին օթախի մէջ։

Մենք խապար տանք էն առաջի ախպօր մօտէն։

Ախպօր կնիկն ասաց. Մարդ, էն վախտն օր քու ախպէրը գնալու էղաւ, քեզի խանեց դուրս, լինչ ասաւ քեզի։

Ասաւ. Ասող տվեց լինձի նշանց, ասաց. Քանի էս աստղ որ պայծառ ա, ես լաւ եմ աշխարքի մէջ, եվ որ էս աստղ խաւրաւ էն վախտը նեղութեան մէջ եմ, դուգաս էլ դու գինաս, չես գայ էլ դու գինաս։

Կընիկն ասաց. Դէ ել, իշկա, տես աստղ պայծառ ա, թէ խաւար։

Յելաւ իշկաց, տեսաւ օր, աստղ խաւար էր, էկաւ ասաց. Աստղ խաւար ա։

Ասաց. Դէհ, հեծի, մի կայնա։—Խեծաւ ու գնաց։ Գնաց տեսաւ, որ մէկել ախպէրն է էտտեղ պսակվածե։

Ասաց. Մեր ախպօր աստղ խաւար ա, ել էթանք տեսնենք լինչ հալի մէջն է։ Յելան գացին։

Գացին ճամփէն, մտածեցին, թէ մենք որ կողմը էթանք, որ գտնինք։

Մէկել ախպէրն ասաց. Ես ռամդար եմ, կեցի ռամ քցիմ։ Ռամ քցեց, տեսաւ կարմիր դեվի քաղաքի մէջ ա։

Փշեցին հասան ախպօրը, տեսան օր մսէ թուրը տեղ չէը, ախպէր մեռած ընկած էր։

Ասաց. Մեր ախպօր թուր հանած տարած է, մեր ախպէր մեռած է, իրնչպէս ազատինք։

Ոամդար ոամ քցեց, գնաց ծովի վրայ կայնաւ։

Ասաց. Դէհ դու ղրաղ կայնի, ես լողվոր եմ, մտեմ հանիմ։ Մտաւ ծովը, սըկաւ, հանեց։ Հանեց, վերցին թուր տարան զանին տեղ. ախպէրը աչքերը բացաւ, տեսաւ որ ախպրները կշտին են։

Ասաց. Էս իրնչ ա էկէ իմ գլխուն։

Ասին. Քու թուր թալած ին ծով, քու կնիկ տարած։

Ասաց. Ո՞ւր ին տարած։

Ոամդար ոամ ցկեց, ասաց. Տարած ին ֆիլան քաղաքը մէ օթախի մէջ ղրած, յելէ մէ ծուռ, ծռութին կէնէ։

Իրեքն էլ հեծան ձիանքն ու քշեցին։ Փշեցին էկան խասան էտ քաղաք։ Էկան յառէջ թէ դուք իրնչ մարդ էք։

Ասին. Մենք թուղթ էնող ենք, որ ծուռ ընի՝ կը լաւացունք։

Ասին. Մեր թագաւորին մէ ախչիկ ենք բերէ, ծուռ է, կանաք լաւըցուք, ինչ որ ուզէք՝ կըտայ։

Ասին. Լաւ։

Գնացին դըբա ախչկայ օթախը։ Ախչիկը էն սահաթ ճանչըցաւ օր Միսաք տղէն էր էկաւ. ծռութինը թարկ էրեց։

Ասաց. Թագաւոր, պատրաստութին տես, էզուց էթանք ժամ պսակվինք։

Գացին պատրաստութին տեսնալու, Միսաք զարկեց օթախի դուռը ջարդեց. ախչիկ հանեց դուս, քաշեց թարք, ախպրտանց խետ ընկաւ քաղքի մէջ, զարկեց թագաւորին ըսպանեց, ռաստ գալոդին գետին գլորեց, քշեց գնաց։

Գնաց էն ախպօր տուն ղօնախ էղաւ, մէկէլ օր գացին մէկէլ ախպօր տուն ղօնախ էղան, վերջը վերցուց ուր կնիկ ու գնաց ուր վաթան։

Ետպար գնաց թագաւորին, թէ—աչքդ լուս, թագաւոր, Միսաք տղէտ էկաւ, մէ հուրի էլ խետ։ Թագաւորն էլաւ ղըհոլով, զուռնով, սազով, սովրաթով, թօփով, չապախանով, վազիրով, վաքիլով, խանով, բակով առաւ տղէն ու գնաց։ Գնաց, օխտն օր, գիշեր ցերեկ հարսանիք էրեց, ղրեց թախթ, իրա թագ ղրեց գլոխ, շինեց թագաւոր։

Իրանք հասան ուրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։ Երկնուց իրեք խընձոր իջաւ, մէկը ըսողին, էրկուանն էլ լսողին։

ԲԱՀՐԱՄ ԱՂԲԻՆ ՈՒ ՂԱՂԱՆ։

(Թաթարոս, Տիադինցիներ)

Ժամանակով մէ թագաւորի տղայ կար, որ մօրից ծնաւ, տարան դրեցին չօկ օթախի մէջ՝ նէա լուս տեսնի, նէա մարդ տեսնի, մուէթ օթախի մէջ մնծացաւ։ Էտ տղին մէ պահպան ավին, անունը Ղալա էր, տղէն մնծացաւ օթախի մէջ, չուր էղաւ 7-8 տարեկան, էն վախտն օր Ղալէն հաց տարաւ տղին, մէ կտոր օսկոռ մացեր էր հացի տակ, Ղալէն չէր տեսէ։ Ղալէն որ խաց դրեց դուս, յէլաւ գնաց. թագաւորի տղի անուն Բահրամ-աղա էր։ Մաց ուտելու վախտ էտ օսկոռ դուս էկաւ հացի տակից, օսկոռ օր վերցըրեց, չը գիտցաւ թէ ինչ բան էր, չէր տեսէ, քցեց՝ գիպաւ փանջարան, փանջարէն կոտրաւ, շողքն ընկաւ օթախի մէջ. Բահրամ-աղան յիմացաւ թէ ուրիշ բան էր, թևեր քըշտեց, հասաւ շողքին յաղթելու։ Գիւլաշ մտնելով արիւն քրտինք մտաւ, մէկէլ Ղալէն ներս մտաւ, էնքան ա չալէշ էկէ Բահրամ-աղէն էտ շողքի հետ, օր Ջանից յելեր է։

Ասաց. Բահրամ-աղա, էտ ինչ հալի ես ընկէ։

Ասաց. Ղալա, էս ինչ բան ա, օր ես կը տրորեմ, չեմ կանայ խետ իլլաճ գտնի։

Ղալէն ասեց. Էս արեգական շողք ա. դու թագաւորի տղայ ես, աշխարհ կայ, արեգակ կայ, դիւքան բազար կայ, ձի խեծնել կայ, ջերինթ խաղալ կայ։

Ասաց. Էտոնք օր կայ, հապա ես տուտուզ եմ, թագաւորը դրեր է ինձի էտէ։ Ասաց. Կը խընդրեմ թագաւորին յայտնաս, ինձի դուս խանաս, տեսնեմ աշխար ինչ ջուրայ բան ա. պըտի դուս խաննես։

Թագաւորը թալալին բռռալ ավեց, օր չարսուն խալահի

Պատմեց *1912* թ. Յուլիսի *17*-ին Թաթարոս գիւղում Բարսեղ Յարութիւնեան հօրաքաղաքացի աշգրագիս Ներսիսին, որի ծնողները եկած են եղել Տիադինի Բոմու դիւղից։ Այժմ յանախ հիւիանք է ասում։

պատրաստեն։ Եվ որ պատրաստեցին, վարդով, ծաղիկով, մարգարտով զարդարեցին, դհոլով, զուռնով, սահթաթով, թագաւորով, վազիրով, վաքիլով աղէն տարան դէպ բազար։ Հսկի մէկ բանի ուշք չը դրեց Բահրամ աղէն, օր կայներ սէյր աներ, մէկ էլ տեսաւ, օր մէկ դավրուշ մէկ տղի ձեռից բռնէ կայնէ. ձեռ քցեց էն տղի ձեռէն բռնեց, կայնաւ կշտին։ Օխտն գիշեր ցերեկ կայնաւ դավրուշի տղի կուշտ։ Խապար տարան թագաւորին, թէ ինչ կէնէս, էսօր օխտն օր տղէն մէ դավրուշի տղի թևից բռնէր, կայնէր է, նէ՛ գուգայ, նէ՛ կերթայ։

Ասաց. Մէ տեսէք՝ էն դավրուշ էն տղէն փողով չը ծախայ, առնեմ էնեմ իմ տղին ախպէր։

Դաւրէշին ասին. Տղէդ փողով չե՞ս ծախայ։

Ասեց. Կը ծախեմ։

Թագաւոր ասեց. Քու տղի կշռով մէկ ոսկի կիտամ, քու տղէդ տուր, իմ տղին ախպէր ընէի։ Եաոյ որ առան, էրկու տղէն իրար ձեռքից բռնեցին, Բահրամ աղէն ու Լալէն, Լալա էր տղի անունն էլ։

Թագաւոր ասեց. Տարէք համամ լողկընալու համար։ Մտան որ լողկըցան, թագաւորը հրամայեց Թարղուն, թէ էրկսին մէ կտոր, մէ չէշիդ շոր կը կարես, կը հագցնես, անմենքին մէկ ձեռք։ Թարղին իսկոյն կարեց, հագցրեց համամի մէջ. էն վախտն օր համամից դուս էկան՝ էնքան մտածեցին ժողովուրդը, չը կարացան իմանալ, թէ դավրէշի տղէն ո՞րն էր, թագաւորի տղէն որն, չիւնքի էրկուսը մէկ բոյի ին, մէկ քիսպաթի ին։ Տարան դրեցին Բահրամ աղի օթախի մէջ. սկսեցին մի առ ժամանակ պահպանել։ Յետոյ Լալէն ասաց, թէ Բահրամ աղա, մենք առանց փեշակի չենք կարայ ապրի ըստէ, մէկ փեշակ սովրենք, ապրենք։ Բերին անմէնքին մէկ մէկ թուր, մէկ մէկ զալխան շինել տվին, հաց դրվաւ, հաց կուտին, ու կը վերցուն թուր ու զալխան իրար խեթ թուր ու զալխան կը քըցին։ Էնպէս վարժվան, որ էրկնուց կարկուտ թափէր, մէ կարկուտ ընտռնց չէր դիպնի, էն զալխընով դէմ կառնին։ Եաոյ խնդրվան թագաւորի մօտէն, թէ մեղի խան էթանք ման գալու։ Թողեց, գնացին յելան սարի գլոխ ման գալու, դու մի ասէ՝ սարի մէ կողմն էլ ծով ա, Բահրամ աղան, ասեց Լալային.

—Էս ի՞նչ ա։

Ասեց. Ծով ա։

Ասաց. Օր ծով ա, էս ի՞նչ ա էրեսից կուգայ։

Ասաց. Գեամի ա։

—Որ, ասաց՝ գեամի ա, սէյրան էնտեղից ա, էթանք մոնինք

գեամին, սէյր էնենք։ Գնացին ղըբա գեամին, դանչեցին գեամըչուն, թէ գեամըչի, ինչ տանք քըզի, օր գեամին յանձնես մեզի, մէկ սըհաթ էրթանք սէյր էնինք գանք։

Ասաց. Տասը մանէթ. տաս մանէթ տվէք, մտէք գեամին, գնացէք։

Տվին տասը մանէթ, մտան գեամին։ Գացին չուր ծովի կէս տեղ, մէկ կրակ բոցոլհող քամի յելաւ, դէրկ գեամին ցրվեց իրա-րուց, ամէն մացին մէ տախտակի վրայ. Լալէն ու Բահրամ աղէն իրար ձեռքից բռնին, ու գացին ղըբա ծով։ Օխտն օր, դիշեր ցե-րեկ գացին, հաոյ Բահրամ աղան ասաց.

—Լալա, արի իրար ձեռք թողնենք, չելնի էրկուս էլ ջնաս-վինք ծովի մէջ, ու իրար ձեռք թողեցին։

Ասաց Բահրամ աղէն. Լալա, ես օր էս ծովից դուս էկայ, ես ըսկի իսանի խետ ուրախութեն չենեմ, չուր քեզի գտնեմ, իմ ուրախութեն քեզնով ըլնի։ Թողեցին իրար ձեռք, դիշեր տվուց վրէներ, մութ պատեց, Բահրամ աղէն տեսաւ օր ուր տախտակ մէկ բանի կը դիպի, կը դառնայ ղըբա ծով, մտածաւ, ասեց. Մէկ անգամ էլ օր թըբխկոց ըլի, պըտի ինձի քցեմ, ինչ կըլի կ'ըլի։ Մէկ անգամ էլ թըխկոց յելաւ, ուրին քցեց, դուս մի ասէ, ծովի ղրաղն ա։ Օր տեսաւ ծովից դուս ընկաւ չոր տեղ, ուրախութենից յուշը գնաց գլխուց. էս ծովի ղրաղ մէկ հատ քուշք սարա կար, մէկ հատ հուրի կար մէջ, հուրուս տունը քանդըվի, արեգական կասէր թէ դուս մի յըլնի, ես պըտի յելնեմ, ճրագի պէս փայլ կիտէր, չուր կը խմէր՝ գունդ գունդ բողդէն կերևէր, անունը Մանըջա խանըմ էր։ Մանըջա խանըմ բող ձին հեծաւ, գնաց ծովի ղրաղ սէյր էնե-լու, տեսաւ, օր մէկ տղայ ուշքը գացեր՝ ծովի ղրաղ ընկեր ա, տղի ձեռքից բռնեց, օյեղացրեց, քաշեց թարկ, բերեց իրա օթա-խի մէջ դրեց։

Էտոնք էլան մարդ ու կնիկ, ճնացին։ Ըսկսեցին չայ, փունչ, հաց, խորակ, ապրան էտ օթախի մէջ։ Ապա մէնք խապար որ-տուց տանք.

Խապար տանք Լալու մօտէն։

Մէկ օտար երկիրմ, մէկ հարուստ մարդմ գնացեր մէ չաղաց էր շինէ, աղքատի մէկն էլ դրեր էր չաղացապան։ Էտ չաղաց-պան տեսաւ օր չուրը կտրվեց, յելաւ տեսաւ օր մէկ տղայ էկէ հասէ նաւի բերան, չուրը կտրվեր ա, ձեռ թալեց, թևից բռնեց, հանեց դուս ասաց.

—Ի՞նչ տղայ ես։

Ասաց. Անտէր մէ տղայ եմ։

—Բեզի կէնեմ ընձի տղայ։ Թևից բռնեց, տարաւ չաղաց։

Մէկ երկու օր պախպանեց տղին, տեսաւ չէ, օրական օխտ կլօճ կուտայ (կուտէ)։ Մէկ օր Չաղացապանը մտածաւ, թէ քարը յիջնում սրեմ, բերեց բոկոտուր (ձող), ու կը չարչըրվէր, օր յիջեցընէր Չղացի քարը, օր սրէր։

Տղէն մտիկ կը տար, ասաց. Չաղացապան ափու, էտ ինչ ա կէնես։

Ասեց. Գիջում՝ սրիմ։

Ասեց. Յիջեցընել յետմալ չելնի։

Ասաց. Հըպը ինչպէս կելնի։

—Ա՜հ, ան, ըսաց, ահա տը սրա, ձեռը քցեց, վերցուց քար շըջեց։

—Ջանըմ, ըսաց, էսման տղայ չելլի, կը պահպանեմ, ինձի էղի տղա. ամէն օր ըսման հեշտ իջու քար, ես սըրեմ։

Որ սրեց պրծաւ, գնաց քար վերցուց ըսեց. Ահա, դրեց տեղ, թող էթայ բանի։

Աբի օր Չաղչի տէր մէկ օր էկաւ իրիշկելու. տեսաւ օր մէկ տղայ կայ նստուկ ըտտեղ, Չաղացի թոնդրայ վրա. ահա վզի հաստութիւնը էսքան էր, (ցոյց էր տալիս ձեռներով մօտ մի մեծ անիւ)։

Ասաց. Չաղչըպան, էս ինչ տղայ ա։

Ասաց. Իմ տղէն ա։

Ասաց. Յոնւստ էլաւ քեզի տղայ, ես գինեմ քեզի տղայ չկայ, ընչի ինձի կը խափես։

Ասաց. Օր դրուստն ասեմ. Ջրի խետն էմ գալ, Ջուրն ա բերէ։

Ասաց. Օր մալ ա, տղէն ինձի կը խաստնի, կուվան Չաղչըպանն ու Չախչի տէր, տղի թևից բռնին, գացին թաղաւորին գանգատ։

Ասաց. Թէ էս տղէն օր Ջուր բերեր է, ինձի՞ կը խաստնի, թէ Չաղացպանին։

Թագաւոր ասաց. Թէ ինչի՞ համար ա տղէն պահած քո կուշտը։

Ասաց. Ջհո կը թալայ Չախչի քարին, կը շրչայ, կը սըրեմ, ու կը հեծու, կը բանայ, էտու համար կուզեմ օր տղան իմը ըլի։

Ասաց. Օր էտպէս ա, տղէն ինձի կը խաստնի, ասաց թագաւորը։ Տարեկան հազար մանէթ գիւլաշղու փող կիտամ, օր պահեմ իմ կուշտ, էլ գիւլաշղու փող չեմ իտայ։ Տարաւ պախեց թագաւորը ուր համար, էն Թող կայնի ըտեղ։ Մինք խապար որ-դուց տանք։

Բահրամ աղի մօտէն։

Մանիչա խանըմին ուզնէր օխտը օթախ, վեցը նշանց տվէր էր, մէկը ինացեր էր։ Մէկ օր գիշեր քնած տեղ Բահրամ աղէն

ձեռ տարաւ Մանիջա խանըմի ծամերուս մէջ, տեսաւ օր մէկ բալ-նիք կար, բալնիս խանեց ծամերի միջէն ու դնաց էն օթախ, օր շանց չէ ավէ ըսկի։

Ասեց. Էս բալնիք էս օթախինը գըլնի։ Դուռ բացեց, մտաւ նէքսի, տեսաւ մէկ դուշ էտահ կայնուկ էր, տեսաւ մէկ շապիկ կայ անկուն գըուկ, Ջաւահիր, անդին քարով շինած մէ շապիկ, որ մուխ պիշեր լուս կիտէր։

Ասեց Էս շապիկ Մանիջա խանըմի լայեղին ա, տանեմ խագ-նի, սէյր էնիմ։ Քցեց թևի վրայ, դուս յելաւ, մէկ քամի զարկեց, շապիկն թևի վրայէն թռուց, տարաւ։ Տարաւ մէկ թագաւորի սի-նօռի մէջ քցեց։ էն թագաւորի սինօռն ա, որ Լալէն ըտեղն ա։ Մնաց Բահրամ աղէն շիվար, գնաց դըրա օթախ, մտաւ ուրա տեղի մէջ քնելու, քուն չը տարաւ կսկծուն. Մանիջա խանըմ յիմցաւ։

Ասաց. Բահրամ աղա, ինչի՞ չես քնի։

Ասեց. Գնացի օթախի դուռ բացի, մէկ շապիկ կար ընտէ, շապիկ վերցի, դուս յելայ, օր բերեմ հագնիս՝ սէյր էնեմ, մէկ քամի յելաւ, զարկեց, թևից թռուց տարաւ։

—Հա, ասաց, լաւ բան չէրիր, քու տունը քանդըվի, ընձի ու քեզի յիրար մօտէ օր ճղտող (բաժանող) ըլնի, էն շապիկն ա, չըլնի՝ էն շապիկն ա։

—Դէհ, մի դասաբաթ քաշա, գնաց գնաց։

էն թագաւորի նախըշիք առաւօտ գնացին տեսան չոլի մէջ տեղ օր մէկ շապիկ ա քցած, շապիկ վերցրեցին, տեսան օր արեգա-կան պէս լուս կիտայ։

Ասին. Տանենք տանք թագաւորին, քանի սաղ կենդանի ենք, էլ նախըչութենէն չենք յելի։

Տարան տվին թագաւորին, խնդրվան թագաւորի մօտէն, թէ խնդրենք օր թագաւոր. քանի սաղ կենդանի ենք, նախըչու-թիւն տաք մեզի, էլ չառնես տաս ուրիշի։

Թագաւոր ասաց. Գնացէք, քանի սաղ կենդանի էք, նախը-չութիւնը թող ձեզ էլնի։ Դանչից թագաւոր գիտուն մարդիկն, թողէք տեսնինք էս շապիկ ո՞ւմ պըտի ըլնի։

Մարդիկ ըսին, թէ թագաւոր, սէհրբազ պառաւներ դտի, սէհրբազներ կարելի է իմանան։ Գընացին մէկ սէհրբազ պառաւ գտան բերին։

Ասաց. Պառաւ, էս ինչ շապիկ ա։

—Էհ, թագաւոր, ասեց, տունդ քանդվի, թաղթըդ շուռ ու մուռ ըլնի, շապիկն էս տեսէ, զարմացար ես, հըպը օր շապկի տէր տեսնես՝ ինչըդ կըլնիս։

Առաց. Պառաւ, քանի որ էտ շապկին տէր կայ, կարմիս բեբեխս, խասուս ընձիկ։ Աշխարքի մալը, դովլաթը քեզ կըտամ։

Ասաց. Չեմ ուզէ, թագաւորութենդ կիտաս, կեթամ, չես տայ, չեմ էթայ։

Թագաւորը իսկուն ուր թագաւորութենը յանձնեց պառաւին։

Ասաց. Ինձի մէ ձեռք լաւ շոր հագցրու, որ էթամ, էս շորով չեմ կանայ էթայ։

Իսկոյն հագցրեց պառավին։ Պառաւը մէկ համբալ բերել տուեց, մէկ ձըցում դրեց համբալի քամակ, ու գնաց դըբա ծով։ Որ հասան դրաղ, պառաւը ձրձուումը դրեց ծովի մէջ, յելաւ խէծաւ ձրձուում, օխտ սէհր (տեսակ) զարկեց ձրձուումին, ձրձուումը ընկաւ ծովի յերեսն ու գնաց։ Գնաց Մանիջա խանըմի սինօռից դուս յելաւ։ Ձրձում պախեց աւազի մէջ, փէտ բռնեց ձեռը, կաղկըղելով գնաց դըբա Մանիջա խանըմ.

Ասաց. Ամէն, Մանիջա խանում, Բահրամ աղի գլխու սադաղէն ըլնի, ձին խէծայ Երուսաղէմ յուխտ կէթի, ձին տըռճըկեց, տըփեց գետին, կողերս կոտրաւ, խնդրիմ էրկու օր ինձի պահապանես, կողերս լաւնայ. էթամ իմ ուխտը էնեմ։

—Կորի՛, ասաց, շանորդի սէհրբազ։

Անդրոց (Թոնրի ձող) վերցրեց ու զարկեց պառաւի էրկու կող ջարդեց։ Բահրամ աղէն խեծէ ձին գնացեր էր ման գալու։ Պառաւը տեսաւ օր Բահրամ աղէն էկաւ՝ գնաց ուրին քցեց Բահրամ աղի ձիու ոտքերուն.

—Ամէն, ասաց, Բապա, վերև Աստուած, ներքև դու, ձին հեծնը ի, որ Երուսաղէմ ուխտ էթի, ձին տրռճկեց, տփեց գետին, յելա գնացի Մանիջա խանըմի կուշտ, որ ընձի մէկ էրկու օր պաշտպանէր, Մանիջա խանըմ զարկեց կողերս ջարդեց, դուս քցեց ընձի, մէկ էրկու օր ընձի պաշտպանայ, չուր լաւընամ էթամ։ Բահրամ աղէն ձեռք քցեց պառաւի թևից բռնեց, քաշեց ձիու թարք տարաւ։ Մանիջա խանըմ տեսաւ օր Բահրամ աղէն պառաւին բերեց.

Ասաց. Ինչի՞ բերեցիր, սէհրբազ լաւանդին (լիրբ)։

Ասաց. Բան չկայ, մէկ էրկու օր պաշտպանինք, էթայ հասնի ուր տեղ։

Ասաց. Դու գիտես, կը վռշմընիս։ Օխտն օր մնաց, օխտը սէհր զանեց պառաւ. օխտը սէհր օր զանեց, վրա ուղին՝ Բահրամ աղի խելք գլխուց առաւ։ Պառաւ առաւ անդրոց էկաւ դըբա Մանիջա խանըմ։

Ասաց. Մի՞թքդ ա, օր զանիր կողերս կոտրիր, ձեռ քցեց մազերուց ու քաշեց։

Ասաց. Պառաւ, էլ մի քաշա մազերուցս, ես պիտեմ օր ընձի պըտի տանիս, թօղ էթամ իմ օթախը, ետոյ գամ էթանք։

Որ գնաց օթախ, մէ թուղթ դրեց, էն օթախի բալնիք դրեց մէջ, ասաց, Բահրամ աղա, ասաց, քառասուն օր թըմբմաս, ուշքդ գուգայ գըլոխդ, ես բալնիս կը վերցուս, կերթաս էն օթախի դուռը կը բանաս, որ շապիկն էնտեղ էր, քու գանգատ կէնես էն ղըշուն, քեղի մէ իլլաճ էրեց՝ էն դուշն ա, իլլաճ չէրեց՝ էն դուշն ա։ Էս թուղթ ու բալնիք վաթթեց, դրեց Բահրամ աղի ձեռի մէջ, պառաւը յետևանց մտաւ օթախ, քաշեց ծամերից ու տարաւ ծովի ղրաղ, հնծուց ձըձուս, օխտ սէհր զարկեց, ձըձուսն ընկաւ ծովի յերեսն ու գնաց։ Գնաց ծովից դուս յելաւ՝ քաղաք։ Տեսաւ մէ մարդ կար ծովի ղրաղ կայնուկ։

Ասաց. Գնա, աչքալուսենք տար Թագաւորին, թէ աչքդ լուս էղնի, պառաւը բերեց Մանիչա խանըմին, գայ յառէչս։ Էն սըհաթին Թագաւոր դըհոլով, դուհնով, վազիրով, վաքիլով գնաց պառաւի յառէչ, վերցըրեցին Մանիչա խանըմին, առան էկան Թագաւորի օթախ։

Մանիչա խանըմը ասաց, Թէ մենք հուրի ենք, ինձի մէկ ջոկ օթախ կուտաս, էն ջոկ օթախի մէջ կապրիմ, չուր քառասունք թըմբմի։ Ինդուց հաը վիր կամենաս ընդուր տուր։

Թագաւորը դրեց մէ օթախի մէջ, մէ աղչիկ էլ դարաւաշ տվեց, որ պըտի քառասուն օր մնայ էտ օթախի մէջ։

Քառասունք օր թըմբմաս, Բահրամ աղի խելք էկաւ գլոխը, յիմացաւ, տեսաւ օր նէտ Մանիչա խանըմ, նէտ բան։ Տեսաւ օր ձեռի մէջ մէ թուղթ կար. թուղթ կարդաց, գնաց էն օթախի դուռը բացեց, գանգատ էրեց էն ղշին, էն դուշ ձէն տվեց, մէկ մարդ էկաւ, էտ մարդին մէկ աչք ունէր, աչքն էլ ճակատն էր։

Ասաց. Բահրամ աղի թևիցը կը բռնես, ծովը կընցուս, կը դառնաս։

Իսկուն թևից բռնեց, քցեց քամակ, ծովն ընցուց, դարձաւ։ Բահրամ աղէն գնաց էտ քաղաք, օր Մանիչա խանըմ էտ քաղաքն ա։ Հըմը, Բահրամ աղան չի գիտայ Թէ Մանիչա խանըմը ըտեղ ա, Թէ ըտեղ չի։

Գնաց մէ պառաւի տուն, ասեց. Պառաւ, ընձի էրա քըզի տղայ, ես դոչաղ տղայ եմ, ըսաց, աշխատեմ, քըզի պահեմ։

Ասաց. Որդի ջան, էս էրկու իրեք օր հարսանիք ա, գնա կէր, խմայ, արի էղի ինձի տղայ։

Ասաց. Պառաւ, իմնչ հարսանիք ա։

Պառաւն ասաց. Մանիչա խանըմի հարսանիքն ա, կը տան Թագաւորին։

Որ Մանիկա խանըմի ձէն լսեց, Բահրամ աղէն եռսոտաւ, փրփուր տվեց բերնին, գնաց մէ դիւքեանի դուռ, որ չլինգեաը էր.

Ասաց. Ուստա, ինչ տամ քեզ, ինձի մէ թուր, մէ զալխան շինես։

Չիլինգարն առաւ քսան մանէթ մօտէն, մէ թուր, մէ զալխան շինեց, տվեց։

Յելաւ քաղքի ղրաղ, տեհաւ էնտեղ մէ մարդ կար։

Ասաց. Կեթաս թագաւորին կասես. Մանիկա խանըմի տէր էկեր ա, յառանցի կռիւ էնել, յառանցի յարունք էնել, բերայ տայ ընձի։

Իսկուն մարդը գնաց ասաց թագաւորին, թագաւորը զարկեց մէ չափալաղ էտ մարդուն, թէ կորի շան որդի, էկեր ես ինչ կը խօսաս։ Էտ մարդ գնաց, էտպէս լայ ընկելով գնաց Բահրամ աղի կուշտ։

Ասաց, թէ առեցի, ինձի ծեծեց, ղրեց ճամփու։

Ասաց. Դէ քաշվէ ղրաղ։ Բահրամ աղէն բռնեց մէ ձեռ թուր, մէ ձեռ զալխան, սկսեց կռիւ էնել, էնքան արունք էրեց, որ քաղաքի յ'իրեք մահլէն կոտորեց, որ պըտի ջարդելով էթայ թագաւորի օթախների վրէն կայնի։

Խաբար գնաց թագաւորին, թէ տունդ քանդվի, ինչ կէնես, որ քաղաքի յիրեք բաժին կոտորվաւ, էլ մարդ յառէջ կայնող չկայ։

Թագաւորն ասեց. Լալէն էլ ընչի հըմար ես պախէ, օր ընձի պէտք չըդայ, ու Լալէն խանեցին դուս, տեսաւ օր քաղքի յիրեք բաժին ջարդըվեր ա։ Լալէն գնաց մէ դիւքանի դռան յառէջ կայնաւ։

Ասաց, Ի՞նչ տամ, ինձի համար մէ թուր, մէ զալխան շինես։ Քսան մանէթ փող առաւ, իսկուն շինեց, տվեց։ Թուր բռնեց մէ ձեռ, զալխան բռնեց մէ ձեռ ու հասաւ Բահրամ աղին։ Սկսեցին յիրար թուր ու զալխան թալել, կռիւ անել։ Օխտ օր, գիշեր ցերեկ իրար թուր ու զալխան թալին՝ Բահրամ աղէն ասաց. Հէյ վախ, Լալի պէս ախպէրն էմ կորցըրէ, հըլպըտ դու իմ հետ թուր ու զալխան պըտի քըցես։

Լալէն ասաց. Հալպատ, Բահրամ աղի պէս ախպէրն եմ կորցրէ, դու պըտի գաս խըտ ընձի թուր, զալխան քցես։

Ասաց. Դու ո՞րն ես։

Ասաց. Բահրամ աղէն եմ։

Ասաց. Դո՞ւ որն ես։

Ասաց. Ես Լալէն եմ։

Ասաց. Լսե՞լ ես Մանիկա խանըմի գալն ըստեղ։

Ասաց. Հա։

Ասաց. Իմ նշանածն է։

Ասաց. Ի՞նչ կասայ։

Ասաց. Էլ մի կայնի, դուռ վերևանց, ես ներքևանց, սկսենք ջարդել։ Մէկ վերևանց ջարդէց, մէկ ներքևանց, էնպէս ջարդեցին, որ արուն յելէը չանդակն ու գլոխ վերցըրէր կէրթէը։ Կարելով բերեցին թագաւորի դիվանի դուռ կայնեցուցին։

Բահրամ աղան ասաց. Լալա, պառաւն յոնը ա, չերևաց ըսկի։

Ասեց. Թագաւորի օթախի մէջ թիկն տուեր նօրդան դէօշկի վրայ։

Բահրամ աղէն մտաւ նէքսև, տեսաւ օր պառաւն էտտեղն էր, ձեռ քցեց ոտիցն ու քաշեց։

Լալէն ձեռք թալեց մէ բարդու ծառ կռացուց, Բահրամ աղէն օր առաւ պառաւին էկաւ, վերցուց ու զարկեց ծառի վրայ, ոռէն մտաւ, բերնից յելաւ դուս, ծառը թողեց շիտկաւ։

Ասաց. Ըտեղ բանըր տեղ ա, սէհր էրա, տես աշխարհ ինչ կայ։

Գնացին օթախի դուռ ջարդեցին, Մանիջա խանըմ դուս խանին. վերցեցին Մանիջա խանըմին, Բահրամ աղէն ու Լալէն գացին։

Գացին Մանիջա խանըմի օթախներ, օխտն օր նստան օթախներ, մտածեցին, թէ մենք Զինիմաչինա տղէներն ինք, էլ էտտեղ մնալու հալ չունենք։ Յելան վերցըրեցին իրենց մալն ու ապրանքը, ղըբա Զինիմաչին գացին։ Գացին, խառնելուն պէս խապար գնաց թագաւորին.—Թէ աչքդ լուս էլնի, տղէներդ էկան։ Թագաւոր դաֆով, զուռնով, սազով, սոհրաթով, թօփով, չապախանով, վաքիլով գնաց տղէների յառէջ, բերեց յիջեցրեց։ Հարսանիք բռնեց, օխտը օր, օխտը գիշեր հարսնիք էրաւ, տղին պսակեց։

Ուրանք հասան ուրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։ Երկնուց յիրնք խնձոր ընկաւ, մէկը լսողին, էրկուսը ասողին։



ՔԱՋ ՆՈՒԲԱՐ

(Թաֆնարլու, Տիպղիցցիներ *)

Ժամանակով կար մէ հալևոր թագաւոր, իրեք հարիր տա-
րեկան էր, ըսկի ժառանգ չունէր աշխարքի յերես։ Ամենան բա-
նից հրաժարվեր էր, ըտոր մէ բաղ ունէր, քանի որ իրա ջահել
ժամանակն էր, տարին տասերկու ամիս կանանչ էր, եանա որ
թագաւորը հալիվորցաւ, բաղն էլ չորացաւ։ Թագաւորը իրա ջա-
հել վախտը մէ ծառ էր կորէ, անմահական հաւուղ կար բաղի
մէջը, անմահական ջուր դուս կիգէր, բոլորը չորացեր էր, մէ
գիշերվայ մէջ, հալիվոր թագաւորի անկաճ մէ ձէն ընկաւ, թէ
յելի գնա քու հարէմխանէն, Աստու սիրտ քաղցրացէ, պըտի քե-
զի ժառանգ էլնի։

Թագաւորն յիմցաւ, տեսաւ օր երազ էր։

Մէկ անգամ էլ քնաւ, մէկ անգամ էլ ձէն ընկաւ յանկաճ,
թէ յելի, գնա քու բաղ. թէ բաղդ կանաչեր ա, թէ մառմառ հա-
ւուղ լցվեր ա, էն կտրած ծառիդ վրէն ջուխտ ճուղ կանանչեր
ա վրէն, յիմաց կաց, իմ ասած օղորթ ա, թէ չէ՝ սուտ աւ։ Թա-
գաւորը յելաւ գնաց, տեսաւ բաղը օր դրախտական բաղ է դար-
ձէ, հաւուղը լցվեր ա, ծառի վրայ ջուխտ ճուղ յելէ։

Գնաց թագուհու դուռ ծեծեց, ասաց. Թագուհի, յելի, Աստ-
ված քաղցրացեր ա, պէտք ա մեզի էրկու ժառանգ ընի։

Ասաց. Թագաւոր, կարելի ա չար քեզի խափեր ա, դարձի
քու տեղ։

Ասաց. Ջո՞ս հաւատայ իմ ասածին, գնա բախչէն տես հա-
լա։ Գնացին բախչէն տեսան, օր բախչէն դրախտական բաղ ա
դարձէ։

Ասաց. Թագաւոր, մեղք գործելով պէտք ա Աստված մեզի
ժառանգ տայ, արի քու բերան դի իմ բերնի վրէն, էրկու ան-
գամ շնչայ ու գնա տեղդ պառկի։ Ու շնչաց, գնաց տեղը պառկաւ

---

* Պատմեց 1912 թ. Յուլիսի 17-ին Թաֆարլու գիւղում նոյն Բար-
սեղ Յարութիւնեանը։

Իննը ամիս, իննը սրհաթ, իննը դախխէն օր թըմըմաւ, ըխտեար թագուհին չոք զարկեց գետին, մէկ տղայ ըերեց. ձէն ընկաւ քաղաք, թէ թագաւորին տղայ է էլէ: Էկան աչքալուսենք, ուտել, խմել, քէֆ, ուրախութեն էնել: Բաշեց օխտը տարի, ձէն գնաց հասաւ տղի քեռուն: Գեռին էկաւ օր քրոջ տղէն տանի, ուրենք էլ ուրախանան տղի վրա: Էկաւ խնդրվաւ քրոջ մօտէն, թէ մենք էլ տանենք, ուրախանանք վրէն:

Ասաց. Անկարին ա, որ ես իմ տղէն չեմ խտայ: Գեռին տխրաւ ու ծնաց:

Հալխւոր թագաւորն էկաւ, ասեց. Գեռին տխրացեր ա. ասաց. Ինչի՞ ես տխուրացէ:

Ասաց. Տղէն ուղի քրոջս մօտէն, չտվեց:

Ասաց. Թագուհի, տու թօ տանի, քու ախպերն ա, ինչի՞ չես տայ: Տվեց տարաւ: Որ տարաւ, իրա բոլոր բարեկամներ քոմման աչքալուսէք: Կերան, խման, յելան ցըվըրվան: Գեռու կնիկ միտք էրեց օր քրոջ տղու մօտէն գլուխ առնէր, բայց քրոջ տղէն կամք չտվեց, յելաւ ոտաշորերը պատռտեց, ու յելաւ գնաց թագաւորի դիվանխանէն գանգատ: Ասաց. Ո՛չ դու ըլնես, ո՛չ քու քրոջ տղէն, քաշեց իմ շորեր պատռտեց, գլուխ գուղէր ընձնից:

Ասաց. Հա դիտի, երկու մարդ յէլէք, էտ տղի գլուխ կտրէք: Էլան երկու մարդ գացին, տեսան օր տղայ չկայ, փախեր ա:

Ասաց. Կնիկ, փախեր, փախեր ա, Թող կորի էթայ:

—Անկարելի ա, ասաց, էնոր չիդեար ինձի համար օր խռոված չէնես, քեզի կնկտութեն չեմ անի:

Յելան վերցին գօրք, գօրապետ, գացին հալխւոր թագաւորի քաղքի դրաղ կտրին նստան: Գիր գրեց թագաւորին, թէ արի կռիւ էրա, եա տղէդ ճամբայ դայ՝ գլուխ գանեմ:

Թագաւոր շատ մըխկտաց, ձէն ընկաւ տղու անկաճ:

Ասաց. Թագաւոր, ինչի՞ կուլաս:

Ասաց. Քու քեռիդ վերցէ բազում զօշուն էկէ, օր մեզի ջարդա, քեզի էլ ըսպանայ:

Տղէն յելաւ, մէկ խամ թայըմ քաշեց դուս խեծաւ, Թուր կապեց վրէն, քշեց քեռու չադըրի դուռ:

—Բարև, քեռի, ասաց:

Ասաց. Յելէք էսօր գլուխ վերցէք: Յելան էրկու հոգի խառնըվան յիրար, հաստատվաւ կռիւ, ջարդեց, կոտորեց, ծնաց քեռին ու վազիր: Լարեց տարաւ մէկ նեղ տեղմ բռնեց, օր վզեր զարներ: Ասաց. Գնա, սիանաթ էրա քու մօր ծծի կաթին, մեր քոք մի՛ կտրէ:

Ասաց. Դէ գնացէք, ձեզի բախշեցի իմ մօր:

Քեռու կնիկ ասաց. Անկարելի ա, պէտք ա ջիկրներ բերես, մէկ ջարդելով, երկու ջարդելով, բան չի ըլնի։

Գիտուն մարդիկ ասին, թէ էտոր հետ իլլաճ չի էղնի. մէկ գութնխերք գաի, ջուր կապա վրէն, մէկ իլլաճ էրաւ, էն գութնխերքն ա, մէկ իլլաճ չէրաւ՝ էն գութնխերքն ա։

Ջուր կապին ու ջրին, տարան դալապի (ցուլի գալոդ) ղըբախ գութնխերքի մէջ կապին, խեծան, քաղքի բոլորն առան։ Տղէն խեծաւ, քշեց միջևներ, էն վախտ օր կուու բացվաւ, դալապի ղըբախ խրխնջաց, տղի ձին գլոխ առաւ, գնաց ղըբա դալապի ղըբախ, քեամանդ քցեցին, յետևանց տղին բարք բռնեցին։ Բռնին ու տղի գլոխ կարին, ջիկրներ տարան Թագաւորի կնկան։ Յելան մխիթարանք գրին քրօջը, թէ որ պակսաւ՝ դու անուշ ճնաս։

Բուրն ասաց. Գնա ասա, իրա Թատարուկ Թօղ տեսնի, Քաջ Նուբար հրէս փորս ա, օր դուս յելաւ, իրա քօք կը կարայ։

Էկան ու քեռի Թագաւորին ասեցին։

Ասաց. Գնացէք էն օղլուշաղի փոր Թափէք, էրեխի գլոխ կտրէք։

Բարի մարդիկ կային, ասին. Թագաւոր, սրտի կսկծի վախտը խօսք մէ ասեր է, նոր պըտի ընդուց ուղայ ըլնի, դայ մեզի հետ կռվի, տէրը մի ըլնիք։

Թողին, ճնաց։

Քաջ Նուբար ծօրից ծնաւ, օխտը տարին օր Թամամեց, խաբար գնաց Թագաւորին, Թէ քրօջդ մէ ուղայ է էղէ. անունը դրին Քաջ Նուբար։

—Դեհ, ըսաց, բաղում ղօշուն վերցէք, քաղքի չորս բոլոր կտրէք, քանի որ էրեխայ ա, Թէ չէ որ մնծընայ՝ իլլաճ չի ըլնի։ Ու յելան քաղքի չորս բոլոր կտրին։

Ասրար գնաց Քաջ Նուբարին, Թէ ախպօրդ սրպանողներ էկած քեզի էլ կուզին սպանին։ Քաջ Նուբար խեծաւ ձին, քշեց միջվըներ, սկսեց ջարդել, բոլոր ջարդեց, ճնաց վաղիր ու Թագաւոր, լարեց էտոնց մէ նեղ տեղ բռնեց, ուզեցաւ որ վզեր զարնէր։

Ասին. Ինայեա քու մօր ծծի կաթին, մեր վիզ մի զան։ Ու Թողից՝ գացին։ Էտոնք էկան մասլահաթ էրին, Թէ մէկ գութնի խերք գտէք։ Գտան, ջուր կապին վրէն, խեծաւ ձին, էկաւ միջվըներ կռիւ աննլու, կռվան ու խառնըվան յիրար։ Դալապի ղըբախ տարեր էին գութնը խերքի մէջ, տաղտիկ էղաւ, տղի ձին գլոխն առաւ ու ղըբա դալապի ղըբախ գնաց։

Քամանդ քցեցին, տղին բարք բռնեցին ու տարան քեռու մէյդընի մէջ կայնեցուցին, ուզեցան օր գլոխ զանին։

Էտ Թագաւորին մէ աղչիկ կար, ասաց. Քանի որ կհանքա

սաղ ա, չեմ թողնէ օր ըտուր վիզ զանին. ասաց. Թագաւոր, ինչ մոքի ես։

Ասաց. Գուզէմ գլոխը զանեմ։

—Ջէ, ասաց, չելաւ, տար, ասաց, մէ խորու մէջ իջու, քարմ գիր վրէն, թօ էթայ յաւիտենական մնայ մէջ խորին։

Թագաւորը համալ էրաւ, տարաւ քցեց խոր, քարմ գրեց բերնին։

Աղչիկ գլոր գնաց խորի վրայ, ասաց. Բալ Նուբար, մի վախեցի, քեզի կը պահպանեմ ես հորի մէջ, չուր Աստուած մէկ լուս կանայ։

Մի առ ժամանակ որ մնաց, Բաթման Ղլիճ փահլըվան էկաւ էս թագաւորի վրայ կռիւ։

Ասաց. Ես ընձի զանիմ (ընկեր) բեր կըռիւ էնենք, եա թէ չէ՝ քու աղչիկ տաս ընձի։

Ասաց. Մարդ չունեմ, աղչիկս կտամ քեզի։

Բաթման Ղլիճ փահլըվան ասաց. Աբի առ իմ ճկըթի մատնիք, տար դի քու աղչկայ մատը։

Թագաւորը առաւ մատնիք, տարաւ տվեց աղչկան, գրեց մատը, էկաւ յելաւ էրմունկ։

Ասաց. Թագաւոր, դու ես ինչ էրիր։

Ասաց. Քեզի տվի Բաթման Ղլիճ փահլըվանին։

Ասաց. Տունդ աւերվի, օր անօթցաւ՝ ինձի կուտայ։

Ասաց. Ի՞նչ էնեմ, զանիմ կուզայ, չունեմ. նաչարուչ պըտի տամ։

Ասաց. Հըլպա, մէ քրոջ որդի ունիր՝ Բալ Նուբար, փչացըրիր, ինձ էլ պտի տաս, տանայ ուտայ։

Թագաւորն ասաց. Հաճապ Բալ Նուբար սաղ ըլնի։

Էրկու հոգի գնացին դըբա խորն, ձէն տվին.—Բալ Նուբար.

Ասաց. Հրամմէ։

Էկան Թագաւորին ասին, թէ սաղ ա։

Ասաց. Գնացէք, հանէք, բերէք։

Գնացին, հանին, բերին. տարան համամ, համամլամիշ արեցէն, ձեռքմ շոր հագցրին, տարան շուշաբանդ օթախի մէջ դրին, հաց էրին, չայ փունճ, խացն ու գինին, եմագ իչմագ, թուխուն չիբուխ, ուժի բերին։

Գիր գրեցին Բաթման Ղլիճին, թէ մէղի մէ ամիս ժամանակ տուր, քեզի զանիմ տանք՝ կռվիք։

Բաթման Ղլիճ փահլըվան ասաց. Մէկ մարդու ջուխտմ գոմէշ ունենայ, մէկ լաւ պահայ, մէկ վատ, գարուն յելնի, թորկայ յիրար, ձր որի պըտի լարայ.—Հալբաա պըտի լաւը վատին

լարայ, տար ընձի էլ էնոր հետ մէ օթախի մէջ պահայ, նոր Թող կուվինք։

Թագաւոր տարաւ Բաթման Ղլիճ փահլըվանին Քաջ Նուբարի հետ մէ օթախի մէջ պահեց։

Բաթման Ղլիճ փահլըվանի խորակն էր օրական իրեք գոմշի Ջանդակ. Քաջ Նուբարին օրական իրեք եղվընէք։ Մէկ օր Բաթման Ղլիճ փահլըվան ձեռ քցեց Քաջ Նուբարի եղջեկին, օր ձեռէն խլէր ուտէր։ Քաջ Նուբար, Բաթման Ղլիճ փահլըվան առան յիրար, որ գետին շուռ կիկէր էտոնց ոտի տակ։ Քաջ Նուբար մտաւ Բաթման Ղլիճ փահլըվընի ընկի տակ. զարկեց, շըջեց, Թուրը քաշեց, գլոխը կտրեց։

Քևռին էկաւ կայնաւ, ասաց. Հալալ էղնի որդի, քու տղամարդութեն։ Հիմի ազատ ես, կանաս էթաս քու վաթան։

Թագաւոր դհոլով, զուռնով, սազով, սովրաթով, թօփով, Ջապախանով, վազիրով, վաքիլով տարաւ տղին, խաստուց ուր վաթան։ Բերին աղչիկ ուզեցին, օխան օր, գիշեր ցերեկ կեր խումարեցին, հարսնիք արին, տղին պսակեցին, տարան դրին թախտ, թագ դրին գլոխ, շինին թագաւոր։

Ցերեկ էլ էն տեղէն էկայ, էլի թագաւոր էր. քանի աշխարք շէն ա, էնի թագաւոր պըտի ըլնի։

Էրկնուց իրեք խանձոր ընկաւ, մէկը ըսողին, էրկուս լսողին։

ԱՆԴՐԱՆԵԿԻ ԽԵՐՔԱԹ

(Փիլափիլու, Մակուեցիներ*)

Ժամանակով մէ թագաւոր կար. ըտուր ունէր ութը կնիկ, ութ հատ էլ ձի ունէր, ձիան մէհտաը ունէր մէ խատ, էտ թագաւոր սախմանք ուրան մէհտաբին շաբաթ մէկ հատ կըսպանէր, ընչի՞ համար.

Թագաւորի խողի մէջը ութ խատ հարամի կար, էտ հարամիք սաղված ին թագաւորի կնկտերի խետ, յիրկնէ յիրկուն կուգին ձիանք կը քաշին դուս, կըհոտերն էլ կիջնին ուրանց տեղրանքիս, կը խեծնին էտ հարամիքի թարկը՝ կէթին, մէ ջոչ զաղա կար, էտ զաղի մէջ: Ջուր լուս կուտին, կը խմին, քէֆ կանին, լուսի դէմը կը բերին կուգին:

Ջիանքի մհհտաբը չուր որ կէսօր կը լէր՝ անջախ էտ ձիանքի քրտինք կը սրբէր, ձիանքը չին կըլաւնե: Շաբաթ մէ անդամ, թագաւոր կուգիէր ուրան ձիանքին տենալու, տենէր որ ըսկի չը կըլաւցաւ. մհհտաբի վրէն կը հերսոտէր՝ կսպանէր. էլ քաղաք Ջահել չմնաց, հըմէն բոնեց մհհտաբ, ըսպանեց: Մէ օր մէ տղայ էտ թագաւորի բանն յիմացիր էր, գնաց կայնաւ թագաւորի դէմ, ասաւ. Թագաւոր, ես կլեմ քեզ ձիանքին մհհտաբ:

—Որ, թէ ափսոս ես քեզի կըսպանեմ:

—Ընչի՞, թագաւոր, ընչի՞ կըսպանես:

—Իմ ձիանք լաւ չես կըլաւցու, քե կըսպանեմ:

—Չէ, թագաւոր, ես էն մհհտաբների պէս չեմ, լաւ կը պահեմ:

—Ահան քեզի ամիս քսանըվինգ մանէթ, գնա ձիանք պահա: Որ շաբաթ թըմաւ, կուգամ ձեանքին կը տենամ, որ լաւ չը կըլաւցած, քեզի կըսպանեմ:

Պատմեց *1912* թ. Սեպտեմբերի *15*-ին Փիլափիլու գիւղացի Դաւիթ Խալաբեան Աւետիսեանց *42* տարեկան անգրագէտ գիւղացին, որ պարապում է երկրագործութեամբ եւ ձմեռներն էլ յաճախ ճեֆեաքներ է պատւում: Սրա ծնողները գաղթել են Մակուից:

—Շատ լաւ, թագաւոր, շատ լաւ։

Էտ տղէն գնաց կայնաւ ձիանքի կուշտ, ձիանք պախպանեց մինչ ի իրիկուն, յիրիկուն տեսաւ որ հարամիք դռնէն մտան։

—Հա, մեհտար, ձեանք հըլա չ՚ես թամքե։

—Չէ, ազա, չի յիմացե ձեր գալը։

—Դէ, թամքա։

Մեհտար ձիանք թամքեց. հարամիք ձիանք քաշին դուս, կըհտեր ուրանց տեղրանքից իջան, էկան, ամէկ խէծան մէ հարամու թարկ, գնացին էտ զաղի մէջ։

Էտ ձիան մէհտարը խըտ յեաւներին գնաց, գողտուկ, գնաց իտոնց գործն յիմացաւ, ետ դարձաւ էկաւ ուր տեղ կայնաւ։ Գիշեր թագաւորի կըյտեր ձիանք բէրեցին էկան. էտ օր յընցաւ, էն մէկէլ օր մեհտարը գնաց մօ թագաւոր։

Ասաւ. Թագաւոր, մէ բան կը խնդրեմ, էտ քո գեստ տուր ընձի, խագնեմ ընեմ թագաւոր, նստեմ քո թախտի վրէն, իմ շորեր դուս խագի, գնա էս մէկ դիշեր էլի մեհտար։

Թագաւոր միտք արաւ, ասաւ. Թօ ըլի քու ասած։

Թագաւոր ուր շորեր խանեց, տուեց մեհտարին, մեհտարի շորերն առաւ գինք խագաւ, գնաց կայնաւ ձիանքի կուշտ. մէկ էլ տեսաւ հարամիքն էկան։

—Հա մեհտար, ձիանք չ՚ես թամքէ։

—Չէ, ազէք, խապար չի, ես թագա մեհտար եմ էկե։

—Դէհ թամքա, բան չկայ։

Ձիանք թամքեց թագաւոր, հարամիք քաշին դուս ձիանք, թագաւորի կըհտեր ուրանց տեղերից իջան էկան խէծան ձիանք, թագաւոր խետ հետևներին էլաւ, տեսաւ որ ուր կըհտեր խէծան ձիանք, էն մէկ կնիկն ասաւ.

—Ախչի, ախչի, էն էրեխէքն էլ քե խետդ։ Թագաւոր ունէր մէ պզտի տղայ, մէ պատի աղչիկ, կըհտեր վերցին տարան խետեր, թագաւոր խետ հետևներին գնաց, գնաց տեսաւ մէ ջոկ զաղայ կայ, թագաւոր ուրին պախ տուեց էտ զաղի մէջ, տեսաւ որ ուր կըհտեր, հարամիք կերան, խման, յելէք մէ պըտըտինք, դուս խովանանք, գանք քնենք։

Յելան դուս պըտըտելու, թագաւորին տեսան, բռնին, բերին կապին անից, ձրագ դրին վըր գլխուն, հարամիք ամէք մէկ կնիկ առան, պատկան քնան։ Թագաւորին շատ դժար էկաւ, ճոպանով վոնըրից փաթաթած ին չուր գլոխ, էն տղէն ախչիկն էլ էնա մէ հանի վրայ թալած ին, ընտոնք էրեխայ ին, քնած ին։ Թագաւոր ինչքան չարչըրվաւ՝ չը կարցաւ պրծնէր, ախչիկն ջոկ էր թագաւորին, ձէն տուեց ախչկան թագաւոր։

—Ախչի, ախչի, յէլի բան կասեմ։

Ախչիկն յիմացաւ, էս ոըն ա, ասաւ։

—Ես քո խէր Թագաւորն եմ։

—Ջեմ ճանչնայ քըզի, դէվ, խօրս խանեմ վեր։

—Չէ, չէ, քնի, քնի։

—Անդրանիկ, էլի վեր, էլի վեր։

Անդրանիկ որ յիմցաւ, աչքն առաւ Թագաւորին, տեսաւ որ ուր խէրն ա, լացաւ, էրեխայ տղայ էր։

—Անդրանիկ ջան, մի լաց, յէլի, էնա կամէն բեր։

Տղէն էլաւ խանչալ բերեց։

—Խանչալն՝ առաւ, քաշի էս ճոպան կտրայ։

Տղէն չը կարցաւ խանչալ քեաշէր, պզտի տղայ էր։

Որ խէրը տեսաւ չը կանայ խանչալ քեաշայ, ասաւ. Անդրանիկ, էն բուռը տու իմ բերան։

Խանչըլի բուռը տվեց Թագաւորի բերան, Անդրանիկ քաշեց խանչալ խանեց։ Անդրանիկ խանչալն առաւ, ճոպան կտրեց։ Թագաւորն սրձըկվաւ, իջաւ հարամբաշու թուրը քաշեց, օխտին կտրեց, մնաց հարամբաշին։

Թագաւոր էլաւ կայնաւ ուրա տեղն։ Հարամին յիմցաւ։

—Թագաւոր, ըսկի ինչ ես տեսեր։

—Հարամբաշի, գիշեր էրազին ուղթը ճնճղուկ տէսայ։

—Ապա ինչ տեսակ էլան։

—Օխտը թռան, մէկը մնաց։

—Ահա, ասաւ, դու իմ ախպէրներն ես սպանես։ Հարամի բաշին յէլաւ կայնաւ, Թագաւորի խետ խասան յիրար. Թագաւորն հարամբաշուն յաղտեց, վերուց տվեց գետին։ Հարամբաշու վիզ կտրեց, յէլաւ ուրան ձիանք, ուրան Անդրանիկ տղէն վերուց, զաղի մինչէն դուս էկաւ։ Շատ կուվաթով (ուժեղ) Թագաւոր էր. ուրան ուղթը կնիկ, մի ախչիկ, Թողեց մըչ զաղին, բերեց զաղի դուռ քարով շարեց, շատ ջոչ ջոչ քարերով։

—Ջանի սաղ էք՝ մէկ մէկու ջանդակ կերէք, իմ դիվանն էս ա։ Էկաւ ուրան տուն։ Գնաց ուրան ձիան մեհտարի կուշտը, ձիան մէհտար որ տեսաւ Թագաւորն էկաւ, շուտ էլաւ կայնաւ, Թախտից էջաւ։

—Թագաւոր, արի քիոյ շորերն ըստացի։

—Չէ, որդի, Թագաւորն ասաւ, Թախտը քեզի ա արժան, ինձի արժան չէ, ես որ էս բանը տեսայ, չեմ ուզեր էս խողի մէչ կայնել, որ իմ ձէնը դուս չենի, կեթամ ուրիշ երկիր կապրեմ։

—Ջհան մեհտար Թագաւոր, կը խնդրվեմ քեզնէ, քիոյ խաղինից ինձ մէ բան փոխ տաս, ես էթամ։

Մեհտարը բերեց դրան բաւականի փող տվեց, շնորհակալութեն առաւ մեհտար թագաւորից, ուրան ըռխաթ, ուրան խազնէն ինչ որ կար յանձնեց մեհտար թագաւորին, ուրան Անդրանեկ տղի ձեռ բռնեց, քնաց։ Գնաց Մինէզ թագաւորի խողը, մէ պառվի տան զօնաղ էլաւ։ Մէկ ամիս մնաց էտեղ, միտք արաւ, թէ ես էտեղ չեմ կարայ ապրէ էսենց, ըլեմ քաղաքի մէջ մէ գործ գտնեմ ընձի, ապրեմ։ Անդրանիկն յանձնեց պառվին, պառաւն արաւ ուրին տղայ։ Էտ թագաւոր գնաց քաղաքի մէջ, էս տեխ, էնդեխ պըտըտաւ, դնաց էլաւ Մինէզ թագաւորի ձիանքի մեհտար. գանք Թըխ Անդրանեկ տղէն։

Յէլաւ մէ տաս տասնըվինդ տարեկան Անդրանեկ, շատ կուվաթով փայլէվան էլաւ, գնաց ուրին մէ զօղալ չոմախ առաւ, բերեց էկաւ հօլ կը խաղէր, կայնէք, կասէր, հօլ զարնեմ ուրան յընկերներին, մէ փտանոց քէօղիւկ արեր էր հոլ, էտ զօղալ չոմախով որ կը զարկէր էտըրան՝ կէթէր կառնէր ուրան յընկերներին, որի թև կը կոտրէր, որի ոտ կոտրէր, օրական կէթին թագաւորի կուշտ գանգատ։ Պառվի տղէն Անդրանեկ մեր տղեքին յըմէն ըսպանեց։

Թագաւոր կասէր. Սուտ ա, էն պառվին տղայ չկայ, մէ որը պառաւ ա։

Օրերից մէ օր պառաւն ասաւ. Անդրանեկ, ըլուր չուներնք որ խաց թխենք։

Անդրանեկն ասաւ. Նանէ, աղուն փռայ, թօ չորնայ, տանեմ աղամ ըլուր։

Պառաւն ասաւ. Ախպա աղունին որ մողաթ կենայ, խաւեր չուտեն։

Անդրանեկն ասաւ. Ես մողաթ կենամ։

Պառաւն ասաւ. Դու մողաթ չես կենայ, ճժեր տեսար կալեր՝ կէթաս։

—Չէ, չէ, նանէ, վոլա չեմ էրթայ։

Պառաւ բերեց տանից աղուն փռեց, Անդրանեկն էլաւ կայնաւ կուշտ, պառաւ բերեց իբրև ֆանդ արաւ, ճոպան կապեց Անդրանեկի ոտից, կախեց յերսից, պառաւն էկաւ մտաւ տուն ճոպնի մէ փոթն էլ կապեց ուր մէջք, նստաւ, խաց կը թխէր, խաւերն էն դեխէն կուզին աղունի վրէն, Անդրանեկ կը վազնէր խաւերի յետև, պառաւ խետ ոտին կը ֆռէր, կելէր յերդից, կը վազնէր որ կուգեր յերսի վրէն, պառաւն կէրթէր գըմփալէն գինէր թոնդրա շուրթ։ Պառվի կողրանք ջարդըվաւ յըմէն, պառաւ յերսոտաւ, էլաւ Անդրանեկին խրկեց, չեմ ուզե, դու ընձի տղայ չես, գնա։ Անդրանեկ ուր չոմախ վերցուց ու գնաց։ Գնաց ըն-

կաւ մէ անմարդաբնակ երկիր, տեսաւ որ մէ քառասուն ջան ըտեղ նստուկ են ճամխու ղրաղ. գնաց ըսոնց բարև չտվեց, ընցաւ։

Ըսոնք քառասուն հարամի էն։

—Ա՜յ, մարդ, ասին, դու ինչ մարդ ես, որ միզ բարև չտվիր։

Անդրանկն ասաւ. Ճամբորդ եմ, կեթամ։

—Ինչքան կուվախով ճամբորդ ես, որ մեղի իսկի բանի տեղ չդրիր։

—Դու ինչ էք, ասաւ, մկայ չոմախ որ վերուս՝ ձեր հըմէնին կը ջարդեմ։ Յետան սկսին կռիւ։ Քառասուն հարամուն էլ ջարդեց, թողեց գնաց։ Գնաց մէ քաղաքի մօտ, գիշեր տվեց վրէն, մնաց պերեզմներ, գնաց մէ գումբէթի մէջ նստաւ, տեսաւ որ էտ գումբէթի պէմը թաղա գերեզման կայ, գիշերվայ մէ վախտ տեսաւ որ մէ սև ձիաւոր էկաւ կայնաւ էտ պերեզմնի վրէն, ձիուց իջաւ, գերեզման քանդեց, բացեց էտ մարդին, կամչիկն ուրան ձիու խուրջից խանեց, մէկ կամչիկ զանեց, ասեց. Թագաւորի տղայ, յելի վեր։

Թագաւորի տղէն տաղցաւ, էտ ձիաւորը սէհրի ախչիկ էր, հուրուփարի էր, իսկ ծովիղէն ախչիկ էր, ախչիկը խաբցմունք արաւ թագաւորի տղից։

—Թագաւորի տղայ, ընձի կառնիս։

Թագաւորի տղէն ասաւ. Չէ։

—Էսա կը զանեմ՝ կը մեռնես յաւիտենական, էլ չեմ իջայ քեզի վրայ։

Թագաւորի տղէն ասաւ ախչկան. Մինչի հազար հազար տարի էլ մեռնեմ՝ քեզի չեմ առնի. դու ծովիղէն էք, ես խոզածին եմ. ինձի կը տանէք կը վըտասէք, չեմ առնի։

Ղամչըկով զանեց թագաւորի տղին. մեռի, ասաւ, չուր Բրխատուս գայ գառաստան։

Անդրանկ որ տեսաւ էտ ախչկայ բանը. չոմախ վերուց վազաւ։ Չոմախով զանեց մըչ ձիան ճակտին, ձին յընկաւ, ախչիկ փախաւ, Անդրանկն էկաւ էն զամչըկով զանեց տղին՝ տաղցուց, գերեզմնից խանեց, տարաւ տվեց ուր թագաւորին, թագաւորից շատ խալաթ ըստացաւ ու գնաց։ Գնաց մէկ ծովի ղրաղ, տեսաւ որ մէ մարդ ծովի ղրաղի խետ կռիւ ցածը, կուգայ վեր, ու կուլայ։

Ծարցուց Անդրանկն էտ մարդին. Ա՛յ մարդ, ինչի՞ կուլաս։

—Ապա ինչ անեմ, կարիճ տղայ, ես մէկ քեասիբ մարդ եմ, նաֆարի տէր եմ, էսա կեամով կը պարապի, օրական կախշատի իմ էրէխեք կապրին։

Անդրանկ խաբցուց. Ապա մկայ ինչ ա էլե։

Կեամըչին ասաւ. Կեամին որ ես կը զառցեմ էթալու, ծովի

մըջէն մէ ձեռ դուս կուգայ, կը թալի իմ գեամին կը շրչայ. մըչու մարդեր կը խեղդվեն, չը թողայ որ ես էթամ իմ քաղքից դուս ըլեմ, իմ էրեխէք մացած էնտեղ անօթի, ես էլ մացեր եմ ըստեղ անօթի, էսա մէ ամիս ա ես ըստեղ եմ։

Անդրանեկն ասաւ կամըչուն. կեամըչի, ես կը քնեմ մըչ գեամուն, դու կեամին կը քցես ծովի յերես, մի վախեցի, կեամին քշայ գնա, ինչ վախտ որ էն ձեռ դուս կուգայ, ինձի խապար արա։

Կեամըչին կեամին քշեց գնաց ծովի մէջ տեղ, տեսաւ որ էտ ձեռ դուս էկաւ, կեամըչին վախեցաւ, լեզուն բռվաւ, ոտով իրար տվեց, Անդրանեկն յելաւ վեր, փանջարից պարզվաւ, ձեռ թալեց, էտ ձեռը բռնեց, քաշեց ծովից խանեց, չոմախով էմալ տփեց ըտուր, որ ըտուր ջանի արուևը ծովի յերես բռնեց, թողեց գնաց մըչ ծովուն, կուրիսաւ։

—Դէ քշա, կեամըչի, քեզի էմալ շոշի ճամբախ եմ շինե՝ օր էլ մարդ չի գայ քիոյ դէմ։

Կեամըչին կեամին քըշեց, տարաւ ծովից հանեց դուս, Անդրանեկ կեամուս միջէն էլաւ գնաց։

Գնաց քաղաքի կրպոց, տեսաւ որ էրկու մարդ, մէ կնիկ կը կռվին, խարցուց, ասաւ. Ինչի՞ կը կռվէք։

Էտ մարդերն ասեցին. Ես էլ որբվերի եմ, էս մարդն էլ որբեվերի եայ, էս կնիկն էլ որբեվերի եայ, էս կնիկ համ էս մարդին կասայ քի կառնեմ, համ ընձի կասայ քի կառնեմ։ Մկայ ես կասեմ թէ կնիկ ես կը տանեմ, էս մարդն էլ կասայ, ես կը տանեմ։

Անդրանեկ խարցմունք արաւ էտ կնկնից. Այ կնիկ, դու էս մարդերին կառնե՞ս։

—Ա՛ա, կառնեմ։

—Էրկըսին էլ։

—Ա՛ա, էրկըսին էլ կառնեմ։

Էն մէկ մարթի վրէն մէկ խատ կըմը կար, էտ մարթու վրավէն Անդրանեկ կըսէն առաւ, ասաւ. Դու իմ դիվանին յօժար էք, որ ես ձեր դիվան անեմ։ Էտ էրկու մարթն էլ, էն կնիկն էլ յօժարացան, թէ մենք յօժար ենք։

Էտ Անդրանեկն ասաւ. Էս կնկայ գլոխ կը տամ մէկիդ, ջանդակ կըտամ մէկիդ, յօժա՞ր էք։

Էտ մարդերն ասին, թէ Անդրանեկ, որ գլոխ կտրես էլ ինչ պըտի անենք։ Ըտիկ որ ըտենց ասաւ, Անդրանեկ չոմախ վերուց, ըտենց թալեց գետին չարդեց, ու էտ կնիկ առաւ գնաց։ Գնաց ընկաւ մէկ ամայի տեղ, տեսաւ որ մէկ քօշկ սարայ կայ, գնաց մտաւ էտ քօշկ սարի մէջ, նստաւ չուր յիրիկուն։ Յիրիկուն տեսաւ, իրեք խատ ախչիկ ձիով էկան իջան էտ սարայի դուռ, էկան ներս։

Էտ Անդրանիկ ուրին պախ ավեց, իտոնք չտեսան։

Էն մէ ախչիկ վերուց ասաւ, Թէ քրիր, յէսօր չէք ասե ինչ էլաւ։ Մէկ Անդրանիկ անվոր ադէմ էկաւ ծովի մէջ ընձի բռնեց, էննց չարդեց, որ չանս կը մըռմըռայ։

Էն մէկն ասաւ. Հա, էնի էն Անդրանիկն ա, որ գերեզմանի վրէն ընձի բռնեց, քեաշկա Թէ էնի դաս ըլնէր։ Անդրանիկն յէ-լաւ էն դեխէն էկաւ ախչիկների կուշտ, շատ ուրախցան, շատ պատվեցին, Թէ ըսենց կօչախ տղայ էկաւ պատահաւ մեզի, մի օր ճնաց էտտեղ, էն մէ օր իրեք քուրն էկան նստան մասլահաթ արեցին։

Էն չոչ քուրն ասաւ. Անդրանիկին ես քանուչորս սըհաթի խաստւմ ուրան քաղաք, ես առնեմ։

Միջնակ քուրն ասաւ. Տասներկու սըհաթ Անդրանիկ խաստւմ ուրան քաղաք, ես առնեմ։

Պզտիկ քուրն շատ կուվաթով ուժեղ էր, պզտիկ քուրն ասաւ. Ութը սըհաթի Անդրանիկին խաստւմ ուրան քաղաք, ես առնեմ։

Անդրանիկ բերին տվին պզտիկ քվոր, պզտիկ քուր ուր պշի-դէն խագաւ, Անդրանիկին, ուրան խետի կնոջ բերեց խաստւց Անդրանիկի խոր քաղաք։

Մէ ջուխտ խալխալ (ըլպուռկ) էր բերե խետ, էն խալխալ-ներ կախեց ուրան կնկան վրէն, քաղաքի մէջ խառնիս էլաւ, տա-րաւ խաղցրեց։ Էտ քաղքի վաղիրի ախչիկը վըքեն ուզեր էր ուրան տղին, էն էլ բերին խարսնիս առուն՝ խագաց, աշկն ընկաւ էն խալխալներին, գնացին յիրիկուն առունը, վաղիրի ախչիկը ու-րան ոսկի արծաթը քանդեց Թափեց գետին։

—Ես էն վաքիլի տղին չեմ առնէ։

—Ինչի՞ չես առնե։

—Ապա էն Անդրանիկի կնկայ վիզ խալխալ ըլի, ես վաքիլի խարս ընեմ, իմ վիզ չը՞լի, ես չեմ առնի։

Գնացին վաքիլին ասեցին։

վաքիլ ասաւ. Բան չկայ, ես էն խալխալ կը բերեմ։

վաքիլ գնաց Թագաւորի կուշտ, Թագաւորին ասաւ. Թագա-ւոր, չես ասի ինչ ի էլե, յէսօր գիշեր էն քեօ խօր խազնի վրաւի խալխալներ դաեր եմ։

—Ո՞րտեղ, վաղիր։

—Էլ կայ էն խալխալներից ախշարքի մէջ, ուրիշ Թագաւոր-ներին, խարցուց Թագաւոր։

—Չէ, Թագաւոր, չի գտնվե. քիոյ խէրն էն ուրան Թագա Թագաւոր վախտին իրեք միլոն փող էս մեր քաղաք մէ խին զար-գեար կայ, ավեց ընդուր, էտ խալխալներ էն զարգեար չինեց,

բերեց դրեց ուրան խազինի վրէն։ Մէկ ժամանակմ ճնաց, գողերն էկան խազնէն կտրին տարան, էն խալխալներն էլ տարան, յէտօր էրէվաց։

—Ո՞րտեղ ա, վաքիլ։

—Թագա գեալմա Անդրանեկ անվոր տղէն, մէկ ախչիկ առե նշանվէ, էն կնկայ վիդն ա։

Թագաւորն ասաւ. Գնացէք խանչէք էն տղին, բերէք։ Գացին Անդրանեկին կանչին բերին մօ Թագաւոր։

Թագաւոր խարցմունք արաւ. Անդրանեկ, էտ քոյ խալխալներ յոնւսա ա։

—Առեր եմ, Թագաւոր։

—Ո՞րդուց։

—Ծովից։

կանչեց էն զարգեարին էլ բերեց. վաքիլն գնաց գողտուկ զարգարին հարիր մանէթ փող տվեց, ասաւ. Զարգեար, որ Թագաւոր քեզնէ խարցմունք կանի՝ ասա, իմ շինած խալխալներն ա։

Թագաւոր խարցուց զարգեարին։

—Զարգեար, իմ խօր Թագաւոր ժամանակին, դու մեղի խալխալ շինո՞ր ես։

—Ա՛յ, Թագաւոր, շիներ եմ, բա։

—Ի՞նչքան փողի։

—Իրեք միլոն։

—Անդրանեկ, գնա խալխալներ բեր։

Անդրանեկ գնաց խալխալներ բերեց։

Թագաւորն առաւ խալխալներ տեսաւ, տեսաւ որ ֆալչիի (սուտ) բան ա.—Էս ծովեղէն բան ա, էս ձեռագործ չէ, զարգեար, դու սուտ կասես։

Թագաւոր բերեց կապեց օրթումի.—Զարգեար, դու կերթա՛ վա՛ս օր էսի քու շինած ապրանքն ա։

—Ա՛յ, Թագաւոր։

Բերեց Աչ-աւետարան դրեց, տէրտէր բերեց կայնըցուց, Անդրանեկին ասաւ. Աբի, երթվայ, Թէ իմն ա։

Անդրանեկն երթվաց, քաշվաւ կրաղ կայնաւ։ Զարգեարին բերեց։

Զարգեար հարիր օխտանասուն տարեկան էր, հարուր մանէթի համար զարգեարն յօրթվաց, պատռաւ։

Նոր Թագաւոր վաքիլին էլ աքսորեց, Անդրանեկին բերեց, արաւ ուրին վաքիլ, պահակեց։ Էնոնք խանին ուրանց մուրազին, մենք էլ խանինք մէր մուրազին։

Երկնքից իրեք խալաթ իջաւ, մէկ ասողին, մէկ լսողին, մէկն էլ գրողին։

ԴՆՈ ԶԱՄԱԾԻ ՀԵՔԵԱԹԸ

(Գիւլափիու, Մանուկիճներ*)

Ժամանակով մէկ թագաւոր կար, ունէր երկու տղայ, մէկ տղէն ավելր էր ուսումի, մէկ չէր ավէ։ Էն ինչ մեծ տղէն էր՝ ուսում չունէր, քաղաքի մէջ ընկերների հետ կը պըտըտէր, կուռէը կը խըմէր, քնի կանէր ուրան համար։ Օրերից մէկ օր ընկեր տղերքն ասեցին՝ թէ թագաւորի տղայ, որ վերան բաղին շինես քաղաք, շատ լաւ գըլնի։ Էն տղան էկաւ հօրից փող ուղեց, թէ փող տուր՝ վերան բաղին պիտի շինեմ քաղաք։ Թագաւորը շատ փող ավեց, գնաց վերան բաղին շիննեց քաղաք. որ շինեց պրծաւ՝ մէկ դիշերվայ մէջ տեսաւ որ քաղաքը խարաբ էլաւ, միլիոնաչափ փողեր գնաց կորուսաւ։ Էն ընկեր տղերքն ասեցին թէ գնա թագաւորէն փող ուղա, դոշուն ուղա, էթանք Զինամչինայ թագաւորի ախչիկ բերենք քեզի համար։

Թագաւորը կամք չարաւ, փող չավեց։ Թագաւորի պզտիկ տղէն յիմացաւ իրան ախպօր արարքը, դարձաւ ուրան վարժապետին խնդրվաւ, իրաւունք տուր, էթամ մօտ իմ թագաւոր։ Վարժապետ իրաւունք ավեց, ասաւ. Գնա։

Պզտիկ տղէն գնաց մօտ թագաւոր։ Թագաւորի ընդունակ տղէն էր, շատ ուրախացաւ։

—Որդի Ջան, ինչի համար ես էկիր։

Ասաւ. Թագաւոր, կը խնդրվեմ, փող տուր, էթամ վերան—բաղին շինեմ քաղաք։

Թագաւորն ասաւ, թէ Չոչ ախպորդ փող ավեցի՝ տարաւ փչացուց. քեզի յուսումի համ ավէ, դու հասկըցող ես, վերան—բաղին քաղաք չիլնի։

---

* Պատմեց *1912* թուի Օգոստոսի *11*-ին Գիւլաբլու գիւղում ծոյն գիւղացի Խաւիթ Խալաթեան անգրագէտ գիւղացին, *42* տարեկան, որի պապը գաղթել է այս գիւղը Մանուի Ֆիամբա-Թափա գիւղից։ Սա պատապում է անուանապահութեամբ եւ երկրագործութեամբ եւ ձեռնները յօդացներում հեթեաքներ է ասում։

Ինդրվաւ, ասաւ. Տուր։

Թագաւորը տղի խաթրէն չելաւ՝ ալեց։

Գնաց սկսեց շինել։

Տղէն գնաց ուրան վարժապետի կուշտը։ Վարժապետը հարցմունք արաւ, թէ ինչի՞ գնացիր թագաւորի կուշտ։

Տղէն ասաւ. Փող առայ՝ վերան–բաղին շինեմ քաղաք։

Վարժապետն ասաւ՝ թէ Վերան–բաղին քաղաք չկընի։

—Կընի, չըլնի, ահագին փող իմ ախպէրը փչացուց, չեմ թողէ կորուսի։

Վարժապետն ասաւ, թէ տղայ, եւի որ կը պատրաստես՝ արի մօտ ընձի, ես քե բան կը սորվեցընեմ։

Որ քաղաքը պատրաստեց. էկաւ մօտ վարժապետ. ասաւ. Վարժապետ, քաղաք պատրաստեցի։

Վարժապետն ասաւ, թէ գնա քաղաքի չորս կողմը ահագին, մեծ խանդակ արա։

Տղան գնաց, ֆայլա բռնեց, վարժապետի խօսքը կատարեց։ Գնաց մօտ վարժապետ, վարժապետն ասաւ, թէ գնա տաս տասնըհինգ աղչիկ, տաս տասնըհինգ էլ տղայ ժողվա, մէկ քանի ձեռք էլ նաղարա զուռնա, արաղ, գինի, խաց, կերակուր տար գնա էն քու Վերան—բաղի քաղաքը, խան էն բանձր օթախներու մէջ, թօ նաղարչին զարկեն, հաց ուտեն, ուրանց համար խաղան։ Զըթողես քնեն, չուր լուս խաղցըրու, Սէյրի ձի կայ ծովերի մէջ, էն ձիանքն են՝ կուգան Վերան—բաղին կը քանդեն։ Աղօթքան բացվելուն պէս էն ձիանք կը գան, մուղաթ կաց, նաղարա զուռնէն էն վախտը հաստատ տուր զարնել։ Էն ձիանքը որ նաղարի ձէնն առան, կը փախնեն կեթան, քու քաղաք կը մնայ սալամաթ։

Թագաւորի տղէն գնաց, վարժապետի խօսքը կատարեց, ձիանքն էկան, նաղարա—զուռնի ձէնն առան, փախան գնացին։ Մէկ խատ քուռակ մնաց էն խանդակի մէջ։ Լուս բացվաւ՝ թագաւորի տղէն յելաւ տեսաւ որ էտ քուռակն մէջ խանդըկին ա։ Գնաց, վարժապետին ասաւ. Մէկ քուռակ էն ձիանքից մացե մըջ խանդըկին։

Վարժապետն ասաւ. Գնա բեր, տուր պախ։ Քեզի պէտք կուգայ։

Թագաւորի տղէն գնաց, բերեց, ալեց պախ։

Մէկ ժամանակ մնաց, տղէն գնաց ուր ուսումին էլման։ Էն մէ օր թագաւորի տղէն, վարժապետ խըտ իրար կը խօսին։ Վարժապետ ծըծղաց։

Թագաւորի տղէն ասաւ. Վարժապետ, ինչի՞ ծըծղացիր։

Վարժապետն ասաւ. Ըսկի՛։

—Չէ, իմ խօսքի վրէն ծըծղացիր, վարժապետ։

Վարժապետ ասաւ. Չէ, քու լեզվի վրէն չծըծղացի։ Քու ջոջ ախպէրը գացէ թագաւորի եախէն կորէ, վող տուր, ղոշուն տուր ընձի, էթամ Զինմաչինա թագաւորի աղչիկ բերեմ ընձի խամար։ Թագաւոր կամք չանայ, վող չի տայ։

Պզտի տղէն վարժապետին խնդրվաւ՝ Թող էթամ մօտ թագաւոր։ Վարժապետ թողեց։ Գնաց մօտ թագաւոր։ Թագաւոր ուրախըցաւ ուր տղի գալը, ասաւ թէ ինչի՞ ես էկէ, ինչ կասես։

—Թագաւոր, մէ բան եմ լսէ. իմ ախպէր վող կուզայ չես իտայ. կը խնդրվեմ տուր։

Թագաւորն ասաւ, թէ կը տանայ, կը վչացնայ։

—Բան չկայ, թագաւոր, խօ չի խըլըսի։ Ես կաշխատեմ էն պակասորդ կը բերեմ։

Թագաւորն տղի խնդիրքը չմերժեց, տվեց։ Վող տվեց, ղոշուն տվեց, տղէն գնաց։ Գնաց Թըխ Զինմաչին։ Պզտի ախպէրն դարձաւ գնաց վարժապետի կուշտ։ Վարժապետ խարցուց, ասաւ. Ինչի՞ գացիր թագաւորի կուշտ։ Տղէն ասաւ. Գացի վող ուզի, տվեց իմ ջոջ ախպօր, գնաց Զինմաչինա թագաւորի ախչիկ բերայ։

—Չկանայ բերայ. ղինքն էլ կը վչանայ. ուր ղոշունն էլ։

—Ընչի՞, վարժապետ։

—Զորս բոլոր խանդակ ա, չըկանայ էրթայ մօտ թագաւորի ախչիկ։ Մէկ ամսվայ ճամբախ ա։

Ախպօր սիրտ մոմոտաց։ Ասաւ. Վարժապետ, ես էլ կէթամ։

Վարժապետ չըթողեց։ Տղէն լացաւ։ Վարժապետն ասաւ. Մի լաց, կը թողեմ կէթաս։ Մաց, թող հինգ վեց օր ընցնի, խըտ իրար էթանք։

—Էլ չենք կանայ խաանի։

—Ընտոնք մի ամիս էրթան, մենք մի օր կէրթանք կը հասնինք, իմ ձին քամուց ա, քու ձին էլ խրեղէն ա։

Մնացին չուր տասնըհինգ օր, վարժապետն ասաւ. Թագաւորի տղայ, գնա՛ քու ձին հեծի, արի։

Գնայ էն ծովի խրեղէն ձին խեծաւ, գնաց վարժապետի կուշտ։ Վարժապետն էլ ուր քամու ձին հեծաւ, գնացին Թըխ Զինմաչին։ Մէ օր գնացին, խասան տանըհինգ օրվայ ճամբախ։ Գացին տեսան, թագաւորի տղէն ուր ղոշուն, բոլոր լցված խանդակ, չեն կանայ դուս հըլէ։ Անօթի, ծարաւ մացած դատ։

Ջոջ ախպէրն պզտի ախպօրը տեսաւ, ուրախըցաւ, իմ ախպէրն էկաւ, խասաւ ընձի։ Ախպէր ջան, մէ իլլաճ արա մեզի։ Ըստուց չենք կանայ դուս ըլնէ, կը մեռնենք։

Թագաւորի պզտի տղէն վարժապետին ասաւ, թէ ինչ անենք։

Վարժապետն ասաւ. Թագաւորի տղայ, ես չեմ կանա էս խանդակը հընցընէ, քո ձին խրեղէն ա, դու կը հնցընես։ Իմ ձին քամուց ա. ես էլ գըլնեմ խանդակ։ Ուռնաը կը ճնայ քեզի։ Կը հընցընես կնթաս Թագաւորի ախչկայ կուշտ, մի վախեցի, հերսոտ խօսի, ես դաս եմ։

Տղէն հընցաւ, վարժապետն էլ հընկաւ խանդակ։ Թագաւորի տղէն գնաց մօտ ախչիկ, ասաւ. Ախչկան ասէք գայ դուս։

Գնացին ասին. Թագաւորի ախչիկ, մէկ տղայ էկեր ա քեզի կը դանչայ։

Թագաւորի ախչիկ յելաւ դուս. տեսաւ որ մէ տղայ ձիան վրէն նստուկ ա. Ինչ կասես, տղա։

Տղէն ասաւ՝, թէ արի էթանք։ Ես էկեր եմ քեզի առնելու։

—Քեզ չեմ առնէ։

—Ինչի՞, ինձէն լաւ տղի պատ առնես։

—Հըպա դու ի՞նչ ես, ինչ տղայ ես որ, եսիմ հայ ես, Թուրք ես։

— Ես հայ եմ, լաւ տղայ եմ։

—Էս խանդակը չմալ հընցար էկար։

—Իմ ձին խրեղէն ա, որ ուզենամ մկա քաղաքը կը չարդեմ։ Արի խեծի իմ ձիան թարք՝ էթանք։

Ախչիկն ասաւ. Ի՛յ տղայ, կտոր կտոր մի էլի, ես Զինամաչինայ Թագաւորի ախչիկն եմ. մկայ որ հայ տամ՝ դոշուն քեզի կը չարդի։

—Դու չի՞ս խասկընայ որ էս ձին խեծնող, էս խանդակ հընցընող դոշուն չկանայ վրէն։

—Թագաւորի տղէն էկեր ա ընձի կառնի, կասես թէ Դեվ Զամանի անկճի ուլինկը բերէ ընձի նշան։

Տղէն ասաւ. Դեվ Զամանի անկճի ուլինքը վի՞ր տեղն ա։

Ետ դարձաւ էկաւ ուր վարժապետի կուշտ։ Վարժապետն ասաւ. Թագաւորի տղայ, ի՞նչ արիր։

—Ախչիկն էսինց ասաւ ընձի, վարժապետ։ Գնա դեվ Զամանի անկըճի ուլինքը բեր ինձի նշան, որ ես քեզի առնեմ։

Վարժապետն ասաւ. Թագաւորի տղայ, չեմ կանայ ես խետ քեզի գայ։ Ես որ խետ քեզի գի՝ քո բան խանդիստ կըլնէը, գնա՛ քու բան Աստուած յաջողայ։ Ախչկան ասա՝ մեզի թոզ պախա, չփչանանք։

Թագաւորի տղէն ետ դարձաւ գնաց մօտ ախչիկ, ախչկան ասաւ. Թագաւորի ախչիկ, իմ խետի դոշուն հըմէն թափած քու խանդակ, ես կնթամ դեվ Զամանի անկըճի ուլընկի, իմ դոշուն լաւ կը պախես, որ ետ դարցի էկայ տեսայ՝ իմ դոշուն լաւ չես պախէ՝ իմ կռիւ կռիւ ա։

Թագաւորի ախչիկ Թագաւորի տղին ասաւ. Թագաւորի տղայ, էնենց պախեմ, վարդ փողմիշ չըլնի։

Թագաւորի տղէն ասաւ. Է՛, մնացի բարով, ես գնացի, քառասուն օրէն ետ էկայ՝ էկայ, չեկայ՝ չեկայ, ինչ գինաս էն արա։

Թագաւորի տղէն ձին քշից գնաց։ Գնաց ընկաւ մէ ամայի տեղ, գնաց մէկ քոշկ սարի պատահաւ. տեսաւ որ մէկ ախչիկ էտ քոշկ սարի մէջն ա. խարցուց Թագաւորի տղէն. Ախչի, դու ինչ ախչիկ ես։

—Տղայ, ես Սիվատակ դէվի կնիկն եմ, դու իմաձ էկար էստեղ, էսի Սիվատակ դէվի խողն ա, էն Սիվատակ դէվ քեզի չտեսնաւ։

—Չէ, չըտեսաւ։

—Դէ արի, քեզի պատվեմ, յելի գնա, քանի Սիվատակ դէվ չէ էկէ, որ էկաւ՝ քեզի կսպանի, ափսոս ես։

—Չէ, չէ, ախչի, մի վախեցի, էն Սիվատակ դէվ չըկանայ վըր ընձի։

Չիուց իջաւ էտ սարայի հաւուղի վրէն նստաւ։ Սիվատակ դէվն էկաւ։ Էկաւ ասաւ. Խողածին, դու էստեղրանք ինչ կը պըտրտես։ Կըուվենք։

—Կուվենք։

Յեան կուվան։ Թագաւորի տղէն դէվին յաղթեց, ըսպանեց։ Գիշերը մնաց էտտեղ գոնախ, առաւօտ յելաւ, ուր ձին խնծաւ, գնաց։ Ախչիկն ասաւ. Թագաւորի տղայ, դո՛ր կերթաս։

—Թէ ինձի մուրազ ունես, մուրազիս կերթամ։

—Ծու մուրազն ինձի չե՞ս ասէ։

—Կասեմ։ կերթամ դէվ Զամանի անկըճճի ուլունքին։

—Վա՛յ, քու ղրկողի վիզը կոտրի. շատ գոռն է, չես կանայ բերի, ափսոս ես, մի գնա։ Դէվ Զամանի անկըճճի ուլինք ուզողը ընձենէ շատ լաւ ա։

—Չէ, ախչի, ուխտ եմ արէ, պէտք է բերեմ։

Գընաց հընցաւ Սև դէվի խողը։ Գնաց տեսաւ մէկ սարայի, մէկ ախչիկ էլ էտ տեղ կայնուկ ա։

—Խողածին, ընչի՞ ես էկէ, ասաց ախչիկը։

Էկեր եմ կերթամ դէվ Զամանի անկըճճի ուլինքին։

—Ապա էն Սիվատակ դէվ քեզ չը տեսաւ։

—Տեսաւ, ախչիկ, ըսպանեցի։

—Շատ լաւ արեցիր, տղայ ջան, էն իմ քվոր մարդն էր։ Ամի քեզի պախեմ, Սև դէվ չիդայ քեզի տինայ, ափսոս ես, քեզի կսպանայ։

—Չէ, ախչի, մի վախեցի, Սև դէվը դուբպան կանեմ քեզի։

Սև դէվն էկաւ, տեսաւ որ մէկ կորիչ տղայ կայնուկ ա ու-

բան սարայի հաւզի վրէն։ Բարև տվեց, ձեռ կապեց կայնաւ։ Հա, Թագաւորի տղայ, ինչի՞ ես էկե։

Թագաւորի տղէն ասաւ. Էկեր եմ կեթամ դէվ Զամանի անկըճի ուլնքին։ Դէվ ախպէր, ինձի ընկերութեն չե՞ս կանայ անէ։

—Չէ, Թագաւորի տղայ, Զամփուլատի խող չեմ կանայ անցնէ։ Քեզի կը տանէմ չուր Զանփուլատի հողի բերան, ու ես կը դառնամ. եվի որ դու Զանփուլատին յաղտեցիր, էն վախտ ես քու կուշտ կայնուկ եմ։

Մնացին առաւօտ, Սև դէվ տարաւ Թագաւորի տղէն ճամփեց։

Թագաւորի տղէն գնաց Զամփուլատի սարայի կուշտը։ Զանփուլատի կնիկ որ տեսաւ Թագաւորի տղէն, վայ ափսոս, ըսաւ, ինչի՞ էկար։ Զանփուլատ մկայ կուգայ կեզ կսպանայ։

—Չէ, ախչիկ, մի՛ վախեցի։

—Ինչի՞ պիտի չվախենամ. ոչ ընտրան թուր կը կտրա, ոչ էլ գուրզ քեար կանայ, էրկաթից չան ունի։

—Մի՛ վախեցի, ախչիկ, Աստուած ողորմած ա։

Թագաւորի տղի ձին էլաւ լեզու, խօսաց. Ասաւ, թէ տղայ, էտ ախչկից խարցու, թէ Զանփուլատի խոքին ո՞ր տեղն ա։

Ախչիկն ասաւ. Մըչ գութուն ա, իրեք հատ ճընճղուկ ա։

Ձին ասաւ. Թագաւորի տղայ, Զանփուլատ որ կուգայ, կասայ. Կովենք։ Մի՛ վախեցի. ասա. Արի՛ կովենք։ Որ կասայ. Գիւլաշ բռնենք, դու ասա՛. Չէ, ձիանք խեճնենք, կըռվենք, էնիկ կը խեճնի ուր ձին, դու էլ կը խեճնես ընձի, էնի կասա, թէ գիւրզ քցի։ Բու գիւրզ ընտուր չի յաղթայ։ Որ էնի գիւրզ քցեց, ես հաւալամիշ կըլնեմ, քեզի ընձի վրայ դայիմ պախիր։

Թագաւորի տղէն ասաւ, թէ շատ լաւ կըլնի։

Զանփուլատն էկաւ, ասաւ. Էը, հողածին, ինչ մարդ ես։ Թարպիրդ տես կովենք։

—Կովենք։

—Գիւլաշ կպնենք։

—Չէ, Զանփուլատ ախպէր, ձիով կովենք։

Խեճան ձիանք, ըսկսեցին կըռվել. Զանփուլատն ասաւ. Հողածին, գիւրզդ քցի։

Թագաւորի տղէն ուրան գիւրզ քցեց. մէ բան չելաւ Զանփուլատին։

Զանփուլատն ասաւ. Թագաւորի տղայ, դայիմ պախա քեզի, իմ գիւրզն էկաւ։

Գիւրզը քցեց Զանփուլատ. Թագաւորի տղի ձին հաւալամիշ էլաւ, Զանփուլատի գիւրզն գնաց առաւ ուրան բաղանը (իւր պատը) շրջեց. Զանփուլատն իշկաց, տեսաւ որ Թագաւորի տղէն յե-

լե երկինք. աչքը բռնեց Թագաւորի տղին կիշկէր, ձինը հեծաւ, Թափքով գարկեց Զանփուլատի ճակտի մէջ, Զանփուլատի խելք գնաց, ընկաւ։ Թագաւորի տղէն ձիուց իջաւ, գնաց ճնճուղները մորթեց, Զանփուլատը մեռաւ։ Սև դէվը էկաւ հասաւ՝ գնացին դէվ Զամանի հողը։ Տեսան որ դէվ Զամանի զոշուն, դէվ Զաման, չոպաններ, օչխարներ բոլորը ինչ անասուններ կայ, քնուկ են, տասըհինգ օր պըտի քնեն։

Սև դէվ Թագաւորի տղին ասաւ։

Թագաւորի տղայ, էս ինչ լաւ էլաւ։

Գնացին, ըսկի մարդ խապար չելաւ, քընուկ ին յըմէն. գնացին դէվ Զամանի օթախը, Սև դէվն ասաւ Թագաւորի տղին. Այսիկ դէվ Զաման ա, ըսպանա, անկըճի ուլինք հանենք, տանենք։

Թագաւորի տղէն ասաւ. Սև դէվ, չեմ ըսպանէ, քնուկ ա, մուխանաթութեն կըլնի, քնուց խանենք վեր, զուվաթներս յաղթեց՝ ըսպանենք։

Ինչքան բռացին, չիմացաւ. երկաթը տաքացըրեցին, տարան ճխտին ոտներին, էրեցաւ, որ յիմցաւ. յիմցաւ յելան կռվան։ Թագաւորի տղէն դէվ Զամանին ըսպանեց։ Անկճի ուլինքը խանեցին։ Դէվ Զամանի կնկան ասեցին. Դէվ Զամանը ըսպանինք։

Կնիկն ասաւ. Թագաւորի տղայ, արի քեզի պահեմ, ուր է ուր չէ՝ դէվերը կուգան՝ քեզի վնաս կուտան։

Թագաւորի տղէն ռազի էղաւ, դէվ Զամանի կնիկ էնոր պահեց, յելաւ յերթիկ պռռաց. Դէվեր, արէք, դէվ Զամանին ըսպանած ա։ Դարձաւ էկաւ դէվ Զամանի քուրքն դրեց տղի կուշտ, ասաւ, թէ տղայ, դէվեր կուգան՝ խըտ ընձի դավի կանեն, կասեն թէ դու խողածին իր՝ մեր Թագաւորին տվիր ըսպանել, ես կասեմ. Չէ, ես խապար չեմ, Շահ Ղարագեօզ որ գուգայ՝ ես քեզի նշանց կուտամ՝ էս քուրքը կը քցես ընտրա Թևերի վրէն, էնի գըլի Թագաւոր, էլ քեզի բան չեն ասէ։

Դէվերն էկան, դէվ Զամանի կնկայ հետ կռիւ կանեն, Ղարագեօզ շահ դէվ Զամանի վազիրն էր, յառաջացաւ՝ դաւի կանէր. դէվ Զամանի կնիկ նշանց տվեց Թագաւորի տղին։ Թագաւորի տղէն քուրքը վերուց, քցեց Ղարագեօզ շահի Թևերուն, յելաւ Թագաւոր։ Բոլոր դէվերն էկան գըլոխ իջեցուցին, Թէ էս մեզի Թագաւոր։ Դէվ Զամանի կնիկն խընդրվեց Թագա Թագաւորին, իմ խասեաթ ձեր մէկ չէ, Թագաւոր, ես խողածին եմ, դուք վայրենի, ինձի բաց Թող, ես էթամ։ Բերին Մալաքի դէվը տվեցին դէվ Զամանի կնկան, ահագին մալ դուվաթ, ապրուստ տվեցին, Մալաքի դէվ չըլկեց, Թագաւորի տղէն էլ խեաթ՝ միասին էկան։ Զանփուլատի կնիկն էլ վերցին, Սև դէվու կնիկն էլ վերցին,

Սիվտակ դէվի կնիկն էլ վերցին, էկան յետան Զինմաչինայ քաղաք։

Էտ թագաւորի տղէն ուրան Մալակ դէվը թողեց քաղքի ղրաղ, ձին խեճաւ, գնաց մօտ Զինմաչինայ թագաւորի ախչիկ։

—Էկայ, ախչի, իմ ղօշուն լաւ պահե՞ր ես։

—Հա, թագաւորի տղայ, իմ ուզածս բերե՞ր ես։

—Բերեր եմ, ախչի։

—Էթամ իմ ղօշուն տեննամ։

Թագաւորի տղէն գնաց ուր ղօշունի մօտը, վարժապետ, ուրան ախպէր շատ ուրախացան։

—Բարով տեսանք քեզի, թագաւորի տղայ։ Սաղ սալամաթ էկե՞ր ես, ուրախութենով։

—Հա, վարժապետ, շնորհակալ եմ քեզնից. քու տված ուսումը ինձի պրծուց։ Թագաւորի ախչիկ ձեզի լաւ պահե՞ց, նեղութիւն չտվե՞ց։

—Հա, թագաւորի տղայ, շատ լաւ պահեց մեզի։

—Դէ մացէք էտտեղ, ես էթամ թագաւորի ախչկայ կուշտը, ասեմ գայ ձեզի հանայ։

Գնաց թագաւորի ախչկայ կուշտը։ Թագաւորի ախչկան ասաւ. Իմ ղօշուն էնտեղից խան, քու ուզածը տամ։

Թագաւորի ախչիկն ուրան մատնիքն օլօրեց, քաղաքի բոլորի խանդակը դզվաւ, թագաւորի տղի ղօշուն յետաւ դուս։ Մէկ ժամանակ ճնացին էտտեղ։ Դէվ Զամանի անկճի ուլինք տվեց թագաւորի ախչկան, նշանեց ուրին հարս։ Էլաւ ուրեն ղօշունը, թագաւորի ախչիկը, նաղարով զուռնով, խաղ խառնիսով, Մալակի դէվն էլ խետ, էկաւ Թըխ ուր խօր քաղաք։ Էկաւ խասաւ վերան —բաղի քաղաքը։ Բերեց ուրան ջոչ ախպէր պատրաստեց թագաւոր. Զինմաչինայ թագաւորի ախչիկը տարաւ պսակեց ուր ախպօր վրէն։

Զինմաչինայ թագաւորի ախչիկ ասաւ. Թագաւորի տղայ, հըպա ընձի լինչի խաբեցիր։

—Ես քեզ ե՞վ խաբի, թագաւորի ախչիկ։

—Ա,պա կասիր կը տանեմ ինձի խամար։

—Չէ, ինձի խամար չէ, իմ ջոչ ախպօր խամար է։ Ես քեզի հարս եմ ասէ, որ պսակվես ընձի վրայ, շատ մեղք կըլնի. մեր կանոն չի սիրայ։

Բերեց պսակեց ուր ախպօր վրայ։ Դէվ Զամանի կնիկն էլ ղինքն առաւ։ Վերան—բաղին շինեց ահագին քաղաք։ Մէկ ժամանակ ճնաց, թագաւորը մեռաւ, թագաւորի պղտի տղէն դրեցին թագաւոր։ Էն մարդեր խասան ուրանց մուրազին, մենք էլ խասնենք մեր մուրազին։

ՀԱԶԸ–ԴԻՂՊԱՐԻ ՀՆՔԾԱԹԸ

(Գիւղաբոլու Մակուեցիներ *)

Ժամանակով մէկ թագաւոր կար, ունէր քառասուն տղայ։ Էտ թագաւորն ասաւ, թէ ես պըտի ըյնեմ երկրներ ման գամ, էնինց մէ տուն գտնեմ, որ մէ մարդի քառասուն աղչիկ ըլնի, ուզեմ իմ քառասուն տղին, օր ուրանց մէջները խլրտմունք չըլնի, չը բժրկտուեն, խզճընան։

Էլաւ ուրան վաղիը, վաքիլ վերուց, բաւականի վող վերուց, գնաց երկրները ման էկաւ. մէկ տուն գտաւ, քառասուն ախչիկ, ուզեց ուր քառասուն տղին։ Էկաւ ուրա տունը, ուրան մարդիկը էկան թագաւորին տեսուբան։

—Թագաւոր, դո՞ր գնացիր։

—Գնացի իմ տղէք նշանի, մէկ տուն քառասուն ախչիկ գտայ, նշանի իմ տղերքին։

Մէկ ժամանակ ետաց, թագաւոր պատրաստութեն տեսաւ, գնաց խարոնները բերելու։ Տղէները յըմմէն տարաւ. բաւականի ղոշուն տարաւ։ Պզտի տղէն չգնաց։

Թագաւորն ասաւ. Ինչի՞ չէս գայ։

Ասաւ թագաւորին պզտի տղէն. Թագաւոր, որ մենք յըմմէն գանք, մեր տուն կառավարող չկայ, դու գնացէք։ Ես կը մնամ տուն կառավարեմ, թէ էս տեխէն էթալու, թէ էն դեխէն դառնալու Ղըզըլ—Խարաբէն չը մնաք։

—Ինչի՞, թագաւորի տղայ։

—Էնտեղ վտանգաւոր տեղ ա, լաւ տեղ չէ։

—Շատ լաւ, կասէ, շատ լաւ կասես։ Իմաստուն էր պզտի տղէն, թագաւորին յայտնի չէր թէ ուրան տղէն իմաստուն ա։ Գնացին մարդիկը։ Գնացին խասան էտ գեղը, թագաւորի խնամու տունը, իրեք չորս օր մացին էտտեղ, ուրան խարոնները պատրաստեց, նաղարով, զուռնով, խաղով, ուրախութենով վերուց էկաւ։ Էկան չուր Ղըզըլ—Խարապէն։ Ղըզըլ—Խարապէն շատ լաւ

*) Պատմեց 1912 թ. Օգոստոսի 11-ին Գիւղաբոլու գիւղում ծոյն Դաւիթ Խալաթեանց Աւետիսեանը։

տեղ էր, ծաղիկ ծաղկունքով տեղ էր, էտ տեղին շատ փափաքան, ասեցին. Գիշերը մնանք ըստե։

Թագաւորն ասաւ. Իմ պզտի տղէն ասաւ. Մի մացէք էտտէ։ Ես երկուղ կանեմ։

Էն իրան ղոշունի մարդիկն ասին. Թագաւոր, ինչ կայ. Թագաւոր, մի վախեցիր, մենք դաս ենք։ Մէկ մարդիս վրայ հարիրջան գայ՝ չկանայ մեզի յաղթայ։

Զատրներ զարկին, մնացին էտտե։

Աւաւօտուն յելան, տեսան որ մէկ վիշապ էկէ ուրանց բոլոր փաթթէ, պոչ գլոխ դրէ մօտ յիրար, ինչպէս թէ մէ բատամ։

Թագաւորն ասաւ, թէ իմ տղէն կասէր Ղըզըլ—Խարապէն մի մացէք, մենք չլսանք, հըպը ես ինչղ պըտի ընցընենք, ինչղ պըտի էթանք։ Թագաւորը լաց էլաւ, ասաւ. Իմ տղէքներ էլ կոբուսան, իմ խարսներ էլ։

Ղոշունի մարդը ուրանց թվանքները պատրաստին, ուրանց թրերը պատրաստին, խեծան ձիանք, ասին. Թագաւոր, մի վախեցի, մկայ կըբրտենք էս վիշապին։

—Չէ, չէ, անխելք մարդիկ, էս ինչ ա որ դու ըստրան բըրտէք։ Ո՞չ թվանք կսպանայ, ո՛չ թուր կը կըտրայ, որ ձեռք տվիք, մեր բոլորին դուլ (կուլ) կուտա։

—Ապա ինչ կասես, թագաւոր։

—Արէք մէկ չորս իշխան մարդ ինձի խետ, էթանք մօտ էտ վիշապ, տեննանք մեր մեղք ինչ ա։

Գնացին մօտ էտ վիշապ։

Խարցուց թագաւոր. Վիշապ ախպէր, մեր բոլոր ինչի՞ ես բռնէ։ Կը խնդրվեմ մեզի ճամփա տուր, էթանք, մեզի մի ըսպանա. իմ տըղէներ մուրազի վրայ էն, որ ըսպանես, քեզի շատ մեղք կըլնի։

—Չէ, չէ, թագաւոր, բան չեմ ասէ։

—Ապա ինչ կասես։

—Քո պզտի տղէն ծուր ա։

—Իմ պզտի տղէն տուն ա, վիշապ ախպէր։

—Էն քո պզտի տըղէն բէ տուր ընձի, տեղ կողորկեմ, ձեզի ճամփա տամ՝ գնացէք։

—Վիշապ ախպէր, ճամփա տուր, էթանք, տղէն օղորկեմ գայ։

—Չէ, չէ, թագաւոր, կը խաբես։

—Չեմ խաբէ, վիշապ ախպէր։

—Թագաւոր, ճամփա կըտամ կէթաս, չը խաբես, օղորկես գայ, որ խաբեր ես, տղէն չէկէ, կուգամ քաղքիդ բոլորը կը փաթթեմ, յէմմէն կսպանեմ, ջրասուզ կանեմ, քու թագաւորութեն կը վերջացուեմ։

—Ջէ, չէ, վիշապ ախպէր, չեմ խաբէ, կօղօրկեմ գայ։

Վիշապ ճամբախ տվեց թագաւորին, ուր ղօշունին, ուր տղերքին, ուրան խարտներին, էկան խասան ուրանց քաղաքը՝ նիաթ, տխուր։

Պզտի տղէն խարցուց. Թագաւոր, ինչի ուրախութեն չէք էնէ։

—Որդի ջան, ջանս կը ցաւայ, նեղացեր եմ։

—Ջէ, չէ, թագաւոր, ասա տեննամ։ Ես քեզ չասի՞ Ղըզըլ—Ծարապան մի մաց, վիշապն էկաւ ձեզի բըռնեց։

—Ծա, որդի ջան, էկաւ, բռնեց։

—Ի՞նչ ասաւ, թագաւոր։

—Ինձի կուզէր։

—Վնաս չունի, թագաւոր, ես կերթամ։

—Ջէ, որդի ջան, մի գնա։

—Հապա ինչ, թագաւոր։

—Ծափեցի, ճամբախ տվեց էկանք, էլ բան չկայ։

—Թագաւոր, էնի խափվող մարդ չէ. որ ես չերթամ, կուգայ քաղաքի բոլոր կը բռնայ, յըմմէն կը կոտորայ, ես կըլնեմ պարտական։

—Դու, թագաւոր, իմ ախպէրներ պտակա, իմ կնիկն էլ պախայ՝ քառսուն օր իմ ճամբախն իշկայ, էկայ՝ էկայ, չեկայ՝ զաթի չէկայ։

Շնորհակալ էղաւ ուրան հօրից, ուրան մօրից, ուրան ախպէրներից, խարտներից. Իմ ճամբախ իշկացէք չուր քառսուն օր, Է կեցէք բարով, ես գացի։

Թագաւորի տղէն գնաց։ Գնաց, խասաւ Ղըզըլ—Ծարապէն։ Վիշապը տեսաւ որ տղէն էկաւ, սարից յիջաւ։ Հա, թագաւորի տղայ, էկածը։

—Էկայ, վիշապ ախպէր։

—Գինաձա ինչի իմ ղանչէ քեզի։

—Ինչի՞ ես ղանչէ, վիշապ ախպէր։

—Էթաս Հազէ—Դիլպար բերես։

—Է՛ վիշապ ախպէր, եսիմ Հազէ—Դիլպար դո՞ր ա։

—Գնա խարցընելով գտի։

—Ո՞ր կողմն էթամ։

—Գնա թըղ արևմուտ։

Տղէն գնաց։ Գնաց հասաւ մէկ եօթ ճամփա բաժին. տեսաւ որ մէ խալխվոր մարդ նստէ ըտտե, բարև տվեց էտ խալխվորին։

Էտ խալխվորն ասաւ՝ թէ տղայ, դո՞ր կերթաս։

Թագաւորի տղէն ասաւ. Կերթամ Հազէ—Դիլպար բերելու։

—Թագաւորի տղայ, էն վիշապն օղորկեց քեզի։

—Այ, խալիվոր, էն վիշապ օղորկեց ինձի։

—Թագաւորի տղայ, ես տասնըհինգ տարեկան ի, Հազէ—Դիլբարի սիրուն նըստեր եմ էս ճամփու վրայ, ինչքան մարդ գնացած է Դիլպարին, իմ կշտով էկան ընցան, մէկն ընձի բարև չըտվեց. դու բարև տվեցիր, ես քեզի խրատ կըտամ։ Որ Աստուած յաջողեց Հազէ—Դիլպար որ բերեցիր, բեր տեսնեմ ես, քեզի խալալ ընկի, տար գնա։ Ահա իմ մուրսիկ քեզի մէ մազ կուտամ, ինչ վախտ որ նեղի ընկար, էս իմ մազը տու կրակ։ Մէկ չամի գերան կըբերայ, կը քցայ քու դէմը Հազէ—Դիլբար, մէ քեչէ ուրագ կըտայ քեզի, էն չամի գերան էն քեչէ ուրգով պըտի ջարդես, գիշեր, մութ տեղ։ Էս իմ մուրսի մազը կը քաշես էն քեչի բերանը՝ կըընի պողպատից ուրագ, էն չամի գերան կը ջարդես։ Որ կերակուրները էփի, ձեռքիդ ուրագ որ քցիր գետին, գըընի քեչայ։ Դէհ գնա՛յ, Աստուած քու բան յաջողէ։

Գնաց էտ մարդը պատահաւ մէ ջրի, տեսաւ որ մրջըմներ էկած է, ջուրը պըտի ընցընին, չեն կանայ։ Էտ Թագաւորի տղէն խղճահարվաւ, էտ ջրի ղրաղ ցախեր կար, բրդեց, բերեց քցեց ջրի վրայ, արաւ կամուրջ։ Մրջըմներ հընցան ջուր։ Թագաւորի տղէն էլ ջուրն ընցաւ, էն մրջըմների ջոկը Թագաւորի տղին ասաց. Թագաւորի տղայ, դո՞ր կերթաս։

—Մրջում ախպէր, կերթամ Հազէ—Դիլբարին բերելու։

—Շատ զոռն ա, չես կանայ. Թագաւորի տղայ։

—Մենք էկերենք էս ջրի ղրաղը, կը թափենք էս ջուրը, ճամբան չկար որ ընցընինք, մէկ մարդ մեզի տէրութեն չէր էնէ։ Դու էկար կարմունջ շինիր՝ ջուրն ընցանք, լաւութեն արեցիր մեզի, շնորհակալ ենք. մէ խրատ կըտամ քէ, Թագաւորի տղայ. Հազէ—Դիլբար մէ խալվար կորեկ, մէ խալվար սուլբուտ (կերաւատ) կը խառնայ յիրար, կը լցայ մէ օթախի մէջ, քեզի ճրագ չի տայ, կրակ չի տայ, մէ գիշեր պըտի ջոկես ընտրանք իրարուց։ Ջոկիր՝ Հազէ—Դիլպար քեզի կառնի, չջոկիր՝ կսպանայ։ Ես իմ թեւից մէ թեպուր կտամ քեզի, ինչ վախտ որ էտենց կանայ՝ իմ թեպուր կըտաս կըրակ, մենք կուգանք կը խաւնենք։ Դէհ գնա, Աստուած քո բան յաջողի։

Թագաւորի տղէն շնորհակալ՝ էլաւ ու գնաց։ Գնաց պատահաւ մէ ջաղացպանի. տեսաւ որ էտ ջաղացպանը բոբիկ, գլոխ բաց, շորերը խանուկ մտի ալուրտուն, ջաղացն ալուր կաղայ. էտ մարդն էլ կը վերու լցու ուրան բերան. մէ տեխից էլ կասէ. Ես անոթի մեռայ։

Թագաւորի տղէն բարև տվեց, էտ ջաղացպանին մաջալ չկար, Թագաւորի տղի բարև չառաւ, որ դան իջաւ, ջաղաց կանաւ, ջա-

ղացպան Թագաւորի տղի բարևն առաւ։ Թագաւորի տղայ, ո՞ր կեթաս։

—Ջաղացպան, կէթամ Հազէ—Դիլպարին առնելու։

—Վիշտն օղօրկեց քեզի։

—Հա, Ջաղացպան։

—Ջօռն ա, չես կանայ բերէ։ Ջանդըկից բաւան ա շինէ Հազէ—Դիլպար, գլխից բուրջ, մացէ մէկ հատ պակաս։ Թագաւորի տղայ, դու ինձի բարև տվիր, ես քե մէ խրատ տամ։

—Ասա, Ջաղացպան։

—Էս իմ մուրքից մէ մազ կըտամ քեզի, քառասուն ղազան կերակուլ, քառասուն օչխար մորթեն, էփեն դնեն ղազանների վրայ, ևօթը Ջաղաց գախընցագաղ ալուր աղայ, Թըխեն խաց, մէ գիշեր մէննակ պըտի ուտես էտի, խըլըսցընես, որ Հազէ—Դիլպար քեզի առնի. էն ժամանակ իմ մուրքի մազ կըտաս կըտակ, ես որ խաասայ, քե բան չունիս։ Գլոխ քար, մէ օր էլ է կըտանամ։ Դէհ գնա, Աստված քու բան յաջողայ։

Գնաց խաասաւ Հազէ—Դիլպարի քաղաք. մէ օր, երկու օր քաղքի մէջ պըտըտաւ, քաղքի ամէն վերը պէր յիմցաւ, գնաց նստաւ վըր Հազէ—Դիլպարի բինակ—տաշուն (խնամախօսի քար)։

Հազէ—Դիլպարի ջահիէքը Հազէ—Դիլպարին ասին. Հազէ—Դիլպար, քեզի ուղող է էկէ։

Հազէ—Դիլպարն յէլաւ դուս, տեսաւ որ մէ լաւ երիտասարդ տղայ. Հա, Թագաւորի տղայ, ընչի՞ ես էկէ։

—Հազէ—Դիլպար, էկեր եմ քե առնելու։

—Կանաս իմ սրած բաները կատարէ, որ առնեմ քեզի։

—Աստված օղորմած ա, Հազէ—Դիլպար։

—Չես կանայ, Թագաւորի տղայ, լաւ տղայ ես, ափսոս ես, քեզի կսպանեմ, սրի էթանք քեզի լաւ պատվեմ, ճամփու դնեմ, գնա։ Բադանից մէ Ջանդակ է պակաս, շատ քեզի պէս Ջահիլներ էկած ա, չկարցած ինձի տանել, ըսպաներ եմ։

—Չէ, Հազէ—Դիլպար, ինչ կանես սրա, ես կայնուկ եմ։

Հազէ—Դիլպար պանչեց ուր Ջահիէքին. Գնացէք մէկ չամի գերան բերէք, մէ հատ քեչից ուրագ բերէք։ Գնացին բերին պատրաստին։

—Թագաւորի տղայ, էս պըտի Ջարդես ուրագով էս գիշեր։

Տղան ասաւ. Շատ լաւ, Հազէ—Դիլպար։

—Էս տղին տարէք պատվէք, Հազէ—Դիլպար կասայ։

Տարան տղին պատվեցին, մացին չուր իրկուն։ Իրկուն տղէն գնաց չամի գերանը ըսկսեց Ջարդել, խալիվորի մազ քաշեց ուրկի բերան, յէլաւ պողպըտից ուրագ, էտ գերանը Ջարդեց. ու-

բագը քցեց գետին, յելաւ առաջվայ քեչայ։

Առաւօտ Հազէ—Դիլպար էկաւ. տեսաւ որ գերան չարդեր ա, Ջառիէքին ասաւ. Տարէք էս տղին, լաւ պատվէք։

—Է՛ թագաւորի տղայ, էս մէկը կատարիր, մնաց էրկուսը։

—Հազէ—Դիլպար՝ Աստված օղորմած ա։

Մնաց չուր իրիկուն։ Իրկուն մէ խալվար կորեկ, մէ խալվար սուլբուտ խառնեց իրար, լըցեց մէ օթախ, ասաւ. Թագաւորի տղայ, էս սուլբուտ, էս կորեկ իրարուց չոկես էս գիշեր, առանց ճրագ, մութ տեղ։ Որ չոկիր՝ քեզի կառնեմ, որ չչոկիր՝ կ'սպանեմ։

Թագաւորի տղէն գնաց էտ օթախ, մրջումի թեպուր տվեց կրակ, մրջըմը էկաւ խաւաւ, մէկ հատ մէ հատի մէջ չթողին, չոկեցին մէկ սահաթվայ մէջ։ Մնաց առաւօտ, Հազէ—Դիլպար էկաւ տեսաւ, որ չոկեր ա, ասաւ. Ջառիէք, էս տղին տարէք լաւ պատվէք, էս տղէն ինձի կը տանայ։ Մնաց իրիկվան, Հազէ—Դիլպար ասաւ. Քառասուն ղազան փլաւ էփէք, քառասուն հատ օչխար մորթէք, էփէք, դրէք ղազանների վրէն, հօթը չախցի գախընցագաղ աղայ՝ թըխէք խաց, դրէք էտ ղազաններու կուշտ, որ թագաւորի տղէն գայ ուտայ։

Ջառիէք պատրաստեցին, տարան բոլորը լցին մէ օթախ. իրիկուն Հազէ—Դիլպար թագաւորի տղուն կանչեց տարաւ, ասաւ. Թագաւորի տղայ, էս գիշեր էս կերակուլ յըմմէն պըտի ուտես։ Կերար՝ կառնեմ քեզի, չկերար՝ գըլոխդ կը կըտրեմ։

Թագաւորի տղէն գնաց մտաւ օթախը, դուռը փակեցին վրէն, ճրագն անցուցին։ Թագաւորի տղէն ջաղացպանի մազ տվեց կրակ, ջաղացպան հասաւ. Հա՛, թագաւորի տղայ, ի՞նչ ես պատրաստէ ըսկի։ Թագաւորի տղէն ասաւ. Սարգիս կէմխոր, ամէն մէկ բան էլ պատրաստ ա։

—Դէ շուտ արա՛, ես անօթի մեռայ։

Սարգիս կէմխոր սկսեց ուտելը։ Մէկ սահաթվայ մէջ ինչ որ կար, կերաւ խըլըսաց, հըլը կասեր թէ անօթի եմ։ Կերաւ յելաւ գնաց։

Տղէն մնաց յառաւօտ, Հազէ—Դիլպար էկաւ տեսաւ որ գատ չէ մնացէ, յըմմէն կերեր է։ Ասաւ. Թագաւորի տղայ, ընձի տարա՛ր։ Դու ըլնես քու Աստված, քեզի համար կը տանես՝ թէ՞ ուրիշի։

—Ջէ՛, Հազէ—Դիլպար, ինձի համար կը տանեմ։

Հազէ—Դիլպար թագաւորի տղին տարաւ, գնացին նստան մէ սուֆրի վրայ խաց կուտին էս խեռ։

Ման կերան պըծան, Հազէ—Դիլպարն ասաւ. Թագաւորի տղայ, արի գիւլաշ կպնենք։

Յետոյ դուս, դանչեց ուրան հէրը, իշխաններըը. վաքիլը, վազիրը։ Էկան թոփ էլան, սկսեցին Թագաւորի տղէն ու Հազէ—Դիլպար գիւլաշ կպնել։

Հազէ—Դիլպարն ասաւ, Թագաւորի տղին. Թագաւորի տղայ, դու ընձի վրայ չես կանայ, ես ղվաթով եմ, որ կը խաանենք յիրար, ես ընձի թոյլ կը տամ, դու տփի գետին։

Իտենց էլ էլաւ, Հազէ—Դիլպար գնաց ուրան օթախը, քառասուն ոտ փիլաքան բանձր մէկ ղազան բերեցին, քառասուն կանթէն, բերին գինին լիքը լըցին, էրկու մարդ տկլոզցըրին, կայնեցըցին փիլաքաններու տակը, Հազէ—Դիլպար Թագաւորի տղին ասաւ. Թագաւորի տղայ, էս իմ մատանիք կըտամ քեզի, կը բըռնես ձեռդ, էն ղազան պըտի վերուն դնեն վըր քու թևին, էս քառասուն փիլաքան պըտի բանցըրցուս՝ բերես մօտ ընձի. մուղաթ կենաս՝ մէկ կաթ չթափի, որ թափաւ՝ իմ խէր քեզ կըսպանի։ Իմ էս մատնիք կը քցես ղազանի մէջ, որ մերվի՝ չթափի։

Իսկ էտենց արեցին, ղազան դրին վըր Թագաւորի տղի թեւին, առաւ յելաւ, մէկ կաթ էլ չթափաւ, տարաւ դրեց Հազէ—Դիլպարի կուշտ, Հազէ—Դիլպարի ձեռնէն բռնեց, առաւ էկաւ։ Էկաւ. հասաւ հալիվորին, խալիվորն ասաւ. Թագաւորի տղայ, բերիը Հազէ—Դիլպար։

Թագաւորի տղէն ասաւ. Բերի։

—Հազէ—Դիլպար, հալիվոր կասայ, օխտանասուն տարեկան եմ, քու սիրուն էս ճամփու վրէն նստելով սիվտըկայ, դու ըլնես քո Աստված, արի նստիր, իմ գլոխ դնեմ քո չոքի վրէն քնեմ, իմ կարօտութեն քեզնէ առնեմ, ել գնա։

Հազէ—Դիլպարը էկաւ նստաւ, խալիվոր գլոխ դըրեց Հազէ—Դիլպարի չոքի վրէն, քնաւ. որ ուրա քուն առաւ, խալիվորը դարձաւ խող։ Հազէ—Դիլպար բերեց էն խալիվորի վրէն մէկ քումբէթ շինեց, քումբէթի վրէն գրեց. Այսիկ Հազէ—Դիլպարի սիրած խալիվորն է, որ նրա սիրուց խող դարձաւ։

Յետոյ ընկան ճամբա՝ գնացին. էկան հասան Ղըզըլ—Ասարբէն։ Վիշապ որ սարից տեսաւ, փըշալով էկաւ հասաւ։ Երկուղն Հազէ—Դիլպարին առաւ։

—Ա՛խ, Թագաւորի տղայ, թէ ես գինի լինձի պիտի բերիը էս վիշապի համար, քեզի շատ սաղ կը Թողի։

Վիշապն ասաւ. Հազէ—Դիլպար, մի վախեցի, մի վախեցի, բան չեմ տալ։

Վիշապը էկաւ հասաւ Հազէ—Դիլպարին, ասաւ. Հազէ—Դիլպար, նստի, իմ գլոխ դնեմ քո չոքի վրայ՝ քնեմ։

Հազէ—Դիլպար նստաւ՝ վիշապ գլոխ դրեց ընտրա չոքին,

մէկ կուշտ քնաւ։ Օր կուշտ քնաւ, վիշապի շապիկ պատռաւ, յեղաւ մէ երիտասարդ սիրուն տղայ։

—Հազէ—Դիլպար, ասաւ, գինաձս ինչի էլմալ յելայ, քո սիրուն վիշապի շապիկ էկաւ վըր ընձի՝ քաշվայ սարեր. քանի քանի մարդիկ օղօրկի՝ ըսպանիր. դէ գնա, ես շնորհակալ եմ քեզնի, դու իմ քուր, ես քեզի ախպեր, թագաւորի տղեն է Ջաֆա քաշէ քեզի բերէ, դու ընտուր ես խալալ։

Յելան էս խետ էկան, խասան ուրանց խօր քաղաք. եօթն օր, եօթ գիշեր խաղ խասնիս, նաղարա զուռնայ արեցին, ընդոնց պսակեցին։ Էնոնք հասան ուրանց մուրազին, դուք էլ խասնէք ձեր մուրազին։



ԱՓԱՆԴՈՒ ՀԵՔԵԱԹԸ.

(Գիւլաբլու, Մակուեցիներ *)

Ժամանակով մէ թագաւոր կար, ունէր մէ աչխի, էտ աչխին ամէն ժամանակ կէթէր աւ կէնէր թագաւորի համար։ Մէ օր գնաց՝ մէ ղուշ նստուկ էր։ Ղուշը բռնեց, առաւ էկաւ, շատ ծանդր ղուշ էր, խորոտատես ղուշ էր, էլ չտարաւ տվեց թագաւորին, բերեց դրեց ուր տուն. էտ աչխուն ունէր մէրը, մօրն ասաւ թէ նանէ, իմ ղլխին մուղաթ կայ։ Աչխին գնաց մօտ թագաւոր, թագաւորն ասաւ. Աչխի, էսօր աւ չբերիր։

Ասաւ. Ձէ, թագաւոր, էսօր աւ ձեռ չընկաւ։

Մէ օրից ետ աչխու մէրը յելաւ գնաց դրկցի տուն, էկաւ տեսաւ թամուզ, աւլած, տեղեր վերցած, թունդիր վառված, խաց թխած, կերակուրն պատրաստ, շիվարաւ, ասաւ. Իմ տուն ինձէն սաւայի մարդ չկայ, էս ո՞րն պատրաստեց։

Պառաւն սկսեց պախ դնել, տեսաւ որ ղուշն է. զաւասի միջէն յելաւ, ուր շապիկ հանեց, դառաւ մէկ սիրուն ախչիկ, իջաւ էկաւ, թոնիրը վառեց, հաց թխեց, կերակուլ եփեց, պըտի էրթար որ շապիկը հագնէր, պառաւը յետևից բռնեց, շատ ուրխըցաւ, թէ Աստված ընձի հարս կամեցաւ։ Վազէվազ գնաց պառաւը մօտ տղէն, աչքալուսանք տվեց տղին, թէ քու բերած ղուշն դառաւ մեզի խարս։ Տըղէն էլ էկաւ տեսաւ, շատ ուրախացաւ։ Պսակվան, էլան մարդ ու կնիկ։

Թագաւորն ու ուր վազիրը սահմանք կար, կըլնին քաղքի մէջ կը պըտըտին։ Թագաւորն էկաւ ուր աչխու դռնով ընցաւ, աչքը առաւ աչխու կնկան։ Ասաւ. Վազիր, էսի ո՞րքան տեսակով ախչիկ ա։ Ետ դառցաւ էկաւ ուր տուն թագաւոր, ասաւ վազիրին. Գնա իմացիր, տես էն կնիկը ի՞նչ մարդի կնիկ ա։

Վազիրը գնաց իմացաւ, էկաւ թագաւորին ասաւ. Թագաւոր, մեր աչխու կնիկն ա։

---

*) Պատմեց 1912 թ. Օգոստոսի 11-ին Գիւլաբլու գիւղում ճոյճ Դաւիթ խալաթեան Աւետիսեանը։

—Վազիր, մեր աւչուն կնիկ չկար, յո՞ւստ էլաւ, գնա՛ մեր աւչուն ղանչա՝ գայ։

Վազիր գնաց, աւչուն ղանչեց, աւչին էկաւ թագաւորի կուշտ։ Թագաւորն ասաւ աւչուն. Աւչի, էտ կնիկ յո՞ւստ ես առէ։

—Թագաւոր, Աստված է կամեցէ։

Թագաւոր շատ բարկացաւ աւչու վրայ. Ես քեզի կողորկեմ աւի, որ դու էթաս հալղի կնկտեր փախցուս բերես։ Աւչի, գնա՛ ընտէ, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի։

Աւչին ճնաց շիվար. ետ դարձաւ տրտում, էկաւ ուրան տուն։ Կնիկն ասաւ. Աւչի, ինչի՞ ես նիաթդ կախէ՞։

Աւչին ասաւ. Թագաւորը ընձի ղազաբի ա էկէ (պատուհասել)։

—Ընչի՞ համար։

—Բեզի վրայ։

—Ի՞նչ կասայ քեզի։

—Կնիկ, ինձի կասայ՝ գընը ը՛նտե, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի։

Կնիկն ասաւ աւչուն. Ի՞նչ անեմ, ես քեզի չասի՞ իմ շապիկն մի երիցայ, ես քեզի պէտք կուգամ նեղ տեղի. մկայ ես էլ չեմ կանայ թռնի, չեմ կանայ էթայ, ընձի որդուց բերիր, աւչի, գնա՛ էնտե, իմ քրեր էնտե են, թագաւորի ուզած իմ քրեր կըտան, կըբերես, կուգաս։ Աւչի, առ էս իմ փէշկիր, կապա մէջդ, իմ քրեր որ քե տենան՝ շատ կուրախանան, թէ մեր փէսէն էկաւ։ Ջուր կըբերեն, դու կը լվացվիս, փէշքիր կըտան չը սրբըվես, ընդոնց փէշքըրով որ սրբըվես՝ քեզի կանեն ճոպան կը քցեն աշխարքի մէջ, կը կորտիս։ Կը խարցուն, թէ փեսայ, ինչի՞ ես էկէ։ Սամ. Թագաւոր ձեր քրոջ վրէն ինձի նեղութեն կըտայ։

Աւչին գնաց, գնաց խասաւ էտ մէշէն. գնաց էն ծառի կուշտ, որ էն ղուշ բռներ էր, տեսաւ որ էնտեղէն էրկու ախչիկ էկան։

—Ահա՛, էս մեր աւչի փէսէն էկեր է, ասին։ Բարով, փեսայ, բարով, խէր ըլնի գալդ։

—Փառք Աստու, քենիներ, խէր ա։

—Արի, փեսայ ջան, արի էթանք մեր տուն։

Բէնիք փէսին տարան տուն, լաւ պատվեցին, կերցուցին, խըմցուցին, պառկեցուցին, քընցուցին։

Որ քնաւ յիմցաւ՝ ջուր բերին, ասին. Լուացվի, փեսայ։ Փեսէն լուացվաւ։ Փէշկիր տվին ասին. Սրբըվի։

—Չէ, քենիք, ասաւ, շնորհակալ եմ, ինձի փէշկիր ունեմ։ Աւչին ուր փէշկիրով սրբըվաւ, ետոյ նստան՝ խարց ու փորձ արին։

—Ընչի՞ ես էկէ, փեսայ, ըսին, խէր ըլնի։

—Մէ գործ ա պատահէ, քենիք։

—Ի՞նչ գործ ա։

--Ձեր քվոր վրայ թագաւոր ինձի նեղութեն կըտայ։

--Ընչի՞ համար։

—Եսիմ ընչի՞ համար։

—Հապա քեզնից ինչ գուզէ թագաւոր։

—Ընձնից էն կուզայ, որ կասայ. Գընը ընաս, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի։ Ձեր քուրն ընձի օղորկից մօտ ձեզի։ Էկայ մօտ ձեզի, մկայ դուք գիտէք։

—Դէ նստի, աւչի, նստի, մենք տենանք ինչ անենք։

Գնացին էնքան պըտըտան, թէ ծովերի կղզին, թէ ծովերի տակ, թէ մէչեքի մէջ. թէ սարերի գլխընեը, որդե գնացին չկարցան գտնել, դարձան էկան, ասին. Փեսայ, քու ուզած մէը կուշտ չէ։ Բերին մէ գիր գրեցին Քաջաց թագաւորին, տվին, աւչին առաւ գնաց, տարաւ Քաջաց թագաւորի կուշտ, տվեց Քաջաց թագաւորին, Քաջաց թագաւորը առաւ իշկաց, ընդունեց ըդրա խընդիրը, ղանչից ուրան վազիրներին, Հարի՛ Բինիշ, Եահուդի, էկէք էստեղ, ընձի վրայ թուղթ է էկէ։

Էկան էստեղ Քաջաց թագաւորի վազիրներ։

—Առէք էս թուղթ, կարդացէք։ Վազիրնեը առան կարդացին թուղթը, էթաս ընաս, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի։

Թագաւորն ասաւ վազիրներին. Գտէք էս բանը, բերէք, տանք մեր հուրի վարիքի փէսին, տանայ, էթայ։

Վազիրնեը յելան ձիաւոր քըցին, ղոշուն պըտըտացըրին, քարտինները ման էկան, որքան պըտըտան, չկարցան գտնել։ Էկան թագաւորին ասին. Թագաւոր, չկարցանք գտնինք։

Թագաւորն ասաւ աւչուն. Ծողածին աւչի, քու ուզած մեր կուշտ չի, Օձի թագաւորի կուշտն է։

Աւչին ասաւ թագաւորին. Օձի թագաւոր ձրտեղ գտնեմ։

—Ե՛ս քեզի թուղթ կուտամ, առ գնա։

Թուղթ տվեց, տարաւ գնաց մօտ օձի թագաւոր։ Տվեց օձի թագաւորին, օձի թագաւոր առաւ իշկաց, ղանչից ուր վազիրնեերին, Շահմար, Լոնդօ, Իլան, արէք իտէ, Քաջանց թագաւորից մեզի թուղթ է էկէ, առէք էս թուղթ կարդացէք։ Թուղթն կարդացին, ասին. Օձի թագաւոր, էս մարդու ուզածը գտի տուր, թօ տանայ։

Քցեց ման էկան, իրեք օր ման էկան, չկարցան գտնել։ Դարձան էկան ասին. Թագաւոր, չկարցանք գտնել։ Հողածին աւչի, քու ուզածը մեր կուշտ չի։

Աւչին ասաւ. Թագաւոր, ապա ձրդի ա։

—Մկան թագաւոր որ չգտնի, էլ չեն կանայ գտի։

—Հապա ես ի՞նչդ էթամ Մկան թագաւոր գտնե՞մ։

—Ես քեզի թուղթ կըտամ։

Օձի թագաւոր գրեց մէ թուղթ, տվեց աչուն, ձիաւոր տվեց աչուն, ասաւ՝ տարէք նշանց տվէք, թօ էրթայ։

Տարան նշանց տվին աչուն, ասին. Աչի. Մկան թագաւոր էտ Սև սարն ա։

Աչին յելաւ գնաց, թուղթ տվեց Մկան թագաւորին։ Մկան թագաւորն առաւ թուղթն իշկաց, դանչեց ուրան վազիրներին. Ֆաչալ Զարքազ, Մղրէդ, Դալի-բաշ, էկէք, Օձի թագաւորից մեզի թուղթ է էկէ։

Էկան, կարդացին թուղթը, ասին. Էս հողածնի ուզած գտիր տուր, թօ տանէ էրթայ։

—Դէ յելէք, Ֆաչալ Զարքեազ, Մղրէդ, Դալի-բաշ, գնացէք գտէք, բերէք։

Գնացին, ինչքան ման էկան, չկարցան գտնի։ Դարձան էկան թագաւորին ասին, թէ չգտանք։

Թագաւորն ասաւ. Հողածին, քու ուզած մեր կուշտ չի։

Աչին ասաւ. Թագաւոր, ապա ո՛րտեղ ա։

Ասաւ. Թէ գտնի, Գորտնկի թագաւոր գտնի. մենք չենք կանայ գտնի։

—Թագաւոր, ես Գորտնկի թագաւոր որտե՞ գտնեմ։

—Ես քեզի թուղթ կըտամ, մարդ կըտամ, կառնես կէթաս։

Թուղթ տվեց, ձիաւոր տվեց աչուն, տարան նշանց տվին։ Տարաւ տվեց Գորտնկի թագաւորին։

Գորտնկի թագաւոր առաւ թուղթն իշկաց, կանչեց ուրան վազիրներին. Բաթման, Փանփալ, Կանանչ, արէք ըստե, Մկան թագաւորից մէղի թուղթ ա էկէ։ Առէք, կարդացէք։

Աւին, կարդացին, ասին. Էս հողածնի ուզածն գտի տուր, թօ տանէ էթայ։

—Փամփալ, Բաթման, Կանանչ, գնացէք Դելադուրին գտէք բերէք, ասաւ թագաւորը։

Գնացին Դելադորին գտան բերին։

Թագաւորն ասաւ. Դելադոր, էս հողածնի ուզածը որտեղ ըլնի, գտնես բերես։

Դելադորն ասաւ թագաւորին. Որ նեղին ես՝ Դելադորին կը ճանչընաս, որ լէնին ես՝ Դելադորին կաքսորես։

—Բան չկայ, Դելադոր, բան չկայ, ասաւ թագաւորը։ Կը խնդրվեմ ներես։

—Դէ արի, հողածին, արի էրթանք, Դելադորն ասաւ։

Հողածնին տարաւ մէ մէշի մէջ, ասաւ. Հողածին, դու նստի

ըստէ, ես էթամ մէ պըտըտեմ՝ գամ։

Գնաց պըտըտելու Դելադոր։

Էտ հոզածինը էնքան նստաւ ըտե, Դելադոր չեկաւ, յելաւ տեսաւ որ մէշի մէջ մէ կրակ կը վառի. գնաց էտ կրակի կուշտ, տեսաւ որ մէկ պզտի քոշկ սարա ա։ Մտաւ նես, տեսաւ մէկ մարդ նստուկ ա. բարև տվեց էտ մարդին, նստաև, խօսացին։ էն մարդը աչուց հարցմունք արաւ, թէ ինչ մարդ ես, աչի, ինչ կը պըտըտես, ընկեր ունիս թէ չէ։

Ասաւ. Ընկեր ունիմ, Գորտնուկը իմ ընկերն ա։

Ասաւ. Հապա ո՞ւր ա Գորտնուկ։

—Գնաց էս մէշի մէջ, չեկաւ։

—Բան չունիս, Գորտնուկ ա, եսիմ որտե գնաց, ասաւ քոշկ ու սարի տէրը։ Անօթի չիս։

—Անօթի եմ։

Քօշք սարի տէր ասաւ. Աֆանդի, մեզի ղոնաղ է եկէ, խաց բէ։

Աֆանդին խաց բերեց. Աչին իշկաց, տեսաւ, մարդ չկայ, համայ խաց պատրաստվաւ։

Ուաց կերան պրծան, ասաւ. Աֆանդի, արի խաց տար։

Աչին տեսաւ մարդ չկայ, համա հաց տարան։

Աչին ասաւ էն մարդին՝ էս ինչ լաւ նոքար ունես։

—Կը ծախեմ, աչի, չիս առնէ։

—Կառնեմ։

—Ի՞նչ կը տաս։

—Ձատ չունեմ։

Հապա ինչո՞վ կառնես։

—Բախշես ինձի։

—Բախշեցի, տար գնա։

Աչին յելաւ, դանչեց. Աֆանդի. արի էթանք։

Ընկան ճամփա էկան։ Մէ քուրդ ռաստ էկաւ, մէ չոմախ կար վըր թևին էրկըթից, էտ քուրդը անօթի էր, աչուց խաց ուզեց։

Աչին ասաւ. Աֆանդի, էս քրդուն խաց տուր։

Ուացն էկաւ քրդու կուշտ, աֆանդին չերևաց։

Էտ քուրդը ասաւ աչուն. էտ քու աֆանդին չիս ծախէ, ես առնիմ։

—Ձէ, չեմ ծախէ։

Քուրդն թողեց, գնաց։ Աֆանդին ասաւ աչուն. Աչի, ինչի՞ չծախիր։ Ծախայ, ես կուգամ կը խասնեմ քեզի էլման։ Քուռու չոմախն առ, ինձի տու քրդուն։

Աչին դանչեց քրդուն. Քուրդ, արի, աֆանդուն կը ծախեմ։

Քուրդը էկաւ, ասաւ. Ինչո՞վ կուտաս, քերվո։

—Քու չո՛մախ տու ընձի, Աֆանդուն տամ քեզի։

Փոխեցին. Աւչին առաւ չոմախ գնաց, քուրդն առաւ Աֆանդին գնաց։ Մէ խելի տեղ գնացին, զարձաւ էկաւ, հասաւ աւչուն։ Քուրդը էնքան կանչեց Աֆանդուն, Աֆանդին ձէն չտվեց։ Աւչին ու Աֆանդին էկան, էկան մէ չարչու ռաստ էկան, էտ չարչին էլ էտ աւչուց խաց ուզեց. Աւչին ասաւ Աֆանդուն. Աֆանդի, չարչուն խաց տո՛ւր. Աֆանդին չարչուն խաց տվեց, չերևաց։ Չարչին ասաւ աւչուն. Աւչի, էտ ինչ լաւ աշպէզ ունես։

—Հա, հըպա, ինձի լաւ աշպէզ ունեմ։

—Չես ծաթխէ, ես առնեմ։

—կը ծախեմ, չարչի։

—Ի՞նչ տամ։

—Բէ իմ դութու հետ փոխեմ։ Բերին փոխին։ Չարչին առաւ Աֆանդին գնաց, աւչին առաւ դութին գնաց։ Աֆանդին զարձաւ էկաւ հասաւ աւչուն։ Էկան խասան քաղաք։ Գնաց մօտ թագաւոր։

—Հը՛, աւչի, բերի՛ր։

Չէ, թագաւոր, չկարցայ գանի։

—Սրի կովենք, ասաւ թագաւոր։

—Կովենք։

Աւչին, թագաւոր կովան։ Աւչին հայ արաւ Աֆանդուն, Աֆանդին ըսպանեց թագաւորին. թագաւորութեն տվեցին Աւչուն, թագաւորի տղեն էլ վոխվան, (ոխացան) ղոշուն վերցին Աւչու հետ սկսին կռիւ։ Աւչին կասեր Աֆանդուն. Ղութու դուռ բա՛ց, ղութու դուռ որ կը բանէր՝ ղոշուն կելնէր էն ղութու միջէն, էն ղոշուն կը ջարդէր։ Աֆանդի չոմախ կը թալէր, չոմախ ղոշունին կը ջարդէր։ Ըսպանին ղոշունին, թագաւորի տղէներին, առաւ թագաւորի թախտ, էլաւ Պարոն աւչի։ Էնի հասաւ ուր մուրազին, մենք էլ հասնինք մեր մուրազին։



ՊՕՂՈՍ–ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՇԱՄՏԱՆԻ ԽՆՔԱՆԱԹԸ

(Գիւլափիւս, Մակուեցիներ*)

Ժամանակով կար մէկ մարդ, մէկ կնիկ, ունէր մէ հատ քուր, ունէր մէ երեխայ տղայ։ Էս մարդը ուրա քվորը շատ կըսիրէր ուրա կնկնից։ Մէ առ ժամանակ էտենց կառավարվան, կնիկը մարթի խետ ոխվաւ, թէ էս ինչէս պան ա, յիրիկուն դիւքնից կուգայ՝ ընձի խետ ըսկի չասայ, չի խօսայ, սերը տվե ուրա քվոր։ Գիշերը յելաւ ուրա տղէն մորթեց, արնոտ դանակ տարաւ դրեց ուրա քվոր ջէպ՝ միամիտ։ Առաւօտ յելաւ օրօրոց բացեց, տեսաւ տղէն մորթուկ ա, ձեռ թալեց մարթու եախէն, քվոր, պինդ կայնաւ, թէ իմ էրեխէն դու էք մորթէ։ Ինչքան աղերսեցին, չելաւ, ուրա լաչիկներ ճղեց, թէ կեթամ դիվանին գանգատ. որ շատ լաւա ընկան, ասաւ. Բռնէք ձեր ջէպեր իշկամ տենամ, մկայ էս իմ էրեխէն մորթողի դանակ արնոտ կըլնի. մարթի շորերն իշկաց՝ պատ չգտաւ, դնաց մարթի քվոր շորեր իշկաց, դանակ քվոր ջէպէն խանեց։

Մարթին ասաւ՝ թէ քու քվոր սեր ու քոն էսքան էր, որ իմ տղէն մորթեց, ես կեթամ թագաւորին գանգատ կանեմ։ Մարթ շատ լաւա ընկաւ, ընկաւ կնկայ ձեռ ու ոտ։

Ասաւ. Ջունքի որ ըտենց ա, քու քվոր տար փչացու, պարթէն բեր տու ընձի, որ իմ սերտ խոմչայ։

Ցելաւ էտ մարթը վերուց ուր քվոր գնաց, մէ ամսվայ խաց քվոր պատրաստեց. էտ քաղաքին մէ առանձին մէշտ կար ամայի, տարաւ էտ մէշէն, մէ ախպըր վրայ իջան։

—Է քուր, ասաւ, ես ինչ անեմ, թէ քե կսպանեմ, քեզ մեղք չկայ. իմ տղին իմ կնիկն ա մորթե, եթէ քեզի չեմ մորթե, առանցի պարապ կեթամ, էնտեղ կնկայ ձեռէն չեմ պրծնե։

Ասաւ. Դու գինաս, ախպէր, ինչ գինաս արա։ Բռնեց քվոր էս չոքերից կտրեց ոներ, խացը թողեց էտ քվոր կուշտ, քուրը

---

*) Պատմեց 1912 թ. Սեպտեմբերի 15-ին Գիւլափիւս գիւղացի ծոյն Դաւիթ Խալաթեան Աւետիսեանցը։

թողեց էտ ամայի մէջի մէջ, ոներ տարաւ, գնաց տվեց կնկան։ Ընտոնք թող մնան դատ, մենք դառնանք ախչըկայ վրէն։

Մէկ ուրիշ թագաւորի տղայ, ուրան յընկերներով կուգեր էտ մէշէն աւղուշ, կուգին կը կայնին հօթ ճամխի բաժին, փոշք (վիճակ) կը քցին, ամեք ուր փշքի քամակ կէթեր աւղուշ։ Էտօր թագաւորի տղի փուշքը յընկաւ էտ մէշի եանը, թագաւորի տղէն գնաց էտ մէշի մէջ, պատահաւ էտ ախչըկան, թաղմընեց տեսաւ էնքան մէ սիֆաթով ախչիկ ա, որ գնաց մօտեցաւ էտ ախչկան։

—Ախչի, խայ ես, թուրք ես, ինչ մարդ ես։

Ախչիկը թագաւորի տղին պատասխանեց, ասաւ. Ես մէկ հայ ախչիկ եմ։

—Ապա ընչի՞ ես նստի դատ, չես վախենայ էս մէշից։

—Չէ, պահող Աստված կը պահայ։

Ձին քշեց ախչկան մօտեցաւ, ասաւ. Արի քեզ տանեմ ընձի համար. ախչըկան ասաւ՝ յելի, չը կարցաւ յելէր։

—Ախչի, ինչի՞ չես իջայ, ինձի խաւանուրթին չես խոայ։

—Չէ, թագաւորի տղայ, չըմ կանայ յընկի կայնե։ Թագաւորի տղէն ձիուց իչաւ, գնաց թեխ էն, պանդրացուց, տեսաւ չոքեր կարուկ ա։

—Հէյվախ, ասաւ, խողի չը տենի, ինչ անեմ. չը տանեմ, մնա էտե՝ կը վճանայ, տանեմ, ոններն ա կտըրված։ Միտք արաւ, ասաւ. տանեմ, իմ կամաթն էս ա, էս ա պատահե ընձի։ Թագաւորի տղէն վերուց ախչըկան, տարաւ, գնաց։

Տեսաւ որ յընկերներ բոլոր գումար էկած ա ճամփու վրէն։

—Թագաւորի տղայ, ինչի՞ եացար։

Թագաւորի տղէն ասաւ, թէ խօսալ հարկաւոր չի, քշէք։ Ջին դացին։

Տարաւ թագաւորի կուշա. Թագաւոր որ տեսաւ՝

—Բան չկայ, որթի, ոգի ես աղատե, ըէրե, բան չկայ։ Տանենք քցինք մեր խէյրհաթխանէն, թօ ապրի։

Թագաւորի տղէն ասաւ. Թագաւոր, ինչ կասես, խմուն կայ էսայ, չկայ՝ էսա։

Թագաւոր ինչքան տղին խրատից՝ չէլաւ, վազիրներ ինչքան խրատին, չէլաւ, վաքիլներ ինչքան ասեցին՝ չէլաւ, բերին պահկին վըր թագաւորի տղին։ Մէկ առ ժամանակ մնաց, թագաւորի յաչողութին էկաւ, ամեն մէկ կողմով։ Թագաւոր էս խետ յուշ դառձուց խարսի վրայ։ Ցէլաւ որ թագաւորի վրէն կռիւ բացվաւ, թագաւորի տղէն կօշուն վերուց, գնաց կռիւ։ Թագաւորի տղէն որ գնաց կռիւ, թագաւորի խարս պահկաւ մէ ջուխտ տղայ բերեց, մէկի անուն դրին Պօղոս, մէկի դրին Պետրոս։

Թագաւոր աչկալուսանք գրեց տվեց Թաթարին, ասաւ. Տար խասու տվին։

Թաթար նամակ դրեց վափախ ու եալայ գնաց. գնաց էտ ախչկայ ախպօր քաղքով պըտի ընցընի։ Էտ ախչըկայ ախպէրն էլ ա գնացել կռիւ. գնացած էնտեղ Թագաւորի տղի խետ ախպերացած ա, չադրներ մէ տեղ զանած ա, ուրանց թշնամու խետ կը կռվին։

Թաթարն գնաց էտ լիրը կնկայ բալկոնի տակը նստաւ, դինջըցաւ, մէ քիչ խաց կերաւ, ինք ուրին ասաւ. մի քիչ քնեմ դինջընամ, էթամ։ Էն լիրը կնիկ նստեր էր վանջարէն, թամաշա կանէր, որ Թաթար քնաւ, կնիկն իջաւ, էկաւ Թըթըրի կուշտ, վափախն իշկաց, տեսաւ որ Թուխամ մընչ վափխին ա։

Թուղթը կարդաց, տեսաւ որ աշկալուսանք ա գրված. էտ Թուղտը վերուց, մէ ուրիշ Թուղթ դրեց. Աշքդ լուս չըլի, ոչ դու ըլիս, ոչ քո կնիկ, քու կնիկ պահակ մէ ջուխտ շան Թուլա եա բէրե։ Դրեց Թըթրի վափախ։ Թըթըրն էլաւ, միամիտ գնաց. տարաւ տվեց Թագաւորի տղին. Թագաւորի տղէն առաւ իշկաց, աւաւ. Ընձի կապուլ ա. շան Թուլայ կլի, ինչ կըլի, իմ կնիկ կը պախես չուր իմ ետ գառնալը։ Թաթար վերուց էկաւ. էկաւ էտ քէօվ օղլի (շանորդի) Թըթըրը, էկաւ, էլման էտտեղ պահկաւ, քնաւ։ Կնիկը որ տէսաւ, իջաւ, էկաւ Թուխթ խանեց կարդաց, փոխարկեց. Էս իմ Թուխտ խասնելու պէս չես Թողէ էթերանք մնայ, կը փճացնես, կաքսորես կէթայ։ Թըթըր Թուխտ բէրեց խասուց Թագաւորին։

Թագաւոր որ առաւ Թուխտ, տէսաւ, շատ մռմըռաց, ինչ անեմ, ասաւ. Տղայ եա գրե էլի։ Ուստա բերեց մէ կեամի տվեց շինել, բաւականի խաց պատրաստեց, դրեց կեամու մէջ, քցեց ծովի էրես ու ուրան էրեխէքն էլ տվեց ուրին. գնա, ասաւ. Աստված քու պան յաջողա։

Էտ կեամին ծովի էրես գնաց, շատ ու քիչ Աստված գինայ, գնաց մէ կրաղից դուս էլաւ։ Ծովը որ աշուն ժամանակով ցածրացաւ, կեամին իջաւ գէտին, էտ տղերք էլած ին կեամուց դուս, ուրանց խամար կը խաղին. յելան մէ տաս տարէկան տղայ, էս խետ չանգալ ին շինած, կէթին ձուկ կը բռնին, բէրին կուտին, կապրին։ Էն մի օր գնացին տէսան որ ծովի յէրես մէ փոստ կուգայ. Պօղոն ասաւ. Պետրոս, էն փոստը թո գայ էլի կրաղ, տանենք Թալինք մեր մօր չոքերի տակ՝ Թո նստի, կակուղ ըլի, չը ցաւա։ Փոստն էկաւ էլաւ կրաղ, էտ փոստը վերցին, Պօղոս բռնեց, Պետրոս Թախթըփեց, բացվաւ մէ սուֆրա, աշխարքի տակ ինչքան խորակներ ասես մէջ կը գտնվէր, տվին ուրանց մէրն առաւ պախեց, օրական էտոնց ապրած ըտով էր։

Էն մէ օր մէկ դարվէշ էկաւ ըտունց դոնախ. էկաւ ասաւ. Բուբ, ասաւ, Պօղոս տու տանեմ մէ գործի. ինչքան լաւա ընկաւ, չտվեց։ Էս սարի կողն, ասաւ, խաղինայ կայ, քու Աստծու սէրն ընի։ Աստծու սէր որ տվեց, կնիկն Պօղոսին տվեց՝ դարվէշ տարաւ։

Գացին մէ քարափի դէմ կայնան։ Դարվէշն ասաւ. Պօղոս, ինչքան խրատ կըտամ էլ էսա չըմ խօսա խը քեզի, ըսկըսեց Պօղոսին խրատ տալ։ Ես, ասաւ, իմ թուխտ կը կարդամ, էս քարափից մէ դուռ կը բացվի, դու կեթաս ներս, ես կը մնամ դուս, ինչ մարդ որ կուգայ՝ քեզի լաւա կինի, ձէն չը խանես, խըտ ընձի չխօսաւ։

Դարվէշն ըսկըսեց թուխտ կարդալ. դուռը բացվաւ, Պօղոս գնաց ներս, դարվէշ կայնաւ շէմի վրայ. Պօղոս տեսաւ որ մէկ խարս էկաւ, շորը կը խանայ, կը քցայ ու կուգայ։ Աստու սուր կուտայ ու կը գայ, դարձաւ Պողոսին շատ աղերսեց, Պօղոսն էլ ձէն չարաւ, խարսն կուրիսաւ. մէ քիչ տեղ էլ գնաց, քիչ ա մացէ խանի խաղնին, մէ շամդան կայ վըր խաղնին, տարվէշ Պօղոսին ասաւ. Պօղոս, մինակ էն շամդան ընձի, ինչքան խաղնայ կայ քեզի։

Պօղոս տեսաւ որ էն դեխէն մէ ախչիկ էկաւ, շորը կը խանա, թըփայ ու կուգայ, էկաւ սկսեց Պօղոսին լաւա իյնել։ Պօղոսն դարձաւ դավրէշին ասաւ. Դարվէշ, քու տուն աւիրի, էս շապիկ թումպան էլ թո մնայ վրին։

Դուռ փակվաւ, Պօղոս մնաց ներս, դարվէշ փախաւ։ Պօղոս մնաց շիվար, էս դեխ զարկըվաւ, էնդեխ զարկըվաւ, էլ դուռ չկայ. գնաց խաղնի կուշտ, տո ջանըմ, ասաւ, էն քէօփօղլի դարվէշ մէ շամդանի խամար ընձի բերից քցից էսաե. շամդան վերուց, ղրից ուր ծոց։ Շատ պըտտաւ էտ յերի մէջ, տեսաւ, որ վէրի հան մէ կըռթկըռթոց կուգայ. գնաց տեսաւ որ մէ աղվէս. աղվըսուն լարից, աղվէս փախաւ մէ ծակից յէլաւ դուս։ Պօղոսն էլ շատ տանջըվաւ, դէս դէն, էտ ծակից յէլաւ դուս։ Գնաց մէ հավլաչու էլաւ նոքար, մէկ առժամանակ մնաց էտ հավլաչու կուշտ, հավլաչին Պօղոսին շատ ընթունից, գնաց ուրա կնկայ խետ մասլահաթ արաւ հավլաչին. Կնիկ, ասաւ, մեր նոքար շատ բարեյաջող տղայ հա, քե մեր ախչիկ տանք էս տղին. բերին ախչիկ տվեցին Պօղոսին, յիրիկուն էտ հավլաչուն կանչեցին յուրիշ տեղ կօնաղլըղ. ասաւ. Պօղոս, ես կերթամ, կուրպան, դու ժամանակին դուռը կը փակես, կեթաս տուն։

—Շատ լաւ, աղա։

Աղէն գնաց կօնաղլըղա, Պօղոս հայ էս մուշտարին էլ ճամփի դնեմ, հայ էն մուշտարին էլ ճամփու դնեմ, գնաց էլաւ չուր սը-

հաթի տասներկուս. դուռը փակեց, յէլաւ գնաց, տունը շըշկըռաւ, յընկաւ քաղաքի մէջ, գնաց Թագաւորի ախչկայ մէ խաս բախչա կար, էն խաս պախչի մէջ նստաւ։ Ինց էր պատրաստե որ տա֊ նէր տուն. որ չը կարցաւ տունը գտնէր, խացը մնաց ուրա կուշտ։

—Տօ ջանըմ, ասաւ. սոված եմ, մը քիչ խաց ուտեմ։ Մու տեղ խաց բացեց, ջանըմ, ասաւ, էս չոլի մէջ տեղ խաց ուտել լաւ չէ, մէկ կը պատահի ընձի կը թալնայ։ Էտ բաղի մէջ օթաղներ կար, գնաց էտ օթաղների մէջ։ Նագաստան էտ շամդան յընկաւ մտէն, բերեց մոմ վառեց, գանեց շամդանի վրայ, տեսաւ որ քառասուն տեղով շամդան վառաւ. Ջուխտ կուլը չոքան դէմ.

—Պօղոս, աւիրե՞նք, թէ շինենք։

Ասաւ. Ոչ աւիրէք, ոչ շինէք։

Կուլեր գնացին, քառասուն խատ ախչիկ դուֆը ձեռներ, էկան ըսկըսին խաղալ ու դուֆ զարնել. յեսոյ էկան, մէկ մէկ ոսկի դրին Պօղոսի չոքի վրէն, գլոխ տվին, ընցան։

Թագաւորի ախչիկը տեսաւ. Պօղոսը որ պրծաւ, խաց կէրաւ, շամդանը դրեց գլխի տակ, քնաւ։ Թագաւորի ախչկան մէ թօ֊ փիալ Ջառիա կար, ասաւ. Թագաւորի ախչիկ, ի՞նչ կըտաս, էթամ էն շամդան բէրեմ քեզի։

—Ի՞ս կշռանով ոսկի կըտամ։

Թօփիալ Ջառիէն գնաց Պօղոսի գլխի տակէն շամդանը դողցաւ, առաւ էկաւ։ Բերեց պախեցին մէնչ իրիկուն. Պօղոսն էլաւ տե֊ սաւ որ շամդան չկայ, տարած ա. էկաւ ուր դուքանի դուռ բա֊ ցեց, կայնաւ ծախս կանի. յիրիկուն Թագաւորի ախչիկ Ջառիէ֊ քին օղորկեց. գնացին երանալի ախչիկներին, չինոշխիկների ախ֊ չիկներին, կոպըռնատի ախչիկներին համեցէք արին, բերեցին կօնախ, խըտ ուրանց դըղվան քառասուն ախչիկ, բերին շամդան կպցրին, Ջուխտ կուլ չոքան դէմ։

—Հա Թագաւորի ախչիկ, աւրե՞նք, թէ շինենք։

—Աւիրել ի՛շ բան ա, կուզեմ շինութեն, քէֆ, ուրախութեն։ Կուլեր գացին. տեսան օր քառասուն խատ արանց էկան դուֆ ձեռներ, զանին, խաղցին, չուրի գնաց սըհաթի տասներկուս ընցաւ։ Դուֆեր դրին գետին, ամէկ մէկին առան պառկան. Թագաւորի աղ֊ չկան էմալ մէ զոռպէմ պատահաւ ար։ Ցէլան էտ մարդիկ գնացին։ Չինոշխիկների ախչիկներ, երանալի ախչիկներ, էլան Թագաւորի ախչըկայ եախէն բռնեցին թէ, էս ի՞նչ պէըռզութեն արեցիր։

—Ձեր տուն աւերի, ասաւ, ես ի՞նչ մեղաւոր իմ էստեղ, ես ձեղնից խապար չէլայ, ինձի մէ զօռպէն պատահաւ, իմ մուխ մոլրաց է։

Գնացին ուրանց խէրերին ասեցին, խէրերն էկան Թագա֊ ւորի կուշտ գանգատ։ Թագաւորն ասաւ. Ի՛մ ախչկան մեղք չկայ։

Մեղքը շամդանին ա, շամդան տվէք թալալի ձեռ, թօ քաղաքի մէջ պօռայ, պըտըռտայ, էտ շամդանի տէր մըջ քաղաքին կըլլի, ուր շամդան կը բռնայ։

Շամդան տվին թալալին, կանչելով էկաւ Պօղոսի դիւքնի դռնով կընցնէր. Պօղոսն էլաւ ուր շամդան բռնեց, Պօղոսին էլ խըտ շամդընին տարան թագաւորի կուշտ։

Թագաւոր խարցուց ասաւ. Այ տղայ, քու շամդանի խունարն ինչ ա, մեղի ցույց տաս։

Ասաւ Թագաւոր, իմ շամդանը յիրիկուն կը վառի, մկայ չի վառի։ Մնաց յիրիկուն, էտ ախչիկներու խէրեր ինչ որ կար՝ թագաւոր կանչեց բերեց։

—Դէ, ասաւ, քու շամդան վառա։

Շամդան վառեց, քառասուն փարին էկան, ըսկսեցին խաղալ, որ ժամանակներ թըմբմաւ, ամէնին գլուխ իջեցրին, էկան Պօղոսին չոքի վրէն մէկ մէկ ոսկի դրին, յընցան։

Թագաւորն ասաւ. Բռնէք, ասաւ, էտ ախչըկները։

Գնացին կնիկ ըէրեցին, էտ օղուշաղներուն ամատրա արին, տեսան որ բոլորն էլ ախչիկ են, էկան թագաւորին ասին՝ ախչիկ են։

Թագաւորն էն մարդերուն պատասխանեց, թէ ձեր ախչիկներն ապականված են, էկած ին շատ քցած իմ ախչկայ վրէն, իմ ախչկան մեղք չկայ։

Թագաւոր բերեց ախչիկ տվեց Պօղոսին։ Պօղոսի խէր թագաւորի տղէն էկաւ տեսաւ որ ուր կնիկ չկայ, կուրիսեր ա։ Ցէլաւ ձին խէծաւ, ընկաւ կնկան պըտտելու։ Էկաւ ծովի կղզին, կնիկ գտաւ, ասաւ. Ընձի էրկու տղայ կար, մէկն ձեր ա։

Կնիկն ասաւ, թէ Պօղոս կուրիսեր ա, չկայ։

Կեամին թողեց էտեղ, կնկան ու Պետրոսին վերուց, պըտըտելով գնաց էտ քաղաք, Պօղոսին էլ գտաւ, մէ վախտ ծնաց էտ քաղաք Պօղոսի կուշտ. Թագաւորից իրաւունք առան. Թագաւոր բերեց պատրաստութեն տէսաւ, Պօղոսին ուր ախչկան էն մարթիկի խետ ճամփու դրեց, էկան դէպա ուրանց խէրեր։

Էկան խոսան ուրանց խօր քաղաք, նորից հարսանիք արեցին, եօթն օր, եօթ դիշեր, ընդոնք խասնեն ուրանց մուրազին, մենք էլ խասնինք մեր մուրազին։

Երկնքից իրեք խնձոր իջաւ, մէկ ասողին, մէկ գրողին, մէկն էլ լսողին։

ԿԱՐՄԻՐ ԿՈՎԻ ԽՆՔԵԱԹԸ

(Գիւլափլու, Մակուեցիներ *)

Ժամանակով կըլնի մէկ մարդ, մէկ կնիկ, երկու էրեխայ, մէկ տղայ, մէկ ախչիկ. ըտոնց մէ կարմիր կով կըլնի, որ մէ ժամանակ կընցնի, էտ մարթի կնիկը կը մեռնի։ Էտ մարթը նախրչի էր, էտ նախրչին կնթայ ուրին մէ հանի կին կը բերայ, էն էրեխեքին չպահայ, չպահպանայ, էն նախրչին ուրան կնկան կասեր. Կնիկ, ախր էս էլ քու ճժերն են, պահա։

—Չէ, բան չունես, գնա քու նախրի խետ, ընտոնք ընճնէ չելած, ինչ պըտի պահեմ։ Էտ նախրչու իլաջը կտրաւ, ուրան ճժեր կըտանէր խըտ ուրին, էլ չէր թողէ տուն, որ էն կնիկ տիէր, չարչըբէր։ Էտոնց ունին մէ կարմիր կով, էտ կարմիր կովը կասէր էտ էրեխէքին. Դու մի վախեցէք, դու նստէք, ես նախիր կը պահեմ։ Էտ կարմիր կովը չուր իրկուն նախիր կը պահէր, կը ժողվէր։ Էն էրեխէք կը քշին, բերին տուն. ըտոնց էտ հաի մերը օրական մէկ խատ խացի կուտ կըտէր էտ էրկըսին, որ կուզէր խացի վախտը, կարմիր կովը կուզէր կը կայնէր, կաթ կըտէր, էտ էրեխէք կուտին։

Մէկ ժամանակ ընցաւ, էն կնիկը մէկ ախչիկ բերեց, էն եթիմ էրեխէքին չէր սիրէ, ուրան ախչկան կը սիրէր, էտ կարմիր կովն էլ էն էրեխէքին կը սիրէր, էն կնկայ ախչիկը յելաւ տասը տարեկան, էն էլ ողորկեց նախիր, էն եթիմներին կասէր. Ինչ որ դուք կուտէք՝ էտմալ կըլաւցիր էք, էն էլ իմ ախչկան տուէք, իմ ախչիկն էլ ձեզի պէս լաւնայ։ Ախչկայ խետ կը գնէր չորս խինգ խաց, կովն էն էրեխէքին սավրցուց. ասաւ. Դու մի վախեցէք, էն ախչիկն էլ թո գայ իմ կաթն ուտայ, իմ կաթն ընդուր դառն ա, ձեզի քախցը։

Էն ախչիկ քանի գնաց բարակեց, էն եթիմներ կըլաւցան, նախրչին էլ խեղճցեր էր, չըր կանայ էրթայ նախիր, մերը ախ-

---

*) Պատմեց *1912* թ. Սեպտեմբերի *15*-ին Գիւլափլու գիւղացի Դաւիթ Թալաբեան Աւետիսեանցը։

չկան կը խարցընէր. կասէր. Ախչի, քեզի խնտ կը դնեմ խինդ խաց, ընդոնց երկըսին կըտամ մէկ կուտ, ընչի՞ ընդոնք կըլաւնան, ընչի՞ դու խեղճըցեր ես։

Ախչիկն մօր կասէր. Նանէ, ես էն կարմիր կովի կաթ որ կուտիմ՝ էնենց դառն ա, սիրտս կը խառնայ, էն թավուր դառն ա, ընդոնք որ կուտեն, խարցնեմ ընդոնց կասեն. Շատ քախցը ա։

—Շատ լաւ, յիրկուն թօ յըլա էն կարմիր կով գայ։ Էլ ախչկան չթողեց էթէր նախիր։ Էն մէ օր էտ կնիկը սապահատան յէլաւ, մարդին ասաւ Յէսօր դիշեր ես մէ էրազ եմ տեսեր։

—Ի՞նչ էրազ ես տեսեր, կնիկ։

—Ախպա էս իմ ախչիկ էսքան խեղճցէ, դու ըսկի տիրուբեն չես անե, ախը իմ ախչկան ցաւ ա դիպէ, յուխտ էլ տարայ չը սաղցաւ. դիշեր յէրազի մէջ տեսայ, մէ սուրբ ինձի խասկըցուց, թէ էն ձեր կարմիր կովը որ մորթէք, անէք էտ ախչկան մատաղ, շատ շուտով կը լաւնայ։

—Կնիկ, բա ախըր մենք կարմիր կով որ մորթենք, ախըր թան չըլնի, մածուն չըլնի, բա մենք մեր էրեխեք ինչո՞վ պահենք։

—Չէ, պըտի մորթես։

Նախրչու իլաճ կտրաւ, ասաւ. Լաւ, կնիկ, առաւօտ մորթեմ։

Կարմիր կովը էտօր նեաթ կախեր էր, յիմացաւ որ ուրին կը մորթեն։ Էտ ախչիկը, էտ տղէնը որ էկան կաթ ուտելու, տեսան որ կարմիր կով ուրան նեաթը կախեր ա, խարցըրին.

—Մեր մէրիկ կարմիր կով, դու ընչի՞ ես քո նեաթ կախէ։

—Անուշիկ, անծնված որթիք, ընձի կըմորթեն. ձեր էն խորթ մէր։

—Ընչի՞։

—Ուրան ախչկան մատաղ ա ասեր, ընձի կը մորթայ։

—Մեր մէրիկ, կարմիր կով, մենք յիրկուն կեթանք մեր խօր, մեր մօր լաւա կենենք, ոտներ կը պաքենք, ձեռներ կը պագենք. պալքի քեզի չը մորթեն։

Կարմիր կովը ասաւ. Չէ, չէ, էտմալ մի ասէք. էտմալ կասէք ձեզի կը ափայ, իմ սիրտ կը մըամըռայ. ձեզ մէ բան կասեմ. Որ ընձի կը մորթեն, իմ արընից գողտուկ վերցէք, քսէք ձեր քիթ բերան, օրով ետ էնի կերևայ ձեզի ինչպէս թէ ոսկի թնի, իմ օսկոռներ, իմ գլոխ, իմ ոտներուն էն սօլերը կը տանէք կը խորէք իմ մսուր. օրով ետ ձեզի պէտք կուգայ։

Էտ էրեխէք նստան, շատ կծկուծ լայեն. կարմիր կովին դժար էկաւ ըտոնց լալը, էկաւ էրեխէքի կուշտ։

—Ինչի՞ կուլաք, իմ որթիք ջան։

—Ապա ինչ անինք, մերիկ, որ քեզի մորթեցին, մեր բերան կը ցամքի, էլ մեզի պահող չկայ։

—Արէք էթանք, էստէ մէ պառաւ կայ, ես ձեզի թասմիլ կանեմ (յանձնեմ) էն պառաւին։

Կարմիր կով էրեխեքին տարաւ գնաց, գնացին մէկ յէրի դուռ կայնան։ Կարմիր կով էտ պառաւին կանչեց յէլաւ դուս, ասաւ. Պառաւ, դու դինաս որ ընձի կը մորթեն։

—Հա, բա, դինամ։

—Էս իմ էրեխէք կըտամ քեզի ամանաթ. Աստըծու ամանաթ, կը սիրես։ Պառաւ պատասխանեց. Շատ լաւ, շատ լաւ, կարմիր կով։

Թողեցին էկան։

—Ախչի, աղա, իմ գլխի մէկ կտորը դուս թողէք, ինչ վախտ որ կանօթնաք, արէք ծծէք, կը կշտանաք, նախիրն էլ որ կը բերէք՝ էս պառաւ ձեզի կը պահայ, ըտեղ ասեց կարմիր կովը։

Յիրիկուն գնացին տուն, էն ախչիկ վազաւ էկաւ կարմիր կովի դէմ. Նանէ, իմ մատաղն էկաւ։

Մնաց առաւօտ, կարմիր կովին մօրթին։ Էն կարմիր կովի էրեխէք, կարմիր կովի աընից մէկ քասով (հողէ աման) արուն վերցին, տարան խէտիր, քսին ուրանց քիթ բերան, կերպերը փոխվաւ, ծամերը, թէ սիֆաթը յէլան ոսկեզօծ։

Էտ կարմիր կովի միսը որ կուտէր՝ ըսկի խամ չկար, ինչպէս թէ զարման, էն էրեխէք որ կուտին, էնքան քախցը էր՝ ինչպէս թէ մեղր։

Կարմիր կովի օսկոնները, ոտներ, գլոխ, ծածուկ ժողվեցին, տարան պահին կարմիր կովի մսուր։

Ըտոնց արաւնսա ինչ էր։

Ինչքան որ կանօթնին, կեթին էն մսերքի կուշտ, կարմիր կովի կօտորը կը ծծին, կշտանին։ Էտ եոնա կինը էլ էն մէկ կուտն էլ չուվեց, թողեց անօթի ընդոնց. օրական ուր ախչկան կը կերցնէր, խմցնէր։ Մնաց՝ ձմեռ ժամանակ մէկ խառնիխ էլաւ, էտ կնիկը, ուրան ախչիկը զարդրից, շորեր խադուց, քեամար կապեց, տարաւ խառնխա։ էն եթիմ էրեխէք մացին տուն լալով։ Կարմիր կովը մսերքից ձէն ավեց. էն պառաւն էն հէրի մէչէն էկաւ, կարմիր կովի մսուրը քանդեց, շորեր խանեց խադուց ախչկան, միւս շորերն էլ խանեց խադուց տղին, շատ զարդարանքով տարաւ խառնիխտուն, բռնին ու կը խաղին։ Էտ ուրանց խորթ մերը որ տէսաւ,—վահ, ասաւ, երանի էտ ախչկայ տիրոչ, էտ տղի տիրոչ։ Քեշքա ես էտ տղի տէր գէր իմ ախչիկ ուզէր, ես իմ ախչիկ տէր ուր տղին, եարար էտ զարիբ ա, որ տղից ա. ես Աստուած

ընձի մէկ տղայ կամէնէր, ես էն ախչիկ ուզէր իմ տղին. էն վիր ախչիկն ա հարաբ։

Որ ճնաց խառնիս ֆրղելու (ցլվելու), պառաւն առաւ ախչիկ ու տղէն, շուտ յառէչ էկաւ տուն. բերեց շորներ խանեց, տարաւ կարմիր կովի մսուր պախեց, էտ տղէն ախչիկ էկան տուն յընկան քնան. պառաւ թողեց, գնաց։

Ծորթ կնիկն առաւ ախչիկն, էկաւ տուն, ըտոնց խանեց վեր, այ սև կապես, ախչի, ասաւ, չեկար տենիր։

Էտ եթիմ ախչիկ ասաւ. ի՞նչ, նանէ։

—Մէ ղըրիր ախչիկ, մէ ղըրիպ տղայ, էկած ին, բռնած ին, կը խաղին. էն ախչկայ ոներն սօլեր առծաթ էր, էն տղի ոներն սապօկներ ոսկի էր, չեմ կանայ թարիֆն անե (պատմել). էն էրկըսի շորերը միլօնով գլոխ չէր լիգէ։

—Նանէ ջան, ապա մեզ էլ ընչի՞ չտարար թամաշա անինք։

—Այ սև կապես դու, դու կուգաս կինես խալղի ոներն մէջ, քեզի կը կոխրճեն։

Մնաց էն մէկել օր, բերեց կէս լիդր կորեկ, լցեց մէ կապանի մէջ, էն տղին, էն ախչկան ասաւ. Ինքան պըտի լաք, որ ձեր աչքի արցունքը էս կօրեկին ծածկա. ախչիկն զարթրեց, տարաւ գնաց խառնիս։

Ցերի մէջի պառաւն էկաւ, կարմիր կովի մսերքից շորեր խանեց, բերեց լաւ զարթարեց, բերեց աղջուր խառնեց իրար, արաւ ինչպէս թէ արցնքի խամ, լցեց էտ կորեկի վրայ, կորեկ ծածկեց, էլաւ ախչիկը, տղէն վերուց, գնաց խառնիս, բռնեց ախչիկ, տղէն խաղցրեց՝ չուր ժամանակին։ Ծարնիս որ ֆրզելու էլաւ, պառաւ վերուց ախչկան, տղին յառէչ առեց էկաւ։ Էկաւ թագաւորի տղի հաւուզի կշտնէն ընցընելու, ախչկայ ոտը քցեց, սօլ ոտէն պըռծաւ ընկաւ հաւուզ, ջրի մէջ։

—Վայ, նանէ, իմ սօլն ընկաւ հաւուզ։

—Բան չկայ, որթի ջան, քէլէք էթանք, քանի ձեր մեր չէկեր ա, ձեր շորեր տեսնի վրանէդ, կառնի։

Բերեց ճժերին տուն, շորերներ պախեց կարմիր կովի մսուր, երեխէքն էկան ընտեղ ընկան, քնան, պառաւն էլ թողեց գնաց։ Մէրն քամակի խեան էկաւ, ախչկան խանեց վեր։

—Մ՛յ սև կապած, էրէկվայ տղէն, ախչիկ էկած ին, յէսօր էլ յուրիշ կէյիմ են խագած, չեմ գինայ խրեղէն են, չեմ գինայ ծուվեղէն են, էնենց վախան, չեմ գինայ թէ դոր գնացին։

Մնաց լուս բացվաւ, էտ քաղքի թագաւորի տղէն ուրան ձին ուղարկեց հաւուզի վրէն ջրելու. ձին՝ ինչ հնարք արեցին, հաւուզի վրայ չգնաց, էկան թագաւորի տղին ասեցին։

—Թագաւորի տղայ, էսի հըմէն աւուր մեր հաւուղն ա, ձին հըմէն օր կէթէը ջուր կը խմէր, յէսօր չէթար խմեր։

Թագաւորի տղէն յէլաւ էկաւ հաւուղի վրայ, իշկաց, տեսաւ որ մէկ բան հաւուղի մէջ կը պսպղայ, չանկալ քցեց, խանեց, տեսաւ որ սօլ, տարաւ Թագաւորին նշանց տվեց, ասաւ. Թագաւոր, էս էս սօլի տէր մկայ կը գտնես, էս ես մկայ ընձի կըսպանեմ։

Թագաւոր սօլ դրեց գէտին, ջառ քցեց քաղաք, ասաւ. Որքան էգեղէն կայ՝ ժողվէք բերէք։ Ինչքան էգեղէն կար, ախչիկ, կնիկ, խարս, ժողվեցին բերին, բայ էտ էրկու էրեխէն. էն կնիկն էտ ախչկան պախեց. Թէ, սև կապած, դու էտենց տկլոզ, չվլաղ, կէթաս Թագաւորի դիւանն։ Ես իմ ախչիկ կօղօրկեմ կէթայ։

Էլաւ ուր ախչիկ տարաւ գնաց։ Թագաւորն էգեղէն քոմ արեց, ինչքան որ կար, յիմցաւ որ մէկ պակաս ա. սօլն էլ մէկի ոտի վրէն չէկաւ։

Էկան էն եթիմ ախչիկ գտան, տարան գնացին. բերին սօլ խագըրին, տեսան որ ինչի ուր ոտից բուսած բանմ ըլնի։

Թագաւորի տղէն ասաւ. Իմուն կայ էս ա, չկայ՝ էս ա։

Թէ Թագաւոր, Թէ Թագաւորի կնիկ, Թէ վազիր վաքիլ, Թագաւորի տղին ինչքան խրատ տվեցին, չլսաւ։

—Էս ախչկան կառնեմ, որ ես կառնեմ։

Ախչկան բերին խարցմունք արին։

Ախչիկն ասաւ. Ընձի ունեմ մէկ խալիվոր խէր, մէ խորթ մէր, մէ խորթ քուր, մէ խալալ էլ ախպէր ունիմ։

—Ապա քու սօլի Թայն գիր ա, էս սօլի Թայն։

Ասաւ. Իմ մէրիկ պառաւ գինայ, ես չեմ գինայ։

Դարձաւ էկաւ տուն ախչիկը, ախչկայ խորթ մէր մնաց էն տեղ, Թագաւորի տղին կը համոզէր։

Թագաւորի տղէն գատ չէր խաւկնա ըսկի։ Կարմիր կովի գլոխը ախչկան ձէն տվեց։ Ախչիկը գնաց մօտ։

Ասաւ. Ախչի, քու ախպէրն օղօրկա Թագաւորի տղի կուշտ, ասա, Թէ յիրկուն իմ մամէն կուգայ, Թագաւորի տղայ, արի ես իմ քուր կըտամ քեզի։

Ախչկայ ախպէր գնաց մօ Թագաւորի տղէն. Թագաւորի տղին ասաւ. Թագաւորի տղայ, յիրիկուն արի մեր տուն, իմ մամէն կուգայ, իմ քուր կըտամ քեզի։

Թագաւորի տղէն յիրիկուն էկաւ, մամէն յէրից էկաւ, բերեց ախչիկ զարդըրեց, տվից, Թագաւորի տղէն տարաւ. տարան պսակեցին։ Մէկ շաբաթ մնաց։ Մէրն էլաւ գնաց ախչկան տեսութեն, էտ խորթ մէրը գնաց Թագաւորին խնթրվաւ, ախչիկ տու տանեմ էրկու օր մնայ մեր տուն, էլման բերեմ։

Թագաւոր ախչիկ ունէց մօր, բերեց էկաւ տուն, մէ էրկու օր ճնաց, բերեց ուրան ախչիկը զարդըրեց, էտ ախչկայ շորեր, ինչ կար, խագուց ուրան ախչկան, տարաւ տվեց Թագաւորի տղին, դառցաւ էկաւ։ Մնաց յիրիկուն, Թագաւորի տղէն էկաւ ուր կնկայ կուշտ, իշկաց պիֆաթ, տեսաւ որ էսի ուր կնկայ պիֆաթ չի, իշկաց ձեռներ, տեսաւ կնկայ ձեռներ չի, ոններուն սօլեր իշկաց՝ տեսաւ, որ էտ սօլեր դոր, նրա ոններ դոր, շատ զատն են յիրարուց (հեռու), յէլաւ ախչիկն բերեց էկաւ էտտեղ, տեսաւ որ ուր կնիկ փոխարկած ա, կնիկն էլ, էն ախչիկն էլ զոքանչն առաւ գնաց մօ Թագաւոր. Թագաւորին յայտնեց. Թագաւոր էրկու խատ եաբու (ձի) ուղեց. էն խորթ մէրն էլ, խորթ քուրն էլ կապեց էտ եաբուի պոչերէն, տվեց էրկու տղի ձեռ, ասաց. Տարէք էնքան պըտըտացրէք, որ էտոնց մենակ դառատակ գլխներ ճնայ, որ բերէք տաք ընձի։

Տարան փչացրին, գլխներ բերին՝ տվին Թագաւորին, Թագաւոր Թուղթ գրեց, կապուց էն քալլեքի վրէն, դրեց էնտեղ օրինակ։

Ուրանք խասան ուրանց մուրազին, մենք էլ խասինք մեր մուրազին։



ՉՈՓՉՈՒ ՏՂԷՆ

(Տամբոլու Պարսկաստանի Կարէինցիներ*)



Թամանակով մէկ թագաւոր կըլնի. թագաւորին իրեք ախչիկ կըլնի, էտ ախչիկներին կասա. Դու ինձի ի՞նչքան կըսիրէք։ Ջոջ ախչիկը կասայ թէ քեզի կուզեմ էս աշխարքի չափ, միջնեկը կասա՝ ինչքան խաղնա ունես, էնքան կը սիրեմ, պզտիկը կասայ՝ քեզի կուզեմ աղի պտար։

Թագաւորը կասայ. Եվ որ դու ինձի աղի պտար կուզես՝ աղի փութը էրկու շահի ա, հա, կասի, գնացէք ման էկէք, էնպէս մէ մարդ գտէք, ըսկի քմսիը ընդուց չըլնի, բերէք, էս իմ ախչիկը տամ ընտոր։

Կեթան, մէ չոփչի կըլնի էտ քաղքի մէջը, օրական մէկ շիլակ ցախ կը բերէ՝ կը ծախայ, կը կառավարի։ Էտ չոփչուն կը կանչայ, կասայ. Իմ ախչիկ պիտի տամ քու տղին։

Չոփչին կասայ. Թագաւոր, դու որո՞ղ, ես որոնեղ, թէ դու-ղես ընձի զազաբի բերես, էտի չոկ։

Թագաւորը կասայ, թէ քեզի ճշմարիտը կասեմ, որ իմ ախչիկը պիտի տամ քու տղէն, ուրիշ հեչ բան մի՛ մտածէ, գնա թատարուքդ տես։

Կերթայ տուն, թագաւորը կնկանը կըսէ, թէ ախչիկս ավեր եմ ֆիլան չոփչուն, որ ըսկի ընտուց քեսսիրը չկայ։

Կասէ. Թագաւոր, ինչի՞ կը կորցընես ախչըկանդ։

Կասէ. Դու չը լսա՞ր, որ յերէկ ինչ ասայ, թէ աղի չափ կը սիրեմ քեզի, աղի փութը էրկու շահի է։

---

*) Պատմեց 1912 թ. Օգոստոսի 13-ին Տամբոլու գիւղում Կարապետ Մկրտչեանը, յիսնամեայ ծերուկին, անգրագէտ գիւղացին, որի ծնողներր գաղթել են Պարսկաստանի Կարէին նահանգից։ Այս հեքեաթը նա սովորել է էջմիածնի գաւառի Հաճի-դարի գիւղում մի ծերուկուց։ Պարապում է անասնապահութեամբ, երկրագործութեամբ եւ մեկուսութեամբ։ Ձմեռները հեքեաթ է ասում օդանեռում։

Թագուհին առանձին կը բերայ ուրան ակնունքները կըտայ ախչըկան թէ գնա ապրէ էս խեռ։

Զուիչին ուր թատարուկ կը տեսայ, կուգայ ախչիկը կառնէ կէթայ։ Ախչիկը կէթայ տեսայ, ինչ տեսայ, հաւանօցմ է, խսիրմ քցեր, նստեր են։

Ախչիկը կասայ. Զուիչու տղայ։

Կասայ. Ինչ ա, թագաւորի ախչիկ։

Կասայ. Ինձի մէկ հատ ակնունք տամ, տար ֆիլան սառաֆի կուշտը խուրդա բեր, գինն էլ էս ա։

Զուիչու տղէն կը տանայ էն սառաֆին կը խուրդա, կը բերայ։ Կը բերայ, թագաւորի ախչիկն կասայ. Զուիչու տղայ, գնա տեղաշորեր առ էշ, դազան բէ, ինչ հարկաւոր ա տան համար, բէ։

Զուիչու տղէն կէթայ, ինչ որ հարկաւոր էր տան համար, կառնէ կը գայ։

Մէկէլ օր թագաւորի աղչիկը կասայ. Տար էս էրկու ակնունքն էլ էն սառաֆի կուշտ խուրդա, բեր։

Կըտանի, կը խուրդի, կը բերի։

Կասայ. Զուիչու տղայ, քեզի ըստեղ ճնալ լայեղ չէ, թագաւորը յիմանայ, մեզի նեղութեն կուտայ, գնա մէ տեղ աշխատանք գտի, իրեք տարի ժամանակ քեզի, հըմը էնպէս մարդու քով մտի, որ հալալ աշխատած մալ ըլնի էնտորը, մէ մազը հարամ չըլնի մէջը։

Էտ տղէն գընի կէթայ, կէթայ մէկ հարուստ մարդի, ըռընջպար էր էտ մարդը, որ ծառայ մտնի։

Կասայ. Թող մէ քանի օր ճնամ քու տանը, ես քու բնութեն իմանամ, դու իմը, հանա հախը խօսենք, մտնիմ քե ծառայ։

Իրիկուն կըճնայ, աբևը կը մտնի, ըտուր յըմմէն ուընջպարը տուն կուգան. ըտոր ըռընչպըրի տեղն էլ առանձին կըլնի, բոլըրին կասայ՝ Ա՛յ տղերք, ձեզի երթուամ կուտամ, էս մարդի մալի մէջ հէչ հարամ չկնայ։

Բոլորը յիրար յերես կիշկան, էն մէկ խովիւ-կասայ. Էտոր մէկ ուրիշի մալ կար, գարձէ յիրեք մալ։

Առաւտուն լուսը կը բացուի, էտ տղէն կէթայ, կասայ. Աղայ, ես չեմ կանայ քու տունը կառավարէ, նեղողութեն։

Կասայ. Որդի, մենք յիրեք ախպէր ենք, գնա միջնեկի կուշտը կայ։ Տիղը կը սալըղայ, թէ որտեղ կը կենայ։

կէթայ միջնեկ ախպոր կուշտը, ինչպէս որ էն մէծ ախպօրը էլաւ, էտ էլ էտենց կընի, էլի մալի մէջ հարամ կը գտնի։

—Որդի, կըսէ, գուզես գնա իմ պզտիկ ախպօր կուշտը, համան իմ պզտիկ ախպօր քաղաքը շատ գառն ա։

Էտ տղէն կեթայ էն մարդին էլ կը գտնի։ Կեթայ էտոր կուշտն էլ կը խարցընայ, բան չի գըտնի հարամ։

Կասայ. Որդի, դէ ասա տենամ քու հախն ինչ ա։

Կասայ. Ադայ, դու քո խիղճը, ես ասելու բան չունիմ։ Իրեք տարի կըմնամ քու կուշտ։

Տղան կը մնայ, մէկ տարին կը թըմըմայ, տղէն գելնի կեթայ բազար կը պըտըտի, կը տենայ մէ բազրկան ուրանց քաղքից ըտեղ կերևայ։ Կեթայ՝ Բազրկեան, կասայ, բարով էս էկէ։

Բազրկեան կասայ. Դու ինչ մարդ ես, ես չեմ ճանչընայ։

Տղէն կասայ. Ես թագաւորի փէսէն եմ, չոփչու տղէն եմ։

Բազրկեան կասայ. Ինչ գործով ըսաէ կը պարապես։

Իրեք տարի ժամանակի մէ հարուստ մարդու կուշտ ծառայութեն կենեմ։ Ադա, կարելի ա, թէ մէ հատիա առնեմ՝ տանես։

—Ինչ առնելու ես, առ բեր։

Տղէն կերթայ տուն, կասայ. Ադա, մեր քաղաքիցը մէ բազրկեան ա էկէ, ուզում եմ մէ բան առնեմ դրկեմ տուն։

—Ահան, որդի, մէ տասը ղուռուշ քեզի, ինչ բանի կը պատահես՝ սապախտան, առ էկէ։

Տղան սապախտան էլաւ գնաց բազար, տեսաւ մէկ թուրք մէ ման զաներ էր ղալթուղը, կը ճվար. Բիւփայ սաթարամ (ման կը ծախեմ), քիւփա սաթարամ։ Ասաց. էտ ման գինն ինչ ա։ Ասաց. Տասը ղուռուշ ա։ Հանեց տասը ղուռուշը տվեց, ման առաւ, գնաց բազրկեանի կուշտը. ասաց. Բազրկեան, էսի կը տանես թագաւորի ախչկայ կուշտը, հատեա եմ առէ։

Բազրկեան նոքարին ասաց. Վերցու դի մէ առանձին տեղ, տանենք թագաւորի ախչկան։

Առաւ դրեց առանձին տեղ, էկաւ, բազրկան ասաց. Իշկամ տեսնամ ինչ է էս։

Տեսաւ որ կուպր ա, վերուց, նստաւ գեամին, գնաց։ Ծովի մէջ տեղը գեամին ծակվաւ, քիչ մնաց օր կործանի։ Գեամիչին ասաց. Գեամին ծակվաւ, հնար գտէք։

Բազրկեանն ասաց. Մէ ման կուպր ունեմ, քեասիբ մարդի, ինչ կուտաք որ տամ։

Գեամըչին ասաց. Ամանը լիքը կըլցնենք ոսկի։

Առան գեամին շինեցին, ամանը ոսկով լցին, տվին բազրկեանին։

Բազրկեան խասաւ ուրան քաղաքը, ամանը տվեց նոքարին, ընկաւ յառաջ, գնացին թագաւորի ախչկայ ամարաթի տակ, դուռը ծեծեցին, նոքարը դուս էկաւ, թէ բազրկեան, ինչ ունես ասելու։

Թագաւորի ախչըկանը բան ունիմ ասելու։

Նոքարը գնաց, ասաց. Թագաւորի ախչիկ, մէ բաղրկեան քեզի բան ա ասելու։

Էլաւ դուս, ասաց. Բաղրկեան, ինչ կասես։

—Թէ էս ամանը Չոփչու տղէն քեզի հադիա ա ղրկէ, չեմ գիտէ ինչ ա։

Թագաւորի ախչիկը կը տանայ տունը կը բանայ, կը տեսնայ որ սատա ոսկի ա։

Կասայ. Եարաբ էս մատանի վրէն Չոփչու տղէն ղուլուխ կենայ, որ էս մէկ տարվայ մէջ էս ղատր ոսկի է ղրկէ։ Բերանը կը կապայ ամանի՝ կը վերու, ուրան չունքի կարողութիւնը շատ էր, չէր ուզէ բանցընել։

Տարին որ թըմըմաւ, էն բաղրկեանը էլի գնաց էն քաղաքը։ Չոփչու տղէն էկաւ ման գալու մէյդանը, տեսաւ որ իրան բաղրկեանն ա, որ հատեա է ղրկէ, կէթայ խոնարհաբար բաղրկեանի հետը կը բարովվի։ Բաղրկեանը կասայ. Չոփչու տղայ, թագաւորի ախչիկը ահագին ամարաթներ ա եա քցէ, դու ըստէ ինչ բանի ես։

Չոփչու տղան կասայ. Կարելի է որ մէ հատիա էլ էս տարի տանիս։

Բաղրկեան կասայ. Բեր, կը տանեմ։

Տղէն յելաւ գնաց իրիկուն աղի կուշտը, ասաց. Աղա, հերվան բաղրկեան էկեր է, մէկ քանի ղուռուշ տաս տանիմ մէ հատիա առնեմ, ղրկեմ մեր տունը։

Աւսաց. Որդի, ահա քեզի տասնըհինգ ղուռուշ, սապահտան գնա, ինչ որ ռաստ կը գայ, էն ա՛ռ, ղրկէ։

Չոփչու տղէն սապահտան յելաւ, գնաց բազար, տեսաւ մէ մարդ մէ ղութի կը ծախէր։

Աւսաց. Ախպեր, էտու գին ինչ ա։

Աւսաց. Տասնըհինգ ղուռուշ ա։

—Ահա, ասաց, քու տասնըհինգ ղուռուշը, տուր ղութին։

Տղէն առաւ, ասաց. Բացեմ տենամ ինչ ա մէջը։

Բացեց, տեսաւ որ էրկու հատ խորտասանի կատու է, ծածկեց, բերեց տվեց բաղրկեանին։

Բաղրկեանը բացեց, ասաց. Տենամ էս ինչ ա, էն էլ տեսաւ որ խորտասանի կատու ա։ Դրեց ուրան գեամին, առաւ տարաւ հետը։ Գնացին ծովի մէջ տեղը, դիշեր ժանակ էր, ճամփէն կուրցըրեցին։ Լուսը բացվաւ, տեսան որ մէ օտար քաղաք կերևայ, էտ քաղաքը դէմ արին, գնացին, ասին, տեսնանք էս ինչ քաղաք ա։ Գնացին, տեսան մէ օտար քաղաք ա։ Գամին էտեղ կայնե-

ցրին, նոքարի հետ գնացին քաղաք, գնացին մէ լաւ մարդի պատահեցին։ Էտ մարդը տեսաւ որ էս բազրկեանը լաւ մարդ է, հրաւիրեց ուրան տունը։ Բերեց, հացի պատրաստութին տեսաւ, բերեց հացը քցեց, մէկ մէկ փէտ ավեց տղաների ձեռ, կայնեցրեց սուֆրի կողքը, բազրկեանն ասեց՝ թէ աղա, էս ի՞նչ բան է որ փետերը ավեցիր էտոնց ձեռքը՝ կայնան սուփրի կողքը։ Տան տէրն ասաց, թէ ներողութին, բազրկեան, մեր տանը մեծ անիծածներ (մուկ) կան, հացի վրայէն կը փախնեն, ամօթանք կը քաշենք քեզնէն, ըտուր համար ա։ Բազրկեանն ասաց, թէ ինչ կուտաս էտոնց դեղ անեմ ես։

Թէ ինչ՝ կուզես, կըտամ։

—Ընձի մէ ջուխտ չանաւար ունեմ, ըտոնց դանին (բռնող) են, մէ քեասիբ մարդի ա էտոնք էլ։

Տան տէրն ասաց. Ո՞րտեղ են։

Բազրկեանն ասաց. Մէ ղութու մէջ են։

Ասաց. Էն ղութին կը լցեմ ոսկի, կուտամ։

Նոքարին ասաց. Նոքար, գնա Զուիչու տղի ղութին բէ։

Նոքարը գնաց, ղութին առաւ, բերեց ավեց էտորը։ Բազրկեան էտ տան տիրոջը ասաց. Դռնները շինա։

Տան տէրն ասաց. Ընչի՞։

Ասաց. Ըտոնք կը փախնեն, մէ քանի օր որ պահէք, սորվեցընէք, էլ չեն փախնի։

Էտ մարդը բերեց, դռնները փակեց, կատուները ղութուց հանեց, բաց թողեց. ըսաւ. Տղէք, փէտերը թողէք, նստէք դուք։

Մկնները հացի խոտան առան, դուս չկլան, կատուները վրայ թափվան, բռնեցին։

—Տէ, ասաց տանտէրը, էկէք նստէք, հաց ուտենք։

Տան տէրը տեսաւ որ բազրկեանի ասածը ճշմարիտ ա, չկլաւ ղութին լցեց օսկի, ավեց բազրկեանին։

Բազրկեանը ասաց. Աղայ, մենք ճամփէն կորցրել ենք, շատ ուրախ կըլնենք, որ նշանց տաս։

Տան տէրն ասաց. Դուք ինչ տեղէ էք։

Ասաց. Մենք Ստամբօլու քաղաքիցն էնք։

Ասաց. Որ էտմալ է, դուք հիւսիս էք էկէք, հարաւ գացէք, կը գտնէք ձեր ճամբեխ։

Յելան էկան էտ մարդեր, էկան ուրանց ճամփէն գտան, գնացին յելան ուրանց քաղաքը։

Բազրկեան ուր ապրանքը տեղաւորցըրեց, ղութին ավեց նոքարի ձեռքը, տարաւ թագաւորի աղջկան ավեց։

Թագաւորի ախչիկը բացեց, տեսաւ ոսկին, ասաց. Էս իմ

խօր սիքէն չէ, էս խետ օղուտաւոր է էլէ, Չոփչու տղէն ընցեր է ուրիշ հող։

Մնաց տարին թըմըմաւ էլի։ Չոփչու տղան օրերը կը համարէր. մէ օր նստաւ, տունն ընկաւ միտը, նիաթը կախեց։ Էկան խարցըրին, թէ տղայ, ինչի՞ ես նիաթդ կախէ։

Չոփչաւ տղէն ասաց. Էսա իրեք տարին թըմըմաւ, տղէն չի ասէ թէ գնա, ախր ես էլ տան տէր իմ, մէը ու խէր, օղուշաղ ունիմ։

Գնացին տղին ասին, տղան ասաց. Օղորթ ա, էնոր 3 տարին թըմըմեր ա, պատրաստուէթն տեսէք, որ էն մարդը համփու քցենք։

Տղէն էտ տղին շատ կընդունէր, էկաւ ինչպէս հարկն է, ասաց. Աման, իրեք տարվան քեղի ինչ տամ։

Տղան ասաց. Աղա, ես բամ՝ չեմ ասէ, դու քո խիղճը, ինչ կուտաս՝ տու։

Տղէն խանեց իրեք տարվան համար բաւականի փող տվեց, խղճով մարդ էր, տղէն առաւ փողերը, տղէն ասաց. Որդի, սապախատան էլի կեթաս բաղար, մէ հատիկ էլ կառնես, ինչ որ ուստա կուգայ։

Առաւտուն տղէն գնաց բաղար, տեսաւ մէ մարդ նստէ, կասայ. Ուրատ կը ծախեմ։

Տղէն կեթայ, կասայ. Ուրատի գին ինչ ա։

Կասայ. Մէկը հինգ դուրուշ ա։

Հանէ հինգ դուռուշ կուտայ, կասայ.

—Սրան սերածը սերուն կըլնի։

Հանէ հինգ դուռուշ էլ կուտայ, թէ մէկ հատ էլ ասա։

Կասայ. Սարը անողը բարիքի կարժանանայ։

Տղէն իջաւ գնաց ծովի ղրաղ. ուրախ ուրախ գնաց ծովի մօտը, տեսաւ որ գնամի չկայ, ասաց. չորովը կեթամ, ինչ կայ։

Էկաւ, շատը քիչը Աստուած գիտէ, ծարաւաւ, գնաց տեսաւ որ մէ տեղ մարդիկը ժողվըդված ա, ասաց, ըստոնց մէջը անպատճառ ջուր կըլնի, չունքի տեղը աւազդուն էր, ջուր չկար։ Էկաւ էտ մարդերի մէջը, տեսաւ որ ահագին մարդեր ժողվըվերին, մէ հոր կայ էտտեղ, վիրը կասին՝ չի մանի, որ ջուր քաշին։ Էս տղէն գալուն պէս, ասին. Տղայ, արի քեղի չիսուն մանէթ փող կըտանք, մոի էս հորի մէջ համ դու խմի, համ էլ լից տուր, մենք խմենք։

Տղէն ասաց. Փողը տվէք, մըտանիմ։

Փողն առաւ, մտաւ խորը, ջուրը քաշեց պրծաւ, ուղին թէ խորից խանին՝ էրկու արաբ շերիաը կտրին, տղին առան գացին։ Տղէն գնաց տեսաւ, որ նեխախատ (վատ հոտ) կիգար, տեսաւ որ

մէ եանը Ջանդակ շատ կայ, մէ եանը գլոխ շատ կայ իսանի, ասաց. Էս ինչ տեղ էր ընկայ, ինձ էլ պըտի էսպէստ անեն, Աստուած, դու ազատես։

Տեսաւ որ մէկ մարդ նստեր ա, սէհրի էր էտ տեղը, տեսաւ որ մէկ գորտ մէկ սև մարդի չոքի վրայ դրուկ ա, մէկ սիրուն ախչիկ էլ կշտի խեսը կայնուկ ա։

Ասաց. Թագա էկող, ասաց, էս գործան է խորտա, թէ էն կայնուկ ախչիկը։

Իրան մէջը տղան մտածեց, ասաց. Ես նատեաթ եմ սորվէ, էստեղ օր պէտք չգայ, որտեղ պըտի պէտք գայ։

Ասաց. Սրտի սիրածը սիրուն կըլնի։

Մի ասա, էտոր սէհրին էտ էր, էտքան մարդիկ կտրուած ին էտ մէկ խօսքի համար։ Նստու տեսաւ, որ էտ խօքի վրէն էն գորտը պատուվեց, էլաւ մէ ախչիկ, ինչպէս արեգակը մոմի քովը, էնպէս էլ էն գորտը էն ախչկայ կուշտը։

Նտնա ասացին էտ սէհրիքը, բերէք էս մարդին խալաթ։ Բերեցին էսպէս նուան նման իրեք հատ բան տվեցին։ Էտ մարդն ասաց, թէ ինձի խորիցը հանեցէք, ինձի պէտք չէ ձեր խալաթը։ Ասացին. Խալաթ էլ կուտանք, քի խորից էլ կը խանենք։ Էսքան Ջամեաթ կտրվաւ, էս մէկ խօսքի համար։

Յետոյ տղին խորէն խանեցին դուս, տղան ընկաւ ճամփա գնաց։ Գնաց, գնաց, իրիկուն հասաւ ուրան տունը։ Գնաց տեսաւ որ ամարաթներ կայ. ասաց, Ջանըմ, թէ էս մեր տներն է, մեզի ամարաթներ չունինք, մէկ էլ միտքը բերեց բազրկեանի ասածը, թէ թագաւորի ախչիկը ամարաթներ է շինէ, գնաց ակուշկի յառաջը կայնեց, տեսաւ որ թագաւորի ախչիկըն ճանաչեց, տեսաւ որ մէ գլոխ էլ կայ էտոր խետ պառկած։ Մտածեց, ասաց թէ կարելի ա էսի սիրող ըլնի պառկած թագաւորի ախչկայ հետ, ձեռի նետանեղը լարեց, որ ակուշկից էն տղին գաներ, մէկ էլ նատեաթը միտքը ընկաւ թէ մէ փշուր սաբր էնեմ, բարիքի կը տիրանամ։ Սաբր էրաւ, տեսաւ երեխէն ասաց. Մէրիկ, կասիր քու խէրը կըգայ; բա ձեր ա չի գայ։ Վա ըսաց, ընձէ եա տղէն յելեր ա, էսի իմ տղէն ա։ Էկաւ ուր դարպաղէն տփեց, նոքաբը դուս էկաւ, թէ ինչ մարդ ես։ Ասաց. Ես Զոփչու տղան եմ, դուռը բաց։

Ասաց. Թագաւորի ախչիկ էսայ վախտ դուռ չի բանայ, Զոփչու տղայ ըլնես, չըլնես։ Մնաց քուչէն։ Մէ անգամ էլ թըղ-թըղցըրեց, թագաւորի ախչիկը ուրան նոքաբին կանչեց, ասաց. Էտ ինչ մարդ ա, էտա վախտ դուռը կը թխթըխցընայ։ Ասաց. Չեմ գինայ, կասայ ես Զոփչու տղէն եմ, արի դուռը բաց։ Յետոյ

թագաւորի ախչիկը նոքարի հետ դարպասի յետևը կայնաւ, ասաց. Դու ինչ մարդ ես։

Ասաց. Ես Զուիչու տղէն եմ, թագաւորի ախչիկ, դու ինծի չղրկեցիր երեք տարի ժամանակի, հմի էկեր եմ։

Ասաց. Դու ինչ ես ղրկէ ինձի հաւատա, որ դու Զուիչու տղէն ես։

Ղրկեր եմ մէ աման ջուկ, մէկ հատ էլ դուխիկ, դուռը բացի։ Դու ինձ չասիր թէ պնա հալալ մարդու ծառայէ, էտ ես ու դու գիտենք, ուրիշ մարդ չգիտէ, բացի դուռը։

Դուռը բացեց, գնացին ներս, թագաւորի ախչիկը ասաց. Զուիչու տղայ, ամանի մէջ ինչ կար։ Ասաց. Ամանի մէջ կուպը կար, դուխու մէջ էրկու կատու։

Բերեց ամանն ու դուխին դրեց յատէջը, ասեց. Բայ տեսնինք էն է։

Բացեց տեսաւ, որ էրկուսն էլ ոսկի, ճնաց մտածմունքի մէջ։

Հելաւ գնաց բաղրկեանին դտաւ, ըտուր բաղրկեանը պատմէց ինչ էլեր էր, ետնա էկաւ ասաց. Թագաւորի ախչիկ, էսպէս ա ըլել։

—Թագաւորի ախչիկ, իրեք հատ էլ նուռ եմ բերէ, աւ տուր էրեխին։

Առաւ թագաւորի ախչիկ, տեսաւ որ էսի նուռ չէ, անգին քար է, արեգակի պէս լուս կուտայ։

Ասեց. Իմ խոր խազնի մէջ ըտուր պէս բան չեմ տիսէ ես, մէ հատ տար խուրտէ, տենանք ինչ ածէ։

Տարաւ տղէն էտ մէկը խուրտեց։ Սատաֆը ասաց. Գնա մէ համբալ բէ։

Համբալը բերեց, քանի որ կանէը համբալը՝ շալկեց ոսկի, ըտուր խուրդէն էր, բերեց տուն։

Ասաց. Զուիչու տղայ, գնա զարգեարը բէ։

Գնաց Զուիչու տղէն մէ լաւ զարգեար բերեց։

Ասաց. Զարգեար, քառասուն սինի կը շինես ոսկուց, ուր դաալներով. չունքի թագաւորը պիտի գայ մեզ մօտ դռնաղ ուր սինօդներով։

Ասաց. Զուիչու տղայ։

Ասաց. Ի՞նչ է, թագաւորի ախչիկ։

Ասաց. Գնա թարզի բէ։

Գնաց մէ թարզի բերեց։

Բերեց, թագաւորի ախչիկը ասաց. Քեզնէ կուզեմ խաս կտորից թագաւորի լայեղ շորեր էս Զուիչու տղի համար։

Գնաց բերեց, կտրեց, կարեց, ինչպէս կարգն էր։

Ասաց. Զոփչու տղայ, էս շորերը կը խազնես, կերթաս թագաւորին կը դանչես մեզի դռնապ ուր սինօզնեերով։

Զոփչու տղէն գնաց կանչեց, թագաւորը ուրախացաւ, ինքն իրան մտածեց, թէ ես լսել ի, թէ խազնիչ գողացէ, ամարաթ է շինէ, մէ էթամ տենամ։

Վերուց ուրան սինօզնեերը, էկաւ դռնապ ուրան աչկեայ տունը։

Թագաւորի աչկիկը ասաց. Գնա էն բաղրկեանն է բէ, որ ինձի հատիա ա բերէ։

Գնաց էն բաղրկեանին էլ բերեց։

Գնաց մէ լաւ աշխիմ էլ բերեց, որ ընտռնց լաւ կերակուր պատրաստայ։

Պատրաստեց, բոլորի ամանի մէջ աղ ցկեց, թագաւորի ամանի մէջ աղ չը ցկեց։ Էկան նստան, սկսան ուտել։ Թագաւորի աչկիկը տեսաւ, որ յըմմէն կուտին, թագաւորը չի ուտայ։

Կասայ. Թագաւոր, ընչի՞ յըմմէն կուտեն, դու չես ուտէ։

Թագաւոր կասայ. Ամանիս մէջ աղ չկայ։

—Ի՞նչի, կըսէ, չես ուտէ, ոսկի ամանի մէջ, ոսկէ գդլով, ինչ անենք որ աղ չկայ։

—Ձէ, կըսէ, առանց աղ չի ուտվի։

—Որ էտպէս է, կասայ, ես քեզի աղի գտաք կտիրի, ինչի՞ դու ինձի աչքիդ ցցիր։

Սինօզնեերը ասին. Թագաւոր, աչկիկը ճշմարիտ է, աշխրքի մէջ յըմմընիցը քաղցրը՝ աղն է, մենք չհամարձակվանք որ քեզի ընդէմ խօսենք։

Բերեց, աղ ցցեց ամանը՝ թագաւորը կերաւ։

Ուտելուց ետը՝ թագաւորի աչկիկը ասաց. Ցըմմէնքը ուր սինին ուր գոլով տանի ուրան։

Թագաւորը շատ զարմացք մնաց։ Ասաց. Ես թագաւոր ըլնեմ, չըկարնամ էս բանն անեմ, էնի անեմ։

Բոլորը յելան գային, ասաց. Թագաւոր, գու ետ ընկի։

Թագաւորը ետ ընկաւ, աչկիկը ասաց. Թագաւոր, կը տեսնամ որ մտածմունքի մէջ ես ընկէ գու։

—Հա, կասայ թագաւոր, ես զարմանք եմ մնացէ, թէ գու էսքան հարստութեն յիւստ ես գտէ։

Թագաւորի աչկիկը յելաւ գնաց էն ամանն ու գութին բերեց, ասաց. Թագաւոր, էս ամանը քու սիքեն ա, էս գութին ինչ սիքա է։

Բերեց, թագաւորը խշկաց, զարմացաւ էտ գութու ու էտ սիքի վրէն։

Բերից իրեք նուռն էլ դրեց թագաւորի յառէջ, ասաց. Ըստոնք էլ տես։


Թագաւորն բացից տեսաւ, շիվարած մնաց, ընտուր էրկու հատը արժէր ուրան սազ խաղնէն։ Ասաց. Էս յոնաստ ա ձեզի։

Ախչիկը ասաց. Ա՛ռ, էս մէկ նուռը քեզի փէշքաշ, ես քեզի հաոյ կը պատմեմ բարա հղկուքիւնը։

Թագաւորն էլ ասաց. Եվ որ դու էս նուռը ինձի բախշեցիր, ես էլ իմ թագաւորութիւնը քեզի կը բաշխեմ։ Ինձնէն ետ դուք կը լինիք թագաւոր։

Մնաց մէ ժամանակ, էտ թագաւորը մեռաւ, Զուիչու տղան նստաւ էնոր տեղ։ Աստված լուսաւորցընէ ընդոնց հոգին էլ, ձեր էլ ծնողաց։

Երկնքէն իրեք խնձոր ընկաւ, մէկն ասողին, մէկը լսողին, մէկն էլ ականճ անողին։



ՅԱՆԿ.

I Տամբլու, Հին Բայազէտցիներ.

Երես

1. Հարաֆ ու Մարաֆ. *պատմեց Սիմոն Աւետիսեան* . 5—15.

II Ղոյթուր, Թերջանցիներ.

2. Օձն ու ձուկը. *պատմեց Կարապետ Մարդարեանը* . 16—16.
3. Ինչու հայի մեռելը եժան է. *պատմեց Մարտիրոս քհ. Տէր Յովհաննիսեանը* . . . . 17—17.

III Զամրլու, Մշեցիներ.

4. Սեւ եզան հեքեաթը. *պատմեց Սարգիս Միքոյեանը* 18—32.
5. Թուրճի Ահմաս. » » » 33—46.
6. Ծուռ տղայ. » » » 47—56.
7. Ճուկօ. *պատմեց Թադէոս Գէորգեանը.* . . 57—60.

IV Ղազնաճար, Մանազկերտցիներ.

8. Դիւրգեար օղլի. *պատմեց Նիկողայոս Պետրոսեանը* 61—75.
9. Խոջա Թումաս » » » 76—81.
10. Հաբրմանի հեքեաթը » » » 82—89.
11. Խելքը շատ » » » 90—97.
12. Հիւդժաթի զալըմ թաֆաւորը » » 98—101.
13. Խոճա Ալի. » » » 102—108.

V Բազարճուղ, Ալաշկերտցիներ.

14. Սենեքերիմ թագաւոր. *պատմեց Բարսեղ Սահակեանը* 109—136.
15. Աւմեն իխթանի հեքեաթը » » 137—141.

VI Իլանչալան, Վանեցիներ.

16. Թուր ու Թամբ թաֆաւոր. *պատմեց Սաքօ Սուքիասեան* . . . . . 142—150.

17. Ախչիկ թագաւորի հեքեաթը » » » 151—158.
18. Աղվեսու մասալը » » » 159—160.

VII Բաբ-Ասպարաց, Ապաղացիներ.

19. Քոչար. *պատմեց Ենովք Յովհաննիսեան* . . 160—167.
20. Համբարձում վսեմ առական » 168—173.
21 Արջակի հեքեաթը » » 174—179.
22. Զուլֆակի կնիկը » » 180—184.
23. Ալեքսանի հեքեաթը » » 185—189.

VIII Թաւարղու, Դիատիցիներ.

24. Քաջացց թագաւորի հեքեաթը. *պատմեց Բաբսեղ Յարութիւնեանը* . . . . . 190—195.
25. Միսաք » » » 196—201.
26. Բահրամ աղեն ու Լալսն » » » 202 . 210.
27. Քաջ Նուբար » » » 211 . 215.
28. Անգրանեկի խեքեաթը. *պատմեց Դաւիթ Աւետիսեանը* 216—223.

IX Գիւլափղու, Մակուեցիներ

29. Դեւ Ջամանի հեքեաթը, *պատմեց Դաւիթ Աւետիսեանը* . . . . . 224—231.
30. Հազէ Գիլպարի հեքեաթը » » » 232—239.
31. Աֆանդու հեքեաթը » » » 240—245.
32. Պօղոս-Պետրոսիեան Շամդանի հեքեաթը » 246—251.
33. Կարմիր կովի հեքեաթը » » » 252—257.

X Տամբղու.-Պարսկաստանի Կարէիցիներ

34. Ջուիչու ծղեն. *պատմեց Կարապետ Մկրտչեանը* 258—267.



ԵՐԿ ԱԿԱԴԵՄԻԱ ԼԱՏՈՒՆ

1903.

[Зп]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0067699

ЦЕНА
II
№ 2670